ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ (1991-2014ԹԹ.)

327
Ի-80
Հշ.
Գի-ա 4
5628

ԳՈՀԱՐ ՄԱՆՎԵԼԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ (1991-2014ԹԹ)

ԵՐԵՎԱՆ - 2016

GOHAR ISKANDARYAN

ARMENIA-IRAN RELATIONS SINCE INDEPENDENCE OF ARMENIA (1991-2014)

YEREVAN-2016

ՀՏԴ 327:93/94
ԳՄԴ 66.4+63.3
Ի 800

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Նիկոլայ Հովհաննիսյան**

Ի 800 Իսկանդարյան Գոհար Մանվելի
Հայաստան-Իրան հարաբերությունները
Հայաստանի անկախության ձեռքբերումից
հետո, (1991-2014թթ)/Գ.Իսկանդարյան.-Եր.:
Ա/Ձ Արման Ասմանգուլյան, 2016, 418 էջ:

Աշխատությունում քննվում է Հայաստան-Իրան հարաբերությունները 1991-2014թթ., որտեղ հեղինակը անդրադառնում է Հայաստան-Իրան հարաբերություններին Հայաստանի անկախացումից հետո՝ ներկայացնելով հայ-իրանական տնտեսական, քաղաքական, գիտամշակութային կապերը, ինչպես նաև՝ ղարաբաղյան հակամարտության և Հայոց ցեղասպանության նկատմամբ Իրանի դիրքորոշմանը: Գրքում փորձ է արվել վեր հանել բոլոր այն խնդիրները, որոնք երկու երկրների ղեկավարության կողմից հարթվել են տարիների ընթացքում, ինչպես նաև այն խնդիրները, որոնք կարոտ են հավելյալ ուշադրության:

ISBN 978 - 9939 - 9136 - 6 - 7

ՀՏԴ 327:93/94
ԳՄԴ 66.4+63.3

© Իսկանդարյան Գ., 2016

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՀՈՐՍ՝ ՄԱՆՎԵԼ ԱՐՇԱԿԻ
ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու երկրների անձնագրային տվյալներ ---------- 9
Ներածություն ---------- 11

Գլուխ առաջին

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ---------- 15-86

1/1. Ընդհանուր ակնարկ ---------- 15

1/2. Հայ-իրանական հարաբերությունների հիմնարկեքը -- 20

1/3. Անարդյունք միջնորդական առաքելություն ---------- 27

1/4. Ուղղորդված սադրանքներ ---------- 38

1/5. Փրկության կամուրջ ---------- 46
1/6. Հարաբերությունների ակտիվացում ---------- 50

Գլուխ երկրորդ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ---------- 87-167
2/1. Ընդհանուր ակնարկ ---------- 87
ա/ Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման շուրջ ---------- 111
բ/ Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտը ---------- 120
2/2. Հայաստան-Իրան հարաբերությունները էներգետիկայի ոլորտում ---------- 136
ա/ Հայաստան-Իրան գազատարի ծրագիրը
բ/ Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր
գ/ Պատրաստի նավթամթերքների խողովակաշար
դ/ Հողմակայանի և Արաքս գետի վրա կառուցվող ՀԷԿ-երի շուրջ

2/3. Զբոսաշրջություն ---------- 158

Գլուխ երրորդ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ---------- 168-199
3/1. Գիտական կապեր ---------- 168
3/2. Մշակութային կապեր ---------- 183

Գուխ չորրորդ

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ---------- 200-254
4/1. Իրանի հայ համայնքը ---------- 200
4/2. Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ ---------- 214
4/3. Իրանի դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ ---------- 233

Վերջաբան ---------- 255

Summary ---------- 261

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցազրույց ՀՀ-ում և ԻԻՀ-ում պետական, քաղաքական, դիվանագիտական, հասարակական գործիչների հետ ---------- 270

Գագիկ Հարությունյան-Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ, ՀՀ փոխնախագահ, (1992-96թթ)
Ռաֆֆի Հովհաննիսյան - ՀՀ արտաքին գործերի նախարար (1991-1992թթ.)
Վահան Փափազյան - ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.)
Ալեքսանդր Արզումանյան - ՀՀ արտաքին գործերի նախարար (1996-1997թթ.)
Վարդան Օսկանյան - ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008թթ.)
Արմեն Մովսիսյան - Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (2006թ-2014թթ.), ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Վահան Բայբուրդյան - ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.)
Գեղամ Ղարիբջանյան - ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1999-2005թթ)
Կարեն Նազարյան - ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005-2009թթ)
Գրիգոր Առաքելյան - ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար (2009-2014թթ.)
Մոհամմադ Ռեյիսի - ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան (2012-2015թթ.)
Գալուստ Սահակյան - Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստան-Իրան բարեկամական խմբի ղեկավար

Օգտագործված գրականության ցանկ----------400

CONTENTS

Data of two countries----------9
Introduction----------11

Chapter one

Armenia-Iran political relations----------15-86

1/1. Overview----------15

1/2. The establishment of Armenian-Iranian relations ----------20

1/3. Fruitless mediation mission----------27
1/4. Directed provocations----------38
1/5. Bridge of salvation----------46
1/6. Intensification of relations ----------50

Chapter two

Armenia-Iran economic relations----------87-167
2/1. Overview----------87
a/ Armenian-Iran railway construction----------111
b/ Armenia-Iran economic and trade relations ----------120
2/1. Armenia-Iran relations on energetic ----------136
a/ Armenia-Iran gas pipeline
b/ High-voltage power lines
c/ Pipeline for petroleum products
d/ Wind farm and hydropower plants on the Arax river
2/2. Tourism----------158

Chapter three

Armenia-Iran scientific and cultural relations---------- 168-199

3/1. Scientific ties ---------- 168
3/2. Cultural ties ---------- 183

Chapter four

The position of Iran on important issue for Armenians ---------- 200-254
4/1. Armenian community in Iran ---------- 200
4/2. Iran's position on the Armenian Genocide ---------- 214
4/3. Iran's position on Karabakh conflict ---------- 233
Conclusion ---------- 255
Summary ---------- 261

Appendix ---------- 270
Bibliography ---------- 400

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ՝

Հարավային Կովկաս

ՏԱՐԱԾՔԸ՝
29,800 կմ²

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝
3,060,631 (2014թ.)

ԿՐՈՆԸ՝
Քրիստոնեություն, Առաքելական

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ՝
սև, գունավոր և ազնիվ մետաղներ, բազմամետաղներ, շինանյութեր, կերակրի աղի հանքեր, հանքային և քաղցրահամ ջրեր:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ՝
Կիսանախագահական հանրապետություն 2017թ.-ից կլինի խորհրդարանական Հանրապետություն:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ՝

Միջին Արևելք

ՏԱՐԱԾՔԸ՝
1,648,195 կմ²

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝
80,840,713 (2014թ.)

ԿՐՈՆԸ՝
Իսլամ, Շիա ուղղությամբ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ՝
նավթ, գազ, քարածուխ, ուրան, սև և գունավոր մետաղներ, աղ, շինանյութեր:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ՝
Աստվածապետական հանրապետություն:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ **21-ը սեպտեմբերի, 1991թ.**	ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ **Չունի, քանզի երբեք չի կորցրել անկախությունը: Փետրվարի 11-ը նշվում է իբրև ԻՐ ազգային տոն:**
ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Նախագահ**	ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հեղափոխության առաջնորդ**
Գործադիր իշխանություն՝ **Վարչապետ**	Գործադիր իշխանություն՝ **Նախագահ**
ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ **Ազգային ժողով**	ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ **Մեջլիս**
Ազգային ժողովն ունի 131 անդամ: Նրանք ընտրվում են համաժողովրդական ընտրություններով՝ 5 տարի ժամկետով:	Մեջլիսն ունի 290 անդամ: Նրանք ընտրվում են համաժողովրդական ընտրություններով՝ 4 տարի ժամկետով:
ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ **Հուլիսի 5, 1995թ.**	ԳՈՐԾՈՂ ԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ **Հոկտեմբերի 24, 1979թ.**
ՏԱՐԱԴՐԱՄ՝ **դրամ**	ՏԱՐԱԴՐԱՄ՝ **իրանական ռիալ**
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ՝ **Երևան**	ՄԱՅՐԱՔԱՂԱՔ՝ **Թեհրան**
ՎԱՐՉԱԿԱՆՈՐԵՆ ԲԱԺԱՆՎԱԾ Է՝ **10 մարզի**	ՎԱՐՉԱԿԱՆՈՐԵՆ ԲԱԺԱՆՎԱԾ Է՝ **31 օսթանի (նահանգի)**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ-իրանական ներկա հարաբերությունների ուսումնասիրությունը գտնվում է հայ արևելագետների ուշադրության կենտրոնում, այն պարզ պատճառով, որ Իրանը այսօր տարածաշրջանում լուրջ դերակատարություն ունի, և նմանատիպ պետության հետ խորացնելը հարաբերությունները բխում է Հայաստանի շահերից: Հատկանշական է, որ Հայաստանի հարևաններից առնվազն երկուսը շրջափակման մեջ են պահում երկիրը, և 1990-ական թվականների սկզբներին՝ Հայաստանի համար օրհասական ժամանակահատվածում, մեր հարավային հարևանը իր օգնության ձեռքը մեկնեց, որն, անշուշտ, փրկության, թթվածնի մի նոր աղբյուր էր:

Հայաստան-Իրան ավելի քան 20-ամյա հարաբերություններին աչալրջորեն հետևում են ինչպես տարածաշրջանի երկրները՝ Ադրբեջանը, Թուրքիան, Ռուսաստանը, այնպես էլ արտատարածաշրջանային երկիր համարվող, սակայն տարածաշրջանում իր կայուն հետաքրքրությունները ունեցող Միացյալ Նահանգները: Կա այն թյուրըմբռնումը, թե Միացյալ Նահանգները, ելնելով իր արտաքին քաղաքական կուրսից, պետք է որ առավել քան կոշտ քաղաքականություն իրականացնի Հայաստանի նկատմամբ՝ Իրանի հետ բարեկամական հարաբերություններ արձանագրելու համար: Սակայն իրականությունն այն է, որ Միացյալ Նահանգներում ևս շատ լավ պատկերացնում են, որ Հայաստան-Իրանի հարաբերությունների բարեկամական բնույթն այս պահին այլընտրանք չունի, քանզի Հայաստանը շրջափակված է երկու հարևանների կողմից:

Հայ-իրանական հարաբերություններն ունեն դարերի պատմություն, սակայն սույն աշխատանքով մենք կանդրադառնանք Հայաստան-Իրան հարաբերություններին

Հայաստանի անկախացումից հետո՝ ներկայացնելով հայ-իրանական տնտեսական, քաղաքական, գիտամշակութային կապերը, ինչպես նաև՝ ղարաբաղյան հակամարտության և Հայոց ցեղասպանության նկատմամբ Իրանի դիրքորոշմանը: Գրքում փորձ ենք կատարել վեր հանել բոլոր այն խնդիրները, որոնք երկու կառավարությունների կողմից հարթվել են տարիների ընթացքում, ինչպես նաև այն խնդիրները, որոնք կարոտ են հավելյալ ուշադրության:

Աշխատությունը գրվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական բաժնի (արխիվ) նյութերի, ՀՀ պաշտպանության նախարարության պատմաքաղաքական վարչության, ՀՀ մշակույթի նախարարության Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ փաստաթղթերի, հայ-իրանական հարաբերություններում իրենց ուրույն տեղն ու դերը ունեցող նախկին և ներկա պետական պաշտոնյաների, Իրանում հայկական թեմերի ներկայացուցիչների հետ իրականացրած հարցազրույցների, տարբեր լեզուներով առկա աղբյուրների, տեղեկատվական և վերլուծական նյութերի հիման վրա: Հարցազրույցների նպատակն էր, պահպանելով տրամաբանական շղթան՝ միևնույն ժամանակ ճշտել և հանրությանը ներկայացնել Հայաստան-Իրան հարաբերությունների նկատմամբ մեր պետական այրերի մոտեցումները, ինչպես նաև վեր հանել Իրանում գոյություն ունեցող կարծիքները Հայաստան-Իրան հարաբերությունների վերաբերյալ: Գրքում զետեղված հարցազրույցների այս շարքը խիստ կարևորվում է մեր կողմից, քանզի առաջին անգամ փորձ է արվել մեկտեղել հայ-իրանական հարաբերություններում իրենց ավանդն ունեցող և խնդիրներին քաջատեղյակ անձանց կարծիքները, ովքեր բավական լավ գիտեն հայ-իրանական հարաբերությունների բոլոր ծալքերը:

Մինչ այժմ այս թեմայով գրվել են արժեքավոր մի շարք աշխատություններ, որոնցից խիստ կարևորում ենք Վ. Բայբուրդյանի[1], Թ. Թորոսյանի[2], Գ. Իսկանդարյանի[3] հոդվածները, Գ. Բադալյանի մենագրությունը[4]: Հայաստան-Իրան կամրջի կառուցումը բավական մանրակրկիտ կերպով ներկայացված է Ժ. Մ. Միրզաբեկյանի աշխատությունում[5]: Ղարաբաղյան խնդրում Իրանի միջնորդական առաքելության մասին ուշագրավ նյութեր են ներկայացնում Տ. Բալայանը[6], Ն. Հովհաննիսյանը[7]:

---

[1] Վ. Բայբուրդյան, «Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998թթ. Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով» Երևան 2012թ., Վ. Բայբուրդյանի «Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ոլորտում» Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, զեկուցումների ժողովածու, Երևան, 2004թ., Վ. Բայբուրդյանի «Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո» Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XVII:

[2] Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության առևտրատնտեսական կապերը (հիմնախնդիրներ և հեռանկարներ), Հայաստան Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6-7, 2002թ.

[3] Գ. Իսկանդարյան, Հայ-իրանական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները. «բարի դրացիականից» «հատուկ հարաբերություններ», ժամանակակից Եվրասիա, Երևան, 2013: Г. Искандарян, Армяно-иранские отношения на современном этапе. Взгляд из Армении, Армения-Иран, История. Культура. Современные перспективы взаимодействий, МГУ им. М. В. Ломоносова, Институт стран Азии и Африки, Москва, 2013.
2009, Iran-Isfahan, ورط یاذرا و ذلا سمرا دعب زا ا ذ ذسا ل ذلا سمرا

[4] Գ. Բադալյան, Հայ-իրանական հարաբերությունները 20 տարեկան են. Երևան-Թեհրան, 2012:

[5] Ժ. Միրզաբեկյան, Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում, Երևան, 1996:

[6] Տ. Բալայան, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ, Երևան, 2004:

«Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո» աշխատանքում փորձ է արվել նորովի և համապարփակ ուսումնասիրել հայ-իրանական հարաբերությունների զարգացման դինամիկան: Գիրքը իր բնույթով առաջին փորձն է, երբ մեկ աշխատության մեջ համատեղվել է երկու բարեկամ երկրների առանցքային խնդիրները վերջին 20 տարվա ընթացքում՝ անդրադառնալով հայ-իրանական հարաբերությունների քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, գիտամշակութային և այլ ասպեկտներին:

[7] Н. О. Оганесян, Карабахский конфликт. Этапы. Подходы. Варианты решения, Ереван, 1997, N. Hovhannisyan, The Karabakh problem. The Thorny Road to Freedom and Independence, Second Revised Edition, Yerevan, 2004. N. Hovhannisyan, The foreign policy of Armenia, Yerevan, 1998.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ընդհանուր ակնարկ

Քաղաքական հարաբերությունները երկու ինքնիշխան հարևան պետությունների միջև կարող է իրականացվել տարբեր կերպ՝ որպես հարաբերություններ հավասարը հավասարի հետ, կախված համաշխարհային քաղաքական թատերաբեմում երկու պետությունների զբաղեցրած տեղից ու դերից, կամ «ավագ և կրտսեր եղբայրների կամ գործընկերների» միջև ծավալվող հարաբերություններ:

Սույն աշխատանքը իրականացնելիս մենք հայ-իրանական հարաբերությունները հիմնականում դիտարկել ենք նեոռեալիզմի պրիզմայով, այն պարզ տրամաբանությամբ, որ երկրների բարիդրացիական հարաբերությունները, մեր կարծիքով, խարսխված են լինում միայն ու միայն շահերի վրա:

1990-ական թվականները համաշխարհային պատմության մեջ թերևս անկյունաքարային ժամանակաշրջան էր: Ավարտվեց «Սառը պատերազմը» և փլուզվեց մինչ այդ աշխարհին վախ ներշնչող Խորհրդային Միությունը, որի հիմքի վրա ստեղծվեցին մի շարք անկախ պետություններ: ԽՍՀՄ-ի հարևան երկրների համար իրական քաղաքական մի նոր վիճակ էր ստեղծվում, երբ իրենց ազդեցության տակ կարող էին գցել 70 տարի ԽՍՀՄ-ի մեջ գոյություն ունեցող և արդեն անկախ պետություններ հռչակված երկրներին: Երկրներ, որոնք թեև հռչակել էին իրենց անկախությունը, սակայն իրականում ոչ բոլորը գիտեին իրենց կատարելիք հաջորդ քայլերը: Երկրներ,

որոնք խորհրդային տարիներին արդյունաբերական թելերով այնպես էին իրար միահյուսված, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո շատերի տնտեսությունը պարզապես կաթվածահար եղավ և նրանք կանգնեցին քաոսի առջև: Երկրներ, որոնք չունեին պատրաստի կադրերի այն անհրաժեշտ բանկը, որը կկարողանար լավագույնս իրականացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը: Մանավանդ որ խորհրդային տարիներին հանրապետությունները հիմնականում լրջորեն չէին մասնակցում ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության ուղեգծի մշակմանը և չունեին համապատասխան կուտակած փորձ, թեև յուրաքանչյուր հանրապետությունում կար արտաքին գործերի հարցերով զբաղվող մարմին, որը բաղկացած էր մի քանի աշխատակցից:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տարածաշրջանի երկու տերությունները՝ Թուրքիան և Իրանը, ակտիվացրին իրենց արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում և Միջին Ասիայում, որպեսզի իրենց ազդեցության տակ պահեն նորանկախ՝ իրենց հետաքրքրությունների ոլորտում գտնվող հանրապետությունները: Հատկանշական է, որ Թուրքիան այս ոլորտում արձանագրեց առավել մեծ հաջողություններ, քան Իրանը: Չնայած, որ Իրանն էլ գործադրում էր բավական ջանքեր իր ներկայությունն ապահովելու Հարավկովկասյան և Միջինասիական երկրներում: Իրանը, որը 1980-ականներից գտնվում էր պատժամիջոցների տակ, խիստ արժևորում է հարևանների հետ ակտիվ շփումները: Իրանը, մասնավորապես, կարևորում է Հայաստանի հետ շփումը, քանզի նրան անհրաժեշտ է միջազգային կառույցներում քրիստոնյա Հայաստանի ձայնը: Չմոռանանք նաև, որ շատ հայեր, այդ թվում նաև իրանահայեր, որ այսօր ապրում են արտասահմանում, կարող են փոխել Իրանի նկատմամբ առկա բացասական և շատ հաճախ չհիմնավորված

56298

վերաբերմունքը: Իրանը կարող է որոշակի կերպով օգտագործել հայկական սփյուռքի առկայությունը Արևմուտքում, և հայկական սփյուռքը կարող է միջազգային հանրությունում նրա հեղինակության բարձրացման աշխատանքներ տանել[8]:

Ինչպես նշում է ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վ. Բայբուրդյանը «Անկասկած է նաև, որ Իրանի շահերը պահանջում են ամրապնդել Հայաստանի պետական անկախությունը, ընդգրկել այն իր տարածաշրջանային քաղաքականության ոլորտը, օգտագործել նրա ճյուղավորված կապերն ԱՊՀ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի հետ, օգտվել հայ սփյուռքի աջակցությունից՝ Արևմուտքում իրանանպաստ իմիջի ստեղծելու համար, համագործակցել Հայաստանի հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում»[9]:

Իրանի համար Հայաստանի կարևորության մասին է գրում նաև Ն. Հովհաննիսյանը իր աշխատությունում, նշելով որ Իրանը «իրականացնում է տարբեր աշխատանքներ, որպեսզի կանխի Թուրքիայի գերիշխանությունը Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում: Իրանը նաև ձգտում է ապահովել իր ազգային շահերը և ամուր պահել աշխարհաքաղաքական դիրքերն այս տարածաշրջանում: Այս քաղաքականությունը իրականացնելու համար Իրանը դաշնակցի կարիք ունի: Հայաստանը, ըստ իրանական տեսակետի, հավանական թեկնածուներից մեկն է, որը կարող է ստանձնել այդ գործը, քանզի վերոնշյալ ծրագրերը կարող են փոխել աշխարհաքաղաքական իրավիճակը

---

[8] Mehmet Fatih Öztarsu, Why does Iran support Armenia about Karabakh issue?_24 June 2012 http://www.todayszaman.com/news-284543-why-does-iran-support-armenia-about-karabakh-issue-by-mehmet-fatih-oztarsu*.html

[9] Վ. Բայբուրդյան, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVII, Երևան, 1998, էջ 9:

Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում՝ ի նպաստ Իրանի կամ Հայաստանի»[10]:

Ե՛վ Իրանը, և՛ Հայաստանը ունեին և այսօր էլ ունեն միասնական շահեր, որոնք ստիպում են հարաբերություններն օրեցօր ավելի խորացնել: Հայաստանը Իրանի սահմանակից միակ քրիստոնյա երկիրն է, որի հետ Իրանը չունի առերևույթ խնդիրներ, և Հայաստանի հետ համագործակցությունը համարվում է հեռանկարային: Իրանը շրջապատված է «իսլամադավան երկրներով, իսկ այսօր Իրանը միջազգային հանրությանն ապացուցելու կարիք ունի, որ հանդուրժողականության առումով խնդիր չունի ոչ իսլամադավան երկրների հետ»[11]:

Հայաստանը Իրանի համար կարևոր է նաև իր իմիջը բարձրացնելու առումով: Ուշագրավ է, որ դեռևս 1994թ. օգոստոսի 1-ին ԻԻՀ դեսպանատան խորհրդական Ֆ. Քոլեյնին ՀՀ փոխարտգործնախարար Ժ. Լիպարիտյանին է փոխանցել ԻԻՀ խնդրանքը՝ ՀՀ նախագահի ԱՄՆ այցի ժամանակ հնարավորինս արժևորել ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները[12]:

Անկասկած, Հայաստան-Իրան հարաբերությունները մեծապես գտնվում են Միացյալ Նահանգների և Ռուսաստանի ուշադրության կենտրոնում: Եվ երբեմն-երբեմն Միացյալ Նահանգների կողմից լսելի են Հայաստանին ուղղված ակնարկներ՝ Իրանի հետ այդչափ սերտ հարաբերությունների համար: Ժամանակին լուրջ անհանգստություն կար, թե Հայաստանի տարածքը կարող է օգտագործվել երկակի օգտագործման նշանակության

[10] N. Hovhannisyan, The Foreign policy of Armenia, Yerevan, 1998, p. 48.

[11] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2009-2015թթ.) Գրիգոր Առաքելյանի հետ, նոյեմբերի 2, 2012, Թեհրան (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[12] ՀՀ ԱԳՆ պատմաղիվանագիտական բաժին, ցուցակ 2, գործ 242, էջ 4-6:

ապրանքների տեղափոխման համար, այնուհետև որոշակի տեղեկատվություն հայտնվեց Հայաստանի և Իրանի բանկային համակարգերի միջև հարաբերությունների մասով: Եվ եթե այդ հարաբերություններն անհանգստացնում են Արևմուտքին, ապա ըստ վերլուծաբան Սեմերջյանի, «Միացյալ Նահանգները պետք է աջակցի Հայաստանին՝ ներգրավվելու տնտեսական և տրանսպորտային տարածաշրջանային ծրագրերում և արագացում հաղորդի հայ-ամերիկյան տնտեսական կապերին՝ երկկողմ համաձայնագրերի միջոցով: Այդպիսով, Միացյալ Նահանգները կաջակցի Հայաստանին՝ նվազեցնելու իր կախվածությունը Իրանից՝ Արևմուտքի հետ ինտեգրման սերտացման միջոցով: Հայաստանը և իր ժողովուրդը ցանկանում են և կարիք ունեն ամերիկյան և եվրոպական աջակցության, որպեսզի հասնեն այդ նպատակին: Հակառակ պարագայում, Հայաստանը այլ տարբերակ չունի քան շարունակել հարաբերվել Իրանի հետ[13]«:

Բացի այդ երկու երկրներն էլ շահագրգիռ են, որպեսզի Անդրկովկասի քաղաքական վիճակը չապակայունանա: Թուրքիայի ռազմական հզորացումը որոշակի սպառնալիք է երկու պետությունների համար էլ[14]: «Ինչ վերաբերում է Իրան-Հայաստան յուրահատուկ հարաբերություններին, ապա պետք է նշել, որ այդ գործոնին մեծապես նպաստում է այսօր պանթյուրքիզմի

[13] H. H. Semerdjian, Christian Armenia and Islamic Iran: An unusual partnership explained, Congress blog, http://thehill.com/blogs/congress-blog/foreign-policy/276961-christian-armenia-and-islamic-iran-an-unusual-partnership-explained

[14] Г. Искандарян, Армяно-иранские отношения на современном этапе. Взгляд из Армении, Армения-Иран, История. Культура. Современные перспективы взаимодействий, МГУ им. М. В. Ломоносова, Институт стран Азии и Африки, Москва, 2013, стр. 81.

աճող և ահագնացող գաղափարախոսությունը»[15]: Այդ ամենը, իհարկե, երկուստեք շահերի ընդամենը մի մասն է կազմում:

Անկասկած է, որ Հայաստան-Իրան հարաբերությունները գտնվում են փոխշահավետ մակարդակում: Իրանի քաղաքական շրջանակների կարծիքով, Հայաստանն իր մոնոէթնիկ կազմով, արդյունաբերական հնարավորություններով, գիտական ներուժով և այլն՝ հեռանկարային պետություն է[16]: Հատկանշական է, որ երկու պետությունների ղեկավարների մոտ ևս նկատվում է քաղաքական կամք՝ հարաբերությունները է՛լ ավելի խորացնելու համար:

2. Հայ-իրանական հարաբերությունների հիմնարկեքը

Իրանը միշտ մեծ ուշադրությամբ է հետևել հյուսիսային հարևան Հայաստանի տարածքում կատարվող բոլոր գործընթացներին: Իրանն առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայաստանի առաջին հանրապետությունը և որոշակի քաղաքական և տնտեսական համագործակցություն փորձեց իրականացնել: Սակայն հետագայում Խորհրդային կարգերի հաստատմամբ, փաստացիորեն դադարեցին այդ շփումները:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանն անկախ պետություն հռչակվեց: Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջիններից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախության փաստը (1991թ. դեկտեմբերի 25-ին): Նորանկախ Հայաստանը մեծ կարևորություն էր

[15] Հարցազրույց ԻԻՀ Մեջլիսում Հարավային իրանահայության թեմի պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանի հետ, նոյեմբերի 2, 2012, Թեհրան:

[16] Վ. Բայբուրդյան, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVII, Երևան, 1998, էջ 19:

տալիս Իրանի Իսլամական հանրապետության հետ հարաբերությունների հաստատմանը և խորացմանը: ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը նշում է, որ «Հայ-իրանական հարաբերությունների հիմքը դրվեց հայեցակարգային մոտեցմամբ, երբ հիմնվեց անկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը: Արտգործնախարարության և գործող նախագահի համար էլ հայ-իրանական հարաբերություններն ունեցել են առաջնային և ռազմավարական նշանակություն, ինչով էլ պայմանավորված էր իմ՝ որպես արտգործնախարարի, առաջին այցը ԻԻՀ»[17]:

Այցի ընթացքում՝ 1992թ. փետրվարի 9-ին Թեհրանի՝ «Էսթեղլալ» հյուրանոցում ստորագրվեց հռչակագիր՝ Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ[18]: Նույն օրը ստորագրվեց մեկ այլ փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև «Հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը», որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մասին՝ խարսխվելով երկուստեք տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքների վրա: Վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրումից մեկ ամիս անց Թեհրանում և Երևանում բացվեցին դեսպանատներ, համաձայն նախորոք պայմանավորվածության[19]: 1992թ.

[17] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1991-1992թթ.) Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ, մայիսի 3, 2013, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[18] Հռչակագիր ԻԻՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:

[19] Դիվանագիտական բանբեր, Վենետիկ, 1993, էջ 19:

սեպտեմբերին ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար նշանակվեց իրանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վահան Բայբուրդյանը, իսկ ՀՀ-ում ԻԻՀ գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակվեց Բահրամ Ղասեմին:

Հատկանշական է, որ Հայաստանի կառավարող էլիտան շատ արագ կողմնորոշվեց և հայ-իրանական հարաբերություններին տրվեց ամենաբարձր մակարդակը, ինչն ապացուցվում է ՀՀ արտգործնախարարի՝ Իրան կատարած առաջին այցելությամբ, և այն հանգամանքով, որ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահի պաշտոնը վստահվեց Գագիկ Հարությունյանին, ով այդ պահին զբաղեցնում էր երկրի փոխնախագահի պաշտոնը: Այսինքն՝ «հայ-իրանական հարաբերությունները գտնվում էին փոխնախագահի ամենօրյա ուշադրության կիզակետում: Փոխնախագահի մակարդակով Իրանի հետ աշխատանքների համակարգումը, հարաբերություններին բարձր պետական նշանակություն էր տալիս: Իրանական կողմից աշխատանքները համակարգում էր ԻԻՀ կենտրոնական բանկի նախագահը»[20]:

Հայ-իրանական ձևավորվող հարբերություններին մեծ կարևորություն էր տալիս ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ով այդ մասին նշել է 1992թ. մարտի 22-ին տեղի ունեցած Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում. «Իրանի հետ հարաբերություններում որևէ բարդություն չի նկատվում: Ընդհակառակը, կողմերը ունեն նույնիսկ ընդհանուր քաղաքական շահեր, այն էլ՝ պատմական հակասությունների բացակայության

[20] Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96թթ) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

պայմաններում, որ չափազանց նպաստավոր հանգամանք է հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում: Գոհունակությամբ պետք է նշել, որ վերջին շրջանում Իրանի հետ հարաբերությունները զարգանում են բնականոն, արագացված ընթացքով և, վստահ եմ, շուտով մենք կզգանք այդ հարաբերությունների իրական արդյունքները»[21]:

Սակայն, միանշանակ պարզ էր, որ անհնար էր զարգացնել հարաբերությունները Իրանի հետ՝ չունենալով ցամաքային ճանապարհ: Մինչ այդ բոլոր տեսակի այցերը տեղի էին ունենում կամ օգտվելով այլ երկրների օդային ծառայություններից, կամ այլ երկրների տարածքը հատելով:

Երկու երկրները ձեռնամուխ եղան հայ-իրանական հիմնական ճանապարհի կառուցմանը, և ամենակարևորը, Արաքս գետի վրա կամրջի կառուցման ծրագրին: Այս կամրջի կյանքի կոչման գաղափարն առաջացել էր դեռևս 1988թ. երբ էլեկտրադինամիկայի բնագավառի գիտնական Ժ. Մ. Միրզաբեկյանի ջանքերով ստեղծվեց նախաձեռնող մի խումբ, որի գլխավոր առաքելությունն էր՝ Մեղրու կողմից Արաքս գետի վրա կամրջի կառուցման համար իրականացնել համապատասխան գործողություններ. «Նախաձեռնող խմբից պահանջում էին կամրջի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, հակառակ դեպքում նշում, որ ոչ մի միջոցներ էլ չեն հատկացվի: Տնտեսագետները փաստում էին, որ տնտեսական առումով ծախսերը արդարացված չեն լինելու: Այդ ժամանակ հանրապետության (ՀԽՍՀ) նախկին փոխվարչապետ, Բադալ Մուրադյանը փաստեց, որ եթե տարին ընդամենը մեկ էշ սայլով բարձած անցնի այդ կամրջով, այն դարձյալ մեզ պետք է օդ ու ջրի նման: Մենք պետք է այդ դուռը

[21] Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երևան, 2006, էջ 278-279:

բացենք դեպի հարավ»[22]: Եվ կողմերը սկսեցին որոնել ուղիներ՝ անհնարին թվացող աշխատանքը իրականացնելու համար:

Երկար քննարկումներից ու բանակցություններից հետո, ի վերջո, հայկական կողմը գտավ խնդրի թեկուզև ժամանակավոր լուծման եղանակը. դա լաստակամուրջն էր: «Այո, Հայաստան-Իրան կամրջի ծրագիրը դարձել էր Հայաստանի համար կենսական խնդիր, - նշում է Գագիկ Հարությունյանը: Սկզբնական շրջանում որոշվեց ժամանակավորապես օգտագործել պանտոնային նավակամուրջ, որը պետք է ծառայեր երկու ամիս, սակայն իրականում այն ծառայեց երկու տարի, և Իրանի հետ առևտուրը այդ պանտոնային կամրջով խիստ կարևոր էր»[23]:

Խորհրդային Միության պաշտպանության նախարար Եվգենի Շապոշնիկովը կարգադրեց անդրկովկասյան զորքերի հրամանատար, գեներալ Պատրիկեևին՝ մեկ նավակամուրջ՝ 3,5 միլիոն ռուբլի արժեքով, տրամադրել Հայաստանին՝ Մեղրիում Արաքս գետի վրա տեղադրելու համար: Իսկ Հայաստանի կառավարությունը չուներ անհրաժեշտ գումարը: Ի վերջո, «Հայէլեկտրո», «Կանազ», «Հրազդանմեքենա» գործարանները հանգանակեցին անհրաժեշտ գումարը և մայիսի 6-ին բացվեց ժամանակավոր նավակամուրջը[24]: Սակայն կողմերը գիտակցում էին, որ այն լոկ ժամանակավոր բնույթ կարող է կրել, և հենց այդ պահից սկսած աշխատանքներ էին տարվում, հիմնական կամրջի կառուցման ուղղությամբ:

[22] Ժ. Մ. Միրզաբեկյան, Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում, Երևան, 1996, էջ 30:

[23] Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96թթ) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան:

[24] Ժ. Մ. Միրզաբեկյան, Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում, էջ 70-72:

Դեռևս 1992թ. մարտի 11-ին Երևան էր ժամանել Իրանի հաղորդակցության, ճանապարհների և փոխադրումների նախարարության պատվիրակությունը: Հայ գործընկերների հետ միասին ստեղծվել էր աշխատանքային չորս խումբ: Առաջին խմբի օրակարգում դրված էր Արաքս գետի վրայով անցնող ինչպես հիմնական, այնպես էլ ժամանակավոր կամուրջների կառուցման հարցերի քննարկումը: Երկրորդ խումբը զբաղվում էր երկաթգծի շինարարության հնարավորությունների որոնումով: Այս հարցը մյուս հարցերի համեմատությամբ թերևս շատ ավելի բարդ էր, այն պատճառով, որ հատկապես Հայաստանի տարածքում բարդ ռելիեֆային պայմանների պատճառով այդ գծի ստեղծումը պահանջում էր հսկայական միջոցների ներդրում: Իսկ ինժեներա-տեխնիկական տեսակետից դրա լուծումները ևս կապված էին մի շարք բարդությունների հետ: Երրորդ խումբը զբաղված էր նոր ցամաքային ճանապարհների որոնմամբ, հատկապես Մարգարայի կամրջի և իրանա-թուրքական սահմանային Բազարգանի անցակետի օգտագործման տարբերակով, իհարկե, երրորդ կողմի՝ Թուրքիայի համաձայնության դեպքում: Չորրորդ խումբը բանակցություններ էր վարում Երևան-Թեհրան օդային կապի ստեղծման մնացած մանրամասների քննարկման և լուծումների ուղղությամբ[25]:

Հայաստանի կողմից Իրանը դիտարկվում էր իբրև մի ուղի, որով հնարավոր կլիներ շրջափակման մեջ հայտնված մի ողջ ժողովրդի հանել ծանր վիճակից: Առաջին հերթին Հայաստանին անհրաժեշտ էր հաց և վառելիք:

[25] Ժ. Մ. Միրզաբեկյան, Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում, էջ 49-50: Փոխըմբռնման համաձայնագիր, ՀՀ ԱԳՆ, պատմագիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ N 86, էջ 1-5:

1992թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը դեսպանությունների միջոցով «Արտակարգ դիմում» հղեց աշխարհի բոլոր պետություններին, որով կոչ էր արվում պարեն և դիզելային վառելիք հասցնել Հայաստան: 1993թ. հայտնի դարձավ, որ ԻԻՀ կառավարությունը հայ համայնքի օժանդակությամբ ձեռք է բերել շուրջ 1000 հատ «Ալադին» տեսակի վառարան և որոշակի քանակի նավթ, որը պետական օգնության անվան տակ պետք է փոխանցվեր Հայաստանին:

Այնուհետև, Վահան Բայբուրդյանի գլխավորությամբ սկսվեցին ակտիվորեն դրամական հանգանակումներ կազմակերպվել, որոնցով գնվեցին անհրաժեշտ ապրանքները և ուղարկվեցին Հայաստան: Այսպես, ՀՀ կառավարության վերահսկողության տեսչության պետ Դ. Դավթյանը զեկուցում է ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանին, որ «Արաբական Միացյալ Էմիրությունների հայ համայնքի հանգանակած 21 հազար դոլարից Թեհրանում ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայբուրդյանի կողմից 90տ ալյուր գնելու և ուղարկելու համար ծախսվել է 18,9 հազար դոլար: Մնացյալ գումարով գնվելու է ևս 10տ ալյուր, և արդյունքում կստացվի 100տ ալյուրի համար՝ 21 հազար դոլարի ծախս: Ներկայումս Հայաստան մուտք է գործել 50տ ալյուր»[26]:

Ի դեպ, նշենք, որ ԻԻՀ հացահատիկ ներմուծող երկիր է, և իրանական օրենքով արգելված է ցորենի կամ ալյուրի արտահանումը երկրից: Սակայն ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի (1989-1997թթ.) հրահանգով և խորհրդարանի թույլտվությամբ Հայաստանին բացառություն արվեց և ալյուր վաճառվեց: Թեև հացահատիկը և դիզելային վառելանյութը Հայաստանին վաճառվել է Իրանի կողմից միջազգային գներով և ոչ մի

[26] ՀՀ արտաքին գործերի նախարարության (այսուհետ ԱԳՆ) պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ 283, էջ 11-12:

գիջում այս պարագայում չի արվել, սակայն Հայաստանը խիստ կարևորում էր այս քայլը, որ Իրանը չմասնակցեց Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շրջափակման գործընթացին:

3. Անարդյունք միջնորդական առաքելություն

1990-ականների սկզբներին արդեն պարզ էր, որ խարխլման եզրին է գտնվում ԽՍՀՄ-ը և նրա հարևան երկրները սկսեցին ակտիվորեն համագործակցության եզրեր փնտրել ԽՍՀՄ-ի այն հանրապետությունների հետ, որոնք գտնվում էին իրենց հետաքրքրությունների շրջանակում: Բավական մեծ ակտիվություն էր ցուցաբերում հատկապես Թուրքիան, որին հաջորդում էր Իրանը: Նրանց նպատակն էր ԽՍՀՄ տարածքում բնակվող մուսուլմանաբնակ հանրապետություններն իրենց ազդեցության տակ գցել:

1991թ. նոյեմբերի 24-ին ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Վելայաթին մեծ պատվիրակությամբ մեկնում է Մոսկվա: Բանակցությունների առաջին փուլը տեղի է ունենում նոյեմբերի 25-ին՝ Վելայաթի-Շևարդնաձե ձևաչափով: Հանդիպման ժամանակ Վելայաթին փորձում է ճշտել՝ արդյոք Մոսկվայում դեմ չե՞ն լինի իր այցին ԽՍՀՄ մյուս հանրապետություններ: Ստանալով դրական պատասխան, Վելայաթին քննարկման թեմա է դարձնում նաև Իրանի սահմանակից հանրապետություններում հյուպատոսարաններ բացելու մտահղացումը[27]: ԻԻՀ արտգործնախարարը հանդիպում է ունենում նաև ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի հետ: Հանդիպումների ժամանակ, ի թիվս այլ հարցերի, քննարկվեց նաև Լեռնային

[27] Известия, 26 ноября 1991г., № 281.

Ղարաբաղի խնդիրը: Իրանական կողմը մտահոգություն հայտնեց իր հյուսիսային սահմանների մոտ տեղի ունեցող հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ և առաջարկեց Իրանի աջակցությունը:

1992թ. փետրվարի 28-ին առաջին անգամ պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին: Նրան ընդունեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, հանդիպման ժամանակ քննարկվեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը, ինչպես նաև անդրադարձան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին: Վելայաթին նախագահին հանձնեց ԻԻՀ այցելելու պաշտոնական հրավեր: Երևանում Վելայաթին հանդիպեց նաև ՀՀ վարչապետի և արտաքին գործերի նախարարի հետ:

Վելայաթին առաջին հերթին ժամանել էր միջնորդական առաքելությամբ՝ ղարաբաղյան թնջուկի խաղաղ կարգավորման հնարավորությունները ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնությունների շուրջ փոխըմբռնման եզրեր գտնելու նպատակով: Իրանի միջնորդությամբ փետրվարի 27-ից տեղի էր ունեցել եռօրյա զինադադար, որի ընթացքում կողմերը իրականացրել էին դիակների փոխանակություն: Նախարարն այդ հանդիպման ժամանակ, ի թիվս այլ հարցերի, կարևորեց նաև Իրանի համար Հայաստանի՝ որպես իր անմիջական և հուսալի հարևաններից մեկի հետ լուրջ հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Նա հանդես եկավ առաջարկությամբ, որով հավաստում էր Իրանի պատրաստակամությունը միջնորդական առաքելությամբ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հնարավոր եզրերը ուսումնասիրելու համար: Այդ քննարկումների ժամանակ իրանական կողմը խոստացավ օժանդակել շրջափակման մեջ գտնվող Հայաստանին՝ իր տարածքով աշխարհի հետ հաղորդակցվելու համար:

Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը շեշտեց, որ Հայաստանին այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները[28]: Այցի ընթացքում քննարկվեցին նաև միջազգային և տարածաշրջանային այլ հարցեր, ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, որի համաձայն՝ յուրաքանչյուր տարի երկու երկրների միջև քաղաքական խորհրդակցություններ պետք է տեղի ունենային:

Հատկանշական է, որ Իրանը հանդես էր գալիս որպես գոյություն ունեցող միջազգային սահմանների անխախտելիության կողմնակից: Իրանը ծանրակշիռ չէր համարում պատմական փաստերի վրա հիմնված տարածքային պահանջները: Ըստ իրանական պաշտոնյաների՝ նման պահանջներն ու փաստարկները կհանգեցնեն տարածաշրջանում անվերջանալի հակամարտությունների[29]:

Թեհրան վերադառնալով՝ ԻԻՀ արտգործնախարարը Մեհրաբադ օդանավակայանում տեղի ունեցած ճեպազրույցի ժամանակ տեղեկացնում է, որ «շուտով Իրանը հակամարտության գոտի է ուղարկելու հատուկ բանագնացի՝ տեղում համադրություններ անելու և հարցերը կարգավորելու համար»: Վելայաթին մի նամակ է հղում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Բուտրոս Ղալիին և տեղեկություններ հայտնում Իրանի միջնորդական առաքելության կազմավորման մասին: Նամակում ԻԻՀ արտգործնախարարը մտահոգություն է հայտնում

[28] Վ. Բայբուրդյան, Իսլամական Հեղափոխության քառորդ դարը: Քաղաքակրթությունների երկխոսություն՝ Հայաստան-Իրան, Միհր, 2 (46), 2004, էջ 37:

[29] Interview with M. Vaezi, theIranian Depuuty Foreign Minister for European and American Affairs and Iran's special envoy formediating in the crisis in Nagorno-Karabakh //Keyhan-21.05.1992. Տես՝ S. Բալայան, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., էջ 33-34:

բախումների տարածման և հակամարտության արմատավորման խնդրի շուրջ և առաջարկում, որ ՄԱԿ-ը պահանջի հակամարտող կողմերի հարևան երկրներից և հզոր տերություններից՝ ձեռնպահ մնալ կողմերին զենք մատակարարելու հարցում: Վելայաթին նամակում նշում է նաև, որ «Իրանը ՄԱԿ-ի հետ ժամանակին լավ համագործակցություն է ծավալել Աֆղանստանի ճգնաժամի և Պարսից ծոցի տագնապի վերացման հարցերի շուրջ և հուսով է, որ Ղարաբաղի հարցում ևս Հայաստանի և Ադրբեջանի միջև ձեռք կբերվի հրադադար հաստատելու պայմանավորվածություն, քանի որ Իրանը ցանկանում է տարածաշրջանում տեսնել կայուն և հարատև խաղաղություն»[30]: Ի պատասխան, մարտի 19-ին ՄԱԿ գլխավոր քարտուղար Բուտրոս-Բուտրոս Ղալին ԻԻՀ արտգործնախարար Վելայաթիին հղած իր ուղերձում ՄԱԿ-ի անունից երախտագիտություն էր հայտնում Իրանի միջնորդական առաքելության և խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու փորձի համար[31]:

Հարկ է նշել, որ դեռևս 1991թ. վերջերին ԻԻՀ Ազգային անվտանգության խորհուրդը քննարկման թեմա էր դարձրել Լեռնային Ղարաբաղի խնդիրը և ԱԽ-ի ներկայացուցիչները հանգել էին այն եզրակացության, որ Իրանը պետք է անմիջական մասնակցություն ունենա խնդրի կարգավորման գործընթացում: 1992թ. սկզբներին Իրանն արդեն հանդես եկավ միջնորդական

[30] Գ. Բաղալյան, Հայ-իրանական հարաբերությունները 20 տարեկան են Երևան-Թեհրան, 2012, էջ 46-47:

[31] R.K. Ramazani, Iran's Foreign Policy: Both North and South, The Middle East Journal, Vol. 46, No. 3, Summer 1992, pp. 393-412. Տես նաև, Է. Բեգիջանյան, Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 54; Abdollah Ramezanzadeh, Iran's Role as Mediator in the Nagorno-Karabakh Crisis, Contested borders in the Caucasus, http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0701.htm

առաքելությամբ և կարողացավ մարտի 15-ին Թեհրան հրավիրել Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին, որպեսզի փորձեն զինադադար հաստատել և բանակցությունների միջոցով հարթել գոնե որոշակի հարցեր:

1991թ. մարտի 15-17-ին Թեհրանում ԻԻՀ ԱԳՆ միջնորդությամբ տեղի ունեցավ հայ-ադրբեջանական հանդիպում, որի ավարտին ՀՀ փոխարտգործնախարար Արման Նավասարդյանը, Ադրբեջանի փոխարտգործնախարար Ալբերտ Սալամովը և ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին ստորագրեցին եռակողմ համատեղ առաջին հայտարարությունը, համաձայն որի՝ հակամարտող կողմերը պետք է մեկ շաբաթով հայտարարեին զինադադար, իրականացվեր գերիների փոխանակում, պետք է տեղի ունենար Ադրբեջանի կողմից Հայաստանի ապաշրջափակում, հակամարտության գոտում դիտորդների տեղակայում: Այդ այցից հետո որոշվեց ստեղծել աշխատանքային մի խումբ, որի նպատակն էր լինելու երկու հարևանների միջև լարվածության թուլացման և առաջացած խնդիրների հարթման ուղիների փնտրումը: Այդ խմբի մեջ ընդգրկվեց փորձառու 9 դիվանագետ՝ փոխարտգործնախարար Մահմուդ Վայեզիի գլխավորությամբ, և սկիզբ առավ մաքոքային դիվանագիտությունը: 1992թ. մարտի կեսերին Մահմուդ Վայեզին ժամանեց Հայաստան և ներկայացրեց արդեն Բաքվի հավանությանն արժանացած իրանական առաջարկները, ըստ որի նախատեսվում էր կրակի դադարեցումից անմիջապես հետո զինադադարի պահպանման հստակ մեխանիզմներ սահմանել. այն է՝ դիտորդների, այդ թվում և ԻԻՀ ներկայացուցիչների տեղաբաշխում[32]: 1992թ. Վայեզին մի քանի անգամ այցելեց

[32] Տ. Բալայան, նշվ. աշխ., էջ 37:

տարածաշրջան, երկու անգամ եղավ Ղարաբաղում, հանդիպումներ ունեցավ ԼՂ ղեկավարության հետ, ինչն աննախադեպ քայլ էր:

Ըստ իրանական դիվանագետների մշակած առաջարկությունների նախատեսվում էր ԼՂՀ-ի ներկայացուցիչներին առաջարկել մասնակցել բանակցություններին իբրև դիտորդ՝ «ԼՂ ադրբեջանական համայնքի» ներկայացուցիչների հետ հավասար իրավունքներով, ինչը ԼՂՀ-ի, ինչպես նաև ՀՀ համար անընդունելի էր[33]:

1992թ. մայիս 6-8-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը պաշտոնական այցով մեկնեց ԻԻՀ, որտեղ պետք է քննարկվեր հայ-իրանական հարաբերություններում առկա խնդիրների և դրանց լուծման ճանապարհների հարցերը, ինչպես նաև նախատեսված էր մի կարևոր հանդիպում. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովը հանդիպելու էին, ովքեր Հաշեմի Ռաֆսանջանիի միջնորդությամբ, փորձելու էին զինադադարի շուրջ համաձայնության գալ:

«Լևոն Տեր-Պետրոսյանի այցից մեկ շաբաթ առաջ ես պետք է մեկնեի Իրան՝ նախապատրաստելու նախագահի այցը, - ներկայացնում է Վ. Փափազյանը: Զինադադարի փաստաթուղթը պատրաստվել էր դեռ մինչև նախագահների ժամանումը Իրան: Փաստաթղթի վրա աշխատել ենք ես, Իրանի կողմից՝ Վայեզին, Ադրբեջանի կողմից՝ փոխարտգործնախարարը: Փաստաթուղթը պատրաստվել էր երեք լեզվով՝ հայերեն, պարսկերեն և ռուսերեն: Հայերենն ու պարսկերենը նույնական էին, իսկ ռուսերենի տեքստը մի փոքր այլ էր, թերություններ կային: Դա կանխամտածված էր արվել, որի մասին տեղյակ էր նաև

[33] Տ. Բալայան, նշվ.աշխ., էջ 38:

իրանական կողմը: Ադրբեջանցիները դա չնկատեցին էլ»[34]: Ստեղծված փաստաթղթի վերաբերյալ այլ կարծիք ուներ այդ պահին գործող արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը. «1992թ. մայիսին, երբ Թեհրան մեկնեցինք ՀՀ առաջին նախագահի պատվիրակության կազմում, այնտեղ արդեն կար մի փաստաթուղթ, որը պատրաստվել էր ոչ իմ կողմից: Այն պատրաստել էր Լևոն Տեր-Պետրոսյանի հատուկ պատվիրակ Վահան Փափազյանը, նրա հետ էր մեկնել իմ տեղակալ Արման Նավասարդյանը: Մեր պատվիրակությունը, առանց պաշտոնական թույլտվության, գոնե առանց իմ գիտության՝ որպես արտգործնախարարի, նախնական կարգով ստորագրել էր մի փաստաթուղթ, որով ԼՂՀ-ն ներկայացվում էր որպես Ադրբեջանի մաս: Ստորագրվել էր Վահան Փափազյանի այցի շրջանակներում, բայց դրվել էր Արման Նավասարդյանի ստորագրությունը: Հավանաբար՝ նրանք ստացել էին նախագահի նստավայրից հրահանգ, հնարավոր է այն ուներ շահեկան դրույթներ, բայց ուներ նաև մեկ կետ, ըստ որի՝ ԼՂ-ն Ադրբեջանի մաս էր կազմում: Այդ փաստաթուղթը դրված էր որպես բանակցությունների հիմք[35]»:

Սակայն Իրանի ջանքերը ապարդյուն եղան զինադադարի շուրջ համաձայնության հասնելու գործում, քանզի Ղարաբաղյան ճակատում տեղի էին ունենում լուրջ խմորումներ, ինչի արդյունքում ազատագրվեց Շուշին, որի մասին պարզ դարձավ հենց փաստաթղթերի ստորագրման ժամանակ: «1992թ. մայիսի 8-ին Սպահանում, ճաշկերույթից հետո Վելայաթին ինձ տեղեկացրեց, որ հենց այս պահին հայկական ուժերը գրոհում են Շուշիի վրա և շուտով կմտնեն

[34] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

[35] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1991-1992թթ.) Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ, մայիսի 3, 2013, Երևան:

քաղաք, - նշում էր Վ. Փափազյանը: Ես, բնականաբար, անտեղյակ ձևացա: Նա ինձ խնդրեց ճշտել այդ ինֆորմացիան և ես զանգահարեցի ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շ. Կարամանուկյանին, հետաքրքրվեցի, թե ինչ է տեղի ունենում ճակատում: Ի պատասխան, նա ասաց. «Այն, ինչ պետք է տեղի ունենար»: Ինձ համար ամեն ինչ պարզ էր: Մոտեցա Լևոն Տեր-Պետրոսյանին ու տեղեկացրի, որ մտնում ենք Շուշի, ի պատասխան, նա ասաց մեկ բառ՝ գիտեմ: Նախագահները ստորագրեցին վերոհիշյալ փաստաթղթերը, որից հետո բոլորս մեկնեցինք Թեհրան՝ այնտեղից ամենքս մեր երկիր վերադառնալու համար: Օդանավակայանում ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին Մամեդովին հարցրեց. «Դուք գիտե՞ք, որ Շուշին կորցրել եք»: Իսկ հետո՝ ավելի ուշ, Լևոն Տեր-Պետրոսյանի մեկնման ժամանակ Ռաֆսանջանին նրան դիմեց քիչ նեղացած տոնով. «Սա անելու բան չէր, որ դուք արեցիք»: Ինչին Լևոն Տեր-Պետրոսյանը շատ հանգիստ ստանդարտ մի պատասխան տվեց. «Բայց մենք դրա հետ ի՞նչ կապ ունենք: Դա կատարել է Ղարաբաղի ազատագրական բանակը»[36]: Ըստ Ժիրայր Լիպարիտյանի, Մամեդովը Թեհրանում բարձր մակարդակի հանդիպման և փաստաթղթերի ստորագրման պահին արդեն գիտեր Շուշիի զարգացումների մասին, հետևապես կարող էր հրաժարվել փաստաթուղթը ստորագրելուց[37]:

Հատկանշական է, որ Թեհրանում տեղի ունեցած բանակցություններին Ղարաբաղյան ղեկավարությունը մասնակցելու հրավեր այդպես էլ չստացավ, թեև Վայեզին մի քանի անգամ այցելել էր Ստեփանակերտ և ԼՂՀ ղեկավարության հետ անցկացրել բանակցություններ:

[36] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

[37] Տ. Բալայան, նշվ.աշխ., էջ 42:

Քննարկվել էր նաև Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցության հարցը, նվազագույնը դիտորդի կարգավիճակով: Կիսում ենք Տ. Բալայանի կարծիքը, ըստ որի «բանակցային գործընթացից դուրս մնացած ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությունը Թեհրանի հանդիպմանը զսպանակի դեր կարող էր խաղալ Լեռնային Ղարաբաղի զորամիավորումների համար, և Շուշիի գործողությունները չէր սկսվի նույն օրը»[38]:

ԻԻՀ միջնորդական առաքելության տապալման պատճառների թվին կարելի է դասել նաև այն, որ Լեռնային Ղարաբաղը բանակցությունների մասնակից չդարձվեց, ինչպես նաև Իրանն անհրաժեշտ քննադատության չենթարկեց Ադրբեջանին, երբ վերջինս խոչընդոտում էր ԻԻՀ բանագնացի աշխատանքներին, որոնցից ամենաակնհայտը թերևս 1992թ. ապրիլի 8-ի Ստեփանակերտի հրթիռակոծությունն էր, երբ Վայեզին բանակցում էր ԼՂ ղեկավարության հետ:

Հատկանշական է, որ Իրանը երբևէ չարձագանքեց ԼՂՀ հայկական գյուղերի ոչնչացման ժամանակ, որևէ կերպ չորակեց 1992թ. Մարաղայում տեղի ունեցած ոճրագործությունը: Միևնույն ժամանակ իրանական կողմը ըստ արժանվույնս չէր ներկայացնում, որ հայկական ուժերը ստիպված են եղել ազատագրել ինչպես Շուշին, այնպես էլ Վարանդան (Ֆիզուլի), Ջրականը (Ջաբրայիլ) և Սանասարը (Ղուբաթլու), քանի որ այդ շրջաններից անընդհատ հրետակոծվում էին հայկական տարածքները: Իրանն Ադրբեջանին պաշտոնական ամենաբարձր մակարդակով անընդհատ հավաստիացնում էր, որ ճնշումներ է գործադրում Հայաստանի Հանրապետության վրա, որպեսզի հայկական ուժերը դուրս բերվեն Ադրբեջանին «պատկանող» տարածքներից: Ադրբեջանն առաջին

[38] Տ. Բալայան, նշվ.աշխ., էջ 45:

տարիներին հույս ուներ, թե Իրանը կկարողանա ճնշման միջոցով հայկական կողմից զիջումներ կորզել, սակայն, չստանալով ակնկալածը, միևնույն ժամանակ ականատես լինելով Իրանի իսլամական արժեհամակարգի ներթափանցման ագրեսիվ գործողություններին, Ադրբեջանը սկսեց սահմանափակել հարաբերությունների մակարդակը Իրանի հետ՝ հակվելով դեպի Թուրքիա:

Այսպիսով, Իրանի միջնորդական առաքելությունը, բնականաբար, տապալվեց, ինչը հարված էր Իրանի վարկանիշին: Իրանը ջանքեր էր գործադրում զինադադարի հասնելու համար, սակայն այդ նույն ժամանակ տեղի ունեցավ ռազմական լուրջ գործողություն, որը փոխեց իրավիճակը: Իրանի և Հայաստանի միջև առկա լարվածությունը հարթելու համար, Լևոն Տեր-Պետրոսյանի հրահանգով Վ. Փափազյանը մեկ ամիս անց մեկնեց Թեհրան տանելով ՀՀ նախագահի նամակը ուղղված Հ. Ռաֆսանջանիին, որտեղ ափսոսանք էր հայտնվում կատարվածի համար: «Ռաֆսանջանին ինձ չընդունեց՝ հանձնարարելով ընդունելությունը Հասան Հաբիբիին՝ տեղակալին: Ես ներկայացրի իրավիճակը, նա էլ արտահայտեց իրենց մտահոգությունները և այսպիսով, կարծում եմ, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց[39]»:

Հայաստանի ղեկավարությունը, հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը և ստեղծված քաղաքական իրավիճակը, Իրանի՝ տարածաշրջանի հզոր տերություններից մեկի հետ, հարաբերություններին տվեց ռազմավարական նշանակություն: Սակայն ամեն ինչ այդքան հեշտ չէր. արցախյան ճակատում ձեռք բերած հաջողությունները բավական լուրջ լարվածություն էին առաջացրել իրանական հասարակության որոշ

[39] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

շրջանակների մոտ ևս, որոնք էլ հանդես էին գալիս կտրուկ և հաճախ բավական կոշտ գործելաոճով: Իրանի թյուրքախոս բնակչությունը կառավարությանը մեղադրում էր, որ նորաստեղծ Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ են հաստատվում և պակաս կարևորություն է տրվում եղբայր, դավանակից Ադրբեջանին: Սակայն, մեր կարծիքով, դա չի համապատասխանում իրականությանը, քանզի Իրանը հավասար մոտեցումներ է ցուցաբերել երկու հարևանների նկատմամբ: Այլ հարց է, որ Ադրբեջանը գերադասել է հարաբերությունները խորացնել Թուրքիայի հետ, երկրորդական մոտեցում ցուցաբերելով Իրանին: Ադրբեջանը նաև գտնում էր, որ անկախ Իրանի հանդեպ իր վերաբերմունքից, պաշտոնական Թեհրանը միանշանակ պետք է սատարի դավանակից «եղբորը» և, չստանալով այն, ինչ ակնկալում էր, մեկը մյուսի հետևից գործեց սխալներ, որոնք Իրանի կառավարությանն անհանգստացնում էին:

1992թ. Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը Արցախյան ճակատում Ադրբեջանի պարտության մեջ մեղադրեց Մութալիբովին, ինչպես նաև Իրանին և հրաժարվեց հակամարտության կարգավորման ժամանակ Իրանի միջնորդական առաքելությունից: Իրանի և Ադրբեջանի միջև հարաբերություններն էականորեն լարվեցին, հատկապես 1992թ. հունիսի սկզբին, երբ Ադրբեջանում իշխանության եկած Ժողովրդական ճակատը իր կանոնադրության մեջ ամրագրեց ԻԻՀ Ատրպատական նահանգն Ադրբեջանին միացնելու հավակնության մասին[40]: Ադրբեջանի նոր նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը ընդհանրապես աչքի էր ընկնում հակաիրանական և

[40] Է. Բեգիջանյան, Իրան-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, էջ 58:

թուրքամետ գործելաոճով: Նրա առաջին հայտարարություններից մեկը հանդիսացավ այն, որ Ռուսաստանը և Իրանը սպառնալիք են ներկայացնում Ադրբեջանի անվտանգության համար, ուստի Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Թուրքիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Արևմուտքի այլ տերությունների հետ[41]:

Ադրբեջանն աստիճանաբար սառեցրեց հարաբերությունները Իրանի հետ և ակտիվորեն համագործակցեց տարածաշրջանում Իրանի մրցակից Թուրքիայի, Իրանի թշնամի համարվող Իսրայելի ու Միացյալ Նահանգների հետ:

4. Ուղղորդված սադրանքներ

Արցախյան ճակատում արձանագրած պարտությունները և ռազմարվեստում իրենց ապիկարությունը քողարկելու նպատակով, Ադրբեջանը մի շարք մեղադրանքներ հնչեցրեց Իրանի հասցեին և որդեգրելով նեղացածի կեցվածք, սառեցրեց հարաբերությունները: Ադրբեջանին խիստ անհանգստացնում էր նաև Իրանի և Հայաստանի խորացող հարաբերությունների մակարդակը:

1993թ. ապրիլի 13-ին Թեհրանի համալսարանի թյուրքախոս իրանցիները, որոնց միացան նաև Ադրբեջանից Իրան եկած քաղաքացիները, ի նշան բողոքի՝ Քարվաճառում ԼՂՀ ուժերի վերահսկողություն հաստատման քայլարշավով, մոտեցան ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատանը: Ամբոխը վանկարկում էր. «Հայաստանի բանակ՝ դուրս մահմեդական տարածքներից», «Դաշնակները և սիոնիստները մեկ դրամի երկու երեսն են», «Լաչինը, Քելբաջարը և Ղուբաթլին պետք է ազատվեն», «Հավթիչ պետության հետ պետք է խզվեն դիվանագիտական հարաբերությունները»[42]:

«Ղարաբաղի պատերազմի ժամանակ մահմեդական բնակչության կողմից դա ընկալվում էր իբրև «իսլամական հողերի գրավում անհավատների կողմից», նշում է Վահան Բայբուրդյանը: Դեսպանությունն աշխատում էր Թեհրանի ազերիական համայնքի կողմից պարբերաբար կրկնվող սպառնալիքների պայմաններում: Իսկ 1993թ. նույնիսկ տեղի ունեցավ հարձակում դեսպանության շենքի վրա: Ազերիներից բաղկացած ամբոխը քարկոծեց և հրավառ նյութեր շպրտեց դեսպանատան շենքի վրա և սպառնում էր հաշվեհարդար տեսնել դիվանագետների հետ: Իրանի քաղաքացիներ հանդիսացող էթնիկ ազերիների նման գրգռվածության պայմաններում բնականաբար և՛ մենք, և՛ իրանական կողմը, հարկադրված էինք մեր երկկողմանի հարաբերություններն իրագործել առանց ավելորդ աղմուկի ու ցուցադրումների»[43]:

Իրանի պետական կառույցները բնականաբար պաշտպանական ուժեր ուղարկեցին դեսպանատան անձնակազմի անվտանգությունն ապահովելու համար, սակայն սա մի ժեստ էր նաև ցույց տալու, որ հայերի առաջխաղացումներն Արցախյան պատերազմում միանշանակ չեն ընդունվում Իրանի հասարակության, ինչու չէ, նաև ղեկավարության որոշ շերտերի կողմից: «Փաստ էր նաև, որ այն ղեկավարվում էր մի կենտրոնից, քանի որ իրավապահ մարմինները միայն տասը րոպե հետո միջամտեցին գազազած ամբոխի կողմից դեսպանության

[41] Վ. Բայբուրդյան, Իրան-Ադրբեջան. Հարևաններ թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներև ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2008, էջ 10:

[42] Ազգ, օրաթերթ, 15.04.1993:

[43] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.) Վահան Բայբուրդյանի հետ, ապրիլ 13, 2012, Երևան (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

շենքի վրա քարերով հարձակմանը: Հարձակման արդյունքում ամբողջությամբ կոտրվեցին ՀՀ դեսպանության պատուհանները, վնասվեցին մետաղյա դռները: Երբ գազազած ամբոխը փորձ արեց մուտք գործել դեսպանություն, իրավապահ մարմինների մի քանի տասնյակի հասնող ներկայացուցիչները հրամանը ստանալուն պես՝ անցան գործի: Սաղավարտներով և մահակներով նրանք դեպի մոտակա այգին և Էնդելաբ փողոցը քշեցին գազազած ամբոխին: Հաջորդ օրը ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայբուրդյանը երկու շաբաթով ետ կանչվեց Հայաստան»[44]:

Հատկանշական է, որ դեսպանատան վրա հարձակման փորձի հաջորդ օրը Իրանի արտգործնախարար Վելայաթին ուղերձ հղեց Հայաստանին՝ դուրս բերել հայկական ուժերը գրավյալ տարածքներից[45]: Փաստորեն ստեղծվել էր մի իրավիճակ, որտեղ Հայաստանի դեսպանատան վրա հարձակումը քննադատելու փոխարեն, քանզի այսպիսով կոպտորեն խախտվում էր Վիեննայի կոնվենցիայի 22-րդ կետը դեսպանատան անձեռնմխելիության դրույթի վերաբերյալ[46], իրանական կառավարությունը դեռ կոչ էր անում հայկական ուժերը դուրս բերել «գրավյալ» տարածքներից: Սրանով, թերևս, Իրանը մի վերջին քայլ էր կատարում, ապացուցելու Ադրբեջանին, որ թեև նրանք հակվել են դեպի Թուրքիա, սակայն Իրանը, միևնույն է, Ադրբեջանին դիտարկելով իբրև նույն կրոնի և նույն ուղղության հետևորդ, առաջնությունը տալիս է նրա շահերի պաշտպանությանը:

---

[44] Գ. Բաղալյան, Հայ-իրանական հարաբերությունները 20 տարեկան են, էջ 60:

[45] Վ. Բայբուրդյան, Իրան-Ադրբեջան. Հարևաններ թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, էջ 11:

[46] Венская конвенция о дипломатических сношениях, http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/dip_rel.shtml

ՀՀ ԱԳՆ-ը հրավիրեց ԻԻՀ դեսպանին, որպեսզի վերջինս բացատրություն տա ստեղծված իրավիճակի մասին և ՀՀ ԱԳՆ ներկայացրեց իր դժգոհությունը լարված դրության կապակցությամբ: Ընդհանրապես, պետք է փաստել նաև այն հանգամանքը, որ ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան գործունեությունը կաղապարված էր. հաճախ ՀՀ դեսպանին ընդունում էր ԱԳՆ-ում դիվանագիտական աստիճանով առավել ցածր պաշտոնյա, ով ի զորու չէր լուծելու այս կամ այն առաջացած խնդիրը, ինչը բավական դժվարացնում էր դեսպանի աշխատանքները: Մինչդեռ ՀՀ-ում ԻԻՀ դեսպանն ու դեսպանատան անձնակազմը շատ ավելի ազատորեն էին գործում: ՀՀ դեսպանատան գործունեությունը է՛լ ավելի սահմանափակվեց, հատկապես ՀՀ-ում դաշնակցականների հետապնդումներից հետո, երբ իրանահայ համայնքը ևս սկսեց չհամագործակցել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան հետ:

Հայտնի է, որ 1993թ. ապրիլին Արցախում տեղի ունեցած թեժ բախումների ժամանակ Ադրբեջանի քաղաքական էլիտան օգնություն էր խնդրել ԻԻՀ-ից, որպեսզի վիրավորներին անմիջապես տեղափոխեն Թեհրան՝ բուժօգնություն ստանալու նպատակով[47]: Իրանը, բնականաբար չէր կարող մերժել մարդասիրական օգնության հարցում, սակայն Ադրբեջանի այս գործելաոճը, ըստ իս, պարունակում էր ենթաշերտ. Իրանի քաղաքացիներին ցույց տալ թե ինչ «վայրագությունների» են դիմում հայերն՝ այդպիսով է՛լ ավելի բորբոքելով Իրանի թյուրքախոս բնակչության ցասումը, ինչի արդյունքն էլ թերևս եղավ դեսպանատան վրա հարձակման փորձը:

Քաղաքական թերևս առավել վտանգավոր խնդիրը ծագեց 1994թ. մարտի 17-ին: ԻԻՀ-ի դիվանագետները իրենց ընտանիքներով, որոնց պաշտոնական թիվը 32 էր,

---

[47] Ազգ, օրաթերթ, 22.04.1993:

Մոսկվայից C-130 Հերկուլես ռազմական բեռնատար օդանավով, շտապում էին հայրենիք՝ Նովրուզի տոնակատարությանը մասնակցելու համար: Վրացական կողմի երթակարգավարները օդանավի կառավարումը հանձնեցին Գանձակի օդանավակայանին, վերջիններս իրանական ինքնաթիռը պետք է ուղարկեին Հայաստանի օդային տարածք, սակայն կանխամտածված ուղարկեցին Ղարաբաղի կողմը՝ շատ լավ հասկանալով, թե ինչ է սպառնալու ռազմական ինքնաթիռին: Այս առնչությամբ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանը հայտարարեց, որ ինքնաթիռը պետք է Ռուսաստանից, Վրաստանից հետո մտներ Հայաստանի տարածք, որտեղից էլ կշարժվեր Իրան: Սակայն այն երթուղուց շեղվել էր մոտ 65 մղոն դեպի արևելք և լքելով Վրաստանի օդային սահմանը՝ հայտնվել էր ոչ թե Հայաստանի, այլ Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողությունների շրջանում[48]:

Ղարաբաղի երկնքում իրանական ինքնաթիռը հրթիռակոծվեց և զոհվեցին դիվանագետներ: Իրանական կողմը, բնականաբար, արձագանքեց և այն էլ բավական կոշտ: Անգամ պետական մակարդակով հայտարարվում էր, որ կխզեն հարաբերությունները Հայաստանի հետ, եթե Հայաստանն անհրաժեշտ բացատրություններ չտա այս խնդրի կապակցությամբ: Հայ-իրանական հարաբերությունների վրա իրավամբ կախվեց դամոկլյան սուրը: ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն անմիջապես հրավիրեց Անվտանգության խորհրդի նիստ՝ քննարկելու ստեղծված իրավիճակը. որոշվեց Իրան ուղարկել հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահ, փոխնախագահ Գագիկ Հարությունյանին, ով բավական մեծ

[48] 32 Die as Iranian Plane Strays, Crashes in Karabakh War Zone, Los Angeles Times, March 19, 1994, http://articles.latimes.com/1994-03-19/news/mn-35859_1_iranian-plane

կապեր ուներ Իրանի քաղաքական վերնախավի հետ և նա պետք է փորձեր տեղում քննարկել ստեղծված իրավիճակը: «Ես հրավիրեցի մասնագետների, գրեթե երկու օր ու գիշեր աշխատեցինք «դոսյե» պատրաստելու վրա և այն մոտավորապես 250 էջանոց մի թղթածրար էր, որտեղ հավաքվել էին տարբեր փաստաթղթեր: Այս ամենով հանդերձ, ինձ մոտ առաջացել էր մոտ 15 հարց, որոնց պատասխանները ես չունեի: Ես այսօր էլ չեմ մանրամասնի այդ հարցերը, բայց ես այդ ժամանակ զարմացա, որ իրանական կողմը այդքան լիարժեք պնդում էր մեր մեղավորության հարցը, չտալով որոշ հարցերի պատասխաններ: Եվ ես փորձեցի հարցին մոտենալ ոչ թե մեղանչողի դիրքերից, այլ առաջին հերթին պարզել, թե ինչ է իրականում տեղի ունեցել»[49]:

Հայկական պատվիրակությունը ժամանեց Թեհրան: Թեհրանում հայկական պատվիրակությանը բավականին սառը ընդունելության արժանացրած Վայեզին անմիջապես սկսեց արծարծել հարաբերությունների մակարդակի իջեցման հարցը և Գ. Հարությունյանին խորհուրդ տվեց հայ-իրանական հարաբերությունների «փրկության միակ ճանապարհը». «Դուք պետք է գնաք գերեզմանատուն, ծաղիկներ դնեք նրանց շիրիմներին, կհրավիրենք հարազատներին և դուք պետականորեն ներողություն կխնդրեք կատարվածի համար, կերաշխավորեք փոխհատուցումը, որից հետո մենք կմտածենք, թե այսուհետ ինչպես ենք զարգացնելու մեր հարաբերությունները»[50]: Փոխհատուցումը Վայեզին նկատի ուներ «արյան գինը», որ մահմեդականին սպանելու համար պարտավոր են վճարել: Գ. Հարությունյանը պահանջեց Վայեզիից, որպեսզի

[49] Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96թթ) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան:

[50] Նույն տեղում:

հանդիպում կազմակերպի այն անձնավորության հետ, ով լիազորություններ ունի ստեղծված խնդրի կապակցությամբ քննարկում իրականացնել: Քննարկումը տեղի ունեցավ ԻԻՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հետ, ով այսօր ԻԻՀ նախագահն է՝Հասան Ռոհանին: Ռոհանին, որ միշտ ջերմ ընդունելության էր արժանացրել Գ. Հարությունյանին, այս անգամ բավական սառն էր: «Ես խնդրեցի, -հիշում է Գ. Հարությունյանը, որ բացի թարգմանչից, ոչ մեկ չմասնակցի մեր զրույցին, որովհետև անհրաժեշտ էր բացել շատ փակագծեր: Մեր զրույցը տևեց մոտավորապես մեկուկես ժամ, այնուհետև Ռոհանին ասաց, որ ինքը որոշում չի կարող կայացնել և նա պետք է ամեն ինչ զեկուցի նախագահին, բայց այդ զրույցի ընթացքում իր նախկին վիճակի մեջ մտավ, արդեն կար ժպիտ, որոշ ջերմություն: Բայց, երբ նա ինձ թևանցուկ արած, ճանապարհեց մինչև մեքենայի մոտ, անգամ դուռը բացեց, որ ես նստեմ, ինձ մոտ ներքին վստահություն ամրապնդվեց, որ ամեն ինչ հարթվելու է, մինչդեռ իրանական կողմը քարացել էր»[51]:

Գագիկ Հարությունյանը «իր հետ ուներ դիսպետչերական ծառայությունների ձայնագրությունների վերծանությունը, որտեղ պարզորոշ կերպով երևում էր, որ Ադրբեջանի սադրանքներով է իրանական ինքնաթիռը կործանվել, - պատմում է Գ. Առաքելյանը, ով եղել էր հենց թարգմանիչը այդ ժամանակ: - ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանին, ով իր բնույթով զգացական մարդ է, հուզմունքով ընդունեց ՀՀ բարձրաստիճան պատվիրակության ցավակցությունը և իրատեսական պատկերացում կազմեց տեղի ունեցածի մասին: Սկզբնական շրջանում իրանական կողմը զոհվածների հարազատներին վճարվող փոխհատուցում էր պահանջում,

[51] Նույն տեղում:

սակայն ժամանակի ընթացքում, այդ հարցը դուրս եկավ ԱԳՆ-ների երկկողմ բանակցությունների օրակարգից: Սա շատ ծանր ժամանակաշրջան էր»[52]: Հատկանշական է, որ «արյան գնի» հետ կապված Հայաստանի Հանրապետությունը որևէ պատասխանատվություն չէր կարող կրել և իրանական կողմն էլ, թերևս, դա շատ լավ հասկանում էր: Դեպքը չէր կատարվել ո՛չ ՀՀ տարածքում, ո՛չ էլ ՀՀ մեղքով. եթե փոխհատուցում պահանջեին, ապա դա պետք է արվեր Ղարաբաղից, իսկ դա կնշանակեր, որ ճանաչում են նրան որպես անկախ միավոր: Իրանական կողմն էլ շատ լավ հասկացավ, որ դա եղել է Ադրբեջանի սադրանքը:

Գ. Հարությունյանի հետ զրույցի ընթացքում, տարատեսակ խաչաձև հարցադրումների արդյունքում ես հասկացա 15 հարցերից մեկը. իրանական կողմը պաշտոնապես հրապարակում էր, թե ինքնաթիռում գտնվել է 32 մարդ, որոնք դիվանագետներ էին կամ նրանց ընտանիքի անդամներ, ներառյալ ինքնաթիռի անձնակազմը: Փաստորեն թիվը շատ ավելին է եղել քան 32-ը, և բոլորը չէ, որ եղել են դիվանագետների ընտանիքի անդամներ: Անհրաժեշտ է եղել բացատրություն տալ հայկական կողմին, թե ովքե՞ր են եղել մնացած մարդիկ և ի՞նչ առաքելություն են փորձել իրականացնել, որի պատասխանը չի տրվել: Հստակ չի եղել նաև թռիչքի ուղղությունը, ցավոք սրտի, այդ թղթածրարը մեզ հասանելի չէ և ամբողջական ու վերջնական պատկերացում չենք կարող ունենալ խնդրի կապակցությամբ:

Եվ որ այս կնճռոտ խնդիրը իսկապես հարթվեց, փաստում է այն հանգամանքը, որ 1994թ. նոյեմբերին երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների

[52] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանի հետ (2009-2014թթ.), նոյեմբերի 2, 2012, Թեհրան, ԻԻՀ:

մակարդակը հավատարմատարից բարձրացվեց՝ հասցվելով արտակարգ և լիազոր դեսպանի, որը խոսում է հարաբերությունների կայուն և դինամիկ զարգացման մասին: 1994թ. նոյեմբերի 9-ին Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնն ստանձնեց Վահան Բայբուրդյանը, իսկ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնն ստանձնեց Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին:

5. Փրկության կամուրջ

Հայաստանի և Իրանի կառավարությունների կողմից մեծ ջանքեր էին ներդրվում, որպեսզի հարաբերությունների մակարդակը բարձրացվի, քանզի կար և՛ քաղաքական կամք, և՛ ներուժ այն իրականացնելու համար: 1994թ. նոյեմբերի 27-ին Թեհրան այցելեց ՀՀ տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը: Այցի ընթացքում ստորագրվեց մի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև Արաքս գետի վրայով սահմանային կամրջի կառուցման մասին: «Արդեն պանտոնները շարքից դուրս էին եկել, և ամեն վերանորոգման համար նվազագույնը պետք էր լինում հինգ ժամ, իսկ նավակամրջի փակելու դեպքում Երևանում մոտավորապես 5%-ով գների ցատկ էր գրանցվում: Կամուրջի հարցը դարձել էր խիստ կենսական, սակայն մենք կամուրջ կառուցելու միջոցներ չունեինք: Իրանական կողմն էլ չէր կարողանում վերջնական եզրակացության գալ, թե ինչ սկզբունքով է մեզ հետ իրավապայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու՝ կամրջի կառուցման և շահագործման դեպքում: Որոշվեց հետևյալը. մինչև Արաքս գետի կենտրոնի մի մասը

կառուցում է իրանական կողմը, մյուս մասը մենք՝ մեր կառուցածը դառնում է մեր սեփականությունը, համապատասխանաբար, մյուս մասն էլ՝ Իրանի սեփականությունը: Որևէ տուրք չենք սահմանում, մեր և իրանական մեքենաներն առանց վճար կատարելու ազատ անցնում են կամրջով»[53]:

Այս նույն ընթացքում իրականացվում էին ակտիվ աշխատանքներ, որպեսզի գտնեին համապատասխան կամրջի մետաղակառուցվածք և ֆինանսներ՝ այդ կամուրջը կառուցելու համար: Դեռևս 1992թ. մայիսին կամրջաշինության հայ մասնագետները Վորոնեժի կամրջային մետաղակառուցվածքների գործարանում գտան 63,6մ թռիչքով պատրաստի մետաղակոնստրուկցիաներ.... որի պատվիրատուն հրաժարվել էր դրանցից: Կնքվեց մի պայմանագիր, որի հիման վրա Հայաստան պետք է առաքվեր երեք թռիչքային կառուցվածք, յուրաքանչյուրի համար պետք է փոխանցվեր 7 միլիոն ռուբլի կանխավճար: Այդ ժամանակ Աբխազիայի տարածքով առանձին գնացքներ դեռևս գալիս էին դեպի Վրաստան և Հայաստան: Օգտվելով այդ հնարավորությունից, փոքր եզրաչափերի մետաղակառուցվածքները (10մ երկարությամբ) առանց դժվարության Սև ծովի ափեզրով հասան Հայաստան: Սակայն մեծ եզրաչափերի կառուցվածքների բարձրությունները այնպիսին էին (երկարությունը՝ 21,3մ, բարձրությունը՝ 4 մետր, կշիռը՝ 21 տոննա: Այդպիսիք 18 հատ էին) որ Սևծովյան երկաթուղագծի Տուապսեի տեղամասի թունելներով տեղափոխելը անհնար էր: Միակ ճանապարհը Ադրբեջանն էր.....հայ կամրջաշինարարները խնդիրը փորձեցին լուծել անսովոր եղանակով: Նրանք որոշեցին օգտագործել

[53] Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Գագիկ Հարությունյանի հետ:

նախկինում իրենց կապերը Վրաստանի շինարարների հետ և առաքվող 370տ. կշիռ ունեցող մետաղյա հեծանները վերահասցեագրել վրացական «Մոստ» ֆիրմային, որը գտնվում էր Թբիլիսիում: Խնդիրն էր՝ հասցնել Վրաստան ու այնտեղից տեղափոխել Հայաստան[54]:

Փաստորեն, 1992թ. մայիսին, մինչ Արցախյան ճակատում տեղի էր ունենում հայկական հողերի ազատագրման գործընթացը, հայ մասնագետները կարողացան Հայաստանի համար կենսական և ռազմավարական նշանակություն ունեցող Հայաստան-Իրան կամրջի մետաղակառուցվածքը անցկացնել հենց Ադրբեջանի տարածքով՝ օգտագործելով իրենց ոչ պաշտոնական կապերը:

Բացի այն, որ կամրջի կառուցման համար առկա էին ֆինանսական լուրջ դժվարություններ, անհրաժեշտ էր հաղթահարել մետաղակառուցվածքների տեղափոխման «անհավատալի» ծրագիրը, կար նաև մեկ այլ և կրկին՝ բավական լուրջ խնդիր: «Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը նամակ էր հղել Հ. Ռաֆսանջանիին, որը դարձավ ԻԻՀ Ազգային Անվտանգության խորհրդի քննարկման հարց, - նշում է Գ.Հարությունյանը: Այդ նամակը ես տեսել եմ, որտեղ բառացիորեն նշված էր. «Ավելի լավ է դուք զենք մատակարարեք Հայաստանին, բայց հրաժարվեք կամրջի կառուցման գաղափարից: Եթե դուք այդ կամուրջը կառուցեք, մեր հարաբերություններն առնվազն 100 տարի այլևս չեն վերականգնվի»: Այսպիսի խիստ պահանջներ էին դրվել իրանական կողմի առջև, և մեզ տեղեկացրեցին առկա փակուղային վիճակի մասին»[55]:

Մետաղակառուցվածքները դեպի Մեղրի հասցնելը կրկին բոլոր օրենքներին և նորմատիվներին

[54] Ժ. Մ. Միրզաբեկյան, նշված աշխ, էջ 77-80:

[55] Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Գագիկ Հարությունյանի հետ:

չհամապատասխանող և անհնարին թվացող աշխատանք էր: Քանզի այդ մետաղական կառուցվածի երկարությունը և լեռնային ոլորանների լայնությունն անհամատեղելի էին, և հաճախ անհնար էր պարզապես դա տեղափոխել:

Իսկ կամրջի ֆինանսական հարցերը լուծվեցին Ավստրալիայի հայության հանգանակությամբ: Դեռևս 1992թ. ապրիլի 4-ին Գագիկ Հարությունյանը նամակ է գրում Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Աղան եպիսկոպոս Պալիոզյանին, որով խնդրում է Հայաստանի աղետի գոտու համար հանգանակած մեկ միլիոն դոլարը թույլ տալ օգտագործել Իրան-Հայաստան կամրջի աշխատանքները իրականացնելու համար: Ի պատասխան, 1992թ. հուլիսի 6-ին Պալիոզյանը գրում է, որ քննարկել են հարցը համայնքի ներկայացուցիչների հետ և ստացել են համաձայնություն, սակայն, միևնույն ժամանակ խնդրում է Գ. Հարությունյանից՝ մի ֆաքս ուղարկել անգլերեն լեզվով, որտեղ պետք է գրված լիներ գումարի ստացման մասին, և որ այն պետք է ծախսվեր աղետի գոտու բնակիչների կյանքի և տնտեսության բարելավման համար. սա պետք էր, որպեսզի անհրաժեշտության դեպքում այն ցույց տրվեր Ավստրալիայի ղեկավարությանը[56]: Սույն մանրամասները ներկայացնում ենք ընթերցողին, որպեսզի մեր հասարակությունն առավել լավ պատկերացում կազմի սփյուռքի գաղութներում բնակվող մեր հայրենակիցների վիճակի մասին: Այո՛, նրանք կարող են հանգանակել գումար, սակայն, այնուամենայնիվ նրանք որոշակի չափով, ըստ, բնակության երկրի կարգավիճակի, հաշվետու են իրենց երկրում այդչափ գումարի դուրսգրման դեպքում, և հաճախ պետք է հարմարեցնել համայնքի շահը, հայրենիքի

[56] Նամակագրությունը տես Ժ. Մ. Միրզաբեկյան, Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում:

հանդեպ սերը և տվյալ երկրի հետաքրքրությունները, որը ինքնին հաճախ չէ, որ համընկնում է:

Այնուամենայնիվ, հաղթահարելով քաղաքական, նյութական, աշխարհագրական բոլոր խոչընդոտները՝ 1996թ հունվարի 9-ին, տիտանական աշխատանքի արդյունքում բացվեց Մեղրու կամուրջը:

Հայաստան-Իրան հիմնական կամրջի շահագործումից հետո Իրանը Հայաստանի համար հանդիսացավ Պարսից ծոցի, Հեռավոր Արևելքի, Հարավ-Արևելյան Ասիայի երկրների բեռնափոխադրումների տարանցիկ ճանապարհ: Բեռնափոխադրումներն ավելացան մոտ 3-4 անգամ: Հայաստանում ակտիվորեն սկսեցին գործել հայ-իրանական 200-ից ավելի ձեռնարկություններ[57]: Մի պահ ԻԻՀ-ն Հայաստանի արտաքին առևտրի մեջ գրավեց առաջին տեղը:

6. Հարաբերությունների ակտիվացում

Իրանը կենսականորեն շահագրգռված է տարածաշրջանային իր քաղաքականության մեջ Հայաստանին ավելի ակտիվ կերպով ներգրավվելու հարցում, ընդ որում՝ ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ հարաբերությունների հիմքի վրա: Դրա վառ ապացույցը 1995թ. ապրիլի 8-ին ստորագրված եռակողմ համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարությունն էր՝ ԻԻՀ-ի, ՀՀ-ի և Թուրքմենստանի միջև:

1996թ. դեկտեմբերի 25-29-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց 40 հոգանոց պատվիրակություն՝ ԻԻՀ առաջին փոխնախագահ Հ. Հաբիբի գլխավորությամբ, և, ի

[57] Համառոտ տեղեկանք Իրանի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի վերաբերյալ, 20.08.1998, ՀՀ ԱԳՆ, պատմաիրավանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:

թիվս այլ հարցերի, նրանք քննարկեցին եռակողմ ծրագրերի իրականացման գործընթացը: Այցի շրջանակներում կնքվեց 3 պայմանագիր, բազմաթիվ համաձայնագրեր: «Այդ տարիներին բավական ակտիվ քննարկումներ և հանդիպումներ էինք ունենում եռակողմ ձևաչափով՝ Հայաստան-Իրան-Թուրքմենստան և Հայաստան-Իրան-Հունաստան, որոնք փոխշահավետ քննարկումներ էին: Արդյունքներ գրանցվեցին հատկապես Հայաստան-Իրան-Թուրքմենստան ձևաչափում, որտեղ հնարավորություն ընձեռվեց իրականացնելու ապրանքափոխանակություն, ինչը տնտեսական առումով շահավետ էր Հայաստանի համար»[58]:

Իսկ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը գտնում էր, որ Հայաստան-Իրան-Թուրքմենստան և Հայաստան-Իրան-Հունաստան եռակողմ համագործակցության ծրագրերը լիարժեք իրականացման դեպքում անգամ չեն կարող չեն կարող էական ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման վրա: «Բոլորիս համար էլ, կարծում եմ, հասկանալի է, որ տնտեսական առումով շատ ավելի գործնական ու կարևոր են ԳՈՒՈՒԱՄ-ը, ՏՐԱՍԵԿԱ-ն, ԷԿՕ-ն, նավթամուղային կոնսորցիումները, որոնց դռները, դժբախտաբար, առայժմ փակ են մեր առաջ»[59]:

Թե՛ Հայաստանի, թե՛ Իրանի քաղաքական գործիչները գիտակցում էին, որ որքան էլ երկուստեք սերտ լինեն հարաբերությունները, այնուամենայնիվ, Հայաստանի շուկան բավական փոքր է Իրանի համար: Քննարկումների ժամանակ հստակորեն նշվեց, որ անհրաժեշտ է Հայաստան-Իրան համագործակցությանը ներգրավել նաև

[58] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1996-97թթ.) Ալեքսանդր Արզումանյանի հետ, մայիսի 19, 2012, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[59] Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երևան, 2006, էջ 655:

Վրաստանին: Իրանը ցանկանում էր Հայաստանի և Վրաստանի տարածքով ելք ունենալ դեպի սևծովյան նավահանգիստներ, որտեղից հեշտությամբ կհասներ Եվրոպա: Այլ կերպ ասած՝ Հայաստանը Իրանի համար կարող էր հանդիսանալ տարանցիկ միջանցք՝ Արևմուտքի երկրների և Ռուսաստանի հետ առևտրատնտեսական կապեր հաստատելու համար: Սակայն այդ գործում խիստ կարևոր էր Վրաստանի մասնակցությունը, այլապես ձևավորվող առանցքն անիմաստ էր դառնալու:

Ձևավորվում էր մի յուրատեսակ դաշինք՝ Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան, որի իրականացման դեպքում յուրաքանչյուր կողմ շահող էր դուրս գալու: Իրանական ապրանքները Եվրոպա հասնում են՝ հիմնականում օգտվելով Թուրքիայի ցամաքային ճանապարհից: Դաշինքի ձևավորման դեպքում Իրանը կունենար այլընտրանքային ցամաքային ճանապարհ: Հայաստանը և Վրաստանը կդառնային տարանցիկ պետություններ, որից մեծապես կշահեին երկու երկրների տնտեսությունները:

Հանդիպելով Հայաստանի պետական այրերի հետ՝ Հաբիբին քննարկեց Հայաստան-Իրան-Թուրքմենստան եռակողմ համագործակցության արդեն շոշափելի արդյունքները, ինչպես նաև անդրադարձավ ձևավորվող Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան քառակողմ համագործակցության զարգացման հեռանկարներին: Ընդունվեցին մի շարք ծրագրեր. գազի առաքման և նավթաքիմիայի ոլորտներում համագործակցության հարցերի հանձնախումբ ձևավորելու, ապրանքների տարանցիկ փոխադրման, Հայաստան-Վրաստան լուսաթելքային գծի անցկացման և Ասիա-Եվրոպա միջազգային մայր գծին ԻԻՀ-ի տարածքով ՀՀ միանալու

վերաբերյալ[60]: «Մենք ողջունում ենք ՀՀ և մյուս հարևան ու բարեկամ երկրների հետ երկկողմ ու բազմակողմ համագործակցությունը, որի նպատակն է՝ զարգացնել տարածաշրջանում առևտրատնտեսական կապերը: Հաշվի առնելով ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև առկա փոխըմբռնումը՝ Իրանը պատրաստ է համագործակցել Հայաստանի հետ գազի վաճառքի, բանկային, ապահովագրական և մաքսային բնագավառներում, ինչպես նաև մասնակից դառնալ արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման աշխատանքներին»[61]:

Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան առանցքի կարևորությունը շատ լավ գիտակցեց նաև Ադրբեջանը, որը սկսեց խոչընդոտել այդ ծրագրի իրականացմանը: Նրան այդ գործում մեծապես աջակցում էր Թուրքիան: 1997թ. փետրվարին դրա մասին ՀՀ ԱԳՆ-ին տեղեկացնում է ԻԻՀ-ում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վ. Բայբուրդյանը. «Երեկ ես հանդիպում ունեցա Թեհրանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Տրետյակովի հետ: Խոսակցության ժամանակ նա հայտնեց, որ Հեյդար Ալիևը ուժեղ ճնշում է գործադրել Շևարդնաձեի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի Վրաստանի մասնակցությունից Իրան-Հայաստան-Հունաստան-Վրաստան քառակողմ համագործակցությունից: Դեսպանի խոսքով՝ Վրաստանի նախագահը ընկրկել է այդ դեմարշի դիմաց՝ խոստանալով կատարել Ադրբեջանի կամքը, որը այդ

[60] Հաշվետվություն 1996թ. դեկտեմբերի 25-29-ը ԻԻՀ առաջին փոխնախագահ Հ. Հաբիբիի Երևան կատարած պաշտոնական այցելության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:
[61] Էթելաթթ, 28.12.1996:

համագործակցությունը մեկնաբանում է որպես Ադրբեջանի և Թուրքիայի դեմ ուղղված քայլ»[62]:

Ադրբեջանա-թուրքական քաղաքական գործիչներին հաջողվեց խաղից դուրս հանել նախատեսվող առանցքի սկզբունքային երկրներից մեկին՝ Վրաստանին, ինչի արդյունքում էլ չիրականացան մի շարք ծրագրեր: Ադրբեջանը և Թուրքիան ամեն ինչ արեցին, որ Հայաստանի տարածքով չանցնեն հաղորդակցության կարևորագույն ուղիներ՝ դրանով փորձելով ծանր հարված հասցնել Հայաստանի տնտեսությանը: Իսկ Իրանը, չունենալով այլընտրանքային ցամաքային ճանապարհ, շարունակում է համագործակցությունը խորացնել Թուրքիայի հետ:

Չնայած Վրաստանը որոշեց այդ ոլորտում չհամագործակցել Հայաստանի և Իրանի հետ, այնուամենայնիվ, նշված դաշինքը որոշ ժամանակ գործեց: Իրան-Հայաստան-Թուրքմենստան և Իրան-Հայաստան-Հունաստան եռակողմ համագործակցության շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբերում քննարկվում էին նշված երկրների միջև տրանսպորտային, կապի և հաղորդակցությունների, զբոսաշրջության, արդյունաբերության, տեխնոլոգիաների, էներգետիկայի, բնական աղետների դեմ պայքարի, շինարարության և այլ բնագավառներում համատեղ գործունեության կարևորագույն խնդիրներ: 2001թ. Վրաստանը միացավ Իրան-Հայաստան համագործակցությանը՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում:

Սակայն այս համագործակցությունները իրական արդյունք չտվեցին, չնայած, որ կողմերը, կարելի է ասել, բավական լուրջ աշխատանքներ էին տարել այս

[62] ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 2, գործ N 167, համար 02.05, 5.02.1997:

ուղղությամբ: «Հաճախ մենք տնտեսական ոլորտում մեր քննարկումների ժամանակ հասել ենք համաձայնությունների,սակայն հետագայում դրանք տարբեր պատճառներով կյանքի չեն կոչվել: Դա պայմանավորված էր գլոբալ խնդիրներով՝ ԱՄՆ-ի դիրքորոշմամբ, Ռուսաստանի, Թուրքիայի շահերի բախմամբ և այլն: Եղել են երկկողմ բազմաթիվ համաձայնություններ, որոնց իրականացումը, սակայն, շատ ավելի բարդ էր, քան կարող է թվալ: Սա վերաբերում է նաև եռակողմ ձևաչափերին. Հայաստան-Իրան-Թուրքմենստան, ինչպես նաև Հայաստան-Իրան-Հունաստան: Ստորագրվեցին բազմաթիվ փաստաթղթեր, իրականացրինք անթիվ քննարկումներ, բայց ռեալ այն չգործեց, ու դա ոչ թե մեր կամ Իրանի մեղքով, այլ առկա տնտեսական, քաղաքական և այլ ռեսուրսների բացակայության պատճառով»[63]:

Բայց, այս ամենով հանդերձ, որոշ ծրագրեր այնուամենայնիվ իրականացվեցին: Օրինակ. 1990-ական թվականներին Թուրքմենստանից գազ էր տրվում Իրանին, այնտեղից էլ Հայաստանին էր որոշակի ծավալ հատկացվում, պաշտոնական Երևանն էլ ապրանքի տեսքով վճարում էր Թուրքմենստանին: Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել ոչ այնքան այն հանգամանքին, թե սրանք արդարացնո՞ղ ծրագրեր էին, թե ոչ, այլ որքանո՞վ են նպատակահարմար այս տեսակ համագործակցությունները: Գտնում ենք, որ լուրջ արդյունքների հասնելու համար անհրաժեշտ էր վերցնել մեկ միավոր՝ մեկ ծրագիր, և դրա շուրջ ծավալել քննարկումը ու հասնել համաձայնության: Օրինակ, եթե ցանկություն կար համագործակցելու եռակողմ ձևաչափով, ապա մեկ անգամ կարող էին մշակութային

[63] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

հարթությունում իրականացնել դա, հետո կարելի էր իրագործել կրթության ոլորտին վերաբերող մեկ այլ ծրագիր: Այլ դեպքում, այս տեսակ ծրագրերը, որոնց մեջ կան մոտ 100 կետ, ըստ իս, դատապարտված են: Ժամանակին եռաչափ համագործակցության համար տարեկան երեք անգամ նախարարների մակարդակով պարտադիր հավաքներ էին կազմակերպում և քննարկումներ ծավալում բազմաթիվ հարցերի շուրջ, սակայն դա գործի չէր վերածվում:

1998թ. օգոստոսի 24-25-ին ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը աշխատանքային այցով գտնվում էր ԻԻՀ-ում, այցի նպատակն էր՝ քննարկել Հայաստան-Իրան-Հունաստան եռակողմ հարաբերությունները: Այցի շրջանակներում Վ. Օսկանյանը ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարազիին ներկայացրեց Փոթի-Մեղրի մայրուղու ծրագիրն՝ ընդգծելով, որ մայրուղին կարող է ծառայել իբրև հիմք՝ ՏՐԱՍԵԿԱ ծրագրին Հայաստանի և Իրանի առավել գործնական ներգրավվման համար[64]:

Սակայն, այս ամենով հանդերձ, 1990-ականների վերջերին հարաբերություններում որոշակի պասիվություն էր նկատվում: Իրանական կողմի տեղեկատվությամբ, այդ պասիվությունը գալիս էր հայկական կողմից: Սակայն գտնում ենք, որ հարաբերություններում գրանցված պասիվությունը, ոչ այնքան կողմերի հետաքրքրությունների փոփոխության, որքան երկու երկրների քաղաքական դաշտում գրանցված լուրջ փոփոխությունների հետևանք էր: 1997թ. ավարտվեց նախագահ Հ. Ռաֆսանջանիի կառավարման տարիները, իշխանության եկավ բարեփոխիչ Մ. Խաթամին: Միևնույն ժամանակ, Հայաստանում 1998թ. նախագահի պաշտոնից հրաժարական տվեց Լևոն Տեր-

[64] The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia, Vol 2, N 3, September-November, 1998, p. 3.

Պետրոսյանը, և նախագահական ընտրություններում հաղթեց Ռոբերտ Քոչարյանը:

1999թ. Հայաստանում պառլամենտական ընտրությունների տարի էր, որտեղ հաղթեց «Միասնություն դաշինքը»՝ Կ. Դեմիրճյանի և Վ. Սարգսյանի գլխավորությամբ: 1999թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրանական պատվիրակությունը ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարազիի գլխավորությամբ այցելեց Հայաստան և ձեռք բերեց համագործակցության նոր եզրեր: Սակայն 1999 հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունները իրանական կողմի մոտ անորոշության զգացողություն առաջացրին համաձայնեցված բոլոր ծրագրերի նկատմամբ: Այս խնդիրը լուծելու համար 1999թ. դեկտեմբերին Իրան մեկնեց ՀՀ ԱԳՆ Վարդան Օսկանյանը. այցի հիմնական նպատակն էր՝ հավաստիացնել, որ վարչապետի և ԱԺ նախագահի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները ուժի մեջ են մնալու:

Ներքաղաքական վերոհիշյալ իրադարձությունների ֆոնի ներքո հայ-իրանական հարաբերությունները, թերևս փոքր ինչ ստվերվել էին, քանզի Հայաստանի նկատմամբ Իրանի քաղաքականության մեջ պասիվությունը, այնուամենայնիվ, նկատելի էր, այդ մասին վկայում էր ավելի քան մեկ տարի շարունակ այդ երկրի ներկայացուցչությունը Երևանում հավատարմատարի մակարդակով պահելը: Հանգամանք, որը Է. Բեգիջանյանը, մեկնաբանում է թե՝ Հայաստանի որդեգրած արտաքին քաղաքականությամբ, և թե՝ Ադրբեջանին չգրգռելու՝ Թեհրանի ձգտումով[65]:

Սակայն այս պասիվ վիճակը երկար չէր կարող տևել, և ըստ ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գ. Ղարիբջանյանի՝ եղել է նախագահ Ռոբերտ Քոչարյանի

[65] Է. Բեգիջանյան, Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 68:

կարգադրությունն այն մասին, որ հարկավոր է առավել մեծ ուշադրություն դարձնել հայ-իրանական հարաբերություններին, քանզի այն համարվել է ոչ գոհացուցիչ: «1998թ. ամռանը, երբ հաստատվեց թեկնածությունս, ինձ ընդունեց և առաջիկա անելիքների վերաբերյալ հստակ հանձնարարականներ տվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նա ասաց. «Ձեր առջև առաջին հերթին քաղաքական և տնտեսական հարաբերությունների մակարդակը բարձրացնելու խնդիրն է դրված»[66]: Իրանական կողմը ևս քաջ գիտակցում էր, որ այս հարաբերությունները նման մակարդակում թողնելը չի բխում իրենց երկրի շահերից: Ընդհանրապես, Իրանի նախագահ Մոհամմեդ Խաթամիի գործելաոճում նկատվում էր բոլոր երկրների հետ հարաբերությունների վերանայում, բարելավում, և Հայաստանը դրանից անմասն չմնաց: Երկու երկրների հարաբերությունները համադրելու, ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու նպատակով տարեկան երկու անգամ Երևանում և Թեհրանում հանդիպումներ էին անցկացվում՝ հիմնականում փոխարտգործնախարարների մակարդակով:

2001թ. հուլիսի 16-ից 18-ը Հայաստան այցելեց ԻԻՀ ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Հասան Ռոհանին, ով տարածաշրջանային անվտանգության և կայունության ծիրում առանցքային համարեց Հայաստանի տեղն ու դերը: Խոսելով հյուսիս-հարավ[67] առանցքի կայացման մասին, նա ընդգծել է այդ

[66] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1999-2005թթ.) Գեղամ Ղարիբջանյանի հետ, մարտի 30, 2012, Երևան: (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[67] 1993թ. Եվրոպական Հանձնաժողովն առաջարկեց Սև ծովը և Կասպից ծովը հատող Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի ծրագիր՝ TRACECA անվամբ (Transport Corridor Europe-Caucasus-Asia): Նույն 1993թ. Հելսինկիում կայացած Եվրոպական Հանձնաժողովի

գործընթացում Հայաստանի պարտադիր ներգրավման անհրաժեշտությունը[68]: Մինչ այդ՝ 2000թ. նոյեմբերի 7-8-ը, Իրան էր այցելել ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Նա, հանդիպելով ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի հետ, կարևորել էր Երևան-Թեհրան հարաբերությունները, և անդրադառնալով ընդհանուր շահերին՝ շեշտել Իրանի հետ երկկողմ ակտիվ, ուժեղ և խորը կապեր ունենալու՝ Երևանի ցանկության մասին[69]:

2001թ. հուլիսի 18-ին ստորագրվեց ՀՀ և ԻԻՀ միջև անվտանգության բնագավառում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր: Հուշագրով կողմերը պայմանավորվել են համագործակցել տարածաշրջանային անվտանգության մի շարք ուղղություններով՝ տարածաշրջանի երկրների անվտանգության խորհուրդների քարտուղարների աշխատանքի համադրման, տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման գործում միմյանց վերապահումները հարգելու և աջակցելու, թմրանյութերի տարածմանը հակազդելու, տեղեկատվության փոխանակման, ահաբեկչության դեմ պայքարի, սահմանային անվտանգության բնագավառներում համագործակցելու մասին, ինչպես նաև

նիստում, TRACECA միջանցքից բացի, առաջարկվեց նաեւ մեկ այլ միջանցք՝ «Հյուսիս-Հարավ» անվամբ: «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի ստեղծման նախաձեռնողը Ռուսաստանի Դաշնությունն էր, որը 1999թ. հունիս-հուլիս ամիսներին Հնդկաստանին և Իրանին ներկայացրեց Համաձայնագրի նախագծի նախնական մի տարբերակ: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայք, Հյուսիս - հարավ միջազգային տրանսպորտային միջանցք, http://www.mtc.am/main.php?lang=1&page_id=654

[68] Իրանը նոր հայացք է ձգում Կովկասին, Լոյս 31.07.2001, էջ 2-3:

[69] ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության տեղեկատվությունը մամուլի համար, ցուցակ 8, գործ N 86:

իրենց համատեղ դիրքորոշումներն են արտահայտել հակամարտությունների կարգավորմանը նպաստելու միմյանց ազդեցիկ դերակատարության, տարածաշրջանային խաղաղության, կայունության և անվտանգության հարցերի վերաբերյալ[70]: Նման փաստաթուղթն անվտանգության ոլորտում կնքված թերևս առաջին բազմակողմ հուշագիրն էր և բավականին լուրջ ձեռքբերում էր երկրների համար:

2001թ. փետրվարի 3-4-ը ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը մեկնեց Իրան՝ հերթական քաղաքական խորհրդակցության համար, որի անհրաժեշտության մասին խոսվել էր դեռևս 1992թ. և որն ամրագրվել էր փոխըմբռնման հուշագրով: Ի դեպ, մշտական քաղաքական խորհրդակցությունները բարձր են գնահատում թե՛ իրանական, և թե՛ հայկական կողմերը, գտնելով, որ դրանք նպաստում են փոխադարձ վստահության ամրապնդմանը:

Իրանի և Հայաստանի որոշման համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովում և ԻԻՀ Մեջլիսում ձևավորվեցին համապատասխանաբար Հայաստան-Իրան և Իրան-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբեր, որոնք մինչև օրս էլ համագործակցում են՝ իրականացնելով փորձի փոխանակում և քննարկումներ՝ երկուստեք շահերի ոլորտում գտնվող հարցերի շուրջ: 2006թ. երկու երկրների միջպառլամենտական շփումները բավական բարձր գնահատեց ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ղոլամ-Ալի Հադդադ-Ադելը՝ նշելով, որ «Հայ-իրանական միջպառլամենտական հանձնաժողովը արդյունավետ կառույց է, որը նպաստում է երկու երկրների հարաբերությունների զարգացմանը, և այդ ոլորտում հատկապես կարևոր դեր ունեն երկու երկրների օրենսդիր և գործադիր մարմինների մշտական

[70] Տեղեկանք 2001-2013 թվականներին պաշտպանական բնագավառում հայ-իրանական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ՊՆ ՊՔ վարչություն:

խորհրդակցությունները»[71]: Սակայն այս ամենով հանդերձ, մեր անձնական տպավորությունը այն է, որ այս կառույցը կարող է իսկապես շատ կարևոր հարցեր վերհանել, քննարկել և փորձել գտնել լուծման եղանակներ, բայց այսօր, ցավոք դա չենք նկատում: Մեր այն հարցին, թե «այս 13 տարվա ընթացքում, եղե՞լ է որևէ խնդիր, որը բարեկամական այս խմբի կողմից բարձրացվել, քննարկվել, կամ լուծման ուղղություններ է ստացել» ի պատասխան ՀՀ ԱԺ Հայաստան-Իրան բարեկամության խմբի ղեկավար Գալուստ Սահակյանը պատասխանեց. «Այդ հանդիպումները հիմնականում ճանաչողական, մերձեցման նպատակ են հետապնդում»[72]: Թեև Հայաստան ժամանելիս ԻԻՀ պետական այրերը իրենց պատվիրակությունում գրեթե միշտ ընդգրկում են ԻԻՀ-ում հայազգի պատգամավորների, սակայն կարելի է ասել, որ այդ խմբի գործունեությունը առայժմ պայմանավորվում է միմիայն փոխայցելություններով: Բարեկամության խմբի գործունեությունն անբավարար է համարում նաև ՀՀ-ում ԻԻՀ նախկին դեսպանը, ում խոսքով՝ Իրան-Ադրբեջան բարեկամական խումբը շատ ավելի արդյունավետ է գործում, քան Իրան-Հայաստանը[73]:

Կարծում ենք, ճիշտ կլիներ, որ ԱԺ-ի Հայաստան-Իրան բարեկամության խումբը իր առջև դներ մեկ կարևոր խնդիր և այն կյանքի կոչեր. օրինակ, ինչո՞ւ Հայաստանի դպրոցներում կարող են անցնել, իբրև օտար լեզու

[71] Иран и Армения приветствуют активизацию двусторонних межпарламентских связей, Тегеран. ИРНА. 18 декабря 2006 года.

[72] Հարցազրույց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստան-Իրան բարեկամական խմբի ղեկավար Գալուստ Սահակյանի հետ, մարտ 12, 2013, Երևան (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[73] Հարցազրույց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան, (2012-2015) Մոհամմադ Ռեյիսի հետ, հոկտեմբերի 22, 2013, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

դասավանդել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, սակայն պարսկերենը հնարավոր չէ ընդգրկել այդ ցուցակում: Չէ՞ որ խոսում ենք հարևան երկրի մասին: Իրականում հայկական մի շարք դպրոցներում դասավանդվում է պարսկերենը, սակայն սա ամբողջովին իրանական կողմի նախաձեռնության հաշվին է: Այսինքն, ՀՀ քաղաքացի հանդիսացող պարսկերենի ուսուցչուհին վճարվում է Իրանի կողմից, նրա դասավանդման տարիները ստաժ չեն համարվում, քանզի դպրոցի տնօրենը նրա հետ աշխատանքային պայմանագիր չի կնքում, հարկ չի մուծում պետությանը: Այսինքն, ստացվում է, որ այստեղ մենք ունենք օրենսդրական խնդիր, որի լուծումը թերևս հնարավոր կլիներ ԱԺ Հայաստան-Իրան բարեկամության խմբի ճիշտ գործելաոճի դեպքում:

Հայաստան-Իրան հարաբերությունները նոր փուլ թևակոխեցին 2001թ. դեկտեմբերի 25-27-ին, երբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը մեծ պատվիրակությամբ այցելեց ԻԻՀ: Պատվիրակությունը բաղկացած էր Կառավարության ներկայացուցիչներից, գործարարներից, ովքեր այդ ընթացքում կնքեցին բազմաթիվ պայմանագրեր:

Եռօրյա այցի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցավ Իրանի Իսլամական Հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Խամենեիի հետ, ի դեպ, միշտ չէ որ ռահբարը հանդիպում է քրիստոնեական երկրների նախագահների հետ: ԻԻՀ հոգևոր առաջնորդ Այաթոլլահ Խամենեին Հայաստանի Հանրապետության նախագահի հետ հանդիպման ընթացքում շեշտեց կովկասյան տարածաշրջանի տնտեսա-քաղաքական անկախության և օտար ուժերի միջամտությունը կանխելու վերաբերյալ հարցեր: Նա նաև անդրադարձավ Իրանի հայ համայնքին, բարձր գնահատեց նրանց կատարած ծառայությունները՝ հատկապես ութնամյա (իրանա-

իրաքյան) հարկադիր պատերազմի տարիներին[74]: Հանդիպման ժամանակ երկու կողմերը մատնանշեցին, որ տնտեսության ոլորտում Իրանը և Հայաստանը գործակցության լայն հնարավորություններ ունեն:

Ռ. Քոչարյանը հանդիպումների շարք ունեցավ ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի, արտգործնախարար Ք. Խարազիի, պաշտպանության նախարար Ա. Շամխանիի և Ազգային անվտանգության խորհրդի քարտողար Հ. Ռոհանիի հետ: Թեև մինչ այդ կնքվել էր 70 համաձայնագիր, բայց այս այցը հնարավորություն ընձեռեց լուծելու շատ այլ հարցեր: Քննարկվեցին երկու երկրների միջև ռազմական ու ռազմաքաղաքական գործակցության հնարավորությունները և տարածաշրջանի անվտանգությանն առնչվող հարցեր: «Իրանը Հայաստանի բարի հարևանն է, - նշել է ԻԻՀ նախագահ Մ. Խաթամին, - և երկկողմ հարաբերությունները զարգացման մեծ ներուժ ունեն»[75] :

Հայաստան-Իրան գազատար կառուցելու անհրաժեշտության մասին խոսվել էր հենց դիվանագիտական հարաբերությունների հաստատման պահից ի վեր, սակայն աշխատանքները դանդաղում էին: Ռ. Քոչարյանը, օգտագործելով իր այցելությունը, այս հարցը ևս բարձրացրեց Իրանի նախագահի առաջ, ներկայացրեց խնդրի շուրջ առաջացած իրավիճակը և խնդրեց հարցին տալ վերջնական լուծում:

Բանակցությունների ավարտին ՀՀ և ԻԻՀ նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, այնուհետև ստորագրվեց 12 փաստաթուղթ. համաձայնագիր «Մեղրի–Քաջարան

[74] ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի այցը Իրան, Արաքս, 24 (107), հունվար, 2002, էջ 20:

[75] Մ. Մանուկյան, Հայ-իրանական հարաբերությունների ապագան, Միհր, 2 (46), 2004, էջ 44:

ավտոմոբիլային թունելի վերաբերյալ», «Հուշարձանների պահպանման բնագավառում համագործակցության վերաբերյալ համաձայնագիր», «Բնապահպանության բնագավառում համագործակցության վերաբերյալ համաձայնագիր», «ՀՀ-ում և ԻԻՀ-ում գիտական աստիճանների և ԲՈՒՀ-երի ավարտական վկայականների փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագիր», «ՀՀ և ԻԻՀ միջև մաքսային համագործակցության վերաբերյալ համաձայնագիր», և այլն[76]:

Հանդիպման ընթացքում լուծվեցին տնտեսական մերձեցման բազմաթիվ խնդիրներ գիտատեխնիկական և սեյսմիկ պաշտպանության ոլորտներում, ինչպես նաև ստորագրվեցին Իրան-Հայաստան ներդրումային համատեղ ընկերության ձևավորման փաստաթղթերը: Կողմերի համար առավելապես մեծ արժեք էր ներկայացնում Իրան-Հայաստան գազատարի, Քաջարան-Մեղրի թունելի, Մեղրու ՀԷԿ-ի կառուցման և այլ համատեղ ծրագրերի քննարկումը: Հայաստանի կողմից խիստ կարևորվում էր առևտրական կապերի ընդլայնումը և հայկական ապրանքների՝ Իրան արտահանումը: Հանդիպման ավարտին ՀՀ նախագահը ԻԻՀ նախագահ Խաթամիին պաշտոնապես հրավիրեց Հայաստան:

2002թ. փետրվարի վերջերին ռազմական ոլորտում վրաց-ամերիկյան համագործակցության սերտացումն անհանգստություն առաջացրեց ԻԻՀ իշխող վերնախավի շրջանում: Իրանական կողմի դիրքորոշումն այն էր, որ Հարավային Կովկասի անվտանգության հարցերը բացառապես վերաբերում են տարածաշրջանի երեք հանրապետություններին և նրանց սահմանակից երեք պետություններին՝ Իրանին, Ռուսաստանին և Թուրքիային:

[76] ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, Երկկողմ հարաբերություններ, http://www.mfa.am/hy/country-by-country/ir/

Այս և տարածաշրջանային այլ խնդիրների քննարկման համար 2002թ. մարտի 4-ին Հայաստանի Հանրապետություն ժամանեց Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար, ծովակալ Ալի Շամխանին: Դա Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավարի առաջին պաշտոնական այցն էր Հարավային Կովկաս: «Մենք տարածաշրջանի բոլոր երկրների հետ ունենք լավ հարաբերություններ,- ասել է Ալի Շամխանին, - Հայաստանի հետ ունենք **առանձնահատուկ հարաբերություններ՝** (նշումը մերն է-Ի.Գ.) քաղաքական, տնտեսական, մշակութային բնագավառներում, և այդ հարաբերությունները ելնում են երկու երկրների շահերից, տարածաշրջանի քաղաքական և տնտեսական իրավիճակից»: Նա նշեց, որ երկուստեք ցանկություն կա զարգացնելու հարաբերությունները նաև պաշտպանական բնագավառում՝ ընդգծելով, որ այն «ուղղված չի լինելու որևէ երրորդ երկրի դեմ»[77]: Արդյունքում, մարտի 5-ին ՀՀ պաշտպանության նախարարության և ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարության միջև ստորագրվեց պաշտպանության և անվտանգության բնագավառում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր: Հուշագրով կողմերը պայմանավորվել են զարգացնել երկկողմ և բազմակողմ համագործակցության՝ պաշտպանության և անվտանգության բնագավառները՝ այդ թվում՝ տեղեկատվության փոխանակման, երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում երկկողմ ռազմական համագործակցության ընդհանուր առանցքների քննարկման և հստակեցման, տարածաշրջանում առկա

[77] Армения и Иран налаживают военно-политическое сотрудничество, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=2615

հավասարակշռությանը սպառնացող ազդեցության կամ ներգործության կանխարգելման, ինչպես նաև շեշտել են տարածաշրջանի պաշտպանական և անվտանգության խնդիրների վերաբերյալ համընկնող դիրքորշումներ ունենալու կարևորությունը[78]: Նույն օրը Սերժ Սարգսյանը մամուլի ասուլիսում հայտարարեց, որ համագործակցությունը բազմաբնույթ է՝ «սկսած փորձի փոխանակումից, մինչև համատեղ ձեռնարկությունների ստեղծումը: Մենք հարևաններ ենք, մենք բարեկամներ ենք, մենք պարտավոր ենք համագործակցել»[79]:

Ակնհայտ է, որ Հայաստանի և Իրանի միջև անվտանգության բնագավառում ձեռք է բերվել բազմակողմանի համագործակցության պայմանավորվածություն, ինչը կարող է նպաստավոր պայմանների դեպքում վերաճել ռազմավարական դաշինքի:

2004թ. սեպտեմբերին առաջին անգամ պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետություն ժամանեց ԻԻՀ նախագահ Մ. Խաթամին: ԻԻՀ նախագահի այցով նոր էջ բացվեց հայ-իրանական հարաբերություններում: Այցի ժամանակ ԻԻՀ նախագահը կրկին անդրադարձավ Կովկասում տեղակայված օտար ուժերի ներկայությանը. «Թեհրանը և Երևանը դեմ են տարածաշրջանում արտասահմանյան ռազմական ուժերի տեղակայմանը և գտնում են, որ այն ապակայունացնում է

[78] Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ պաշտպանության նախարարության և ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարության միջև պաշտպանության և անվտանգության բնագավառում համագործակցության մասին, ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 86, էջ 9899: Տես նաև՝ Տեղեկանք 2001-2013 թվականներին պաշտպանական բնագավառում հայ-իրանական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ՊՆ ՊՔ վարչություն:

[79] Армения и Иран налаживают военно-политическое сотрудничество, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=2615

իրավիճակը Կովկասում»[80]: Ընդհանրապես, նախագահների մակարդակով իրականացվող փոխայցելությունները խոսում են երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացման մասին: Հանդիպման ավարտին ստորագրվեց 7 համաձայնագիր, այնուհետև նախագահները հանդես եկան մամուլի ասուլիսով, որտեղ խիստ ուշագրավ էր ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի հայտարարությունը «Հայաստանը լոկ հողակտոր չէ մեզ համար: Սա երկրամաս է, որտեղ ապրում է աշխատասեր ժողովուրդ, որը մեծ դերակատարություն է ունեցել համաշխարհային մշակույթի զարգացման գործում: Իրանը Հայաստանի հետ ունի **հատուկ հարաբերություններ** (նշումը մերն է-Ի.Գ.): Իրանցի և հայ ժողովուրդների հարաբերությունները կարող են լավագույն օրինակ լինել նրանց համար, ովքեր ապրում են կողք-կողքի և հարգում միմյանց ինքնիշխանությունը»[81]: Այսպիսով, այս այցի շրջանակներում նախագահների մակարդակով հայ-իրանական հարաբերություններին տրվեց հատուկ հարաբերությունների աստիճան:

2005թ. ավարտվեցվ Մ. Խաթամիի կառավարման ժամանակաշրջանը և ԻԻՀ-ում կրկին համապետական, նախագահական ընտրությունների տարի էր: Ընտրությունների արդյունքնում, ԻԻՀ վեցերորդ նախագահ դարձավ Մահմուդ Ահմադինեժադը:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը շնորհավորեց Մ. Ահմադինեժադին՝ ԻԻՀ նախագահ ընտրվելու կապակցությամբ և հույս հայտնեց, որ ՀՀ-ԻԻՀ բազմաբնույթ հարաբերությունները հետագա ընդլայնման հնարավորություն կստանան և կշարունակեն զարգանալ

[80] Визит главы Ирана прежде всего будет способствовать развитию экономических отношений, уверен премьер Армении, http://www.panarmenian.net/search/rus/

[81] Թ. Հակոբյան, Խաթամի «Մեզ համար Հայաստանը լոկ հողակտոր չէ», http://www.azg.am/AM/2004090901, Տեղադրվել է՝ 2008-11-09

լիակատար փոխըմբռնման և փոխվստահության մթնոլորտում:

Հատկանշական է, որ հայ-իրանական հարաբերություններում մեծ ակտիվություն նկատվեց հատկապես 2006թ, ինչն արտահայտվում էր տարատեսակ փոխայցելություններով, բազմաբնույթ միջոցառումներով, հուշագրերի և բազմաթիվ փաստաթղթերի կնքմամբ:

2006թ. մարտի 6-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ստորագրեց մի հրամանագիր, համաձայն որի՝ Հայաստանը մաս կազմեց «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքին[82], որտեղ բավական ակտիվ դերակատարություն ուներ Իրանը: «Հյուսիս-հարավ» ծրագրերի շրջանակներում էր գտնվում Քաջարանի թունելի նախագծումը, սակայն անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով, կողմերը ստիպված եղան այս խնդիրը հանել օրակարգից: Որոշվեց, ավելի փոքր գումարով կառուցել Հայաստան-Իրան այլընտրանքային մեկ այլ ճանապարհ:

2006թ. հուլիսի 5-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն աշխատանքային այցով մեկնեց ԻԻՀ, որտեղ հանդիպեց ԻԻՀ նորընտիր նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ: Բանակցությունների արդյունքում կնքվեց 7 հուշագիր, ըստ որոնց՝ կողմերը պարտավորվում էին համագործակցել էներգետիկայի, տնտեսության, արդյունաբերության, իրավական ոլորտներում, ինչպես նաև մշակութային ժառանգության բնագավառում[83]: Իրանի և Հայաստանի օրենսդիր մարմինները համաձայնության եկան արտահանձնման վերաբերյալ, ըստ որի՝ համաձայնվող կողմերը պարտավորվում էին հայցի դեպքում իրենց

[82] ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայք, http://www.mtc.am/edfiles/files/Hramanagrer/06032006.pdf

[83] Иран и Армения подписали семь документов о сотрудничестве, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=41197

տարածքում, դատական հետապնդման մեջ գտնվող անձանց հանձնել մյուս կողմին[84]:

Հայաստանը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Հարավային Կովկասում տեղի ունեցող տարատեսակ գործընթացներում և դիտարկում է Իրանին իբրև կայունության և հավասարակշռության գործոններից մեկը[85]:

Քաղաքական բնագավառում հայ-իրանական երկխոսության ձեռքբերումներից կարելի է համարել ՄԱԿ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի և Իրանի սերտ և շարունակական համագործակցությունը: Միջպետական հարաբերությունների հաստատումից ի վեր, թե՛ Իրանը, թե՛ Հայաստանը, միջազգային կազմակերպություններում գրեթե միշտ պաշտպանել և հարգել են միմյանց շահերը, իսկ եթե իրավիճակը խիստ լարված է եղել, հիմնականում դիմել են չեզոքության քաղաքականությանը՝ փորձելով այդպես գոնե չվնասել մեկը մյուսին[86]: Միջազգային կազմակերպություններում Հայաստանի և Իրանի համագործակցության մասին ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը նշում է, որ երբեմն բավական բարդ էր լինում պահպանել հավասարակշռությունը, հատկապես հաշվի առնելով հանրային ընկալումը, քանի որ Ղարաբաղի հարցում Իրանը միջազգային կազմակերպություններում միշտ պաշտպանում էր Ադրբեջանի շահերը, բնականաբար Հայաստանում

[84] Парламент Армении ратифицировал армяно-иранское соглашение об экстрадиции, ИРНА. 20 декабря 2006 года.

[85] А.С. Матвеев, Проблемы сотрудничеста Ирана и государств Южного Кавказа, Иран при М.Ахмадинежаде, Москва, 2013, стр. 145.

[86] Г. Искандарян, Армяно-иранские отношения на современном этапе. Взгляд из Армении, Армения-Иран, История. Культура. Современные перспективы взаимодействий, МГУ им. М. В.Ломоносова, Институт стран Азии и Африки, Москва, 2013, стр. 82.

նկատվում էր դժգոհություն: «Սակայն մեզ համար ոչ այնքան կարևոր էին միջազգային կազմակերպություններում Իրանի հրապարակային քվեարկությունները, որքան հետկուլիսային բանակցությունները և Իրանի բուն գործողությունները: Սակայն եթե թվերի վերածենք այս ամենը, կարելի է ասել, որ 90%-ով մենք միշտ քվեարկել ենք Իրանի օգտին, մնացյալ դեպքերում պահել ենք չեզոքություն և հազվադեպ դեպքում ի վնաս Իրանի ենք քվեարկել, օրինակ՝ մարդու իրավունքների հարցում և այլն, մինչդեռ Իրանը գրեթե միշտ Ղարաբաղի հարցում 90%-ով քվեարկել է Ադրբեջանի օգտին»[87]: Այն որ Հայաստանը միշտ աջակցել է Իրանին միջազգային կազմակերպություններում, չի հերքում իրանական ղեկավարությունը ևս. ԻԻՀ ԱԳ նախարար Քամալ Խարազին 2002թ. ապրիլի 28-ին շնորհակալական նամակ էր հղել Վ. Օսկանյանին՝ «ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում կայացած քվեարկության ժամանակ ԻԻՀ-ում մարդու իրավունքների իրավիճակի մասին բանաձևի ձախողմանը նպաստելու համար»[88]:

Հատկանշական է, որ 2011թ. նոյեմբերի 18-ին, երբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգում դրված էր հակահիրանական մի փաստաթուղթ՝ «Ահաբեկչական հարձակումներ միջազգային պաշտպանության տակ գտնվող անձանց վրա» բանաձևը, ՀՀ-ն պաշտպանեց ԻԻՀ-ին[89]: Այդ փաստաթղթի ընդունման օգտին քվեարկել էր 193

[87] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008թթ.) Վարդան Օսկանյանի հետ, հուլիսի 8, 2012, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[88] ԻԻՀ ԱԳՆ Ք. Խարազի նամակը ուղղված ՀՀ ԱԳՆ Վ. Օսկանյանին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 86, էջ 104-106

[89] Վաշինգտոնը Թեհրանին մեղադրել է Սաուդյան Արաբիայի դեսպան Ադել ալ Ջուբեյրի դեմ մահափորձ ծրագրելու մեջ: ԱՄՆ ոստիկանությունը ձերբակալել է իրանական ծագմամբ ԱՄՆ քաղաքացու, որը խոստովանել է, որ իրանական հատուկ ծառայությունների կողմից հրահանգ է ստացել

պատվիրակություններից 106-ը, 9-ը դեմ էր քվեարկել (այդ թվում՝ Հայաստանը, Հյուսիսային Կորեան, Նիկարագուան, Զամբիան, Վենեսուելան, Կուբան, Բոլիվիան, Էկվադորը), 40-ը՝ ձեռնպահ: Այս խնդրահարույց բանաձևին Հայաստանի կողմ քվերակելը ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցիչ Կ. Նազարյանը, ով ժամանակին եղել է ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը ԻԻՀ-ում հետևյալ բացատրությունն է տալիս. «Նշված բանաձևի քվեարկության ժամանակ մեր սկզբունքային մոտեցումները հետևյալն էին: Նախ, մենք դեմ ենք որպեսզի երկկողմ հարցերի քննարկման համար որպես միջազգային հարթակ ծառայեցվի ՄԱԿ-ի ԳԱ-ն: Չնայած, կիսելով շահագրգիռ երկրների մտահոգությունները, կամ որևէ անդամ պետության՝ ԳԱ-ում ցանկացած հարց բարձրացնելու իրավունքը, այդուհանդերձ, համարում ենք, որ նմանօրինակ հարցի քննարկումը կարող է վտանգավոր նախադեպ ստեղծել ԳԱ-ում ու միջազգային հանրությունը ստիպված լինի ամեն անգամ բաժանվել կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկողների՝ վնաս հասցնելով երկկողմ գործընթացներին կամ կարգավորման համար գործող ձևաչափերին: Երկրորդ, նման դեպքերում գործում է 1973թ. Միջազգայնորեն պաշտպանված անձանց և դիվանագիտական գործակալներին նկատմամբ հանցագործությունների կանխարգելման ու դատապարտման կոնվենցիան և հարցի քննարկումը պետք է լինի համապատասխան իրավական մեխանիզմի միջոցով: Ավելին, այդ պահին երբ ԳԱ-ն քվեարկում էր բանաձևը,

սպանել Ջուբեյրին: ԱՄՆ գլխավոր դատախազ Էրիկ Հոլդերը ԱՄՆ մայրաքաղաքում կայացած մամլո ասուլիսի ընթացքում Մանսուր Արբաբսիարին եւ Գուլամ Շաքուրին մեղադրել է Սաուդյան Արաբիայի դեսպանին սպանելու դավադրության մեջ: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան Իրանի դեմ բանաձև է ընդունել, նոյեմբեր 19, 2011, http://news.am/arm/news/82519.html

խնդրո առարկա հարցը գտնվում էր դատարանում և ԳԱ-ն չէր կարող կանխորոշել կամ ազդել դատարանի որոշման վրա»[90]: Տարատեսակ հարցադրումներից հետո էլ Կ. Նազարյանը այդպես էլ հստակ չներկայացրեց ՀՀ գործելաոճի իրական դրդապատճառները: Ի վերջո, Հայաստանը կարող էր չեզոքություն պահպանել, բայց նախընտրեց պաշտպանել Իրանի շահերը ՄԱԿ-ում: Կարծում ենք, սա հենց այն դեպքերից է, երբ Իրանը պարզապես խնդրել է, որ Հայաստանը դեմ քվեարկի տվյալ նախագծին: Այս համատեքստում կարծում ենք, որ ԻԻՀ համար հայ-իրանական հարաբերություններն առավել հետաքրքրական են քաղաքական հարաբերությունների ենթատեքստում, քանզի միջազգային հարթակներում քրիստոնեական երկրի կողմից արտահայտած դրական մոտեցումները և վերաբերմունքը կարող են նրանց հետաքրքրել՝ ստեղծելով յուրահատուկ ֆոն մահմեդական Իրանի համար:

2007թ. մարտի 19-ին հայ-իրանական հարաբերություններում գրանցվեց ակնհայտ առաջընթաց՝ բացվեց հայ-իրանական գազատարը երկու նախագահների՝ Ռ. Քոչարյանի և Մ. Ահմադինեժադի կողմից, ինչին նախորդել էր ավելի քան տասը տարվա բանակցություններ: Բացման արարողությունից հետո տեղի ունեցած ճեպազրույցի ժամանակ ԻԻՀ նախագահն ասաց. «Մեր երկկողմ հարաբերությունները վերջին 15 տարիներին վերընթաց զարգացում են ապրել և ապրում են, մեր ժողովուրդները լիակամ են է՛լ ավելի զարգացնելու և ընդարձակելու մեր հարաբերությունները: Բոլոր այն նախագծերը, որոնք իրականացվում են էներգետիկայի ոլորտում, կապի, տրանսպորտի, ՀԷԿ-երի կառուցման

[90] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005-2009թթ) Կարեն Նազարյանի հետ, հունվարի 08, 2013, Երևան-Նյու Յորք, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

ոլորտում, բոլորը միով բանիվ նպաստելու են երկու ժողովուրդների կապերի ամրապնդմանը»[91]: Իսկ գազատարի բացումը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը համարեց պատմական իրադարձություն:

Ակնհայտ է, որ գազատարի կառուցումից հետո հայ-իրանական հարաբերությունների ուղեգիծն առավելապես թեքվեց դեպի տնտեսական հարաբերություններ, գերապատվությունը տրվեց էներգետիկայի ոլորտին: Հատկանշական է, որ իրանագետների կարծիքը այս հարցում բաժանվում է: Մի մասը գտնում է, որ հայ-իրանական հարաբերություններում քաղաքական հարաբերություններ ընդհանրապես չկան՝ դա բացատրելով այն քաղաքական համատեղ որոշումների բացակայությամբ: Մյուսները գտնում են, որ հայ-իրանական քաղաքական և տնտեսական հարաբերություններն ընդհանրապես գոյություն ունենալ չէին կարող՝ քաղաքական կամքի բացակայության պարագայում: Կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր տնտեսական ոլորտում ձեռք բերած հաջողության ետևում կանգնած է քաղաքական կամքը:

2007 թվականը իսկապես բավական հարուստ էր փոխայցելությունների առումով: Հոկտեմբերի 22-23-ին Հայաստան ժամանեց ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Այս այցի շրջանակներում ստորագրվեցին տնտեսության, ֆինանսական և առևտրական համագործակցության վերաբերյալ մի շարք համաձայնագրեր: Հարկ է նշել, որ ստորագրվել էր նաև ազատ առևտրի մասին համաձայնագիրը, ինչը առավել հեշտացնում է հայ բեռնափոխադրողներին՝ Իրանի տարածքը հատելու գործընթացը՝ բարձրացնելով արտահանման և ներմուծման արդյունավետությունը: Բացի

[91] Մահմուդ Ահմադինեժադ. «Հայաստանի հետ հարաբերությունների սերտացման համար Իրանը ոչ մի խոչընդոտ չունի», ԱՀԳ օրաթերթ, #51, 2007-03-21:

ստորագրված համաձայնագրերից, ակնհայտ ցանկություն կար քննարկելու նաև էներգետիկ ոլորտին առնչվող և ռազմավարական բնույթի այլ կարևոր խնդիրներ: Սակայն Ահմադինեժադի այցի ժամանակ գրանցվեց առաջին հայացքից անհասկանալի մի գործընթաց. հոկտեմբերի 23-ին հայկական մամուլը տեղեկատվություն տարածեց, թե ԻԻՀ նախագահը նախատեսվածից շուտ է հեռանում Հայաստանից: Խնդիրը կայանում էր նրանում, որ ԻԻՀ նախագահի այցի օրակարգը վաղուց հաստավել և համաձայնեցվել էր երկու նախագահների կողմից, ըստ որի՝ հոկտեմբերի 23-ին ԻԻՀ նախագահը պետք է այցելեր Ցեղասպանության հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցեր զոհերի հիշատակին: Հատկանշական է, որ այդ ժամանակաշրջանում նկատվում էին Իրան-Թուրքիա հարաբերությունների ջերմացման միտումներ, և նախագահ Ահմադինեժադը, Իրանում որոշակի խնդիրներ առաջանալու պատրվակով, մեկնեց երկրից: Ինչևէ, նախագահի շուտափույթ մեկնմանը կառավարական շրջանակներում ըմբռնումով մոտեցան:

2008թ. Հայաստանում նախագահական ընտրությունների տարի էր, և ակնհայտ էր, որ հետընտրական վիճակը թեժ էր լինելու. դա երևում էր քարոզարշավի հենց սկզբից, քանզի ընտրություններին որոշել էր մասնակցել ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ում շուրջ համախմբվել էին գործող կառավարությունից դժգոհ ուժերը: Այս ընտրություններին ուշիուշով հետևում էին նաև Իրանում: 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքում ՀՀ երրորդ նախագահ դարձավ Սերժ Սարգսյանը:

2008թ. օգոստոսին բռնկված ռուս-վրացական պատերազմը և դրա հետևանքները Հայաստանի համար կրկին փորձության ենթարկեցին հայ-իրանական հարաբերությունների կայունությունը: Հայաստանի համար

նախատեսված բեռները՝ վառելիքը, պարենամթերքը, փաստորեն, կրկին չհասան երկիր: Ակնհայտ էր, որ Հայաստանում գոյություն ունեցող հացահատիկի պաշարները երկար չէին կարող բավարարվել, և կար այն անթաքույց վախը, որ կրկնվելու էր 1991-92թթ. պատմությունը: Սակայն ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ, ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Արմեն Մովսիսյանը և Գեղամ Ղարիբջանյանը, անմիջապես մեկնեցին Թեհրան՝ բանակցելու և ձեռք բերելու անհրաժեշտ ապրանքները: «Բանակցություններն ավարտվեցին հաջողությամբ, և երկու օրից բեռները սկսեցին մուտք գործել Հայաստան»[92]: Հայաստան ներկրվեց հիմնականում պարենամթերք և վառելիք, Հայաստանի ղեկավարության գործադրած ջանքերի և ԻԻՀ բարի կամքի դրսևորման շնորհիվ Հայաստանի քաղաքացիները չզգացին պարենամթերքի և վառելանյութի էական պակաս:

2008թ. սեպտեմբերին ԻԻՀ մեկնեց ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, ըստ էության՝ նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու ՀՀ նախագահի այցի համար, որը տեղի ունեցավ 2009թ. ապրիլի 13-ին: Նախագահ Սերժ Սարգսյանն ընդգծել էր, որ Հայաստանն առանձնահատուկ կարևորություն է տալիս Իրանի հետ հարաբերությունների դինամիկ զարգացմանը՝ այդ երկիրը դիտարկելով որպես վստահելի և առանցքային կարևորություն ունեցող հարևան և «դժվար օրերի բարեկամ»: Նա շնորհակալություն էր հայտնել ինչպես անկախության առաջին տարիներին, այնպես էլ օգոստոսյան իրադարձությունների օրերին Իրանի

[92] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1999-2005) Գեղամ Ղարիբջանյանի հետ, մարտի 30, 2012, Երևան:

տարածքով առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծման հարցում ցուցաբերած բարեկամական աջակցության համար: Նախագահ Մահմուդ Ահմադինեժադն իր հերթին Հայաստանի հետ մշտապես կայուն հարաբերությունների խորացումը որակել էր որպես իր երկրի արտաքին կարևոր առաջնահերթություններից մեկը: «Անհրաժեշտ է պահպանել և ընդլայնել մեր ձեռքբերումները», - նշել էր Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը[93]:

Այս այցի արդյունքում ձեռք բերվեցին և իրավական առումով ձևակերպումներ ստացան մի շարք խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ինչպես Հայաստան-Իրան հարաբերությունների, դրանց հետագա ընթացքը զարգացնելու, այնպես էլ տարածաշրջանային համագործակցությունը խթանելու առումներով: Դրանք են՝ Իրան-Հայաստան ուղիղ երկաթուղային կապը, ինչպես նաև Իրան-Հայաստան նավթամուղ և նավթամթերքի պահեստարան ստեղծելու նախագծերը, Արաքս գետի վրա երկու ՀԷԿ-եր կառուցելու ծրագիրը[94]: Երկու երկրների ղեկավարները գտնում էին, որ այս աշխատանքները իրականացնելով՝ հայ-իրանական հարաբերությունները որակական այլ, առավել շահեկան վիճակում կհայտնվեն:

2009թ. հունիսի 12-ին ԻԻՀ-ում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որի ընթացքում վերընտրվեց Մահմուդ Ահմադինեժադը, ՀՀ նախագահը շտապեց շնորհավորել ԻԻՀ նախագահին՝ վերընտրվելու

[93] Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն, 13.04.2009 - 14.04.2009, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/04/13/news-56/

[94] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005-2009թթ) Կարեն Նազարյանի հետ, հունվարի 08, 2013, Երևան-Նյու Յորք:

կապակցությամբ: Թեև Իրանում դեռ չէին հանդարտվել հետընտրական կրքերը, այնուամենայնիվ, 2009թ. սեպտեմբերի 29-30 երկօրյա պաշտոնական այցով Իրան մեկնեց ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը: ԻԻՀ մեջլիսի նախագահ Լարիջանին, կարևորելով երկկողմ հարաբերությունները, նշել էր, որ պետք է ստեղծվեն երկարաժամկետ հարաբերություններ: Հայաստանի դերակատարությունը տարածաշրջանում Իրանի համար առաջնային համարելով՝ նա ընդգծել էր, որ այն նպաստում է տարածաշրջանի կայունությանը և բաժանարար գծերի վերացմանը: Հանդիպման ընթացքում Հ. Աբրահամյանը և Ա. Լարիջանին քննարկեցին ՀՀ նախագահ՝ Սերժ Սարգսյանի ԻԻՀ կատարած պաշտոնական այցի ընթացքում երկու երկրների նախագահների միջև ձեռք բերված պայմանավորվածությունները և դրանցով նախանշված ծրագրերի իրականացման հարցերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանն ու Իրանը միմյանց կապող երկաթուղու նախագծին[95]:

Հայաստան-Իրան հարաբերություններում իր ուրույն տեղն ունի պաշտպանական գերատեսչությունների միջև սերտացող համագործակցությունը: ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար, բրիգադի գեներալ Ահմադ Վահիդիի հրավերով 2010թ. հուլիսի 17-18-ին Իրան այցելեց ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի գլխավորած պատվիրակությունը: Երկու երկրների պաշտպանության նախարարների բանակցությունների առաջին փուլում քննարկումներ եղան պարսից լեզվի ուսումնասիրման հնարավորության (ՀՀ պաշտպանական

[95] Պաշտոնական այցով Իրանում է գտնվում ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, 29.09.2009, ԱԺ պաշտոնական էջ, http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=29&month=09&year=2009&NewsID=3527&lang=arm

որոշ գերատեսչություններում, -Ի.Գ.), թիկունքային ապահովման, հումանիտար ականազերծման, ՀՈՒ սոցիալական ու ռազմական բժշկության, առևտրաարդյունաբերական բնագավառներում համագործակցելու վերաբերյալ: Ս. Օհանյանին ընդունեց ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Նախարար Ս. Օհանյանը նշեց, որ Հայաստանն առանձնահատուկ կարևորություն է տալիս Իրանի հետ հարաբերությունների զարգացմանը, նրան դիտարկելով որպես **վստահելի և առանցքային կարևորություն ունեցող հարևան**: Նախագահ Ահմադինեժադը իր հերթին Հայաստանի հետ մշտապես կայուն հարաբերությունների խորացումը որակեց **իր երկրի արտաքին քաղաքական կարևոր առաջնահերթություններից մեկը**՝ նշելով, որ անձամբ մեծ ջանքեր է գործադրում ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացնելու համար: Ս. Օհանյանը հանդիպեց նաև ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Սայիդ Ջալիլի հետ: Հատկանշական է, հանդիպման ժամանակ Ջալիլի հնչեցրած կարծիքը. «Մենք պետք է հասնենք նրան, որ մեր պետությունների միջև սահման գոյություն չունենա» ասաց Ս. Ջալիլին (նկատի ունենալով վիզային ռեժիմի վերացումը)[96]:

2011թ. նախագահ Սերժ Սարգսյանը, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հրավերով, մարտի 27-ին աշխատանքային այցով մեկնեց Թեհրան՝ մասնակցելու Նովրուզի տոնակատարությանը: Հանդիպման ընթացքում նախագահներ Սարգսյանը և Ահմադինեժադը քննարկեցին են երկկողմ փոխշահավետ համագործակցության

[96] Տեղեկանք 2001-2013 թվականներին պաշտպանական բնագավառում հայ-իրանական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ՊՆ ՊՔ վարչություն:

զարգացմանն ու բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանը վերաբերող հարցեր: Նախագահները կարևորեցին հատկապես էներգետիկայի, տրանսպորտի, մշակույթի և մի շարք այլ բնագավառներում հաջողությամբ զարգացող փոխգործակցությունը, անդրադարձել՝ Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման ծրագրին[97]:

Խոսելով երկու հարևան երկրների հարաբերությունների մասին, ՀՀ նախագահը այն կոչել էր «**հիրավի օրինակելի**»: Այդ բարեկամությունը, ինչպես նաև Իրանում առկա ծաղկող հայկական համայնքները, հանդիսանում են «քրիստոնյա և իսլամական քաղաքակրթությունների համագործակցության և փոխհարստացման» լավ օրինակ: Երկկողմ այս հարաբերությունները «հանդիսանում են բարեկամության պատմություն, հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի և մշակութային երկխոսության» արդյունք,- նշել էր ՀՀ նախագահը[98]:

2011թ. դեկտեմբերի 23-ին մեկօրյա փոխադարձ այցով Հայաստան ժամանեց ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Հանդիպման ժամանակ նախագահները քննարկեցին Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարբեր ոլորտների վերաբերող խնդիրներ, անդրադարձան ներկա վիճակին և համագործակցության հեռանկարներին առնչվող հարցերի լայն շրջանակի, ներկայացրին երկու պետությունների տեսակետները տարածաշրջանային և միջազգային

[97] Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Իրան, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, 27.03.2011 - 27.03.2011 http://www.president.am/hy/foreign-visits/item/2011/03/27/news-240/

[98] Армен Ханбабян, Армения - Иран: вековая дружба, взаимовыгодное партнерство, Последнее обновление (29.03.11 11:58), http://nv.am/index.php?option=com_content&view=article&id=11660%3A2011-03-29-07-57-56&catid=10%3A2009-06-09-07-22-13&Itemid=1

հարցերի վերաբերյալ: Նախագահներն ընդգծեցին այդ պայմանավորվածությունների իրագործման կարևորությունը երկու պետությունների միջև առևտրաշրջանառության ծավալների ավելացման և ենթակառուցվածքների զարգացման, տնտեսական, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, արդյունաբերության և ներդրումային ոլորտներում փոխհամագործակցության մակարդակի բարձրացման առումով: Նախագահները կարևորեցին Արաքս գետի վրա ՀԷԿ-երի, ինչպես նաև երկու պետությունների երկաթուղային ցանցերը միացնող երկաթգծի և Իրան-Հայաստան նավթատարի կառուցման ռազմավարական ծրագրերի իրագործումը: Համապատասխան նախարարություններին հանձնարարվեց առաջիկա 6 ամիսների ընթացքում գործադրել բոլոր ջանքերը՝ նշված ծրագրերը գործնական փուլ տեղափոխելու համար: Հանդիպման ավարտին երկու երկրների նախագահները հանդես եկան ելույթներով, որտեղ առանցքային բառերն էին **բարեկամական հարաբերությունները, փոխշահավետ համագործակցությունը** և այլն: «Մեր քաղաքական երկխոսությունը լավ ընթացք ունի բոլոր մակարդակներում, ունի շատ լավ տնտեսական հենք, և չնայած ողջ աշխարհի տնտեսության հետ կապված միջազգային խնդիրներին, մեր տնտեսական հարաբերությունները զարգանում են»,-նշել է ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը: Ի պատասխան, ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադը փաստել է, որ «Չկա մեկն աշխարհում, որպեսզի կարողանա Հայաստանի և Իրանի միջև քարտեզը փոփոխել: Մենք հարևան և բարեկամ ենք և պետք է միմյանց հետ կողք-կողքի ապրենք ու մեր աշխատանքներն առաջ տանենք: Մենք հարաբերությունների զարգացման համար սահմանափակումներ չունենք»[99]:

[99] Պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Իրանի նախագահ

Նախագահների հանդիպման ավարտին ԻԻՀ ԱԳ նախարար Ալի Աքբար Սալեհին փաստել էր, որ «Իրան-Հայաստան քաղաքական հարաբերությունները գտնվում են լավագույն վիճակում»[100]:

Հիրավի վերջին այս տարիների ընթացքում գրանցվել են աննախադեպ քանակի փոխայցելություններ՝ նախագահների, արտաքին գործերի նախարարների, Ազգային ժողովի նախագահների և նախարարների մակարդակով: Այս փոխայցելությունները վկայում են առնվազը մեկ բանի մասին՝ քաղաքական մակարդակում երկու երկրների միջև կա կամք՝ զարգացնելու և խորացնելու հարաբերությունները: Եթե Հայաստանի համար Իրանի հետ հարաբերությունները իսկապես կարևոր են և օրհասական պահերին Իրանը երբեք անկախ Հայաստանին միայնակ չի թողել դժվարությունների առջև, հաճախ ինքն արժանանալով դավանակից «եղբայրների» քննադատությանը, ապա Իրանի համար Հայաստանը, թերևս, մի կարևոր վայր է, որպեսզի իր շուրջ ձևավորված միջազգային կարծրատիպը թոթափի, և ինչու ոչ, Հայաստանը իր համար դարձնի աշխարհին ինտեգրվելու հավելյալ մի հարթակ: Բացի այդ, Իրանը, խորացնելով համագործակցությունը Հայաստանի հետ, ակնկալում է ունենալ քիչ թե շատ հուսալի թիկունք՝ ապագայում իր դեմ հնարավոր ռազմական սցենարների պարագայում:

Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների խորացումը ռազմատեխնիկական ոլորտում նմանապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Իրանի համար: Հարևան

Մահմուդ Ահմադինեժադը, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, 23.12.2011, http://www.president.am/hy/press-release/item/2011/12/23/news-1965/

[100] Iran, Armenia mulling free trade agreement, Tehren Times, Dec.25 2011, http://www.tehrantimes.com/economy-and-business/93896-iran-armenia-mulling-free-trade-agreement

երկրում սերտիֆիկացված կենտրոնների և վերանորոգումների ու տեխնիկական սպասարկման համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, որոնք սպասարկելու են ռուսական արտադրության ռազմական տեխնիկան, կարող է իր լուրջ դերակատարությունը ունենալ Ռուսաստանի և Իրանի միջև ռազմատեխնիկական կապերի զարգացման համար[101]: Հայաստանի նախկին վիճակը իբրև խորհրդային ռազմական տեխնոլոգիաների և միջուկային հետազոտությունների բնագավառում կարևոր մասնակից, և նրա Մեծամորի ատոմակայանը հավելյալ գրավչություն են հաղորդում Իրանի համար[102]:

2012-2013թթ. Իրանում տեղի ունեցան համապետական կարևորության երկու ընտրություններ՝ 2012թ. մարտի 2-ին խորհրդարանական, իսկ 2013թ. հունիսի 14-ին՝ նախագահական ընտրություններ: Պառլամենտական ընտրությունների ժամանակ ակնհայտ նկատվեց, որ ժողովուրդն այլևս վստահության իր քվեն չի տալիս Ահմադինեժադին և նրա կողմնակիցներին: Սա, թերևս, ժողովրդի պատասխանն էր Ահմադինեժադին, որը վերջին տարիներին ակնհայտորեն հակամարտության մեջ էր մտել հոգևոր առաջնորդի՝ ռահբարի հետ, երկիրն արժանացել էր միջազգային հանրության խիստ քննադատությանը և Իրանի նկատմամբ կիրառվել էին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նոր պատժամիջոցները, ինչը ժողովուրդն արդեն զգում էր «սեփական գրպանի» վրա:

Պառլամենտական ընտրություններից անմիջապես հետո պարզ դարձավ, որ ԻԻՀ նախագահական ընտրություններին Ահմադինեժադի հովանավորությունը

[101] ارمنستان – ایران: خط شراکت راهبردی
http://pers.iran.ru/news/analytics/80237/d_p_f_n_f_H_d_f_X_h_d_d_d
[102] Iran's row with West, Oxford Analytica, March 29.

վայելող Ռահիմ Մաշային չի ունենա հնարավորություն՝ մասնակցելու նախագահական ընտրություններին: Ի վերջո, ընտրություններում ձայների էական տարբերությամբ առաջին փուլով հաղթանակեց Հասան Ռոհանին, ով չափավոր լիբերալ քաղաքականության կողմնակից է:

Հասան Ռոհանին քաղաքական այն գործիչն է, ով բավական լավ պատկերացնում է ԻԻՀ արտաքին քաղաքականության բոլոր մարտահրավերները և ցանկություն ունի մեղմ գործելաոճով բարձրացնելու Իրանի միջազգային վարկանիշը: Ինչ վերաբերում է Հայաստանի հետ հարաբերություններին, ապա պետք է փաստել, որ Հասան Ռոհանին բավական քաջատեղյակ է հայ-իրանական հարաբերությունների զարգացման բոլոր փուլերին, բավական մտերմիկ և անձնական հարաբերություններ է ձևավորել և հաստատել Հայաստանի ղեկավարության հետ: Եվ ընդհանրապես, նկատվում է երկու երկրների ղեկավարների միջև մարդկային գործունյա և դրական հարաբերությունների լուրջ մակարդակ: Վստահաբար կարելի է փաստել, որ հայ-իրանական հարաբերություններն առավել խորացման միտումներ ունեն. Հստակ են երկու երկրների շահերն ու հետաքրքրությունները, առկա է քաղաքական կամք երկու երկրների ղեկավարների մոտ:

Ընդհանրապես, Հայաստան-Իրան հարաբերությունների 20-ամյա ժամանակահատվածում՝ ԻԻՀ վերջին երեք նախագահների կառավարման տարիներին (Հ. Ռաֆսանջանի, Մ. Խաթամի, Մ. Ահմադինեժադ), Հայաստանի հետ հարաբերություններում հիմնականում պահպանվել է բարեկամական և բարիդրացիական կուրսը:

Հ. Ռաֆսանջանիի կառավարման տարիներին զգացվում էր երկուստեք ճանաչողական բնույթի գործելակերպ, ինչպես նաև խիստ կարևոր էր Ղարաբաղի

խնդիրը, որի ժամանակ Իրանը փորձում էր վարել զգուշավոր քաղաքականություն: Խաթամիի և Ահմադինեժադի կառավարման տարիներին՝ արցախյան ճակատում առկա հրադադարը և ընթացող բանակցությունները հնարավորություն տվեցին ավելի ակտիվացնելու և խորացնելու հարաբերությունները, ինչի վկայություն կարող են հանդիսանալ բազմաթիվ փոխայցելությունները, այդ թվում նախագահների մակարդակով, ինչպես նաև կնքված միջպետական պայմանագրերի քանակը:

Նույնը նկատվում էր նաև հայկական կողմում: Եթե անկախության առաջին տարիներին՝ ակնհայտորեն քիչ էր դասական իմաստով դիվանագետների թիվը, ապա արդեն մի քանի տարի անց նկատվեց իրանական դիվանագիտության հետ շփվելու «գործիքների» ավելացում, ինչին նպաստեց նաև Ղարաբաղյան ճակատում հարաբերական անդորրը:

Հատկանշական է, որ եթե պայմանական նշենք, ապա հայ-իրանական հարաբերությունների զարգացման լուրջ միտումը, ըստ իս, կարելի է թվագրել 2004 թվականից, երբ առաջին անգամ ՀՀ այցելեց ԻԻՀ նախագահը, որից հետո նախագահների մակարդակով հաճախացան փոխայցելությունները: Հաջորդ նշաձողային իրադարձությունն էր 2007թ. Հայաստան-Իրան գազատարի առաջին հատվածի բացումը, նույն թվականին՝ այլընտրանքային ճանապարհը դեպի Իրան և այլն:

Ս. Սարգսյանի կառավարման առաջին տարիներին ՀՀ արտաքին քաղաքական կուրսը կարծես ամբողջությամբ լծված էր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների՝ Թուրքիայի կողմից ակնհայտ ձախողումից հետո, արտաքին քաղաքականության մեջ

նկատվեց հավելյալ միտում Իրանի հետ հարաբերությունների խորացման համար:

Պետք է նշել, որ հայ-իրանական հարաբերությունները կարևոր են ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի համար: Իրանն արհեստավարժ կերպով օգտագործում է այդ հարաբերությունների դրական դինամիկան, ինչով հերքում է իրեն ուղղված կրոնական ծայրահեղականության մեջ մեղադրանքները, սերտորեն համագործակցելով քրիստոնեություն դավանող երկրի հետ: Իրանը նմանապես մեծ ուշադրության է արժանացնում Իրանում հայ համայնքին:

1. Հայ-իրանական հարաբերությունների զարգացման, ամրապնդման մեջ առկա է երկկողմ շահագրգռվածություն: Իրանը, Հայաստանի հետ խորացնելով շփումները, լուծում է միանգամից երկու հարց.

ա) Համաշխարհային հանրությանը ցուցադրում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը հանդուրժողական մոտեցման կողմնակից է բոլոր ժողովուրդների և կրոնների նկատմամբ, դրանով անհիմն է դառնում Իրանին որպես ծայրահեղ մահմեդական երկիր պիտակավորումը:

բ) Համեմատաբար հզոր Հայաստանը Իրանին ձեռնտու է, որպեսզի վերջինս Կովկասում կարողանա դիմագրավել թուրք-ադրբեջանական մերձեցմանը և որպես այլընտրանք միշտ ձգտի Իրանի ներգրավվածությանը տվյալ տարածաշրջանում:

գ) Իրանը, խորացնելով համագործակցությունը Հայաստանի հետ, ակնկալում է ունենալ քիչ թե շատ հուսալի թիկունք, իր նկատմամբ հնարավոր ռազմական սցենարների դեպքում:

2. Հիշատակության արժանի է այն, որ Իրանը մեծապես ցանկանում է խորացնել համագործակցության մակարդակը Ռուսաստանի Դաշնության հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն անդամակցել է

Եվրասիական տնտեսական միությանը, կարծում ենք, որ Հարավային Կովկասում այն առավել արդյունավետ կիրականացվի թերևս Հայաստանում:

3. Իրանական կողմը արդեն անթաքույց խոսում է նաև աշխարհի տարբեր վայրերում բնակվող իրանահայ լոբբիի մասին, որոնք, անհրաժեշտության դեպքում կարող են օգտակար լինեն Իրանին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ[103] ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2/1 Ընդհանուր ակնարկ

Ի տարբերություն Հայաստան-Իրան քաղաքական հարաբերությունների, Հայաստան-Իրան տնտեսական հարաբերութունների զարգացումը ավելի նկատելի և արդյունավետ է ընթանում:

Երկու երկրների միջև տնտեսական համագործակցության հիմնասյուները դրվեցին ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո, երբ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանրագույն ժամանակաշրջանում, և տնտեսական հարաբերությունները զարգանում էին քայլ-առ քայլ՝ ապրանքափոխանակությունից հասնելով մանր առևտրի և ձգտելով իրականացնել խիստ կարևոր համատեղ ծրագրեր: Հարաբերությունների ձևավորման առաջին տարիներին առկա խնդիրներից էին, թերևս, ոչ միայն տեղեկատվության պակասը, երբ կողմերը լիարժեք տեղեկություն չունեին միմյանց ներուժի մասին, այլ նաև երկրների տնտեսական կառուցվածքային տարբերությունները: Իրանը վարում է առավելապես ներփակ պլանային տնտեսությանը բնորոշ քաղաքականություն՝ հովանավորելով իր սեփական ապրանքատեսակները, հարկաբյուջետային և մաքսային քաղաքականություն իրականացնելով և դժվարացնելով այլ

[103] Այս գլխում մենք փորձել ենք հայ-իրանական տնտեսական հարաբերությունները համակարգված ներկայացնել Հայաստան-Իրան ամբողջ հարաբերությունների համատեքստում:

երկրների ապրանքների մուտքը: Հայկական շուկան, ըստ էության, մեծ հետաքրքրություն չի ներկայացնում Իրանի համար, քանզի շուկան բավական փոքր է, գնողունակությունն էլ՝ ցածր:

ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատումից հետո նախագծվեց հետագա գործունեության ողջ ծրագիրը: 1992թ. փետրվարի 9-ին ստորագրվեց հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը[104], որտեղ արծարծվում էին երկու երկրների միջև տնտեսական համագործակցության սկզբունքները:

1992թ. նոյեմբերին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական կապերի կոորդինացման միջպետական հանձնաժողով», որը մեծ ազդեցություն ունեցավ հայ-իրանական տնտեսական հարաբերությունների աստիճանական զարգացման ու ծավալման գործում: Նույն ժամանակամիջոցում՝ 1992թ., երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով Թեհրանում ստեղծվեց «Իրան-Հայաստան առևտրային պալատ»՝ իրանահայ գործարար Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ: Պալատի մեջ ընգրկվեցին և՛ հայ, և՛ իրանցի գործարարներ: 1993թ. Լ. Ահարոնյանի շնորհիվ Իրանի մի խումբ գործարարներ առաջին անգամ այցելեցին Երևան և մասնակցեցին բիզնես ֆորումի աշխատանքներին: «1993թ. մայիսին տեղի ունեցավ առևտրական մեծ ֆորում, որին մասնակցելու հրավեր ստացանք: Ժամանելով Հայաստան՝ մենք հասկացանք, որ

[104] ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական բանբեր, Հայաստան-Իրան, Վենետիկ, 1993, էջ 19:.

չնայած հարևաններ ենք, սակայն իրարից անտեղյակ ենք»,- նշում է Լ. Ահարոնյանը[105]:

1990-ական թվականներին Հայաստանի արտաքին տնտեսական կապերի մեջ Իրանը գրավում էր երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին: 1994թ. համեմատ, երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունն ավելացավ երեք անգամ և հատեց տարեկան 200 մլն դոլարի սահմանը: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1995թ. ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: Այդ համաձայնագրի 1-ին կետով նախատեսվում էր փոխշահավետության հիման վրա և յուրաքանչյուր երկրի օրենսդրության շրջանակներում զարգացնել երկարաժամկետ առևտրատնտեսական համագործակցություն: 2-րդ հոդվածում առավելապես ներառված էր առևտրատնտեսական, ֆինանսավարկային քաղաքականության, բանկային գործունեության, արդյունաբերության, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության, շինարարության ու ճարտարապետության, տուրիզմի բնագավառները: 3-րդ կետով միմյանց պետք է տրամադրվեին առավելագույն բարենպաստության ռեժիմ՝ առևտրատնտեսական հարաբերությունների գծով[106]:

Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին 1995թ., երբ Երևանում տեղի ունեցավ հայ-իրանական կապերի համակարգող միջկառավարական հանձնաժողովի

[105] Հարցազրույց Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լևոն Ահարոնյանի հետ, հունիսի 1, 2012, Երևան (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[106] Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ N 286:

1-ին համատեղ նիստը: Տնտեսական հարաբերությունների մակարդակի բարձրացման երկրորդ ազդակն էլ գրանցվեց 1995թ. ապրիլի 8-ին, երբ ԻԻՀ-ի, ՀՀ-ի և Թուրքմենստանի միջև ստորագրվեց եռակողմ համագործակցություն մասին փաստաթուղթ: Կողմերը համաձայնեցին ապահովել տրանսպորտային համատեղ ընկերությունների ստեղծում Աշգաբադում, Երևանում և Թեհրանում: Առևտրի բնագավառում երեք պետություններն էլ համաձայնեցին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ դյուրացնելու ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև ստեղծել առևտրական ընկերություններ՝ անհրաժեշտ ապրանքների գնման և սեփական ապրանքների արտահանման համար: Կողմերը համաձայնեցին օգտագործել յուրաքանչյուր երկրի առկա հնարավորությունները՝ պահեստավորման տարածքները, նավահանգիստները, մաքսատները՝ այլ տարածաշրջանի հետ առևտրական կապերը զարգացնելու համար[107]:

1997թ. Երևանում կազմակերպվեց իրանական արդյունաբերական և լայն սպառման ապրանքների մեծ ցուցահանդես, որն ունեցավ շարունակական բնույթ, և մինչև օրս էլ ամեն տարի դրանք կազմակերպվում են: Այդ ցուցահանդեսները առևտրական ընկերություններին հնարավորություն են տալիս ճանաչելու միմյանց ապրանքանմուշները և կնքելու փոխշահավետ պայմանագրեր, որոնք բխում են Հայաստան-Իրան տնտեսական համագործակցության շահերից:

Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունները չեն սահմանափակվում միայն առևտրային փոխհարաբերություններով, և շատ հաճախ ընդգրկում են առավել խոշոր ծրագրեր: Դրանց օրինակ

[107] Համատեղ հայտարարություն ԻԻՀ, ՀՀ և Թուրքմենստանի միջև եռակողմ համագործակցության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, ցուցակ 1, գործ N 286:

կարող է հանդիսանալ 1997թ. շահագործման հանձնված բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը:

1998թ. հուլիսի 16-20-ը Թեհրանում կայացավ Հայ-իրանական տնտեսական կապերը համակարգող միջկառավարական համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստը: Հայկական կողմն առաջարկում էր քննարկման դնել Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի ու Իրանի միջև միջազգային տրանսպորտային ընկերություն ստեղծելու խնդիրը: Իրանական կողմը պահանջում էր ավելացնել Իրանի համար նախատեսված 15% մասնաբաժինը: Հաղորդակցության բնագավառում ուշագրավ է հայկական կողմի առաջարկը, ըստ որի՝ համատեղ նիստում պետք է վերջնական լուծում տրվի Մեղրի-Մարանդ հատվածում օպտիկա-մանրաթելային մալուխի անցկացման խնդրին: Ըստ կնքված փոխըմբռնման հուշագրի, իրանական կողմն աշխատանքները պետք է սկսեր 1997թ. նոյեմբերի 1-ից և ավարտեր 1998թ. հունիսին[108]: Սակայն, փաստորեն, ժամկետները երկարաձգել էր իրանական կողմը: Եռօրյա քննարկումների արդյունքում 1998թ. հուլիսի 20-ին կնքվեց փոխըմբռնման հուշագիր, որով կողմերը ստանձնում էին մի շարք պարտավորություններ, որոնք իրականացնելու դեպքում տնտեսական ոլորտում իսկապես կունենային նկատելի առաջընթաց: Հարկ ենք համարում մեջբերել դրանցից մի քանիսը:

Առևտրատնտեսական կոմիտեի աշխատանքների շրջանակում իրանական կողմը պատրաստակամություն հայտնեց Հայաստանում հիմնադրելու մեծածախ և մանրածախ առևտրի հանրախանութներ: Կողմերը նշում են երկու երկրների տարբեր քաղաքներում ցուցահանդեսների կազմակերպման անհրաժեշտությունը: Իրանական կողմը

[108] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմագիտական բաժին, գործ 84, էջ 18:

պատրաստակամություն հայտնեց մսամթերքի արտադրության, թռչունների և անասունների սպանդանոցների, կաթնամթերքի արտադրահոսքերի, ինչպես նաև կաշվի արտադրության գործարանների կառուցման և շահագործման հարցում: Հայկական կողմն առաջարկում էր կողմերի հնարավորությունների շրջանակում նպաստավոր պայմաններ ստեղծել մյուս երկրի ներմուծումների համար և դյուրինացնել դրանք: Արդյունաբերության և ընդերքի կոմիտեի աշխատանքների արդյունքում ամրագրվեց իրանական կողմի պատրաստակամությունը՝ Հայաստանից պղնձի խտանյութի և մոլիբդենի ներմուծման շուրջ, և ցանկություն հայտնվեց նախկինի պես շարունակելու դրանց ներմուծումը: Հայկական կողմը ողջունեց առաջարկը: Իրանի նավթաքիմիական արդյունաբերության ազգային ընկերությունը պատրաստակամություն հայտնեց Հայաստանի «Նաիրիտ» ԳԱՄ, «Դողագործ» գործարանների արտադրական վերակառուցման և շահագործման, «Ռուբին» գործարանում մելամինի արտադրության հիմնադրման և շահագործման հարցում: Տրանսպորտի կոմիտեի աշխատանքների շրջանակում հայկական կողմը առաջարկեց Սև ծով-Վրաստան-Հայաստան-Իրան և հակառակը՝ Իրան-Հայաստան-Վրաստան-Սև ծով տրանսպորտային առանցքի գործարկման նպատակով հիմնել քառակողմ միջազգային տրանսպորտային ընկերություն՝ Իրանի, Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի մասնակցությամբ[109]:

Ի դեպ, հուշագրի որոշ կետեր կյանքի կոչվեցին: 1999թ. հոկտեմբերին Երևանում բացվեց իրանական

[109] Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ և ԻԻՀ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստի վերաբերյալ, 1998թ. հուլիսի 18-20, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 23-33:

ապրանքների խանութը՝ «Փարս» անվամբ: Սակայն ապրանքների առաջին իսկ չափաբաժնի ներկրման ժամանակ ի հայտ եկան մաքսազերծման հետ կապված լուրջ խնդիրներ: Հանրախանութում ներկայացված էր ինչպես իրանական սննդամթերք, այնպես էլ տնտեսական ապրանքներ, էլեկտրատեխնիկա, կահույք, հագուստ, հախճապակի: Կարճ ժամանակ անց հանրախանութը փակվեց, ըստ իրանական կողմի տեղեկության՝ եկամտի բացակայության պատճառով: Ինչպես ամրագրված էր հուշագրում, հետագայում Հայաստանում բացվեցին իրանական ապրանքների ցուցահանդեսներ, որոնցով հայ սպառողը կարծիք կազմեց իրանական ապրանքների որակի և գնի մասին:

1998թ. սեպտեմբերի 7-9-ը Թեհրանում տեղի ունեցավ Հայաստան-Իրան-Հունաստան եռակողմ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի նիստը, որի արդյունքում ստորագրվեց «փոխըմբռնման հուշագիր»: Դրա շրջանակներում ՀՀ արտգործնախարարը Վ. Օսկանյանը ցանկություն հայտնեց, որ Իրանն իր հնարավորություններով և նախագծերով մասնակցի Հայաստանում ճանապարհների և ամբարտակների շինարարական ծրագրերին: ԻԻՀ արտգործնախարար Ք. Խարազին պատրաստակամություն հայտնեց մասնակցելու Հայաստանում իրականացվող շինարարական և զարգացման տարբեր ծրագրերի[110]:

1998թ. նոյեմբերի 19-ին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախաձեռնությամբ կազմակերպվեց Հայաստան-Իրան գործարար համաժողովը: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ողջույնի ուղերձ հղեց համաժողովի ներկայացուցիչներին, որտեղ մասնավորապես նշված էր. «Մենք մեծ հույսեր ենք

[110] ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 3, գործ N 158:

կապում այս միջոցառման հետ, որը զգալի հետաքրքրություն է առաջացրել Իրանի և Հայաստանի գործարարների շրջանում: Մենք լայն հնարավորություն ունենք մոտակա տարիներին մի քանի անգամ մեծացնելու ապրանքաշրջանառության ծավալները մեր երկրների միջև»[111]: Կարևորելով գործարարների համաժողովի աշխատանքները նախագահ Ռ. Քոչարյանը նոյեմբերի 25-ին այցելեց ցուցահանդես, որտեղ հայտարարեց, որ «ցուցում է տրվել արտասահմանում գտնվող Հայաստանի բոլոր դեսպանություններին՝ ամենայն օժանդակություն ցուցաբերել Հայաստանի և արտասահմանյան երկրների գործարարների համագործակցությանը»[112]: Ուշագրավ է, որ այդ համաժողովից հետո գործարարները հանդես եկան երկու երկրների օրենսդիր և գործադիր մարմիններին ուղղված դիմումով: Կարևորվում էր երկու երկրների աշխարհագրական դիրքը և նշվում, որ Հայաստանը կարող է կամուրջ հանդիսանալ Իրանի և ԱՊՀ մի շարք երկրների միջև, իսկ Իրանը Հայաստանի համար՝ Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման գործում նշանակալի դեր կարող է ունենալ: Սակայն նրանք բարձրաձայնեցին նաև առկա խնդիրները, այն է՝ «Մաքսային խոչընդոտները և հարկային օրենսդրության անկատարությունը չեն նպաստում առևտրատնտեսական կապերի հետագա զարգացմանը»: Երկու երկրների տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումն ապահովելու նպատակով համաժողովի մասնակիցները հանդես եկան առաջարկությամբ. «Կողմերն այն կարծիքի են, որ երկու երկրների մաքսային ու հարկային տոկոսադրույքների

[111] ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ուղերձը Հայաստան-Իրան գործարար համաժողովի մասնակիցներին, Երևան, 19 նոյեմբերի 1998թ., ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 45:

[112] ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 55:

իջեցումը, արգելքների վերացումը, արտահանման ու ներմուծման օրենքների պարզեցումն ու հեշտացումը ազդեցիկ օժանդակություն կլինեն տնտեսական և առևտրային համագործակցության ոլորտում: Երկու երկրների ազգային ժողովները կարող են ազդեցիկ օգնություն ցուցաբերել նոր օրենքների մշակման և անհրաժեշտ թույլտվությունների ընդունման գործում: Երկու երկրներում կազմակերպվող ցուցահանդեսային ապրանքները ազատել ցանկացած հարկերից: Պարզեցնել երկու երկրների գործարարների մուտքի և ելքի վիզաների ձևակերպումը»[113] և այլն: Սակայն մինչև այսօր բարձրացված խնդիրներից մի մասը դեռ իր լուծումը չի գտել:

1998թ. Թեհրանում կայացավ հայ-իրանական կապերը համակարգող միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստը, որտեղ համագործակցության մեջ խիստ կարևորվում էին տրանսպորտի և կապի, էներգետիկայի, գյուղատնտեսության, առևտրի ու արդյունաբերության, միջմարզային համագործակցության շրջանակներում հարաբերությունների խորացման հարցերը:

Երևանում ու Թեհրանում այսօր էլ հաճախ կազմակերպվում են արդյունաբերական ապրանքների ցուցահանդես-վաճառքներ, տոնահանդեսներ, մշակութային զանազան միջոցառումներ: Այսօր էլ գործում է Իրան-Հայաստան առևտրի պալատը, որն ունի հայ և իրանցի շուրջ 100 անդամ, որոնց նպատակն է՝ նպաստել Հայաստանի և Իրանի տնտեսական հարաբերությունների մերձեցմանը՝ ամուր կապ ստեղծելով երկու երկրների արտադրական ձեռնարկությունների և առևտրական

[113] Հայ-իրանական գործարար համաժողովի մասնակիցների դիմումը երկու երկրների օրենսդիր և գործադիր մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներին, 21-ը նոյեմբերի, 1998թ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ46-47:

կազմակերպությունների միջև: Այս ամենով հանդերձ, հաճախ ամենաբարձր մակարդակով կողմերը հայտարարում են իրենց դժգոհությունը ապրանքաշրջանառության ծավալների ոչ բավարար լինելու վերաբերյալ: Դրա հիմնական պատճառը այն է, որ մինչև այսօր լուծում չեն ստացել մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են առևտրաշրջանառության ծավալների բարձրացմանը, հիմնականում վերաբերում են մաքսային ոլորտին, ինչպես նաև օրենսդրական դաշտի անկատարությանը:

2001թ. հունվարի 18-ին Հայ-իրանական կապերը համակարգող միջկառավարական հանձնաժողովի 3-րդ նիստի ժամանակ քննարկվեցին երկու երկրներին հուզող բազմաթիվ հարցեր: Իրանի պատվիրակությանն ընդունեց նաև ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը և Հայ-իրանական կապերը համակարգող միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներն ավարտվեցին փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ, որը համակարգում է երկու երկրների տնտեսական համագործակցությունը: Իրանի ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը, բարձր գնահատելով հարաբերությունները երկու պետությունների միջև, արձանագրեց կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունները նավթավերամշակման գործարանի կառուցման վայրի, տեխնիկատնտեսական հիմնավորման, Քաջարանի թունելի, Արաքս գետի վրա Մեղրու ՀԷԿ-ի շինարարության շուրջ փորձագիտական աշխատանքների շարունակման, ներդրումային համատեղ ընկերությունների ստեղծման, անջատիչ էլեկտրակայանի կառուցման հարցերի շուրջ: Հաղորդվեց նաև, որ 2001թ. դրությամբ կողմերը փոխանակում էին 170 ՄՎտ էլեկտրաէներգիա, իսկ կայանի կառուցումը թույլ կտար դա հասցնել մինչև 300 ՄՎտ: Առևտրաշրջանառության մեջ իրանական կողմը

խոստացավ պայմաններ ստեղծել հայկական ապրանքների ներմուծման համար, վերանայել մի շարք սակագների ցուցակներ (տարիֆ) և վերացնել ոչ տարիֆային խոչընդոտները[114]:

2001թ. հունիսի 13-ին տեղի ունեցած հայ-իրանական կապերը համակարգող միջկառավարական հանձնաժողովի՝ հայկական կողմի կազմակերպած 4-րդ նիստի ժամանակ, ակնհայտորեն բացահայտվեցին այն խնդիրները, որ առկա էին հայ-իրանական տնտեսական համագործակցության մեջ: Դրանք հիմնականում այն խնդիրներն են, որոնց վերաբերյալ կողմերը հասել էին համաձայնության, սակայն բուն աշխատանքները ձգձգվում էին կամ ընդհանրապես կասեցվել էին: Օրինակ՝ Մեղրի-Նորդուզ սահմանային շուկայի աշխատանքների հարցը, որն արդյունավետ չգործեց՝ մեխանիզմների բացակայության և օրենսդրական դաշտում առկա հակասությունների պատճառով: Առկա էին հակասություններ Երևանի մերձակայքում իրանական բեռնատար ավտոմեքենաների կայանատեղի համար 2,5 հեկտար հողահատկացման և կառուցման խնդիրներում: Իրանական կողմը, իր խոստումներին հակառակ, միջոցներ չձեռնարկեց հայկական ապրանքների ոչ տարիֆային սահմանափակումները վերացնելու ուղղությամբ[115]:

Վերլուծելով վերոհիշյալ արձանագրությունը, հանգում ենք եզրկացության, որ այն իրականում աշխատանքային բնականոն իրավիճակ է, որտեղ, սակայն, ակնհայտորեն երևում են հայկական կողմի ներդրած ջանքերը, տնտեսական հարաբերությունները որակական նոր հարթության վրա բարձրացնելու ձգտումը, սակայն

[114] Հայ-Իրանական համատեղ հանձնաժողովի նիստն ավարտվեց, Արաքս, 12 (95), հունվար, 2001, էջ 23:

[115] Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի 4-րդ նիստի արձանագրությունը, 13-ը հունիսի 2001թ., ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական վարչություն, գործ 84, էջ 73-77:

իրանական կառավարությունը չի շտապում գործնական քայլեր իրականացնել: Առերևույթ ամեն ինչ պետք է գնա կնքած հուշագրերի, համաձայնագրերի կամ պայմանագրերի համապատասխան, սակայն գործընթացը դանդաղում է, թերևս այն պատճառաբանությամբ, որ հայ-իրանական տնտեսական հարաբերություններում, այնուամենայնիվ, առավելապես հետաքրքրված է հայկական կողմը. Իրանի համար հայկական շուկան չափազանց փոքր է և ոչ այնքան գրավիչ՝ առկա օրենսդրական տարբերություններով հանդերձ: Առնվազն առաջին երեք դիտարկումները՝ Մեղրի-Նորդուզ սահմանային շուկան, Երևանի մերձակայքում բեռնատար ավտոմեքենաների կայանատեղի հարցը, Քաջարանի թունելի շինարարության խնդիրը մինչ օրս էլ լուծում չեն ստացել: Ըստ Ա. Մովսիսյանի, Մեղրի-Նորդուզ սահմանային շուկան «մի քանի անգամ բացվեց և փակվեց: Այն նպատակները, որ ունեինք, չիրականացան: Փաստորեն, դա դարձել էր մի շուկա, որն արդյունք չտվեց»[116]:

Երևանի մերձակայքում բեռնատար ավտոմեքենաների կայանատեղի և վարորդների հանգստի վայր կառուցելու հարցն առկախվեց, քանի որ հողի վարձակալության պայմանների շուրջ համաձայնություն ձեռք չբերվեց: Պահանջվող տարածքը կազմում է 2,5 հեկտար: 1998թ. նոյեմբերի 18-ին ՀՀ տրանսպորտի նախարարը հայտնել էր ԻԻՀ տրանսպորտի նախարարությանը, որ նշված հողատարածքը 99 տարով վարձակալելու համար իրանական կողմը պետք է միանվագ վճարի 200.000 դոլար: Իրանական կողմը ցանկանում էր

[116] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (2006-2014թթ.) Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

այդ հողատարածքի համար վճարել խորհրդանշական գումար[117], ինչն անընդունելի էր հայկական կողմի համար:

Ավելին, դեռևս 1990-ական թվականների կեսերին հայկական կողմը իրանական գործընկերներից պահանջում էր պարզեցնել վիզայի տրամադրման կարգը, և հավասար չափման մեխանիզմներ սահմանել հայկական ու իրանական մեքենաների համար: Հայկական մեքենաները ԻԻՀ տարածք կարող են մտնել ոչ ավելի քան 60կմ խորությամբ, իսկ իրանական մեքենաները ՀՀ տարածքով անցնում են Վրաստան, անհրաժեշտության դեպքում կայանում Երևանում:

Չնայած այն հանգամանքին, որ հայ և իրանցի ժողովուրդները բավական նման են իրենց մենթալիտետով, սովորույթներով և ավանդույթներով, սակայն կա մեկ էական տարբերություն: Հայերի համար բանակցություններ սկսելու պահին կարևորը թերևս վերջնական արդյունքն է, որը պետք է ամրագրվի փաստաթղթով և կյանքի կոչվի, իսկ իրանցիների համար, կարծում ենք, առավելապես կարևոր է բանակցային ողջ գործընթացը, որը կարող է անդադար ձգվել: Դա, իհարկե, չի նշանակում, որ եթե իրենց համար շահեկան իրավիճակ ստեղծվի, կամ ռազմավարական կարևորության խնդիր լինի, նրանք չեն կարող բավական արդյունավետ և արագ աշխատել, իսկ մնացյալ դեպքերում նախընտրում են սպասել և երկարուձիգ բանակցել, մինչ կգա իրենց համար շահեկան վիճակը:

Չնայած իրականացված ողջ աշխատանքներին, ըստ տնտեսագետ Թորոս Թորոսյանի, 2000-ական թվականների սկզբին նկատվում էր հայ-իրանական առևտրային կապերի որոշակի թուլացում՝ 90-ականների առաջին կեսի համեմատությամբ: Ըստ նրա, դա ունի

[117] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 99:

օբյեկտիվ պատճառներ: Նախ, 90-ականների սկզբներին, շրջափակման հետևանքով Իրանը Հայաստանի միակ գործընկերն էր: Դրանից հետո հայկական շուկա թափանցեցին ռուսական ապրանքները, որոնք ավելի որակյալ և «հարազատ» էին Հայաստանին: Հետագայում Հայաստանի շուկա թափանցեցին եվրոպական ապրանքներ, որոնք ինչ-որ առումով դուրս մղեցին թե՛ պարսկական, և թե՛ ռուսական ապրանքները[118]:

Անցյալ տասնամյակի ընթացքում, ներքին և արտաքին հանգամանքներով պայմանավորված, «Հայաստանի և Իրանի միջև ապրանքաշրջանառությունը կայուն զարգացում չի ունեցել. դրա ծավալները տատանվել են 21,3 մլն-ից 193,7 մլն դոլարի միջև, ինչը բնականաբար, չի համապատասխանում մեր երկրների տնտեսական հնարավորություններին»[119]: 2000թ. Հայաստան-Իրան ապրանքաշրջանառության ծավալը կազմեց շուրջ 75 մլն դոլար, որով Իրանը Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Բելգիայից հետո գրավեց 4-րդ տեղը[120]:

Սակայն բոլոր պայմանավորվածություններով հանդերձ, 2001թ. դրությամբ իրանական շուկան շարունակվում էր փակ մնալ հայ արտադրողների համար: Թեև այդ երկրում հայկական ապրանքատեսակների ներմուծումն արգելող որևէ որոշում չկար, սակայն իրանական մաքսատունը խոչընդոտում էր դրանց ներմուծմանը: ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան

[118] Թ. Թորոսյան, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության առևտրատնտեսական կապերը (հիմնախնդիրներ և հեռանկարներ), Հայաստան Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6-7, 2002, էջ 80:

[119] ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի հարցազրույցը «Միհր» ակումբի լրագրողին, փետրվարի 2,2002:

[120] ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի այցը Իրան, Արաքս, 24 (107), հունվար, 2002, էջ 20:

Մ. Քոլեյնին այդ առնչությամբ ներկայացրեց բացատրություն. «Իրան ներմուծվող ապրանքատեսակների հարցում գործում է հետևյալ կարգը. նախօրոք պետական մակարդակով պետք է համաձայնեցվեն Իրան արտահանվելիք ապրանքատեսակները, դրանց ծավալները և սակագները»[121]: Սակայն դա հարցին լուծում չի տալիս, քանի որ 2000թ. հայ գործարարները իրանական կողմին նախօրոք ներկայացրել էին շուրջ 40 ապրանքատեսակ, որոնք Իրանում պահանջարկ ունեն: Բայց իրանական կողմն այդպես էլ ներմուծման իրավունք չտրամադրեց հայ գործարարներին, և ԻԻՀ-ի կողմից հաստատված մաքսատուրքերն ու շահութահարկը խոչընդոտ հանդիսացան անգամ նախապես պայմանավորված և համաձայնեցված ապրանքների ներմուծման համար: Այդ մասին է փաստում 2002 թ. հունիսի 24-ից 27-ը Թեհրան այցելած ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի հաշվետվությունը, որտեղ նշվում է, թե «Իրանական կողմը՝ ի դեմս ԻԻՀ-ի առևտրի նախարարության Եվրոպայի և Ամերիկայի գլխավոր վարչության պետ Ա. Ասադյանի, հայտնեց, որ իրենց կողմից ուսումնասիրվել է հայկական կողմից ներկայացված 30 ապրանքատեսակների ցանկը, և վերջիններիս նկատմամբ հնարավոր չէ կտրուկ իջեցնել գործող առևտրային շահութահարկի դրույքաչափը՝ ելնելով Իրանի ներքին արտադրողի շահերի պաշտպանությունից: Ցանկից ընտրվել է 12 ապրանքատեսակ, որոնց նկատմամբ որոշակի սահմաններում պատրաստ են կիրառել արտոնյալ ռեժիմ:...Հանդիպման ժամանակ Ա. Ասադյանը հայտնեց, որ փոխնախարար Մ. Խոսրովթաջի կողմից նախկինում ներկայացված ներմուծման ժամանակ որոշ ապրանքների

[121] Ինչո՞ւ է իրանական շուկան փակ հայ արտադրողի առջև, Արաքս 16-17, մայիս-հունիս, 2001, էջ 26:

նկատմամբ 0% դրույքաչափի կիրառման հարցը չի կարող քննարկվել, քանի որ այն **իրենց առևտրի փոխնախարարի իրավասություններից դուրս է** (ընդգծումը իրենցն է): Ասադյանը նշեց, որ ընտրված ապրանքների համար իրանական կողմը նախատեսում է շահութահարկի իջեցում ընդամենը 25%-ի չափով»[122]:

Հատկանշական երկու դիտարկում, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալի հետ բանակցում էր ԻԻՀ-ի առևտրի նախարարության գլխավոր վարչության պետը. ակնհայտորեն նկատվում է պաշտոնական դիրքի անհամապատասխանություն, և երկրորդ դիտարկումը՝ վարչության պետը, փաստորեն, իրավասու է նշել, որ նախկինում փոխնախարարի կողմից քննարկած և համաձայնության եկածը դուրս է նրա իրավասություններից: Սա ևս ցայտուն խոսում է իրանական կողմի բանակցային արվեստի մարտավարության և մինչև վերջ սակարկելու ունակության մասին: Նաև պետք է նշել, որ իրանական կողմը հայկական ապրանքների ցուցակից ընտրել էր այն ապրանքները, որոնք իրենց ինչ որ կերպ կարող էր հետաքրքրել, միևնույն ժամանակ մրցակցություն չստեղծելով իրանական շուկայում: Հայկական կողմի համար առավել հետաքրքրություն ներկայացնող ապրանքները ներառված չէին այդ ցուցակում, օրինակ՝ էլեկտրական լամպերը, իսկ հայկական ծխախոտը ընդհանրապես քննարկման ժամանակ մերժվել էր, քանի որ ծխախոտի ներմուծումն արգելված է կամ ներմուծման համար հատուկ թույլտվություն է անհրաժեշտ[123]: Այդ

[122] Հաշվետվություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից գլխավորած պատվիրակության 2002թ. հունիսի 24-ից 27-ը Թեհրան կայացած գործուղման մասին, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 86, էջ 120:

[123] Իրանում ծխախոտի ներկրումը գտնվում է Իսլամական հեղափոխության պահապան խորհրդի վերահսկողության ներքո:

քննարկումներին մասնակցում էր նաև «Գրանդ-հոլդինգի» ընկերության ֆինանսական տնօրեն Յու.Չիլինգարյանը, ով առաջարկում էր ՀՀ-ից ներմուծվող էլեկտրալամպերի նկատմամբ կիրառել շահութահարկի 14%-անոց դրույքաչափ: Իրանական կողմը չընդունեց այդ առաջարկը՝ նշելով որ էլեկտրալամպերի նկատմամբ Իրանի

Իրանական շուկայի ծխախոտի արտադրանքի 42% մատակարարվում է ի հաշիվ մաքսանենգ ճանապարհով բերված արտասահմանյան արտադրության ապրանքի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011թ. Իրանում ծխախոտի շուկան կազմել է 3,6-3,9 մլրդ դոլար, ծխախոտի բիզնեսի ստվերային բաժնի ծավալը կազմում է մոտ 1,5-1,6 մլրդ ամերիկյան դոլար: Այս ամենով հանդերձ, Իրանում արևմտյան երկու ծխախոտային ապրանքանիշ՝ Քենթը և Ուինսթոնը պաշտոնապես գոյություն ունեն: (А. В. Михайловский, Иран: контрабанда табака и политика, http://www.iimes.ru/rus/stat/2012/25-04-12.htm) Իրականում, համաձայն մասնագետների, հայկական արտադրության ծխախոտը ոչ որակով, ոչ էլ, առավել ևս, գնային հարմարությամբ չի զիջում արևմտյան արտադրության ծխախոտին, որ ներկրվում է Իրան, սակայն Հայաստանին թույլ չի տրվում ներկրել ծխախոտ: Ծխախոտի մաքսանենգ ներկրման վերաբերյալ թերևս առաջին անգամ բացահայտ խոսեց Մ. Ահմադինեժադը: Ուղղակի չնշելով Իսլամական հեղափոխության պահապան խորհրդի անունը. նա ասաց, որ «համապատասխան հաստատությունները» օգտագործում են իրենց սեփական նավահանգիստները, որպեսզի երկիր անօրինական ներկրեն ծխախոտի արտադրանք: Ահմադինեժադի խոսքով, մաքսանենգությունը հասել է հսկայական ծավալների: Ахмадинеджад обвинил стражей исламской революции в контрабанде, http://lenta.ru/news/2011/07/05/smuggle/: Իսկ ծխախոտից ստացված այդ մեծ գումարները, փաստորեն, ոչ մի տեղ չեն գրանցվում և չերևացող գումարներ են, որոնք կարելի է օգտագործել ցանկացած վայրում՝ լինի երկրի սահմաններից դուրս, թե գիտատեխնիկական նոր նվաճումների համար: Սակայն, համաձայն ՀՀ մաքսային ծառայության 2013թ. տվյալներով Հայաստանից Իրան է արտահանվել 10,5 մլն հատ ծխախոտ, ինչը, փաստորեն առաջին անգամ էր, սակայն հայտնի չէ այն արտահանելու նպատակը՝ իրացնելո՞ւ, թե՞ Իրանի տարածքը իբրև տարանցիկ երկիր օգտագործելու նպատակով: ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով I-IX ամիսներ (2012-2013թթ.)
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIExportStatistics

օրենսդրությամբ այդպիսի դրույքաչափ սահմանված չէ, և կա խնդիր ներքին շուկայի պաշտպանության ոլորտում[124]:

Հետագա հանդիպումների ժամանակ փոխնախարար Մ. Խոսրովթաջը, չներկայացնելով որևէ կոնկրետ պատասխան հայկական կողմից առաջադրված հարցերին, հայտնեց, որ «ներմուծման ժամանակ զրոյական դրույքաչափի կիրառումը արդեն իսկ արդիական չէ և փոխզիջման սկզբունքը՝ 25% շահութահարկի դրույքաչափի իջեցումը, կարող է հանդիսանալ առաջին քայլը երկու երկրների միջև արտոնյալ ռեժիմների տրամադրման ուղղությամբ: Նա նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել ներքին արտադրողի պաշտպանության սկզբունքը, երկու երկրների սպառման շուկաների հնարավորությունները, ինչից ելնելով՝ հնարավոր է, որ ԻԻՀ-ն ՀՀ-ին կտրամադրի 10 ապրանքատեսակների նկատմամբ արտոնյալ ռեժիմի հնարավորություն, իսկ ՀՀ ԻԻՀ-ին՝ 30 ապրանքատեսակների»[125]: Ցանկանում ենք ուշադրությունը սևեռել մի քանի հանգամանքի վրա. փոխնախարար Մ. Խոսրովթաջը նախկինում խոսել էր 0% դրույքաչափի կիրառման մասին. վստահ ենք, որ նա ունեցել է իր վերադասի համապատասխան ցուցումը՝ նման հայտարարություն անելու համար: Դրանով նրանք հետաքրքրել են հայկական կողմին՝ հրավիրելով բանակցությունների: Այնուհետև հայկական կողմը ներկայացնում է իր համար նախընտրելի 30 ապրանքների ցանկը՝ 0% դրույքաչափի կիրառման համար, սակայն բանակցությունների եզրափակիչ փուլում իրանական կողմը խաղի կանոնները փոխում է, հանդիպմանը մասնակցում է

[124] Հաշվետվություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից գլխավորած պատվիրակության 2002թ. հունիսի 24-ից 27-ը Թեհրան կայացած գործուղման մասին, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 86, էջ 121-122:

[125] Նույն տեղում, էջ 123:

աստիճանով ավելի ցածր ներկայացուցիչ և փաստում, որ ոչ 0% դրույքաչափն է իրականանալի, ոչ էլ 30 ապրանքների անվանացանկը: Ընտրվում է հայկական կողմի համար նվազ հետաքրքրություն ունեցող 10 ապրանքի անուն, այն էլ դրույքաչափը բարձրացնելով 25%, որը բնականաբար բացարձակապես ձեռնտու չէր հայկական կողմին: Եվ վերջում փոխնախարարի հայտարարության մեջ մեր ուշադրությունը գրավեց մի քանի բառ «**հաշվի առնելով ներքին արտադրողի պաշտպանության սկզբունքը, երկու երկրների սպառման շուկաների հնարավորությունները**», և որ այս ամենից ելնելով, **հնարավոր է**, որ ԻԻՀ-ն ՀՀ-ին կտրամադրի **10 ապրանքատեսակների** նկատմամբ արտոնյալ ռեժիմի հնարավորություն, իսկ ՀՀ ԻԻՀ-ին՝ **30 ապրանքատեսակների**"- (նշումները մերն են Ի.Գ.): Վերոնշյալ հանգամանքն ի ցույց է դնում բանակցային գործընթացի անհամաչափությունը, որտեղ խոսքը գնում է ուժեղ տնտեսություն և շուկա ունեցող պետության թելադրանքը կրտսեր, սակայն քաղաքական հայտարարություններում «բարեկամ» պետության մասին:

2001թ. դեկտեմբերի 25-27-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Իրան կատարած այցի ժամանակ, ի թիվս այլ հարցերի, համաձայնություն էր ձեռք բերել Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց թունելի կառուցման վերաբերյալ: Մեղրիի շրջանի և Իրանի Ատրպատական նահանգի ղեկավարության կողմից ստորագրվել էին համագործակցությանը վերաբերող մի քանի փաստաթղթեր, ինչը պետք է նպաստեր երկու կողմի ապրանքաշրջանառության մեծացմանը:

Ուշագրավ է, որ ՀՀ բոլոր երեք նախագահներն էլ արտաքին քաղաքականության ոլորտում խիստ կարևորել են հայ-իրանական հարաբերությունները՝ ուշադրության կիզակետում պահելով հատկապես տնտեսական հարաբերությունների բարելավումը: 2001թ. հայ-իրանական

հարաբերությունների համակարգումը դրվեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Թումանյանի[126] վրա, ով յուրաքանչյուր ամիս հաշվետվություն կամ առաջարկությունների փաթեթ էր պահանջում ՀՀ բոլոր նախարարություններից, որոնք համագործակցում էին կամ ցանկություն ունեին համագործակցելու ԻԻՀ համապատասխան կառույցների հետ:

2002թ. դեկտեմբերի 9-11-ը Թեհրանում կայացավ հայ-իրանական կապերի կոորդինացման հանձնաժողովների համատեղ չորրորդ նիստը: Հատկանշական է, որ հայկական պատվիրակությունը ղեկավարում էր ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Թումանյանը, ԻԻՀ պատվիրակությունը՝ ԻԻՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Թահմասբ Մազահերին: Կողմերը նշեցին իրենց գոհունակությունը Ագարակի 220կՎ ենթակայանի գործարկման և այդ բնագավառում համագործակցության ընդլայնման կապակցությամբ: Քննարկման ժամանակ կողմերը իրենց գոհունակությունը հայտնեցին ՀՀ էներգետիկայի նախարարության և ԻԻՀ գազի արտահանման ազգային ընկերության միջև 2001թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրի կիրարկման ժամկետը 9 ամսով երկարաձգելու կապակցությամբ, որն առնչվում էր թուրքմենական գազը Իրանի տարածքով Հայաստան տարանցելուն և/կամ Իրանի բնական գազը Հայաստան ներմուծելուն: Այս հանդիպման ժամանակ կողմերը սկզբունքորեն քննարկեցին Իրանից Հայաստան արտահանվող գազը Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի ներմուծմամբ փոխանակելու հնարավորությունը: Տրանսպորտի բնագավառում կողմերը

[126] Ա. Թումանյանը 17. 02. 2015թ. ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվեց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, http://www.president.am/hy/decrees/item/1833/

համաձայնեցին կազմակերպել Նորդուզ-Մեղրի կամրջով անցնող բեռնատար մեքենաների կշռումը և կանխել չթույլատրված քաշ ունեցող բեռնատարների անցուդարձը կամրջով[127]: Սակայն, հատկանշական է, որ 2003թ. հունվարի 13-ին պետք է կայանար փորձագետների հանդիպում, որի ընթացքում նրանք պետք է զննեին կամրջի տեխնիկական վիճակը և կամուրջը հատող բեռնատարները կշռելու գործընթացը: Հանդիպմանը մասնակցելու նպատակով կամրջի վայր էր գործուղվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակիցներից կազմված պատվիրակությունը: Սակայն իրանական կողմի փորձագետներն առանց որևէ պատճառաբանության հանդիպմանը չէին ժամանել[128]:

2004թ. առաջին անգամ Հայաստան ժամանեց ԻԻՀ նախագահ Մ. Խաթամին և այցի ավարտին ստորագրվեց 7 համաձայնագիր: Ռոբերտ Քոչարյանն ակնհայտորեն գոհ էր բանակցությունների արդյունքներից: «Հայաստանի համար չափազանց կարևոր է բարեկամ երկրի նախագահի այս այցը: Քննարկվեց երկկողմ հարաբերությունների ամբողջ ծավալը», - ասաց Քոչարյանը: Հայաստանի նախագահն Իրանի հետ հարաբերություններում առաջնային էր համարում տնտեսական ոլորտը, և «ստորագրված պայմանագրերի զգալի մասն այդ ոլորտին էր վերաբերում»:

«Կարևորագույն ոլորտն էներգետիկան է, որտեղ մենք համագործակցության մեծ փորձ ենք կուտակել: Այդ

[127] Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ և ԻԻՀ միջկառավարական հանձնաժողովների չորրորդ համատեղի նիստի, 2002թ. դեկտեմբերի 9-11, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 126-130:

[128] Տեղեկանք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ՀՀ և ԻԻՀ Միջկառավարական հանձնաժողովների չորրորդ համատեղ նիստի Փոխըմռնման հուշագրի կետերի կատարման և առաջարկների վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտակա բաժին, գործ 84, էջ 132-138:

փորձի վրա հենվելով՝ մենք ի վիճակի ենք շատ ավելի լուրջ քայլեր ձեռնարկել մեր ենթակառուցվածքների միացման ուղղությամբ և այստեղ այլ մակարդակի համագործակցություն ենք ունենալու: Այս ծրագրերի նշանակությունը երկկողմ հարաբերությունների շրջանակից դուրս է և ունենալու է տարածաշրջանային նշանակություն: Իրանն իր ներուժով, մշակութային ժառանգությամբ առանցքային երկիր է այս տարածաշրջանում և չափազանց կարևոր է նման երկրի հետ կայուն և լայն օրակարգով հարաբերություններ հաստատել», - ասել է Քոչարյանը[129]:

2004թ. Իրանում՝ Ջուլֆայում ստեղծվեց «Արաս» ազատ առևտրի գոտին, որը ստեղծման առաջին տարիներին ոչ լիարժեք էր գործում: Ազատ առևտրի գոտին ազատված է հարկերից: Հարկային պարտավորություններն անհրաժեշտ չեն նաև արտահանման ժամանակ: Այս տարածքում արտադրվում և արտահանվում են տարատեսակ ապրանքներ՝ մեքենաշինականից մինչև բենզին ու դիզելային վառելիք, օծանելիք ու ջերմոցային մշակաբույսեր[130]: Այսօր արդեն նկատվում է առևտրի գոտու ակտիվությունը, որտեղ հայկական ընկերությունները ևս կարող են լավագույնս ներկայացնել իրենց արտադրանքը:

2006թ. հունվարին Թեհրանում տեղի ունեցավ Իրան-Հայաստան կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստը, որի ընթացքում կողմերը ընդգծեցին «Հյուսիս-հարավ» առանցքում Հայաստանի պարտադիր մասնակցությունը: Նիստի ժամանակ ԻԻՀ-ի ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Դավուդ Դանեշ Ջաֆարին գոհունակությամբ

[129] Թ. Հակոբյան, Խաթամի. «Հայաստանը մեզ համար լոկ հողակտոր չէ», http://www.azg.am/AM/2004090901

[130] Իրանը հայ գործարարներին լայն հնարավորություններ է առաջարկում սահմանամերձ «Արաս» ազատ առեւտրի գոտում, 11.11.2014, http://www.yerkirmedia.am/wap.php?act=news&lan=hy&id=23005

արձանագրեց, որ 2005թ. զգալիորեն աճել է Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը, 2005թ. Իրանը Հայաստան է արտահանել 150 մլն դոլարի ապրանք, իսկ Հայաստանը՝ 40 մլն դոլարի ապրանք Իրան[131]: Սակայն այս թվերից նկատվում է, որ Իրանը դեռ սեփական արտադրանքի նկատմամբ շարունակում է վարել պրոտեկցիոնիստական քաղաքականություն:

2006թ. հուլիսի 5-ին ՀՀ նախագահը Ռ. Քոչարյանն աշխատանքային այցով մեկնեց ԻԻՀ, որի հիմնական նպատակն էր հստակություն մտցնել միջտնտեսական հարաբերություններում, հատկապես էներգետիկայի ոլորտում՝ հայ-իրանական գազատարի, երրորդ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, ինչպես նաև այլընտրանքային ճանապարհի կառուցման բնագավառում[132]: Համաձայն նախագահի՝ «Հայ-իրանական հարաբերություններում էներգետիկան հանդիսանում է այն շարժիչ ուժը, որը կարող է իր հետևից տանել նաև մյուս ոլորտները»[133]: Աշխատանքային այցի արդյունքում կողմերը ստորագրեցին 7 հուշագիր. բացի վերը նշված ոլորտներից, նրանք խոստանում էին ուշադրություն դարձնել

[131] В Тегеране проходит шестое заседание Межправительственной комиссии по торгово – экономическому сотрудничеству Ирана и Армении, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=37132, В 2005 г. товарооборот между Ираном и Арменией составил 190 млн. долл. США, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=37160

[132] Тегеран и Ереван высоко оценивают уровень ирано-армянского сотрудничества, декабря 2006 года. http://www.irna.ir/ru/news/view/menu-291/0612181577142243.htm, ИРНА. 18

[133] Հայաստանի Հանրապետության պաշտոնաթերթ, 11.07.2002:
С. С. Воронов, Ирано-армянские отношения в контексте визита в Тегеран министра иностранных дел Армении В. Осканяна, http://www.iimes.ru/rus/stat/2006/21-12-06a.htm

արդյունաբերությանը, իրավական դաշտին և մշակութային ժառանգությանը[134]:

2007թ. մարտի 19-ին, ի վերջո, բացվեց հայ-իրանական գազատարի առաջին հատվածը, որն անցնում է Մեղրի–Քաջարան գծով: Բացման արարողությունը տեղի ունեցավ Ագարակ քաղաքում՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կողմից: ԻԻՀ նախագահը, բարձր գնահատելով Հայաստանի հետ ձեռք բերված համաձայնությունները էներգետիկայի, գազի, նավթի և ջրային ռեսուրսների ոլորտներում, նշեց. «Այդ ծրագրերի իրականացումը կամրապնդի երկու երկրների հարաբերությունները»[135]: Ըստ էության, այս ծրագրով նախատեսվում էր ԻԻՀ-ից ստանալ գազ, որը վերածվելու էր էլեկտրաէներգիայի և ետ ուղարկվելու Իրան:

Այսօր արդեն քննարկվում է գազի հետ կապված նոր ծրագիր: Կողմերը գտնում են, որ ապագայում անհրաժեշտ կլինի կառուցել գազամուղի երկրորդ խողովակաշար, ինչը կնպաստի Հայաստան ներմուծվող գազի ծավալի մեծացմանը, ինչպես նաև, անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ Եվրոպա արտահանմանը:

Հայ-իրանական հարաբերությունների ու քննարկումների մեջ առանձնահատուկ տեղ էին զբաղեցրել **Քաջարան-Մեղրի թունելի վերաբերյալ** քննարկումները: Քանի որ հայկական կողմը չուներ բավարար ֆինանսներ այդ ծրագիրը իրականացնելու համար, նրանք դիմեցին Իրանի կառավարությանը, որպեսզի համատեղ իրականացնեն այս ծրագիրը: Հաշվի առնելով, որ

[134] Иран и Армения подписали семь документов о сотрудничестве, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=41197

[135] Президент ИРИ: Иран не видит никаких преград на пути дальнейшего развития взаимоотношений с Арменией, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=45638

հայկական կողմը չի կարող բանկային երաշխիք ներկայացնել, թունելի կառուցման համար 1997թ. ապրիլի 17-ի համաձայնագրով տրվելիք վարկի վճարումների շուրջ բանակցելով՝ քննարկվեց հետևյալ տարբերակը: Հայկական կողմը թունելի կառուցման ծախսերի կանխավճարն ու վճարումները, աշխատանքների ընթացքին զուգահեռ, իրականացնելու է 65% ապրանքների, 20% թունելի շահագործումից առաջացած գանձումների ձևով: Իրանական կողմը խնդրել էր հայկական կողմի հավաստիացումը Քաջարանի թունելի շինարարության ծախսերի 50%-ը վճարելու վերաբերյալ[136]: Ինչպես նշել ենք վերը ֆինանսական խնդիրների պատճառով հարցը սառեցվեց:

Հայաստան-Իրան հարաբերությունների հաստատումից ի վեր բանակցությունների օրակարգում է գտնվել **Հայաստան-Իրան երկաթգծի** կառուցման ծրագիրը, որը կհանդիսանա տնտեսական անվտանգության ևս մեկ երաշխիք Հայաստանի համար: Բնականաբար, քննարկումների հենց սկզբից էլ կողմերը գիտակցում էին, որ այն բավականաչափ ֆինանսներ պահանջող ծրագիր է, և որ դրա կառուցման մեջ երկու երկրներն էլ ունեն իրենց շահերը: Հայաստանն այսպիսով կարող է դուրս գալ շրջափակված վիճակից: Միանալով Իրանի երկաթգծերի ցանցին՝ կարող է դուրս գալ ինչպես Պարսից ծոց, այնպես էլ հասնել մինչև Հեռավոր Արևելյան երկրներ, որոնց հետ Իրանն արդեն ունի երկաթգծեր: Իրանը ցանկանում է Հայաստանի վրայով այլընտրանքային ճանապարհ ունենալ դեպի Եվրոպա, ինչպես նաև խորացնել համագործակցությունը ԵԱՏՄ երկրների հետ: «Սա երազանք չէ, և այս ծրագիրն արդեն իրականություն է

[136] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 99:

դառնում, մնում է լուծել ֆինանսական խնդիրները: Շատերն են հետաքրքրված այս ծրագրով. ի դեպ, Իրանի ջանքերով Միջին Ասիայի հետ ևս կառուցվում է երկաթգիծ, և մեր երկաթգիծը կառուցվելու դեպքում կմիանա նրանց, այդտեղից էլ կգնան Բաթումի: Իրանը կարիք ունի Թուրքիայի տարածքից բացի այլ ելք ևս ունենալու դեպի Եվրոպա»[137]: Այս երկաթգիծը Իրանին կհասցնի Սև ծովի ափամերձ շրջաններ և հյուսիսային երկրներ՝ Հայաստանի միջոցով[138]:

Գոյություն ունի Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղու մի քանի տարբերակ. 1. նախատեսվում է Մեղրիից երկաթգիծ կառուցել կամ դեպի Երասխավան, կամ Ջերմուկ: Ընդ որում, հայկական կողմի կարծիքով, իրանական հատվածը պետք է ընդգրկի Մեղրի-Ջուլֆա կամ Մեղրի-Մարանդ հատվածները: Մինչդեռ իրանական կողմը նպատակահարմար է գտնում կառուցել երկաթգիծ Ալամդարից Մեղրի[139]: Ցավոք, երկաթգիծը չի կարող անցնել Արցախի ազատագրված տարածքներով, որոնք հիմնականում հարթավայրեր են, և շատ ավելի հեշտ կիրականանար ծրագիրը: «Երկաթգիծը պետք է անցնի պատերազմական իրավիճակներում երբեք չհայտնվող ճանապարհով, Զանգեզուրով՝ Մեղրի-Քաջարան-Դաստակերտ-Սիսիանի սարահարթ այնուհետև կամ Վարդենիս կամ Երասխ» ճանապարհով[140]: Իրանը իր

[137] Հարցազրույց Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լևոն Ահարոնյանի հետ, հունիսի 1, 2012, Երևան:

[138] Armenia calls for joint projects with Iran, http://www.presstv.ir/detail/183367.html

[139] Թ. Թորոսյան, Լ. Սարգսյան, Հայաստանի և Իրանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները, Տարեգիրք 2012թ., Երևան 2013, էջ 208:

[140] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի

տարածքում կկառուցի ընդամենը 60կմ երկաթգիծ՝ Ջուլֆա քաղաքից մինչև Հայաստանի սահման, մինչդեռ Երևանը պետք է կառուցի 400կմ երկաթգիծ, որպեսզի երկու երկրների երկաթգծերի ցանցերը միավորվեն:

Փաստացի, ինչպես էլ, որ կառուցվի երկաթգիծը, այն հնարավորություն կտա Հայաստանին դուրս գալու ստեղծված տնտեսական ծանր վիճակից, քանզի, միանալով Իրանի զարգացած երկաթգծերի ցանցին՝ հնարավորություն կստանա հասնելու Պարսից ծոց, իսկ այնտեղից էլ արդեն Հնդկաստան, Չինաստան, և դրանով կթուլացնի Ադրբեջանի և Թուրքիայի ստեղծած տրանսպորտային տարանցիկի կախվածությունը»:

Մեր այն հարցին, թե որ փուլում է գտնվում հայ-իրանական երկաթգծի շուրջ քննարկվող ծրագիրը, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ա. Մովսիսյանը պատասխանեց. «Սա լուրջ գաղափար է... Ընդհանրապես, այսօր աշխարհում կառուցվող երկաթգծերի մեծ մասը կառուցվում են սոցիալական կամ քաղաքական դրդապատճառներով, հատկապես մեզ նման երկրներում, նկատի ունեմ ռելիեֆը: Երկաթգիծ կառուցելը բավական թանկ հաճույք է, բայց իրականանալի ծրագիր է: Այստեղ պարզապես պետք է բոլորի համար շահագրգիռ կետեր գտնել, փորձել այնպես մատուցել, որպեսզի շատ երկրների կարողանանք ներգրավել այս գործում: Իրանին այս ծրագիրը ևս շատ հետաքրքրում է: Այժմ Իրանը երկաթգծեր է կառուցում դեպի Թուրքմենիա, Հնդկաստան, և հյուսիս-հարավ այս գծի վրա կարևոր է դառնում նաև Հայաստանի ուղին: Իրանը Եվրոպա դուրս գալու մեկ այլ ուղի է ստանում: Իրանը այժմ միայն Թուրքիայի վրայով է դուրս գալիս Եվրոպա: Մեր

համանախագահ (2006-2014թթ) Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

խնդիրն է՝ ճիշտ ժամանակին կարողանալ ֆինանսական հատկացումներ գտնել: Հնարավոր է այս ծրագիրը սկզբնական շրջանում տնտեսապես արդյունավետ չլինի, միևնույն ժամանակ, ես կարծում եմ, որ պարտադիր էլ չէ, որ այս ծրագիրը ժամանակի ընթացքում ներդրված գումարները ետ բերի, սա երկրի ազգային անվտանգության առումով կարևոր ծրագիր է»[141]:

2009թ. ապրիլին Երևանում ստորագրվեց հուշագիր Հայաստանի և Իրանի երկաթգծի կառուցման ծրագրի շուրջ աշխատանքներ կատարելու ուղղությամբ: Նախնական տվյալներով, այդ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլիներ հինգ տարի, որը հստակ պատասխան կլիներ Բաքու-Ախալքալակ-Թբիլիսի-Կարս երկաթգծին, որը շրջանցում է Հայաստանը և աջակցվել է Ադրբեջանի և Թուրքիայի կողմից[142]:

ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գրիգոր Առաքելյանը «Արմենպրեսին» տված հարցազրույցում նշել է, որ «Արդեն պատրաստ են Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորումները: Հայտնի է նաև նախագծի ֆինանսավորող կողմը: Ծրագրի իրականացման շուրջ առարկայական քննարկումները կկայանան հայ-իրանական կապերի միջկառավարական հանձնաժողովի համատեղ նիստի ընթացքում, որը նախատեսվում է անցկացնել ապրիլին՝ Թեհրանում: Նույն ժամկետներում նախատեսվում է նաև հարցի քննարկման եռակողմ հանդիպում: Ժամկետների առումով մենք հարցի

[141] Տես նույն տեղում:

[142] Отношения Ирана и Армении - стратегические партнеры или вынужденное сотрудничество? 31.07.2013 http://rukavkaz.ru/articles/comments/4148/

պատասխանը կարող ենք ստանալ վերը նշված միջոցառումներից հետո»[143]:

2014թ. փետրվարի 21-ին հայկական ԶԼՄ-ները արձանագրեցին փաստը, թե արդեն պատրաստ է «Հայաստանի հարավային երկաթուղի» ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, ինչպես նաև նախնական ծրագիրը: Ըստ այդ ծրագրի, Հայաստանի հարավային 304.7 կիլոմետր երկարությամբ երկաթուղին պետք է ձգվի Գագարինից մինչև Սյունիքի մարզի Ագարակ գյուղը՝ Իրանի հետ սահմանն անցնելով Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերով: Երկաթգծի մոտ 1/3-ը՝ 102.4 կիլոմետրը, կլինեն թունելներ՝ թվով 60: Երկաթգիծը պետք է ունենա 27 կայարան, 84 կամուրջ՝ 19.6 կմ ընդհանուր երկարությամբ, և այլն: Նախագծի ընդհանուր նախնական արժեքը 3.2 միլիարդ ԱՄՆ դոլար է, իսկ շինարարական աշխատանքները կտևեն 6 տարի: Յուրաքանչյուր 1 կիլոմետրի շինարարության համար կպահանջվի 10.5 միլիոն դոլար[144]:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանի և «Ռոսիա ՖԶԷ» ներդրումային ընկերության նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն Ջոզեֆ Բորկովսկու միջև 2012թ. հուլիսի 28-ին ստորագրված մենաշնորհային պայմանագրի համաձայն, որի գործունեության ժամկետը 30 տարի է, շինարարության ավարտից հետո ընկերությունն իրականացնելու է Հայաստանի հարավային երկաթուղու նախագծումը, ֆինանսավորումը, կառուցումը և շահագործումը՝

[143] Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովը ապրիլին կքննարկի Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման հարցը. ՀՀ դեսպան, 12 փետրվարի, 2014 http://armenpress.am

[144] Հայաստանի հարավային երկաթուղին կհասնի մինչեւ Իրանի հետ սահման. Ջոզեֆ Բարկովսկի, 21.02.2014, http://www.yerkir.am/am/news/62786.htm

բացառապես ընկերության կողմից ներգրավված միջոցների հաշվին:

Տեխնիկատնտեսական ուսումնասիրությանը շուրջ կապալառուի կողմից աշխատանքները մեկնարկել էին դեռևս 2012թ. դեկտեմբերին և տևել են շուրջ 1.5 տարի: Այն մշակելու նպատակով «Ռոսիա ՖԶԷ» ընկերությունը ներգրավել է միջազգային ասպարեզում երկաթուղիների, արագընթաց ճանապարհների, ճանապարհային կոնստրուկցիաների կառուցմամբ մասնագիտացած և մեծ փորձ ունեցող «Չինաստանի հաղորդակցային ընկերությանը» (CCC-Co.ltd): Հայաստանի հարավային երկաթուղու կառուցման իրագործելիության ուսումնասիրությունը ներկայացվել է նաև ՀՀ կառավարության քննարկմանը[145]:

Այդ համաձայնագրի գործունեության ժամկետը 30 տարի է: Ծրագրի իրագործման համար պահանջվող գումարի 60 տոկոսը նախատեսվում է ստանալ չինական բանկերից՝ 30 տարով՝ տարեկան 3.3% տոկոսադրույքով: Իսկ մնացած 40 տոկոսն ակնկալվում է, որ պետք է ներդնեն այդ երկաթուղիով բեռնափոխադրումների իրականացմամբ շահագրգռված երկրները, օրինակ՝ Իրանը, Ռուսաստանը, Թուրքմենստանը, Հնդկաստանը: Բարկովսկու տեղեկացմամբ՝ երկաթուղու շահագործման նախագծային արագությունը կլինի 80կմ/ժ, այսինքն՝ բեռնափոխադրումների համար այն կկազմի 40կմ/ժ, իսկ ուղևորափոխադրումների համար՝ 70կմ/ժ: Ըստ Ջոզեֆ Բարկովսկու՝ երկաթուղու շինարարությունը կմեկնարկի 2016 թվականին և ավարտին կհասցվի 2022 թվականին[146]:

[145] Հայաստանի հարավային երկաթուղին ամենակարճ ճանապարհով Ասիան կկապի Կենտրոնական Եվրոպային,
http://www.aravot.am/2014/02/20/433652/

[146] Հայաստանի հարավային երկաթուղին կհասնի մինչև Իրանի հետ սահման. Ջոզեֆ Բարկովսկի, 21.02.2014,

Անտարակույս, «Հայաստանի հարավային երկաթուղի» ծրագիրը «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային ուղու առանցքային օղակներից մեկն է դառնալու, որը ի վիճակի կլինի մեկ գծով կապել Սև ծովի և Պարսից ծոցի նավահանգիստները, ինչով կդյուրացվի փոխադրումների ծավալը: Վստահաբար կարելի է ասել, որ այն բաց պատուհան կդառնա Հայաստանի համար, որ անկախության տարիներից ի վեր գտնվում է շրջափակման մեջ, ինչը լրջորեն վտանգում է երկրի տնտեսությունը:

«Հայ-իրանական երկաթգիծը քաղաքական առումով անհրաժեշտ է Հայաստանին, սակայն տնտեսական առումով գոնե առաջիկա տարիներին այն իրեն չի արդարացնի: Կարծում եմ, որ Հայաստանի ղեկավարությունը քաղաքական կամք ունի իրականացնելու այս ծրագիրը, մնում է հայթայթել անհրաժեշտ գումարը[147]:

2015թ. Հայաստանի ղեկավարությունը ի ցույց դրեց Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման շուրջ իրենց քաղաքական կամքը, երբ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, 2015թ. հուլիսի 9-ին մասնակցելով Եվրասիական տնտեսական միության և Շանհայի համագործակցության կազմակերպության համատեղ գագաթաժողովին, խոսեց Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման մասին՝ նշելով, որ «Հայաստան-Իրան երկաթուղային ճանապարհի կառուցումը Պարսից ծոցի միջոցով կապահովի ԵԱՏՄ երկրների ելքը դեպի Հնդկական օվկիանոս: Արդեն պատրաստ է տեխնիկական-տնտեսական հիմնավորումը, և ծրագիրը բաց է պետական-մասնավոր գործընկերության համար: Հուսով ենք, որ այստեղ ներկա երկրներից

http://www.yerkir.am/am/news/62786.htm

[147] «Հայ-իրանական երկաթուղու կառուցմամբ մենք դուրս կգանք ադրբեջանաթուրքական շրջափակումից»
http://www.aravot.am/2015/06/22/584598/

ընկերությունները հետաքրքրություն կդրսևորեն», - ասել է Սարգսյանը[148]:

Առկա տեղեկատվության համաձայն, այսօր Ռուսաստանը մեծապես հետաքրքրված է կառուցելու երկաթգիծ, որը կկապվի Իրանի հետ, սակայն ռուս-վրացական հարաբերությունների բացակայության պարագայում Ռուսատանը այդ երկաթգիծը կկառուցի՝ շրջանցելով Հայաստանը՝ այն անցկացնելով Ադրբեջանի տարածքով:

Հայ-իրանական երկաթգծի կառուցման վերաբերյալ կան նաև հակառակ կարծիքներ ևս, օրինակ, նախկին արտգործնախարար Վ. Փափազյանը գտնում է, որ «ներկայումս դա իրականացվող ծրագիր չէ: Աշխարհագրությունը միշտ թելադրում է քաղաքական որոշումներ: Երբ մշակվում են հայ-իրանական տնտեսական բնույթի ռազմավարական ծրագրեր, դա հատկապես վերաբերում է ճանապարհներին կամ տրանսպորտային հանգույցներին, առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք լուրջ քննարկման թեմա են դառնում: Առաջին հերթին դա աշխարհագրությունն է և հաշվարկը: Օրինակ, եթե նախատեսվում է սկսել երկաթգծի շինարարությունը և եթե, ենթադրենք, կարողանում ենք հայթայթել անհրաժեշտ գումարը, որը, լավագույն դեպքում, վարկի տեսքով է լինելու, արդյոք արժե՞ այդ շինարարության մեջ ներդնել այդքան գումար և կարողանալո՞ւ ենք առաջիկա հիսուն տարիների ընթացքում հետ վճարել այդ գումարը: Երկրորդը գեոպոլիտիկան է, այսինքն, տարածաշրջանի հիմնական

[148] Ուֆայում Սարգսյանը խոսել է Հայաստան-Իրան երկաթուղային ճանապարհի կարևորության մասին,

http://www.azatutyun.am/archive/news/20150709/2031/2031.html?id=271190

92

դերակատարների վերաբերմունքը այս կամ այն ծրագրին: Մանավանդ, որ Իրանի շահը այստեղ այդքան էլ ակնհայտ չէ: Եվ ընդհանրապես, քանի դեռ Ղարաբաղի հարցը կարգավորված չէ, տարածաշրջանի, առավել ևս Հայաստանի, զարգացում, մեծ հաշվով, չի լինելու»[149]:

Հասկանալի է, որ այն լինելու է շատ բարդ կառույց՝ հաշվի առնելով մեր աշխարհագրական դիրքը: Որոշ մասնագետներ գտնում են, որ այն ապագայի ծրագիր է, և եթե պետությունը ունի անհրաժեշտ գումարներ, և դրանք ծառայեցնում է քաղաքական ծրագրերի կյանքի կոչմանը, դա շատ լավ է, սակայն եթե չունի և ստիպված է պարտք անել՝ դրանք իրականացնելու համար, ապա այդ դեպքում պետք է ճիշտ հաշվարկ անել. արդյո՞ք կարդարացվեն այդ ներդրումները, թե՝ ոչ: Ըստ այդ մասնագետների, ավելի լավ կլինի, այդ միլիարդավոր դոլարների ընդամենը մեկ քառորդը ծախսել, վերակառուցել ճանապարհները, կառուցել հավելյալ կամուրջներ, թունելներ և լայնացնել ճանապարհները: Եվ այն բավարար կլինի Հայաստան-Իրան բեռնափոխադրումների ծավալները միլիոնավոր տոննաների հասցնելու համար: Ի դեպ, այսօր Իրանի տարածքով տարեկան 600 հազար տոննա ապրանք է մտնում Հայաստան:

2016թ. օգոստոսի 8-ին Բաքվում Ադրբեջանի, Իրանի և Ռուսաստանի նախագահները ստորագրեցին հռչակագիր, ըստ որի կյանքի է կոչվում «Հյուսիս-հարավ» ծրագրի երկաթգծի կառուցումը: Թեպետ Ադրբեջանը բազմիցս հայտարարել է, որ ֆինանսական ոչ մի խնդիր չկա այն արագ կառուցելու համար, սակայն երեք երկրների մեջ կան բազմաթիվ աշխարհաքաղաքական խնդիրներ, որը

[149] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

հնարավոր է դանդաղեցնի այդ երկաթգծի իրականություն դառնալուն:

Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտը միշտ էլ կողմերը գնահատել են ոչ բավարար և նշել, որ այն չի համապատասխանում երկու երկրների տնտեսական հնարավորություններին: Երկու երկրների հարաբերությունների զարգացման վրա մեծապես ազդում են նախագահների փոխայցելությունները, որոնց ընթացքում վերջնական լուծում են ստանում երկար ժամանակ քննարկվող տարբեր խնդիրներ: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով 2011թ. դեկտեմբերի 23-ին մեկօրյա այցով Հայաստանում էր գտնվում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը՝ բարձրաստիճան պատվիրակության գլխավորությամբ: Այցի ընթացքում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետությանը զարգացման օժանդակություն տրամադրելու մասին» փոխըմբռնման հուշագիր, «2007 թվականի մարտի 19-ին Մեղրի քաղաքում Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև ստորագրված «Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում լրացումներ կատարելու վերաբերյալ» արձանագրություն: «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր: «ՀՀ բնապահպանության նախարարության և ԻԻՀ բնապահպանության կազմակերպության միջև բնապահպանական

համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի իրականացման 2012-2013թթ.» գործողությունների ծրագիր: «ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտի և ԻԻՀ ստանդարտների և արտադրական հետազոտությունների ինստիտուտի միջև» փոխըմբռնման հուշագիր: «Կառուցում-Տնօրինում-Շահագործում-Փոխանցում (ԿՏՇՓ) հիմունքներով Մեղրիի հիդրոէլեկտրակայանի կառուցման համար թույլտվության պայմանագրի» վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: Երկու պետությունների նախագահները գոհունակություն հայտնեցին էներգետիկայի բնագավառում ընդլայնվող համագործակցության կապակցությամբ: Ողջունելով էլեկտրահաղորդման 3-րդ գծի ծրագրի իրագործման սկիզբը՝ նրանք ընդգծեցին այն հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնելու անհրաժեշտությունը: Նախագահները կարևորեցին Արաքս գետի վրա ՀԷԿ-երի, ինչպես նաև երկու պետությունների երկաթուղային ցանցերը միացնող երկաթգծի և Իրան-Հայաստան նավթատարի կառուցման ռազմավարական ծրագրերի իրագործումը: Համապատասխան նախարարություններին հանձնարարվեց առաջիկա 6 ամիսների ընթացքում գործադրել բոլոր ջանքերը նշված ծրագրերը գործնական փուլ տեղափոխելու համար: Նախագահներն ընդգծեցին Հայաստանի Հանրապետությունում և Իրանի Իսլամական Հանրապետությունում գործարար շրջանակների տնտեսական և ներդրումային գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծման կարևորությունը[150]:

Բանակցություններից հետո ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Սալեհին հայտարարեց, թե Իրանը և Հայաստանը տնտեսական և առևտրային կապերը

[150] ՀՀ նախագահի և Իրանի նախագահի համատեղ հայտարարությունից, 23.12.2011թ. http://www.aravot.am/2011/12/23/287212/

խթանելու նպատակով հող են նախապատրաստում ազատ առևտրի համաձայնագրի կնքման շուրջ[151]: 2012թ. ապրիլի 29-ին ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հանձնարարեց իր օգնականներին՝ «Պատրաստել ազատ առևտրի գործունեության համար պայմանները»՝ ընդգծելով երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների կարևորությունը[152]:

Սակայն Հայաստան-Իրան ազատ տնտեսական գոտու ստեղծմանը վերաբերյալ իր կարծիքն ունի նաև Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Արմեն Մովսիսյանը. «Ազատ տնտեսական գոտու գաղափարը այս դեպքում մի փոքր անհասկանալի է այն պարզ պատճառով, որ Հայաստանը և Իրանը տնտեսապես տարբեր հարթությունների վրա գտնվող երկրներ են: Այս գաղափարը ունի մի քանի խնդիրներ. Իրանն ունի լավ ձևավորված տնտեսություն, ազատ տնտեսական գոտու ստեղծման դեպքում Հայաստանի տնտեսությունը չի կարող մրցակցել իրանականի հետ: Ազատ տնտեսական գոտին չի նպաստի նաև մասնավոր սեկտորի միջև հարաբերությունների զարգացմանը: Սա ընդամենը ռեժիմ է, որը նպաստելու է շփման հեշտացմանը, բայց որևէ խնդիր չի լուծելու: Սա չի նպաստելու մեր տնտեսության զարգացմանը: Իրանական կողմը առաջարկում է ստորագրել ազատ առևտրի մասին համաձայնագիր, բայց օրենսդրական դաշտում մենք ունենք էական տարբերություններ: Մենք ասել ենք, որ պատրաստ ենք մտնելու այդ գործընթացի մեջ, բայց և առաջարկել ենք

[151] Iran, Armenia mulling free trade agreement, Tehren Times, Dec.25 2011, http://www.tehrantimes.com/economy-and-business/93896-iran-armenia-mulling-free-trade-agreement

[152] The Armenia-Iran Relationship: Strategic implication for security in the Sout Caucasus region, Edited by Claude Moniquet and William Racimora, European Strategic Intelligence & Security Center, 2013, p. 8.

առևտրային ոլորտի իրենց օրենքները հարմարեցնել մեր օրենսդրությանը, քանի որ մենք Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ ենք, մեր օրենսդրությունն այս մասով համապատասխանում է միջազգային ստանդարտներին: Հակառակ դեպքում հնարավոր չէ: Օրինակ՝ Իրանում որոշվում է ինչ որ ապրանքի վրայից հանել մաքսերը, մենք հանում ենք, բայց իրենց մոտ կա ինչ-որ նահանգային մաքս, որը իրենք չեն հանում: Այսինքն, ապրանքի վրա, այնուամենայնիվ, ինչ որ գումար է դրվում, իսկ մենք չունենք նման մարզային մաքսեր»[153]:

Ընդհանրապես, անդրադառնալով Իրան-Հայաստան տնտեսական փոխհարաբերություններին, հարկ ենք համարում ստորև ներկայացնել զարգացման տեմպերը վերջին 20 տարիների ընթացքում.

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ (1000 ԱՄՆ դոլար)[154]			
Թվական	Արտահանում	Ներմուծում	Ընդհանուր ծավալը
1993	5,5 մլն դոլար[155]*	15,8 մլն դոլար*	21,3 մլն դոլար* /2,9/[156]
1994	14,6 մլն դոլար*	42,5 մլն դոլար*	57,1 մլն դոլար* /2,9/
1995	35.042.100	59,8 մլն դոլար*	94.842.000 /1,7/

[153] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Արմեն Մովսիսյանի հետ:

[154] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Արտաքին առևտրի տվյալների բազա http://www.armstat.am/am/index.php?nid=380&thid[]=364&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=5

[155] Աստղանիշով նշված ինֆորմացիան ծեռք է բերվել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատնից, քանզի վիճակագրական ծառայությունը չէր տիրապետում այդ տեղեկությանը:

[156] Ներմուծման և արտահանման հարաբերակցությունը:

1996	43.912.700	149,8 մլն դոլար*	193.712.700 /3,4/
1997	42.583.600	88,7 մլն դոլար*	131.283.000 /2,5/
1998	31.392.300	63,9 մլն դոլար*	95.292.300 /2,04/
1999	34.160.800	78,5 մլն դոլար*	112.660.800 /2,3/
2000	30.089.000	82,9 մլն դոլար*	112.989.000 /2,8/
2001	31.870.400	78.120.100 *	109.990.500 /2,5/
2002	31.468.600	62.150.400 *	93.619.000 /1,97/
2003	22.478.900	51.281.300	73.760.200 /2,3/
2004	30.559.600	62.284.700	92.844.300 /2,4/
2005	28.513.000	89.166.600	117.679.600 /3,1/
2006	29.642.900	114.399.500	144.042.400 /3,9/
2007	38.499.000	141.663.000	180.162.000 /3,7/
2008	25.056.300	202.991.200	228.047.500 /8,1/
2009	33.025.900	162.398.000	195.423.900 /4,9/
2010	84.831.200	199.884.700	284.715.900 /2,4/
2011	106.250.400	216.792.300	323.042.700/2,04/
2012	108.512.100	219.413.100	327.925.200/2,02/
2013	95.036.900	198.494.700	293.531.600 /2,1/

Այսպիսով, հայ-իրանական հարաբերությունների զարգացման տնտեսական կարևոր խնդիրներից է՝ արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորումը, ներդրումների ներգրավումը և աշխարհագրական կառուցվածքների կատարելագործումը: Այս խնդիրների լուծումը զգալիորեն կախված է հայ-իրանական առևտրատնտեսական կապերի հետագա զարգացման և կատարելագործման գործընթացից: Համաձայն վերոհիշյալ աղյուսակի, երկու երկրների միջև արտաքին ապրանքաշրջանառությունը աճել է մինչև 1996թ. 1993թ. համեմատ այն ավելացել է 9 անգամ: Սակայն 1996թ. հետո, ընդհուպ մինչև 2000թ. նկատվում է ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառության անկում: Եթե 1996-2000թթ. Իրանից Հայաստան ներմուծումը նվազեց 45%-ով, ապա Հայաստանից Իրան արտահանումը՝

31%-ով: Ընդ որում, 1993-2000թթ. Հայաստան-Իրան արտաքին առևտրում արտահանման և ներմուծման հարաբերակցությունը ունի բավական բացասական բնույթ, ներմուծումը միջին հաշվով մոտ 2-3 անգամ գերակշռում էր արտահանմանը:

Ապրանքաշրջանառության հաշվարկների մեջ լինում են նաև տարբերություններ, որը բացատրվում է այն հանգամանքով, որ ժամանակ առ ժամանակ գազը և էլեկտրաէներգիան երկու երկրների միջև ընդհանուր առևտրաշրջանառության ժամանակ չեն հաշվարկվում, քանզի դա համարվում է բարտերային գործարք:

Թեև հայկական ապրանքները մեծ դժվարությամբ են մուտք գործում իրանական շուկա, սակայն առկա թվերը հուշում են, որ որոշակի ծավալի ապրանք մտնում է իրանական շուկա:

Եթե 1998թ. Իրանից Հայաստան ներմուծման մեջ «Կաթնամթերք, թռչունների ձու, բնական մեղր, կենդանական ծագում ունեցող սննդամթերք» ապրանքային խմբի տեսակարար կշիռը կազմում է 2.3%, իսկ 1999-ին՝ 19.1%, ապա 2000թ. այն կազմել է 30.3%՝ այս ապրանքախմբի ներմուծման մեջ զբաղեցնելով առաջին տեղը՝ մյուս երկրների համեմատ: Իրանն առաջին տեղն էր զբաղեցնում նաև «Օճառ, լվացող միջոցներ, քսանյութեր, արհեստական և պատրաստի մոմեր... ապրանքախմբերի ներմուծման ծավալում»: Իսկ Հայաստանից հիմնականում արտահանվել են հանքահումքային ռեսուրսներ՝ ալյումին և դրանից պատրաստված իրեր (1999-ին՝ 9426.6տ), հանքաքար, խարամ և մոխիր (202118.6տ), պղինձ և դրանից պատրաստված իրեր (1838.8 տ), սև մետաղներ (9215.4 տ), սև մետաղից իրեր (430.2տ), կապար և դրանից իրեր (320.2տ): Տնտեսագետ Թորոսյանը միաժամանակ դրական է համարում, որ Հայաստանից Իրան արտահանվել են միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ

և մեխանիկական մասեր ընդհանուր առմամբ 3525.7 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ[157]:

Այսօր էլ Հայաստան-Իրան ապրանքաշրջանառությունն էական փոփոխություն չի կրել. համաձայն ՀՀ մաքսային ծառայության 2010-2013թթ. Հայաստանից Իրան է արտահանվել հիմնականում ոչխար և այծ, այլ կենդանիներ, շաքար պարունակող ապրանք, հյութեր, թերթաքար, պղնձի, կապարի հանքաքար և խտանյութ, նատրիումի հիդրոօքսիդ, ածխաջրածիններից ածանցված հալոգեններ, իմունաբանական արտադրանք, պոլիկարբոնատներ, ալկալիդային խեժեր, սինթետիկ կաուչուկ, ոչխարի և գառան չմշակված կաշի, տարբեր տեսակի թղթեր, մետաքսի թել, տարբեր տեսակի սպիտակեղեն, ջրակայուն բրեզենտ, վրաններ, հագուստ, կերամիկական սպասք, հայելիներ, մեծ թիվ է կազմում սև մետաղի ջարդոնը, սև մետաղից իրերը՝ հատկապես երկաթգծերի կամ տրամվայի ռելսերը, սև մետաղից պատրաստված շղթաները, սև մետաղից պատրաստված զսպանակները, պղնձի թափոն, ալյումինի թափոն և ջարդոն, ալյումինե փայլաթիթեղ[158]:

2011թ. առավելապես շատ արտահանվում էր գրանիտ, բազալտ, պարարտանյութ, պատրաստի սոսինձ: Միայն 2011թ. Հայաստանից արտահանվել է 80227,6 տոննա սև մետաղի թափոն և ջարդոն, 2010թ. այն կազմել էր 80504,2 տոննա: 2011թ. Հայաստանից արտահանվել է

[157] Թ. Թորոսյան, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության առևտրատնտեսական կապերը (հիմնախնդիրներ և հեռանկարներ), Հայաստան Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6-7, 2002, էջ 83:

[158] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով (2010-2011թթ.),
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIcsa2011

872,9 տոննա երկաթգծի կամ տրամվայի ռելսեր՝ 2010թ. 408,6 տոննայի փոխարեն և այլն[159]:

2012թ. Իրան արտահանվող մետաղի ջարդոնը արդեն կազմեց 71855 հազար տոննա, իսկ սև մետաղից պատրաստված երկաթգծերի կամ տրամվայի համար նախատեսված ռելսերը մի փոքր քչացել էին նախորդ տարվա համեմատությամբ՝ 494,4 հազար տոննա, թերևս այն պարզ տրամաբանությամբ, որ երկրում արդեն գոյություն չուներ բավարար քանակի երկաթգծի ռելսեր: 2013թ. այն ընդհանրապես այլևս չի առաքվել: 2012թ. երկրից արտահանվել են 820 հազար տոննա կշռով սև մետաղից պատրաստված մետաղե կոնստրուկցիաներ, 1718,1 տոննա ալյումինի ջարդոն[160]:

Եթե 2010թ. Հայաստանից արտահանվել էր 135,2 հազար գլուխ ոչխար և այծ, ապա 2011թ. այն կազմեց 114,1 հազար գլուխ, 2012թ.՝ 41,9 հազար, իսկ ահա 2013թ.՝ 56,1 հազար գլուխ ոչխար և այծ: 2013թ. առաջին անգամ գրանցվեց ծխախոտի արտահանման փորձ՝ 10,5 մլն հատ, իհարկե նշված չէ թե ինչպես է տեղի ունեցել այս տեղափոխումը: 2013թ. Հայաստանից դեռ արտահանվում էր սև մետաղի 6990,6 տոննա թափոն և ջարդոն[161]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանից արտահանվող ապրանքների գերակշռող մասը կազմում են քիմիական արդյունաբերության ապրանքները, մետաղի ջարդոնները, թափոնները, հանքահումքային ապրանքները, երկակի նշանակության օգտագործման ապրանքները:

[159] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով (2011-2012թթ.)
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIcsa2012

[160] Նույն տեղում:

[161] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով I-IX ամիսներ (2012-2013թթ.)
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIExportStatistics

Իսկ ահա Իրանից Հայաստան ներկրվել են կենսական նշանակության ապրանքներ: 2010թ. ներկրվել է կաթնամթերք, խտացրած կաթ, ձու, չորացված մրգեր, տոմատի մածուկ, 9014,3 տոննա սոխ և սխտոր, 596 տոննա մրգեր, 825,3 տոննա խաղող, 400 տոննա սեխ և ձմերուկ, 7701,1 տոննա ցորեն, 175,4 բրինձ, 31992,4 տոննա նավթային կոքս, բիտում, որն օգտագործվում է ասֆալտի մեջ, 3320,7 տոննա ծծմբաթթու, 138,1 տոննա ազոտական թթու, տարբեր տեսակի քիմիական նյութեր և տարրեր, 13697,7 քմ գորգ և այլն[162]:

Հայաստան են ներկրվել 899,3 տոննա մանր ու խոշոր աղացած ալյուր, մսի կամ փորոտիքի բեկորներ, ձկան կամ խեցգետնակերպերի, խեցեմորթների, և ջրային այլ անողնաշարավորների, լեշ, մարդու սննդի համար ոչ պիտանի ապրանքատեսակ: 2012թ. նվազեց Հայաստան ներկրվող, մարդու սննդի համար ոչ պիտանի ապրանքի առաքումը կազմելով 416,3 տոննա, իսկ 2013թ. առաջին 9 ամիսների ընթացքում այն կազմեց ընդամենը 163,9 տոննա: 2012թ. Իրանից ներկրվող նավթը և նավթամթերքը կազմեց 4008,2 տոննա, իսկ 2013թ. այն նվազել և կազմել է 3528,4 տոննա, 2012թ. ներմուծվել է 27559,8 տոննա նավթային կոքս, իսկ 2013թ.՝ 24613,2 տոննա[163]: Հայաստան ներկրվող և արտահանվող ապրանքների ամբողջական ցանկը կարելի է գտնել ՀՀ մաքսային ծառայության կայքում:

Ի մի բերելով ապրանքատեսակները, կարելի է փաստել, որ Հայաստանից արտահանվում է (թերևս, ավելի ճիշտ կլինի օգտագործել Իրանը թույլատրում է արտահանել

[162] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով (2010-2011թթ.),
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIcsa2011

[163] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով I-IX ամիսներ (2012-2013թթ.),
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIExportStatistics

տերմինը, -Ի.Գ.) հիմնականում քիմիական նյութեր, մետաղներ, ջարդոններ և հանքահումքային ապրանքներ՝ իսկ Իրանից Հայաստան ներկրվում են ինչպես կենսական նշանակության ապրանքներ՝ ցորեն, ձու, յուղ, կարտոֆիլ, սոխ, սխտոր և այլն, այնպես էլ փաստացի գրանցվում են թափոններ՝ մարդու սննդի համար ոչ պիտանի ապրանքներ, ուստի, անհասկանալի է, թե ինչու են դրանք ներկրվում ընդհանրապես: Բարեբախտաբար, այդ թափոնների ծավալը վերջին տարիներին նվազման միտումներ է գրանցում, սակայն դեռ գոյություն ունի:

Այս ամենով հանդերձ, 2013 թվականին 2012թ. համեմատ, նկատվեց հայ-իրանական առևտրաշրջանառության անկում գրեթե 9%-ով: Անշուշտ, 2013թ. հայ-իրանական ապրանքաշրջանառության նվազմանը նպաստել է առաջին հերթին ԱՄՆ-ի և Եվրոպական մի շարք երկրների կողմից Իրանի նկատմամբ իրականացված պատժամիջոցները, որի ժամանակ Իրանը չկարողանալով մի շարք ապրանքներ ներմուծել, վճռեց իր սեփական արտադրությունը ևս նվազ չափով դուրս հանել, որպեսզի պահպանի շուկայի կայունությունը: Հայկական կողմը կարողացավ բանակցությունների միջոցով մի շարք ապրանքների նկատմամաբ ներմուծման իրավունք ստանալ: Չնայած այս ամենին, առկա էր նաև պատժամիջոցների լուրջ ազդեցությունը հատկապես իրանական բանկային համակարգի նկատմամբ, որը կրկին խոչընդոտ հանդիսացավ հայ-իրանական մի շարք առևտրական գործարքների համար:

Ուշադրություն են գրավում նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալները մյուս երկրների կտրվածքով, որից պարզվում է, որ 2013թ. ընթացքում Հայաստանի առևտրաշրջանառության

լավագույն հնգյակը ներքոհիշյալ երկրներն են՝ իրենց ապրանքային թվերով[164].
Ռուսաստանի Դաշնություն՝ 1, 445,399, 200 դոլար,
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝
455,355,100 դոլար,
Գերմանիա՝ 366,177, 500 դոլար,
Իրան՝ 293, 531,600 դոլար,
ԱՄՆ՝ 226, 534,800 դոլար:

Սակայն երբ նույն երկրների, նույն ժամանակահատվածի համար ներմուծման և արտահանման ապրանքների թվերը գումարում ենք, ըստ մաքսային ծառայության տվյալների՝ թվերը փոքր ինչ փոփոխվում են:

Ի դեպ, այն վերլուծաբանների պնդումներին, թե Հայաստանի ապրանքը մրցունակությամբ զիջում է իրանական արտադրությանը, և դրանով են բացատրվում Հայաստանից արտահանվող ապրանքների նվազ չափերը, կհակազդենք ներքոհիշյալ փաստարկներով. Հայաստանը ի վիճակի է եղել միայն 2013թ. Ռուսաստանի Դաշնություն արտահանել 1406,6 հազար տոննա ձկնեղեն, 1122,7 տոննա պանիր և կաթնաշոռ, 211,7 սառեցված կամ թարմ լոլիկ, 1092,4 տոննա վարունգ, 2343,2 տոննա խաղող, 21759,2 տոննա ծիրան, բալ, դեղձ, 1975,4 տոննա ընկույզ: ԱՄՆ նույն 2013թ. արտահանվել է 8,5 տոննա միրգ ու բանջարեղեն, 2 տոննա մեղր, 9,9 տոննա կակաոյի պատրաստի արտադրանք հիմնականում՝ շոկոլադ, 19,4 տոննա տոմատի մածուկ, 96,6 տոննա ջեմ և մրգային դոնդողներ, 116,2 տոննա ընկույզ, գետնանուշ և այլ ընդեղեն, Շվեդիա՝ 117,3 տոննա ակտիվացված ածուխ, Շվեյցարիա 66 տոննա կերակրի աղ, Ավստրիա՝ 51,3

[164] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, արտաքին առևտրի տվյալների բազա,
http://www.armstat.am/am/?nid=380&thid[]=276&years[]=2013&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

տոննա թանկարժեք և կիսաթանկարժեք պատրաստի քարեր, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 213 տոննա սառեցված և թարմ բանջարեղեն, 132,6 մլն հատ ծխախոտ, Գերմանիա՝ 153,7 տոննա գրանիտ, բազալտ, Իսպանիա՝ 101,1 տոննա արձանների և շինարարության համար նախատեսված քարեր, Հունաստան՝ 13,8 տոննա պահածոյացված բանջարեղեն, Չինաստան՝ 31856,8 տոննա պղնձի հանքաքար և խտանյութ (ի դեպ եվրոպական մի շարք երկրներին ևս արտահանում ենք այս հանքաքարից)[165]:

Ընդհանուր առմամբ, Իրանից Հայաստան ներմուծվում է ավելի քան 600 անուն ապրանք՝ Հայաստանից Իրան արտահանվող շուրջ 100 անուն ապրանքի դիմաց[166]:

Որոշ տվյալներով, Հայաստանում գրանցված է իրանական մոտ 2000 ձեռնարկություն: Իսկ Իրանում 2014թ. դրությամբ չկա հայկական և ոչ մեկը: Արտաքին բիզնեսի համար իշխանությունները մեծ խոչընդոտներ են ստեղծում, ինչը և ազդում է հայ-իրանական տնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

Արևմտյան մամուլում հաճախ հանդիպում ենք տարակուսանքով լի հոդվածների, որտեղ հեղինակներն անհասկանալի են համարում այն հանգամանքը, որ Հայաստանն Արևմուտքից մեծ ծավալով օգնություն ստանալով, չի աջակցում Իրանի նկատմամբ պատժամիջոցներին: Սակայն ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների ղեկավարները Իրանի և Հայաստանի առևտրաշրջանառությունը չեն դիտարկում որպես

[165] Տես՝ ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով I-IX ամիսներ (2012-2013թթ.),
http://www.customs.am/Content.aspx?itn=csCIExportStatistics

[166] Ինչ ենք վաճառում Իրանին և ինչ ենք այնտեղից ներմուծում. ՀՀ-Իրան առևտրի իրական պատկերը (infographic), http://b4b.am/news.

անհանգստացնող, քանի որ համաշխարհային մասշտաբով այն բավական փոքր ծավալ է գրանցում, նաև հասկանալի է որ հակառակ դեպքում մի ամբողջ ժողովուրդ դատապարտվում է ոչնչացման, որը ոչ ինքնակամ է հայտվել շրջափակման մեջ: Այդ իսկ պատճառով, մեր նկատմամբ կիրառվում է առավել հանդուրժող մոտեցում, և այս պարագայում առկա բոլոր ծրագրերը կարող են շարունակվել[167]:

Այս ամենով հանդերձ, պետք է փաստել, որ «Հայաստանի համար ծանր օրերին Իրանը միշտ եղել է Հայաստանի կողքին, դա եղել է թե՛ անկախության առաջին տարիներին, թե՛ նաև ռուս-վրացական վերջին պատերազմի ժամանակ, երբ Հայաստան ներկրվեց 40 հազար տոննա վառելանյութ և 12 հազար տոննա ալյուր: Հայաստան էր մտնում տարեկան 40-50 հազար բեռնատար մեքենա, որոնց մեծ մասը սնունդ և կենցաղային անհրաժեշտության ապրանքներ էին բերում»[168]: Իրանը այն վաճառել է Հայաստանին հիմնականում համաշխարհային շուկայում առկա գներին համարժեք:

Այսօր հայ-իրանական տնտեսական համագործակցությանը կարող են նպաստել համատեղ ծրագրերի իրականացումը, օրինակ մեր ունեցած տեղեկատվության համաձայն կա որոշակի պայմանավորվածություն, որ Իրանից կիսավարտ ապրանք պետք է բերվի Հայաստան, ամբողջական ավարտուն տեսքի հասցվի, վրան փակցվի «Արտադրված է Հայաստանում» և արտահանվի միջազգային շուկա: Այս մտադրությունը հաստատեց նաև Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լ. Ահարոնյանը. «Այո կա

[167] Г. Абрамян, Армения: Ереван намерен расширять связи с Ираном, 27.01.2012, http://russian.eurasianet.org/node/59138

[168] Հարցազրույց Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լևոն Ահարոնյանի հետ, հունիսի 1, 2012, Երևան:

նման մտադրություն, օրինակ մտածում են հյութը բերեն այստեղ լցնեն տարաների մեջ և արտահանեն, մի քանի նման ծրագրեր էլի կան»[169]:

Հատկապես դա արդիական է դառնում Հայաստանի ԵԱՏՄ անդամակցելուց հետո: Անշուշտ, կարելի է այս տեսակ համագործակցությունը խորացնել՝ ընդգրկելով նոր ոլորտներ. օրինակ՝ Հայաստան ներկրել բանջարեղեն և պահածոյացնել, լվացող նյութեր՝ շշալցումը կատարելով մեզ մոտ հայկական արտադրության պլաստիկե շշերում:

Այս ամենով հանդերձ՝ կարծում ենք, որ հայ-իրանական տնտեսական հարաբերությունները իրականում նվազ չափով են հետաքրքրում իրանական կողմին, քանզի երեք միլիոնանոց շուկա ունեցող երկիրը, որի տարածքը այս պահին դեռևս դյուրին չէ օգտագործել որպես տարանցիկ ուղի՝ դուրս գալու դեպի Ռուսաստան կամ արտաքին աշխարհ, քանի որ Վրաստանը չի մասնակցում Իրան-Հայաստան համագործակցությանը, չի կարող իրապես հետաքրքրել 80 միլիոնանոց բնակչությամբ երկրին: Հայաստանը Իրանին կարող է հետաքրքրել տնտեսական ոլորտում՝ հիմնականում Իրանի հյուսիսային նահանգների հետ առևտրաշրջանառություն իրականացնելու ուղղությամբ[170]:

Իրականում հայ-իրանական տնտեսական հարաբերությունների մակարդակի ոչ այնքան բարձր լինելը ունի իր այլ բացատրությունները ևս.

1. Հայաստանը 2003 թվականից հանդիսանում է Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ, և մեր օրենսդրությունը հարմարեցված է

[169] Նույն տեղում:

[170] Գ. Իսկանդարյան, Հայ-իրանական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները. «բարի դրացիականից» «հատուկ հարաբերություններ», Ժամանակակից Եվրասիա, Երևան, 2013, էջ 114:

միջազգային ստանդարտներին, որը հաճախ չի համապատասխանում իրանական օրենքներին:

2. Իրանը վարում է փակ տնտեսությանը բնորոշ քաղաքականություն և Հայաստանից թույլ է տալիս ներկրել միմիայն այն ապրանքները, որոնք իրեն խիստ անհրաժեշտ են և իրանական շուկայում մրցակցություն չեն առաջացնի, մինչդեռ Իրանը Հայաստան է ներկրում Հայաստանի համար կենսական նշանակության ապրանքներ:
3. Իրանը պատրաստ չէ անգամ որոշ ապրանքների վրա կիրառել ցածր տոկոսադրույքներ:
4. Մյուս կողմից, Իրանն ունի լավ ձևավորված տնտեսություն, և ազատ տնտեսական գոտու ստեղծման դեպքում Հայաստանում արտադրվող ապրանքների համար առաջանալու է մրցակցության խնդիր:
5. Թե՛ Իրանը, և թե՛ Հայաստանը պետք է շահագրգռված լինեն տնտեսական հարաբերությունների զարգացման հարցում: Այսօր Ատրպատականը՝ Իրանի հյուսիսային նահանգը, որին սահմանակցում է Հայաստանը, վերածվում է խոշոր բիզնես-նահանգի: Մոտ 3 միլիոնանոց Թավրիզը ավելի մեծ առևտրաշրջանառություն ունի, քան Հայաստանը, նրա բյուջեն մի քանի անգամ ավելի մեծ է, քան Հայաստանի Հանրապետության բյուջեն: Առկա տեղեկատվության համաձայն, Թավրիզի բյուջեն կազմում է Թեհրանի բյուջեի մոտավորապես 30%-ը: Ակնհայտ է, որ Ատրպատական նահանգի ղեկավարությունը՝ անսալով նրանց թյուրքախոս լինելու հանգամանքին, պետք է որ ցանկություն ունենա մեծացնելու առևտրաշրջանառությունը սահմանակից երկրի հետ:

6. Ըստ վիճակագրական ծառայության տվյալների 2015թ. Հայաստանից Իրան արտահանվող ապրանքների ծավալները այդպես էլ աճ չարձանագրեցին: Անշուշտ, 2013-2014թթ. հայ-իրանական ապրանքաշրջանառության նվազմանը նպաստել են առաջին հերթին Իրանի նկատմամբ իրականացված պատժամիջոցները, որի ժամանակ Իրանը չկարողանալով մի շարք ապրանքներ ներմուծել, վճռեց իր սեփական արտադրանքը ևս նվազ չափով դուրս հանել, որպեսզի պահպանի շուկայի կայունությունը և ապահովի սեփական քաղաքացիների պահանջները: Հայկական կողմը կարողացավ բանակցությունների միջոցով մի շարք ապրանքների նկատմամբ ներմուծման իրավունք ստանալ:
7. Կարծում ենք, որ 2016 թվականին, հաշվի առնելով ԻԻՀ նկատմամբ պատժամիջոցների չեղարկումը, Իրանը պետք է փորձի վերանայել տնտեսական ոլորտում իր ունեցած քաղաքականությունը, որը հնարավորություն կտա հայկական ապրանքներին՝ առավել դյուրին ներկրել Իրան, ինչը կբարելավի ապրանքաշրջանառության մակարդակը: Սակայն կարծում ենք՝ պետք չէ ակնկալել թռիչքային աճ այս ոլորտում: Ինչ վերաբերում է Հայաստանից արտահանվող ապրանքներին, կարծում ենք՝ ժամանակն է, որ հանքահումքային ապրանքների արտահանման փոխարեն երկրից արտահանվի պատրաստի արտադրանք, ինչը եվրոպական մի շարք երկրներում արդեն ունի մեծ պահանջարկ:

2/2. ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայ-իրանական հարաբերություններն ունեն բազմաբնույթ ծալքեր, սակայն կարծում ենք, որ էներգետիկայի ոլորտը, իրապես, գոնե այս պահի դրությամբ, երկու երկրների տնտեսական համագործակցության շարժիչ ուժն է:

Դեռևս 1992թ. փետրվարի 9-ին կնքված հայ-իրանական հռչակագիրը ներառում էր էներգետիկ բնագավառում համագործակցության հարցեր: Առաջին անգամ **Հայաստան-Իրան գազատարի ծրագրի** գաղափարն արծարծվել է 1992թ. միջկառավարական համաձայնագրում: Այնուհետև այն ամրագրվել է փոխըմբռնման հուշագրում, իսկ 1995թ. մայիսին «Հայգազարդ» պետական ընկերության և Իրանի գազի ազգային ընկերության միջև ստորագրվել է իրանական գազի առք ու վաճառքի պայմանագիր, որով ենթադրվում էր 15 տարվա ընթացքում (մարտի 20-ից նոյեմբերի 21-ը) Հայաստան առաքել տարեկան 1 մլրդ մ^3 գազ՝ սահմանային կետում ոչ պակաս, քան 34 մթն. ճնշմամբ: Պետք է նշել, որ պայմանագրի նախապատրաստման և կնքման գործընթացը տեղի էր ունենում Հայաստանում խորը էներգետիկ ճգնաժամի պայմաններում, որն իր արտացոլումն է գտել ստորագրված փաստաթղթի դրույթներում: Իրան-Հայաստան գազամուղի այդ ծրագիրը չիրականացվեց ֆինանսավորման աղբյուրների բացակայության պատճառով, ընդ որում, հայկական կողմի նախաձեռնությամբ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվեց մինչև 1998թ.: Այդ ժամանակից ի վեր իրադրությունը Հայաստանի Հանրապետությունում կտրուկ փոխվեց՝ կարգավորվեց ինչպես նավթամթերքի, այնպես էլ բնական գազի անխափան մատակարարումը, իսկ

ընդհանուր տնտեսական ճգնաժամն այնքան նվազեցրեց էներգետիկ աղբյուրների սպառումը, որ արդյունաբերությունը և կոմունալ սեկտորը սկսեցին «չհասնել» էներգետիկայի ետևից: Այդ իրավիճակում 1995թ. պայմանագրի հիմնական դրույթները (որ ստորագրման պահից ի վեր տարակուսանք էին առաջացնում) պարզապես անընդունելի դարձան Հայաստանի համար, հատկապես՝

- գազի բազային գինը և դրա ամենամյա շտկման անհրաժեշտությունը ըստ մազութի ընթացիկ գնի,
- մատակարարումների ժամանակային շրջանակները,
- ճնշման մեծությունը սահմանային կետում,
- գազի բաղադրությունը՝ ծանր բաղադրիչների, ծծմբի և ազոտի բարձր պարունակությամբ:

Ծրագրի իրականացումը պահանջում է երրորդ կողմի ներգրավում, որի դեպքում առկա պայմաններում կարող էր հանդես գալ Ռուսաստանը՝ ի դեմս «Գազպրոմի» ԲԲԸ-ի, որը շահագրգռված է ինչպես դեպի Թուրքիա գազի առաքման, այնպես էլ Իրանի նավթագազային ոլորտի զարգացման մեջ իր մասնակցության հարցերով:

Համատեղ հանդիպումների ժամանակ իրանական կողմը բազմիցս հայկական կողմին խոստացել է վերանայել իրանական գազի վաճառքի գինը՝ առաջարկելով սկսել շինարարությունը երկու երկրների տարածքում միաժամանակ, չսպասելով գազի առք ու վաճառքի կոնսորցիումի ստեղծմանը: Միևնույն ժամանակ, իրանական կողմը հայտարարել է, որ իր տարածքում գազամուղի շինարարության ֆինանսավորման հարցը լուծված է: Ի պատասխան, հայկական կողմը, հայտարարելով, որ իր տարածքում գազամուղի շինարարության համար պահանջվող ներդրող նույնպես կա, առաջարկել է սկսել

շինարարությունը միաժամանակ երկու երկրների տարածքներում[171]:

1995թ. երկու երկրների միջև ստորագրվեցին նաև համաձայնագրեր, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, և Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ: 1998 թվականից սկսած՝ շարունակվում են էլեկտրաէներգիայի փոխշահավետ սեզոնային փոխանակումները: Հայաստանը ամառային ամիսներին էլեկտրաէներգիա է տրամադրում Իրանին, փոխարենը՝ այն ստանում է ձմեռային ամիսներին, ընդ որում, ապրիլից մինչև հոկտեմբեր էլեկտրաէներգիա է հաղորդվում Հայաստանից դեպի Իրանի էներգահամակարգ, իսկ հոկտեմբերից մինչև ապրիլ՝ Իրանից Հայաստան: 1998 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2002թ. հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ուղղությամբ հաղորդվել է ավելի քան 1,3 մլրդ ԿՎտ.ժ էլեկտրաէներգիա[172]: 2000թ. ապրիլից մինչև 2001թ. ապրիլի 17-ը նշված էներգահամակարգերի միջև փոխանակվել են էլեկտրաէներգիայի հետևյալ քանակությունները. ՀՀ էներգահամակարգից ԻԻՀ էներգահամակարգ առաքվել է 325,950 մլն. կՎտժ, իսկ ԻԻՀ էներգահամակարգից ՀՀ էներգահամակարգ առաքվել է 434,748 մլն կՎտժ: Այսօր էլ էլեկտրաէներգիայի փոխանակման փոխշահավետ գործընթացը շարունակվում է[173]:

[171] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 93-94:

[172] Տեղեկանք ԻԻՀ էներգետիկայի նախարար Հ. Բիթարաֆի գլխավորած պատվիրակության այցի ընթացքում քննարկվելիք հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 149:

[173] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 99:

2001 թվականից Իրան-Հայաստան գազատարի կառուցման հարցն ավելի ինտենսիվ քննարկման առարկա դարձավ: Ի դեպ, Իրան-Հայաստան գազատարի կառուցման նախնական համաձայնագրով նախատեսվում էր գազատարը շարունակել դեպի Վրաստան՝ այն հաշվարկով, որ հետագայում պետք է հասցվի Եվրոպա: Այդ նախագծին միանշանակ չէր վերաբերվում Ռուսաստանի Դաշնությունը: Բավական լուրջ դիմադրություն էին ցույց տալիս նաև Միացյալ Նահանգները և Արժույթի միջազգային հիմնադրամը:

Ըստ ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանի, Հայաստան-Իրան գազատարի կառուցման ժամանակ եղել է «մեծ դիմադրություն Միացյալ Նահանգների, Ադրբեջանի կողմից, ինչ-որ տեղ մտահոգվում էր նաև Ռուսաստանը: Այնպես որ, այստեղ մենք լուրջ դիվանագիտություն իրականացրինք, կարողացանք և՛ ճնշումները չեզոքացնել, և՛ Իրանին ներգրավել տարածաշրջանի գործընթացների մեջ»[174]: Իրանը դեռևս գտնվում է Միացյալ Նահանգների պատժամիջոցների տակ: Մինչև չհարթվեն Միացյալ Նահանգների և Իրանի Իսլամական հանրապետություն միջև գոյություն ունեցող կնճռոտ խնդիրները, Միացյալ Նահանգները և նրա դաշնակիցները հակազդելու են տարածաշրջանի երկրներին՝ Իրանի հետ լիակատար հարաբերվելու հարցում՝ միևնույն ժամանակ խոչընդոտելով են Իրանի յուրաքանչյուր նախաձեռնություն:

Սակայն ճնշումների փաստը հերքում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախկին նախարար Ա.Մովսիսյանը՝ նշելով. «Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ, որևէ ճնշում մեզ վրա չի եղել, ո՛չ Ռուսաստանի,

[174] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008թթ.) Վարդան Օսկանյանի հետ, հուլիսի 8, 2012թ., Երևան:

ո՛չ Արևմուտքի կողմից: Այդ բանակցությունները ծայրից ծայր ես եմ վարել»[175]:

Հատկանշական է ԻԻՀ-ում ՀՀ նախկին դեսպան Գ. Ղարիբջանյանի մեկնաբանությունն այս հարցի կապակցությամբ. «Իսկապես, գազատարի կառուցումը բավական դժվար իրագործելի էր, կային բազմաթիվ խոչընդոտներ, այլ երկրներ ունեին իրենց շահերը և խանգարում էին այս ծրագրի կյանքի կոչմանը: Չնայած այդ ամենին, ԻԻՀ և ՀՀ ղեկավարները հետևողական գտնվեցին և համատեղ ջանքերով հաջողվեց իրականացնել այդ ծրագիրը"[176]:

2003թ. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարությունների միջև առաջին անգամ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ էներգետիկայի բնագավառում համագործակցության վերաբերյալ: Հուշագրում ցանկություն էր հայտնվում այդ ոլորտում առավել խորացնել երկկողմ հարաբերությունները: Սակայն էներգետիկայի ոլորտում ձեռք բերած առաջին հաջողությունը կարելի է թվագրել միայն 1997թ., երբ շահագործման հանձնվեց բարձրավոլտ էլեկտրահաղորդման առաջին գիծը:

Երկար բանակցություններից հետո, ի վերջո, 2004թ. մայիսի 13-ին ստորագրվեց Իրան-Հայաստան գազատարի կառուցման վերջնական պայմանագիրը: Բանակցությունների առարկա էր դարձել ինչպես գազի սակագինը, այնպես էլ որակը և մատակարարման ծավալը: Հարկ է նշել, որ այն փոխշահավետ պայմանագիր է, որն առավել ճիշտ կլինի կոչել «Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագիր»:

[175] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

[176] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1999-2005) Գեղամ Ղարիբջանյանի հետ, մարտի 30, 2012, Երևան:

Հայաստանը Խորհրդային Միությունից ժառանգել էր էներգետիկ ոլորտի հզոր համակարգ, ՀԷԿ-եր, Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երը, ատոմակայանը և այլն: Հայաստանում արտադրվող էներգիան մոտ երկու անգամ գերազանցում է պահանջարկը, Իրանն ունի բնական պաշարներ, սակայն հավելյալ էլեկտրաէներգիայի կարիք է զգում, հատկապես՝ ամառվա ամիսներին: Ըստ պայմանավորվածության՝ սկզբնական շրջանում Իրանը Հայաստանին կմատակարարի տարեկան 1,1 մլրդ մ³ բնական գազ, իսկ 2019թ-ից սկսած՝ 2,3 մլրդ մ³: Ընդհանուր հաշվարկով, 20 տարվա ընթացքում Իրանը Հայաստանին կմատակարարի 36 մլրդ մ³ բնական գազ, որի դիմաց կստանա էլեկտրաէներգիա: 1 մ³ գազի դիմաց ՀՀ-ն ԻԻՀ-ին պետք է տրամադրի 3 ԿՎտ./ժ էներգիա[177]:

2007թ. մարտի 19-ին, ի վերջո, երկար բանակցություններից և ծավալուն աշխատանքներից հետո, բացվեց հայ-իրանական գազատարի առաջին հատվածը, որն անցնում է Մեղրի-Քաջարան գծով: Գազատարի առաջին հատվածը, որն ունի 140 կմ երկարություն և որի կառուցման վրա ծախսվել է առավել քան 120 մլն դոլար, տարեկան 1մլրդ մ³ գազ է փոխադրում Հայաստան: Նախատեսվում էր առաջիկա տարիներին դրա ծավալը հնգապատիկ ավելացնել: Գազամուղի երկրորդ հատվածը՝ Քաջարան, Սիսիան, Ջերմուկ, Արարատ գծով, որն ընդգրկում է 150 կմ, կառուցվեց իրանական «Սանիր» ընկերության կողմից[178]:

[177] Армения построит газопровод до Ирана, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=28553, Газопровод Иран-Армения будет строить «Армросгазпром», http://www.regnum.ru/news/416094.html

[178] Энергетическая диверсификация Армении не зависит от концессионера газопровода Иран-Армения, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=45686

Գազատարի կառուցման ձգձգումը հիմնականում կապված էր գազի սակագնի որոշման հետ: Սկզբնական շրջանում ԻԻՀ-ն առաջարկում էր Հայաստանին տրամադրել 1 մլն մ³ գազ՝ ցածր ճնշմամբ, մարտից մինչև նոյեմբեր, այն էլ՝ թանկ գներով՝ 1000 մ³-ը մոտավորապես 90 դոլարով, այն դեպքում, երբ ՀՀ-ն Ռուսաստանից նույն ծավալի գազը ստանում էր 70 դոլարով: Գազատարի կառուցման ընթացքում որոշակի դժվարություններ առաջացան, որոնք համաձայն ԻԻՀ-ում ՀՀ նախկին դեսպան Գ. Ղարիբջանյանի խոսքերի դրանք միայն տնտեսական բնույթի խնդիրներ էին. «Գազատարի առնչությամբ երկու կողմերի միջև քաղաքական խնդիրներ չկան: Խնդիրը զուտ տնտեսական է և լուծելի: Իրանի և Հայաստանի քաղաքական ղեկավարները գազատարի շինարարությունը սկսելու առումով դրական որոշում են կայացրել: Պիտի նշեմ, որ Իրան-Հայաստան գազատարի կառուցումը ոչ միայն տնտեսական առումով է կարևոր, այլև հեռանկարային քաղաքական առումով»[179]:

2007թ. մարտի 19-ին տեղի ունեցավ ՀՀ և ԻԻՀ նախագահների մասնակցությամբ գազատարի պաշտոնական բացման արարողությունը: 2008թ. նոյեմբերի վերջին ավարտվեցին Իրան-Հայաստան գազատարի երկրորդ հատվածի շինարարական աշխատանքները և գազատարը շահագործման հանձնվեց: 2009 թվականից սկսվեցին գազամատակարարման աշխատանքները: Գազամուղի շինարարությունը, որոշ հաշվարկներով, արժեցել է մոտ 220 մլն դոլար, որից 90-100 մլն դոլարը Հայաստանի տարածքում, գրեթե 120 միլիոնը՝ Իրանի: Գազատարի տրամագիծը 700 մմ է[180]:

[179] Այս տարի Իրան-Հայաստան գազատարի շինարարությունը սկսվելու է, Արաքս, թիվ 16-17(99-100), մայիս-հունիս, 2001, էջ 28:

[180] Глава компании «АРМРОСГАЗПРОМ»: не готовить рынок к росту цен на газ - «недопустимое расточительство»

Հատկանշական է, որ գազատարի շուրջ քննարկումների սկզբնական շրջանում մտադրություններ կային, որ հնարավոր կլիներ Հայաստանի տարածքը օգտագործել իբրև տարանցիկ երկիր և գազ առաքել դեպի Եվրոպա: Իրականում Եվրոպական երկրները ցանկություն ունեն ձեռք բերելու իրանական գազը, ինչը լուրջ այլընտրանք կարող էր լինել ռուսական գազին: Սակայն Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների կողմից ձեռնարկած պատժամիջոցները ստիպում են եվրոպական երկրներին՝ տարակուսել իրանական գազի ձեռք բերման գործընթացի ժամանակ:

2013թ. ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամմեդ Ռեյիսիի հայտարարությունները մամուլում ընկալվեցին որպես ուղերձ, թե Իրանը ցանկանում է Հայաստանը օգտագործել որպես տարանցիկ երկիր և, նրա խոսքերով, Վրաստանն էլ է շահագրգռված: Մենք նույն հարցը տվեցինք դեսպանին և նա գրեթե նույն կերպ պատասխանեց. «Եթե Հայաստանի տարածքով անցնի էներգակիր փոխանցող խողովակ, ապա Հայաստանը այդ տարանցիկ ուղու համար ևս կստանա գումարներ: Երկարաժամկետ ծրագրերից մեկն էլ այն է, որ երկիրը ապագայում կդառնա տարանցիկ ուղղություն, բայց դա էլ պայմանավորված կլինի տվյալ երկրի կառավարության որոշումներից, թե որ ուղին կընտրեն»: Մեր այն դիտարկմանը թե. «Ստացվում է, մենք պետք է բանակցենք, համոզենք և այս գործընթացում ներգրավվենք Վրաստանին...» դեսպանը պատասխանեց «Այո, երբ մենք ձեռնամուխ եղանք այս ծրագրի իրականացմանը, սա առավելապես բխում էր Հայաստանի կարիքներից:

http://www.armrusgasprom.am/ru/infocenter/publications/102/

Վրաստանի հետ էլ ունենք բավական լավ հարաբերություններ»[181]:

Իրականում, եթե վերջնականապես որոշվի գազը արտահանել Եվրոպա, անհրաժեշտ կլինի կառուցել նոր, առավել լայն տրամագծով խողովակներ, իսկ բարձր ճնշում ապահովելու համար հարկավոր են մեծ թվով կոմպրեսորներ[182]: Այսինքն առկա խողովակը չի կարող ծառայել գազը Եվրոպա հասցնելու համար: Նույն տեղեկատվությունը հաստատում է ՀՀ էներգետիկայի նախկին նախարարը և ամբողջովին հերքում է դեսպանի խոսքը՝ նշելով. «Վրաստանը շահագրգռված չէ ստանալու իրանական գազը: Տարատեսակ քննարկումներ, եղան այն մասին, թե իբրև հայ-իրանական գազատարը կառուցելու ժամանակ մեզ վրա եղել են ճնշումներ, որի հետևանքով խողովակի տրամագիծը փոքրացվել է: Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ, որևէ ճնշում մեզ վրա չի եղել, ո՛չ Ռուսաստանի, ո՛չ Արևմուտքի կողմից: Ինչո՞ւ ենք ընտրել խողովակի 700 մմ տրամագիծը: Նախ, գումարի խնդիր ունեինք. որքան մեծանում է խողովակի տրամագիծը, այնքան պահանջվող մետաղը շատանում է, մեծանում է տեխնոլոգիան և, համապատասխանաբար, թանկանում է այդ խողովակաշարի կառուցումը: Առաջին հատվածը կառուցելու դեպքում մենք վճարեցինք 40 մլն դոլար, եթե անցկացնեինք 1000 մմ տրամագծով խողովակ, մենք պետք է վճարեինք 60 մլն դոլար, որը մենք չունեինք: Մենք հաշվել ենք, թե Ռուսաստանից Հայաստան ընդհանրապես գազ չմտնելու դեպքում առաջացած ֆորս-մաժորային իրավիճակում որքան գազ է անհրաժեշտ

[181] Հարցազրույց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսի հետ, (2012-2015) հոկտեմբերի 22, 2013, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[182] Թ. Թորոսյան, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության առևտրատնտեսական կապերը, էջ 80:

Հայաստանին՝ ապահովելու ներքին անվտանգությունը: Ստացել ենք մինչև 2 մլրդ խորանարդ մետր գազ, ավելին մեզ անհրաժեշտ չէ: Ենթադրենք՝ կառուցեինք 1000 մմ տրամագծով խողովակաշար, այդ դեպքում կարող էինք ներկրել 4 մլրդ խորանարդ մետր գազ, բայց ի՞նչ էր տալու դա մեզ: Հարևան Վրաստանին իրանական գազը հետաքրքիր չէ, ոչ գնային, ոչ էլ տարանցիկ առումներով: Երկրորդ, տարանցիկի համար 2 մլրդ ծավալը շատ քիչ է, մեկ խողովակաշարով դեպի Եվրոպա հնարավոր չէ իրականացնել գազամատակարարում: Այսինքն, պետք է մի քանի խողովակ կառուցվեր, ինչպես, օրինակ, Ռուսաստանն է անում, 12 խողովակով Եվրոպա է ուղարկվում ռուսական գազը: Երրորդ, հայ-իրանական գազատարը կարող էր կազմել Նաբուկո ծրագրի մի փոքր մասը, որը, սակայն, տարածաշրջանի հզոր տերություններն անգամ չեն կարողանում կյանքի կոչել: Մեզ ի՞նչ էր պետք. լուծել մեր ներքին անվտանգության խնդիրները՝ հաշվի առնելով առաջիկա 25-30 տարիների զարգացումները, դրա համար վերցրեցինք այս տրամագիծը, բայց հնարավորություն տալով մինչև 3 մլրդ խորանարդ մետր գազ բերելու այս խողովակաշարով: Եթե պետք լինի ծավալը մեծացնել, կարող ենք կառուցել կոմպրեսորային մեկ կայան մեր տարածքում, ճնշումը բարձրացնել և դրա արդյունքում գազի ծավալը մեծացնել: Եվ ավելի մեծ խողովակաշարը տնտեսապես էլ արդարացված չէր լինի, եթե կառուցեինք 1000-1400 մմ տրամագծով, մեզ մեղադրելու էին, որ ծախսերը արդարացված չեն»[183]:

Այնուհետև, 2013թ. դեկտեմբերի 6-ին ԻԻՀ դեսպան Մոհամմադ Ռեյիսին ավելի կոնկրետ հայտարարություն արեց, համաձայն որի՝ ՀՀ կառավարության հասցեին

[183] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Արմեն Մովսիսյանի հետ:

փաստորեն մեղադրանք հնչեցվեց, որ ԻԻՀ կառավարության հետ առանց բանակցելու ՀՀ եկել է եզրակացության, թե Իրանը Հայաստանին էլ պետք է գազ վաճառի միջազգային գներով: Եվ իսկապես նշեց սենսացիոն մի գումար 100 դոլար՝ 1000մ³ համար, այն դեպքում, երբ ռուսական նույն ծավալի գազը այսօր Հայաստան է հասնում 165 դոլար արժողությամբ: «Իրանը Թուրքիային գազ է վաճառում միջազգային գործող գներով, սակայն բարեկամ որոշ երկրների համար բացառված չէ, որ զեղչեր կիրառի: Դա կախված է այն համաձայնություններից, որոնք ձեռք կբերվեն»[184]: «Գուցե մի երկիր ինչ-որ մի երկրի հազար խորանարդ մետրը վաճառի 400 դոլարով, մեկ այլ երկրի ցանկանա վաճառել 100 դոլարով»[185]:

Իհարկե, դեռ կարիք կա բանակցելու այդ հարցի շուրջ, քննարկելու և համաձայնության գալու, սակայն դեսպանի խոսքը իսկապես ուղերձ էր թե՛ հասարակությանը, թե՛ կառավարությանը: Հասկանալի է նաև, որ խոսքը փոխաբերական իմաստով էր ասված, բայց ուղերձը մեկն էր. հնարավոր է Հայաստանին իբրև բարեկամ երկրի առավել էժան գազ մատակարարել, քան անում է Ռուսաստանը: Եթե զուտ տնտեսական հարթության վրա հարցը դիտարկենք, իհարկե, իրանական գազի առավել էժան ձեռքբերումը շահեկան կլիներ Հայաստանի համար, բայց արդյոք կարո՞ղ են լինել երաշխիքներ, որ կարճ ժամանակ անց գնային

[184] Մոհամմադ Ռեյիսի, Հայաստանը Իրանին գազ գնելու հարցով չի դիմել, դեկտեմբերի 6, 2013թ., http://armenpress.am/arm/news/742824/hayastann-iranin-gaz-gnelu-harcov-chi-dimel-mohammad-reyisi.html

[185] Դեսպան. Հայաստանն Իրանից գազ ներկրելու շուրջ չի բանակցել. 6.12.2013թ. http://www.azatutyun.am/content/article/25192067.html

փոփոխություն չի լինի: Կամ բանակցություններն սկսելու հենց սկզբից գինը չի բարձրացվի:

Նախ նշենք, որ Իրանի գազի գնի շուրջ դեռևս 1995թ. ՀՀ ղեկավարությունը բավական տևական ժամանակ քննարկումներ է ունեցել որոնց ժամանակ Իրանը գնային զիջումների չի գնացել, հատկապես, երբ Հայաստանը ուներ էներգետիկ անվտանգության խնդիրներ, ինչի մասին վերը նշել ենք: Եվ անհասկանալի է դառնում այդ համատեքստում, թե ինչը պետք է ստիպեր Իրանին փոխել իր մտադրությունը՝ Հայաստանին առավել էժան գազ մատակարարելու հարցում:

Հատկանշական է նաև մեկ այլ փաստ, տարածաշրջանում իրանական գազի գնի իջեցման շուրջ բանակցություններ են վարել նաև հարևան մյուս երկրները՝ Պակիստանը, Հնդկաստանը, Վրաստանը: Թեհրանը հրաժարվում է գազի գինը իջեցնել սահմանված միջազգային գներից՝ նշելով, որ գազի գինը փոփոխման ենթական չէ: 2012թ. Պակիստանը վերջին փորձը կատարեց Իրանից էժան գազ ստանալու ուղղությամբ. հաշվի առնելով միջազգային պատժամիջոցներն Իրանի նկատմամբ և լավ գիտակցելով, որ Թեհրանը շահույթի լրացուցիչ աղբյուրների կարիք ունի՝ Իսլամաբադը Իրանին առաջարկեց երկարաժամկետ գազային պայմանագիր կնքել՝ դրանում ամրագրելով միջազգայինից փոքր ինչ ցածր գին: Սակայն այս տակտիկական առաջարկությունը Թեհրանի կողմից նորից մերժվեց[186]:

Իրականում Իրանը գազի արտահանման խնդիր ունի, բանը նրանում է, որ այդ երկրում արդյունահանվող 173 մլրդ մ³ գազից 170 մլրդը վերջինս ծախսում է իր իսկ

[186] Ս.Սարուխանյան, Իրանական գազի հեռանկարները Հայաստանում, 06.02.2014, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12540

կարիքների համար, իսկ, օրինակ, Թուրքիա մղվող գազը, մոտ 10 մլրդ մ³ չափով, վերցնում է Թուրքմենստանից:

Անշուշտ, ճիշտ կլիներ, եթե իբրև գազի այլընտրանքային աղբյուր որոշակի ծավալի իրանական գազ ստանալու համար ՀՀ կառավարությունը սկսի բանակցություններ, որպեսզի երկիր մտնող գազի աղբյուրները դիվերսիֆիկացվեն: Իրանական գազի համար բանակցություններ սկսելու պատրաստակամություն հայտնեց ՀՀ էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանը: Նախարարը նախ նշեց, որ իրենք բանակցել են իրանական կողմի հետ, այն էլ մի քանի անգամ, և հավելեց. - «Եթե դեսպանը կպնդի, որ իրենք պատրաստ են էժան գազ տալու, իհարկե կբանակցենք»[187]:

Սակայն չպետք է մոռանանք, որ Իրանն այսօր վերջնականապես չի հարթել Արևմուտքի հետ առկա կնճռոտ բոլոր խնդիրները և այն չի կարող մեզ համար ծառայել որպես ՌԴ-ին փոխարինող, այլ միայն հավելյալ աղբյուր: Բայց, միևնույն ժամանակ, չենք կիսում Մովսիսյանի մոտեցումը, թե պետք է սպասենք Իրանի դեսպանի պնդումներին, այլ պետք է փորձել աշխատել բոլոր ուղղություններով:

Ինչպես վերը նշեցինք Հայաստանը գազի դիմաց Իրանի տրամադրում է էլեկտրականություն, որը տեղափոխվում է Իրան՝ երկու երկրների միջև կառուցված **բարձրավոլտ էլեկտրահաղորդման** երկու գծերի միջոցով: Այսօր արդեն աշխատանքներ են տարվում բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման ուղղությամբ, որով էական առաջընթաց կգրանցվի երկու երկրների միջև էներգետիկ համագործակցության բնագավառում: 2010թ. հոկտեմբերի 14-ին Գեղարքունիքի մարզում՝ Երևան-Սևան

[187] Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը կսկսվի միայն հաջորդ տարի, փետրվար 19, 2014, http://www.azatutyun.am/content/article/25198358.html

ավտոմայրուղու հարևանությամբ, Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի և Իրանի էներգետիկայի նախարար Մաջիդ Նամջուի մասնակցությամբ տեղի ունեցավ «Իրան-Հայաստան 400 ԿՎտժ հզորությամբ երրորդ էլեկտրահաղորդման գծի» շինարարության հիմնարկեքի արարողությունը:

Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել նաև նոր՝ 400/220ԿՎտժ հզորությամբ «Նորավան» ենթակայանը: Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի շինարարության մեկնարկը տրված է: 400 ԿՎտժ լարման երկշղթա այս էլեկտրահաղորդման գծի երկարությունը միայն Հայաստանի տարածքում 275 կմ է: Այն ձգվում է Իրան-Հայաստան սահմանից մինչև Հրազդանի 5-րդ էներգաբլոկ: Նշված էներգահամակարգերի շինարարության արժեքը կկազմի 109 մլն եվրո: Ծրագրի ֆինանսավորումը կատարում է Իրանի Զարգացման, արտահանման բանկը: Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 18 ամսվա ընթացքում[188]: Նշենք, որ այսօր գործող երկու գծերի թողունակությունը միասին կազմում է 300-350 ՄՎՏ: 3-րդ գծի կառուցմամբ հոսանքի ընդհանուր թողունակությունը կհասցվի մինչև 1100-1200 ՄՎՏ-ի: Բնականաբար, դրան համարժեք գազ կմտնի Հայաստան[189]: Որոշ տվյալներով, այն կունենա 412 կմ երկարություն, որից 312 կմ գտնվելու է Հայաստանի տարածքում:

[188] Տեղի ունեցավ «Իրան-Հայաստան 400ԿՎտ հզորությամբ երրորդ էլեկտրահաղորդման գծի» շինարարության հիմնարկեքի արարողությունը, 14 հոկտեմբերի, 2010, http://armenpress.am/arm/print/624156/

[189] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար Արա Սիմոնյանի հետ, հունվարի 24, 2012, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում)

2011-12թթ. Իրանից տարեկան 500-600 մլն մ³ գազ է մտնում Հայաստան և արտահանվում է 1,5-1,8 մլրդ ԿՎտ.ժ էլեկտրաէներգիա: Ի դեպ, Նորդուզում տեղակայված է գազաչափիչ հանգույց, որն անդադար ստուգում է գազի քանակը և որակը:

Հատկանշական է, որ դեռևս 1999թ. դեկտեմբերի վերջին «Էներգացանցին» ԲԲԸ և իրանական «ՍԱՆԻՐ» ընկերության միջև կնքվել է Ագարակի 220 ԿՎտ փոխանջատման կետի համար անհրաժեշտ սարքավորումների մատակարարման պայմանագիր: 2000թ. ընթացքում «ՀԱՅԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ից իրանական կողմից առաքվելիք սարքավորումների դիմաց ԻԻՀ էներգահամակարգ է հաղորդվել 81,6 մլն ԿՎտԺ էլեկտրաէներգիա: Ըստ հաստատված գծագրերի, սկսվել է սարքավորումների առաքումը շինարարական հրապարակ և դրանց տեղադրումը[190]: 2001թ. նախագահ Ռ. Քոչարյանի՝ Իրան կատարած այցից որոշ ժամանակ անց շահագործման հանձնվեց Ագարակի փոխանջատիչ կայանը, որն ամենաբարձր հզորությունն ունի Անդրկովկասում[191]:

Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության մեկ այլ ծրագիր է Հայաստանի տարածքում համատեղ **նավթավերամշակման գործարանի** կառուցումը: Այն եռակողմ ձևաչափ է՝ Հայաստան-Ռուսաստան-Իրան: Նախատեսվում էր Հայաստանում իրանական նավթի բազայի վրա կառուցել նավթավերամշակման գործարան: Այս ծրագիրն առաջին անգամ քննարկման ներկայացվել է 2001թ. հունվարի 24-ին՝ հայկական կողմի նախաձեռնությամբ: Ըստ նախնական համաձայնության,

[190] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 96:

[191] Մ. Մանուկյան, Հայ-իրանական հարաբերությունների ապագան, Միհր, 2 (46), 2004, էջ 45:

հայկական կողմը պետք է կատարեր նավթավերամշակման գործարանի տեխնիկատնտեսական հիմնավորումը, իսկ իրանական կողմը պետք է տրամադրեր տեխնիկատնտեսական հիմնավորումների կատարման համար անհրաժեշտ ելակետային բոլոր տվյալները: 2001թ. հանդիպման ժամանակ իրանական կողմի ներկայացուցիչները հայտարարեցին, որ հում նավթի իրացման գինը Հայաստանի հետ սահմանային կետում կկազմի 25 դոլար՝ մեկ բարելի համար: Սակայն հաշվարկները ցույց են տալիս, որ նման գնի դեպքում կառուցվող նավթավերամշակող գործարանից ստացվող նավթամթերքների բաց թողնման գինը կգերազանցի ներկայիս գների մակարդակը, որն ընդհանրապես կասկածի տակ կդնի նավթավերամշակման գործարանի շինարարության հարցը: Հում նավթի թույլատրելի առավելագույն գինը չպետք է գերազանցի 23,1 ԱՄՆ դոլար մեկ բարելի համար[192]: «Այդպիսի գործարան կառուցելը մեր կարգի երկրների համար բավական մեծ ծրագիր է և շատ դժվար իրականացնելի: Երկրորդ, կար հումքի խնդիրը, որտեղից էինք ստանալու հումքը: Հումքի խնդիրը լուծելուց հետո ի հայտ է գալիս այլ խնդիր, որտեղ պետք է իրացվեն արդյունքները: Եթե չէինք կարողանալու արդյունքը իրացնել, ապա դա տնտեսապես չէր կարող արդարացվել: Բավական մեծ խնդիրներ առաջացան.այսինքն, հումքը բերում ենք այլ երկրից, քանի որ մենք չունենք, վերամշակող հզորություն ենք կառուցում, որին զուգահեռ պետք է կառուցվեն անհրաժեշտ հզորության ենթակառուցվածքներ, որը բերելու էր հավելյալ լուրջ ծախսեր, ստանում ենք արդյունք, որը ամբողջապես չէինք կարող սպառել մեր երկրում, քանի որ շուկան շատ փոքր է և այն պետք է

[192] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 95:

վաճառեինք այլ երկրում: Հաշվարկները ցույց տվեցին, որ այդ ծրագիրը տնտեսապես արդարացված չէ: Դրա համար հրաժարվեցինք այդ ծրագրից՝ ունենալով մեկ այլ մտահղացում: Ամենափոքր նավթազտարանը, որ պետք է կառուցեինք, ունենալու էր տարեկան 2,5 մլն տոննա հզորություն, իսկ մեր պահանջարկը տարեկան 400-500 հազար լիտրից չի անցնում: Հետևաբար, խնդիր առաջացավ. քանի որ այդ ծավալները չենք կարող իրացնել, ապա առավել նպատակահարմար է պատրաստի նավթամթերք բերել»[193]: Էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարարն էլ ավելացրեց, թե. «Պատճառը հիմնականում հում նավթի մատակարարման լոգիստիկան է, որը ընդունելի չէր, քանի որ Իրանից մատակարարվող նավթը խողովակներով պետք է բերվեր Իրանի հարավային շրջանների նավթահորերից, և չմոռանանք, որ Իրանի հարավային շրջանների նավթը պատկանում է ծանր նավթերի շարքին, և, հաշվի առնելով Հայաստանի բարդ ռելիեֆը, մասնագետները գտան, որ այն տնտեսապես արդարացված չէ»[194]: Այս պայմանագիրը այժմ սառեցված է, որի պատճառներից մեկը թերևս նավթի գնի շուրջ եղած անհամաձայնությունն է: Սակայն, ըստ իս, այս ծրագիրը ի սկզբանե կյանքի կոչվելու ներուժ չուներ:

Կողմերը որոշեցին մեկ այլ ծրագիր իրականացնել՝ **պատրաստի նավթամթերքներ** տեղափոխել Հայաստան՝ Թավրիզ-Արարատ ձգվող 8 մատնաչափ տրամագծով խողովակաշարով, որը բավարարելու է Հայաստանի պահանջարկը: Քննարկումներն այս ուղղությամբ շարունակվում են: «Գաղափարը ընդունվեց իրանական կողմից, որովհետև հաշվարկները ցույց էին տալիս, որ

[193] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

[194] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար Արա Սիմոնյանի հետ, հունվարի 24, 2012, Երևան:

պատրաստի նավթամթերքը խողովակաշարով ներկրելը առավել մատչելի է, քան տրանսպորտային միջոցներով բերելու դեպքում: Իրանից ներկրելու դեպքում պետք է աշխատեինք Պարսից ծոցի շուկայի, և ոչ թե Միջերկրական ծովի շուկայի կանոններով: Հաշվարկները ցույց տվեցին, որ մեզ անհրաժեշտ նավթամթերքը Պարսից ծոցում առավել էժան են, հատկապես մեզ հետաքրքրող սեզոններին: Հաշվարկները ցույց տվեցին, որ խողովակաշարի կառուցումն ավելի նպատակահարմար է, քան նավթազտարան կառուցելը: Իրանի կառավարության հետ ստորագրվեց հուշագիր, ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրություններ կատարեցին, արդյունքում ձևավորվեց տեխնիկատնտեսական հիմնավորում, ըստ որի՝ այս ծրագիրը բավականին հետաքրքիր համարվեց: Ամրագրվեցին խաղի կանոններ, որտեղից ենք վերցնում նավթամթերքը, ինչպիսի տոկոսադրույքներ են կիրառվում, բայց այս ամենով հանդերձ, կան խնդիրներ՝ այս ծրագիրը մինչև վերջ տանելու գործում:

Միջազգային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունները, ոչ կայուն իրավիճակ են ստեղծել նաև նավթամթերքի շուկայում: Որոշակի կայունացման դեպքում կարող ենք անդրադառնալ այս խնդրին: Այս պահին նախագծման աշխատանքներ են իրականացվում խողովակաշարի անցկացման համար, վերջնականապես հստակեցվում են խաղի կանոնները: Նման ծրագրերը շատ մեծ են, և մեկ-երկու տարում հնարավոր չէ դրանք իրականացնել»[195]:

Իրանական կողմը մեծ ցանկություն ունի ներգրավվելու Հայաստանում **հողմակայանների**

[195] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ.), Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

կառուցման գործում, ինչի համար 2,5 մլն դոլար դրամաշնորհ է տրամադրել, որպեսզի փորձնական հողմակայան կառուցվի Պուշկինի լեռնանցքում: Հաջողության դեպքում իրանական կողմը պատրաստ է մեծացնել ներդրումների ծավալը[196]: Հայաստանի առաջին հողմակայանը, 4 միավորից է բաղկացած, յուրաքանչյուրը՝ 640 ԿՎտժ, ընդհանուր հզորությունը կազմում է 2,6 ՄՎտ: Այն շահագործման է հանձնվել 2006թ.: 2007 թվականից մեր ներքին ցանցը համալրվել է հավելյալ էներգառեսուրսով, և դա մինչ այժմ էլ հաջողությամբ աշխատում է[197]:

Երկու երկրների միջև էներգետիկ ոլորտի համագործակցության հաջորդ հատման կետը **Արաքս գետի վրա կառուցվող ՀԷԿ-երն են:** Դեռևս 1992թ. փետրվարի 9-ին ՀՀ և ԻԻՀ միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագրում կողմերը նախատեսում էին ՀՀ և ԻԻՀ էներգետիկ ոլորտում համագործակցել՝ Մեղրիում՝ Արաքս գետի վրա կառուցելով ՀԷԿ: Այդ հռչակագրի 15 հոդվածում նշվում էր. «...Մեղրիի սահմանային կետում Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցել համատեղ հիդրոէլեկտրակայան կառուցելու գործում: Իրանական կողմը յայտնեց, որ այդ հարցը կը քննարկուի»[198]:

Երկու երկրները Արաքս գետի հիդրոպոտենցիալի համատեղ օգտագործման իրենց հստակ մտադրությունը հաստատեցին 1995թ.: Առաջարկված տարբերակներից

[196] Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, Баку, Ереван, Тбилиси, 2004, с. 43.

[197] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար Արա Սիմոնյանի հետ, հունվարի 24, 2012, Երևան:

[198] ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական բանբեր, Հայաստան-Իրան, Հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը, Վենետիկ, 1993, էջ 21:

ավելի նպատակահարմար է համարվել Մեղրիի ՀԷԿ-ի նախագիծը, որից ստացված էլեկտրաէներգիան Հայաստանի էներգահամակարգին կմիանա 20 կմ երկարությամբ երկշղթա 110 ԿՎտժ բարձրավոլտ գծով: «Հայհիդրոնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ կողմից կատարվել է Մեղրիի ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական հիմնավորումը, ըստ որի՝ այն կունենա 78,9 ՄՎտ տեղադրված հզորության, տարեկան կարտադրի 469 ԿՎտժ էլեկտրաէներգիա[199]:

Մեղրու ՀԷԿ-ի շուրջ 2001թ. դեկտեմբերի 27-ին ստորագրվեց ՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, որտեղ առաջարկվում էր ուսումնասիրել Արաքս գետի հիդրոներուժը:

2007թ մարտի 19-ին՝ գազամուղի բացման օրը, Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև ստորագրվեց Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը, որը վավերացվեց երկու երկրների խորհրդարանների կողմից: Փաստորեն, այն լինելու է երկու հիդրոէլեկտրակայանից բաղկացած կասկադ, մեկը Հայաստանի կողմում՝ Մեղրիում, մյուսը՝ Ղարաչիլանում՝ Իրանի կողմում: ՀԷԿ-երից յուրաքանչյուրի հզորությունը պետք է կազմի 140 ՄՎՏ: Յուրաքանչյուր կողմում կառուցվելու է ճնշումային թունել՝ ՀԷԿ-ի աշխատանքների համար: Այդ թունելով ջուրը բերվելու է ՀԷԿ, և արտադրվելու է էլեկտրաէներգիան: Տարեկան արտադրանքը կկազմի շուրջ 841 միլիոն ԿՎտժ էլեկտրաէներգիա, կունենա 90մ ճնշում և 18,2 կմ երկարության թունել: Սրա վերաբերյալ վերջնական պայմանագիրը ստորագրվեց 2010թ. հոկտեմբերի 15-ին՝ ՀՀ

[199] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 96-97:

էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի և ԻԻՀ էներգետիկայի նախարար Մ. Նամջոյի միջև՝ «Մեղրիի ՀԷԿ-ի կառուցման թույլտվության պայմանագիր» անունով[200]:

Երկու կողմերը պայմանավորվել են, որ շինարարության ամբողջ ֆինանսական խնդիրը կլուծի իրանական՝ «Թավան Աբ Արազ» ընկերությունը: Կկառուցեն, կշահագործեն և արտադրված էներգիայով իրենց ներդրումները հետ կգնեն: Մի խոսքով, դա ենթադրում է կառուցում, շահագործում և ետ հանձնում սեփականատիրոջը: Մեղրիի ՀԷԿ-ի շինարարության արժեքը, ըստ Մովսիսյանի, 2009 թվականի գործող գներով, կարժենա մոտ 323 միլիոն դոլար: Կառուցման համար նախատեսված է 5 տարի: 15 տարի ժամկետ էլ անհրաժեշտ է, որ արտադրված էներգիայով ետ գնվեն ներդրումները, որից հետո Մեղրիի ՀԷԿ-ը (համատեղ ստուգումներից հետո -Ի.Գ) սեփականության իրավունքով կհանձնվի Հայաստանի Հանրապետությանը[201]:

Քանի որ Հայաստանի շուկան շատ փոքր է, և նման ներդրումները մեր շուկայով փոխհատուցելը բավականին ծանր կլինի, պայմանավորվածությունն այնպիսին է, որ կառուցումից հետո արտադրված էլեկտրաէներգիան 15 տարվա ընթացքում արտահանեն: Հայկական կողմը ընդամենը վերահսկելու է, որ շահագործումը իրականացվի նորմալ: «Կայանը Հայաստանի սեփականությունն է լինելու, սակայն շահագործում են նրանք», -հավաստիացրեց

[200] Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, с. 41: Ինչպես նաև տես ստորագրված փաստաթղթեր http://www.mfa.am/hy/country-by-country/ir/

[201] Գ. Սարիբեկյան, Երկվորյակ ՀԷԿ-ը շուտով լույս աշխարհ կգա, 17/09/2010, http://www.hraparak.am/2010/09/17/erkvoryak-heke-shutov-luys-ashxarh-kga/

էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանը[202]:

Ի վերջո, Մեղրու ՀԷԿ-ի կառուցման հիմնարկեքը արվեց միայն 2013թ. նոյեմբերի 8-ին, և ըստ նախարար Ա. Մովսիսյանի ամենայն հավանականությամբ շինարարությունը կսկսվի միայն հաջորդ տարի[203]: 2016թ. դրությամբ Մեղրիի ՀԷԿ-ի հիմնական աշխատանքները դեռևս, ինչ-ինչ պատճառներով, դեռևս սկսված չեն:

Անշուշտ, Մեղրիի ՀԷԿ-ի, ինչպես նաև երրորդ էլեկտրագծի կառուցման աշխատանքների ավարտից հետո Հայաստանի էներգետիկ անվտանգությունն առավել ապահով ու հզոր կդառնա: Եվ այս համատեքստում լիովին կիսում ենք էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի այն կարծիքը, որ «Մեր երկու բարեկամ երկրների միջև տնտեսական համագործակցության առաջատարն էներգետիկայի ոլորտն է» սակայն, միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ իրականացրած բոլոր աշխատանքները չէ, որ գոհացուցիչ արդյունք են տալիս: Իրականում այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստան-Իրան էներգետիկ ոլորտի վերաբերյալ միայն քննարկումների մասին ենք խոսում, բայց բուն արդյունքները ինչ-ինչ պատճառներով ձգձգվում են, իսկ երբեմն էլ ընդհանրապես կյանքի չեն կոչվում:

Ամփոփելով՝ պետք է փաստենք, որ.

1. Հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում էներգետիկ ոլորտը դարձավ երկկողմ քաղաքա-տնտեսական հարաբերությունների զարգացման շարժիչ ուժը:

[202] Նույն տեղում:

[203] Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը կսկսվի միայն հաջորդ տարի, Փետրվար 19, 2014 http://www.azatutyun.am/content/article/25198358.html

2. Մեր կարծիքով, այսօր հայ-իրանական գազամուղը աշխատում է ոչ իր ամբողջական հզորության չափով: 3-րդ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, իսկ հետագայում նաև 4-րդի կառուցմամբ հայ-իրանական էներգետիկ ոլորտում մենք նոր որակ և ռազմավարական հեռանակարներ կարող ենք արձանագրել:
3. Իրանը, լինելով տարածաշրջանի ազդեցիկ պետություններից մեկը, ձգտում է հնարավորության դեպքում ներգրավված լինել իր հարևան պետությունների կենսական խնդիրների լուծման գործընթացներում: Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող էներգետիկ անվտանգության գործընթացում Իրանը չեր կարող մասնակցություն չունենալ: Սա մի ծրագիր է, որ ձեռնտու է երկու կողմերին էլ: Հայաստանին ձեռտնու է, քանզի այդ կերպ բազմազանեցվում է ՀՀ էներգետիկ համակարգը: ԻԻՀ-ին ձեռնտու է, քանզի հնարավորություն է ստանում հավասարակշռել տարածաշրջանում ադրբեջանական տնտեսական, և հատկապես, էներգետիկ ակտիվությունը: Իսկ ներկայումս տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում ՀՀ-Իրան էներգետիկ երկխոսությունը ստանում է ռազմավարական նշանակություն՝ Վրաստանի և Ռուսաստանի ակտիվ մասնակցությամբ:

2/3. Զբոսաշրջություն

Հայաստանի անկախությունից ի վեր զբոսաշրջությունը հայտարարվեց մեր երկրի տնտեսության առանցքային ճյուղերից մեկը, սակայն Հայաստան այցելուների զգալի տոկոսը կազմում են սփյուռքահայերը:

1992թ. փետրվարի 9-ին ստորագրված Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ հռչակագրում վերջին՝ 26-րդ հոդվածով կողմերը անդրադարձան զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ ստեղծելու կարևորությանը և անհրաժեշտ գտան տուրիստական կազմակերպությունների և ընկերությունների համագործակցությունը[204]:

Այս տարիների ընթացքում մի շարք ներդրումներ իրականացվեցին հյուրանոցաշինության մեջ, որը միտված էր զբոսաշրջության ծավալների խթանմանը: Սակայն իրական զբոսաշրջության համար դա բավարար չէ. անհրաժեշտ է օգտագործել երկրում առկա պատմա-մշակութային, բնակլիմայական պայմանները, նորանոր հովեկներ գրավելու համար:

1998թ. հուլիսի 18-20-ը Թեհրանում տեղի ունեցած ՀՀ և ԻԻՀ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստի ժամանակ քննարկվեց նաև զբոսաշրջության ոլորտում իրականացվող փոփոխությունների անհրաժեշտությունը և այն ամրագրվեց փոխըմբռնման հուշագրով, որտեղ կողմերը պատրաստակամություն հայտնեցին փոխանակելու երկու երկրների տուրիզմի բնագավառի փորձագետերի՝ միմյանց ներկայացնելով երկու երկրների առավել ակտիվ և հեղինակավոր զբոսաշրջային գործակալությունների ղեկավարներին՝ համատեղ էքսկուրսիաներ կազմակերպելու համար բանակցություններ անցկացնելու և պայմանագրեր կնքելու նպատակով: Կողմերը նշեցին զբոսաշրջային

[204] ՀՀ ԱԳՆ, Դիվանագիտական բանբեր, էջ 21:

տեղեկությունների, այդ թվում՝ ֆիլմերի, լուսանկարների և սլայդների փոխանակման անհրաժեշտությունը[205]:

2002թ., ի պատասխան ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի հարցմանը, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանը տուրիզմի զարգացման համար ներկայացրեց ներքոհիշյալ առաջարկները և գործնական քայլերը.

- Երկկողմ համագործակցության շրջանակներում ձևավորել զբոսաշրջային միասնական ծրագիր («Մեծ Մետաքսե ճանապարհ» «Քաղաքակրթության երթուղիներով»):
- Երկկողմ համագործակցության շրջանակներում նպաստել երրորդ երկրներից զբոսաշրջիկների փոխայցելություններին:
- Երկկողմ համագործակցության շրջանակներում ստեղծել միացյալ ինֆորմացիոն դաշտ (միացյալ ինտերնետային ցանցի ձևավորման միջոցով)[206]:

ՀՀ-ում, ընդհանրապես, զբոսաշրջության զարգացման գործում կառավարության ջանքերը, կարծեք, թե որոշակի կերպով տվել են իրենց արդյունքները, այդ մասին է վկայում վարչապետ Տիգրան Սարգսյանի բերած ցուցանիշները. «2009թ.՝ ճգնաժամային տարվա ընթացքում, երբ ունեցանք աննախադեպ տնտեսական անկում, զբոսաշրջության ոլորտում գրանցեցինք շուրջ 4 տոկոսանոց աճ, և դա այն պարագայում, երբ 2009թ.

[205] Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ և ԻԻՀ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստի վերաբերյալ, 1998թ. հուլիսի 18-20, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:

[206] ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի պատասխանը ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի հարցմանը, N 05-22/8-476, 30.08.2002թ., ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 125:

համաշխարհային զբոսաշրջության ցուցանիշները նվազեցին: 2010թ. աճն ավելի շոշափելի էր՝ շուրջ 17%: Մենք լիահույս ենք, որ 2011թ. զբոսաշրջության աճը շարունակվելու է»[207]:

2013թ. մարտի 1-ին մեկնարկեց կովկասյան տասներկուերորդ զբոսաշրջային CTS 2013 երկօրյա ցուցահանդեսը, որի ժամանակ Հայաստանի էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանը նշեց, որ զբոսաշրջությունը Հայաստանում ամրագրված է որպես գերակա ոլորտ, որը զարգացման փուլում է և գնում է դեպի նոր նվաճումներ[208]:

Եթե անկախության տարիներին Իրանից Հայաստան այցելում էին բացառապես իրանահայեր, քաղաքական գործիչներ և առևտրի ոլորտի ներկայացուցիչներ, ապա արդեն 2000-ականների սկզբներից Իրանի քաղաքացիները սկսեցին աստիճանաբար բացահայտել իրենց հարևան, սակայն կրոնական և մշակութային այլ առանձնահատկություններ ունեցող երկիրը:

Հայաստանը իրանցիների կողմից լայնածավալ կերպով սկսեց բացահայտվել 2008 թվականից, մինչ այդ, իհարկե, իրանցիները Հայաստան այցելում էին, բայց առավելապես գործնական նպատակներով: Այսպիսով, 2006թ. Հայաստանի սահմանը հատել է մոտավորապես 30 հազար իրանցի, 2007թ.՝ մոտ 40 հազար, 2008թ.՝ մոտ 43 հազար, 2009թ.՝ մոտ 87 հազար, 2010թ.՝ մոտ 120 հազար, 2011թ.՝ մոտ 134 հազար: 2011թ. առաջին եռամսյակում՝ 31 հազար, միայն մարտ ամսին՝ 25,260, իսկ 2011 մարտի 20-

[207] Վարչապետ. Զբոսաշրջությունը Հայաստանում պետք է դառնա բազմաբովանդակ, http://news.am/arm/news/50281.html

[208] Զբոսաշրջությունը Հայաստանում ամրագրված է որպես գերակա ոլորտ, ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ #30, 02-03-2013 http://www.azg.am/AM/2013030217

31-ը 18 հազար իրանցի է մտել Հայաստան[209]: 2012թ. Հայաստան է այցելել 110 հազար, 2013թ.՝ 95 հազար, 2014թ.՝ 110 հազար, 2015թ.՝ 144 հազար զբոսաշրջիկ[210]:

Եթե իրանցիների կողմից Հայաստանը բացահայտելու առաջին տարիներին հայ հասարակությունը անտարբեր էր նրանց այցերի նկատմամբ, ապա արդեն մյուս տարիներին հասարակության որոշակի շերտերում նկատվեցին դժգոհություններ, ինչը տարեցտարի ավելի մեծացման միտում ունեցավ: Բացասական վերաբերմունքը առավել խորացավ որոշ իրանցիների դրսևորած բացասական վարքագծի հետևանքով:

Իրանցիների հոսքը Հայաստան ապահովելու համար 2008 թվականից ի վեր Հայաստանում Նովրուզի տոնակատարության ժամանակ Հայաստան էին հրավիրվում իրանցի վտարանդի այնպիսի երգիչներ, ինչպիսիք էին հայազգի Անդին, Սիավաշ Ղոմեյշին, Էբին, Մոին, Արաշը, Մանսուրը, Դարիյուշը, Լեյլա Ֆուրուհարը և այլք: Սակայն սա անհանգստության առիթ դարձավ Իրանի ղեկավարության մոտ: 2010թ. հոկտեմբերի 25-ին այս կապակցությամբ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին իր մտահոգությունը հայտնեց Իրանի նախագահի առաջին տեղակալ Մոհամմադ Ռեզա Ռահիմին՝ Նովրուզի շրջանում ամերիկաբնակ իրանցի վտարանդի երգիչների հայաստանյան հյուրախաղերի վերաբերյալ[211]:

[209] Հարցազրույց ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության և տնտեսական զարգացման վարչության պետ Մեխակ Ապրեսյանի հետ, ապրիլի 3, 2012, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[210] Тегеран-Ереван транзит: пункт прибытия Тбилиси. 15.05.2016 http://sputnikarmenia.ru/armenia/20160215/1978891.html

[211] ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հանդիպում է ունեցել ԻԻՀ փոխնախագահ Մոհամադռեզա Ռահիմիի հետ, ՀՀ կառավարության պաշտոնական կայք, 25-ը հոկտեմբերի 2010թ. http://www.gov.am/am/news/item/8315/

Նովրուզը Հայաստանում տոնելու այս ավանդույթը, բնականաբար, եկամտաբեր է հայկական տուրիզմի և առևտրի զարգացման համար: Իրանական տոնից շահում են հայաստանյան հյուրանոցները, ինչպես նաև վարձակալությամբ տներ հատկացնողները, ռեստորանները, զվարճանքի վայրերը, խանութները, ի դեպ, թե՛ հագուստի, և թե՛ սննդի, տաքսու վարորդները: Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության և տնտեսական զարգացման վարչության պետ Մեխակ Ապրեսյանի «միջին վիճակագրական տվյալներով՝ մեկ զբոսաշրջիկը մեկ այցելության ժամանակ, չհաշված ճանապարհածախսը, Հայաստանում ծախսում է 1000 ամերիկյան դոլարին համարժեք գումար: Այս արդյունքները ստացել ենք 2006-2007թ. զբոսաշրջության ոլորտում իրականացրած վիճակագրական հետազոտություններից: Իրանցիները «իրենց Հայաստանում շատ հարմարավետ և հանգիստ են զգում, մեր հետազոտություններն էլ ցույց են տալիս, որ Հայաստանը որպես հանգստավայր նախընտրած իրանցիների 70%-ը գալիս է ընտանիքներով: Գները և մյուս հանգամանքները ևս կարևոր են այստեղ: Կարելի է ասել, որ նրանք պարզապես «դուռը թակում են և մտնում հարևան երկիր», այսինքն, ճանապարհածախսը մեծ չէ, երկրում ծառայությունները բավական մրցունակ են՝ մյուս երկրների համեմատ, կա նաև ազատության աստիճան»[212]:

2012 թվականիվ նկատվեց իրանցիների հոսքի նվազում, ինչը ուներ իր բացատրությունը: 2012թ. Իրանի նկատմամբ իրականացված պատժամիջոցները արդեն զգացին քաղաքացիները ևս, իրանական դրամը՝ ռեալը օր-

[212] Հարցազրույց ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության և տնտեսական զարգացման վարչության պետ Մեխակ Ապրեսյանի հետ, ապրիլի 3, 2012, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

օրի արժեզրկվում էր, ոսկին՝ թանկանում, երկրում սոցիալ-տնտեսական պայմանները վատթարանում էին: Սրան ավելացավ նաև Այաթոլլա Խամենեիի կոչը, ըստ որի՝ յուրաքանչյուր իրանցի այս ծանր պայմաններում պետք է իր գումարը ծախսի Իրանում: Շատերը հետևեցին նրա կոչին, շատերը՝ ոչ: Բայց կա մեկ այլ խնդիր ևս. բացահայտելով Հայաստանը՝ իրանցի տուրիստները չստացան այն, ինչ ակնկալում էին: Երկրում դեռևս առկա են ճանապարհների, հյուրանոցների, կենցաղային և բարձր սակագների մի շարք խնդիրներ:

Ի դեպ, ՀՀ-ում ԻԻՀ նախկին դեսպան Մոհամմեդ Ռեյիսին գտնում է, որ տուրիզմի զարգացման համար Հայաստանում առկա պայմանները բավարար չեն. «Ցավոք սրտի, Հայաստանում դեռևս չեն ստեղծվել անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ մեծ թվով զբոսաշրջիկներ ընդունելու համար, և այդ ոլորտը պահանջում է համապատասխան մարմինների հատուկ ուշադրությունը[213]»: Իսկ մեզ հետ ունեցած հարցազրույցի շրջանակներում նա այդ բաց կողմերի քանակը է՛լ ավելի մեծացրեց՝ նշելով, որ «Մոտ ապագայում, եթե Աստծո կամքով կառուցվի երկաթգիծը և լուծվի ոչ արտոնագրային ռեժիմի հարցը, ամեն շաբաթվա վերջին մոտ 5000 իրանցի կայցելի Հայաստան՝ հանգստյան օրերն անցկացնելու: Նրանց 99%-ը հայերեն չգիտի և անհրաժեշտ է, որ Հայաստանի ռեստորաններում կամ հանգստի այլ վայրերում պարսկերենին տիրապետող անձիք լինեն: Այսօր տարեկան մոտ 2 մլն իրանցի այցելում է Թուրքիա, բայց Հայաստան, որ սահմանակից է տարեկան մոտ 100 հազար իրանցի է այցելում, չնայած որ գոնե մինչև մեկ միլիոն Իրանի քաղաքացի կարող են այցելել Հայաստան: Դրա համար անհրաժեշտ է լուծել

[213] Հայաստան-Իրան հարաբերությունների ապագան լուսավոր է. դեսպան Մոհամմադ Ռեյիսի, 8 փետրվար, 2013, http://armenpress.am/arm/news/707626/

ենթակառուցվածքային խնդիրները, այդ թվում՝ հարմար ճանապարհի կառուցումը և լեզվի հետ կապված դժվարությունները[214]»: Կիսում ենք դեսպանի կարծիքը, որ պետք է ստեղծվեն հարմար ճանապարհներ և լուծեն ենթակառուցվածքների խնդիրները, սակայն փոքր ինչ իրատեսական չենք համարում լեզվի հետ կախված խնդիրը, կասկածում ենք, որ Թուրքիան, հանգրվանելով տարեկան երկու միլիոն իրանցիների, ամեն քայլափոխում «պահում է» պարսկերեն լեզվի գիտակների: Այլ հարց է, որ այնտեղ նախընտրում են մեկնել թյուրքախոս իրանցիները:

Սակայն 2014թ. փետրվարի 21-ին մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության պետ Մեխակ Ապրեսյանը փաստեց, թե 2013թ. 110 հազար իրանցի զբոսաշրջիկ է այցելել Հայաստան: Միևնույն ժամանակ նշեց, որ Հայաստանից Իրան է մեկնել 5,4 հազար զբոսաշրջիկ[215]:

Իրանի մշակութային ժառանգության, արհեստների և տուրիզմի կազմակերպության ղեկավար Մասուդ Սոլթանիֆարը 2015թ. նշել էր, որ Հայաստանը հանդիսանում է Իրանի տուրիզմի զարգացման ուղղություններից մեկը: Ըստ նրա տեղեկությունների Իրանը մի ցուցակ է պատրաստել, որում ներառված է 40 երկիր, որոնք մտնում են իրանական տուրիզմի օրակարգ, և Հայաստանը այդ երկրների շարքում է[216]:

[214] Հարցազրույց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսի հետ, հոկտեմբերի 22, 2013, Երևան:

[215] 2013թ. 110 հազար իրանցի զբոսաշրջիկ է այցելել Հայաստան http://news.am/arm/news/195461.html

110 հազար իրանցի զբոսաշրջիկ է այցելել Հայաստան մեկ տարումhttp://www.armnewstv.am/news/23011

[216] سخنگوی فرد: ارمنستان یکی از هدف های جذب گردشگری است

http://www.irna.ir/fa/News/81800577/; Armenia: is on Iran's tourism agenda: Vice President, http://www.irna.ir/en/News/81800941/

Նշենք, որ Հայաստանում զբոսաշրջային նպատակով ժամանողների վիճակագրություն չի իրականացվում, սահմանի ցանկացած անցում դիտարկվում է որպէս զբոսաշրջային այց: Այսինքն, չի բացառվում, որ Հայաստանը այս պարագայում օգտագործվել է որպես տարացիկ երկիր:

Այժմ իրանցիներն ակնհայտորեն բացահայտում են Վրաստանը, որտեղ բնակլիմայական պայմանները թերևս առավել գայթակղիչ են, կա ծով, էլ ավելի էժան հյուրանոցներ և սննունդ, բնակչություն՝ որը սովոր է եղել տասնամյակներ շարունակ ընդունել հովեկներ:

Կարծում ենք, որ Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը, այնուամենայնիվ, պետք է վերանայի զբոսաշրջության ոլորտում իրականացվող աշխատանքները.

1. Անհրաժեշտություն է նկատվում խորացնելու աշխատանքները տուրօպերատորների, հյուրանոցների և անգամ, անհրաժեշտության դեպքում՝ կենտրոնում գործող խանութների հետ: Քանզի 2013թ. զբոսաշրջությունը հայտարարվել է գերակա ոլորտ:
2. Անհրաժեշտություն է նկատվում, հատկապես՝ մարտ ամսին համակարգել ժամանող իրանցիների խմբերի այցը, կազմակերպել տարատեսակ միջոցառումներ, որից երկու կողմերն էլ գոհ կլինեն:
3. Անգլերեն և պարսկերեն լեզուներով տպագրել բուկլետներ, այն մասին թե այդ օրերին ինչ միջոցառումներ են նախատեսվում Երևանում, ուր կարող են գնալ զբոսաշրջիկները:
4. Ոստիկանության և Ազգային անվտանգության մարմինների աշխատակիցներն այդ օրերին պետք է առավել ակտիվ լինեն, որպեսզի առաջացած

յուրաքանչյուր խնդիր արագ լուծում ստանա և դժգոհությունների առիթ չլինի:
5. Անհրաժեշտություն է նկատվում շուտափույտ լուծելու սահմանային անցակետում առկա խնդիրները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերն ու իրանցիները հզոր մշակույթ, պատմություն ունեցող ժողովուրդներ են, որոնց շահերը հաճախ են խաչվել պատմության քառուղիներում: Իսկ այսօր հայ-իրանական հարաբերություններում գիտամշակութային համագործակցությունը ի վիճակի է հարստացնելու ու հզորացնելու երկու ժողովուրդներին և խթանելու նոր արժեքների ստեղծում: Հայ-իրանական հարաբերությունները գիտամշակութային ոլորտում, թերևս կարող են օրինակ հանդիսանալ տարածաշրջանի բոլոր երկրների համար:

1. Գիտական կապեր

Հայաստան-Իրան գիտամշակութային կապը, հիրավի, ամենից ակտիվ զարգացման ներուժ ունեցող ուղղություններից է: Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև գիտական և մշակութային հարաբերությունների հիմքը դրվել է 1992թ. փետրվարի 8-10-ը, երբ կնքվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին փաստաթուղթը, որի 21-րդ և 22-րդ հոդվածները վերաբերում էին հենց կրթությանը:

Ըստ 21-րդ հոդվածի՝ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հայերենի և Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում պարսկերենով դասընթացներ

անցկացնելու ուղղությամբ պետք է ձեռնարկվեին միջոցներ: Իսկ 22-րդ հոդվածով նախատեսվում էր գիտական և բուհական կապերը զարգացնելու նպատակով երկու երկրների կողմից համաձայնեցված բնագավառներում փոխանակել դասախոսներ, ուսանողներ և գրականություն[217]:

Սակայն առկա փաստաթղթերը, այնուամենայնիվ, բավարար հիմք չհանդիսացան գիտական խորը հարաբերություններ հաստատելու համար:

Հայաստան-Իրան գիտական շրջանակներում, այս ողջ տարիների ընթացքում կնքվեցին մի շարք համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր: 1994թ. ՀՀ և ԻԻՀ կառավարությունների միջև ստորագրվեց մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջության և զանգվածային լրատվության միջոցների բնագավառին վերաբերող համաձայնագիր, 2001թ. արդեն երկու երկրների գիտական աստիճանների և ԲՈՒՀ-երի ավարտական վկայականների փոխադարձ ճանաչման վերաբերյալ փաստաթղթի ստորագրման կարիք կար, ինչն էլ կնքվեց համաձայնագրի տեսքով: Կնքվել են բազմաթիվ փոխըմբռնման հուշագրեր, այդ թվում՝ 2005թ. «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008թթ. փոխըմբռնման հուշագիրը», որի երկրորդ հոդվածով կողմերը երկու երկրների մշակույթին ու քաղաքականությանը ծանոթանալու նպատակով պետք է միջոցներ ձեռնարկեին իրենց դասագրքերում և ուսումնական աղբյուրներում հրատարակելու երկու երկրների աշխարհագրության, պատմության և մշակույթի

[217] Դիվանագիտական բանբեր, էջ 21:

վերաբերյալ փաստեր: Հուշագրի 4-րդ հոդվածով պարսկերեն լեզվի և գրականության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ԻԻՀ-ն պատրաստակամություն հայտնեց իրականացնելու կարճաժամկետ դասընթացներ՝ դասախոսներին ՀՀ գործուղելու միջոցով, պարսից լեզու ուսուցանող դպրոցների կահավորում, դրանց գրքերի, ֆիլմերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնաօժանդակ անհրաժեշտ պարագաների տրամադրում[218], ինչը տարիների ընթացքում իրականություն դարձավ: Համաձայնագրի 5-րդ կետով նույն իրավունքներն ու պարտականություններն էր ստանձնում նաև Հայաստանը:

Սակայն ձեռք բերած փաստաթղթային դաշտը ի վիճակի չեղավ լուծելու այն խնդիրները, որ ժամանակին առաջացան գիտակրթական ոլորտում: Այդ խնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը՝ նշելով որ առկա խնդիրների լուծման գործում մեծ դերակատարում կարող են ունենալ միջպետական իրավական փաստաթղթերը, որոնց գործողության ժամկետները լրացել են: Նա հույս հայտնեց, որ մոտ ապագայում կթարմացվեն և կնորացվեն համապատասխան համաձայնագրերը: Նախարարն անդրադարձավ նաև գիտության ոլորտում համագործակցության խնդիրներին՝ նշելով, որ համատեղ գիտական նախագծերը կրում են տարերային բնույթ: Իրանի և Հայաստանի միջև կա չօգտագործված գիտական մեծ ներուժ, և համապատասխան ենթակառուցվածքների առկայության դեպքում կուրվագծվեն երկկողմանի համագործակցության հեռանկարները՝ հաշվի առնելով

[218] Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԻԻՀ կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին, 2005-2008թթ. համար, http://www.edu.am/DownloadFile/454arm-Iran.PDF

երկու երկրների տնտեսության զարգացման հավակնությունները[219]:

Երկար ժամանակ Հայաստանի և Իրանի միջև կրթության բնագավառում համագործակցությունն իրականացվում էր 2005-2008թթ. գործնական ծրագրի հիման վրա, որի շրջանակներում կատարվում էին ուսանողների և դասախոսների փոխանակումներ, միմյանց կրթաթոշակների տրամադրում, փորձի և տեղեկատվության փոխանակում, անմիջական կապեր էին հաստատել Հայաստանի և Իրանի տարբեր բուհերի և ուսումնական հաստատությունների միջև:

2006թ. ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև կրթական և մշակութային կենտրոնների հիմնման և գործունեության պայմանների փոխըմբռնման հուշագիրը», որի հենց առաջին կետով կողմերը պարտավորվում էին իրենց երկրներում հիմնել մյուս երկրի կրթական և մշակութային կենտրոններ[220]:

Մինչև 2008 թվականը երկու երկրների միջև կնքվել է ևս 2 փոխըմբռնման հուշագիր և գործնական ծրագիր: 2008 թվականից մինչ 2010թ. շարունակվել են նոր համաձայնագրի վերաբերյալ քննարկումները, բայց տարբեր պատճառներով դրա ստորագրումը մի քանի անգամ հետաձգվել է: Վերջապես, 2010 թվականին երկու կողմերը համաձայնության են եկել նոր Գործնական ծրագրի դրույթների շուրջ:

[219] Ուրվագծվում են երկկողմանի համագործակցության հեռանկարներ, 26.05.2009 http://www.edu.am/ArticleIndex.php?id=2883&topMenuArt=1

[220] Փոխըմբռնման հուշագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև կրթական և մշակութային կենտրոնների հիմնման և գործունեության պայմանների մասին, http://www.parliament.am/library/erkoxm/2006/12.pdf

Իսկ 2010-2013թթ. համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարությունը «Կրթության, գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում համագործակցության գործնական ծրագիր» ստորագրեց[221]:

Համաձայն նոր Գործնական ծրագրի՝ կողմերը կրթության բնագավառում համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով պարտավորվում էին ապահովել կրթական համակարգերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում, որը կվերաբերեր կրթական և գիտական հաստատություններին և ընթացող գործընթացներին: Բացի այդ, կողմերը աջակցելու էին երկու երկրների բուհերի միջև ուղղակի կապերի հաստատմանը, կազմակերպելու էին բարձրագույն, մասնագիտական և հետբուհական կրթության վերաբերյալ ուսումնական ծրագրերի փոխանակում, ինչպես նաև խոստանում էին իրականացնել համատեղ կրթական ծրագրերի մշակում և գործադրում: Գործնական ծրագրի շրջանակում կողմերը իրականացրեցին կրթաթոշակների ամենամյա փոխանակում, մասնավորապես, ՀՀ-ն իրանական կողմին պետք է հատկացներ 5 ասպիրանտական տեղ, իսկ ԻԻՀ-ը՝ 2 բակալավրական, 2 մագիստրոսական և 2 ասպիրանտական տեղեր: Գործնական ծրագրի ստորագրմամբ կողմերը նպաստում էին միմյանց լեզվի, գրականության, պատմամշակութային, հոգևոր ժառանգության և քաղաքակրթության ուսուցմանը և իրենց բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան գիտահետազոտական կենտրոնների ստեղծմանը, ինչպես նաև աջակցում էին ձեռնարկների և

[221] Երկկողմ հարաբերություններ, ԻԻՀ, Ստորագրված փաստաթղթեր, http://www.mfa.am/hy/country-by-country/ir/

դասագրքերի փոխանակմանը: Ծրագրի ստորագրմամբ աշխատանքներ իրականացվեցին Երևանի պետական համալսարանում իսլամագիտության ամբիոն և ԻԻՀ որևէ համալսարանում հայագիտության ամբիոն հիմնադրելու ուղղությամբ: Բացի այդ, կողմերը ջանում էին ՀՀ-ում իրանագիտական և ԻԻՀ-ում հայագիտական առարկաներ դասավանդող դասախոսների վերապատրաստման ծրագրեր իրականացնել և ընդլայնել: Համաձայն ծրագրի՝ կողմերը խրախուսում են գիտնականների և դասախոսների փոխայցելությունները՝ բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում իրենց գիտական և ուսումնական հաստատությունների փորձին ու նվաճումներին միմյանց ծանոթացնելու նպատակով[222]:

Սակայն առկա փաստաթղթային դաշտի ֆոնի ներքո կարող ենք փաստել, որ գիտական մակարդակում հարաբերությունները այդպես էլ չտվեցին ցանկալի արդյունք: Պատճառները թերևս բացարտրելի են. եթե Հայաստանի Հանրապետությունում պարսկերեն լեզվի և գրականության դասընթացներով հետաքրքրվում են հիմնականում հայերը և մասնակցում են այդ դասընթացներին, քանզի դրանք իրականացվում են անվճար կամ գրեթե անվճար սկզբունքով, ապա Իրանում իրականացվող հայագիտության դասընթացներին մեծապես մասնակցում է իրանահայությունը, պարսիկ մասնակցողների թիվը մեծ չի լինում: Հայաստանը, իր ողջ գիտական ներուժով հանդերձ, թերևս հետաքրքրում է Իրանում բնակվող միջին խավին, քանզի Հայաստանում կրթություն ստանալը, ի համադրություն Արևմուտքի, և՛ մատչելի է, և՛ առավելապես դյուրին: Իրանի քաղաքացիները թե՛ բավական հեշտությամբ ընդունվում են

[222] Գործնական ծրագիր՝ ՀՀ և ԻԻՀ կառավարությունների միջև, 29.10.2010, http://www.edu.am/ArticleIndex.php?id=3993&topMenuArt=1

հայաստանյան բուհեր, և թե՛ շարունակում են իրենց կրթությունը մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Սակայն ժամանակին հաճախ նկատվում էին դեպքեր, երբ ուսանողները, չտիրապետելով որևէ օտար լեզվի, հաջողությամբ ստանում էին իրենց դիպլոմները:

Արտերկրում կրթություն ստացած ուսանողներն Իրանում ևս մեկ անգամ քննություն են հանձնում, որից հետո միայն նրանց թույլատրվում է աշխատել համապատասխան մասնագիտությամբ: 2009թ. տվյալներով, Հայաստանում սովորում էր ԻԻՀ 1700 քաղաքացի, ովքեր ընդգրկված էին բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի կրթական աստիճաններում: Իրանում իրականացվող որակի ստուգատես-քննությունների ժամանակ Հայաստանում կրթություն ստացածների մեծ մասը բավական ցածր նիշ արձանագրեց: Սա իրականում առաջացրեց խնդիրներ և շուտով՝ 2010թ. ՀՀ բուհերի դիպլոմները սկսեցին չճանաչվել ԻԻՀ կողմից:

«Իրանական կողմը որոշել էր է՛լ ավելի պահանջկոտ լինել իրենց ուսանողների գիտելիքների նկատմամբ: Նրանք ուղարկեցին իրենց դիտորդներին, որոնք Հայաստանում տեսան բացթողումներ, օրինակ, չիմանալով օտար լեզու՝ իրանցի ուսանողները ավարտում էին բուհերը: Ահա սրա հետևանքով էլ Հայաստանի դիպլոմները անվավեր ճանաչվեցին Իրանում»[223]:

Իրականում հիմնական խնդիրը առաջացել էր ոչ պետական որոշ բուհերում բժշկական բարձրագույն մասնագիտական ծրագրերի իրականացման պատճառով, երբ Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում հայտնվել էին շրջանավարտներ, որոնց փաստացի գիտելիքները չէին համապատասխանում այդ բուհերի կողմից տրված

[223] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Գրիգոր Առաքելյանի հետ, նոյեմբերի 2, 2012, Թեհրան:

դիպլոմներին: Այսինքն, պետք է փաստել, որ ոչ պետական որոշ բուհերում ցածրորակ կրթական ծառայությունների պատճառով ստվեր է նետվել ամբողջ բժշկական բարձրագույն կրթության որակի վրա[224]:

Համաձայն 2008-2013թթ. գործնական ծրագրի, կողմերը համաձայնության էին եկել ՀՀ բուհերի գիտական մակարդակն ուսումնասիրելու նպատակով մոտ ապագայում ՀՀ գործուղել ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության պատվիրակությանը, որպեսզի իրանական կողմը համապատասխան քայլեր ձեռնարկի Հայաստանի որոշ բուհերի դիպլոմների ճանաչման ուղղությամբ:

2010թ. դեկտեմբերի 28-30-ն աշխատանքային այցով Հայաստանում էր գտնվում ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության պատվիրակությունը՝ նախարարի ուսանողական հարցերով տեղակալ Մահմուդ Մոլլաբաշիի գլխավորությամբ: Նա ևս անդրադարձավ Հայաստանում կրթություն ստացող իրանցի ուսանողների գիտելիքներին և ընդգծեց խնդիրները. «Որոշ իրանցի ուսանողներ, ովքեր բժշկական կրթություն են ստացել Հայաստանի ոչ պետական բուհերում, ոչ միայն չունեն անհրաժեշտ գիտելիքներ, այլև, ըստ ուսումնասիրությունների, կարճ ժամանակահատված են գտնվել Հայաստանում»: Պատվիրակության անդամները միաժամանակ բարձր են գնահատել Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի իրանցի

[224] Ի գիտություն ՀԼՄ-ների, 22.10.2009, http://www.edu.am/ArticleIndex.php?id=3332&topMenuArt=1

շրջանավարտների մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները[225]:

Ի պատասխան, ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը ներկայացրել է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում խստացվել են կարգապահական կանոնները, որոնց արդյունքում բազմաթիվ ուսանողներ, այդ թվում նաև շուրջ 150 իրանցի, դուրս են մնացել կրթական գործընթացից: Ըստ նախարարի՝ վերջին մեկ տարվա ընթացքում լուրջ բարեփոխումներ են իրականացվել նաև ասպիրանտական կրթության ուղղությամբ, մասնավորապես, խստացվել են ասպիրանտուրայում օտար լեզվի իմացության պահանջները, ասպիրանտուրայում՝ որպես կրթական երրորդ աստիճան, այս տարվանից ներդրվել է կրեդիտային համակարգ, ինչպես նաև խստացում է տեղի ունեցել գիտական թեզերի պաշտպանության պահանջների գործընթացում՝ նախապաշտպանության մեխանիզմների հստակեցման և խորհուրդների ձևավորման տեսանկյունից[226]:

Սակայն ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի հետ հանդիպման ժամանակ ԻԻՀ դեսպան Սեյեդ Ալի Սաղայանը այդ խնդիրները որակել է իբրև տեխնիկական բնույթի. «Այս ամիսների ընթացքում Իրանի մեր գործընկերների առջև խնդիրը բարձրացվել է նախարարության կողմից: Ինչպես դեսպանն է նշել՝ խնդիրը տեխնիկական բնույթի է, և հույս ունենք, որ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն կրթության և տեխնոլոգիաների նախարարի հրավերով ապրիլին կայանալիք այցի ընթացքում, որտեղ ներգրավված կլինեն

[225] Պայմանավորվածությունները կյանքի են կոչվում, 29.12.2010, http://www.edu.am/ArticleIndex.php?id=4125&topMenuArt=1

[226] Նույն տեղում:

նաև ՀՀ առաջատար բուհերի ռեկտորներ, կփորձենք հարցի վերջնական լուծում արձանագրել»[227]:

Որոշ ժամանակ անց այս խնդիրը, իհարկե, լուծվեց, սակայն Հայաստանում բարձր կրթական որակ ստանալու հարցը թերևս Իրանում այդպես էլ մնաց իբրև խիստ կասկածելի: Բացի այդ, Հայաստանում սովորել ցանկացող իրանցի ուսանողների թիվը մի քանի անգամ գերազանցում է Իրանում ուսանելու ցանկություն հայտնած հայ ուսանողների թվին:

Այսօր Հայաստանում ավելի քան 10 դպրոցներում պարսից լեզու է դասավանդվում, սակայն այստեղ ևս կան խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Հայտնի է, որ Հայաստանում պարսից լեզու դասավանդող բոլոր ուսուցիչները չէ, որ գրանցված են, և նրանք ստանում են չնչին աշխատավարձ՝ այն էլ Իրանի կառավարությունից: Այդ դասերը դպրոցում կրում են բացառապես ֆակուլտատիվ բնույթ: Իհարկե, ԻԻՀ դեսպանատունը, որպես դպրոցի տարածքի օգտագործման փոխհատուցում, կահավորում է այն դասասենյակները, որտեղ իրականացվում են պարսից լեզվի դասընթացները, սակայն, դեսպանի խոսքով՝ իրենք բավարարված չեն առկա արդյունքներով: «Անցած տարի ես այցելել եմ այն դպրոցներ, որտեղ դասավանդում են պարսկերեն, և ցավոք սրտի, այն տպավորությունը, որ ստացա, այնքան էլ բավարար չէր: Ես զգում էի, որ դասավանդողները տիրապետում են լեզվին, ես էլ խոստացա, որ իրենց կաբինետները կկահավորենք լուսարձակներով, համակարգիչներով, և այդ նոր մեթոդներով նրանք կդասավանդեն պարսից լեզուն: Անհրաժեշտ գույքը արդեն գնվել է և կտրամադրվի նրանց: Հանդիպել եմ նաև ՀՀ

[227] Հուսանք՝ մեր դիպլոմները կճանաչվեն Իրանում, 6/03/2010, http://www.report.am/am/news/other-42/old_9203

կրթության նախարար Ա. Աշոտյանի հետ և խնդրել, որ ուսուցիչներին գրանցեն: Ամեն դեպքում, կարծում եմ, որ պետք է ուսուցիչների գիտելիքների մակարդակը ևս բարձրացվի»[228]: Ըստ ԻԻՀ դեսպանի, «այն գրքերը, որոնցով այսօր Հայաստանում դասավանդում են պարսկերեն, 25 տարի է, ինչ Իրանում չեն օգտագործվում»[229]: Դեսպանը նաև բարձրաձայնեց Հայաստանի բուհերում իրանագիտության ոլորտին վերաբերող մի շարք խնդիրներ, ինչպես նաև ցավով նշեց, թե հայ հասարակության շատ փոքր հատվածն է, որ այսօր ճանաչում է Իրանը: «15 տարի է, ինչ գնվել է մի շենք, որի անունը դրվել է Կովկասի իրանագիտության կենտրոն, -ներկայացնում է ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամմադ Ռեյիսին, - Իրանի կառավարությունն է գնել այդ շենքը, որպեսզի հայ հասարակությունը ծանոթանա իրանական մշակույթին և ժողովրդին: Սակայն, ցավոք սրտի, այն չի ծառայել իր նպատակին, քանզի հասարակության մեջ այն փոքրաթիվ մասը, որը, ի դեպ, կազմում է առավել տարեց մարդկանց հատվածը, չի ճանաչում Իրանը: Զգացվում է, որ պարսից լեզվի ընդլայնման հետ կապված որևէ աշխատանք այստեղ չի կատարվել»[230]:

Այսուհանդերձ, պետք է նշել, որ այսօր Հայաստանում Իրանի մոտ 3000 քաղաքացի է կրթություն ստանում, ինչպես նաև Հայաստանի ավելի քան 10 դպրոցներում դասավանդվում է պարսից լեզու[231]:

[228] Հարցազրույց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր Մոհամմադ Ռեյիսի հետ, հոկտեմբերի 22, 2013, Երևան:

[229] Նույն տեղում:

[230] Նույն տեղում:

[231] Г. Искандарян, Армяно-иранские отношения на современном этапе. Взгляд из Армении, Состояние и тенденции развития ситуации на Ближнем Востоке, Москва, 2013, стр. 91.

2013թ. հունվարի 24-ին ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը ընդունեց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսիին: Հանդիպման ժամանակ դեսպանը արձանագրեց, որ «Վերջին շրջանում իրանցի ուսանողների դժգոհությունների բացակայությունը վկայում է, որ Հայաստանի բուհական ոլորտում իրականացվում է լուրջ և հետևողական աշխատանք» ինչին ի պատասխան նախարարը փաստեց, որ վերջին տարիներին բուհական ոլորտում իրականացվել է հսկայական աշխատանք, մասնավորապես, օտարերկրյա ուսանողների ավարտական փաստաթուղթ ստանալու գործընթացում սահմանվել են խիստ չափանիշներ՝ հաշվի առնելով ժամանակին հնչած մի շարք ահազանգեր, որոնք այսօր, իրենց լուծումն են գտել. «Խնդիրներ միշտ էլ կան, սակայն դրանք այլևս կրում են ոչ թե համակարգային, այլ կոնկրետ և հիմնականում տեխնիկական բնույթ, որոնց ևս, համոզված եմ, պետք է արժանի ուշադրություն դարձվի», - նշել է նախարարը՝ անդրադառնալով նաև օտարերկրյա ուսանողների ատենախոսությունների պաշտպանության հարցերին և ընդգծել, որ ատենախոսությունը պետք է արտահայտի կրթության որակի և գիտական աշխատանքի արժեքի իրական գնահատականը»[232]: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաև հանրապետության մի շարք ավագ դպրոցներում պարսկերենի ուսուցման ծրագիր իրականացնելու և այդ համատեքստում համապատասխան դասագրքերի և ուսուցիչների վերապատրաստում իրականացնելու անհրաժեշտությանը: Կողմերը քննարկել են նաև Հայաստանի տարածքում Իրանի Շարիֆ արդյունաբերական համալսարանի մասնաճյուղ հիմնելու

[232] ՀՀ-ում ԻԻՀ դեսպան. խիստ նվազել են իրանցի ուսանողների դժգոհությունները, 24.01.2013, http://www.edu.am/index.php?id=-5816&topMenu=2&menu1=-1&menu2=2&arch=0

կամ նշված համալսարանի հետ կրկնակի դիպլոմների կրթական ծրագրի իրականացման հնարավորությունը, որը, ըստ նախարարի, կապահովի նաև ուսանողների շարժունության խնդիրը: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև դիպլոմների փոխճանաչման, ԵՊՀ-ում իրանագիտության զարգացման, աշակերտների և ուսանողների փոխայցելության, ինչպես նաև պարսկերենի ուսուցիչների վերապատրաստման նպատակով անհրաժեշտ դասընթացներ անցկացնելու հնարավորության և պարսկերենի նոր դասագրքերի տրամադրման հետ կապված հարցեր: Նախարարը դեսպանին տեղեկացրել է, որ հայկական կողմը շահագրգիռ է հայկական բուհերում իրանցի ուսանողների թվի ավելացմամբ՝ այդ համատեքստում նշելով, որ օտարերկրյա ուսանողների ավարտական փաստաթուղթ ստանալու գործընթացում սահմանվել են ամենախիստ չափանիշները ԱՊՀ տարածքում՝ հաշվի առնելով մի շարք ահազանգեր:

Կրթության և գիտության նախարարությանը ուղղած մեր հարցմանը և խնդրանքին՝ մեզ տրամադրել տեղեկանք, թե այս տարիների ընթացքում ինչ գործնական քայլեր են կիրառվել գիտության և կրթության բնագավառում, ստացանք հետևյալ պատասխանը. «Հայ-իրանական համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում իրականացվում է միջգերատեսչական և միջկառավարական մի շարք փաստաթղթերի շրջանակներում:

Համագործակցության ընդլայնման նպատակով հայկական կողմն առաջարկել է ՀՀ ավարտական փաստաթղթերի ճանաչման նպատակով իրականացնել ԻԻՀ համապատասխան հաստատությունների իրավասու ներկայացուցիչների պատվիրակության այցը Հայաստան, ինչպես նաև Թեհրանի համալսարանի հայագիտության

ամբիոնի ակտիվացման նպատակով Թեհրան գործուղել հայոց լեզվի և գրականության մեկ դասախոսի:

Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ 2013-2014 ուսումնական տարվա դրությամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են շուրջ 400 ԻԻՀ քաղաքացիներ»[233]:

Հարկ է նշել, որ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում հաջողությամբ գործում է իրանագիտության ամբիոն, որը յուրաքանչյուր տարի ունենում է շրջանավարտներ, որոնք տիրապետում են թե՛ լեզվին, թե՛ պատմությանը և մշակույթին: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում 1971 թվականից գործում է Արևելագիտության ինստիտուտը, որի կազմում է Իրանի բաժինը: Իրանի բաժնի հետաքրքրությունների ոլորտում են Իրանի պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, Իսլամական հեղափոխության արդիական խնդիրները, մշակվում են նաև պարսկական դասական և ժամանակակից գրականության տարաբնույթ հարցեր: Այս տարիներին տպագրվել է իրանագիտության ոլորտին նվիրված 50-ից ավելի արժեքավոր գիրք[234]: Իրականացվում է սերտ համագործակցություն Արևելագիտության ինստիտուտի և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան միջև: Այդ համագործակցության շրջանակներում յուրաքանչյուր տարի Արևելագիտության ինստիտուտը և ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնը իրականացնում են ԻԻՀ հոգևոր առաջնորդ իմամ Խոմեյնիի մահվան տարելիցին նվիրված գիտաժողովներ, իսկ 2012թ.

---

[233] ՀՀ կրթության և գիտության նախարարության պատասխան նամակը, 04/05-1/6566-14, 11.06.2014թ.

[234] Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Արևելագիտության ինստիտուտի՝ իրանագիտության ոլորտին նվիրված հրատարակությունները, էջ 106-111
http://orient.sci.am/files/publications/20121227_123839_am_Book%20G.pdf,

մարտի 13-ին համատեղ կազմակերպվեց միջազգային գիտաժողով, որը նվիրված էր Հայաստան-Իրան 20 տարվա համագործակցությանը: Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում սովորում են ԻԻՀ քաղաքացիներ, որոնք պատրաստում են իրենց գիտական ատենախոսությունները հայ մասնագետների ղեկավարությամբ:

Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ հայ-իրանական ներկա հարաբերությունների մակարդակում գիտակրթական կապերը բավարար չեն, մինչդեռ կա իրական ներուժ այս ոլորտը զարգացնելու համար:

Որպես մի քանի օրինակ՝ փաստենք, որ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մ. Ռեյիսին վերջերս հետաքրքրություն էր ցուցաբերել Հայաստանում ստեղծված արևային էներգիայի սարքով, որն ապահովում է էլեկտրաէներգիայով և ջեռուցմամբ[235]: Իսկ իրանական «Փայվանդ» էլեկտրոնային կայքն էլ վերջերս ներկայացրեց Thomson Reuters-ի ցուցակը, որը աշխարհի ամենաազդեցիկ գիտական միտք ունեցող 3200 մարդկանց ցանկն է, ովքեր գրել են բավական գիտական աշխատանքներ, և դրանք լայնորեն ցիտվում են: Նրանց շարքում կայքը առանձնացրել էր իրանցի 10 մաթեմատիկոսների անուններ[236]: 2014թ. Հայաստանում խիստ համեստ միջոցներով ստեղծվեց նոր սերնդի արագացուցիչ, որը, ըստ մասնագետների պնդումների, ոչ միայն տարածաշրջանում չկա, այլ աշխարհում մի քանի օրինակ է ընդամենը: Կարծում ենք, սա ևս պետք է խիստ հետաքրքրի ԻԻՀ-ին՝ համագործակցելու համար:

---

[235] Թեհրանի նոր ակնարկը Հայաստանին, 07 հուլիսի 2014, http://www.lragir.am/index/arm/0/comments/view/101425

[236] 10 Iranians on list of World's Most Influential Scientific Minds, 07/06/14, http://www.payvand.com/news/14/jul/1033.html

Մեր կողմից բերված ոլորտները նվազագույնն են, որոնցում կողմերը կարող են խորացնել հարաբերությունները, քանզի ակնհայտ է, որ երկու երկրներն էլ միմիայն կշահեն՝ սերտացնելով գիտակրթական հարաբերությունները:

Մշակութային կապեր

Հայաստանի Հանրապետությունը, իբրև անկախ երկիր, Իրանի Իսլամական Հանրապետության հետ սկսեց ձևավորել հարաբերություններ ոչ միայն քաղաքական, տնտեսական բնագավառներում, այև լուրջ քայլեր իրականացրեց մշակութային, գիտական ոլորտներում: Հայ-իրանական մշակութային հարաբերություններն առաջին անգամ իրավապայմանագրային դաշտում հայտնվեցին 1992թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված համաձայնագրով, որի շնորհիվ Հայաստանի և Իրանի միջև գիտական և մշակութային հարաբերությունների բնագավառներում հաստատվեցին արդյունավետ կապեր: Եթե կարող ենք փաստել, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին հայերը և իրանցիները բավական տեղեկացված էին միմյանց մասին և ծանոթ էին մշակութային ծալքերին, ապա Հայաստանի խորհրդայնացումից հետո այդ կապը խզվել էր: Իրականում, երկու երկրների ճանաչման գործընթացը բավական թուլացավ, և միայն Հայաստանի անկախությունից հետո մշակութային հարաբերությունների արդյունավետ զարգացման շնորհիվ հարաբերությունների մյուս ոլորտները շատ ավելի դյուրին դարձան, քանզի մեծացավ ճանաչողության աստիճանը: Եվ եթե անգամ Հայաստանում կային արվեստագետներ, ովքեր ժամանակին ճանաչել էին իրանական արվեստն ու մշակույթը և ունեցել էին որոշակի համագործակցության եզրեր, ապա շատ քչերն էին, որ

իրապես ընկալում էին արդեն փոփոխված երկրի՝ իսլամական արժեհամակարգով համեմված մշակույթը:

Հայ-իրանական մշակութային հարաբերությունների ձևավորման գործում, անշուշտ մեծ ավանդ է ունեցել իրանահայ գաղութը, որը կապող կամրջի դեր է կատարել հայ-իրանական թերևս բոլոր տեսակի հարաբերություններում: 1992թ. փետրվարի 9-ին Հայաստանի և Իրանի միջև ստորագրված հոչակագրում կարևոր տեղ էր հատկացվում հայ-իրանական մշակութային կապերին. հոչակագրի 20, 24, 25-րդ հոդվածները վերաբերվում էին հենց այդ հարաբերությունների հաստատմանը և խորացմանը: Մասնավորապես, կողմերը պարտավորվում էին մշակութային կապերը զարգացնելու նպատակով փոխանակել մշակույթի, արվեստի, կինոյի բնագավառներին վերաբերող խմբեր, կազմակերպել լուսանկարների ու գրքերի ցուցահանդեսներ, ֆիլմերի մեկշաբաթյա փառատոններ և այլն: Սերտ համագործակցության հիմքեր էր նախատեսվում դնել ռադիոյի, հեռուստատեսության, լրատվական կազմակերպությունների, ինչպես նաև լրատվության փոխանակման բնագավառներում: Հաշվի առնելով երկու երկրների մշակութային կապերի դարավոր անցյալը, պայմանավորվածություն էր ձեռք բերվել սերտորեն համագործակցելու հնագիտության, պատմական հուշարձանների, ձեռագիր մատյանների պահպանման ու վերականգնման բնագավառներում[237]:

Հայ-իրանական հարաբերությունների ձևավորման սկզբից ևեթ հայ և իրանցի համապատասխան պաշտոնյաների ուշադրության կենտրոնում էին գտնվում մշակութային հարաբերությունների խորացման հարցերը: Այս առումով, ուշագրավ է 1992թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի

[237] ՀՀ ԱԳՆ, Դիվանագիտական բանբեր, էջ 21:

Գլխավոր ասամբլեայի 47-րդ նստաշրջանում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը. «Հայաստանը փորձել է պատմության բեռը առիթի վերածել՝ վերագտնելու հազարամյա արմատներն այս տարածաշրջանում, վերահաստատելու տարածաշրջանի ժողովուրդների հետ մշակույթների ընդհանրությունը և էթնիկական ու կրոնական տարբերությունները վերածելու հարստության աղբյուրի՝ այնպես, որ այդ տարբերությունները նպաստեն մեր ընդհանուր տան խնդիրների լուծմանը»[238]:

ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վ. Բայբուրդյանի հետ ուեցած հարցազրույցից պարզ դարձավ, որ «1992թ., երբ կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր մշակութային և գիտական համագործակցության վերաբերյալ, դրա հիման վրա կազմակերպվեցին բազմաթիվ ցուցահանդեսներ, կինոփառատոններ, արվեստի գործիչների փոխայցելություններ, մշակույթի օրեր և այլն: Երևանում վերանորոգվեց իրանական աչքի ընկնող պատմամշակութային հուշարձան՝ «Կապույտ մզկիթը», որն իրենով նշանավորվեց հայ-իրանական բարեկամության մի նոր էջ:

Կարծում եմ, որ մշակութային համագործակցության բնագավառում կան չօգտագործված հսկայական հնարավորություններ: Հայերն ու իրանցիները հզոր մշակույթ ունեցող ժողովուրդներ են, և նրանց միջև համագործակցությունը փոխադարձաբար կարող է հարստացնել երկու ժողովուրդներին և նպաստել ստեղծելու՝ նոր որակներ ու արժեքներ»[239]:

[238] Վ. Բայբուրդյան, Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998թթ.: Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012, էջ 16-17:

[239] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.) Վահան Բայբուրդյանի հետ, ապրիլ 13, 2012, Երևան:

Հատկանշական է, որ այս ողջ 20 տարիների ընթացքում իրանական-իսլամական արժեհամակարգի արվեստը մեծապես ցուցադրվում և քարոզվում է Հայաստանում հատկապես՝ Իսլամական հեղափոխությանը նվիրված «Այգաբացի տասնօրյակ» տոնակատարության ժամանակ: Հայկական արվեստի գործերը, հիմնականում առանց խնդիրների, ներկայացվում են հայկական համայնքում: Պետք է փաստել, որ «իրանական մշակույթը շատ ավելի լավ է ներկայացված Հայաստանում, քան մերը՝ Իրանում»[240]:

1994թ. կնքվեց «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, տուրիզմի և զանգվածային լրատվական միջոցների բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որը ուժի մեջ մտավ միայն 2006թ. օգոստոսի 1-ից[241]:

Անկախության առաջին տարիներին, իբրև հայ-իրանական մշակութային հարաբերությունների ամրապնդման գրավական, Հայաստանը որոշում կայացրեց Երևանի սրտում գտնվող «Կապույտ մզկիթը» որպես մշակութային կենտրոն Իրանին հանձնելու վերաբերյալ: Հայկական կողմը նման քայլով հավանաբար ակնկալում էր նաև նման մի շինություն ստանալ Թեհրանում, որը կլիներ Հայաստանի մշակութային օջախը:

[240] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

[241] Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, տուրիզմի և զանգվածային լրատվական միջոցների բնագավառում համագործակցության մասին, http://www.parliament.am/library/erkoxm/2006/10.pdf

1995թ. փետրվարի 23-ին ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը ընդունեց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանիին: Հանդիպման բուն նպատակն էր՝ դեսպանին ներկայացնել երկու երկրներում արվեստի փառատոնների անցկացման ծրագրի հայկական մասը[242]: Սակայն իրականում բավական դժվար է իսլամական արժեհամակարգ ունեցող երկրում ներկայացնել քրիստոնեական արժեհամակարգ ունեցող երկրի մշակույթը: Այն միայն իրանական կողմի մանրազնին ուսումնասիրությունից հետո է հնարավոր կյանքի կոչել, այն էլ անհասկանալի է, թե այն որքանով կհետաքրքրի հանրությանը:

2000թ. հուլիսի 18-ին ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ռոլանդ Շառոյանը պաշտոնական այցով մեկնեց ԻԻՀ: Իրանի մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարը հանդիպման ժամանակ նշել է, որ իր երկիրը հատուկ ուշադրություն է դարձնում Իրանում հայկական եկեղեցիների վերանորոգման և պահպանության հարցերին: Այս ծրագրում առանձնահատուկ տեղ ունեն Իրանի հյուսիսում գտվող Սբ. Ստեփանոս և Սբ. Թադեի վանքերը: Շառոյանը քննարկել էր Իրանում հայկական մշակութային շաբաթ անցկացնելու հարցը, որը ողջունել էր ԻԻՀ մշակույթի նախարարը՝ այն որակելով քաղաքակրթությունների միջև երկխոսության լավ գաղափար, ինչը միջազգային հանրության համար մահմեդականների և քրիստոնյաների համերաշխ համակցության լավ օրինակ է[243]:

Սակայն Իրանում հայկական մշակութային օրեր անցկացնելու գաղափարը կյանքի չէր կոչվում՝ Իրանում

[242] Հակոբ Մովսեսի օրագրից, 23-ը փետրվարի 1995թ., ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 242:

[243] ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 67, էջ 41-42:

առկա որոշակի խոչընդոտների պատճառով, ինչը արձանագրվել է հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին տեղեկանքում. «Թեև հայկական կողմը քանիցս ներկայացրել է մշակութային օրեր անցկացնելու ծրագրեր, սակայն տարբեր պատճառաբանություններով (իրանական նոր տարի, սգո ամիս, նախագահական ընտրություններ և այլն) դրա անցկացումը հետաձգվել է»: (Ամենայն հավանականությամբ այն տեղի կունենա նոյեմբերին՝ ՀՀ նախագահի՝ Իրան կատարելիք այցի ժամանակ)[244]: Այնուամենայնիվ, արարողակարգային բնույթի ինչ-որ ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ Իրանում միշտ էլ կազմակերպվել են:

Արդարության առաջ չմեղանչելու համար պետք է փաստենք, որ Իրանի ողջ տարածքում այսօր էլ գործում են հայկական մարզամշակութային ակումբներ, միություններ, որոնցից են՝ «Ռաֆֆի», «Սանահին» և առավել հայտնի մարզամշակույթային «Արարատ» կազմակերպությունը՝ նույնանուն մարզավանով հանդերձ: Այն ունի 7 հազար հանդիսատեսի համար նախատեսված ֆուտբոլի դաշտ, մի քանի մարզական դահլիճներ, երկու ջրավազան, սրճարան, ճաշարան, մատուռ և այլն: «Արարատ» կազմակերպությունն ունի նաև նույնանուն ֆուտբոլի և բասկետբոլի թիմեր, որոնք մասնակցում են Թեհրանի առաջնություններին: 2000թ. ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամին 120 հազար դոլարի նվիրատվություն կատարեց Թեհրանի «Արարատ» մարզամշակութային միության «Արարատ» ֆուտբոլի թիմին[245] և

[244] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, 14, հունիս, 2001, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 101:

[245] Լույս, 15.08.2000, էջ 3:

խոստացավ, որ միությունը իրանական կառավարության մշտական հոգածության տակ է գտնվելու: Իրանում գործում են առավել քան 30 մարզամշակութային միություններ:

Այսօր էլ Իրանում, պետական մակարդակով հոգածություն է ցուցաբերվում հայկական մարզամշակութային, ինչպես նաև՝ հոգևոր արժեքների նկատմամբ: Թեհրանում լույս է տեսնում «Ալիք» օրաթերթը, որն ունի նաև էլեկտրոնային տարբերակ, ինչով էլ ավելի է մեծացրել իր ընթերցողների թիվը: «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանը մեծ հպարտությամբ է ներկայացնում «Ալիքի» իրականացրած գործունեությունը՝ որակելով այն իբրև Իրանի հայ համայնքի պահպանման գործոններից մեկը. «2011թ. մեր օրաթերթի 80-ամյակն էր և իրանահայ համայնքի երեք թեմերում էլ այն մեծ շուքով նշվեց, որին ամենայն հարգանքով և համագործակցությամբ մասնակցեցին մշակութային, մարզական, միութենական, ազգային ոլորտներում աշխատող բոլոր կառույցների, անկախ միավորների, նույնիսկ հակադիր հոսանքների ներկայացուցիչներ»[246]: Իրանում նմանապես գործում է «Արաքս» ամսագիրը: Միայն Թեհրանում կա հայկական 8 եկեղեցի:

Սակայն առավել կարևոր է, որ Իրանում ներկայացվի Հայաստանի մշակույթը և արվեստը, որպեսզի իրանցիները կարողանան ճանաչել մեզ նաև մեր արվեստով, երաժշտությամբ, կերպարվեստով: Բնականաբար, հասկանալի է, որ պետք է ընտրվեն այնպիսի գործեր, որոնք չեն խոչընդոտի իսլամական արժեքներին:

2000 թվականից հայ-իրանական մշակութային քննարկումների ժամանակ առանցքային դերակատարում էր ստացել Իրանի հյուսիսային շրջանների հայկական

[246] Հարցազրույց ԻԻՀ-ում լույս տեսնող «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանի հետ, նոյեմբերի 1, 2012. Թեհրան, ԻԻՀ:

եկեղեցիների պահպանման հարցը: Իրանահայ համայնքի նյութական օժանդակությամբ աշխատանքներ էին տարվում Իրանի Սբ. Թադեի հայկական վանքի Գրիս, Մահլազան և Դարաշամբ գյուղերի հայկական եկեղեցիների ու Սբ. Ստեփանոս նախավկայի վանքի զանգակատան նորոգման և վերանորոգման նախագծի շուրջ: Նախատեսվում էր Սբ. Թադեի հայկական վանքի տարածքում կատարել հնագիտական և երկրաֆիզիկական հետազոտություններ[247]:

2001թ. դեկտեմբերի 25-27-ին տեղի ունեցավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն, որի ժամանակ կազմակերպվեց գալա համերգ, և ներկայացվեց հայկական մշակույթը: Կազմակերպվեցին հայ մշակույթը ներկայացնող մի շարք ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Պաշտոնական պատվիրակությանը ուղեկցում էին մշակույթի գործիչներ, ովքեր իրենց արվեստը ներկայացրին Թեհրանի «Վահդաթ» մշակութային հանրահայտ համալիրում: Համերգային ծրագրում ելույթ ունեցավ Կոմիտասի անվան պետական լարային քառյակը[248]:

2008թ. հուլիսի 2-10-ը Կանադայի Քվեբեկ քաղաքում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 32-րդ նստաշրջանի ընթացքում, Սբ. Թադեոս[249] առաքյալի պատմական վանքը, որպես Իրանի 9-րդ պատմամշակութային կոթող, պաշտոնապես

[247] Ծրագիր ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության և ԻԻՀ «Իրանի մշակութային ժառանգության» կազմակերպության 2002թ. համագործակցության, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 177:

[248] Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:

[249] Սբ. Թադեն կառուցվել է Սբ. Թադեոս առաքյալի շիրիմի վրա: Այն հայկական հնամյա վանքերից մեկն է, որ կառուցվել է 6-րդ և վերանորոգվել 9-րդ դարերում: 1227թ. մինչեւ 1833թ. ծառայել է որպես Ատրպատականի ՀԹ առաջնորդանիստ կենտրոն:

գրանցվեց միջազգային այդ կազմակերպության պատվավոր ցուցակում: Պաշտոնական հաղորդումների համաձայն, իրանական կողմը սուրբ Թադեի վանքի հետ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քննարկմանն էր հանձնել նաև Ծործորի Սբ. Մարիամ և Սբ. Ստեփանոս նախավկայի վանքերի փաթեթները: Իրանի հայկական հուշարձանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում ներգրավվելու գործընթացի բոլոր փուլերում, իր աջակցությունն է ցույց տվել Հայաստանի Հանրապետությունը, այն համարելով՝ միջմշակութային համագործակցության և փոխըմբռնման վառ դրսևորում[250]:

Սա հայ-իրանական մշակութային հարաբերությունների լավագույն օրինակներից է, որից հետո միջազգային կազմակերպություններում կողմերը որոշեցին շարունակել միմյանց մշակութային արժեքների ներկայացումը և պահպանումը:

2009թ. ապրիլի 13-14-ը ԻԻՀ-ում պաշտոնական այցով գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, հանդիպում ունեցավ նաև Իրանի հոգևոր առաջնորդի հետ և բարձր գնահատեց սեյյեդ Ալի Խամենեիի ավանդը հայ-իրանական հարաբերությունների ամրապնդման գործում: Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Իրանի հոգևոր առաջնորդին՝ մեր հարևան երկրում գտնվող հայկական պատմամշակութային արժեքների պահպանման հարցում ցուցաբերված հոգատար վերաբերմունքի համար[251]:

Հայկական հոգևոր մշակութային օջախների՝ ՅՈՒՆԵՍՕ-ի ցանկում ընդգրկելու կապակցությամբ ՀՀ ԱԳՆ

[250] Երեք հայկական վանական համալիր ՅՈՒՆԵՍԿՕ-ում, հուլիսի 22, 2008թ., http://araxmag.blogspot.com/2008/07/blog-post_9806.html

[251] Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն, 13.04.2009 - 14.04.2009 http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/04/13/news-56/

Է. Նալբանդյանը ևս հայտնեց իր շնորհակալությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 36-րդ գլխավոր կոնֆերանսի ժամանակ. «Առկա է լավ համագործակցություն Իրանի հետ, որը պատշաճ հոգատարություն է դրսևորում իր տարածքում տեղակայված հայկական հուշարձանների նկատմամբ: Վերոնշյալի վկայություն է Իրանի ներկայացմամբ Սբ. Թադեոս և Սբ. Ստեփանոս վանքերի և Ծործոր մատուռի՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկումը: Հայ և իրանցի մասնագետների համատեղ ջանքերով Երևանում վերականգնվել և գործում է 18-րդ դարի մզկիթ»[252]:

2014թ. մայիսին իրանական Մեհր գործակալության տարածած տեղեկատվության համաձայն, Իրանի Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանքը 2015թ. կգրանցվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում[253]:

2011թ. հայ-իրանական մշակութային հարաբերությունները, կարելի է ասել, թևակոխեցին նոր փուլ: Իրականացվեց մի միջոցառում, որը մշակութային համագործակցության բնագավառում նոր, բարձր մակարդակի ձևաչափ է. այն կոչվում է հայ-իրանական բարեկամության օրեր: «Իրանցի մեր գործընկերների հետ անցկացրինք բարեկամության օրեր, - նշում է ՀՀ մշակույթի փոխնախարար Ա. Պողոսյանը, - որոնք 2011թ. կայացան Սյունիքի մարզում՝ Մեղրիում, իրանցի մեր գործընկերները մշակութային, այսպես ասած, մեծ դեսանտով էին գտնվում Մեղրիում և ներկայացնում էին իրանական հնագույն մշակույթի ողջ ներկապնակը: Իհարկե, միջոցառմանը միացան նաև կատարողական արվեստի, կերպարվեստի մեր հայկական խմբերը, և Մեղրիում բացվեց նաև հայ-

[252] ՀՀ ԱԳ Նախարար Էդվարդ Նալբանդյանի ելույթը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 36-րդ գլխավոր կոնֆերանսի ժամանակ, 29.10.2011, http://www.mfa.am/hy/speeches/item/2011/10/29/unesco_2910_sp/

[253] کلیسای وانک جهانی می شود http://www.mehrnews.com/mobile/detail/2296396

իրանական բարեկամության հուշարձան: Մենք պայմանավորվածություն ունենք իրանցի մեր գործընկերների հետ, որ հայ-իրանական բարեկամության օրերի ձևաչափը շարունակվելու է նաև Իրանում»[254]:

Այդ ժամանակ ծագեց Հայաստանի և Իրանի սահմանին խաղաղության և բարեկամության այգի հիմնելու գաղափարը: Աշխատանքների մեկնարկը տրված է: ՀՀ Բնապահպանության նախարարության և Իրանի բնապահպանության վարչության միջև ստորագրվել է բնապահպանական համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի իրականացման 2012-2013թթ. գործողությունների ծրագիր: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ երկու պետությունների ընդհանուր սահմանում «Բարեկամության և խաղաղության այգի» ստեղծելու մասին[255]:

Սակայն, մեր ունեցած տվյալներով, իրանական կողմի խնդրանքով հայ-իրանական բարեկամության օրերը Իրանում հետաձգվել են, որը նախ հետաձգվեց մինչև 2013թ., իսկ 2016թ.ի կեսերին անգամ հայտնի չէր, թե երբ այն տեղի կունենա:

2012թ. մարտի 13-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ իրականացած «Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով» միջազգային գիտաժողովի ժամանակ, ՀՀ մշակույթի փոխնախարար Ա. Պողոսյանի զեկուցմամբ, «ՀՀ մշակույթի նախարարությունը ԻԻՀ հետ յուրաքանչյուր 2-3 տարին մեկ, ստորագրում է կոնկրետ գործողությունների պայմանագիր և մշակույթի ոլորտում իրականացնում է

[254] Ա. Պողոսյան, ՀՀ մշակույթի փոխնախարար, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012, էջ 12-14:

[255] Հայ-իրանական սահմանին «Բարեկամության և խաղաղության այգի» կկառուցվի, 14.02.14, http://www.tert.am/am/news/2014/02/14/armenia-iran/

համագործակցություն՝ խոր գիտակցումով, որ այդ համագործակցությունն իսկապես, մշակութային առումով, մշակույթների յուրօրինակ երկխոսություն է, և փոխհարստացնում է և հայկական հնամենի մշակույթը և իրանական մշակույթը»[256]:

2012թ. հոկտեմբերի 23-25-ին ՀՀ-ում անցկացվեց Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի հերթական 11-րդ նիստը, որի արդյունքում հոկտեմբերի 25-ին, ստորագրվեց «փոխըմբռնման հուշագիր»: Հայկական աշխատանքային խմբի առաջարկով փաստաթղթում ներառվել են հետևյալ կետերը.

- Հայաստանում գտնվող իրանական և Իրանում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների կոնսերվացում, պահպանություն, վերանորոգում, հանրահռչակում,
- 2012-2013թթ. ընթացքում իրանական մասնագետների մասնակցությամբ Երևանում գտնվող Կապույտ մզկիթի վերանորոգման աշխատանքներ,
- Ապահովել երկու երկրների արվեստագետների մասնակցությունը՝ կազմակերպվող փառատոներին, գեղարվեստի և կիրառական արվեստի ցուցահանդեսներին, գրական-թարգմանական ոլորտում իրականացվող համատեղ նախագծերին,
- Շարունակել համագործակցությունը 2011թ. աշնանը մեկնարկած «Հայաստան-Իրան. Բարեկամության օրեր» ծրագրի ձևաչափով և քննարկել նշյալ ծրագիրը 2012թ. աշնանը Իրանում իրականացնելու հնարավորությունը[257]:

[256] Ա. Պողոսյան, ՀՀ մշակույթի փոխնախարար, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012, էջ 12-14:

[257] Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:

2012թ. նոյեմբերի 13-ին ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանը հանդիպեց ԻԻՀ Ազգային արխիվի և գրադարանի տնօրեն, ԻԻՀ նախագահի խորհրդական Էսհաղ Սալահիին: Զրույցի ընթացքում կողմերը պայմանավորվեցին համագործակցել երկու երկրների Ազգային գրադարանների ֆոնդերում պահվող հայկական և իրանական ձեռագրերի ցուցակագրման, թվայնացման, ուսումնասիրման և հետագայում երկու երկրներում համատեղ ցուցադրությունների միջոցով դրանք հանրության ուշադրությանը ներկայացնելու վերաբերյալ: Համաձայնվեցին համագործակցություն իրականացնել հին ձեռագրերի վերականգնման բնագավառում՝ մասնագետների փոխայցելությունների և փորձի փոխանակման միջոցով: Հ. Պողոսյանը հանդիպում ունեցավ նաև ԻԻՀ մշակույթի և իսլամական առաջնորդման նախարար սեյյեդ Մոհամմադ Հոսեյնի հետ, որի ընթացքում կողմերը համաձայնցին համագործակցել միջազգային կառույցների, մասնավորապես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում: Ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու նպատակով կմշակվեն և կներկայացվեն համատեղ հայտեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում Երևանի Կապույտ մզկիթի ներկայացման ուղղությամբ: Մեկ այլ հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ ԻԻՀ Իսլամական մշակութային կապերի կազմակեպության նախագահ Խորամշադինի հետ, կողմերը համաձայնվեցին Հայաստանում ընդլայնել պարսից լեզվի ուսումնասիրման ծրագիրը, իրականացնել համատեղ երաժշտական նախագիծ՝ Հայաստանի և Իրանի ազգագրական համույթների համատեղ ծրագրերի ձևաչափով: Նախատեսվում է հայկական կողմից ծրագրում ընդգրկել

«Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների նվագախումբը»[258]:

Այս ամենով հանդերձ, պետք է փաստել, որ մի շարք մշակութային ծրագրեր, այնուամենայնիվ, կյանքի կոչվել են: Իրանցիները գրեթե ամեն տարի Հայաստանում նշում են «Այգաբացի տասնօրյակը», որի ժամանակ ներկայացվում է իսլամական արվեստը, Հայաստան են ժամանում իրանցի կինոգետները, ովքեր մասնակցում են «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին: Ամեն տարի Հայաստանում իրականացվում են Իմամ Խոմեյնու մահվան տարելիցին նվիրված միջոցառումներ: Նովրուզի տոնակատարության օրերին, բացի այն, որ Հայաստան են ժամանում իրանցի վտարանդի երգիչները, 2013թ. մարտի 23-ին ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի կողմից իրականացվեց իրանական հայտնի «Մազիար» փոփ խմբի համերգը: Նմանապես, Հայաստանից ամեն տարի խմբեր են մեկնում ԻԻՀ՝ մասնակցելու գրքի միջազգային ցուցահանդեսներին: 2010թ. «Փոփոխությունների թատրոնի» ներկայացուցիչները մասնակցեցին Թեհրանի Համալսարանական թատրոնի 13-րդ միջազգային փառատոնին, ՀՀ նկարիչների միության անդամները մասնակցեցին Իրանում տեղի ունեցող ձեռարվեստի միջազգային ցուցահանդեսներին: 2011թ. ապրիլի 24-28-ը Քիշի առաջին միջազգային կինոփառատոնում հայ ռեժիսոր Հարություն Խաչատրյանի՝ «Պոետի վերադարձը» ֆիլմը «Լավագույն ֆիլմ» անվանակարգում արժանացավ գլխավոր մրցանակի[259]:

Կարելի է վստահաբար ասել, որ Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո հայ-իրանական գրական առնչությունները նոր փուլ են մտել: Հայաստանի և

[258] Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:
[259] Նույն տեղում:

Իրանի մտավորականները, գրողները, բանաստեղծները, մշակութային գործիչները միմյանց ավելի լավ ճանաչելու նպատակով 2004 և 2009 թվականներին Հայաստանում, 2007 և 2011 թվականներին՝ Իրանում անցկացրել են գրական կամուրջ-գիտաժողովներ: Կազմակերպվել են հայ և պարսից գրականության դասական և ժամանակակից պոետների, գրողների, թատերագրերի լավագույն ստեղծագործությունների փոխադարձ թարգմանություններ, դրանց հրատարակություններ[260]: Ակնհայտորեն նկատվում են համագործակցության լուրջ ձեռքբերումներ, հատկապես՝ թարգմանչական արվեստի բնագավառում, երբ երկու կողմերի գրականագետները փորձում են բնագրից թարգմանել գիտական և գեղարվեստական լավագույն գրականությունը: Դրա լավագույն օրինակ կարող է հանդիսանալ պարսկերենով տպագրված «Ժամանակակից հայ բանաստեղծները պարսկերենում», «Արդի հայ պոեզիայի ժողովածուն», որոնցում ընդգրկված են ժամանակակից հայ անվանի գրողների ստեղծագործությունները: Նախատեսվում է առաջիկա տարիներին պարսկերեն թարգմանել և 11 հատորով տպագրել հայ բանաստեղծների աշխատանքները, և որպես առաջին օրինակ լույս տեսավ Հ. Գրիգորյանի բանաստեղծությունների ժողովածուն: Պարսկերենից հայերեն թարգմանվել են «Կանաչ ծավալ», «Ղաբուսնամե», «Փոքրիկ սիրտս ու՞մ նվիրեմ», «Սիրո յոթ քաղաքը», «Զահակ» (Իրանական ժամանակակից դրամատուրգիա), «Ոսկե գմբեթ» (ժամանակակից իրանական պոեզիա) «Կապույտ բաց մայրամուտի կապույտ» (հետ հեղափոխական իրանական պատմվածքների ժողովածու, «Մոլավի Մասնավիի պատումները», «Ղեյսար Ամինփուրի

[260] Վ. Փարսադանյան, Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012, էջ 103:

բանաստեղծությունների ընտրանի», Իրանական մանկական պատմվածքներ, «Հիմա, երբ հեռացել ես, հիմա երբ եկել ես», «Ոտնահետքեր ծովափին», «Իրանական և հայկական ընդհանուր ասացվածքներ» «Քրիստոսը Ղուրանում», «Սուրբ Ղուրան», «Ուսուցումն ու դաստիարակությունն Իսլամում», պարսկերենի դասագրքեր, «Իրանահայոց հանրագիտարան» և այլն[261]:

Ինչպես նշում է ԻԻՀ-ում ՀՀ դեսպանը «Արդեն վեց տարի է, որ Հայաստանը Թեհրանում կազմակերպվող գրքի միջազգային ցուցահանդեսի մշտական և ակտիվ մասնակիցն է, կազմակերպվում են սեմինարներ, անցկացվում են մշակութային օրեր և այլն: Հայաստանից թատերախմբեր են հրավիրվում Իրան: Մենք աշխատում ենք բազմակողմանի ու ճիշտ ներկայացնել Իրանի քաղաքացիներին հայկական մշակույթը[262]:

Միևնույն ժամանակ, խիստ կարևոր է հայ-իրանական մշակութային հարաբերությունների զարգացումը Իրանի հայ համայնքի համար, նրանք Հայաստանից եկող մշակութային յուրաքանչյուր խմբի սպասում են անհամբերությամբ: Երբեմն-երբեմն Հայստանից Իրան գնում են մշակութային խմբեր, սակայն, մեր ունեցած տվյալներով, այն երբեք չի կրում բարեգործական նպատակ, այլ ունենում է բիզնես-որակավորում: Այս տեսակետը կիսում է նաև ԻԻՀ մեջլիսի հյուսիսային և կենտրոնական թեմից առաջադրված պատգամավոր Կարեն Խանլարյանը. «Հայաստանից շատ հազվադեպ են գալիս մշակութային խմբեր, այն էլ ազատ շուկայական սկզբունքների հիմունքով: Բայց փոխադարձը չկա, ես չեմ հիշում, որ Իրանից մեր հայ երիտասարդական

[261] Վերոհիշյալ գրքերի ամբողջական ցանկը տրամադրել է ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնը:

[262] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանի հետ, նոյեմբերի 2, 2012, Թեհրան:

մշակութային խմբերը մեկնեն Հայաստան և ներկայացվեն: Ես հասկանում եմ, որ որակը զիջում է, բայց դա կարող է խրախուսական քայլ դիտվել, բայց, ցավոք չկա»[263]:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք եզրակացնել.

1. Հայ-իրանական մշակութային հարաբերությունները ընթանում են բավական դանդաղ, սակայն ունեն գործունեության մեծ ներուժ:
2. Ողջունելի է, որ ՀՀ մշակույթի նախարարությունը ԻԻՀ համապատասխան գերատեսչության հետ ունեն պայմանավորվածություն՝ համագործակցելու միջազգային կառույցներում, որ մինչ այժմ հաջողությամբ է իրականացվել:
3. Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթը բավական բարձր մակարդակով ցուցադրվում է Հայաստանում, ինչին երբեք չի խոչընդոտում հայկական ոչ մի պետական կառույց:
4. Ցանկալի կլիներ, որ ի վերջո կյանքի կոչվեր «Հայաստանի մշակութային օրեր Իրանում» ծրագիրը, որով մենք ըստ արժանվույն կներկայացնեինք մշակութային մեր արժեքները իրանական կողմին, բնականաբար հաշվի առնելով իսլամական նորմերը: Այն կօգներ Իրանի մշակութասեր լայն հասարակությանը՝ է՛լ ավելի լավ ճանաչել և հասկանալ հարևան երկրի ժողովրդին:

[263] Հարցազրույց ԻԻՀ Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, նոյեմբերի 3, 2012թ., Թեհրան, ԻԻՀ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Հայերն ու իրանցիները դարեր շարունակ ապրել են կողք կողքի և, անտարակույս, Հայաստան-Իրան հարաբերությունների ձևավորման ու խորացման մեջ ունեցել են իրենց ուրույն դերակատարությունը:

Չանդրադառնալով պատմական, վաղնջական շրջանի համակեցությանը, մեր ուշադրությունը բևեռում ենք Իրանի տարածքում 20-րդ դարում ապրող հայերի խնդիրներին, ձեռքբերումներին:

Իրանահայ գաղթօջախը ընդհանուր առմամբ 400 տարվա պատմություն ունի: Ըստ պաշտոնական տվյալների՝ Իրանում ապրում է 200 հազար հայ, սակայն իրականում նրանց թիվը խիստ նվազել է Իրանի Իսլամական հեղափոխության, Իրանա-իրաքյան պատերազմի և Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների ու երկրում առկա սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակի պայմաններում: ԻԻՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ իրանահայությանը տրվել են ներքին մշակութային և կրոնական ինքնավարության լայն իրավունքներ[264]: Հայերն ամուսնանում և ամուսնալուծվում են, կտակում կամ որդեգրում են՝ համաձայն առաքելական եկեղեցու օրենքների և սովորույթների: Ըստ 14-րդ հոդվածի՝ ԻԻՀ կառավարությունը և մահմեդականները պարտավոր են ոչ մահմեդականների նկատմամբ բարյացակամ,

[264] Օ. Փահլևանյան, ԻԻՀ Սահմանադրությունը և պետական կառուցվածքը, Երևան, 1997, էջ 19:

բարեհաճ և արդար վերաբերմունք դրսևորել՝ պահպանելով վերջիններիս մարդկային իրավունքները: Այս սկզբունքը տարածվում է այն մարդկանց վրա, ովքեր դավեր չեն նյութում իսլամի և Իսլամական հանրապետության դեմ[265]:

Հայերը հիմնականում բնակվում են խոշոր քաղաքներում՝ Թեհրանում, Սպահանում, Թավրիզում, Ուրմիայում, Արաքում և այլուր: Հայերը պետության կողմից ճանաչված են՝ որպես կրոնական փոքրամասնություն: Կրոնական փոքրամասնություններին Իրանի Մեջլիսում հատկացվում է 5 տեղ, որից երկուսը՝ հայերին, մեկական՝ հրեաներին, զրադաշտականներին, ասորիներին և խալդերին համատեղ: Մեջլիսում հայ համայնքը ներկայացուցչության իրավունք ստացավ 1905-1911թթ. Սահմանադրական շարժումից հետո: 1978-79թթ. Իսլամական հեղափոխությունից հետո պահպանվեց նույն իրավունքը, որն ամրագրվեց Սահմանադրության 64-րդ հոդվածում[266]: Մեջլիսի հայ պատգամավորներից մեկը ընտրվում է հյուսիսային, մյուսը՝ հարավային թեմից: Այսօր Ատրպատականի և Թեհրանի թեմի շահերը մեջլիսի 10-րդ նստաշրջանում ներկայացնում է Կարեն Խանլարյանը, իսկ Սպահանի հայության շահերը՝ Ժորժիկ Աբրահամյանը:

«Ավանդաբար մեզ մոտ գործադիր և օրենսդիր մարմինների ներկայացուցիչները ընտրության արդյուքնում են իշխանության գալիս, նշանակվի պաշտոն գրեթե չկա, - նշում է Կ. Խանլարյանը»[267]: Ժողովրդավարական շատ

[265] Իրանի Իսլամական հանրապետության Սահմանադրություն (հիմնական օրենք), Գառնիկ Բաղալյանի թարգմանությամբ, Թեհրան, 2005, էջ 40:

[266] Օ. Փահլևանյան, ԻԻՀ Սահմանադրությունը և պետական կառուցվածքը, էջ 20:

[267] Հարցազրույց ԻԻՀ Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, նոյեմբերի 3, 2012, Թեհրան, ԻԻՀ:

պարզ սկզբունքներով են տեղի ունենում խորհրդարանական ընտրությունները: Ընտրությունները տեղի են ունենում համապետական ընտրությունների օրը, սակայն փոքրամասնությունների համար քվեատուփերը առանձին են: Հստակեցված է լինում նաև՝ դպրոցներո՞ւմ, թե՞ եկեղեցում պետք է իրականացվեն ընտրությունները: Իրանահայությունը համայնքից ընտրում է այն թեկնածուին, ում առավելապես վստահում է և ցանկանում է տեսնել նրան մեջլիսում: Թեկնածուները հիմնականում առաջադրվում են կուսակցության, այս դեպքում՝ ՀՅԴ կողմից, սակայն լինում են նաև անկուսակցականներ, որոնք համախմբվում են մի գաղափարի շուրջ և առաջադրում են որևէ մեկի թեկնածությունը, սակայն նրանք լուրջ հնարավորություններ չեն ունենում:

Իրանի հայերը, լինելով Իրանի լիիրավ քաղաքացիներ, անշուշտ մասնակցում են երկրում տեղի ունեցող բոլոր գործընթացներին: Իրանի բարձրաստիճան պաշտոնյաները մեկ անգամ չէ, որ փաստել են հայերի անուրանալի դերակատարությունը իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ: Երկրի ղեկավարությունը, նմանապես, մեծ գնահատանքի է արժանացնում հայության ներդրած ջանքերը Իրանի մշակույթի և արվեստի զարգացման մեջ: Հայ համայնքն անշուշտ ներգրավված է հասարակական-քաղաքական գործառույթներում, սակայն, ըստ Թեհրանի և հյուսիսային թեմից առաջադրված պատգամավոր Կ. Խանլարյանի հայության մասնակցությունն այնքան էլ ազդեցիկ չէ. «Եթե խոսքը վերաբերվում է տնտեսական, հասարակական կյանքին, ապա պետք է նշեմ, որ հայությունը չունի տնտեսա-սոցիալական առանձին դիրք այս երկրում: Հայերը աշխատում են հիմնականում պետական կամ մասնավոր սեկտորում, և միայն այդպես են առնչվում տնտեսությանը: Սակայն հոգևոր, մտավոր իմաստով հայությունը հիմնականում սնվում է առկա

միություններից»: Թե հայերը մասնագիտական որ ոլորտում են առավել աչքի ընկնում հարցին Կ. Խանլարյանը նշեց. «Հայերը միշտ էլ համարվել են Իրանի լավագույն արհեստավորները: Գիտության մեջ, չէի ասի, թե առաջատար ենք, այնուամենայնիվ, գիտական բնագավառում ունենք էական աճ: Վերջերս հաշվառում էինք և հայտնաբերեցինք, որ մոտավորապես 100 հայ դասախոս ունենք Իրանի տարբեր համալսարաններում: Ժամանակին, 30 տարի առաջ, Թեհրանում աշխատող ատամնաբույժների 5%-ը, իսկ բժիշկների՝ 3%-ը հայեր էին: Այժմ բժշկության ոլորտում ունենք նահանջ»[268]:

«Ալիք» թերթի խմբագիր Դ. Մելիքյանն էլ այս հարցի կապակցությամբ գտնում է, որ պետական իշխանական համակարգում, այնուամենայնիվ, կան մի շարք սահմանափակումներ ոչ մահմեդականների համար: «Իրանում ազգային-կրոնական փոքրամասնությունների ներգրավվածությունն այն մակարդակում չէ, ինչ մուսուլմաններինը: Անշուշտ, օրենքով սահմանափակումներ չկան, բայց աշխատում են չգրված օրենքները»[269]:

Ակնհայտ է, որ «իրանահայերը մեծ ազդեցություն են ունեցել իրանական մշակույթի վրա. հայերը մշակութային, տնտեսական, տպագրական արվեստի, կինեմատոգրաֆիայի, ճարտարապետության մեջ վճռական դեր են ունեցել, և իրանցիները մեծ երախտագիտությամբ են հիշում նրանց անունները: Բացի այդ, արտադրության մեջ հայերն ունեն գործարաններ, մեքենաշինական ապրանքների արտադրամասեր, ունեն փոխադրական ընկերություններ, որոնք գտնվում են միջազգային

---

268 Հարցազրույց ԻԻՀ Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, նոյեմբերի 3, 2012, Թեհրան, ԻԻՀ:

269 Հարցազրույց ԻԻՀ-ում լույս տեսնող «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանի հետ, նոյեմբերի 1, 2012, Թեհրան, ԻԻՀ:

մակարդակի վրա և այս երկրի մեջ մեծ ներդրում են ունենում: Ունեն ընկերություններ, որոնք զբաղվում են քիմիայի կամ երկրի ընդերքն ուսումասիրելու գործով, որը մեծ աջակցություն է ցուցաբերում երկրի տնտեսական զարգացմանը»[270]:

Հարցազրույցների ընթացքում եկանք այն եզրակացության, որ իրանահայերը իսկապես որոշակի դժվարություններ ունենում են բարձր պետական պաշտոններ ձեռք բերելու ժամանակ: Անշուշտ, դժվար է պնդել, որ այն հիմնականում կապված է կրոնական կամ ազգային պատկանելության հետ. գուցեև հայերը հիմնականում չեն կարողանում դիմագրավել մրցակցությանը: Այս եզրակացության եկել ենք այն պարզ տրամաբանությամբ, որ Իրանում, այնուամենայնիվ, ունենք պրոֆեսորադասախոսական կազմ, ֆիլմարտադրության մեջ՝ նշանավոր գործիչներ, բժիշկներ, անգամ նախարարների օգնականներ ու ռազմական գործիչներ: Եթե անգամ մեկ կամ երկու նման դեպք արձանագրում ենք, ապա, անկասկած, կարելի է փաստել, որ դռները հայության առջև ամբողջովին փակ չեն: Սակայն վստահաբար կարելի է նաև նշել, որ բարձրագույն պաշտոնները՝ նախագահ, նախագահի օգնականներ, նախարարներ, բարձրաստիճան սպա դառնալը անհնար է:

Աշխարհասփյուռ հայկական համայնքներից իրանահայությունը տարբերվում է նրանով, որ ձուլման չի ենթարկվել, պահպանել է իր հոգևոր-մշակութային արժեքները: Նրանց հնարավորություն է տրվել մայրենի լեզվով իրականացնելու դասընթացներ, ունենալու մամուլ, մարզամշակութային միություններ և ակումբներ: Այս հանգամանքը նպաստել է իրանահայության ներփակմանը

[270] Հարցազրույց Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանի հետ, նոյեմբեր 1, 2012, Թեհրան, ԻԻՀ:

և նրանք հիմնականում չեն առնչվել իրանական հզոր մշակույթի հետ: Այս միտումն է՛լ ավելի խորացավ հատկապես Իսլամական հեղափոխությունից հետո, երբ հայությունը իր հիմնական ազատ ժամանակը սկսեց անցկացնել մարզավաններում կամ հայկական ակումբներում:

Ըստ Կ. Խանլարյանի, իրանահայության ինքնակազմակերպման ներկա մոդելը, այլևս արդյունավետ չէ և փոփոխման կարիք ունի: «Մեր համայնքն այնքան է փոքրացել, որ կարիք ունենք համախմբվելու, այլևս մեկ քաղաքական ուժ չի կարող միայնակ գործել: Այդ քաղաքական ուժի զգալի մասը տեղափոխվել է Հայաստան, շատերն էլ արտագաղթել են արևմուտք: Մենք այլախոհների կարիք ունենք, սակայն Իրանում բազմակուսակցական համակարգի սկզբունքը չի աշխատում»[271]:

Կիսելով Կ. Խանլարյանի կարծիքը, գտնում ենք, որ այսօր, առավել քան երբևէ, Իրանում բոլոր քաղաքական հայացքների ներկայացուցիչների միավորման կարիք է զգացվում: Բացի այդ, Իրանի երեք թեմերի միջև համագործակցության առավել խորացման կարիք է նկատվում, որպեսզի առկա խնդիրներին տրվեն համարժեք լուծումներ:

Իրանում մեր կողմից իրականացված դաշտային աշխատանքի ժամանակ այն տպավորությունը ստացանք, որ երեք թեմերը աշխատում են որպես առանձին միավորներ և համախմբվում են միայն Հայ ժողովրդին վերաբերող հիմնախնդիրների ժամանակ, օրինակ՝ հայոց ցեղասպանության տարելիցի և դրան նվիրված միջոցառումների ժամանակ, Արցախին, Ջավախքին կամ սիրիահայությանը վերաբերող խնդիրների դեպքում:

[271] Հարցազրույց ԻԻՀ Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, նոյեմբերի 3, 2012, Թեհրան, ԻԻՀ:

Սակայն, օրինակ, նկատվում է Ատրպատականի թեմի ոչ այնքան ակտիվ մասնակցությունը Ցեղասպանությանը նվիրված միջոցառումներին: Սա բնավ չի նշանակում, որ այնտեղ պակաս ուշադրություն են դարձնում խնդրին, պարզապես Ատրպատականում առկա թյուրքախոս տարրի գերակա լինելու հանգամանքը ամենօրյա վտանգ է ներկայացնում ինչպես Ատրպատականի Առաջնորդարանի, նրա սպասավորների, այնպես էլ փոքրաթիվ հայ համայնքի համար: Այդ իսկ պատճառով, Ցեղասպանության կամ Արցախյան գոյամարտին նվիրված ոգեկոչման կամ հաղթանակի տոները հաճախ չեն իրականացվում Ատրպատականում հենց այդ օրերին կամ իրականացվում են առանց ավելորդ աղմուկի, քանզի այդ օրերիմասին տեղյակ է նաև թյուրքախոս հանրությունը, ովքեր հաճախ իրականացնում են սադրանքներ և բռնարարքներ:

Երեք թեմերի առաջնորդներն էլ, անշուշտ, իրականացնում են մեծ և անուրանալի աշխատանք, որպեսզի լուծեն համայնքի առջև կանգնած ամենօրյա խնդիրները: Եվ ինչպես նշում է Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ սրբազանը. Իրանում հայերի «հիմնական խնդիրը կրթական կյանքն է, որի հետ կապված մենք դժվարություններ ունենում ենք. պետությունը երբեմն մեզ աջակցում է, երբեմն՝ ոչ, երբեմն դժվարությունները այդպես էլ մնում են դժվարություններ՝ հակառակ մեր բազմաթիվ դիմումներին: Արտաքնապես բարյացակամություն են ցույց տալիս, սակայն ներքուստ չէի ասի, թե հատուկ քաղաքականություն կա չդյուրացնելու մեր վիճակը, բայց այդպիսի տպավորություն է ստեղծվում[272]»: Այս խնդիրները թերևս առկա են երեք թեմերում էլ: Հատկանշական է, որ իրանահայ համայնքը այսքան տարիներ ապրելով Իրանում,

[272] Հարցազրույց Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանի հետ, նոյեմբեր 1, 2012, Թեհրան, ԻԻՀ:

ինքնապահպանման, չձուլման մեխանիզմ է մշակել, որով առանձնանալով, այս տարիների ընթացքում փորձել է չխառնվել երկրի մշակութային գործընթացներին, ինչպես նաև խստագույնս արգելվել է հայի և այլազգու, և այլակրոն ներկայացուցչի ամուսնությունը, որը թերևս ամենակարևոր հանգամանքն է:

Ցանկանում ենք այս առումով մեջբերել իրանահայ քաղաքական և մշակութային մի քանի ներկայացուցիչների կարծիքը, որոնք մեր կողմից ենթարկվել են հարցախույզի: Հնչեցված հարցը թերևս շատ պարզ և տրամաբանական կինչեր ինչպես Եվրոպայի, այնպես էլ ԱՄՆ-ի հայ համայնքներում: Սակայն Իրանում բավական կոշտ արձագանք կա այդ երևույթի նկատմամբ: Հատկանշական է, որ անգամ Թուրքիայում և արաբական մի շարք երկրներում հայերը ամուսնանում են այլազգիի հետ, բայց ոչ Իրանում: Հարցվածների 99%-ը միջին տարիքից բարձր տղամարդիկ էին, որոնց 100%-ը տվել են բացասական պատասխան հնչեցված հարցին:

Հարցը հետևյալն էր. «Ինչպիսի՞ վերաբերմունք է դրսևորում համայնքը հայի և այլ ազգի ներկայացուցչի ամուսնությանը: Արդյոք այդ անհատը կարո՞ղ է շարունակել մնալ համայնքի անդամ»:

Սեպուհ արք. Սարգսյան (Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ)

-Եթե իսլամադավան է, ապա ո՛չ: Եթե քրիստոնյա է, ապա կախված է անհատից, եթե ուժեղ լինի և կարողանա բերել մեր համայնք, ապա կընդգրվի համայնքում, եթե ոչ, ապա կգնա ու կխառնվի այլոց:

Բաբկեն եպիսկոպոս Չարյան (Սպահանի Հայոց թեմի առաջնորդ)

-Դժբախտաբար կամ բարեբախտաբար՝ ոչ: Մահմեդականի հետ ամուսնացողը կվտարվի համայնքից:

Գրիգոր Ծ.Վրդ.Չիֆթճյան (Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ)

- Հազուադէպ պատահած երեւոյթ է սա մեր իրականութեան մէջ: Սակայն տուեալ անհատը ամբողջութեամբ մեկուսանում է հայ համայնքից եւ չի՛ կարող նոյնիսկ ազգային կառոյց համարուող տարածքներից ներս մտնել:

Կարեն Խանլարյան (ԻԻՀ Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր)

-Որպես օրենք՝ այդպիսի բան չկա, բայց ավանդույթի ուժը բավական մեծ է, համայնքը չի հանդուրժում խառնամուսնությունները: Թեև ես ունեմ իմ անձնական պատկերացումները այս հարցի հետ կապված: Ես կարծում եմ՝ խառնամուսնությունները ցանկալի բան չեն, և 30 տարի առաջ ես ինքս էլ բավական կոշտ վերաբերմունք ունեի հարցին, բայց այժմ հասկանում եմ, որ երբ մենք կտրում ենք այդ մարդկանց մեր համայնքից, մենք կորցնում ենք նրանց ընդմիշտ:

Ռոբերտ Բեգլարյան (ԻԻՀ Մեջլիսում Հարավային իրանահայության պատգամավոր)

-Ընդհանրապես ոչ:

Դերենիկ Մելիքյան («Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր)

-Իրանահայության դեպքում կարող եմ միանշանակ ասել՝ ոչ: Նմանները ընտանիքից միանշանակ վտարվում են:

Անձնական զրույցներից էլ պարզ էր դառնում, որ նման ամուսնություններ եղել են, սակայն անհատը վտարվել է համայնքից: Բայց խնդիրը միայն այդ անհատը չէ, այլ նրանից ծնված ժառանգները, որոնք կրկին չեն ընդունվում մեր համայնքի կողմից, և ըստ Կ. Խանլարյանի «մահմեդականները ևս լավ չեն վերաբերվում այլ կրոնի ներկայացուցչի հետ ամուսնությանը: Երեխաները այլևս չեն ընդունվում մեր համայքի կողմից, հետագայում այդ երեխաները ունենում են խնդիրներ թե՛ էթնիկ

պատկանելության, թե՛ կրոնական զգացողությունների առումով, նրանք նաև դժվարությամբ են ամուսնանում: Այսինքն, ստացվում են լքված ընտանիքներ, որոնք հաճախ դատապարտված են լինում քայքայման: Կարծում եմ, այս խնդրի նկատմամբ պետք է հոգածություն ցուցաբերի հատկապես եկեղեցին»[273]: Անշուշտ, ընտանիքի քայքայումը չի երաշխավորում, որ այդ անհատը այդուհետ կվերաինտեգրվի համայնքին:

Հետաքրքական մի փաստ ևս. իրանահայությունը իր մշակութային նկարագիրը պահելու համար աշխատում է խորամուխ չլինել իրանական կամ դրան վերաբերող մշակույթին: 2012թ. նեյեմբերին Իրան այցելելու նախօրեին մի քանի ֆիլմ էի դիտել, և գտնվում էի այդ ֆիլմերի ազդեցության տակ՝ «Ամուսնալուծություն», «Երկու կանայք», «Իմ վատ երազը» կարճամետրաժ ֆիլմը, «Վաճառքի հանված իմ Թեհրանը», «Սորայայի քարկոծումը» և այլն: Իմ հետաքրքրության համար փորձում էի ճշտել իրանահայերի վերաբերմունքը այս ֆիլմերի նկատմամբ: Նրանք փաստում էին, որ տեղյակ չեն այդ ֆիլմերից և բացահայտ ներկայացնում, որ առանձնապես հետաքրքրված էլ չեն իրանական արվեստով կամ ֆիլմարտադրությամբ: Անձնական շփումներից պարզ էր դառնում, որ իրանահայերը, ապրելով այդ երկրում, թերևս իրենց ինքնությունը պահպանելու համար, աշխատում են սահմանափակել իրենց ընկալումները կինոյի, երգարվեստի, թատրոնի նկատմամբ:

Եվ այս առումով Կ. Խանլարյանը փաստում է, որ հայկական «միութենական կյանքը սահմանափակ է, քանզի հիմնված է ամաթորիզմի՝ ոչ արհեստավարժ սիստեմի վրա, որը բացատրելի է նյութական ոչ բավարար ռեսուրսների

[273] Հարցազրույց ԻԻՀ Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, նոյեմբերի 3, 2012, Թեհրան, ԻԻՀ:

առկայությամբ: Եղել են տարիներ, երբ իրանահայ թատրոնը արտադրություն չի ունեցել: Այսօր հենց այդ պահն է, երբ իրանահայ թատրոնը նահանջ է ապրում, իսկ մենք մեր սերունդներին չենք սովորեցրել այցելել պարսկական թատրոն, կինո կամ պարսկական միջավայր ընդհանրապես: Գալիք մեր սերունդը թատրոն նայելու ունակությունը կորցնում է: Երգարվեստը և պարարվեստը համեմատաբար լավ վիճակում են»: Եվ մեր հարցին, թե ինչու են իրանահայերը զգուշավորություն ցուցաբերում իրենց երեխաների՝ պարսկական թատրոն հաճախելուն, իրանական արվեստի ճանաչման գործին, Խանլարյանը մեկնաբանեց. «Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթից 400 տարի հետո իրանահայերի մոտ ձևավորվել է ազգային նկարագրի պահպանման մեխանիզմ՝ մենք ունենք ներամփոփ կյանք, իհարկե հաճախ այն անբավարար է, սակայն դրանով իսկ պահում ենք ազգային դիմագիծը: Սա գործել է 100-ավոր տարիներ, սակայն այժմ, հաղորդակցական միջոցների զարգացմանը զուգընթաց, այլևս փակ հասարակությունները չեն գործում: Եթե 30 տարի առաջ պարսկական թատրոնը հայկական թատրոնին էապես զիջում էր, ապա այսօր փոխվել են տեղերով: Էլ չենք խոսում կինեոմատոգրաֆիայի մասին: Մենք առայժմ պահում ենք մեր գերակայությունը երգարվեստում և պարարվեստում, բայց այդ ոլորտն էլ պետք է բաց լինի: Գրականության ոլորտն էլ մեծապես կարիք ունի բաց համակարգի, քանզի մեր երեխաները պարսկերենով վեպեր չեն կարդում: Սա, անշուշտ, վատ է»[274]:

Անշուշտ, Իրանի Իսլամական Հանրապետությունը ինչքան էլ բարենպաստ պայմաններ է ստեղծում ոչ մահմեդական բնակչության համար, այնուամենայնիվ, իսլամական օրենքները թելադրում են որոշակի

[274] Նույն տեղում:

սահմանափակումներ ոչ մահմեդականների համար: Դրանցից մեջբերենք ամենաակնառուները.

Ա) Զբաղվածություն. Կան սահմանափակումներ որոշակի աշխատանքների նկատմամբ: Օրինակ, ոչ մահմեդականը չի կարող լինել դատավոր, չի կարող աշխատել ռազմական ուժերում, չի կարող դառնալ նախարար կամ աշխատել նախագահի աշխատակազմում:

Բ) Ժառանգություն. Ոչ մահմեդականը չի կարող ժառանգություն ստանալ մահմեդականից, և եթե ոչ մահմեդականների ընտանիքում մեկը դարձել է մահմեդական, ապա մյուս ոչ մահմեդականները զրկվում են ժառանգության իրավունքից:

Գ) Քրեական օրենքները տարբերակում են դնում մահմեդականի և ոչ մահմեդականների միջև: Օրինակ, արյան գնի վճարումը հանցագործության դեպքում: Այնուամենայնիվ, դատարանները փորձում են գտնել ուղիներ փոխհատուցման համար, իր տեսակի մեջ հավասարության և արդարության միջև:

Դ) Իսլամական օրենքներով վկան պետք լինի մուսուլման: Այդ օրենքը արտացոլվում է ընթացակարգային օրենքների վրա, այստեղից հետևություն կարող ենք անել, որ ոչ մահմեդականի տված վկայությունը կարող է չընդունվել որպես հիմք՝ դատական գործընթացների ժամանակ[275]:

2013թ. ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի կառավարությանն առընթեր ստեղծեց կրոնական, ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող բաժին: Ակնհայտորեն նկատվում է, որ իրանական որոշ թերթեր փորձում են շաբաթական մեկ անգամ անդրադառնալ

[275] H. Khaloian, The Armenian diaspora in Iran, Армения-Иран, История. Культура. Современные перспективы взаимодействий, МГУ им. М.В. Ломоносова, Институт стран Азии и Африки, Москва, 2013, pp. 145-146.

հայերին, որտեղ խոսվում է հայերի պատմության, անցյալի մասին:

Իրանի հայ առաքելական եկեղեցին ունի երեք թեմ. Թեհրանի կամ Կենտրոնական, որն ամենաերիտասարդն է, սակայն ամենաբազմամարդը, Սպահանի և Հարավային Իրանի թեմ, Ատրպատականի թեմ: 1958-ին բոլոր երեք թեմերն անջատվեցին Մայր աթոռ Ս. Էջմիածնից և անցան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գերակայության ներքո:

Այսպիսով, իրանահայերը փորձելով խուսափել ուծացումից, վարում են ներփակ հասարակությանը բնորոշ գործելաոճ, այն է.

- Մերժում են խառնամուսնությունները, ի դեպ, դա վերաբերում է նաև այլազգի քրիստոնյաներին ևս: Օրինակ, Ատրպատականի շրջանում կան նաև ասորիներ, սակայն նրանց հետ ամուսնությունը ևս չի խրախուսվում: Իսկ մահմեդականների հետ ընդհանրապես բացառվում է:
- Իրանի երեք թեմերում էլ կան մարզամշակութային միություններ, որտեղ էլ իրականացվում է հոգևոր և մշակութային «սննդի» ձեռքբերումը:
- Երեք թեմերում էլ կան բավարար թվով եկեղեցիներ, որտեղ հայությունը հաճախում է՝ չհանդիպելով խոչընդոտների:
- Իրանահայերն ունեն մայրենի լեզվով կրթություն իրականացնելու, թերթեր տպագրելու, գրքեր հրատարակելու իրավունք:
- Իրանահայությունը ուծացման վտանգից խուսափելու համար, առավելապես ապավինում է թեկուզև որակապես զիջող իրանահայ մշակութային խմբերի և արվեստի նմուշներին, քան իրանական մշակութային արժեքներին:

- Իրանահայության համար «թարմ թթվածնի» էֆեկտ են ունենում Հայաստանից ժամանող մշակութային, գիտական խմբերը, որոնք ներկայացնում են որակապես այլ արժեք, սակայն իրանահայության համար խնդրահարույց է, որ այդ խմբերի այցերը, խոսքը վերաբերում է մշակութային խմբերին, հիմնականում կրում են բիզնես ծրագրերի որակներ:
- Իրանահայերը մեծապես ցանկանում են իրենց մշակութային խմբերի կատարելագործումը տեսնել Հայաստանում, սակայն հաճախ հանդիպում են տարբեր տեսակի խոչընդոտների:

Ամփոփելով՝ կարելի է ներկայացնել իրանահայության ընդհանուր խնդիրները, որ այսօր առկա են.

1. Իրանահայության ամենամեծ խնդիրը, թերևս, արտագաղթն է, որն ամեն տարի կրում է առավել մեծ չափեր, և ցավոք, ո՛չ համայնքը, ո՛չ Առաջնորդարանը, ո՛չ էլ պետությունը չունեն մշակված մեխանիզմներ՝ այդ արտահոսքը կանխելու համար:
2. Ցավոք, ո՛չ համայնքը, ո՛չ Առաջնորդարանը չունեն լծակներ, որոնցով կկարողանային ուղղորդել իրանահայությանը՝ արտագաղթելու դեպքում գոնե հանգրվանել հայրենիքում՝ Հայաստանում:
3. Այսօր իրանահայության խիստ նվազման պարագայում, առավել քան երբևէ, նկատվում է Իրանի երեք համայնքների միավորման, անհրաժեշտություն և իրենց հուզող խնդիրները, ոչ թե առանձին առանձին լուծելու, այլ միասնական ճակատով աշխատելու անհրաժեշտություն:
4. Թեև իրանահայ համայնքում գործող միակ կուսակցությունը Հայ հեղափոխական դաշնակցությունն է, և թեև նրանք արդեն համայնքային գործերի մեջ ներգրավում են ոչ միայն կուսակցականներին և իրենց համակիրներին, այլև տեղ են տալիս

անկուսակցականներին, սակայն կարծում եմ, որ համայնքային գործերից դուրս չպետք է համարվեն այն հայորդիները, ովքեր նկատել կամ գիտակցել են նույն կուսակցության մեջ առկա խնդիրները: Քանզի չկա այլընտրանքային կուսակցություն, որը կստիպի ՀՅԴ-ին առավել ակտիվ աշխատել, և այդպիսի անհատների առողջ քննադատությունն ու ուշադրությունը կարող են օգտակար լինել հենց կուսակցության համար:

5. Կան խնդիրներ նաև հայկական դպրոցների հետ կապված: Իրականում այդ դպրոցներն այնքանով են հայկական, որ այնտեղ անցնում են հայագիտական մեկ-երկու առարկա: Արդյունքում, արևելահայերենի դասական ուղղագրությամբ սովորած աշակերտը «մրցունակ» չէ Հայաստանում: Միևնույն ժամանակ, պարսկերենով դասավանդվող մյուս առարկաները ուսուցանելու համար լավագույն ուսուցիչները չեն գործուղվում հայկական դպրոցվներ: Եվ աշակերտներն ավարտելով դպրոցը հիմնականում չեն կարողանում ընդունվել համալսարան, քանի որ մրցունակ չեն:

4/2.Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Իրանը հայտարարեց իր չեզոքության մասին[276], սակայն դա

[276] Հարկ ենք համարում մեջբերել չեզոքության պայմանագրից որոշ հատվածներ. «Ներկա պահին, երբ, ցավոք սրտի, պատերազմ է ընթանում եվրոպական տերությունների միջև, շահական կառավարությունը վճռեց հայտարարել իր չեզոքության մասին, կանխելու նպատակով այն դեպքերը, որոնք կարող են հանգեցնել բախման Պարսկաստանի տարածքում»: ... «Ավարտելով՝ պարտքս եմ համարում Ձեր ուշադրությունը բևեռել այն հանգամանքի վրա, որ թուրքական դեսպանը կտրականապես հայտարարել է, թե Պարսկաստանի չեզոքության հայտարարման պարագայում, թուրքական

չկանգնեցրեց թուրքերին, որոնք արդեն պատերազմի սկզբին ներթափանցեցին Իրանի հյուսիսային շրջաններ, մասնավորապես՝ Ատրպատական[277], որտեղ էլ թուրքական և ռուսական զորքերի միջև տեղի ունեցան պատերազմական գործողություններ[278]: Ներխուժելով

կառավարությունը այդպիսի չեզոքությունը կհարգի ամբողջությամբ»: Международные отношения в эпоху империализма (в дальнейшем МО). Документы из архивов царского и временного правительств 1878-1917гг., серия III, том VI, часть 1, Москва-Ленинград, 1935, с. 368, N 360. Ի դեպ, պարսիկները չեզոքության հայտարությամբ հետապնդում էին ևս մեկ նպատակ. նրանք ցանկանում էին միևնույն ժամանակ իրենց տարածքից դուրս քերել ռուսական զորքերը, մատնանշելով, որ հակառակ պարագայում Թուրքիան չի ճանաչի Պարսկաստանի չեզոքության փաստը և կդիմի ռազմական գործողությունների:

[277] 1914թ. հոկտեմբերի 23/10-ին Սազոնովը հեռագրով (թվագրված N3432 համարով) Վորոնցով-Դաշկովին ներկայացնում է. «Ուրմիայից մեր ջոկատների հեռանալուց անմիջապես հետո, սկսվեցին Թուրքիայի քրդերի ասպատակությունները...» МО. Документы из архивов царского и временного правительств 1878-1917гг., сер. III, т. VI, ч. 1, с. 421, N 409. Հարկ է նշել, որ Թուրքիան միայն հոկտեմբերի 29-ին հայտարարեց պատերազմի մեջ մտնելու մասին: Իսկ 1914թ. դեկտեմբերի 16/3-ին թուրքերն արդեն անթաքույց էին գործում... «Պարսկական կառավարությունն արդեն բողոք է ներկայացրել թուրքական դեսպանին Սոուջբուլաղի զբաղեցման կապակցությամբ»: МО., сер. III, т. VI, ч. 2, с. 221, N 653. Իսկ 1914թ. դեկտեմբերի 30-ի (1915թ. հունվարի 12) դրությամբ թուրքերը արդեն գրավել էին Թավրիզը: МО. сер. III, т. VII, ч.1, с. 9, N 6.

[278] 1914թ. նոյեմբերի 6-ին (հոկտեմբերի 24-ին) Սազոնովը հեռագրում է. «Հաշվի առնելով, որ մեր կողմից անհնար է խուսափել ռազմական գործողություններից Ատրպատականում ընդդեմ թուրքերի, մեր կամքին հակառակ ստիպված ենք բարեպատեհ իրավիճակ ստեղծելու համար դիմել այս կամ այն միջոցների...»: МО., сер. III, т. VI, ч. 2, с. 31, N 470. Այդ միջոցների թվին էր պատկանում նաև Ատրպատականում գործող գերմանական, ավստրիական և թուրքական հյուպատոսների և վտանգ ներկայացնող հպատակների ձերբակալումը: Հետաքրքրական էին թուրք դեսպանի պարզաբանումները Պարսկաստանի տարածքների բռնազավթման վերաբերյալ, որտեղ նա բացատրություններ է տալիս իրենց գործողությունների կապակցությամբ. «Թուրքական զորքերը մտել

Ատրպատական՝ թուրքերը հաշվեհարդար տեսան տեղի քրիստոնյա բնակչության հետ: Թուրքական ռազմական դատարանի վճռով գլխատվեցին մի քանի հայեր... առավել շատ մարդիկ սպանվեցին առանց դատի[279]:

Այս փաստերն էլ հենց հերքում են թուրքական պատմագրության այն կեղծ վարկածը, թե «հայերի տեղահանումները Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ պետական անհրաժեշտություն էին»[280] և այն իրականացվել է իրենց բնակչությանը առավել անվտանգ վայրեր տեղափոխելու նպատակով, և ոչինչ ծրագրված չի եղել: Միևնույն ժամանակ, «Իրանի չեզոքություն» աշխատության մեջ հանդիպում ենք ուշագրավ մի փաստի, որտեղ մատնանշվում է, որ. «Թուրքական զորքերի ռազմական գործողությունների ծրագիրը, ներխուժումը Կովկաս և Իրան, մշակվել էր Էնվեր փաշայի և գերմանական գլխավոր շտաբի համատեղ ուժերով, դեռևս մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը: Այդ ծրագիրը իր մեջ ներառում էր ամբողջ Այսրկովկասի, Հյուսիսային Իրանի, Այսրկասպյան շրջանների և Միջին Ասիայի զավթումը, ինչպես նաև նախատեսում էր Իրանի, Աֆղանստանի և հյուսիս-արևմտյան Հնդկաստանի ներքաշումը պատերազմի մեջ: Չնայած պատերազմի նախապատրաստմանը, թուրքական կառավարությունը բազմիցս վստահեցրել է Իրանի կառավարությանը չեզոքության պահպանման մեջ»[281]:

են Պարսկաստան ոչ թե նրա տարածքը զբաղեցնելու, այլ այդ շրջանից ռուսներին վտարելու համար»: МО., сер. III, т. VI, ч. 2, с. 311-312, N 723. Անշուշտ, այս բացատրությանը անվերապահորեն հավատալն անհեթեթ կլիներ:

279 Вопросы Истории, 1, 1948, с. 93.

280 Uras Esat, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950, s. 616-617

281 "Нейтралитет Ирана", Тегеран, 1918, док. N 1-4, Краткие сообщения института востоковедения, XIX, Москва, 1956, с. 17.

Պարսիկ ուսումնասիրողները այն կարծիքին են, որ հայերի զանգվածային ոչնչացման ծրագիրը երիտթուրքական ղեկավարների կողմից մշակված էր դեռևս մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, ավելի ստույգ՝ Բալկանյան պատերազմից անմիջապես հետո[282]:

Մի շարք պարսիկ պատմաբաններ անդրադարձել են Հայոց մեծ եղեռնին: Այսպես, Իսմայիլ Ռայինը «Հայերի կոտորածները»[283], Սեիդ Մոհամմեդ Ալի Ջեմալզադեն՝ «Իմ անձնական խորհրդածություններն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»[284], Ռեզա Ալի Դիվան բեկը՝ «Հուշեր մանկական կյանքից» աշխատություններում, անկողմնակալ և անաչառ մոտեցմամբ ներկայացնում են Հայոց ցեղասպանության իրողությունը:

Իսմայիլ Ռայինի «Հայերի կոտորածները» աշխատությունը գրվել է արխիվային մի շարք նյութերի և հուշերի հիման վրա: Այն տպագրվել է պարսկերենով՝ 1972թ., և հաջորդ 4 տարիների ընթացքում գիրքը վերահրատարակվել է 6 անգամ: Ըստ երևույթին, հեղինակը հարկադրված է եղել գրքի լույս ընծայման հետ կապված բազմաթիվ դժվարություններ հաղթահարել, ինչը բացատրում ենք այն հանգամանքով, որ հեղինակը թե՛ նախաբանում, և թե՛ գրքի տարբեր գլուխներում կրկնում է այն միտքը, որ մտադիր չի եղել վարկաբեկել թուրք ժողովրդին և Թուրքիայի ներկայիս վարչակարգը: Սակայն, այս ամենով հանդերձ, նա մատնանշում է, որ 1860 թվականից մինչև 1922թ. ընկած շրջանում թուրքական

---

282 Վ. Բայբուրդյան, Պարսիկ պատմաբանները Հայոց ցեղասպանության մասին, Միհր, Երևան, 2005, 2(53), էջ 29:

283 Իսմայիլ Ռային, «Հայերի կոտորածները» Երևան, 1999:

284 Հ. Հ. Մովսիսյան «Պարսիկ անվանի գրողը հայկական ցեղասպանության մասին», Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, թիվ 2:

յաթաղանի զոհ է դարձել 2.377 հազար մարդ, որի ճնշող մեծամասնությունը՝ 2 մլն., հայեր էին: Սակայն ըստ բազմաթիվ աղբյուրների և վկայությունների՝ իրական թիվը ավելի մեծ է[285]:

Հայոց ցեղասպանությանն է անդրադարձել նաև 20-րդ դարի ռեալիստական գրականության հիմնադիրներից մեկը՝ նշանավոր արձակագիր-նովելիստ Մոհամմադ Ալի Ջամալզադեն: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նա գտնվում էր Բեռլինում, և մի առիթով գործուղման է մեկնում Բաղդադ, ուր հասնելու համար պետք է անցներ Թուրքիայով, և ակամա ականատես է լինում թուրք ժանդարմների կողմից հայերի նկատմամբ գազանաբար կատարված խոշտանգումների ու սպանությունների տեսարաններին, որոնց մասին նա հետագայում ժնևից գրություններ է ուղարկում Թեհրանում լույս տեսնող «Հուր» ամսագրին: Այդ հոդվածը տպագրվում է ամսագրի 1971թ. 2-րդ համարում: Ջամալզադեն նշում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան հավակնություններ ուներ նաև Իրանի արևմտյան նահանգների, հատկապես՝ Ատրպատականի նկատմամբ: Այնուհետև մանրամասն նկարագրում է իր տեսած ոճրագործությունները՝ որևէ լուրջ քննադատության չենթարկելով սակայն թուրքական կառավարությանը: Միայն հոդվածի վերջում, այն էլ ոմն շվեդ սպայի անունից, մատնանշում է, որ դա իսկական բնաջնջում էր: Մի ծերունի մոտեցավ շվեդ երկու սպաների և ֆրանսերենով ասաց. «Տե՛ր Աստված, ե՞րբ պիտի վերջանա այս արյունահեղ պատերազմը»: Սպաներից մեկը պատասխանեց. «Սա ոչ թե պատերազմ, այլ բնաջնջում և արմատախիլ ոչնչացում է»[286]:

[285] Իսմայիլ Ռային, Հայերի կոտորածները, էջ 3, 58-59:

[286] Հ. Հ. Մովսիսյան, «Պարսիկ անվանի գրողը հայկական ցեղասպանության մասին», Պատմա-բանասիրական հանդես, էջ 233:

Առաջին համաշխարհային պատերազմը իր ծանր հետևանքներն է թողել նաև իրանահայության վրա: 1918թ. թուրքական զորքերը, մտնելով Ատրպատական, կոտորել են զգալի թվով հայերի, ավերել բազմաթիվ հայկական գյուղեր: Արևմտյան Հայաստանից մազապուրծ եղած հայերի մի զգալի մասը հանգրվան գտավ Իրանի տարածքում: Շուտով Իրանում ստեղծվեց «Պարսկական խորհուրդ», որը համարվում էր պարսկահայության բարձրագույն մարմինը: Հիրավի, այդ խորհուրդը փրկարար դեր կատարեց վտանգված վայրերի հայ ազգաբնակչության համար[287]: «Պարսկական խորհուրդ» իր դիմումներով հասավ այն բանին, որ Իրանի կառավարությունը պաշտպանություն խոստացավ ինչպես իր քաղաքացիներին, այնպես էլ երկրի սահմանն անցած և իր տարածքում ապաստան գտած արևմտահայությանը:

Իրանահայության թիվը Եղեռնից հետո զգալիորեն մեծացավ՝ ի հաշիվ արևմտահայության: Իրանը ոչ միայն պաշտպանեց, այլև օժանդակեց հայությանը՝ տալով նրանց անձի և գույքի ապահովության երաշխիքներ:

Մեջլիսում իրենց ներկայացուցիչը ունենալու իրավունքը հայերը ստացել էին դեռևս 1905-1911թթ. Սահմանադրական հեղափոխության ժամանակ, սակայն 1915թ. հետո գաղութի հայ բնակչության ստվարացման հետևանքով տրվեց նաև պատգամավորական երկրորդ տեղը:

Տարիներ շարունակ հայ պատգամավորները ապրիլի 24-ի կապակցությամբ մեջլիսում պարբերաբար ունենում են ցեղասպանության վերաբերյալ ելույթներ: Եվ ամեն տարի նրանց ելույթները ձայնասփռվում են Թեհրանի FM ռադիոկայանից:

[287] Վ. Բայբուրդյան, Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 291:

Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում կան Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք հուշարձաններ, որոնք գտնվում են առաքելական եկեղեցիների կամ հայկական մարզամշակութային միությունների բակերում: Հիշարժան են հատկապես Աբադանի, Ահվազի, Սպահանի, Թեհրանի և Ուրմիայի շրջաններում գտնվող հուշարձանները, ուր ամեն տարի հազարավոր հայեր են այցելում՝ խոնարհվելու Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին[288]:

Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ Իրանի կառավարությունը, որպես կանոն, չի խոչընդոտում ինչպես մեջլիսում ցեղասպանության հարցով ելույթ ունեցող հայ պատգամավորներին, այնպես էլ յուրաքանչյուր տարի այդ նպատակով քաղաքապետարանի սահմանած երթուղով խաղաղ երթ կազմակերպող հայերին: Իրանում տպագրվում են մեկ տասնյակի հասնող հայկական պարբերականներ, որոնց էջերը հատկապես ապրիլին ողողված են լինում ցեղասպանության թեմաներով:

Այս ամենի հիմքը թերևս դրվեց հենց Իսլամական հեղափոխության նախաշեմին, երբ հեղափոխության առաջնորդ իմամ Խոմեյնին հստակ ընդգծեց իր վերաբերմունքը հայության նկատմամբ, ովքեր Հեղափոխության առաջին ամիսներին, վախենալով Իրանում իսլամի զարթոնքից, հեռացել էին երկրից՝ հանգրվան գտնելով Լիբանանում: Իմամ Խոմեյնին Մուստաֆա Չամրանի[289] միջոցով հաղորդեց բանակցությունների կողմ հանդիսացող Ն. Հովհաննիսյանին, որ «Իրանն այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի նոր

[288] А.З. Арабаджян, Армяне в Иране, Москва, 2002, стр. 104.

[289] Մուստաֆա Չամրանը Իսլամական հեղափոխությունից հետո զբաղեցրել է փոխվարչապետի, Իսլամական պահապան խորհրդի հրամանատարի, պաշտպանության նախարարի պաշտոնները:

ցեղասպանություն կազմակերպեն: Հայերը մեր եղբայրներն են»[290]: Մուստաֆա Չամրանը հավաստիացրել է, որ հայերը ոչ մի հիմք չունեն լքելու Իրանը, և որ նրանք կարող են ապահով վերադառնալ Իրան՝ իրենց տները, և շարունակել իրենց աշխատանքները[291]: Այս հաղորդումները թերևս ցրեցին իրանահայության վախերը և նրանց մի մասը վերադարձավ Իրան:

Իրանական, թուրքական և ԱՊՀ մի քանի երկրների մամուլը սուր արձագանքեցին 2000թ. ԻԻՀ մեջլիսի օրակարգում Հայոց ցեղասպանության հարցը մտցնելու հնարավորությանը: Այդ առիթով դեկտեմբերի 4-ին ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Համիդռեզա Ասեֆին լրագրողների հետ հարցազրույցի ընթացքում քննարկեց Հայոց ցեղասպանության խնդիրը: Լրագրողների հարցին, թե մեջլիսը որոշել է օրակարգ մտցնել Հայոց ցեղասպանության հարցը, նա պատասխանեց. «Մեջլիսը անկախ օրենսդիր մարմին է և կարող է ընդունել ցանկացած որոշում»[292]: Սակայն հետագայում սույն հարցի վերաբերյալ էական զարգացումներ տեղի չունեցան:

2004թ. ապրիլին ուշագրավ դեպք արձանագրվեց Իրանում: Համաձայն «Ալիք» օրաթերթի հրապարակումների, Թեհրանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում Մեծ եղեռնի նոր հուշարձանի բացումից հետո «մի խումբ խափանարարներ փորձեցին եկեղեցու

[290] Ն. Հովհաննիսյան, Այաթոլլահ Խոմեյնիի մոտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի ու հայության հանդեպ, Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 74-75:

[291] Նույն տեղում:

[292] ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ցուցակ 6, գործ N 67:

մօտակայքում գտնուող փողոցում խլրտումներ առաջացնելով՝ խանգարել համահաւաքը, սակայն հայ կարգապահ ուժերը եւ պահանջատէր երիտասարդները թոյլ չտուեցին, որ որեւէ խանգարում առաջանայ տեղի ունեցող ժողովրդական համահաւաքում:

Նշելի է, որ նոյն տարրերը քանի օր առաջ եւս փորձել էին յարձակելով Սբ. Սարգիս եկեղեցու շրջափակի վրայ՝ հրդեհի մատնել Մեծ Եղեռնին նուիրած ցուցահանդէսը եւ շրջապատում տեղադրուած ցուցանակները եւ բախումներ առաջացնել շրջապատում գտնուող հայ երիտասարդների հետ»[293]:

Հարկ է մեջ բերել նաև իրանական մամուլի անդրադարձը սույն հարցի կապակցությամբ: 2004թ. ապրիլի 25-ի «Համբասթեգի», «Շարդ», «Իրան», «Վաղայէէ էթթեֆաղիէ» և «Համշահրի» թերթերը, գլխավորապես առաջին էջերում անդրադարձել էին Հայոց ցեղասպանության 89-րդ ամյակի առթիվ Սբ. Սարգիս եկեղեցու բակում թեհրանահայության համահավաքին:

Վերոհիշյալ օրաթերթերը մատնանշում են, որ «Թեհրանահայերը նախաձեռնել էին քայլարշավ դեպի Թուրքիայի դեսպանատուն, որը, սակայն, չի թույլատրվել Ներքին գործերի նախարարության կողմից: Վերջինս ցույցի արտոնություն էր տվել դեպի հյուսիսային պողոտաներ, որը, սակայն, մերժվել էր Թեհրանի հայոց թեմի կողմից»[294]: Ի դեպ, Թեհրանի հյուսիսային հատվածում գտնվում է ՄԱԿ-ի գրասենյակը:

---

[293] Հազարաւոր թեհրանահայեր Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում քաղաքական համահաւաքի խրոխտ կեցուածքով իրենց բողոքի ձայնը միացրեցին համայն հայութեան պահանջատիրութեան, http://www.alikonline.com/files/2004/apr/25/25A01.htm

[294] Պարսկերեն մամուլի անդրադարձ http://www.alikonline.com/files/2004/apr/25/25A06.htm

2004թ. աշնանը ԻԻՀ նախագահ Սեյեդ Մուհամմեդ Խաթամիի՝ Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում ԻԻՀ նախագահը սեպտեմբերի 9-ին այցելեց Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու եղեռնի զոհերի հիշատակին: Սակայն նա որևէ կերպ չորակեց Թուրքիայի տարածքում 1915թ. տեղի ունեցած ոճրագործությունը ո՛չ բանավոր, ո՛չ էլ առավել ևս, գրավոր կերպով: Ցեղասպանության թանգարանի տնօրենը նրան նվիրեց 1915թ. Մեծ եղեռնի զոհերի մասին մի աշխատություն, Հայաստանի քարտեզը, «Սասունցի Դավիթ» էպոսը և Արարատ լեռան լուսանկարների մի այլբոմ: ԻԻՀ նախագահը հետաքրքրվեց, թե ինչ են խորհրդանշում Ծիծեռնակաբերդ համալիրի հուշակոթողները:

Մենք որոշակի վերապահումով ենք մոտենում ԻԻՀ-ում ՀՀ նախկին դեսպան Գ. Ղարիբջանյանի՝ «Հայլուրով» հայտնած այն կարծիքին, թե Խաթամիի այցը Ծիծեռնակաբերդ «ապացուցում է, որ ԻԻՀ-ում հստակ վերաբերմունք կա այս խնդրի նկատմամբ»: Մենք առավել հակված ենք այն դիտարկմանը, որ Մոհամմեդ Խաթամիի այցը Մեծ եղեռնի հուշարձան Հայաստանի Հանրապետության արտաքին գերատեսչության արարողակարգի բաղկացուցիչ մասն էր: Չնայած չենք կարող նաև բացառել այն հանգամանքը, որ Իրանի պես հզոր երկրի նախագահը կարող էր պարզապես չայցելել Ծիծեռնակաբերդ, և ՀՀ-ն որևէ կերպ չէր կարող առարկել՝ ելնելով երկու երկրների բարիդրացիական հարաբերություններից:

Ի դեպ, երբ փորձեցինք ուսումնասիրել ԻԻՀ նախագահի ինթերնեթային կայքը, ի զարմանս մեզ, որևէ ակնարկ անգամ չգտանք Ծիծեռնակաբերդ կատարած նրա

այցի մասին[295]: ԻԻՀ նախագահի ինթերնեթային կայքում ներկայացվում էր Խաթամիի այցը Հայաստան, նրա հանդիպումները ՀՀ նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի հետ, անգամ զետեղված էր ուսանողության հետ հանդիպման փաստը, բայց ոչ մի խոսք չկար Ցեղասպանության հուշարձան այցելելու մասին: Կարելի է նշել, որ Խաթամիի այցը Ծիծեռնակաբերդ միայն ՀՀ ներքին սպառման համար էր նախատեսված:

ԻԻՀ-ի նման մոտեցումը կարելի է բացատրել. Թուրքիա-Իրան լավ հարաբերությունների առկայությամբ, Եվրոպայի հետ Իրանի առևտրի ծավալի զգալի մասի՝ Թուրքիայի տարածքով անցնելու փաստով, ինչպես նաև Իրանում թրքախոս իրանցիների զգալի թվի առկայությամբ: Իրանում նրանց թիվը հաշվվում է մոտ 20 մլն, իսկ համաձայն այլ տվյալների՝ նրանց թիվը աճել է՝ հասնելով 30 միլիոնի[296], որը միանշանակ չի ընդունվում, քանզի սկզբնաղբյուրը ևս հավաստիացնում է ինֆորմացիայի չճշտված լինելու մասին: Բայց եթե մի պահ ընդունենք վերջին թվի հավաստիությունը, միևնույն ժամանակ արձանագրենք, որ Իրանում բնակվում է մոտ 80 մլն մարդ, ապա Իրանի բնակչության գրեթե կեսը պետք է որ թյուրքախոս իրանցիներ լինեն, իսկ հաշվի չառնել այդ թիվը ու նրանց պահանջները՝ առնվազն անհեթեթություն կլիներ: Համաձայն վերոհիշյալ տեղեկատվության «Ազերիները կամ թրքախոս իրանցիները հիմնականում բնակվում են երկրի հյուսիսային նահանգներում, որոշ նահանգներում նրանք կազմում են բնակչության 80-90%-ը»[297]: Բնականաբար, ԻԻՀ

[295] ԻՀԻ նախագահի պաշտոնական կայքէջ, http://www.president.ir

[296] Ադրբեջանական համայնքն Իրանում, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, ցուցակ 5, գործ N 243, # 05-31,12.05.1999թ.:

[297] Նույն տեղում:

նախագահը, երկրի պաշտոնական բոլոր դեմքերը, ինչպես նաև իրանական մամուլը պետք է վեր դասեն սեփական, ազգային շահերը՝ մյուս բոլոր հարցերից: «Իրանում շուրջ 20-25 մլն թրքախոս իրանցիներ են բնակվում, որոնց անտեսել անհնար է,- նշում է «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիրը: Այսօր Իրանում կան և գործում են պանթուրքիստական խմբակցություններ, դրանք տեղակայված են Թավրիզում, Ատրպատականի տարբեր շրջաններում, ինչպես նաև Թեհրանում: Դրանց գոյության մասին տեղեկացված է ինչպես Իրանի կառավարությունը, այնպես էլ մենք: Իրանահայությունը փորձում է իր տեսակետները բարձրացնել և իրանական լսարանին հասցնել ինֆորմացիան՝ անհրաժեշտության դեպքում պարսկերեն գրականությամբ: Չենք խորշում պայքարից, և պետությունն էլ ուղղակի, թե անուղղակի կերպով խրախուսում է մեր պայքարը, չկա պետական այնպիսի ծրագիր, որ իրանահայությանը մինչև վերջ պետք է խեղճացնել, մենք դա չենք զգում:

Եթե աշխարհի որևէ երկիր ընդունում է ցեղասպանության փաստը, կամ ԱՄՆ-ի Կոնգրեսում քննարկվում է Հայոց ցեղասպանության հարցը, իրանական և՛ պետական, և՛ ոչ պետական մամուլը միջազգային լրատվամիջոցներին հավասար ներկայացնում է խնդրի էությունը:

Ցեղասպանության ոգեկոչման միջոցառումների ժամանակ հաճախ ունենում ենք պարսիկ դասախոսների ելույթներ, սակայն դրանց գերակշիռ մեծամասնությունը լինում է փակ շրջանակներում և, առավել ևս, հայկական մամուլում»[298]:

[298] Հարցազրույց ԻԻՀ-ում լույս տեսնող «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանի հետ, նոյեմբերի 1, 2012, Թեհրան, ԻԻՀ:

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանն էլ գտնում է, որ «Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը Իրանի խորհրդարանում, բնականաբար, շատ ճիգ կպահանջի և զգայունություն կառաջացնի, քանի որ խորհրդարանում մեծ թվով ազերիներ էլ կան: Հետևաբար, կառավարությունը, սա նկատի ունենալով՝ ավելի խոհեմ է գտնվում, բայց մյուս կողմից մեր պատգամավորները, ամեն տարի ապրիլի 24-ի առիթով ելույթ են ունենում և այն ընդունվում է որպես քաղաքական ելույթ: Երբ պետությունը մեզ արտոնում է ցույցեր կատարել կամ ոգեկոչել մեր նահատակներին, երբ մասնակցում ենք Հուսքի կազմակերպած միջոցառումներին, ես կարծում եմ՝ դա ինչ որ բան նշանակում է: Իսկ պաշտոնապես ընդունումը, որոշ երկրների դեպքում պետք է հաշվի առնել այդ երկրների ներքին խնդիրները և այս հարցի կապակցությամբ թե՛ Հայաստանը, թե՛ մենք պետք է առավել խոհեմ գտնվենք: Երբ Իրանի պետությունը Հայոց ցեղասպանության կապակցությամբ աշխատանքների մեջ հայտնում է իր զորակցությունը, սակայն, միևնույն ժամանակ պաշտոնապես չի ճանաչում, դա բնավ չի նշանակում որ նրանք իրականում չեն ընդունում Հայոց ցեղասպանության փաստը»[299]:

2005թ. իրանահայությունը բավական ակտիվ նախապատրաստվել էր Մեծ եղեռնի 90-ամյակին: Իրականացրել էին մի շարք միջոցառումներ: Մարտի 9-ին «ԲիԲիՍի» ռադիոյի պարսկական բաժնում լայն արձագանք գտավ Հայոց ցեղասպանության թեման: 2005թ. ապրիլի 14-ին «Ալիք» օրաթերթի ինթերնեթային կայքում տպագրվեց ցեղասպանության 90-ամյակի շրջանակներում Իրանում իրականացվող միջոցառումների ծրագիրը: Առավել

[299] Հարցազրույց Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանի հետ, նոյեմբեր 1, 2012, Թեհրան, ԻԻՀ:

ուշագրավ է իրանահայ գրողների միության կողմից իրականացվող աշխատանքը, այն է՝ տպագրել վերապրողների վկայությունները՝ պարսկերենով: Հայկական հարցերի ուսումնասիրման կենտրոնը ձեռնարկել էր՝ պարսկերենով 30 րոպեանոց վավերագրական ֆիլմի պատրաստում: Արդեն ստեղծել են մոտ 20 ինթերնեթային էջ և՛ անգլերեն, և՛ պարսկերեն ընթերցողի համար[300]: Եվ այս ամենը իրանահայությունը իրականացրեց ողջ տարվա ընթացքում:

Ուշադրության է արժանի նաև Իրանի մամուլի անդրադարձը վերոհիշյալ խնդրին, որն, ի դեպ զետեղված է նաև «Ալիք»-ի ինթերնեթային կայքում. «Մարդոմսալարի» օրաթերթը ապրիլի 25-ի համարում գրեց. «Հայերը ցուցադրեցին իրենց զայրույթը», «Շարղ» օրաթերթը կիրակի ապրիլի 24-ի համարում լայնորեն անդրադարձավ Հայոց ցեղասպանությանը և այն վերնագրել՝ «Մեկ դար ցեղասպանություն» խորագրով: «Էթեմադ» օրաթերթը գրեց. «90 տարի առաջ Թուրքիայի պետությունը ձեռնարկեց հայերի բնաջնջումը և մինչ այժմ չի ընդունել այդ իրողությունը: Այս առումով երեկ թեհրանահայերը բողոքի երթ կատարեցին և ապա, ընթերցելով բանաձևը՝ պահանջեցին բոլոր երկրներից՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը»[301]: «Ջոմհուրիէ էսլամի» օրաթերթը գրում է. «Հայերը պահանջում են աշխարհի բոլոր պետություններից, որ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը»[302]: Ամենից ծավալուն անդրադարձել է

[300] Թեհրանի միութիւնների նախաձեռնած ծրագրերը 2005-ին՝ նուիրած Հայոց Մեծ եղեռնի 90-ամեակի ոգեկոչման, http://www.alikonline.com/files/2005/apr/14/14D05.htm

[301] http://www.sharghnewspaper.com, http://www.alikonline.com/files/2005/apr/27/27B07.htm

[302] http://www.jomhourieslami.com, http://www.alikonline.com/files/2005/apr/27/27B07.htm

«Իրան» օրաթերթը. ապրիլի 25-ի համարում, որտեղ նշվում է տեղի ունեցած քայլարշավի և ընթերցված բանաձևի մասին:

Հատկանշական է, որ 2005թ. իրանահայությունը բավական ակտիվ գործեց և պատշաճ կերպով ներկայացրեց Հայ դատի պահանջները: Այդ գործում նրանց բավականաչափ օգնեց հենց իրանական մամուլը, որը և պետք է նպաստեր Իրանում հայոց ցեղասպանության շուրջ իրազեկության մակարդակի բարձրացմանը:

2005թ. հոկտեմբերին ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադն ընդունեց Իսլամական խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների հինգ պատգամավորներին և լսեց նրանց կողմից առաջ քաշած խնդիրները: Խորհրդարանի հայ պատգամավորները հանդիպման ընթացքում պատեհ առիթը բաց չթողնելով՝ «Շնորհակալութիւն յայտնեցին նախագահական ընտրութիւնների շեմին պրն. Ահմադինեժադի կողմից 1915 թւականի Հայոց ցեղասպանութեան իրողութեան ճանաչման եւ դատապարտման ուղղութեամբ՝ իրանահայութեան գոհունակութիւնն ու երախտագիտութիւնը հայութեան համար կենսական կարեւորութիւն ունեցող այդ հարցի կապակցութեամբ նրա դիրքորոշման վերաբերեալ: Հանրապետութեան նախագահը ի պատասխան հայ պատգամաւորներին՝ նշել է, որ որեւէ ժողովրդի նկատմամբ գործադրած նման արարք պախարակելի եւ դատապարտման արժանի է»[303]: Սակայն Ցեղասպանություն բառը չօգտագործվեց: Եվ ինչպես նշում է Վ. Բայբուրդյանը. «պետական-պաշտոնական մակարդակով Հայոց ցեղասպանության խնդիրը երբևիցե չի ենթարկվել որևէ քննարկման Իրանում: Պաշտոնական մարմինները, սակայն, թույլատրում են, որ հայ համայնքը իր ներսում,

[303] http://www.alikonline.com/files/2005/oct/31/31A02.htm

ամեն տարի ապրիլի 24-ին ոգեկոչի իր անմեղ նահատակների հիշատակը»[304]:

Համաձայն Կարեն Նազարյանի՝ «իշխանությունների կողմից կա ըմբռնում և համագործակցություն Ցեղասպանության հարցում: Բավական ակտիվ աշխատանքներ են տարվում հայ համայնքի ու նաև պարսիկ մտավորականների կողմից: Պարսկերենով տպագրվել են բազմաթիվ գրքեր, ամեն տարի Թեհրանում, Սպահանում, Իրանի հայաշատ քաղաքներում անցկացվում են ապրիլյան օրերի ոգեկոչման միջոցառումներ, որոնց մասնակցում է նաև մեր դեսպանությունը: Հայազգի երկու պատգամավորները ելույթներով հանդես են գալիս Իրանի խորհրդարանում, դեսպանությունն իր հերթին քաղաքական գնահատականներով հանդես է գալիս ՀԼՄ-ներով: Անձամբ ես առիթ եմ ունեցել իրանական տպագիր մամուլով ու հեռուստատեսությամբ մեր տեսակետները ներկայացնել ապրիլի 24-ի թեմայի առնչությամբ: Այս միջավայրը կարևոր է Հայոց ցեղասպանության ճանաչման համար, մասնավորապես՝ երկրում հասարակական կարծիքի ձևավորման հարցում, ինչը կարող է հանգեցնել այս առթիվ պաշտոնական հայտարարության»[305]:

ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Փափազյանն էլ գտնում է, որ Ցեղասպանության հարցում Իրանը հստակ դիրքորոշում չի արտահայտի, «քանի որ թուրք-իրանական հարաբերությունները ակնհայտորեն շատ ավելի մեծ նշանակություն ունեն Իրանի համար, քան հայ-իրանականը: Իհարկե, իրանահայությանը թույլ է տրվում ապրիլի 24-ին

[304] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.) Վահան Բայբուրդյանի հետ, ապրիլի 13, 2012, Երևան:

[305] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005-2009թթ) Կարեն Նազարյանի հետ, հունվարի 08, 2013, Երևան-Նյու Յորք:

բողոքի ցույց կատարել, գնալ իրենց եկեղեցիները, ոգեկոչել նահատակներին, բողոքի նոտա հղել, բայց այդքանը»[306]:

2007 թվականի հոկտեմբերի 23-ին, ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնական այցով գտնվում էր Հայաստանում: Օրակարգում հստակ դրված էր այցելություն Ծիծեռնակաբերդ, և սա արվել էր՝ համաձայնեցնելով իրանական կողմի հետ: Սակայն Ահմադինեժադը նախատեսվածից շուտ ընդհատեց պաշտոնական այցը Հայաստանում և վերադարձավ Թեհրան: Այն ժամանակ տարբեր բացատրություններ ու մեկնաբանություններ տրվեցին, թե ինչու Իրանի նախագահը որոշեց անսպասելիորեն կրճատել իր այցի ժամանակը Հայաստանում, սակայն փաստն այն է, որ Մահմուդ Ահմադինեժադը չայցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիր:

2010 օգոստոսի 25-ին «Իրան. Հաղթանակի կամուրջ» համաժողովում ունեցած ելույթում Հայոց ցեղասպանության մասին, խոսեց Իրանի փոխնախագահ, Համիդ Բաղային: Նա, անդրադառնալով Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Իրանին պատճառված վնասների մասին՝ նշեց, որ այդ հարցը անհրաժեշտ է բարձրացնել միջազգային հանրության առջև: Այդ համատեքստում էլ օրինակ է բերեց, թե ինչպես են հայերը հետևողականորեն պահանջում ընդունել Հայոց ցեղասպանության փաստը. «Օսմանյան կայսրությունը մոտ 100 տարի առաջ ցեղասպանություն է իրականացրել հայերի նկատմամբ: Ներկայումս, չնայած Օսմանյան կայսրությունը վերացել է, Հայաստանի կառավարությունը Թուրքիայից պահանջում է, որ պաշտոնապես ներողություն խնդրի և

[306] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013:

փոխհատուցում վճարի[307]»: Իհարկե, հետագայում սրբագրվեց այս հայտարարությունը, սակայն հայկական և թուրքական ողջ մամուլը արձանագրեց այն:

ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսին էլ, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, որևէ կերպ այն չի որակում. «Ես ամեն տարի ապրիլի 24-ին մասնակցում եմ անմեղ զոհերին մատուցվող հարգանքի տուրքին, կրոնական տեսանկյունից էլ գտնում ենք, որ աններելի է անմեղ մարդկանց կյանքից զրկելը»[308]:

2013թ. ապրիլի 24-ին Իրանում ցեղասպանությանը նվիրված միջոցառումներին հրավիրվել էին նաև պարսիկ պատգամավորներ և քաղաքական գործիչներ, որտեղ Իրանի խորհրդարանի փոխնախագահը իր ելույթում երեք անգամ օգտագործեց Ցեղասպանություն բառը՝ նշելով, որ Թուրքիան իրագործել է Ցեղասպանություն հայերի նկատմամբ[309]: Նոր նախագահի օգնականներից մեկը, որն զբաղվում է Իրանում փոքրամասնությունների հարցերով, 2014թ. ապրիլին իր ելույթում նշել է, որ Թուրքիան այսօր Սիրիայում իրականացնում է նույն ցեղասպանությունը, ինչ 100 տարի առաջ իրագործել է հայերի դեմ[310]:

Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցին Իրանի երեք թեմերի առաջնորդները հանդես եկան ուղերձով: Ապրիլի 24-ի վաղ առավոտյան թեհրանահայությունը սկսեց շարժվել դեպի Թեհրանի Սբ. Սարգիս եկեղեցի, որտեղ

[307] Իրանի փոխնախագահ. Օսմանյան կառավարությունը 1915-ին ցեղասպանություն է իրականացրել հայերի նկատմամբ, http://news.am/arm/news/28893.html

[308] Հարցազրույց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսի հետ, (2012 թ-ից) հոկտեմբերի 22, 2013, Երևան:

[309] حجت‌الاسلام ابوترابی‌فرد در جمع ارامنه تهران :

کثرت در جهان امروز در اختیار کسانی است که با انسانیت و عدالت فاصله دارند

http://www.farsnews.com/newstext.php?nn=13920202000201

[310] Իրանի խորհրդարանի փոխնախագահն իր ելույթում երեք անգամ օգտագործեց Ցեղասպանություն բառը, 30.04.2014թ., http://aparaj.am

սուրբ պատարագ մատուցվեց Թ. Հ. թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանի ձեռամբ: Այնուհետև հազարավոր թեհրանահայեր լուռ երթով շարժվեցին դեպի Թուրքիայի դեսպանատուն, ուր տեղի ունեցավ բողոքի ցույց: Իսկ դրան նախորդող օրը՝ ապրիլի 23-ի երեկոյան, Սբ. Սարգիս եկեղեցու բակում գտնվող Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանին ծաղիկներ խոնարհեցին Իրանում հավատարմագրված մի շարք երկրների դեսպաններ՝ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ուրուգվայի և Լիբանանի, ինչպես նաև Սիրիայի դեսպանության ներկայացուցիչները: Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման միջոցառումներ տեղի ունեցան նաև Սպահանում և Ատրպատականում, թեմի գրեթե բոլոր եկեղեցիներում կազմակերպվեց զոհերի համար պատարագ[311]:

Այսպիսով, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ հետևյալն է.

1. Չարգելել հայ պատգամավորների ելույթները մեջլիսում:
2. Թույլատրել FM ռադիոկայանով նրանց ելույթների ձայնասփռումը:
3. Չեն արգելում հայկական լրագրերում տպվող նյութերին, անշուտ այս բոլորը նախապես ենթարկվում է գրաքննության:
4. Չխոչընդոտել հայերի խաղաղ երթերին, ներքին գործերի նախարարության կողմից նախապես նշված վայրերով:
5. Ցեղասպանությանը նվիրված հուշարձանների կառուցմանը հայկական եկեղեցիների բակերում:

[311] Հազարաւոր թեհրանահայերի բողոքի ցոյցը՝ Թուրքիայի դեսպանատան առջեւ, շաբաթ, 26 ապրիլի 2014, http://www.alikonline.ir

6. Միևնույն ժամանակ ոչ միայն պաշտոնապես չճանաչել, այլ նաև փորձել խուսանավել վերոհիշյալ հարցի քննարկումներից[312]:

4/3 Իրանի դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ

Խորհրդային Միության փլուզման նախաշեմին ծագած Ղարաբաղյան շարժումը ի հայտ բերեց այդ Միությունում առկա լուրջ խնդիրները, որը տարիներ շարունակ սքողվել, թաքցվել կամ ճնշվել էր: Ղարաբաղյան խնդիրը, լինելով ազգամիջյան խնդիր, իր արժանի հանգուցալուծումը չստացավ Խորհրդային Միության ղեկավարության կողմից, ինչն էլ ստիպեց խնդրին՝ վերաճելու պատերազմի: Խորհրդային Միության փլուզումից հետո արդեն այս խնդիրը մեծապես մտահոգեց նաև հարևան երկրներին, որոնք իրենց շահերից ելնելով՝ ցանկանում էին միջամտել խնդրի լուծմանը:

Իրանը, լինելով մահմեդական երկիր և դավանելով շիա ուղղությունը (որին դավանում է նաև Ադրբեջանը), ղարաբաղյան հակամարտության հենց սկզբից կարող էր անցնել Ադրբեջանի կողմը, մանավանդ, որ պաշտոնական Բաքուն անընդհատ հայտարարում էր, թե դա կրոնական հակամարտություն է: Սակայն Իրանի ղեկավար մարմինները, ճիշտ գնահատելով իրավիճակը, չտրվեցին Ադրբեջանի հայտարարություններին, միաժամանակ կոչ արեցին երկու երկրներին՝ անհապաղ դադարեցնել մարտերը և նստել բանակցությունների սեղանի շուրջ: Հատկանշական է, որ Իրանը մշտապես հանդես է եկել

[312] Գ. Իսկանդարյան, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005, էջ 105-106:

Ադրբեջանի տարածքային ամբողջականության օգտին: Սակայն ադրբեջանական քաղաքական որոշ ուժեր, այնուամենայնիվ, շահարկում են, թե Իրանը ակտիվորեն օգնել է Հայաստանին հակամարտության ժամանակ[313]: Իրանական կողմը նաև մտահոգ էր իր անմիջական սահմանի մոտ ընթացող ռազմական գործողություններով, քանի որ վստահ էր, որ դրան հետևելու էր փախստականների հոսք[314], անմիջական իր սահմանների մոտ անկայունություն և այլն: Այս կապակցությամբ 1991թ. աշնանը տեղի ունեցավ ԻԻՀ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի նիստ և ընդունվեց որոշում՝ անմիջապես մասնակցություն ունենալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում: Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի որոշումից հետո՝ 1991թ. նոյեմբերի 24-ին, Վելայաթին մեկնեց Մոսկվա՝ հանդիպելու Խորհրդային Միության նախագահ Մ. Ս. Գորբաչովի հետ և փոխանցելու ԻԻՀ նախագահ Հ. Ռաֆսանջանիի ուղերձը, որտեղ նշվում էր Իրանի պատրաստակամությունը՝ հանդես գալու իբրև միջնորդ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում: Այնուհետև նա այցելեց Խորհրդային Միության մի շարք հանրապետություններ:

1992թ. հունիսին Բաքվի ռադիոն կոչ արեց պետական մակարդակով սրբազան պատերազմ սկսել, սակայն այն լուրջ արձագանք չգտավ Իրանում[315]: Իհարկե, Իրանի ազերի երիտասարդների որոշ խմբեր անօրինական կերպով հատեցին Ադրբեջանի սահմանը՝ պատերազմի

[313] A. Vatanka, R. Giragosian, Iran and the Caucasus, Center for Strategic and International Studiees, Washington, DC, February 14, 2005.

[314] 1992թ. Իրանն ապաստան էր տվել Աֆղանստանից և Իրաքից գաղթած շուրջ մեկ միլիոն փախստականների: Տ. Բալայան, նշվ. աշխ. էջ 34:

[315] Հ. Դեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Երևան, 2002, էջ 71:

ժամանակ օգնելու նպատակով: Դա հատկապես տեղի ունեցավ Լաչինի միջանցքի ազատագրումից հետո, երբ Իրանի ադրբեջանաբնակ ամենամեծ կենտրոնում՝ Թավրիզում, թռուցիկներ տարածվեցին՝ պայքարող ադրբեջանցիներին օգնության հասնելու կոչերով: Հետևելով այդ կոչերին՝ իրանաբնակ ադրբեջանցիները խմբերով մեկնում էին Ադրբեջան և մարտնչում հայերի դեմ[316]: Ղարաբաղի հակամարտությունը, կարելի է ասել, որ լուրջ խնդիրներ առաջացրեց ԻԻՀ-ում: ԻԻՀ առավել ծայրահեղական թևի ներկայացուցիչները պահանջում էին, որ ԻԻՀ անմիջապես օգնություն ցուցաբերի Ադրբեջանին: Իրանական կառավարությունը ստիպված է եղել դիմակայել ազգաբնակչության, հատկապես՝ Իրանի ադրբեջանական համայնքի ճնշումներին: Հանրային կարծիքը պահանջում էր, որ Իրանը անցնի դավանակից շիաների կողմը՝ դեմ դուրս գալով «անհավատ հայերին»[317]: Սակայն Իրանի վերնախավը զսպվածություն ցուցաբերեց:

1992թ. փետրվարի 28-ին Հայաստան ժամանած ԻԻՀ արտգործնախարար Վելայաթին հանդես եկավ առաջարկությամբ, որով հավաստում էր, թե Իրանը պատրաստ է հանդես գալու միջնորդական առաքելությանբ՝ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հնարավոր եզրերը ուսումնասիրելու համար:

Իրանը առաջարկում էր Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման իր ծրագիրը, որը 1992թ. հունվարի վերջերին ներկայացվել էր Հայաստանին, Ադրբեջանին և

[316] Ramezanzadeh A., Iran's Role as Mediator in the Nagorno-Karabakh Crisis. Contested Borders in the Caucasus, by Bruno Coppirters (cd), Brussels: Vrijc Universiteit Brussels Press Internet Version-1996, p 4. S. Բալայան, նշվ. աշխ.-ում, էջ 32:

[317] Abdollah Ramezanzadeh, Iran's Role as Mediator in the Nagorno-Karabakh Crisis, Contested borders in the Caucasus, http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0701.htm

ԼՂՀ-ին, և սկզբում ընդունվել էր նրանց կողմից: Իրանական ծրագիրը նախատեսում էր կրակի դադարեցում, գերիների փոխանակում, ապաշրջափակում և «բանակցություններ՝ նպատակ հետապնդելով Հայաստանի ու Ադրբեջանի միջև գտնելու քաղաքական որոշում՝ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի մասնակցությամբ»: Միաժամանակ, Իրանը կոչ էր անում ՄԱԿ-ին՝ ԼՂՀ ուղարկել միջազգային խաղաղապահ ուժեր: Իրանական ծրագիրը նախատեսում էր նաև խնդրի վերջնական լուծման համար կազմակերպել խաղաղության կոնֆերանս: Սակայն Ադրբեջանը մերժեց ԼՂՀ ներկայացուցչի մասնակցությունը խաղաղության կոնֆերանսին[318]:

Բանակցությունների արդյունքում կազմվեց մի փաստաթուղթ, որը հրապարակվեց 1992թ. մարտի 16-ին: Այն վերաբերում էր ղարաբաղյան հակամարտությունում Իրանի Իսլամական Հանրապետության կողմից միջնորդական առաքելության ստանձնմանը[319]: 1992թ. մարտի 15-ին Իրանին հաջողվեց Թեհրան հրավիրել Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին: Արդյունքում ստորագրվեց մի հայտարարագիր, որով ժամանակավոր զինադադար էր հաստատվում, կատարվում էր գերիների փոխանակում և վերադարձվում էին զոհվածների աճյունները: Այդ զինադադարը երկարացնելու նպատակով մարտի 19-ին Իրանի արտգործնախարարը շտապեց Երևան, իսկ նրա տեղակալը՝ ԼՂՀ: Այնուհետև նախարարը մեկնեց Ադրբեջան, ապա՝ կրկին Երևան: Դիվանագիտական այս այցերը միջազգային

[318] Ն. Հովհաննիսյան, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 90: N. Hovhannisyan, The foreign policy of Armenia, Yerevan, 1998, p. 46.

[319] Վ. Բայբուրդյան, Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 313:

դիվանագիտության մեջ առավել հայտնի են «մաքոքային դիվանագիտություն» անվամբ:

1992թ. մարտին Հայաստան այցելած ԻԻՀ փոխարտգործնախարարը՝ Մահմուդ Վայեզին, ժխտեց որոշ քաղաքական ուժերի այն պնդումները, թե իբր ղարաբաղյան հակամարտությունն ունի կրոնական բնույթ: Իրանը միշտ դեմ է եղել հայ-ադրբեջանական հակամարտությանը կրոնական երանգ հաղորդելու՝ որոշ պետությունների ձգտումներին, քանի որ գտնում էր, որ դա հղի է լուրջ վտանգներով ոչ միայն վերոհիշյալ երկու երկրների համար, այլև կարող է պատերազմական գործողությունների մեջ ներքաշել այլ երկրների[320]: Այնուամենայնիվ, մահմեդական բնակչության մի ստվար զանգված այն ընկալում էր իբրև «իսլամական հողերի գրավում անհավատների կողմից»:

Իրանի նախաձեռնությամբ 1992թ. մարտի 15-17-ը Թեհրանում Ադրբեջանի ներգրավվածությամբ տեղի ունեցավ ԱԳՆ-ների եռակողմ հանդիպում, որի ավարտին ստորագրվեց առաջին համատեղ հայտարարությունը, ինչն առավել հայտնի է իբրև «Թեհրան-92» անվամբ, որը, բացի մեկշաբաթյա հրադադարից, նախատեսում էր նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի ապաշրջափակում և հակամարտության գոտում դիտորդների տեղակայում[321]:

1992թ. ապրիլի 8-ին ԻԻՀ փոխարտգործնախարար Վայեզին կրկին Ստեփանակերտում էր և ԼՂՀ ղեկավարության հետ բանակցում էր հրադադարի շուրջ, սակայն հենց այդ ժամանակ էր, որ Ստեփանակերտի վրա 70 արկ նետվեց Շուշիում տեղաբաշխված «Գրադ» կայաններից[322]:Սա, թերևս, իրանական բանակցողին

[320] Հուշագիր, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին (արխիվ), ցուցակ 1, գործ N 285:

[321] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Գրիգոր Առաքելյանի հետ նոյեմբերի 2, 2012, Թեհրան, ԻԻՀ:

[322] Հայաստանի Հանրապետություն, պաշտոնաթերթ, 09.04.1992:

ազդակ էր Ադրբեջանի կողմից, որ անկախ նրանից, թե ինչ համաձայնության կգա իրանական կողմը ԼՂՀ-ում, միևնույն է, իրենք այն չեն ընդունելու:

Պետք է փաստել, որ այդ օրերին Միացյալ Նահանգները ճնշումներ էին գործադրում Երևանի և Բաքվի վրա, որպեսզի վերջիններս հրաժարվեն Իրանի Իսլամական Հանրապետության միջնորդական առաքելությունից: Վայեզիի հետ միաժամանակ տարածաշրջանում էր գտնվում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ՝ Սայրուս Վենսը, որը բարձր գնահատեց ԵԱՀԽ-ի դերը հակամարտության կարգավորման միջազգային ջանքերի իրագործման ասպարեզում: Ըստ Տ. Բալայանի, հստակ երևում էր, որ ՄԱԿ-ը ևս նախապատվությունը տալիս է ԵԱՀԽ-ի նախաձեռնությանը՝ չնայած այն հանգամանքին, որ իրանական միջնորդությունը բավական հաջող և հեռանկարային էր այդ պահին: Իր հայտարարության մեջ Վենսը նշեց, որ ՄԱԿ-ը աջակցում է ԵԱՀԽ-ի նախաձեռնությանը[323]:

1992թ. մայիսի 8-ին[324] ղարաբաղյան հակամարտության կարգավորման գծով ստորագրվեց «Համատեղ հայտարարություն»՝ Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովի կողմից, որտեղ Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին հանդես եկավ որպես դիտորդ: Համատեղ հայտարարությունում արտացոլվեցին հակամարտության կարգավորմանը խաղաղ միջոցներով հասնելու՝ կողմերի մտադրությունը, հակամարտության գոտում միջազգային, այդ թվում ԵԱՀԽ

[323] Տ. Բալայան, նշվ.աշխ., էջ 40:

[324] Այս մասին առավել մանրամասն տես առաջին գլխում:

դիտորդներ տեղաբաշխելու նպատակադրությունը՝ կայուն խաղաղություն ապահովելու նպատակով[325]:

Չնայած Իրանի միջնորդական առաքելությունը չտվեց ակնկալվող արդյունքը՝ այնուամենայնիվ, ԻԻՀ-ն շահագրգռված էր Ղարաբաղի հարցում հայ-ադրբեջանական զինված առճակատման շուտափույթ ավարտով:

Իրանական ՋԼՄ-ները այդ օրերին փաստեցին, որ Ադրբեջանում բացակայող քաղաքական կայունությունը և իշխանությունների ու Ադրբեջանական Ժողովրդական ճակատի կողմնակիցների միջև ընթացող պայքարը իր անմիջական ազդեցությունն ունեցավ բանակի վրա: Ադրբեջանական ռազմական ուժերի մոտ բացակայում էր պահանջվող մարտական ոգին՝ իրենց երկիրը պահպանելու համար[326]: Եվ հաշվի առնելով, որ հայ-ադրբեջանական բախումները տեղի էին ունենում ԻԻՀ սահմանամերձ շրջաններում, ինչը նկատվում էր որպես անմիջական վտանգ Իրանի անվտանգությանը, ԻԻՀ արտգործնախարարությունը 1993թ. օգոստոսի 12-ին ընդունած հայտարարության մեջ պարզորոշ զգուշացնում էր, որ «անտարբեր չի մնա հայկական ուժերի կողմից՝ ադրբեջանական տարածքների նկատմամբ ագրեսիայի շարունակմանը, և իսլամական աշխարհը նույնպես թույլ չի տա, որ մի անկախ մահմեդական երկիր ենթարկվի ագրեսիայի»[327]:

Իր սահմանների մոտ ընթացող պատերազմական գործողությունները, բնականաբար, անհանգստություն էին

[325] Տ. Բալայան, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ, Երևան, 2004, էջ 41:

[326] ԻԻՀ դիրքորոշումը հայ-ադրբեջանական հակամարտության վերջին իրադարձությունների վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին (արխիվ), ցուցակ 5, գործ N 239:

[327] Նույն տեղում:

պատճառում ԻԻՀ-ին ոչ միայն իր ազգային ավտանգության տեսանկյունից, այլ նաև տարածաշրջանում առկա իր ունեցած շահերի և հետաքրքրությունների առումով:

Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Իրանը բացահայտ ցուցաբերում էր իր անհանգստությունը Նախիջևանի հարցում ևս՝ մտավախություն ունենալով, թե Ղարաբաղում կրած հաղթանակներից հետո, հայերը, ամենայն հավանականությամբ կփորձեն իրենց վերահսկողությունը հաստատել նաև Նախիջևանում:

Նման մտայնություն կար նաև Թուրքիայում: 1992թ. ՄԱԿ-ի կազմակերպած համաշխարհային գագաթաժողովի ժամանակ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդիպեց Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի ու ԱԳ նախարար Հիքմեթ Չեթինի հետ: Հանդիպման ժամանակ Թուրքիայի քաղաքական գործիչների կողմից կարևոր նշանակություն էր տրվել Նախիջևանի հարցին, որն էլ արձանագրվել էր թուրքական մամուլի կողմից. «Երբ Դեմիրելն ու Չեթինը խոսք են բացել Նախիջևանի մասին, արտահայտելով այն միտքը, որ Թուրքիան Նախիջևանի հարցում չափազանց զգայուն է, Տեր-Պետրոսյանն ի պատասխան նշել է, որ Հայաստանը Նախիջևանի վրա չի հարձակվի»[328]:

Իրանի վերնախավը նաև անհանգստանում էր, որ Թուրքիան կարող է ներքաշվել խնդրի մեջ և փորձել Նախիջևանը պահել իր ազդեցության տակ, և այնտեղից արդեն սկսել Հայաստանի նկատմամբ ռազմական գործողություններ ծավալել՝ ակնկալելով գրավել նաև Մեղրին և այդպիսով կապ հաստատել Ադրբեջանի հետ: Որպեսզի բացառի այս խնդիրը, Իրանը իրականացրեց մի

[328] Է. Բեգիջանյան, Նախիջևանը և թուրք-իրանական հարաբերությունները, Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, Տասնամյա հանրագումար, Երևան, 2004, էջ 208:

շարք գործողություններ. ըստ Արա Պապյանի՝ «Իրանի կառավարությունը կառուցել էր մի ճանապարհ, որը ձգվում էր Թավրիզից մինչև Մակու, որը իրականում ոչ մի տեղ չէր տանում: Այդ ճանապարհը կառուցվել է ռազմական նպատակով, որ եթե թուրքերը Նախիջևանով մտնեին Մեղրի, իրենք օգտագործեին այս ճանապարհը և հակադարձեին»: Բացի այդ, Իրանը լուրջ օգնություն էր ցուցաբերում Նախիջևանի Ինքնավար Հանրապետության բնակչությանը, որը կտրված էր Ադրբեջանից, և Իրանը ցանկանում էր այստեղ մեծացնել իր ազդեցությունը: 1992թ. օգոստոսին Իրանի փոխարտգործնախարար Մ. Վայեզին մի հարցազրույցի ժամանակ նշում է, որ Նախիջևանին հատկացրել են նավթամթերքի, գազի և սննդամթերքի մեծաքանակ օգնություն: Նրա պնդմամբ, Իրանի Ատրպատականի բնակչությունը և ղեկավարությունը ևս մեծապես աջակցել են Նախիջևանին: Դեղորայքային մեծ օգնություն է ցուցաբերվել Բաքվին: Եվ վերջում, իբրև ամփոփում, Վայեզին նշում է. «Ադրբեջանի ժողովուրդը մեր եղբայրն է և վստահորեն կարելի է ասել, որ նրանց պատիվը մեր պատիվն է, պարտությունը՝ մեր պարտությունը»: Այնուհետև Վայեզին, լինելով միջնորդական առաքելության իրականացնող, ըստ իս, թույլ է տալիս կոպտագույն մի սխալ՝ նշելով, որ. «Ղարաբաղը Ադրբեջանի տարածքն է և պետք է նրա գերիշխանության տակ էլ մնա: Մենք երբեք չենք ընդունի, որ Ղարաբաղը միանա Հայաստանին կամ էլ առանձին պետություն դառնա: Մենք ոչ մի պարագայում չենք ընդունի ո՛չ բանակցությունների, ո՛չ պատերազմի, և ո՛չ էլ ճնշման տակ կատարված սահմանների փոփոխություն թե՛ Ադրբեջանում, թե՛ Նախիջևանում: Դա մեր պետության և ժողովրդի, ինչպես նաև Ադրբեջանի ժողովրդի

ցանկությունն է»[329]: Հասկանալի է, որ Վայեզիի այս ելույթը հետապնդում էր մի քանի նպատակ.

1. Նա փորձում էր ամբողջովին Հայաստանի վրա բարդել ԻԻՀ միջնորդական առաքելության տապալման խնդիրը՝ այդպիսով ապահովագրելով ինքն իրեն:
2. Այս հայտարարությանը սպասում էր Իրանի թյուրքախոս բնակչությունը:
3. Այսպիսի հայտարարության սպասում էր նաև Ադրբեջանը, և Իրանի վերնախավը ակնկալում էր նման կերպ առավել մերձեցնել հետաքրքրությունների շրջանակը Ադրբեջանի Հանրապետության հետ:
4. Իրանը իսկապես անհանգստացած է, թե հայկական ուժերը կարող են Ղարաբաղի խնդրից հետո պատերազմական գործողություններ սկսել Նախիջևանի հետ, որը սահման չունի Ադրբեջանի հետ, և առաջին իսկ պատերազմական գործողության դեպքում Նախիջևանի խաղաղ բնակչությունը պարզապես կհեռանար շրջանից և այն առավել խոցելի կդառնար, ինչը Իրանի համար անթույլատրելի էր:
5. Ակնհայտ էր, որ Նախիջևանի բնակչություն մի ստվար զանգված ապաստան էր փորձելու գտնել իրանական Ատրպատականում, ինչը ևս անցանկալի էր Իրանի համար:
6. Այսպիսով, շեշտադրվում էր և ի լուր աշխարհի հայտարարվում էր Իրանի հետաքրքրությունները Նախիջևանի նկատմամբ:

[329] Ազգ, օրաթերթ, 18.08.1992:

Հատկանշական է, որ ադրբեջանցի փախստականների համար ճամբարներ կազմակերպելու պատրվակով Իրանը անգամ սեպտեմբերին զինված ստորաբաժանումներ մտցրեց Նախիջևան, ինչը է՛լ ավելի լարեց առանց այն էլ շիկացած մթնոլորտը: Ռուսաստանը խիստ արձագանքեց Իրանի որդեգրած քաղաքականության նկատմամբ, իսկ Հայաստանը, ի դեմս արտգործնախարար Վ. Փափազյանի, հավաստիացրեց, որ հայկական ուժերը նպատակ չունեն հարձակվելու Նախիջևանի վրա. այս երաշխիքները ստանալուց հետո միայն ԻԻՀ դուրս բերեց իր ուժերը Նախիջևանից[330]:

Խիստ կարևոր մի ելույթ էլ ունեցավ ԻԻՀ հոգևոր առաջնորդ այաթոլլաի Ալի Խամենեին՝ 1993թ. հուլիսի 29-ին, երբ այցելում էր Ատրպատական նահանգ, որն էլ տպագրվեց Ռեսալաթ թերթում, որտեղ նշվում էր, թե. «Հայաստանի կառավարությունը ու Ղարաբաղի հայերը ճնշում են տարածաշրջանի մահմեդականներին: Դատապարտելով Հայաստանի աջակցությամբ արցախահայերի վերջին գործողությունները՝ իրանահայությունից ակնկալում ենք նմանօրինակ վերաբերմունք»[331]: Առաջնորդարանն էլ, արձագանքելով առաջնորդի հրահանգներին, դատապարտեց Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի ագրեսիան:

Ընդհանրապես, հակամարտության հենց սկզբից Իրանը կոչ էր անում հարցը լուծել բանակցությունների միջոցով, սակայն, միաժամանակ, պաշտպանում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Իրանն

[330] Գ. Բադալյան, Հայաստան-Իրան հարաբերությունները 20 տարեկան են, Երևան-Թեհրան, 2012, էջ 62:

[331] Է. Բեգիջանյան Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 72: Abdollah Ramezanzadeh, Iran's Role as Mediator in the Nagorno-Karabakh Crisis, Contested borders in the Caucasus, http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0701.htm

աչալրջորեն հետևում էր նաև Ղարաբաղի հիմնահարցի լուծման համար առաջարկվող ծրագրերին, և, որպես կանոն, արտահայտում էր իր տեսակետը դրանց վերաբերյալ: Այդպիսի նախագծերից էր 1992թ. Գոբլի ծրագիրը, որի նկատմամբ Իրանը բավական կոշտ դիրք բռնեց: Համաձայն ծրագրի՝ առաջ էր քաշվում տարածքների փոխանակման տարբերակը կամ Մեղրին Լաչինով փոխանակելու գաղափարը, որով Հայաստանը փաստորեն կզրկվեր Իրանին սահմանակցելուց: Պաշտոնական Թեհրանը կտրականապես դեմ արտահայտվեց հասկանալի պատճառներով. Մեղրին Իրանի համար գրեթե այն նշանակությունն ունի, ինչ Հայաստանի համար: Մեղրին ստանալու դեպքում Ադրբեջանը կկապվեր Նախիջևանի հետ, Թեհրանը կզրկվեր Բաքվի վրա ազդելու կարևորագույն լծակից, Նախիջևանն այլևս Իրանի ազդեցության շրջանակներից դուրս կմնար:

Այդ ծրագրի անհնարինության մեջ համոզվեց անգամ ինքը՝ Գոբլը. «Հայերի համար Իրանի հետ սահման ունենալու կարևորությունն անգնահատելի է: 1992թ. Հայաստան-Իրան ավտոճանապարհով առևտուրը շատ քիչ էր, և ես կարծում էի, թե հայերը Մեղրին հանուն խաղաղության կգիջեն՝ դրա դիմաց ստանալով Լաչինը: Բայց այժմ ես հասկանում եմ դրա հոգեբանական իմաստը, դա կարևոր է ոչ միայն առևտրի հետագա զարգացման համար, այլև որպես ելք դեպի ոչ թուրքական աշխարհ»[332] :

Այսօր էլ պաշտոնական Թեհրանի տեսակետը ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ մնում է անփոփոխ. Իրանը հանդես է գալիս խնդրի արագ, արդար և խաղաղ կարգավորման պաշտպանությամբ: 2001թ. ԻԻՀ արտգործնախարար Ք. Խարազին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել էր.

[332] Քննարկել չի նշանակում համաձայնվել, Լոյս, 15.03.2001, էջ 8:

«Պատրաստ ենք մեր բոլոր հնարավորությունները օգտագործել Ղարաբաղի հարցի արդար լուծման համար»[333]:

Սակայն հետաքրքիր դեպք արձանագրվեց 2006թ. հունիսին. համաձայն ադրբեջանական day.az կայքի, «IRAN TV 1» հեռուստալիքը լուրերի բաժնում հեռարձակել է մի նյութ, որը վերաբերում էր Բուխարեստում տեղի ունեցող Քոչարյան-Ալիև հանդիպմանը: Այնտեղ նշվում էր, որ «Անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իր անկախությունը հռչակել է 15 տարի առաջ, իսկ այժմ Ադրբեջանը հավակնություններ ունի վերոհիշյալ հանրապետության տարածքի նկատմամբ»[334]: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԻԻՀ-ում բավական ակտիվ է աշխատում գրաքննության ինստիտուտը, ապա կարող ենք փաստել, որ այդպիսի նյութը չէր կարող հեռարձակվել առանց իշխանությունների տեղեկության և համաձայնության: Իրավիճակն առավել պարզեցնելու համար նշենք, որ 2006թ. հունիսին բավական լարված էին Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները, անգամ Ադրբեջանի հրահրմամբ ԻԻՀ-ի հյուսիսային նահանգ Ատրպատականում տեղի էին ունեցել խժդժություններ: Այս հայտարարությամբ, ըստ երևույթին, Իրանն Ադրբեջանին հասկացնում էր, որ նմանատիպ քաղաքականության շարունակման դեպքում ԻԻՀ-ն կարող է Ղարաբաղի հարցում պաշտպանել Հայաստանի շահերը[335]:

[333] ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի այցը Իրան, Արաքս, 24 (107), հունվար, 2002, էջ 22:

[334] Государственное телевидение Исламской Республики Иран «Iran TV 1» в блоке новостей представило Нагорный Карабах как независимую республику http://www.day.az/news/politics/50415.html

[335] Գ. Իսկանդարյան, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, մեթոդական ուղեցույց, Երևան, 2007, էջ 29:

Ընդհանրապես, «Իրանի կառավարությունը մտահոգություն ունի, թե ապագայում ադրբեջանցիները լուրջ պրոբլեմ են դառնալու Իրանի համար: Հայաստանը՝ որպես Ադրբեջանին զսպող օղակ, այս առումով շատ կարևոր է Իրանի համար: Թավրիզը՝ իր շրջակայքով, լրջագույն խնդիր է, առայժմ այնտեղ խնդիրները այդքան բացահայտ չեն երևում, բայց մենք հասկանում ենք, թե ինչ է նշանակում ազգայնականությունը, - նշում է Վ. Փափազյանը, - և թե ինչպես այն կարելի է օգտագործել ու հրահրել: Այսինքն, այս տեսակետից Հայաստանը Իրանի համար կարևոր է: Իրանում, կարծում եմ, հստակ հասկանում են, որ Ղարաբաղը ոչ մի պարագայում չպետք է լինի Ադրբեջանի կազմում[336]:

Այս տեսակետին համակարծիք է նաև ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վ. Բայբուրդյանը. «Անցած երկու տասնամյակների ընթացքում Ղարաբաղի հիմնահարցում ԻԻՀ քաղաքականությունը միշտ եղել է անկողմնակալ ու հավասարակշռված: Մեր դիտարկումով, Ղարաբաղյան պատերազմից հետո Թեհրանում հստակորեն ձևավորվեց նաև այն գաղափարը, որ Հայաստանը ներկայումս լուրջ ռազմական գործոն է, որն ընդունակ է Իրանի հյուսիսային սահմանների մի բավականին խոշոր հատվածում ապահովել ոչ միայն ներքին կայունությունը, այլև որոշակի առումով տարածաշրջանի արտաքին անվտանգությունը»[337]:

1998թ. ՀՀ-ում նախագահական ընտրություններում հաղթեց Ռ. Քոչարյանը, ի դեպ՝ Ռ. Քոչարյանի ՀՀ նախագահ դառնալու փաստը Իրանում մտահոգություններ առաջացրեց, նրանք շատ լավ գիտեին Ռ. Քոչարյանի անցած ուղին և հասկանում էին, որ նա Ղարաբաղյան

[336] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013:

[337] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.) Վահան Բայբուրդյանի հետ, ապրիլ 13, 2012, Երևան:

հարցում անզիջում է լինելու[338]: «Աբրար» թերթը Քոչարյանի իշխանության գալը բնորոշեց Ղարաբաղյան բանակցային գործընթացի համար «զգալի նահանջ կամ թերևս այն պետք է սկսվի զրոյական կետից»[339]: Հատկանշական է, որ նույն «Աբրար»-ը երկու ամիս անց ներկայացնելով Ռ. Քոչարյանի անցած ուղին, էապես փոփոխության էր ենթարկել իր մոտեցումները, որը, կարծում ենք, արվել էր ԻԻՀ ղեկավարության պահանջով, ըստ որի՝ պետք է վերանայվեր վերաբերմունքը նորընտիր նախագահի նկատմամբ. «ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը մեկ տարի առաջ Ռ. Քոչարյանին հրավիրել էր Հայաստան՝ նշանակելով վարչապետի պաշտոնում: Ըստ երևույթին, Հայաստանի նախագահը մտադիր էր այդ քայլով վերականգնել իր երբեմնի հեղինակությունն ու հզորությունը, սակայն Քոչարյանը բացահայտորեն ընդդիմացավ Տեր-Պետրոսյանին և արագացրեց նրա հրաժարականը, քանի որ Քոչարյանը դեմ էր ղարաբաղյան հարցում Տեր-Պետրոսյանի հաշտվողական քաղաքականությանը»[340]: Իսկ «Ջոմհուրի-է Էսլամի»-ն նշում էր. «Քոչարյանը ծնունդով ղարաբաղցի է և հանդիսանում է դրա անկախության ամենանախանձախնդիր ջատագովներից մեկը»[341]:

Հարկ է նշել, որ թեև Իրանը Ղարաբաղյան պատերազմի ժամանակ վարել է հավասարակշռված քաղաքականություն, երկու կողմերին էլ կոչ է արել հաստատել հրադադար և նստել բանակցությունների սեղանի շուրջ, սակայն եղել են նաև օգնության այլ տարբերակներ:

[338] Ղարաբաղը և Հայաստանի նոր քաղաքականությունը, Ռեսալաթ, 19.04.1998, Ղարաբաղը կարող է Քոչարյանի համար վերածվել հորձանուտի, Մահդ-է Ազադի, 18.04.1998:

[339] Աբրար, 05.02.1998:

[340] Հայաստանի Հանրապետության նախագահը, Աբրար, 26.04.1998:

[341] Ղարաբաղյան ճգնաժամը շարունակվում է, Ջոմհուրի-է Էսլամի, 30.04.1998:

Հայտնի է, որ պատերազմի ամենաթեժ պահերին հայկական դիվանագետների գործուն աշխատանքների շնորհիվ, Իրանից հնարավոր եղավ ներկրել մեծ քանակի վառելանյութ, ինչը թույլ տվեց հայկական ռազմական տեխնիկային՝ աշխատել անխափան: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ Իրանից ոչ միայն նյութական օգնություն է ցուցաբերվել, այլ նաև որոշակի ռազմական աջակցություն է հատկացել Ադրբեջանին՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ. դա հաստատեց Իրանի քաղաքական նպատակահարմարության խորհրդի քարտուղար, Իսլամական հեղափոխության պահակազորի 1981-1997 թվականների հրամանատար Մոհսեն Ռեզային՝ նշելով. «Իրանը Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ադրբեջանական բանակին ռազմամթերք մատակարարելուց բացի, վերապատրաստել է ադրբեջանցի պարտիզաններին: Ես անձամբ եմ հրամայել, որ ռազմական տեխնիկա ու ռազմամթերք մատակարարվի ադրբեջանական բանակին: Ես անգամ կարգադրել եմ Ադրբեջանի զինված ուժերի համար կազմակերպել զորավարժանքներ: Ղարաբաղյան պատերազմի ժամանակ զոհվել են նաև մեծ թվով իրանցիներ, որոնց գերեզմանները գտնվում են նաև Բաքվում: Մենք մշտապես դժվար պահին գտնվել ենք Ադրբեջանի կողքին և ներկայումս նույնպես նրա կողքին ենք: Ղարաբաղն իսլամական տարածք է»[342]:

Սակայն, առաջին հայացքից այս կոշտ և հակահայկական հայտարարությունը թերևս ունի իր բացատրությունը. Մոհսեն Ռեզային սա արեց, երբ մասնակցում էր ԻԻՀ-ում 2013թ. նախագահական ընտրություններին. այսպիսով նա ակնկալում էր հավաքել

[342] Iranian Official: We Helped Azerbaijan In Karabakh War, http://www.eurasianet.org/node/66664, ինչպես նաև տես
شهدای ایرانی جنگ قره باغ نیز در ناکو مدفون هستند
http://www.farsnews.com/newstext.php?nn=13911209000175

Իրանում թյուրքախոս հանրության ձայները: Բայց դրանով իսկ իրավիճակը չփոխվեց. փաստ է, որ Իրանը աջակցել է Ադրբեջանին, սակայն սա էլ է հավասարակշռված քաղաքականության մի մասը: Երբեք չպետք է մոռանալ, որ Իրանի տարածքում, տարբեր տվյալներով, բնակվում է մինչև 30 մլն թրքախոս իրանցի, Իրանի ղեկավար պաշտոններում նրանք բավական լուրջ դերակատարություն ունեն և նրանք, բնականաբար, ակնկալում են աջակցություն իրենց դավանակից եղբայրներին, որի հետ իրանական կառավարությունը չի կարող հաշվի չնստել:

Առկա է նաև իսլամական համերաշխության գործոնը: «Գաղտնիք չէ, որ Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությունը (ներկայումս այն կոչվում է Իսլամական Համագործակցության Կազմակերպություն), որի անդամներ են հանդիսանում և ԻԻՀ-ը և Ադրբեջանը, վարում է շեշտված ադրբեջանամետ քաղաքականություն»[343]: Սակայն ըստ նախկին արտգործնախարար Ա. Արզումանյանի, Իրանական կողմը Ղարաբաղի հարցում մշտապես մեզ աջակցել է, եթե ոչ բացահայտ, ապա՝ քողարկված: Օրինակ, 1997թ. ԻԿԿ գագաթնաժողովի ժամանակ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ հետամուտ էր լինում մի շատ վատ բանաձևի ընդունմանը, սակայն Իրանի ջանքերով այն զգալիորեն մեղմվեց: Մենք հարաբերություններ չունենք Պակիստանի հետ, և երբ Պակիստանը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում էր, Իրանը, օգտագործելով Պակիստանի հետ ունեցած կապերը, ամեն ինչ արեց, որ հակահայկական ձևակերպումներ ի հայտ չգան: Իրանական կողմը

[343] Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.) Վահան Բայբուրդյանի հետ, ապրիլ 13, 2012, Երևան:

նմանատիպ հետկուլիսային շատ գործեր է արել և աջակցել մեզ»[344]:

Պետք է նաև փաստել, որ ԻԿԿ-ում հնչեցված հայտարարությունները, պարտադիր չեն Հայաստանի համար, իսկ եթե Իրանը այնտեղ չեզոքություն պահպանի, կարժանանա լուրջ քննադատության: Կստացվի, որ մեզ օգուտ չի տա, իսկ Իրանին կվնասի այդ չեզոքությունը: «Երբեմն բավական բարդ էր լինում պահպանել հավասարակշռությունը, հատկապես հաշվի առնելով հանրային ընկալումը, - նշում է Վ. Օսկանյանը, - քանի որ Ղարաբաղի հարցում Իրանը միջազգային կազմակերպություններում միշտ պաշտպանում էր Ադրբեջանին, բնականաբար, Հայաստանում նկատվում էր դժգոհություն: Սակայն մեզ համար ոչ այնքան կարևոր էին միջազգային կազմակերպություններում Իրանի հրապարակային քվեարկությունները, որքան հետկուլիսային բանակցությունները և Իրանի բուն գործողությունները: Իսկապես, թվում է՝ ստացվում էր անհավասարակշռություն. մենք աջակցում էինք Իրանին միջազգային կազմակերպություններում, իսկ իրենք մեզ՝ ոչ, սակայն կարծես չգրված մի պայմանավորվածություն էր ձեռք բերվել մեր կողմից, ըստ որի՝ մենք չէինք դիտարկելու միջազգային կազմակերպություններում Իրանի քվեարկության արդյունքը որպես չափանիշ՝ մեր երկու երկրների հարաբերությունների համար»:[345]

Բնական է, որ Ղարաբաղյան հակամարտության ժամանակ եղել են անհատներ, ովքեր կռվել են Ադրբեջանի կողմից, հանուն դավանակից ժողովրդի, սակայն նրանց

[344] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1996-97թթ.), Ալեքսանդ Արզումանյանի հետ, մայիսի 19, 2012, Երևան, (հարցազրույցի ամբողջ տեքստը տես հավելվածում):

[345] Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008թթ.) Վարդան Օսկանյանի հետ, հուլիսի 8, 2012թ., Երևան:

քանակը այնքան մեծ չի եղել, որ ազդեր պատերազմի ելքի վրա: Առկա տեղեկության համաձայն, Իրանի սահմանամերձ շրջաններում պատերազմի ժամանակ կառուցվել են փախստականների համար նախատեսված ճամբարներ, որպեսզի օգնություն ցուցաբերեն ադրբեջանցիներին: Այնտեղ կային նաև բժշկական կենտրոններ, Իմամ Խոմեյնու ֆոնդը սննդամթերք էր տրամադրում փախստականներին:

1994թ. օգոստոսի 24-ին Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հ. Ալիևը ջերմորեն շնորհակալություն է հայտնում իրանական կառավարությանը՝ Ղարաբաղի ազերի փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար: Հաղորդելով այս լուրը, իրանական ռադիոյի ռուսերեն հաղորդման մեկնաբանը ավելացրել է, որ 1993թ. «Ադրբեջանի տարածքում Իրանը ստեղծել է վեց ճամբար, որոնցում տեղավորել է 50 հազար փախստական ադրբեջանցիների և պատշաճ մակարդակով բավարարել է նրանց կարիքները»[346]: Կիսում ենք Է. Բեգիջանյանի այն կարծիքը, թե «Ադրբեջանցի փախստականներին տնտեսական առատ օգնություն ցուցաբերելով և Ադրբեջանի տարածքում ու սահմանամերձ շրջաններում ճամբարներ կառուցելով՝ Թեհրանը պատնեշեց երկրի խորքեր նրանց ներթափանցումը»[347]:

Բացի այդ, Իրանի կողմից այդ օգնությունները տրամադրվել են, քանի որ Իրանը գաղափարախոսական երկիր է, Ադրբեջանն էլ սա շատ լավ գիտակցելով, այնուամենայնիվ, զգուշավորություն է պահպանել՝ առավել հակվելով դեպի Թուրքիա, քան դեպի Իրան: Նրանք

[346] ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ 285, էջ 96-97:

[347] Է. Բեգիջանյան, Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 73:

գիտակցում են, որ Իրանի նպատակն է՝ խորացնել շիիզմը Ադրբեջանում, կառուցում են մզկիթներ, հովանավորում տարատեսակ կրոնական կառույցների գործունեությունը: Իսկ Ադրբեջանում, քանի որ ընդունել են Թուրքիայի լայիք՝ աշխարհիկ մոդելը, չեն ցանկանում խորացնել Իրանի հետ շփումները և անգամ հաճախ խնդիրներ են ստեղծում այդ հարաբերությունների զարգացման համար: Հայաստանի հետ նման խնդիր չկա և չի էլ կարող լինել, քանի որ Հայաստանը, լինելով քրիստոնեական երկիր, իր վրա չի զգում իսլամի արտահանման վտանգը, այն, ինչ ակնհայտ նկատվում է Ադրբեջանում: Սրանով էլ թերևս պայմանավորվում է հայ-իրանական հարաբերություններում վստահության մթնոլորտի կայուն պահպանումը:

Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ Իրանի կառավարությունը չի խոչընդոտել իրանահայ համայնքի աջակցությանը Հայաստանին՝ Ղարաբաղի պատերազմի ժամանակ: Դա եղել է թե՛ նյութական, թե՛ բարոյական կերպով: Շատ իրանահայեր մասնակցել են Ղարաբաղի պատերազմին, որի նկատմամբ Իրանի կառավարությունը աչք է փակել:

Չնայած այն մտայնությանը, թե Իրանը Հայաստանի ռազմավարական դաշնակիցներից է, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Իրանը բազմիցս հայտարարել է, որ պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ այսօրինակ հայտարարություն Իրանը պետք է անի, քանզի իր երկրում ևս կան նման խնդիրներ, և առաջին իսկ նմանատիպ այլ խնդրին աջակցելու պարագայում ԻԻՀ-ում գլուխ կբարձրացնեն ազգային խնդիրները, որը այս պահին այնքան հմտորեն ծածկված են իսլամի քողով:

Խիստ ուշագրավ էր Իրանի նախագահի՝ մայիսի 28-ի, դեռևս իբրև նախագահի թեկնածու մի ուշագրավ

հայտարարությունը առ այն, որ Ադրբեջանի Հանրապետությունը, առանց չափազանցության, վերածվել է Իրանի անվտանգության սպառնալիքի: Սա մի ուղերձ էր Ադրեջանին, որ Իրանը այլևս չի հանդուրժի Ադրեջանի տարատեսակ գործելաոճը տարածաշրջանում:

Հայաստանում նմանապես գերիշխում է այն տեսակետը, որ եթե Իրանը Ղարաբաղի խնդրում անգամ ի վիճակի չլինի թեկուզև գաղտնի աջակցելու Հայաստանին, ապա երբեք չի վնասի, կփորձի հաշտարարի դերում հանդես գալ՝ անդադար առաջարկելով իր միջնորդությունը: Վերջին տարիներին կրկին նկատվում է ԻԻՀ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացին մասնակցելու ցանկության ակտիվություն: Սա ևս թույլ կտար Իրանին՝ առավելապես ինտեգրվելու տարածաշրջանային գործընթացների զարգացումներին: Սակայն, ԼՂ խնդրի կարգավորման գործընթացով զբաղվում է Մինսկի խումբը, և այս պահին այլ ձևաչափերի գործունեությունը անիրատեսական է:

Այսպիսով, նեկայացնելով Իրանի դիրքորոշումը ղարաբաղյան խնդրի նկատմամաբ, գալիս ենք հետևյալ եզրակացությունների.

1. Իրանը շահագրգիռ է Ղարաբաղի խնդրի արագ կարգավորմամբ՝ խաղաղ ճանապարհով, այն պարզ պատճառաբանությամբ, որ ցանկանում է իր հյուսիսային սահմանների մոտ առավել անվտանգ իրավիճակ ունենալ:
2. Իրանը ունի ներքին վախ, որ խաղաղ ճանապարհով խնդրի լուծմանը չհասնելու դեպքում հնարավոր է օտար ուժերի տեղակայումը իր անմիջական սահմանների մոտ, ինչը բնականաբար անթույլատրելի է ԻԻՀ-ի համար:
3. Իրանը ղարաբաղյան հակամարտության հենց սկզբից էլ փորձում էր վարել հավասարակշռված քաղաքականություն՝ որոշակի կերպով կողմերից յուրաքանչյուրին տրամադրելով նյութական, բարոյական աջակցություն: Սակայն

Ադրբեջանը իրեն հատկացված աջակցության չափը համարում էր անբավարար և մեկը մյուսի ետևից Իրան-Ադրբեջան հարաբերություններում սխալներ էր թույլ տալիս՝ Իրանին այլընտրանք չթողնելով Հայաստանի հետ հարաբերությունները սերտացնելուն:

4. Իրանին նմանապես դուր չէր գալիս և անգամ՝ խիստ վրդովեցնում էր Ադրբեջանի վարած արտաքին քաղաքականությունը Թուրքիայի և, հատկապես՝ Իսրայելի հետ:

5. Իրանը թեև միջազգային ատյաններում, որպես կանոն, պաշտպանել և պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն, մեզ համար առավել կարևոր են Իրանի փաստացի իրականացրած քաղաքականությունը Կովկասում և նրա դիրքորոշումը թուրք-ադրբեջանական մերձեցմանը հարցում և այդ համատեքստում Հայաստանին տրվող կարևորությանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը, որպես անկախ և ինքնուրույն պետություններ, սերտորեն համագործակցում են արդեն 25 տարի և այդ համագործակցությանը բացարձակապես չեն խոչընդոտում ո՛չ կրոնական տարբերությունները, ո՛չ միջազգային հարաբերություններում առկա վերաբերմունքը ԻԻՀ-ի նկատմամբ, ո՛չ էլ մահմեդական աշխարհի որոշ երկրների տարատեսակ կոչերը՝ ուղղված Իրանին: Հիրավի, կարելի է փաստել, որ ձևավորված այս հարաբերությունները խիստ կարևոր են երկու կողմերի համար էլ, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեն տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումների տեսանկյունից և կարող են օրինակելի մոդել դառնալ մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների համակեցության տեսանկյունից:

Ամփոփելով **<u>Հայաստան-Իրան քաղաքական հարաբերությունները</u>**, կարող ենք փաստել, որ ԻԻՀ-ն Հայաստանի հետ հարաբերություններում հիմնականում պահպանվել է նույն կուրսը՝ բարեկամական, բարիդրացիական, իսկ Մ. Ահմադինեժադի նախագահության ժամանակ Հայաստանի հետ ունեցած հարաբերությունները որակվեցին իբրև հատուկ հարաբերություններ:

Հայաստանը մեծ կարևորություն է տվել Իրանի հետ համագործակցությանը, քանզի սա միակ պատուհանն է, որ անցած 25 տարիների ընթացքում այդպես էլ չփակվեց՝ անտեսելով անգամ իրենց դավանակից «եղբոր»՝ Ադրբեջանի հորդորները կամ տարատեսակ ճնշումները:

2013թ. ԻԻՀ նախագահ ընտրված Հասան Ռոհանին բավական քաջատեղյակ է հայ-իրանական հարաբերությունների զարգացման բոլոր փուլերին: 2015թ.

ՀՀ նախագահ Ս. Սարգսյանն էլ ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակեց Արտեշես Թումանյանին, ով ժամանակին լինելով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, բավական լուրջ գործունեություն էր ծավալել այս ոլորտում հարաբերությունները խթանելու ուղղությամբ: Վստահաբար կարելի է փաստել, որ հայ-իրանական հարաբերություններն առավել խորացման միտումներ ունեն:

Պետք է նշել, որ հայ-իրանական հարաբերությունները փոխշահավետ հարաբերություններ են: Թեպետ, եթե Հայաստանը առավելապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Իրանի հետ տնտեսական հարթությունում հարաբերությունները խորացնելու ժամանակ, Իրանը առավելապես ակնկալում է Հայաստանի աջակցությունը միջազգային տարբեր հարթակներում իրեն աջակցելու համար: Իրանական կողմը արդեն անթաքույց խոսում է նաև աշխարհի տարբեր վայրերում բնակվող իրանահայ լոբբիի մասին, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են օգտակար լինել Իրանին: Հայաստանի հետ խորացնելով հարաբերությունները՝ Իրանը նմանապես ցուցադրում է համաշխարհային հանրությանը, որ սին են այն կասկածները, թե Իրանը կրոնական ծայրահեղական պետություն է և չի հանդուրժում կամ ոտնահարում է այլոց կրոնական իրավունքները: Իրանին ձեռնտու է Հայաստանի կայուն վիճակը, նախ այն պատճառով, որ իր հյուսիսային շրջանների մոտ անվտանգ իրավիճակը բխում է նրա ազգային անվտանգության շահերից, միևնույն ժամանակ, ուժեղ Հայաստանը կկարողանա դիմագրավել թուրք-ադրբեջանական մերձեցմանը և որպես այլընտրանք միշտ կձգտի Իրանի ներգրավվածությանը տվյալ տարածաշրջանում:

Իրանը մեծապես ցանկանում է խորացնել համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ Հարավային Կովկասում, ինչն ակնհայտորեն հնարավոր է

միմիայն Հայաստանի միջոցով և հայկական հողում, հատկապես հաշվի առնելով Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ վերջերս ամրապնդված Մաքսային միությանն անդամակցելու ցանկության փաստը:

Ինչպես վերը արդեն նշեցինք, Հայաստանն էլ առավելապես շահագրգռված է խորացնելու Իրանի հետ տնտեսական հարաբերությունները: Սակայն **Հայաստան-Իրան տնտեսական հարաբերությունները** ցանկալի ծավալներ չեն ապահովում, և դա ունի իր թե՛ օբյեկտիվ, և թե՛ սուբյեկտիվ կողմերը: Նախևառաջ, հարկ է նշել, որ Հայաստանը 2003 թվականից հանդիսանում է Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ, և մեր օրենսդրությունը հարմարեցված է միջազգային ստանդարտներին, որը հաճախ չի համապատասխանում իրանական օրենքներին: Բացի այդ, Իրանը, այսքան տարի գտնվելով պատժամիջոցների տակ, առավելապես վարում է փակ տնտեսությանը բնորոշ քաղաքականություն, և թույլ է տալիս Հայաստանից ներկրել միմիայն այն ապրանքները, որոնք իրեն խիստ անհրաժեշտ են և իրանական շուկայում մրցակցություն չեն առաջացնի:

Հայաստան-Իրան հարաբերություններում մեծ ներուժ ունեն հատկապես **հայ-իրանական գիտական և մշակութային կապերը,** սակայն ակնհայտ է, որ այս ոլորտում ևս ամբողջովին չեն օգտագործվում առկա հնարավորությունները:

Թեև բավական տարբերություն կա Հայաստանի և Իրանի կրթական մակարդակներում, սակայն ցանկության դեպքում հնարավոր կլիներ որոշ ոլորտներում է՛լ ավելի խորացնել հարաբերությունների աստիճանը՝ գտնելով համագործակցության նոր ուղիներ:

Անհրաժեշտ է խորացնել փորձի փոխանակումները Հայաստանի և Իրանի գիտական, բժշկական, ինժեներիայի, քիմիայի, միջուկային ֆիզիկայի ոլորտի

մասնագետների միջև: Ակնհայտ է, որ այսօր Իրանը նոր ձեռքբերումներ է գրանցել ինչպես միջուկային ֆիզիկայի ոլորտում, այնպես էլ հավակնում է արդեն տիեզերքում իրականացնել որոշակի ուսումնասիրություններ (բաց է թողել մի քանի արբանյակ Ի.Գ.), այս ոլորտներում ևս կարելի է համագործակցել: Իրանը նմանապես ունի բավական արդիական լաբորատորիաներ, որտեղ հայ երիտասարդ գիտնականները կարող են իրականացնել հետազոտություններ: Իրանցի ուսանողները ակնհայտ հետաքրքված են Հայաստանում կրթություն ստանալու հարցում, հատկապես՝ բժշկության, քիմիայի, մեխանիկայի ոլորտներում:

ՀՀ մշակույթի նախարարությունը ԻԻՀ համապատասխան գերատեսչության հետ ունի պայմանավորվածություն՝ համագործակցելու միջազգային կառույցներում, մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու միմյանց մշակութային բարձրարժեք կառույցները, ինչը ողջունելի նախաձեռնություն է:

Հայաստան-Իրան հարաբերությունների վրա կարող է մեծապես ազդել **Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար խիստ կարևոր խնդիրների շուրջ** վերաբերմունքը, որոնց շրջանակին են դասվում իրանահայության վիճակը այսօր, Իրանի դիրքորոշումը Ղարաբաղի և Ցեղասպանության խնդիրների շուրջ:

Իրանում հայերը այսօր ապրում և արարում են, չեն ենթարկվում կրոնական հետապնդումների, ունեն իրենց սեփականությունները: Հայերը ունեն բավական մեծ քանակի սեփականություն թե՛ հողի, թե՛ անշարժ գույքի տեսքով: Հայությունը անարգել դավանում է իր կրոնը՝ հաճախելով առաքելական եկեղեցի, հայ մանուկները կարող են հաճախել հայկական դպրոցներ, տպագրվում են հայկական պարբերականներ: Հայերը անմասն չեն մնում նաև Իրանի ներպետական գործընթացներից:

Ինչ վերաբերում է Իրանի դիրքորոշմանը ղարաբաղյան խնդրի շուրջ, ապա պետք է փաստել, որ Իրանը բազմիցս հայտարարել է, որ պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Իրանը, միևնույն ժամանակ, գտնում է, որ հարցը պետք է լուծվի միմիայն բանակցությունների միջոցով:

Իրանը թեև միջազգային ատյաններում, որպես կանոն, պաշտպանել և պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն մեզ համար առավել կարևոր է Իրանի փաստացի իրականացրած քաղաքականությունը Հարավային Կովկասում և նրա դիրքորոշումը թուրք-ադրբեջանական մերձեցման հարցում և այդ համատեքստում Հայաստանին տրվող կարևորությանը:

Ցեղասպանության վերաբերյալ Իրանի դիրքորոշումը չի փոխվել վերջին հարյուր տարվա ընթացքում: Թեև 1915 թվականին Իրանի կառավարության ջանքերով Իրանի տարածքում կանխվեց հայերի սպանդը թուրքական ջոկատների կողմից, այսօր պաշտոնական Թեհրանը չի ցանկանում խոսել դրա մասին՝ հաշվի առնելով ինչպես Թուրքիայի հետ ունեցած տնտեսական սերտ հարաբերությունները, այնպես էլ Իրանի տարածքում բնակվող թյուրքախոս իրանցիների առկայությունը: Սակայն, միևնույն ժամանակ, Իրանի ղեկավարությունը հայությանը չի արգելում յուրաքանչյուր տարի ապրիլին արտահայտել իր ցավը թե՛ ԻԻՀ մեջլիսում, թե՛ իրականացնելով բողոքի երթեր՝ ներքին գործերի նախարարության կողմից նախապես նշված երթուղով, և թե՛ լրագրերում տպագրելով նյութեր:

Այս ամենով հանդերձ, գալիս ենք այն եզրակացության, որ Հայաստան-Իրան հարաբերությունները թեև չեն հասել ամենաբարձր մակարդակին, քանզի բոլոր ոլորտներում առկա են

բացթողումներ, սակայն ակնհայտ նկատվում է երկուստեք քաղաքական մեծ կամք և ներուժ՝ այդ հարաբերությունները որակական նոր մակարդակի հասցնելու հարցում, ինչը բխում է երկու երկրների շահերից: Կարծում ենք, Արևմուտքի կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների թեթևացման շնորհիվ, Իրանը կարող է ունենալ ֆինանսական նոր հոսքեր, ինչը թույլ կտա իրականացնել նախապես ծրագրված, սակայն դեռ կյանքի չկոչված մի շարք ծրագրեր: Ինչն էլ, իր հերթին, հայ-իրանական հարաբերություններին նոր լիցքեր կհաղորդի:

Summary

Armenia-Iran Relations since Independence of Armenia

Armenian-Iranian relations have a history of centuries, however this book reflects on the period after Armenia gained independence in 1991 and focuses on the Armenia-Iranian economic, political, scientific and cultural relations.

Primary sources of this book are archival documents from the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, and exclusive interviews with diplomats and politicians.

Armenia-Iran political relations currently develop in a stable and balanced pace, in the spirit of friendship, genuineness, trust and constructiveness. Although political relations are less active than economic ties, the diplomats from both sides have persistently worked for years to reach this level of development.

Armenia gained independence on September 21, 1991. Islamic Republic of Iran was among the first countries to recognize Armenia's independence (December, 1991). Successively, Armenia and Iran signed a declaration on establishment of full diplomatic relations in Tehran on February 9, 1992. Another document signed on the same day and named as Declaration on Principles and Goals of the Relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran stated that the parties base their relationship upon principles of mutual respect for the territorial integrity and non-interference in the domestic affairs. One month later the countries opened embassies in Tehran and Yerevan.

Both countries have corresponding interests that deems it necessary to deepen the relations. Armenia is the only country neighboring Iran that has no problematic issues with Tehran. Both parties are interested in political stability in the South Caucasus. Both countries are wary of military buildup of Turkey. And these make only one part of bilateral interests.

Minister of Foreign Affairs of IRI Ali Akbar Velayati made his first official visit to Yerevan on February 28, 1992. The main aim of the visit was a discussion of international and regional issues. In

particular, he stated readiness of Iran to study possibilities of mediation of Nagorno-Karabakh conflict. During these discussions the Iranian side promised to support land-locked and blockaded Armenia by providing its territory to connect to the world. The Minister of Foreign Affairs of Iran underlined that Armenia will be subjected to blockade any longer. According to the Memorandum of Understanding signed between the Foreign Ministries of RA and IRI, two countries should organize annual political consultations. Those political consultations do take place every year and are highly regarded by both Armenian and Iranian sides as a practical tool to solidify mutual trust.

Respective friendship groups of the members of parliaments were established at Armenian National Assembly and Iranian Majlis in 2001. Although those friendship groups have periodical mutual visits, the efficiency and usefulness of those groups is under question.

The President of IRI M. Khatami conducted first official visit to Armenia in 2004 to open a new page in the Armenian-Iranian relations. The President of RA R. Kocharyan conducted his first official visit to IRI on July 5, 2006 to meet with newly elected president of Iran Mahmud Ahmadinejad. This visit resulted in seven memoranda on cooperation in energy, economy, industry, law and justice, cultural heritage etc. Justice bodies of Iran and Armenia agreed on extradition i.e. one state giving over an individual to another state for purposes of criminal trial or punishment.

Although even today political relations between Armenia and Iran significantly succumb to cooperation in economy, however one of the main achievements in Armenian-Iranian political dialogue is the close cooperation of the countries at UN and other international organizations. Throughout all these years, two countries nearly always have defended and respected each other's interests and in case of high tension they have taken neutral stance in order not to harm at least.

Armenian-Iranian relations are important not only for Armenia but also for Iran as well. Iran efficiently uses the positive dynamics of the relations and thus negates accusations in religious extremism by

showing a great example of close relationship with a Christian nation. Additionally, Tehran pays much attention to the Armenian community in Iran.

1. There is mutual interest in development and strengthening of Armenian-Iranian relations. By reinforcing its relations with Armenia, Iran solves two questions at once:

a. Shows to the international community that Islamic Republic of Iran is proponent of tolerant approach towards all nations and religions, thus making labeling Tehran on religious extremism void.

b. Relatively powerful Armenia is advantageous for Iran because Yerevan will resist to Turkish-Azerbaijani solidification in the Caucasus and will always try to bring in the Iranian involvement into the region.

c. Armenia might be a reasonably trustful rearward in case of possible military scenarios against Iran.

2. Iran wants to enlarge cooperation with Russia and with Armenia having joined to the Eurasian Economic Union, Yerevan becomes more appealing counterpart and an economic bridge.

3. More and more openly Iran already mentions Armenian Iranians residing in different parts of the world as a lobby that might be used to promote Iranian interests.

Armenia-Iran economic relations develop in a much more dynamic and productive way. In 1990'ies Iran was the second largest foreign trade partner of Armenia, succumbing only to Russia. Armenia and Iran signed an agreement on trade and economic cooperation in 1995. This resulted in tripling of commodity turnover and exceled the benchmark of 200 mln USD. The first article of the agreement underlined the importance of developing long-term trade and economic relations on the basis of mutual benefit. Second article mainly focused on financial policies, banking sector, industry, transport and communications, agriculture, construction and architecture, and tourism. Third article expressed mutual anticipation of the most favorable trade conditions.

Trade and economic relations flourished also due to opening of Meghri Bridge on January 9, 1996. This bridge opened up Armenia

to Persian Gulf, Far East, and South-East Asia. Cargo flow through Iran multiplied by 3-4 times.

Bilateral economic relations are not limited only to trade and often include larger programs of cooperation. For instance, high-voltage transmission line was opened in 1997 serving for seasonal exchanges of electricity; Armenia provides electricity to Iran in summer, and receives back during winter. Also, parties plan to construct a hydro-power plant on Araxes River.

Shortly after official visit of President R. Kocharyan to Iran, the countries opened Agarak switch-gearing unit in Armenia, the most powerful unit in the South Caucasus. Countries started working on construction of new transmission lines.

During the official visit of the President of Armenia to Iran on July 5, 2006, the main agenda was to finalize a number of agreements in economic relations, namely Iran-Armenia gas pipeline, second high-voltage transmission line and construction of an alternative highway.

Iran-Armenia gas pipeline was finally opened on March 19, 2007 in Agarak town by Presidents Robert Kocharyan and Mahmud Ahmadinejad. The President of IRI highly appreciated the agreements with Armenia in the areas of energy, gas, petrol and water resources stating that "These projects will solidify bilateral relations". According to the agreement, Iran will start supplying to Armenia 1,1 bln m3 annually until 2019, and 2,3 bln m3 annually afterwards. In total, during 20 years Iran will supply 35 mln m3 natural gas to Armenia as a barter for commensurate electricity. For every 1 m3 of gas Armenian will supply 3 kWt electricity to Iran.

On the day of gas pipeline opening ceremony two presidents signed the agreement regarding construction of two hydro-power plants on the banks of Araxes River. Each plant will cost 200 mln USD and each one will produce 140 mWt power. Armenian and Iranian sides currently discuss necessity of new energy projects, in particular construction of the second gas pipeline is being discussed.

On April 5, 2007 the Government of Armenia allocated 1,863 bln AMD (5,1 mln USD) to the Ministry of Communications and Transport for the construction of alternative road to Iran passing through the route Meghri-Shvanidzor-Verishen-Tsav-Kapan in order

to avoid Kapan-Kadjaran road which due to Lichq pass is nearly always closed in winter time. The table below gives a clearer picture of Iran-Armenia economic cooperation during last 20 years.

Import Export balance between Armenia and Iran according to Armenian State Statistics data (in USD)[148]			
Year	Export	Import	Total balance
1993	5,5 mln USD[149]*	15,8 mln USD*	21,3 mln USD* /2,9/
1994	14,6 mln USD*	42,5 mln USD*	57,1 mln USD* /2,9/
1995	35.042.100	59,8 mln USD*	94.842.000 /1,7/
1996	43.912.700	149,8 mln USD*	193.712.700 /3,4/
1997	42.583.600	88,7 mln USD*	131.283.000 /2,5/
1998	31.392.300	63,9 mln USD*	95.292.300 /2,04/
1999	34.160.800	78,5 mln USD*	112.660.800 /2,3/
2000	30.089.000	82,9 mln USD*	112.989.000 /2,8/
2001	31.870.400	78.120.100 *	109.990.500 /2,5/
2002	31.468.600	62.150.400 *	93.619.000 /1,97/
2003	22.478.900	51.281.300	73.760.200 /2,3/
2004	30.559.600	62.284.700	92.844.300 /2,4/
2005	28.513.000	89.166.600	117.679.600 /3,1/
2006	29.642.900	114.399.500	144.042.400 /3,9/
2007	38.499.000	141.663.000	180.162.000 /3,7/
2008	25.056.300	202.991.200	228.047.500 /8,1/
2009	33.025.900	162.398.000	195.423.900 /4,9/

[148] National statistics service of RA, database on foreign trade http://www.armstat.am/am/index.php?nid=380&thid[]=364&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&qlfset=5

[149] Numbers with asterisk are obtained from the Embassy of Iran in Armenia, since statistical services did not posess that information.

2010	84.831.200	199.884.700	284.715.900 /2,4/
2011	106.250.400	216.792.300	323.042.700 /2,04/
2012	108.512.100	219.413.100	327.925.200 /2,02/
2013	95.036.900	198.494.700	293.531.600 /2,1/

Thus, one of the most important issues of the development of Armenia-Iran economic relations is normalization of import-export balance. The other priorities include direct investments and infrastructure. The solution is connected to further development of Armenian-Iranian trade and economic relations. However, Iran is still following protectionist policies to promote own products.

In reality, not so high level of Armenia-Iran economic ties has other explanations as well:

1. Armenia is a member of World trade Organization (since 2003) and our legislature is corresponding to international standards that are not always matching with Iranian ones.

2. Iran leads a closed economy policy and allows to import only those goods from Armenia that are highly necessary and will not create competition in Iranian market, meanwhile Iran exports to Armenia goods of vital importance.

3. Iran is not ready to introduce low taxes even on few kinds of goods.

4. On the other hand, Iran has well established economy and there will be an issue of competition for commodities made in Armenia in case of establishment of a free economic zone.

Armenia-Iran scientific-cultural relations have the largest potential for development. Scientific and cultural relations between Armenia and Iran were set up on February 8-10, 1992 when the document on establishment of diplomatic relation was in the process of signing. Actually, the 21st and 22nd paras of that document related to education.

However, the present documents did not constitute sufficient basis for establishment of deep relations in scientific area. For a long time

cooperation between Armenia and Iran in education field was being implemented in the frames of 2005-2008 project document that envisioned exchanges of students and scholars, provision of scholarships, sharing of experience and information, and direct liaisons between different universities and educational institutions of Armenia and Iran.

2006 was marked with signature of the "Memorandum of Understanding between the Governments of RA and IRI on Establishment Educational and Cultural Centers and their Activities". With the first para, the parties took responsibility to establish educational and cultural centers of the partner country[350].

Today around 3,000 citizens of Iran get education in Armenia, and Farsi is being taught in more than 10 mainstream schools in Armenia[351].

RA-IRI cultural relations first became a topic of an agreement on May 7, 1992 when the parties declared on structured dialogue on development of Armenian-Iranian scientific and cultural ties. Certainly, the largest stake in the development of cultural relations own the Armenian community in Iran that was the connecting bridge in nearly all types of bilateral relations. The declaration signed between Iran and Armenia on 9 February, 1992 also placed cultural ties on important position, hence paras 20, 24 and 25 related to the establishment and development of cultural relations. In particular, the sides took responsibility to facilitate group exchanges in the field of culture, arts and cinema, organize photo and book exhibitions, week-long film festivals etc.

During the first years of independence, the Republic of Armenia, as a sign of strengthening Armenian-Iranian relations, took decision to hand the Blue Mosque, situated in the heart of Yerevan, to Iran with in order to make it a cultural center. Probably, with this step Armenia

[350] Memorandum of Understanding between the Governments of RA and IRI on Establishment Educational and Cultural Centers and their Activities, http://www.parliament.am/library/erkqxm/2006/12.pdf

[351] G.Iskandaryan, Armenia-Iran Contemporary Relations, View from Armenia, Situation and Development Trends in the Middle East, Moscow, 2013, p. 91.

hoped to get a similar type of building in Tehran for the purpose of establishment of a cultural center of Armenia.

Nevertheless, we should note that there are more than 30 Armenian sports and cultural centers and unions in Iran, in particular, *Raffi, Sanahin* and most notably *Ararat* sports and cultural society that owns a large sport facility. The facility has a soccer field with 7,000 seating capacity, several sport halls, two pools, a café, a cafeteria, a chapel etc. *Ararat* society has soccer and basketball teams that participate in Tehran championship. In 2000 the President of Iran Mohammad Khatami donated 120,000 USD to the *Ararat* soccer team[352] and promised that the *Ararat* society will be under permanent care of Iranian Government.

In general, Iran does show care towards Armenian cultural and spiritual heritage on state level. Since 1931, *Alik* daily has been published in Tehran in Armenian language. With its electronic version available, it has thousands of readership. *Arax* magazine is also a popular channel of communication for Armenian community. It is also very important to represent the Armenian culture and arts in Iran so that Iranians can identify Armenians also by arts, music etc. Here, it is essential to be culturally sensitive so that the selected pieces of art to exhibit are in conformity with Islamic values.

There are plenty of Armenian churches in Iran. Only Tehran is hosting eight Armenian churches. On July 2-10, 2008 with the efforts of the Islamic Republic of Iran the Armenian Apostolic St. Thaddeus historical Monastery[353] has been recognized as UNESCO world heritage.

Armenian-Iranian cultural relations are developing rather slowly buut have great potential.

1. We welcome that fact that the Ministry of Culture of RA has agreement with its Iranian counterpart to cooperate at international fora, and this has been successfully implemented so far.

[352] Luys, 15.08.2000, p 3.

[353] St. Thaddeus was built on the tomb of the Apostle Thaddeus. This is one of ancient Armenian monasteries, it was built in VI century and renovated in IX century. The monastery was the religious center of Armenians of Atrpatakan from 1227 to 1833.

2. The culture of Iran is being exhibited in Armenia on a very high level, and this activity has not been hindered by any Armenian state institution.

3. Reciprocally, it would be greatly appreciated if the Armenian cultural days in Iran would also be implemented at last. The Armenian cultural days would provide good opportunity to represent the Armenian cultural values in Iran certainly in a culturally sensitive way towards Islamic norms. That activity would help the larger part of Iranian society to identify and comprehend the neighboring nation in a better way.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցազրույց ՀՀ-ում և ԻԻՀ-ում պետական, քաղաքական, դիվանագիտական, հասարակական գործիչների հետ

Հարցազրույցները իրականացվել են 2012-2014 թվականներին, Երևանում, Թեհրանում, Սպահանում: Հարցազրույցներին մասնակցել են ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Գագիկ Հարությունյանը (1992-96թթ) (այժմ Սահմանադրական դատարանի նախագահ) ՀՀ նախկին արտգործնախարարներ՝ Ռ. Հովհաննիսյանը, Ա. Արզումանյանը, Վ. Փափազյանը, Վ. Օսկանյանը, ցավոք ՀՀ գործող արտգործնախարար Է. Նալբանդյանը հրաժարվեց հարցազրույց տալ: ԻԻՀ-ում ՀՀ նախկին դեսպաններ Վ. Բայբուրդյանը, Գ. Ղարիբջանյանը (այժմ՝ ԱՄԷ-ի ՀՀ դեսպան), Կ. Նազարյանը (այժմ՝ ՀՀ փոխարտգործնախարար) և Գ. Առաքելյանը, ՀՀ-ում ԻԻՀ նախկին դեսպան Մ. Ռեյիսին: Ինչպես նաև՝ ՀՀ Ազգային ժողովում Հայ-իրանական բարեկամության խմբի նախագահ Գ. Սահակյանը (այժմ՝ ՀՀ ԱԺ նախագահ), ՀՀ էներգետիկայի նախկին նախարար Ա. Մովսիսյանը, ՀՀ էներգետիկայի փոխնախարար Ա. Սիմոնյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության գբոսաշրջության վարչության պետ Մ. Ապրեսյանը:

Հարցազրույցի նպատակն էր՝ պահպանելով տրամաբանական շղթան՝ միևնույն ժամանակ ճշտել և հանրությանը ներկայացնել Հայաստան-Իրան հարաբերությունների նկատմամբ մեր պետական այրերի մոտեցումները և նրանց ներդրած ջանքերը:

Հարցազրույցներ են անցկացվել նաև իրանահայության համայնքային ղեկավար գործիչների հետ.

Թեհրանի թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսյան, Սպահանի թեմի առաջնորդ Ծ. վարդապետ Բ. Չարեան, Ատրպատականի թեմի առաջնորդ Գրիգոր Ծ. Վարդապետ Չիֆթճյան (այժմ՝ եպիսկոպոս), ԻԻՀ ազգային ժողովի պատգամավոր Կ. Խանլարիի (Խանլարյան) (ներկայացնում է Ատրպատականի և Թեհրանի խնդիրները) և Ռ. Բեգլարյան (ներկայացնում էր Սպահանի խնդիրները) Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ Լևոն Ահարոնյան, Ատրպատականի պատգամավորական ժողովի նախկին ատենապետ Մ. Թումանյան, «Ալիք» թերթի գլխավոր խմբագիր Դ. Մելիքյան, Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության կենտրոնական վարչության նախագահ Համլետ Խալոյան, Սպահանի թեմի Պատգամավորական ժողովի թեմական խորհրդի ատենապետ Նոել Մինասյանի հետ:

Հարցազրույցը իրականացվել է հիմնականում ձայնագրման եղանակով, որի մասին տեղեկացվել է մասնակիցը, այնուհետև գրի է առնվել նյութը և ուղարկվել հարցազրույցի մասնակիցներից նրանց, ովքեր պահանջել են, որպեսզի ծանոթանան նյութի վերջնական տեսքին: Նրանցից ոմանք իրականացրել են փոփոխություններ նյութում, սակայն հեղինակի կողմից այդ փոփոխությունների մի մասն է ընդամենը ընդունելի համարվել, քանզի վերջնական տարբերակը, այնուամենայնիվ, հարցազրույցի պահին արձանագրվածն է: Բոլոր հարցազրույցները չէ, որ տեղադրվել են հավելվածների շարքում, այլ միայն նրանք, որոնք, ըստ հեղինակի՝ խիստ կարևոր են ընթերցողի և հետազոտողների համար, սակայն բոլոր հարցազրույցները օգտագործվել են աշխատության տարբեր գլուխներում:

Վ. Բայբուրդյանի հետ հարցազրույցը իրականացվել է գրավոր տարբերակով, Կ. Նազարյանի և Ատրպատականի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Չիֆթճյանի հետ հարցազրույցն անցկացվել է

նամակագրության տեսքով՝ համացանցի միջոցով: Առկա են բոլոր հարցազրույցների բնօրինակները:

Ձեռք են բերվել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության արխիվային նյութերը՝ ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում արձանագրած ձեռքբերումների վերաբերյալ: Մեծապես օգտագործել ենք ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնում (արխիվում) պահպանվող ողջ բաց նյութը:

Հավելվածներ բաժնում հարցազրույցները տեղադրվել են ըստ այդ պահին զբաղեցրած դիրքի աստիճանակարգի:

Հարցազրույցների իրականացմանը և տեղեկատվության ձեռք բերմանը մեծապես աջակցել են Կիրո Մանոյանը, Արտակ Շաքարյանը, Արմինա Դարբինյանը, Էդուարդ Շարմազանովը, Սալբի Ղազարյանը, Արթին Առաքելը, Վերգինե Միրզախանյանը, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Շնորհակալություն ենք հայտնում Աշոտ Թավադյանին՝ աշխատանքի երկրորդ գլխին մասնագիտական խորհուրդներ տալու կապակցությամբ: Շնորհակալություն ենք հայտնում Հայկ Խեմչյանին, Նաիրա Իսկանդարյանին՝ աշխատանքը սրբագրելու համար:

Երախտիքի խոսք եմ ուղղում նաև ուսուցիչներիս՝ **Վահան Առաքելի Բայբուրդյանին և Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանին:**

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ փոխնախագահ, Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96թթ).

Հուլիսի 12, 2013, Երևան

Պարո՛ն Հարությունյան, ՀՀ անկախության առաջին տարիներին Դուք բավական մեծ ներդրում եք ունեցել հայ-իրանական հարաբերությունների ձևավորման հարցում, կխնդրեի ներկայացնել այն:

-Հայաստանի՝ իբրև անկախ պետության, առաջին քայլերը հարաբերություններ հաստատելու ուղղությամբ իրականացվեց Իրանի հետ, որի հետ զարգացման մեծ հեռանկարներ էինք տեսնում: Հայաստանը գտնվում էր շրջափակման մեջ, Ռուսաստանի հետ հարաբերությունները միջնորդավորված էին և բավական դժվար էինք հարաբերվում՝ հատելով Վրաստանի տարածքը:

Փոխնախագահի մակարդակով Իրանի հետ աշխատանքների համակարգումը հարաբերություններին բարձր, պետական նշանակություն էր տալիս: Իրանական կողմից աշխատանքները համակարգում էր ԻԻՀ կենտրոնական բանկի նախագահը: Մեր կողմից ընդգրկված էր նախարարարական մեծ կազմ, տարեկան նվազագույնը երկու անգամ ես հանդիպում էի ԻԻՀ նախագահ՝ Հ. Ռաֆսանջանիի, այնուհետև Մ. Խաթամիի հետ, հանդիպել եմ պառլամետնի նախագահի, անվտանգության խորհրդի քարտուղարի հետ: Սկզբունքային հարցերում նրանց հետ գալիս էինք համաձայնության, այնուհետև սկսվում էր այդ ամենը կյանքի կոչելու գործընթացը:

Առաջին խնդիրն էր փոխել իրանցիների մտայնությունը նորանկախ Հայաստանի նկատմամբ, ստեղծել որոշակի պայմանագրա-իրավական հիմք հարաբերությունների զարգացման համար և լուծել կոնկրետ խնդիրներ՝ ոչ միայն զուտ ընթացիկ առևտրային, զբոսաշրջային կամ կոմունիկացիոն տարբեր հարցեր, այլ նաև հեռանկարային մի

շարք խնդիրներ: Օրինակ՝ տարիներ պահանջվեց մինչև մենք կարողացանք կյանքի կոչել գազատարը, հաղթահարվեց բավական լուրջ բարդություններ, իսկ դրա շուրջ քննակումները սկսել էինք դեռևս 1992թ.-ից:

Սկզբնական շրջանում բավական դժվար էինք հարաբերվում իրանական կողմի հետ, առկա էր մտածելակերպի տարբերություն: Ես հիշում եմ, երբ հանդիպեցի Մեջլիսի նախագահ Նաթեղ Նուրիի հետ, նա իր խոսքում ասաց, որ «Աշխարհում երկու շեյթան կա՝ ԱՄՆ և Ռուսաստանը»: Ես, իհարկե, փորձում էի բացատրել, որ այսօրվա Ռուսաստանը տարբերվում է նախորդից՝ ԽՍՀՄ հասարակարգից և պետք է փորձել բարիդրացիական հարաբերություններ հաստատել այսօրվա Ռուսաստանի հետ: Ռուսաստանում էլ գիտեն, թե ես որքան ջանքեր եմ ներդրել Ռուսաստանի նկատմամբ Իրանի կարծիքի վերափոխման ուղղությամբ, քանի որ դա կարևոր էր նաև մեզ համար: Խնդիրը կայանում էր նրանում, որ Իրանը տեսնում էր մեզ Ռուսաստանի հետ սերտ համագործակցության մեջ և մեզ հետ հարաբերությունները որոշակիորեն պայմանավորում էր Ռուսաստանի հետ ունեցած իր հարաբերություններով:

Պետք էր ճանաչել նախ իրանցու հոգեբանությունը, հարկավոր էր ամեն ինչ անել, որ նրանք քեզ անմնացորդ հավատային: Իրանցու համար ամենամեծ վիրավորանքն այն է, երբ նրան ստախոս ես անվանում, իհարկե հարաբերությունների ժամանակ նրանք կարող են կիրառել արևելյան խորամանկություններ, բայց իրենք դիմացինի մեջ ամենից շատ գնահատում են շիտակությունը, անկեղծությունը:

Պարո՛ն Հարությունյան, ես գիտեմ, որ Դուք անմիջական մասնակցություն եք ունեցել Արաքսի վրա կառուցված Հայաստան-Իրան կամուրջի բացման աշխատանքներում, կներկայացնեք այդ գործընթացը

-Այո, Հայաստան-Իրան կամրջի ծրագիրը դարձել էր Հայաստանի համար կենսական խնդիր: Սկզբնական շրջանում որոշվեց ժամանակավորապես օգտագործել պանտոնային նավակամուրջ, որը պետք է ծառայեր երկու ամիս, սակայն

իրականում այն ծառայեց երկու տարի, և Իրանի հետ առևտուրը այդ պանտոնային կամրջով խիստ կարևոր էր: Պանտոններն արդեն շարքից դուրս էին եկել և ամեն վերանորոգման համար նվազագույնը պետք էր լինում հինգ ժամ, իսկ նավակամրջի փակվելու դեպքում Երևանում մոտավորապես 5%-ով գների ցատկ էր գրանցվում: Շատ դժվար վիճակում էինք գտնվում, մանավանդ որ Հայաստանում մի շարք ապրանքներ խիստ դեֆիցիտ էին, հատկապես այլուրը՝ որ հաճախ Թուրքիայից էինք գնում, բայց Հայաստան էր մտնում Իրանի տարածքով: Կամրջի հարցը դարձել էր խիստ կենսական, սակայն մենք կամուրջ կառուցելու միջոցներ չունեինք: Մենք կարողացանք ավստրալիահայերից ստանալ մոտ մեկ միլիոն դոլար, սակայն կամրջի կառուցման համար անհրաժեշտ էր մոտ երկու միլիոն դոլար:

Իրանական կողմն էլ չէր կարողանում վերջնական եզրակացության գալ, թե կամրջի կառուցման և շահագործման դեպքում ինչ սկզբունքով է մեզ հետ մտնելու իրավապայմանագրային հարաբերությունների մեջ:

Ես իրանցիներին առաջարկեցի երեք տարբերակ: Ի դեպ, նրանց համար շատ ավելի հաճելի է, երբ դու իրենց ընտրության հնարավորություն ես ընձեռում:

1. Կամուրջը կառուցում ենք մենք, և այն դառնում է մեր սեփականությունը,հետևաբար կամուրջը հատելու համար որոշակի վճար ենք նշանակում, որպեսզի ապահովենք շահագործումը:
2. Կամուրջը կառուցում է իրանական կողմը, այն դառնում է Իրանի սեփականությունը նույն իրավական սկզբունքներով:
3. Մինչև Արաքս գետի կենտրոնի մի մասը կառուցում է իրանական կողմը, մյուս մասը՝ մենք, մեր կառուցածը դառնում է մեր սեփականությունը, համապատասխանաբար, մյուս մասն էլ՝ Իրանի սեփականությունը: Որևէ տուրք չենք սահմանում, մեր և իրանական մեքենաներն առանց վճար կատարելու ազատ անցնում են կամրջով

Նախագծային ծախսերը անում էր հայկական կողմը՝ քննարկելով, համաձայնեցնելով իրանական կողմի հետ, մյուս ծախսերը մնում էր իրանական կողմի վրա:

Իրանական կողմը ընտրեց երրորդ տարբերակը, որը նաև մեզ էր ձեռնտու: Մենք սկսեցինք աշխատանքները: Հարկ է նշել, որ Արաքսի վրա կամրջի կառուցման աշխատանքներին իրանական կողմի վրա փորձում էր ազդել Ադրբեջանը: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը նամակ էր հղել Հ. Ռաֆսանջանիին, որը դարձավ ԻԻՀ ազգային անվտանգության խորհրդի քննարկման հարց: Այդ նամակը ես տեսել եմ, որտեղ բառացիորեն նշված էր. «Ավելի լավ է դուք զենք մատակարարեք Հայաստանին, բայց հրաժարվեք կամրջի կառուցման գաղափարից: Եթե դուք այդ կամուրջը կառուցեք, մեր հարաբերությունները առնվազն 100 տարի այլևս չեն վերականգնվի»: Նման խիստ պահանջ էր դրվել իրանական կողմի առջև, և մեզ տեղեկացրին առկա փակուղային վիճակի մասին: Այսպիսի պայմաններում էինք աշխատում, սակայն, և ի վերջո կառուցվեց այդ կամուրջը: Այդ հանձնաժողովը գլխավորելու ժամանակ ամենահիշարժան պահը ինձ համար թերևս կամրջի բացումն էր:

Պարո՛ն Հարությունյան, ես տեղյակ եմ որ Ձեզ վրա՝ իբրև ՀՀ փոխնախագահի, դրվեց մի շատ լուրջ և բարդ առաջադրանք, այն է՝ կարգավորել 1994թ. ԻԻՀ օդանավի կործանման արդյունքնում առաջացած խնդիրը: Խնդրում եմ ներկայացրեք այդ գործընթացը:

- Դեռ նոր էին կարգավորվել հարաբերությունները Իրանի հետ, որոնց տրվել էր հեռանկարային միտվածություն, ստորագրվել էին 30-ից ավելի պայմանագրեր մեզ համար բավական լարված վիճակում: Ղարաբաղում պատերազմը շիկացած էր, և հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ իրանական ինքնաթիռի աղետը: Հայկական կողմը ռմբակոծել էր իրանական մարդատար ինքնաթիռը, և իրանական կողմը ամենավրդովված կերպով արձագանքեց խնդրին: Անգամ հայտարարվեց, որ կխզի հարաբերությունները, եթե Հայաստանը անհրաժեշտ բացատրություն չներկայացնի: ՀՀ

նախագահը անմիջապես հրավիրեց Անվտանգության խորհրդի նիստ՝ քննարկելու ստեղծված իրավիճակը: Միակ ելքն այն էր, որ ես անմիջապես մեկնեի Իրան և փորձեի տեղում քննարկել ստեղծված իրավիճակը: Բայց ես անմիջապես չմեկնեցի, որովհետև ինձ անհրաժեշտ էր մանրամասը քննել գործը և դեպքի հետ կապված հավաքել տեղեկություններ: Ես հրավիրեցի մասնագետների, գրեթե երկու օր ու գիշեր աշխատեցինք «դոսյե» պատրաստելու վրա, և այն մոտավորապես 250 էջանոց մի թղթածրար դարձավ, որտեղ հավաքվել էին տարբեր փաստաթղթեր: Այս ամենով հանդերձ, ինձ մոտ առաջացել էր մոտ 15 հարց, որոնց պատասխանները ես չունեի: Ես այսօր էլ չեմ մանրամասնի այդ հարցերը, բայց այդ ժամանակ ես զարմացա, որ իրանական կողմը այդքան լիարժեքորեն պնդում էր մեր մեղավորության հարցը՝ չտալով, որոշ հարցերի պատասխաններ: Եվ ես փորձեցի հարցին մոտենալ ոչ թե մեղանչողի դիրքերից, այլ առաջին հերթին պարզել, թե ինչ է իրականում տեղի ունեցել:

Պատվիրակությամբ մեկնեցինք Իրան, մեզ դիմավորեց փոխարտգործնախարար Վայեզին, որի հետ մեր հարաբերությունները բավական ջերմ էին: Մեզ հետ հարաբերությունների մակարդակը այն աստիճան էր բարձր, որ անգամ եղել են իրավիճակներ, երբ Ռաֆսանջանին կասեցրել էր ԻԻՀ ազգային անվտանգության խորհրդի նիստը Վայեզիին ուղարկել մեզ մոտ գաղտնի բանակցությունների, այս կամ այն հարցի շուրջ, որպեսզի իրենք կարողանան կողմնորոշվել՝ ինչպիսի որոշում ընդունեն: Կարելի է ասել, որ մեր կարծիքը որոշ հարցերի հետ կապված բավական բարձր էր գնահատվում անգամ ԻԻՀ ազգային անվտանգության խորհրդի մակարդակով:

Այնուամենայնիվ, Վայեզին այս անգամ մեզ չափազանց սառը դիմավորեց, ես փորձեցի կատակել, որպեսզի այդ սառը մթնոլորտը չկարևորվի, սակայն Վայեզին ասաց. «Պարո՛ն Հարությունյան, իզուր եք կարծում, թե այս սառույցը հեշտությամբ կկոտրվի: Միակ ճանապարհը հետևյալն է, դուք պետք է գնաք գերեզմանատուն, ծաղիկներ դնեք նրանց

շիրիմներին ապա, կիրավիրենք հարազատներին, և դուք պետականորեն ներողություն կխնդրեք կատարվածի համար, և կերաշխավորեք փոխհատուցում, որից հետո մենք կմտածենք, թե այսուհետ ինչպես ենք զարգացնելու մեր հարաբերությունները»: Ես նրան պատասխանեցի. «Ես բոլորովին մտադրություն չունեմ այդ ճանապարհով գնալու, քանի որ, ես չեմ կարծում, թե հայկական կողմը մեղավորություն ունի այս հարցում: Մենք եկել ենք որոշակի հանգամանքներ պարզելու, Դուք պետք է ինձ համար հանդիպում կազմակերպեք այն անձնավորության հետ, որն այս հարցում ինձ հետ զրուցելու պատրաստվածություն և լիազորություն ունի»: Վայեզին, իհարկե, զարմացավ, սակայն որոշ հարցեր քննարկելուց հետո հասկացավ, որ ես շատ լուրջ եմ տրամադրված, և խնդրեց, որ մենք մի փոքր սպասենք, քանզի նա պետք է խորհրդակցեր ստեղծված իրավիճակի շուրջ՝ ընդհուպ նախագահի մակարդակով:

Որոշ ժամանակ սպասելուց հետո ինձ հայտնեցին, որ այդ քննարկում տեղի է ունենալու ԻԻՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, ԻԻՀ այսօրվա նախագահ Ռոհանիի հետ:

Մինչ այդ ես Ռոհանիի հետ հանդիպումներ ունեցել էի: Նա ինձ միշտ շատ ջերմ էր ընդունել: Նրանք նստում էին պառլամենտի շենքում, և նա միշտ ինձ ընդառաջ էր գալիս, ժպտերես ու գրկաբաց ընդունում և ողջունում էր: Այս անգամ, երբ մտա նրա սենյակ, Ռոհանին գրեթե չբարձրացավ աթոռից, շատ սառը ընդունեց ինձ: Ես, իհարկե, չկարևորեցի այդ ամենը ու սկսեցի մեր զրույցը: Ես խնդրեցի, որ բացի թարգմանչից ոչ մեկ չմասնակցի մեր զրույցին, որովհետև անհրաժեշտ էր բացել շատ փակագծեր: Մեր զրույցը տևեց մոտավորապես մեկուկես ժամ, այնուհետև Ռոհանին ասաց, որ ինքը որոշում չի կարող կայացնել, և նա պետք է ամեն ինչ զեկուցի նախագահին, բայց այդ զրույցի ընթացքում նա իր նախկին վիճակի մեջ մտավ, արդեն կար ժպիտ, որոշ ջերմություն: Երբ նա, ինձ թևանցուկ արած ճանապարհեց մինչև մեքենան, անգամ դուռը բացեց, որ ես նստեմ, ինձ մոտ ներքին

վստահությունս ամրապնդվեց, որ ամեն ինչ հարթվելու է, մինչդեռ իրանական կողմը քարացել էր:

Մեզ հաղորդել էին նախապես, որ այլևս ոչ մի ընդունելություն չի լինելու, բացառված է, որ ընդունի ԻԻՀ նախագահը և այդ հանդիպումից անմիջապես հետո մենք պետք է մեկնեինք երկրից, եթե չէինք պատրաստվում կատարել նրանց պայմանները: Բայց ես որոշեցի սպասել: Երկուսուկես ժամ անց ինձ տեղեկացրցին, որ նախագահ Ռաֆսանջանին ցանկանում է հանդիպել ինձ հետ:

Գնացինք նախագահի հետ հանդիպման, դա իմ երրորդ հանդիպումն էր Հ. Ռաֆսանջանիի հետ: Այդ հանդիպումը ոչնչով չտարբերվեց նախորդ երկու հանդիպումներից: Ռաֆսանջանիի առաջին նախադասությունն էր. «Պարո՛ն Հարությունյան, այն թեմայով չենք խոսելու, Ռոհանին ինձ ամեն ինչ պատմել է, մենք պետք է խոսենք մեր երկրների հետագա հարաբերությունների զարգացման և հեռանկարային ծրագրերի մասին»:

Ինքաթիռի թեմայով ես այլևս երբեք չխոսեցի ոչ մեկի հետ, հարցը համարվեց փակված: Եթե նրանք կտան այդ 15 հարցերի պատասխանը, մենք նորից կանդրադառնաք խնդրին: Մենք մինչև այժմ որևէ պատասխան չենք ստացել այդ հարցերի հետ կապված:

Երկու թե երեք տարի անց Իրանում փոփոխություններ էին կատարվել, և մեր արտգործնախարար Վարդան Օսկանյանն ինձ հայտնեց, որ իրանական կողմը այդ հարցը կրկին բարձրացրել է: Ես նրան փոխանցեցի այդ դոսիեն, որպեսզի օգտվեն դրանից և կարողանան կրկին հարթել խնդիրը:

Ի դեպ, պետք է փաստեմ, որ Ռոհանիի դերակատարությունը բավական մեծ է եղել, այդ կնճռոտ հարցի հաղթահարման ժամանակ:

- Պարո՛ն Հարությունյան, խնդրում եմ, ներկայացրեք գազատարի շուրջ ծավալվող բանակցությունների նախապատմությունը:

-Հայ-իրանական հարաբերությունների մեջ ամենաբարդ հարցը գազատարի հարցն էր: Այն տարիներ տևեց մինչև կյանքի կոչվեց:

Ամենասկզբում, իրանական կողմի հայեցակարգը կառուցված էր հետևյալ դրույթների վրա, որ իրանական կողմը պետք է գազ տրամադրի Հայաստանին և Նախիջևանին: Այն պետք է լիներ մի խողովակ, որը իրենց սահմանի վրա պետք է ճուղավորվեր, և մեկը պետք է գնար Նախիջևան, մյուսը՝ Հայաստան: Ընդ որում 700 մմ-ի մասին ընդհանրապես խոսք չկար, քննարկվում էր 300 մմ տրամագիծ ունեցող խողովակը: Դա մեզ համար հեռանկարային չէր կարող լինել, առավել ևս որ այդ փականը գտնվելու էր իրենց սահմանում, ինչը կարող էր հետագայում վտանգ դառնալ: Չափազանց լուրջ քննարկումներ եղան հայեցակարգի շուրջ: Մենք պնդում էինք, որ պետք է լինի առանձին խողովակ, որը կապ չպետք է ունենա Նախիջևանի հետ և նվազագույնը պետք է լինի 700մմ-ոց տրամաչափի, միայն այդ դեպքում այս խողովակը մեզ համար հեռանկարային կարող է համարվել:

Խնդրի լուծումը շատ ձգձվեց, բայց գտանք լուծման եղանակներ: Հայաստանն այն ժամանակ Թուրքմենիայից գազ էր ստանում, որը, անցնելով հինգ երկրների տարածքով, մտնում էր Հայաստան: Ընդ որում, վրացիները այդ գազի առնվազն 30%-ը վերցնում էին առանց որևէ վճարի, միևնույն ժամանակ մեզանից գանձում էին տարանցիկ ճանապարհի գումարը, այսպիսով, թուրքմենական գազը բավական թանկ էր նստում մեզ վրա: Բացի դրանից առկա էին նաև պայթյունների կամ տեխնիկական վտանգները, որի պատճառով անընդհատ խափանվում էր գազամատակարարումը դեպի Հայաստան:

Այդ ժամանակ ես մի գաղափար հղացա. այն գազը որ մենք գնում ենք Թուրքմենիայից, մտնի Իրան, իսկ իրանական կողմը մեզ իր սեփական գազը կմատակարարի: Ըստ էության իրենք ոչինչ չէին կորցնում, դեֆիցիտ չի առաջանում, մենք կարողանում ենք օգտվել դրանից: Բացի այդ մենք ունենք էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների ավելցուկ

և իրենց էլեկտրաէներգիայի դեֆիցիտի ժամանակ Իրանին տալիս ենք էլեկտրականություն:

Այդ գաղափարը իրենց շատ հրապուրեց, և հետագա ողջ քննարկումները ծավալվեցին, դրա շուրջ: Քննարկումների երկրորդ փուլը ֆինանսական և տեխնիկական հարցերի շուրջ էր, որը երկար ժամանակ ձգձվեց: Մենք ժամանակին կարողացանք Հայաստան հիմնադրամի միջոցների հաշվին 1993-94թթ. առաջին նախագծերը կյանքի կոչել:

- Պարո՛ն Հարությունյան, ժամանակին բավական բուռն քննարկվում էր նաև Իրանի և Հայաստանի սահմանային շրջանների առևտրի հարցը, խնդրում եմ ներկայացրեք դրա էությունը:

-Իրանական կողմը շատ լավ գիտակցում էր, որ Հայաստանի հետ սահմանային առևտուրը բացառիկ կարևորություն ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև ռազմավարական տեսանկյունից: Նրանք ժամանակին Ատրպատականը բաժանեցին երեք նահանգների, որպեսզի կարողանան ադրբեջանական գործոնը այնտեղ նվազագույնի հասցնել: Չափազանց բարձր գնահատելով սահմանային առևտրի գաղափարը՝ մենք նույնիսկ մի քանի անգամ հանձնաժողովի նիստերը կազմակերպեցինք Թավրիզում, Ջուլֆայում:

Մենք շատ լավ գիտակցում էինք, որ թեև սահմանակցում ենք Իրան պետության հետ, բայց առաջին հերթին մենք սահմանակցում ենք Ատրպատականին: Եթե մենք չկարողանաք այս գործոնը հաշվի առնելով Իրանի հետ հարաբերվել, մենք հետագայում կարող ենք լուրջ խնդիրներ ունենալ: Էյլիբեյի կառավարման օրերից մինչ օրս էլ նրանց մտքում կա Ադրբեջանական կոնֆեդերացիա (Ադրբեջան, Նախիջևան և Ատրպատական) ստեղծելու գաղափարը: Մենք մեր տարածաշրջանային քաղաքականությունը մշակելիս չենք կարող հաշվի չառնել այդ գաղափարը: Ժամանակին մենք կարողացանք այս քայլերը հաշվի առնել և մենք ունեցանք, տարածաշրջանի խոշոր պետության հետ ոչ միայն տնտեսական լուրջ փոխհարաբերություններ, այլ նաև ձեռք

բերեցինք վստահելի գործընկերոջը բնորոշ հարաբերություններ:

-Ինչպե՞ս կբնորոշեք Հայ-իրաական հարաբերությունների ներկա մակարդակը

-Ես չէի ցանկանա, որ հայ-իրանական հարաբերությունները աժմ զարգանային զուտ տնտեսական խնդիրների լուծման հենքի վրա, դա կլինի մոլորություն, մասշտաբները պետք է լայն լինեն, տեսահորիզոնը պետք է լայն լինի: Պետք է երկու երկրների հեռանկարային գործակցության շրջանակներում դա դիտարկվի, և այդ դեպքում հաջողությունները կլինեն: Պետք է ուշի-ուշով հետևել, թե իրենց մոտ ինչ զարգացումներ են տեղի ունենում, ես չափազանց մեծ հույսեր եմ կապում Ռոհանիի՝ որպես նախագահի հետ, որքան էլ նախագահի դերակատարությունը երկրորդացված լինի այդ երկրում: Միևնույն է, նա շատ խելացի անհատականություն է, որի հետ ինքս անձամբ շփվել եմ: Ռոհանին այն անձնավորությունն է, որը կկարողանա խելամիտ զարգացման ուղի տեղափոխել հարաբերությունները՝ առանց ավելորդ իմպուլսիվ մոտեցումների և որոշակի հարաբերություններ կարգավորել Արևմուտքի հետ: Դա հնարավորություն կտա Իրանին թե՛ հաղթահարելու որոշակի դժվարությունները և թե՛ կամրապնդվի տարածաշրջանային կայունությունը: Մեր դերակատարությունը հատկապես կկարևորվի ռուս-իրանական հարաբերությունների սերտացման հարցում, Հայաստանը եղել է չափազանց կարևոր դերակատար Ռուսաստան-Իրան առանցքում, և դա մենք պետք է պահենք:

-Ինչո՞ւ է Հայաստանը կարևոր Իրանի համար:

-Մարդիկ շատ հաճախ սխալ պատկերացում են կազմում երկրների սերտ հարաբերությունների մասին, այսինքն՝ սա մեծ երկիր է, շատ նավթ ունի, ուրեմն կարևոր է: Առաջինը չինացիները վերջակետ դրեցին այս մտայնության վրա. չկան մեծ ու փոքր երկրներ, կան իրար հետ հավասար հարաբերությունների մեջ մտնող սուբյեկտներ: Իրանը Հայաստանը չի դիտում որպես փոքրիկ, ռեսուրսային քիչ ներուժ ունեցող երկիր, այլ հայերին դիտում է որպես

քաղաքակիրթ մի ժողովրդի, որը դարերի ընթացքում կարողացել է ինքնադրսևորվել իր ինքնությամբ ու պետականությամբ, որը թեև կորցված էր, բայց ոչ տեսակի կորստով ժողովուրդ, որ պատմությանը շատ բան է տվել և դեռ ասելիք ունի: Հայերի նկատմամբ ջերմ զգացողություններում կարևոր է նաև հաշվի առնել իրանահայերի գործոնը, որոնք այդ երկրի համար ունեցել են դրական դերակատարություն: Իրանում մեզ դիտարկում են որպես քաղաքակրթություն կրող ժողովրդի, ով ունի իր արժեքային լուրջ համակարգը: Մենք պետք է ճիշտ գնահատենք մեր ներուժը:

ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար (1991-1992թթ.)

Մայիսի 3, 2013թ. Երևան

-Պարո՛ն Հովհաննիսյան, Դուք 1991-92թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարարն էիք: Խնդրում եմ ներկայացրեք՝ ինչպես դրվեց հայ-իրանական հարաբերությունների հիմքը:

-Հայ-իրանական հարաբերությունների հիմքը դրվեց հայեցակարգային մոտեցմամբ, երբ հիմնվեց անկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը: ՀՀ ԱԳՆ-ն ունենալով կառուցվածքային և տեխնիկական որոշակի ժառանգություն Խորհրդային Հայաստանից, իր ծրագրով, նախանշած ուղիով, հայեցակարգով ու կառուցվածքով չուներ իր նախադեպը, և մենք սկսեցինք զրոյից: Արտգործնախարարության և գործող նախագահի համար էլ հայ-իրանական հարաբերություններն ունեցել են առաջնային և ռազմավարական նշանակություն, ինչով էլ պայմանավորված էր իմ՝ որպես արտգործնախարարի, առաջին այցը ԻԻՀ:

-Պարո՛ն Հովհաննիսյան, կոնկրետ Ձեզ՝ որպես Միացյալ Նահանգների քաղաքացու, ինչպես ընդունեցին ԻԻՀ-ում:

-Ես բավական ջերմ վերաբերմունքի արժանացա թե՛ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի, թե՛ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթիի կողմից: Դա 1992թ. փետրվարն էր, երբ առաջին անգամ Հայաստանի Հանրապետության պետական համալիր պատվիրակությունն այցելեց Իրան, և նրանք բավական լուրջ էին պատրաստվել մեզ ընդունելու համար: Ծրագրված էր և՛ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հուշագրի ստորագրում, և՛ ամենատարբեր ոլորտների՝ տնտեսական, մշակութային, բանկային, Արաքս

գետի ջրերի ընդհանրական օգտագործման, առաջին կամրջի կառուցման հարցերի քննարկումը: Բավական հաջողված այց էր: Այդ այցից մի քանի ամիս անց տեղի ունեցավ նաև նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը ԻԻՀ:

-Պարո՛ն Հովհաննիսյան, 1991-92թթ. Իրանը Լեռնայի Ղարաբաղի հարցում հանդես էր գալիս միջնորդական առաքելությամբ: 1992թ. մարտի 15-ին Իրանին հաջողվեց Թեհրան հրավիրել Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին: Ինչպե՞ս կներկայացնեք այդ շրջանը և ինչո՞ւ Իրանին չհաջողվեց մնալ միջնորդների շարքում:

-1992թ. մարտի վերջին Հելսինկիում կայացավ ԵԱՀԽ գագաթաժողովը, որտեղ ներկայացվեց Հայաստանի մոտեցումն առ այն, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը արժանի է ճանաչման, և միաժամանակ մենք պատրաստ ենք խաղաղության գործընթացին, որը ներառում է նաև ԼՂ իշխանությունների մասնակցությունը այդ գործընթացին: Այս ողջ ընթացքում մենք կապի մեջ ենք եղել ԻԻՀ իշխանությունների՝ ինչպես նախագահ Հ. Ռաֆսանջանիի, այնպես էլ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթիի ու փոխնախարար Վայեզիի հետ, ով մի քանի անգամ այցելել էր Երևան և Լեռնային Ղարաբաղ: Իրանի դիրքորոշումը բավական կառուցողական էր: Վելայաթին եկել էր նաև միջնորդական առաքելությամբ: Թե ինչո՞ւ Իրանը չկարողացավ մնալ միջնորդների շարքում, կարելի է բացատրել.

1. ԵԱՀԽ-ի հաստատված գործընթացով:

2.Արևմուտք-Իրան առկա կամ բացակա հարաբերություններով:

3. Ես չեմ գտնում, որ Իրանի միջնորդությունը տապալված կամ ձախողված էր: Պետք է չմոռանանք, որ ԻԻՀ-ն ունի ադրբեջանախոս փոքրամասնություն, որոնց ներկայությունը ժամանակ առ ժամանակ իր արտացոլանքն

է գտնում Իրանի կառավարության որոշ փաստաթղթերի մեջ: Ի դեպ, նկատվում էր որոշակի ընդհանրություն ադրբեջանական մոտեցումների և ԻԻՀ պաշտոնական կամ գոնե արտգործնախարարության մոտեցումների միջև:

4. Նաև կարծում եմ, որ Հայաստանն էր որոշողներից մեկը, որ այս հարցը պետք է լուծվի ԵԱՀԽ միջավայրում: Հայաստանն ուներ այս կառույցում վետոյի իրավունք: Եվ Հայաստանը թեկուզ նոր էր քայլ դնում միջազգային հարաբերություններում, բայց լավ գիտակցում էր, թե ինչ են նշանակում միջազգային հարաբերություններում ոչ միայն բարիդրացիական ընդհանրական զգացումները, այլև առկա շահերի կարևորությունը: Ի վերջո, Իրանը շատ մեծ կառուցողական դերակատարություն ունենալով արցախյան միջնորդության մեջ, գոնե պաշտոնապես զիջեց իր դերը ԵԱՀԽ-ին, ապա՝ ԵԱՀԿ-ին:

1992թ. մայիսին, երբ Թեհրան մեկնեցինք ՀՀ առաջին նախագահի պատվիրակության կազմում, այնտեղ արդեն կար մի փաստաթուղթ, որը պատրաստվել էր ոչ իմ կողմից: Այն պատրաստել էր Լևոն Տեր-Պետրոսյանի հատուկ պատվիրակ Վահան Փափազյանը, նրա հետ էր մեկնել իմ տեղակալ Արման Նավասարդյանը: Մեր պատվիրակությունը, առանց պաշտոնական թույլտվության, գոնե առանց իմ գիտության՝ որպես արտգործնախարարի, նախնական կարգով ստորագրել էր մի փաստաթուղթ, որով ԼՂՀ-ն ներկայացվում էր որպես Ադրբեջանի մաս: Ստորագրվել էր Վահան Փափազյանի այցի շրջանակներում, բայց դրվել էր Արման Նավասարդյանի ստորագրությունը: Առանց իմ գիտության և թույլտվության երկու այսպիսի նախնական փաստաթուղթ էր ստորագրվել, մեկը՝ ԵԱՀԽ-ում, մեկն էլ՝ Իրանում: Հավանաբար նրանք նախագահի նստավայրից հրահանգ էին ստացել այդ նախնական փաստաթուղթը ԵԱՀԽ-ում ստորագրելու, որը, հնարավոր է, ուներ շահեկան դրույթներ, բայց ուներ նաև մեկ կետ, ըստ որի՝ ԼՂ-ն Ադրբեջանի մաս էր կազմում: Նույնը կրկնվեց նաև

Իրանում, այդ փաստաթուղթը դրված էր որպես բանակցությունների հիմք:

-Ես գիտեմ, որ Շուշիի ազատագրման ժամանակ Դուք գտնվում էիք Սպահանում, Դուք գիտեի՞ք պատրաստվող գրոհի մասին, թե՞ ոչ:

-Ընդհանուր գծերով գիտեի, որ նման ծրագիր կար, սակայն ժամկետների մասին չգիտեի, թե երբ է լինելու «Շուշանիկի հարսանիքը»:

-Ձեր՝ արտաքին գործերի նախարար եղած տարիներին Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել, և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ այժմ գտնում եք՝ կարելի էր շտկել:

-Դա Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարիներնեն էր և միայն առաջին երեք ամիսը, ես աշխարհին ներկայացնում էի մի հանրապետություն, որը մինչ այդ de jure ճանաչված չէր, այդ թվում նաև՝ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից: 1992թ. բացվեցին de jure ճանաչման դռները և հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, իրականացվեցին դեսպանատների հիմնման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ, դրվեցին տարբեր ոլորտների շուրջ պայմանագրերի նախահիմքերը: Ձեռքբերումներից էր, որ հասկացանք, որ դրկից երկրներ ենք և շատ ավելի ընդհանրություններ ունենք, քան տարբերություններ կամ հակասող շահեր, բայց պետք է խոստովանենք, որ Իրանն ունի ադրբեջանախոս մեծ փոքրամասնություն, Իրանը ԻԿԿ անդամ է, և նրա պաշտոնական որոշումները միշտ չէ, որ եղել են հայանպաստ կամ Հայաստանանպաստ: Այստեղ է, որ առաջ է գալիս դիվանագիտության նուրբ արվեստի բազմամակարդակ մեթոդաբանությունը՝ հասկացնելով, թե ինչու է այս կամ այն պետությունը դրսևորում իր մոտեցումը համապատասխան կերպով:

Ձեռքբերումների մեջ կարող ենք ընդգրկել նաև ընդհանրական շահի գիտակցումը, բազմաոլորտ համագործակցությունը:

Բացթողումների շարքին կարելի է դասել այն հանգամանքը, որ թե՛ Հայաստանը, թե՛ Իրանը շատ անգամ իրենց փոխադարձ հարցերը լուծելու համար նայել են դեպի հեռուները, նույնիսկ տարածաշրջանից դուրս երկրներին, մինչդեռ կարող էին ծագած ամեն մի խնդիր լուծել ուղղակի, միջպետական կոշտ realpolitik շահի հիման վրա:

Ընդհանրացնելով՝ կարելի է որպես բացթողում նշել հետևյալը. Իրանը եւ Հայաստանը իրենց երկկողմ հարաբերությունները և շահերի ընդհանրությունները ձևակերպեցին երրորդ կամ չորրորդ երկրների հղմամբ: Դրա լավագույն օրինակներ են ոչ միայն Արևմուտքի հետ Իրանի բարդ հարաբերությունները և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բացակայությունը, այլ նաև Ռուսաստանի կողմից ստեղծված իրավիճակները: Իմ կարծիքով էներգետիկայի բնագավառում Ռուսաստանն ամեն ինչ արեց, որ Իրանի ու Հայաստանի փոխգործակցությունը մնա տեղային հարթության վրա՝ առանց ընդունելու տարածաշրջանային կամ համաշխարհային զարգացումները:

-Հայաստանն ինչո՞վ է կարևոր Իրանի համար:

-Հայաստանն իր ողբերգական ողջ պատմական ընթացքով, պետական կրճատված սահմաններով անգամ ունի աշխարհագրական շահեկան դիրք և քաղաքակրթական հիմնաղբյուր, որոնց շնորհիվ ի զորու է դառնալ քաղաքակրթության այնպիսի խաչմերուկ, ինչի մասին ժամանակին խոսել էր ԻԻՀ նախկին նախագահը: Սա եզակի ինքնագնահատական չէ, սա կարող է վերաբերել նաև Իրանին, քանզի Իրանն էլ ունի այդ ներուժը: Բայց Հայաստանը պակաս ներուժ չունի, պարզապես Հայաստանը պետք է ճշգրիտ արտաքին ու ներքին քաղաքականություն իրականացնի, որը, ցավոք, չի

արել ո՛չ ժողովրդավարության, ո՛չ սահմանադրական ընտրությունների, ո՛չ քաղաքացու իրավունքների, ո՛չ էլ ազգային շահերի սպասարկման եղանակով: Այդպիսով՝ նա, իհարկե, չէր ստանձնի ինչ-որ դարակազմիկ առաքելություն, բայց քաղաքակրթության իր ակունքներին ու աշխարհագրական դիրքին համապատասխան, կդառնար այնպիսի խաչմերուկ, որտեղ իրանցին, ամերիկացին, ռուսը, վրացին կկարողանային Հայաստանում իրենց խնդիրների լուծման մի փոքր կամուրջ տեսնել:

Հայաստանը կարևոր է իբրև հարևան, իբրև էներգետիկ գործընկեր, իբրև Արաքս գետը բաժանող երկիր, Հայաստանը կարևոր է աշխարհաքաղաքական իմաստով որպես մի պետություն, որը հաղթահարել է կրոնների տարբերությունը և, իմ կարծիքով, Իրանի համար մեծ հետաքրքրություն պետք է ունենա Հայաստանը, որպեսզի մեր տարածաշրջանը չդառնա հեգեմոն, որևէ ազգի կամ նույն ազգի տարբեր պետությունների համար: Ի վերջո, կարծում եմ՝ Հայաստանն Իրանին հետաքրքրում է նաև իր Սփյուռքով, որին ծնունդ է տվել մեր դժբախտ պատմությունը: Հատկապես զարգացած ու ակտիվ են Եվրոպայում, ԱՄՆ-ում գտնվող համայնքները: Ցավոք, Ռուսաստանի հայ համայնքն այնքան էլ ակտիվ չէ: Սփյուռքահայությունը հատուկ մոտեցում ունի Հայաստան պետության նկատմամբ, առանձնապես՝ մեր պատմական իրավունքների վերականգնման, որը վերաբերում է Թուրքիային և Ադրբեջանին: Դրա հանրագումարից նրանց հետաքրքիր է ԻԻՀ վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ:

-Դուք իսկապե՞ս կարծում եք, թե ԱՄՆ-ում կամ Եվրոպայում բնակվող սփյուռքահայ քաղաքացին այլ կերպ է վերաբերվում Իրանին, քան մյուս քաղաքացիները, քանզի Իրանը Հայաստանի հետ ունի բարիդրացիական հարաբերություններ:

-Ցանկացած երկրի քաղաքականությունը, քարոզչությունը ազդում են տվյալ երկրի քաղաքացիների մտածելակերպի ձևավորման վրա, դրա ազդեցության տակ կարող է ընկնել նաև սփյուռքահայությունը: Բայց ես կարծում եմ, որ մեր հայրենակիցները լավ են պատկերացնում, թե որն է Հայաստանի Հանրապետության ազգային շահը, և ինչ է նշանակում Հայաստանակենտրոն արտաքին ու ներքին քաղաքականություն կառուցելը, ինչպիսի մոտեցումներ պետք է ունենա Հայաստանը Ռուսաստանի, Իրանի, ապա և Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ: Ես այն քաղաքացիներից եմ, ովքեր գտնում են, որ պետք է կերտել մի քաղաքականություն, որը միտված չլինի որևէ պետության կողմը՝ Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի. նրանում պետք է գերակայի ազգային շահը: Սա իսկապես դժվար է, սակայն կարծում եմ՝ ձեր սերնդի հանրապետությունն ի վիճակի կլինի ազգային շահը ձևակերպել, իրացնել և որոշ շեշտադրությունների տարբերությամբ ներկայացնել այն Թեհրանում, Մոսկվայում, Վաշինգտոնում:

-Ձեր պաշտոնավարման տարիներին ինչպիսի՞ն էր Հայաստանի մոտեցումը իրանահայ համայնքին: Առհասարակ, ի՞նչ քայլեր էին արվում իրանահայ համայնքի ներուժը համախմբելու և այն ի շահ ՀՀ օգտագործելու համար: Կա՞ր նման բան:

-Ես ունեցել եմ երկու այցելություն դեպի Իրան: Դա այն հայրենակարոտ հանդիպումն էր, որին ավելացավ նաև մի գաղափար՝ Սփյուռքից եկած անձնավորությունը գլխավորել է ՀՀ ԱԳՆ: Ունեցել ենք ծրագրեր, առաջարկություններ, սակայն կարճ պաշտոնավարությունս թույլ չտվեց լիարժեք իրականացնել այդ ծրագրերը:

-Իսկ ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական կապերն այսօր, ինչպիսի՞ն են դրանց հեռանկարները:

-Այո՛, մենք ունենք հարաբերությունների հեռանկարային խորացման ներուժ: Ձեր թվարկած ոլորտները մեկը մյուսին սնուցում են, ես չէի ցանկանա որևէ ոլորտ գերակա կոչել, մյուսը ստորադասել: Երկու երկրների մեջ պատմական խորքն այնքան բազմաշերտ է, որ չի կարելի ոլորտներն առանձնացնել: Չնայած քաղաքական ոլորտը, կարծում եմ, գիջել է մյուսներին:

-Ինչպե՞ս կորակեք Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Հայոց ցեղասպանության և Ղարաբաղի վերաբերյալ:

-Երկիմաստ, այսինքն՝ մի կողմից՝ կառուցողական, մյուս կողմից՝ ելնելով ներքին զգայություններից և տարածաշրջանային հարաբերություններից, ոչ միանշանակ: Դա մեղադրելու չէ, սակայն մենք էլ պետք է հետևենք մեր ազգային շահին:

-Եթե Ձեզ կրկին առաջարկվեր ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնը, առաջին հերթին հայ-իրանական հարաբերություններում ո՞ր խնդիրների լուծման վրա կուղղեիք Ձեր հայացքը:

-Ես ամեն ինչ կանեի, որպեսզի մեր հարաբերությունները դառնային ռազմավարական և շահերի փոխադարձ հարգման հարաբերություններ:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.)

Դեկտեմբերի 7, 2012թ., Երևան

-Պարո՛ն Փափազյան, Դուք 1991-92թթ. Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդականն էիք: Դա հենց այն շրջանն էր, երբ Իրանը հանդես էր գալիս միջնորդական առաքելությամբ Լեռնայի Ղարաբաղի հարցում: 1992թ. մարտի 15-ին Իրանին հաջողվեց Թեհրան հրավիրել Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին: Ինչպե՞ս կներկայացնեք այդ շրջանը և ինչո՞ւ Իրանին չհաջողվեց մնալ միջնորդների շարքում:

-Իրանական կողմը խիստ մտահոգ էր իր անմիջական սահմանի մոտ ընթացող ռազմական գործողություններով, քանի որ վստահ էր, որ դրան հետևելու էր փախստականների հոսքը, ինչն էլ եղավ: Իրանը հետխորհրդային առաջին տարիներին փորձում էր լրացնել այն վակուումը, որն առաջացել էր տարածաշրջանից ռուսների հեռանալուց հետո: Թեև ռուսները, բառիս բուն իմաստով, հեռացել էին միայն Ադրբեջանից, իսկ Հայաստանում և Վրաստանում մնացել էին նրանց ռազմական բազաները և ոչ միայն: Ահա Իրանը, ինչպես նաև Թուրքիան, ձգտում էր լրացնել այդ բացը: Այս հարցում կարևոր դեր էր կատարում նաև պատմական հիշողությունը և ինչ-որ չափով իրենց դիրքերը վերականգնելու ձգտումը: Բացի այդ, նոր էր ավարտվել իրանա-իրաքյան պատերազմը և Իրանի վերնախավում շատ լավ էին պատկերացնում պատերազմի հետևանքները հասարակության, պետության վրա, ու ցանկություն չկար տեսնելու այն էսկալացիան, որն իրականում տեղի ունեցավ մինչև 1994թ. մայիսը: Այսպիսով, Իրանի միջնորդական առաքելությունը անկեղծ էր, իսկապես ցանկություն կար գոնե զինադադար կնքելուն ձգտել և հարևանների վրա ազդեցությունը մեծացնել: Տնտեսական ձգտումները այս

ժամանակ երկրորդական բնույթ էին կրում: Առավել առաջնային էր քաղաքական նպատակը: Իսկ թե ինչո՞ւ տապալվեց միջնորդական առաքելությունը, այլ հարց է: Չէր կարող չտապալվել: Իրանը այն երկիրը չէր, որն իր հեղինակությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև իրական հաշտություն կնքելուն նպաստեր: Այո, ժամանակավոր զինադադարի կարողացան հասնել, մասնավորապես Վայեզիի միջնորդությամբ գերիների և դիակների փոխանակում տեղի ունեցավ: Այստեղ խնդիրը Իրանի քաղաքական կշռի մեջ չէր: Բանն այն է, որ ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Եվրոպական միությունը համաձայն չէին Իրանին նման առաքելություն տրամադրելուն:

Հայաստանը միշտ ողջունում էր Իրանի կողմից յուրաքանչյուր նախաձեռնություն, չնայած մեզ համար պարզ էր, որ այն վերջնական արդյունքի չէր բերելու:

-Ես գիտեմ, որ Շուշիի ազատագրման ժամանակ Դուք գտնվում էիք Սպահանում, Դուք գիտեի՞ք պատրաստվող գրոհի մասին, թե՞ ոչ:

-Լևոն Տեր-Պետրոսյանի այցից մեկ շաբաթ առաջ ես պետք է մեկնեի Իրան՝ նախապատրաստելու նախագահի այցը: Մինչ այդ, ես նախագահի հետ տարբեր հարցեր ունեի քննարկելու, այդ թվում նաև փորձեցի ճշտել՝ նախագահի՝ Իրանում գտնվելու օրերին արդյոք հնարավո՞ր են զինված գործողություններ Շուշիի ուղղությամբ: Նախագահը պատասխանեց՝ հնարավոր է: Հարցրեցի. «Ավելի կոնկրետ կարող ե՞ք ասել, ե՞րբ է պլանավորվում»: Նա պատասխանեց. «Ավելի կոնկրետ չեմ կարող ասել, թե ո՞ր օրն է լինելու, հաստատ չեմ ասի»: Ես նրան նախազգուշացրեցի. «Բայց Դուք հասկանո՞ւմ եք, որ Իրանում իմ այցելության ժամանակ, եթե նման գործողություններ տեղի ունենան, ես հիմար վիճակում կհայտնվեմ»: Նա պատասխանեց. «Ոչինչ, համոզված ենք, որ Դուք կգտնեք ելք դուրս գալու այդ վիճակից: Կարևորը Շուշիի ազատագրումն է»:

Սակայն, ազատագրման օպերացիան մի փոքր ուշացավ շատ պարզ պատճառով. ձյուն էր եկել, բավական քանակությամբ արկ և փամփուշտ չէր հասցվել ճակատ և այլն...և այլն....: Այս ամենը համընկավ Լևոն Տեր-Պետրոսյանի և Ադրբեջանի նախագահի այդ ժամանակվա պաշտոնակատար Յաղուբ Մամեդովի կողմից Իրանում զինադադարի շուրջ համաձայնություն կայացնելու գործընթացին:

Ի դեպ, զինադադարի փաստաթուղթը պատրաստվել էր դեռ մինչև նախագահների ժամանումը Իրան: Պաստաթղթի վրա աշխատել ենք ես, Իրանի կողմից՝ Վայեզին, ադրբեջանի կողմից՝ փոխարտգործնախարարը: Փաստաթուղթը պատրաստվել էր երեք լեզվով՝ հայերեն, պարսկերեն և ռուսերեն: Հայերենն ու պարսկերենը նույնական էին, իսկ ռուսերենի տեքստը մի փոքր այլ էր, թերություններ կային: Դա կանխամտածված էր արվել, որի մասին տեղյակ էր նաև իրանական կողմը: Ադրբեջանցիները դա չնկատեցին էլ:

1992թ. մայիսի 8-ին Սպահանում, դեռևս Շահ Աբբասի կողմից կառուցված քարվանսարայում, որն այժմ շքեղ մի հյուրանոց է, իրանական կողմը ճաշկերույթ էր կազմակերպել: Ճաշկերույթից հետո Վելայաթին խնդրեց ինձ դուրս գալ նախասրահ՝ զրուցելու: Ռաֆֆի Հովհաննիսյանը ՀՀ արտգործնախարարն էր և նույնպես գտնվում էր սրահում, սակայն նրանք նախընտրեցին ինձ հետ խոսել (կարծում եմ՝ Ռաֆֆիին դիտարկում էին որպես Միացյալ Նահանգների քաղաքացի): Վելայաթին ինձ տեղեկացրեց, որ հենց այս պահին հայկական ուժերը գրոհում են Շուշիի վրա և շուտով կմտնեն քաղաք: Ես, բնականաբար, անտեղյակ ձևացա: Նա ինձ խնդրեց ճշտել այդ ինֆորմացիան, և ես զանգահարեցի ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շ. Կարամանուկյանին, հետաքրքրվեցի, թե ինչ է տեղի ունենում ճակատում: Ի պատասխան, նա ասաց. «Այն, ինչ պետք է տեղի ունենար»: Ինձ համար ամեն ինչ պարզ էր: Մոտեցա Լևոն Տեր-

Պետրոսյանին ու տեղեկացրի, որ մտնում ենք Շուշի, ի պատասխան, նա ասաց մեկ բառ՝ «գիտեմ»:

Նախագահները ստորագրեցին վերոհիշյալ փաստաթղթերը, որից հետո բոլորս մեկնեցինք Թեհրան՝ այնտեղից ամենքս մեր երկիր վերադառնալու համար: Օդանավակայանում ԻԻՀ Նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին Մամեդովին հարցրեց. «Դուք գիտե՞ք, որ Շուշին կորցրել եք»: Իսկ հետո՝ ավելի ուշ, Լևոն Տեր-Պետրոսյանի մեկնման ժամանակ Ռաֆսանջանին նրան դիմեց քիչ նեղացած տոնով. «Սա անելու բան չէր, որ դուք արեցիք»: Ինչին Լևոն Տեր -Պետրոսյանը շատ հանգիստ ստանդարտ մի պատասխան տվեց. «Բայց մենք դրա հետ ի՞նչ կապ ունենք: Դա կատարել է Ղարաբաղի ազատագրական բանակը»:

Մինչև 1997թ. ՀՀ-ը մշտապես հանդես է եկել հայտարարությամբ, որ ռազմական գործողությունների հետ ուղղակիորեն կապ չունի: Դրա շնորհիվ 1993թ. ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևում մեզ հաջողվեց ավելացնել մի ձևակերպում, որով ՄԱԿ-ի ԱԽ-ն կոչ էր անում ՀՀ իշխանություններին իրենց ազդեցությունը գործադրել Ղարաբաղի զինված ուժերի հրամանատարության վրա, որպեսզի նրանք դադարեցնեն ռազմական գործողությունները:

Այսպիսով, Իրանի միջնորդական առաքելությունը, բնականաբար, տապալվեց, ինչը հարված էր երկրի վարկանիշին: Այսինքն՝ Իրանը ջանքեր էր գործադրում զինադադարի հասնելու համար, մինչդեռ այդ նույն ժամանակ տեղի է ունենում շատ լուրջ ռազմական գործողություն: Իրանցիների մոտ անհանգստությունը իսկապես նկատելի էր, և դա էր պատճառը, որ Երևան վերադառնալուց հետո խորհրդակցելով Տեր-Պետրոսյանի հետ, մոտ մեկ ամիս անց, ես կրկին մեկնեցի Թեհրան՝ ինձ հետ տանելով ՀՀ նախագահի նամակը, որտեղ նա Ռաֆսանջանիին տեղեկացնում էր, թե ցավում է կատարվածի համար: Ռաֆսանջանին ինձ չընդունեց՝

հանձնարարելով ընդունելությունը Հասան Հաբիբիին՝ տեղակալին: Ես ներկայացրի իրավիճակը, նա էլ արտահայտեց իրենց մտահոգությունները և այսպիսով, կարծում եմ, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց:

-Ձեր՝ արտաքին գործերի նախարար եղած տարիներին Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռք բերումներ են եղել և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ այժմ գտնում եք կարելի էր շտկել:

-Չորս տարի եղել եմ ՀՀ արտգործնախարար, որից երկուսը համընկել է պատերազմական ժամանակաշրջանին: Այսինքն՝ այս շրջանում արտգործնախարարի հիմնական աշխատանքն էր ռազմական գործողությունների վերաբերյալ դիվանագիտական թիկունք ապահովելը: Իրանը այդ շղթայի օղակներից մեկն էր, և մենք, այդ առումով, Իրանից որոշակի աջակցություն ստացել ենք:

Այո, ՀՀ արտաքին քաղաքականության համար հայ-իրանական հարաբերությունները կարևորագույն ուղղություններից մեկն են եղել: Կարծում եմ՝ նաև իմ արտգործնախարար նշանակվելու պատճառներից մեկն էլ հենց դա էր՝ խորացնել հայ-իրանական հարաբերությունները:

Ես բավական լավ կապեր ունեի իրանական բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ինչը միշտ օգնում է աշխատանքին:

Հաճախ մենք տնտեսական ոլորտում մեր քննարկումների ժամանակ հասել ենք համաձայնությունների, սակայն հետագայում դրանք տարբեր պատճառներով կյանքի չեն կոչվել: Դա պայմանավորված էր գլոբալ խնդիրներով՝ ԱՄՆ-ի դիրքորոշմամբ, Ռուսաստանի, Թուրքիայի շահերի բախմամբ և այլն: Եղել են երկկողմ բազմաթիվ համաձայնություններ, որոնց իրականացումը, սակայն, շատ ավելի բարդ էր, քան կարող է թվալ: Սա վերաբերում է նաև եռակողմ ձևաչափերին. Հայաստան-Իրան-

Թուրքմենստան, ինչպես նաև Հայաստան-Իրան-Հունաստան: Ստորագրվեցին բազմաթիվ փաստաթղթեր, իրականացրինք անթիվ քննարկումներ, բայց ռեալ այն չգործեց, ու դա ոչ թե մեր կամ Իրանի մեղքով, այլ առկա տնտեսական, քաղաքական և այլ ռեսուրսների բացակայության պատճառով:

Մյուս կողմից՝ արագ տեմպերով կառուցվեց Մեղրիի կամուրջը, ինչը դարձավ փրկօղակ շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար: Կարծում եմ՝ մենք արել ենք այն ամենը, ինչը հնարավոր էր այդ ժամանակաշրջանում (պատերազմ, շրջափակում, էլեկտրաէներգիայի բացակայություն):

-Պարո՛ն Փափազյան, այդ ժամանակաշրջանի դիվանագիտական հաջողություններից մեկը, ըստ իս, նաև այն էր, որ Հայաստանի ղեկավարությունը կարողացավ իրանական կողմին բերել այն ճշմարիտ տեսակետին, թե Ղարաբաղյան խնդիրը ոչ թե միջկրոնական խնդիր է, ինչպես անընդհատ փորձում էր շեշտել Ադրբեջանը, այլ՝ միջէթնիկական, կամ ազգամիջյան: Այդպես չէ՞:

-Այո, ես և՛ Վայեզիի, և՛ Վելայաթիի հետ մեր հանդիպումների ժամանակ բազմիցս ներկայացրել եմ խնդրի էությունը: Հատուկ խնդրել եմ, որ նրանք համապատասխան պահերին ճիշտ լույսի տակ ներկայացնեն հարցը, արդյունքում՝ նրանք դա արեցին ԻԿԿ գագաթաժողովների ժամանակ, որտեղ Ադրբեջանը միշտ հակահայկական քաղաքականություն էր վարում:

-Ես գիտեմ, որ Ձեր պաշտոնավարության տարիներին մի տհաճ իրադարձություն է տեղի ունեցել հայ-իրանական հարաբերություններում: Թեհրանում փորձ արեցին գրավել Հայաստանի դեսպանատունը: Կմեկնաբանե՞ք, թե ինչ խնդիրներ էին ծագել, ու նրանք ի՞նչ էին հետապնդում այդ քայլով, ինչպես նաև՝ ինչպիսի՞ պատասխան եղավ մեր կողմից:

-Այս պահին ես մանրամասներն արդեն չեմ հիշում, բայց խոսքը վերաբերում է թեհրանաբնակ ադրբեջանցիների կողմից կազմակերպված գործողություններին: Դա միակ գործողությունը չէր, որ արձանագրվել էր, բողոքի բազմաթիվ ակցիաներ էին տեղի ունեցել նրանց կողմից: Հրավիրեցինք Հայաստանում ԻԻՀ դեսպանին և ներկայացրեցինք մեր դժգոհությունը: Ահա ամենը:

- Ինչպե՞ս էր ՀՀ ԱԳՆ-ն ԻԻՀ և ՀՀ միջև առաջացած քաղաքական ճգնաժամերին լուծում տալիս: Ինչպես հիշում ենք, 1994թ., երբ Դուք արտգործնախարար էիք, տեղի ունեցավ ԻԻՀ օդանավի կործանման դեպքը: Ինչպե՞ս կարողացավ ՀՀ ԱԳՆ-ն լուծել այս բարդ քաղաքական խնդիրը ԻԻՀ և ՀՀ միջև: Օրինակ, «արյան գնի» շուրջ ծավալվող բանակցություններում ինչպե՞ս հաջողեցիք:

-Ռազմական գործողությունների գոտում, ցավոք սրտի, նման բաներ հնարավոր է տեղի ունենան, սակայն մեզ հաջողվեց իրանցիներին ուղղորդել այդ հարցում բանակցել Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ, դրանով ցանկանալով ևս մեկ անգամ հաստատել Ղարաբաղի ինքնիշխանության հարցը:

- **Հայաստանն ինչո՞վ է կարևոր Իրանի համար:**

-Բավական է նայել քարտեզին ու պարզ կլինի, թե ինչով. Իրանը շրջապատված է ոչ բարեկամ երկրներով՝ Ադրբեջան, Թուրքիա, Պակիստան, Աֆղանստան, Իրաքը պարզ չի, թե ինչ է: Հայաստանը միակ երկիրն է, որի հետ Իրանը կարող է բարեկամական հարաբերություններ ունենալ, կամ գոնե ցույց տալ, որ դա ստացվում է: Ինչպես նաև Հայաստանի՝ քրիստոնեական երկիր լինելը կարևոր է ԻԻՀ-ի վարկանիշի համար: Ունենալով սերտ կապեր Հայաստանի հետ՝ Իրանը դրանով կարծես հակադարձում է Արևմուտքի քաղաքական համակարգի այն մեղադրանքներին, թե Իրանը գնում է իսլամի ծայրահեղացման ուղղությամբ: Իրանցիների մի զգալի

մասի մոտ, հատկապես նրանց, ովքեր ունեն պատմական մտածողություն, մշակութային արժեքների ընկալում, շարունակում են մնալ այն կարծիքին, որ իրենք տարածաշրջանային գերհզոր պետության քաղաքացիներ են և Հարավային Կովկասը, առնվազն մշակութաբանական առումով, իրենց երկրի ազդեցության տարածքը կարող է դառնալ: Նրանցից ոմանք անգամ մտածում են, որ որոշ ժամանակ անց Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը կարող են տարածքային առումով ևս իրենց մի մասը կազմել, օրինակ՝ ֆեդերատիվ կամ կոնֆեդերատիվ հիմունքներով: Այս առումով, Մոհամմեդ Խաթամիի «Քաղաքակրթական երկխոսություն» գաղափարախոսության շրջանակներում հայ-իրանական հարաբերությունները լավագույն օրինակ հանդիսացան:

-Ի՞նչ եք կարծում, այսօր հայ-իրանական հարաբերություններում ո՞ր ոլորտն է դոմինանտը և ինչո՞ւ է այդպես:

-Իմ տպավորությամբ՝ չկա այդպիսի ոլորտ, քանի որ չկա այսօր քաղաքական կամք: Կառուցեցինք կամուրջը, հետո գազատարի շուրջ բանակցություններ տեղի ունեցան, բայց, իրականում, հետո ինչ որ արվեց, մեր կողմից ծրագրվածի շատ փոքր մասն էր միայն: Դրա պաճառներից մեկն էլ Ռուսաստանի բացասական դիրքորոշումն էր այս ծրագրի վերաբերյալ: Հայաստանը ցանկացած իշխանության դեպքում էլ ունենալու էր մեկ ցանկություն՝ այն է՝գազատար խողովակի դիամետրաժի որքան հնարավոր է մեծ լինելը: Սակայն, ցավոք, դա ձեռնտու չէր ռուսական կողմին, իսկ մեր կառավարությունը չկարողացավ պնդել: Հարկավոր էր մի շարք խոչընդոտներ հաղթահարել՝ այն է՝ տարածաշրջանում ռուսական Գազպրոմն իր շահերն ունի, ինչին միահյուսված են նաև ռուս որոշ գործարարների անձնական շահերը, առկա էր ԱՄՆ-ի դիմադրությունը, բայց առաջնայինը, այնուամենայնիվ, Ռուսաստանի խոչընդոտումն էր:

Այնպես որ, այս պահին դժվարանում եմ ասել, թե ո՞ր ուղղությունն է դոմինանատ: Եթե կառուցվի հիդրոէլեկտրակայանը, հավանաբար էներգետիկ ոլորտը կդառնա առաջնային:

-Իսկ ի՞նչ կարծիք ունեք Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման շուրջ ծավալվող քննարկումների մասին:

-Չեմ կարծում, որ ներկայումս դա իրականացվող ծրագիր է: Աշխարհագրությունը միշտ թելադրում է քաղաքական որոշումներ: Երբ մշակվում են հայ-իրանական տնտեսական բնույթի ռազմավարական ծրագրեր, հատկապես դա վերաբերում է ճանապարհներին կամ տրանսպորտային հանգույցներին, առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք լուրջ քննարկման թեմա են դառնում: Առաջին հերթին դա աշխարհագրությունն է և հաշվարկը: Օրինակ, եթե նախատեսվում է սկսել երկաթգծի շինարարությունը և եթե, ենթադրենք, կարողանում ենք հայթայթել անհրաժեշտ գումարը, որը, լավագույն դեպքում, վարկի տեսքով է լինելու, արդյոք արժե՞ այդ շինարարության մեջ ներդնել այդքան գումար և կարողանալո՞ւ ենք առաջիկա հիսուն տարիների ընթացքում հետ վճարել այդ գումարը: Երկրորդը գեոպոլիտիկան է, այսինքն, տարածաշրջանի հիմնական դերակատարների վերաբերմունքը այս կամ այն ծրագրի նկատմամբ: Մանավանդ որ Իրանի շահը այստեղ այդքան էլ ակնհայտ չէ: Եվ ընդհանրապես, քանի դեռ Ղարաբաղի հարցը կարգավորված չէ, տարածաշրջանի, առավել ևս Հայաստանի, զարգացում մեծ հաշվով չի լինելու:

-Ձեր պաշտոնավարման տարիներին ինչպիսի՞ն էր Հայաստանի մոտեցումը իրանահայ համայնքին: Առհասարակ, ի՞նչ քայլեր էին արվում իրանահայ համայնքի ներուժը համախմբելու և այն ի շահ ՀՀ օգտագործելու համար: Կա՞ր նման բան:

-Անշուշտ կար: Կոնկրետ իմ դեպքում կար, ես ինքս պարսկահայի զավակ եմ, հայրս Իրանից ներգաղթել էր 1946թ.: Այնտեղ անշուշտ կան հետաքրքիր մարդիկ:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը կանգնեց Սփյուռքի հետ հարաբերություններ հաստատելու խնդրի առաջ, քանի որ համայնքները ընդհանրապես տարբեր են և միասնական քաղաքական ծրագիր մշակել Սփյուռքի նկատմամբ հնարավոր չէ: Իրանահայ, սիրիահայ համայնքները գտնվում են մի հասարակարգում, որտեղ կան որոշակի սկզբունքներ, որոշակի կարգ ու կանոն ու դրանք էապես տարբերվում է Ֆրանսիայի, ԱՄՆ-ի հայկական համայնքներից: Իրանահայ համայնքը յուրահատուկ համայնք է, աշխարհում սփռված բազմաթիվ հայ համայնքներից այն առավելագույնս մոտ է ՀՀ-ին: Իրանահայերը խոսում են արևելահայերենով, այսինքն՝ շփման լեզուն նույնն է, ի տարբերություն, օրինակ, Ֆրանսիայի կամ ԱՄՆ-ի հայ համայնքների, որոնց լեզուն գերակշռորեն արևմտահայերենն է, հոգեկերտվածքով էլ իրանահայերն ավելի մոտ են մեզ, գրեթե նույն նիստ ու կացն ունենք: Տարբերություններ գրեթե չկան կամ չնչին են. չմոռանանք, թե նրանք ինչպե՞ս են հայտնվել Իրանում: Արևելյան Հայաստանից Շահ Աբբասի ժամանակներից ներգաղթածների սերունդերն են նրանք, ինչպես նաև՝ Նախիջևանից, Ջուղայից, Շարուր-Դարալագյազից Պարսկաստան տեղափոխվածների սերունդները: Եվ մինչև 1950-ական թվականները, նրանց հոգևոր կենտրոնը շարունակում էր մնալ Էջմիածինը: Հետագայում դաշնակների նախաձեռնությամբ նրանք անջատվեցին Էջմիածնից և միացան Անթիլյասին:

-Հատկանշական է, որ այսօր էլ Իրանի առաջնորդարաններում դրվում է երկու կաթողիկոսների՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի լուսանկարները:

-Իրականում, այո, իրանահայ համայնքը կապված էր Էջմիածնին: Սակայն, պետք է նշել, որ Հայաստանում խիստ չափազանցված կարծիք կա հայ համայնքների կարողությունների և հնարավորությունների վերաբերյալ: Թեհրանում, Ջուղայում համայնքն ունի միլիարդավոր

դոլարների արժողությամբ անշարժ գույք, բայց դա չի նշանակում, որ այն կարելի է կանխիկ փողի վերածել, դրանք եկեղեցիներ, մարգավաններ են և այլն: Կա նաև հարցի մյուս կողմը, այն է՝ իրանական պետությունը այդ հարստությունը դիտում է որպես իր սեփականությունը և հնարավոր չէ, օրինակ, "Հայաստան" հիմնադրամի կազմակերպած դրամահավաքի ժամանակ մեծ գումարներ ակնկալել իրանահայ համայնքից, որովհետև, եթե անգամ իրանահայ համայնքը մեծ հնարավորություն և ցանկություն ունենա հիմնադրամին նվիրաբերելու գումար, այնուամենայնիվ, նա ունի նաև մտահոգություն, թե ինչպե՞ս է բացատրելու այդ մեծ գումարի առկայությունը իրանական կողմին, քանի որ նա հաշվետու պետք է լինի: Այն, ինչ հնարավոր է Միացյալ Նահանգներում կամ Ֆրանսիայում, այս առումով, հնարավոր չէ Իրանում: Բայց սա չի նշանակում, որ համայնքը պասիվ դերակատարություն ունի: Նրանք կարող են դերակատարություն ունենալ Իրանի և Հայաստանի պետությունների ինչ-որ համաձայնությունների և պայմանավորվածությունների շրջանակում: Հայաստանը և Իրանը՝ որպես պետություններ, համաձայնության են գալիս իրանահայ համայնքի կողմից ՀՀ կատարվելիք օգնությունների չափի շուրջ, և իրանահայ համայնքը կարող է այդ կոնտեքստում տարվա ընթացքում կատարել իր ներդրումները: Ու նրանք արել են դա, հիշարժան է, օրինակ, որ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ նրանք սատարեցին մեր բնակչությանը սննդամթերքով, հագուստով և այլն: Պետք է նաև նշել, որ Իրանն էլ ունի իր շահագրգռվածությունն այս հարցում. նրանք սրանով միջազգային հանրության առաջ ընդգծում են իրենց հանդուրժողականությունը քրիստոնյա համայնքի նկատմամբ, ինչից էլ շտապում են օգտվել իրանահայերը:

-Սա այն եզակի դեպքերից է, երբ երկուսի շահերը համընկնում են:

-Այո: Փաստորեն, սա երկուստեք շահավետ գործարք է:

-Իսկ ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական կապերը: Աճ նկատվու՞մ է:

-Մշակութային առումով Հայաստանը և Իրանը համեմատելի տեսակարար կշիռ չունեն: Իրանցիները համաշխարհային մշակույթում որոշակի տեղ զբաղեցնող հասարակություն են: Իսկ մենք աշխարհին ներկայանում ենք առավելապես առանձին անհատների մակարդակով: Սակայն, երբեմն չենք կարողանում հավուր պատշաճի ներկայացնել աշխարհին անգամ այդ սակավ արժեքները: Իրանական մշակույթը շատ ավելի լավ է ներկայացված Հայաստանում, քան մերը՝ Իրանում: Ինչ վերաբերում է կրթական ոլորտին, ապա այստեղ ևս զիջում ենք: Իրանում կա հիմնավորապես կրթված և լուրջ ուժ ներկայացնող երիտասարդություն, նրանք հետաքրքրվում են համաշխարհային գիտական, մշակութային ժառանգությամբ: Հայաստանի երիտասարդները զիջում են այս ոլորտում: Այս ամենը հնարավորություն չի տալիս լիարժեք խոսել Իրան-Հայաստան մշակութային փոխհարաբերությունների մասին: ՀՀ-ում գրանցվել է իրանական մշակույթի ներկայության, դերի և նշանակության բավականին բարձր աճ:

Կան որոշ պարսիկ բանաստեղծներ, որոնք թարգմանում և իրենց հանրությանն են ներկայացնում մեր դասականների կամ ժամանակակից բանաստեղծների գործերը:

- Ինչպե՞ս եք գնահատում հայ-իրանական հարաբերությունների ներկա մակարդակը և ինչպիսի՞ն են դրանք հեռանկարում:

-Մեծ ծրագրեր չեն լինելու, փոքր ծրագրեր գուցե, և ամեն ինչ կընթանա բարեկամության կոչերի տակ: Հարցն այստեղ միայն համաշխարհային հանրության վերաբերմունքը չի Իրանի նկատմաբ, խնդիրը կայանում է նրանում, որ հենց այսօր պարսիկների վիճակն է այլ:

Այսինքն, եթե Իրանը մեծ ցանկություն ունենա և նյութական ռեսուրսներ ներդնի, այո ինչ-որ բաներ կկարողանան իրականացնել: Իրանը կփորձի իր ներկայությունը ավելի խորացնել տարածաշրջանում, ի վերջո, Իրանից զբոսաշրջիկների մեծ հոսք կա դեպի Հայաստան: Բայց ակնկալել բուռն զարգացում որևէ ասպարեզում երկու պետությունների միջև, առնվազն միամտություն կլինի, և խնդիրն այստեղ Իրանի մեջ չէ, այլ մեր մեջ է: Եթե մենք կարողանանք այնպիսի պետական կառույց ունենալ, որը քիչ թե շատ արդյունավետ կգործի, ապա նոր հնարավորություններ կբացվեն ինչպես հայ-իրանական, այնպես էլ հայ-վրացական, հայ-ռուսական, հայ-եվրոպական և այլ հարաբերություններում:

-Ինչպե՞ս կորակեք Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Հայոց ցեղասպանության և Ղարաբաղի նկատմամբ:

-Ցեղասպանության հարցում չեմ կարծում, թե Իրանը հստակ դիրքորոշում կարտահայտնի, քանի որ թուրք-իրանական հարաբերությունները ակնհայտորեն շատ ավելի մեծ նշանակություն ունեն Իրանի համար, քան հայ-իրանականը: Իհարկե, իրանահայությանը թույլ է տրվում ապրիլի 24-ին բողոքի ցույց կատարել, գնալ իրենց եկեղեցիները, ոգեկոչել նահատակներին, բողոքի նոտա հղել, բայց այդքանը: Ես բացառում եմ, որ այս հարցի կապակցությամբ պետական դիրքորոշում լինի:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, այստեղ էլ Ադրբեջանը լուրջ խնդիր է Իրանի համար: Իրանի կառավարությունը մտահոգություն ունի, թե ապագայում ադրբեջանցիները լուրջ պրոբլեմ են դառնալու Իրանի համար: Հայաստանը՝ որպես Ադրբեջանին զսպող օղակ, այս առումով շատ կարևոր է Իրանի համար: Թավրիզը՝ իր շրջակայքով, լրջագույն խնդիր է, առայժմ այնտեղ խնդիրները այդքան բացահայտ չեն երևում, բայց մենք հասկանում ենք, թե ինչ է նշանակում ազգայնականությունը, և ինչպես այն կարելի է

օգտագործել ու հրահրել: Այսինքն՝ այս տեսակետից Հայաստանը Իրանի համար կարևոր է: Մեծ հաշվով, պարսիկ դիվանագետները տարածաշրջանը դիտարկում են որպես իրենց ապագա ազդեցության գոտի: Ոչ ոք չգիտի Հյուսիսային Կովկասի ճակատագիրը: Հնարավորության դեպքում նրանք չեն վարանի տրվել իրենց կայսերական նկրտումներին: Իրանում, կարծում եմ, հստակ հասկանում են, որ Ղարաբաղը ոչ մի պարագայում չպետք է լինի ադրբեջանի կազմում:

-Եթե Ձեզ կրկին առաջարկվեր ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնը, առաջին հերթին հայ-իրանական հարաբերություններում ո՞ր խնդիրների լուծման վրա կուղղեիք Ձեր հայացքը:

- Եթե ես կրկին հայտնվեի իշխանության մեջ, ես առաջինը ուշադրությունս կսևեռեի երկրի վերականգնման աշխատանքների վրա, հետո նոր միայն ուշադրություն կդարձնեի հայ-իրանական հարաբերություններին: Եթե երկիրը ունի բանակ, դիվանագիտություն և քիչ թե շատ գործող տնտեսություն, բոլոր հարցերն էլ կլուծվեն ժամանակի ընթացքում: Բանակի մասին չեմ ուզում խոսել..., չունենք նորմալ տնտեսություն, իսկ դիվանագիտության մեջ չունենք լուրջ ձեռքբերումներ: Խնդիրը այս կամ այն նախարարի, նախարարության առկայությունը կամ բացակայությունը չէ, այլ այն, որ պետական կառույցը ոչնչացված է: Սա է հարցերի հարցը: Կարծում եմ նաև, որ լրջագույն հարցերից է, ամենակարևորը, ես կասեի, բարձիթողի կրթական համակարգի վերականգնումը: Եթե ունենանք բավական չափով կրթված մարդիկ, հնարավոր է իրավիճակը կարողանանք փոխել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար (1996-1997թթ.)

Մայիսի 19, 2012թ, Երևան

-Պարո՛ն Արզումանյան, Դուք գլխավորել եք ԱԳՆ 1996-97թթ., Ձեր պաշտոնավարության տարիներին Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ այժմ, տարիների հեռավորությունից նկատելի են ու գտնում եք՝ կարելի էր շտկել:

-Այդ տարիներին արդեն բավական խորացված և լավ հարաբերություններ էին հաստատվել մեր երկրների միջև: Նկատեմ, որ մինչ արտգործնախարար լինելս, ես ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցիչն էի և հենց այդ ժամանակ սերտ կապեր էի հաստատել Իրանի ներկայացուցչի՝ Քամալ Խարազիի հետ, որը հետագայում նշանակվեց ԻԻՀ արտգործնախարար՝ ներկայացնելով բարեփոխիչների թևը:

Ի դեպ, պետք է նշեմ, որ երբ մենք դարձանք ՄԱԿ-ի անդամ պետություն, ունեինք բազում խնդիրներ: Նախ՝ չունեինք այս ոլորտում աշխատելու փորձ, այնուհետև մեր անձնակազմը բավական փոքր էր, և այդ ժամանակ մեզ բավական աջակցել են հենց Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչները, որոնք տարիների փորձ և բավական լուրջ ներկայացվածություն ունեին ինչպես ԻԿԿ-ում, այնպես էլ Զմիավորման շարժում կազմակերպությունում: Իհարկե մենք էլ բավական աջակցել ենք Իրանին, երբ հատկապես ՄԱԿ-ում՝ Գլխավոր ասամբլեայում, Իրանի նախատմամբ բանաձև էին մտցվում հատկապես Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների շուրջ: Մենք հաճախ Իրանի խնդրանքով ձեռնպահ կամ դեմ ենք քվեարկել այդ բանաձևերին, որը, իհարկե, առաջացրել է ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների դժգոհությունը: Մենք փորձել ենք բալանսավորել հարաբերությունները, բայց պետք է նշեմ, որի Իրանի հետ

ունեցել ենք փոխվստահելի մթնոլորտ և այն պահպանվել է այդ չորս տարիների ընթացքում, երբ ես աշխատել եմ ՄԱԿ-ում: ԻԻՀ արտգործնախարար Վելայաթին, այցելելով ՄԱԿ, միշտ աշխատել է հանդիպել ՀՀ արտգործնախարարին, եթե չի ստացվել հանդիպումը, ապա հանդիպել է ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցչին:

Ի դեպ, նշեմ, որ ԱՄՆ-Իրան զգայուն խնդիրներում մենք երբեմն ներգրավվում էինք որպես messenger (սուրհանդակ-Ի.Գ): Իհարկե դրանք ավելի շատ ոչ քաղաքական հարցերի ժամանակ էր լինում, հիմնականում տեխնիկական և ֆինանսական խնդիրների դեպքում: ՄԱԿ-ում երկու տարին մեկ անգամ բյուջե է ընդունվում, որտեղ միշտ շահերի բախում է գրանցվում: Հետաքրքիրն այն է, որ երբեմն ԱՄՆ-ի և Իրանի շահերը կարող են անհավանականորեն համընկնել: Օրինակ, հարց առաջանա, թե ֆինանսավորե՞ն խաղաղարար ինչ-որ գործողություն, թե՞ ոչ: Այդ հարցերում մենք շատ հաճախ եղել ենք որպես messenger ինչպես Իրանի և ԱՄՆ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի և Կուբայի միջև:

Երբ 1996թ. նոյեմբերին ես նշանակվեցի ԱԳ նախարար, որպես արտգործնախարար առաջին անգամ Հայաստանում ընդունեցինք ամենաբարձր մակարդակի պատվիրակություն ԻԻՀ-ից, որը մինչ այդ չէինք ունեցել: Հայաստան էր այցելել փոխնախագահ Հասան Հաբիբին՝ 40 հոգանոց պատվիրակությամբ՝ տարբեր ոլորտների ներկայացուցիչներով: Այցի շրջանակներում կնքվեցին 3 պայմանագիր, բազմաթիվ համաձայնագրեր: Այդ տարիներին բավական ակտիվ քննարկումներ և հանդիպումներ էինք ունենում եռակողմ ձևաչափով՝ Հայաստան-Իրան-Թուրքմենստան և Հայաստան-Իրան-Հունաստան, որոնք փոխշահավետ քննարկումներ էին: Արդյունքներ գրանցվեցին հատկապես Հայաստան-Իրան-Թուրքմենստան ձևաչափում, որտեղ հնարավորություն ընձեռվեց իրականացնել ապրանքափոխանակություն, ինչը տնտեսական առումով շահավետ էր ՀՀ համար: ԱՄՆ և Եվրամիության երկրների մոտ երբեմն տարակուսանք էր առաջացնում հատկապես

երկրորդ համագործակցությունը, որը բացատրվում էր նրանով, որ մասնակից երկրներից էր Եվրամիության անդամ Հունաստանը: Իսկ ԱՄՆ-ի հետ մեր հարաբերություններում մենք առավել քան բաց ենք եղել, և նրանք մշտապես տեղյակ են եղել մեր գործելաոճից: Մենք մշտապես վստահեցրել ենք, որ ՀՀ կողմից չի արվի ոչ մի քայլ, որը կհակասի միջազգային հանրության շահերին:

-Պարո՛ն Արզումանյան, այդ դեպքում ինչո՞ւ իրական արդյունքներ չարձանագրեցինք և շարունակական բնույթ չկրեցին այդ եռակողմ ձևաչափերը:

-Անկեղծ ասած, ես հետագայում չեմ հետաքրքրվել այդ գործընթացների արդյունքներով: Ինձ մոտ մինչև 1998թ. փետրվարը երկու հանդիպում արդեն պլանավորած էր, սակայն 1997-ին ես վայր դրեցի նախարարի լիազորությունները:

Գիտեմ, որ ստեղծվել էին աշխատանքային խմբեր երեք երկրների նախարարություններում էլ և նախապատրաստում էին մի քանի փաթեթ եռակողմ պայմանագրերի համար:

-Պարո՛ն Արզումանյան, որքանով որ այժմ հասցնում եք հետևել, ինչպե՞ս կորակեք այսօր իրականացվող հայ-իրանական հարաբերությունները և Ձեր կարծիքով, ո՞ր ոլորտն է գերիշխողը մեր և ԻԻՀ հարաբերություններում:

-Բավական ակտիվ պետք է լինի էներգետիկան, սա ամենակարևոր ուղղությունն է: Սակայն կարծում եմ, որ հիմա ավելի դեկլարատիվ բնույթի հայտարարություններ են արվում: Քանի տարի է խոսում են նավթավերամշակման գործարան կառուցելու շուրջ, և կարծում եմ, որ սա ավելի շատ PR-ի համար է արվում: Թե որքանով է այդ գործարանի կառուցումը ձեռնտու Իրանին, հայտնի չէ, միևնույն ժամանակ փաստ է, որ այս ուղղությամբ գործնական որևէ քայլ չի ձեռնարկվել:

Կարծում եմ՝ մենք իրականում լավ հնարավորություն ունեք դառնալու, չասեմ միջնորդ, դա շատ ամպագոռգոռ կինչի, բայց messenger կարող ենք լինել Իրանի և միջազգային հանրության միջև: Սա կարող է լավ հարթակ լինել Հայաստանի համար:

-Իսկ ի՞նչ եք կարծում, Իրանը կցանկանա՞ մեզ տեսնել այդ դերում:

-Վստահ եմ, որ կցանկանա, եթե ճիշտ աշխատենք: Սա մեզ համար էլ շատ կարևոր կլիներ: Ես արդեն նշեցի, որ մենք նման փորձ ունեցել ենք: Կարելի է հաստատել դիվանագիտական խողովակներ և արժևորվել այդ հարաբերությունների մեջ: Կարծում եմ՝ այդ հնարավորությունը կա, սպառված չի և դեռ կարող ենք գործել: Կարող են օգտագործել Հայաստանի տարածքը, գալ և տետատետ հանդիպումներ իրականացնել այստեղ, մենք ձեռնպահ կմնանք այդ քննարկումներին մասնակցելուց: Բայց պետք է ճիշտ աշխատել և կարողանալ բերել երկու կողմերին էլ Հայաստան: Ոչ կառավարական մակարդակով հանդիպումների ժամանակ ես այս հարցը բազմիցս բարձրացրել եմ:

-Պարո՛ն Արզումանյան, ինչպե՞ս եք գնահատում հայ-իրանական հարաբերությունների ներկա մակարդակը:

-Կարծում եմ՝ կարելի էր ավելի բարձր մակարդակ արձանագրել, քան այսօր ունենք: Մենք շատ ենք խոսում, թե Հայաստանը պետք է դառնա զբոսաշրջության երկիր, սակայն իրանցի զբոսաշրջիկի համար համապատասխան իրավիճակ չենք ստեղծում: Իրանցի մի տուրիստ սխալ քայլ է կատարում, հաջորդ օրը ողջ մամուլը ողողվում է այդ նյութերով: Այս երկու հասարակություններին, որոնք դարեր շարունակ ապրել են կողք կողքի, պետք փորձել մերձեցնել:

-Ինչպե՞ս կորակեք Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Լեռնային Ղարաբաղի և Ցեղասպանության հարցի հետ կապված: Մեզ հատկապես հետաքրքրում է Ձեր վերաբերմունքը արտգործնախարար եղած տարիների ժամանակ:

- Իրանական կողմը Ղարաբաղի հարցում մշտապես մեզ աջակցել է, եթե ոչ բացահայտ, ապա՝ քողարկված: Օրինակ 1997թ. ԻԿԿ գագաթաժողովի ժամանակ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ հետամուտ էր լինում մի շատ վատ

բանաձևի ընդունմանը, սակայն Իրանի ջանքերով այն զգալիորեն մեղմվեց:

Մենք հարաբերություններ չունենք Պակիստանի հետ և երբ Պակիստանը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում էր, Իրանը, օգտագործելով Պակիստանի հետ ունեցած կապերը, ամեն ինչ արեց, որ հակահայկական ձևակերպումներ ի հայտ չգան: Իրանական կողմը նմանատիպ հետկուլիսային շատ գործեր է արել և աջակցել մեզ:

-Պարո՛ն Արզումանյան, 1997թ հունվար և հունիս ամիսներին Դուք Իրանում էիք, ի՞նչ կարևոր ձեռքբերումներ ունեցաք:

-Ստորագրեցինք առողջապահության և մաքսային ոլորտի համաձայնագիր: Իրանը խնդրում էր վիզային ռեժիմը հանել: Հարցերի շրջանակը շատ լայն էր, հանդիպել ենք նախագահին և անգամ հոգևոր առաջնորդին:

Հետաքրքիր միջադեպ գրանցվեց այցի ժամանակ: Այցի շրջանակներում եղանք նաև Սպահանում, որտեղ իմ ժամանելու առթիվ ցույց էր կազմակերպվել և ցուցարարների առաջին շարքում ՀՅԴ ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի ծնողներն էին: Գիտեք այդ ժամանակ նա ձերբակալված էր:

-Եթե Ձեզ կրկին նշանակեին ՀՀ արտգործնախարար, Իրանի հետ կապված ո՞ր խնդրի վրա ավելի մեծ ուշադրություն կդարձնեիք:

-Կարծում եմ, որ պետք է առավելապես աշխատենք օգնել Իրանին միջուկային ծրագրի հարցում և փորձենք միջազգային հանրությանը հասկացնել, որ տարածաշրջանում Իսրայելի, Հնդկաստանի և Պակիստանի միջուկային զենքի առկայությունը խիստ վիրավորում է Իրանին: Եվ այդ ժողովուրդը, որը ապրում է այս տարածաշրջանում հազարամյակներ շարունակ, պետք է ունենա այդ զենքը, դա մենթալիտետի խնդիր է ու դա պետք է բացատրել միջազգային հանրությանը: «Խաղաղ ատոմ» ծրագրի շրջանակներում կարծես թե արդեն զգացվում է տեղաշարժ: Սա միակ տեղն է, որ մենք կարող ենք օգտակար լինել Իրանին:

-Պարո՛ն Արզումանյան, իսկ չե՞ք կարծում, որ եթե մենք մտնենք այդ գործընթացի մեջ (բացատրելու, թե սա մենթալիտետի խնդիր է, և իրենք պետք է ունենան միջուկային զենք), դա Հայաստանի համար այդքան էլ լավ սցենար չի լինի: ՄԱԿ-ի որոշմամբ և միջուկային զենքի չտարածման պայմանագրի համաձայն՝ արգելվում է պետություններին ձեռք բերել միջուկային զենք, և անգամ Հնդկաստանի, Պակիստանի և Իսրայելի միջուկային զենքը համարվում է անօրինական:

-ՄԱԿ-ը ամեն տարի ընդունում է «Միջուկային զենքից զերծ Մերձավոր Արևելիք»-ի մասին բանաձևը, բայց այդ բոլոր միջազգային պայմանագրերը ակնհայտորեն խախտվում և ոտնահարվում են, քանի որ այդ երեք երկրներն արդեն ունեն միջուկային զենք և չեն կարող ենթարկվել պատժամիջոցների: Պետք է վերանայել այդ պայմանագրերը: Իրանին վրդովեցնում է այն փաստը, որ երկակի ստանդարտներ են օգտագործվում և տարածաշրջանում առկա միջուկային զենք ունեցող երկրների նկատմամբ հանդուրժողականություն է ցուցաբերվում, սակայն Իրանին թույլ չի տրվում «խաղաղ ատոմ» ծրագրի շրջանակում անգամ ուրան հարստացնել: Ընդհանրապես, մեզ ձեռնտու է Իրանի դերի բարձրացումը տարածաշրջանում, քանի որ այդպես կնվազի Թուրքիայի դերն ու ազդեցությունը: Ի վերջո, մեր շահերից է բխում, որ Իրանի ու Միացյալ Նահանգների հարաբերությունները կարգավորվեն՝ գալով 1970-ական թվականների մակարդակին:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008թթ.)

Հուլիսի 08, 2012թ. Երևան

-Պարո՛ն Օսկանյան, Դուք 1992թ. ստանձնեցիք ՀՀ-ի ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության պետի տեղակալի պաշտոնը: Դա հենց այն շրջանն էր, երբ Իրանը Լեռնային Ղարաբաղի հարցում հանդես էր գալիս միջնորդական առաքելությամբ: 1992թ. մարտի 15-ին Իրանին հաջողվեց Թեհրան հրավիրել Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին: Ինչպե՞ս կներկայացնեք այդ շրջանը և ինչու՞ Իրանին չհաջողվեց մնալ միջնորդ երկրների շարքում:

-Այդ տարիներին հայ-ադրբեջանական հարաբերություններում ընդհանրապես վակուում էր տիրում: Մի շարք երկրներ հանդես եկան միջնորդական առաքելությամբ: Ռուսաստանը ինչ-որ փորձեր ձեռնարկեց, նույնիսկ Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը անձնական մասնակցություն ունեցավ: Բնականաբար Իրանը ևս չէր ցանկանում դուրս մնալ այդ գործընթացից: Այս ոլորտում հաջողություն ունեցող երկիրն առավել լայն ազդեցություն կունենար տարածաշրջանում: Այնպես որ, դա շատ բնական էր, որ Իրանի նման երկիրը, այն էլ Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանում տեղ զբաղեցնելու հավակնություն ունենար: Առավել ևս որ Իրանը ուներ դրա բարոյական իրավունքը, ի տարբերություն Թուրքիայի՝ Իրանը կարողացել էր Կովկասում վարել հավասարակշռված քաղաքականություն, հատկապես Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ, նաև՝ Լեռնային Ղարաբաղի հարցում: Սակայն բանակցությունների ընթացքը այլ զարգացում ունեցավ, ԵԱՀԿ-ն ներգրավվեց բանակցությունների մեջ, իսկ Իրանը, չլինելով ԵԱՀԿ-ի անդամ, դուրս մնաց այդ գործընթացներից: Ընդհանրապես, ԱՄՆ-ի ջանքերով Իրանը դուրս էր մղվում տարածաշրջանային գործընթացներից, և ամեն ինչ արվեց նրան Ղարաբաղյան խնդրից հեռացնելու համար:

-Ձեր պաշտոնավարության տարիներին Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ այժմ տարիների հեռավորությունից նկատելի են ու գտնում եք՝ կարելի էր շտկել:

-Իրանի հետ հարաբերությունները պետք է դիտարկել երկու հարթության վրա. առաջինը քաղաքականն է: 1998թ. ինձ համար դա կարևորագույն խնդիրներից մեկն էր, որ կարողանանք պահպանել Իրանի հավասարակշռված մոտեցումը տարածաշրջանի նկատմամբ, որովհետև կար նաև Ադրբեջանի ազդեցությունը Իրանի վրա, մեզ համար դա կարևորագույն խնդիր էր: Կարծում եմ, որ մեզ դա ինչ-որ տեղ հաջողվեց իրականացնել: Ինչ-որ տեղ եմ ասում, քանի որ միջազգային կազմակերպություններում, որտեղ Իրանի գործունեությունն առավել հրապարակային է, կային նաև այլ գործոններ՝ իսլամական գործոնը, ադրբեջանցիների առկայությունը Իրանում: Այդ պարագայում, ինչքան էլ Իրանը ադրբեջանամետ դիրքորոշում ուներ, համենայնդեպս, գործնական առումով հետևողական հավասարակշռությունը պահպանում էր: Եվ այդ հրապարակայինը փոխհատուցվում էր Հայաստանի հետ գործնական քայլեր կատարելով, և դա կապվում է արդեն երկրորդ հարթության՝ տնտեսական հարաբերությունների և տարածաշրջանային համագործակցության հետ, հատկապես տարածաշրջանային նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման առումով: Այստեղ, կարծում եմ, Հայաստանը ակնհայտ հաջողություն ունեցավ, դա Հայաստան-Իրան գազատարի կառուցմն էր և օրակարգում մի քանի կարևոր ծրագրեր դնելը, դրանք են՝ Մեղրու հէկի, ճանապարհների կառուցումը, էլեկտրաէներգիայի մատակարարումը: Գազամուղի կառուցումը մեր հիմնական ձեռքբերումն էր:

Դրա նկատմամբ մեծ դիմադրություն կար Միացյալ Նահանգների, Ադրբեջանի կողմից, ինչ-որ տեղ մտահոգություն ուներ նաև Ռուսաստանը: Այնպես որ, այստեղ մենք լուրջ դիվանագիտություն իրականացրինք, կարողացանք

և՛ ճնշումները չեզոքացնել, և՛ Իրանին ներգրավել տարածաշրջանի գործընթացների մեջ: Այսօր ինչ չի արվում, դա այն է, որ գազամուղի կառուցումից հետո մենք օրակարգում ունեինք տարածաշրջանային նշանակության շատ այլ ծրագրեր, որոնք, ցավոք, այժմ անուշադրության են մատնված: Ո՞րն է պատճառը...Կարծում եմ՝ քաղաքական գործոնը մեծ դերակատարություն ունեցավ: Այս ամենը քաղաքական որոշման արդյունք է և ոչ թե տնտեսական նպատակահարմարության, առավել գերիշխողն այս դեպքում քաղաքականն է: Եվ երբ տարածաշրջանային ծրագրերում նմանատիպ ձգձգում կա, նշանակում է, որ քաղաքական հարթության վրա ինչ-որ խնդիրներ են առաջացել:

-Իսկ ինչո՞վ է կարևոր ՀՀ-ն ԻԻՀ-ի համար:

-Նախ, պետք է նկատի ունենալ հայ-իրանական պատմական կապը, փոխադարձ բարի կամքը, նաև, մեծ հաշվով, թեկուզ և ոչ սիմետրիկ, այնուհանդերձ կա փոխադարձ օգտակարություն: Եթե առևտուր կա, ուրեմն այսօր բալանսը հօգուտ Իրանի է, գազ են մատակարարում Հայաստան, փոխարենը հոսանք ստանում իրենց հյուսիսային շրջանների համար: Իրականում Իրանի համար կարևորը քաղաքական գործոնն է, ճիշտ է, տնտեսականը պակաս կարևոր կամ զրոյական չէ, բայց այն գերիշխող գործոն չէ: Իրանը տարածաշրջանում իր ազդեցությունը պահելու ձգտում ունի հատկապես հիմա, երբ այսօր Իրանի դեմ բացվել է լուրջ ճակատ՝ նրան չեզոքացնելու, մեկուսացնելու, միջուկային հարցով ճնշելու համար և այլն: Այնպես որ, Իրանի վարկանիշի համար, նաև հոգեբանական առումով, ես կարծում եմ այս պահվածքը դեպի Կովկաս և դեպի Ռուսաստան կարևոր նշանակություն ունի: Այնպես որ, Իրանի օգուտը կարող է առավելապես աշխարհաքաղաքական, բարոյական, հոգեբանական լինել, քան նյութական:

-Իրանի և Հայաստանի միջև բավական շատ պայմանագրեր կան կնքված, սակայն հաճախ իրականացման բուն գործողությունները դանդաղում են կամ ընդհանրապես օրակարգից դուրս են գալիս: Ինչո՞վ կբացատրեք այն:

-Կան մեծ հարցեր, փոքր հարցեր...օրինակ, իմ ժամանակ փոքր հաղթանակներից մեկն էլ Իրանի հետ արտահանվող ապրանքատեսակների ցուցակ համաձայնեցնելն էր, դրանց տարիֆները նվազեցվեցին այնքան, որ հայկական ապրանքները կարողանային մրցունակ լինել իրանական շուկայում: Սակայն սա քաղաքական որոշում էր, քանի որ Իրանը աշխարհի համար փակ շուկա է, ու այդ զիջումն արվեց Հայաստանի համար, ինչը, կարծում եմ, մեր հաղթանակներից մեկն էր: Եվ ես հույս ունեի, որ դրա վրա հնարավոր կլինի անընդհատ աշխատել և այդ ցուցակը մեծացնել:

- Պարո՛ն Օսկանյան, մեր զրույցից ես հասկացա, որ այսօր, փաստորեն, Հայաստան-Իրան հարաբերություններում բացակայում է քաղաքական կամքը: Իսկ այդ քաղաքական կամքի բացակայությունը միայն մե՞զ մոտ է, թե դա նկատվում է նաև իրանական կողմում:

-Այս ամենը փոխադարձ է, պարսիկները, պատմությունից ելնելով, ինչքան էլ բարի կամք ցուցաբերեն հայերի նկատմամբ, որոշ սկզբունքներ ունեն, որոնք անշեղորեն պահպանում են: Նրանք, համապատասխանաբար, ակնկալում են, որ Հայաստանը ճիշտ կհասկանա և կընկալի իրենց ընդառաջ գնալու ցանկությունը, եթե անգամ Իրանը դրա մասին բացահայտորեն չի խոսում: Իրանը, իհարկե, միշտ համեմատության մեջ է դիտում Հայաստան-Իրան հարաբերությունները, մի կողմից՝ իրենց հնարավորությունները, չափը, մյուս կողմից՝ իրենց պատմական անցյալի դիմաց Հայաստանի հնարավորությունները: Կարծես չգրված սկզբունքներ կան Իրանի համար, որոնք այդ երկիրը ցանկանում է, որ Հայաստանը հարգի: Եթե դրանք հաշվի չեն առնվում ինչ-ինչ պատճառներով (անգամ Հայաստանը կարող է երբեմն դրանից տեղյակ էլ չլինել), Իրանը դրանից ազդվում է և կարող է համապատասխան հակազդեցություն ցուցաբերել: Այդ պատճառով ինձ համար դժվար է բացահայտել, թե ինչու են

դանդաղում տարածաշրջանային ծրագրերը, որոնք օրակարգում էին: Հնարավոր է՝ մեր թերացումը առավել բարձր դիվանագիտության մեջ է, որտեղ նկատվում է քաղաքական կամքի բացակայություն:

- Ինչպես էր ՀՀ ԱԳՆ լուծում քաղաքական ճգնաժամերը ԻԻՀ և ՀՀ միջև, հիշենք 1994թ., երբ դուք փոխարտգործնախարար էիք, տեղի ունեցավ ԻԻՀ օդանավի կործանման դեպքը: Ինչպե՞ս կարողացավ ՀՀ ԱԳՆ-ն լուծել քաղաքական ճգնաժամը ԻԻՀ և ՀՀ միջև: Օրինակ, «արյան գնի» շուրջ ծավալվող բանակցություններում ինչպե՞ս հաջողեցիք:

-Դա բավական ծանր վիճակ էր, որը ավարտվեց բարի կամքի դրսևորման և երկուստեք զիջումների արդյունքում: Մի փոքր վճար մենք տվեցինք, մի քիչ էլ իրենք զիջեցին և ամեն ինչ ավարտվեց խաղաղ բանակցությունների միջոցով:

-Միջազգային կազմակերպություններում, երբ քննարկվում է Իրանի հարցը (հաճախ՝ պատժամիջոցների կոնտեքստում), Հայաստանը ինչպե՞ս է կարողանում հավատարիմ մնալ և՛ միջազգային պարտավորություններին, և՛ հարևան Իրանին:

-Այո, երբեմն բավական բարդ էր լինում պահպանել հավասարակշռությունը, հատկապես հաշվի առնելով հանրային ընկալումը, քանի որ Ղարաբաղի հարցում Իրանը միջազգային կազմակերպություններում միշտ պաշտպանում էր Ադրբեջանին, բնականաբար Հայաստանում նկատվում էր դժգոհություն: Սակայն մեզ համար ոչ այնքան կարևոր էին միջազգային կազմակերպություններում Իրանի հրապարակային քվերակությունները, որքան հետկուլիսային բանակցությունները և Իրանի բուն գործողությունները: Իսկապես, թվում է՝ ստացվում էր դիսբալանս, մենք աջակցում էինք Իրանին միջազգային կազմակերպություններում, իսկ իրենք մեզ՝ ոչ, սակայն կարծես չգրված մի պայմանավորվածություն էր ձեռք բերվել մեր կողմից, ըստ որի՝ մենք չէինք դիտարկելու միջազգային կազմակերպություններում Իրանի քվեարկության արդյունքը

որպես չափանիշ մեր երկու երկրների հարաբերությունների համար: Մեր համար չափանիշը լինելու էր հիմնականում այն, ինչ մենք անում ենք ծրագրերի առումով, գործնական առումով: Բայց եղել են նաև դեպքեր, երբ մենք հօգուտ Իրանի չենք քվեարկել: Սակայն եթե թվերի վերածենք այս ամենը, կարելի է ասել, որ 90%-ով մենք միշտ քվեարկել ենք Իրանի օգտին, մնացյալ դեպքերում պահել ենք չեզոքություն և հազվադեպ դեպքում ի վնաս Իրանի ենք քվեարկել, օրինակ, մարդու իրավունքների հարցում և այլն, մինչդեռ Իրանը գրեթե միշտ Ղարաբաղի հարցում 90%-ով քվեարկել է Ադրբեջանի օգտին:

- Պարո՛ն Օսկանյան, ես հիշում եմ Ձեր մի նախաձեռնությունը, որի արդյունքում փորձեցիք Հայաստանի Հանրապետությունը դարձնել միջնորդ Իրանի և ԱՄՆ-ի միջև: Ինչպե՞ս էիք պատկերացնում դա:

- Հայաստանը գլխավոր միջնորդ դարձնելու նպատակ չկար էլ, բայց որպես messenger (սուրհանդակ-Ի.Գ) կարելի էր մտածել: Իրանի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների կարգավորումը ամբողջովին բխում էր Հայաստանի շահերից: Երկու երկրների հետ մենք ունենք լավ հարաբերություններ, առավել ևս այդ «միջնորդական կարգավիճակը» մեզ մանևրելու հնարավորություն էր տալիս՝ առավել համարձակ գործելու երկու ուղղությամբ էլ: Միացյալ Նահանգների նկատմամբ ինչ-որ քայլեր անելիս դա առավել հասկանալի էր լինելու Իրանին և հակառակը, Իրանի կողմ քայլեր անելիս ընկալելի էր լինելու ԱՄՆ-ի համար: Կարծում եմ՝ դա մեզ մոտ ստացվեց: Եղել են բազմաթիվ առիթներ, երբ Իրանը մեզ մի շարք message-ներ է (ուղերձ - Ի.Գ) հաղորդել, իմանալով, որ մենք այն կփոխանցենք Միացյալ Նահանգներին, նույնը Միացյալ Նահանգներն է արել, իմանալով, որ կարող ենք փոխանցել Իրանին: Դա, ես կարծում եմ, որ դրական ազդեցություն է ունեցել, եթե ոչ անմիջական Իրան-ԱՄՆ հարաբերությունների նորմալացման, ապա գոնե Հայաստան-ԱՄՆ և Հայաստան-Իրան հարաբերությունների առումով: Մեր կողմից նման նախաձեռնողական քայլը դրական դերակատարություն ունեցավ:

-Ինչպե՞ս եք գնահատում Հայաստան-Իրան քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական ոլորտների հարաբերությունների ներկա մակարդակը:

-Վատ չեմ գնահատում: Կարծում եմ, որ նորմալ է, բայց կարելի էր ավելի ակտիվացնել: Սակայն տարածաշրջանային նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ժամանակ նկատվում է որոշ դանդաղկոտություն, պատճառը հստակ չեմ կարող ասել, բայց քանի որ գիտեմ՝ այդ հարցերը լուծվում են քաղաքական հարթության վրա, մտահոգություն է առաջանում, որ քաղաքական հարթության վրա որոշ թերացումներ կան:

- Պարո՛ն Օսկանյան, Հայաստան-Իրան երկաթգծի կառուցումը, ըստ Ձեզ, կարող է մի օր իրականանա՞լ, թե սա երազանք է լոկ:

-Դա բարդ խնդիր է, դժվար իրականացվող, բայց ոչ անհնարին: Նախքան դրան հասնելը՝ այնտեղ դեռ կան ծրագրեր, որոնք առավել հեշտ իրականանալի են և փոխադարձ շահավետ, այնտեղ է նկատվում դանդաղկոտությունը:

-Ինչպե՞ս կորակեք հայ համայնքի դերը Իրանի կյանքում և ի՞նչ է անում ՀՀ-ն իրանահայ համայնքի ներուժը համախմբելու և անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար:

-Իրանի հայ համայնքը կարող համայնքներից մեկն է: Կասկած չկա, որ այն լավ կամուրջ է նաև Իրանի և Հայաստանի հարաբերությունների հետագա զարգացումների առումով: Առկա է տնտեսական ներուժը, որը կարող է Հայաստանի տնտեսության մեջ խոշոր ներդրումներ կատարել: Ակնհայտ է նաև Իրանի բարյացակամ վերաբերմունքը համայնքի նկատմամբ, այնպես որ, ինչ- որ արվել է և շարունակվում է, մեծ հաշվով նորմալ եմ գնահատում:

-Իսկ ինչպիսի՞ն է հայ-իրանական հարաբերությունների հեռանկարը: Ի՞նչ զարգացումներ եք տեսնում այստեղ:

-Նայած թե ինչպիսի՞ զարգացումներ կլինեն: Իրանի միջուկային խնդիրը ինչպիսի՞ դրսևորումներ կունենա, Միացյալ Նահանգները և արևմուտքը ի՞նչ քայլեր կձեռնարկեն:

Եթե այս ամենը մի կողմ դնենք, և հայ-իրանական տեսանկյունից հարցը դիտարկենք, իհարկե, Իրանը մեծ պոտենցիալ ունեցող երկիր է և քաղաքական, տնտեսական առումով Հայաստանի համար կարող է մեծ օգտակարություն ունենալ, այնպես որ, հարաբերությունները պետք է առավել զարգացնել, խորացնել՝ առավելագույնս նպաստելով մեր երկրների փոխադարձ մերձեցմանը :

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (2006-2014թթ), ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014թթ),

Հունիսի 15, 2013, Երևան

-Պարո՛ն Մովսիսյան, կներկայացնե՞ք հայ-իրանական էներգետիկ դաշտի համագործակցության մակարդակն այսօր: Ինչպիսի՞ն է Իրանի գազի գինը և որակը՝ համեմատած ռուսական գազի հետ:

-Հայաստան-Իրան էներգետիկ հարաբերությունները բխում են մեր էներգետիկ անվտանգության բարձրացման գլխավոր խնդրից: Եթե ուսումնասիրենք, թե ի±նչ է իրենից ներկայացնում էներգետիկ անվտանգությունը, ապա կտեսնենք, որ կարևոր գործոններից մեկը տարածաշրջանի մյուս երկրների էներգետիկ համակարգերի ինտեգրումն է: Եթե փորձենք վերլուծել մեր տարածաշրջանը, ապա կտեսնենք, որ ոչ բոլոր մեր հարևանների հետ կարող ենք նման ինտեգրման գործընթաց սկսել: Երկու հարևանի հետ կարող ենք դա անել՝ Վրաստանի և Իրանի: Հաշվի առնելով այդ երկրների առանձնահատկությունները՝ բնականաբար առավել մեծ բաժինը ընկնում է Իրանի էներգետիկ համակարգի հետ մեր փոխհարաբերություններին, որը շատ կարևոր է մեզ համար և՛ տեխնիկական, և՛ տնտեսական, և՛ անվտանգության առումներով: Եթե փորձենք գնահատական տալ այսօրվա հայ-իրանական էներգետիկ հարաբերությունների մակարդակին, ապա 100% սանդղակի դեպքում այն կգնահատեի 70%: Այն, ինչ մինչ հիմա արվել է, լավ է, բայց կարելի էր ավելին անել, և մենք աշխատում ենք այդ ուղղությամբ: Ծրագրում ենք այս տարի սկսել Մեղրու ՀԷԿ-ը, որի հիմնարկեքը արդեն արվել է, քննարկում ենք նավթամթերքատար խողովակի ծրագրի հարցերը, որը գաղափարից արդեն վերածվում է ծրագրի: Իրանական գազի կամ նավթային հումքի վրա նոր վերամշակող հզորությունների ստեղծման ծրագիր կա: Այս ամենը հաշվի առնելով՝ ես բավական բարձր եմ գնահատում և

կարելի է ասել այս հարաբերությունները բերում են տեխնիկական և տնտեսական առումով Հայաստանում էներգետիկ համակարգի լարվածության բավական մեղմացմանը:

Որակական առումով Իրանի գազը չի զիջում ռուսական գազին, ինչ վերաբերում է Իրանի գնային քաղաքականությանը, ապա դա միանշանակ չէ, քանի որ Իրանը և՛ գազ արտահանող է, և՛ ներկրող: Պիկային սեզոններին գազ է ներկրում, ոչ պիկայինի դեպքում՝ արտահանում: Հետևաբար, ներկրման և արտահանման գները պետք է մեկը մյուսին փակեն, հակառակ դեպքում դա կվնասի իրենց համակարգին: Եվ այս առումով, քանի որ ներկրվող գազի գինը բավական բարձր է՝ մոտ 400 դոլար, որը ներկրվում է հիմնականում Թուրքմենիայից, նա չի կարող պակաս գին առաջարկել, քան միջազգային գինն է: Մեր բանակցություններն էլ հանգեցրել են նրան, որ իրանական կողմը ավելի էժան գազ մատակարարել չի կարող:

Իրանը խողովակաշարերով գազի արտահանման մեծ շուկա չունի, այս պահին ընդամենը Թուրքիա և Հայաստան է արտահանում, բնականաբար գազի գինը մյուս երկրների կողմից գտնվելու է մեծ ուշադրության տակ, և Իրանը չի ցանկանում կորցնել իր գործընկերներին փոքր քանակների համար՝ իրականացնելով դեմպինգային քաղաքականություն: Այս առումով ռուսական գազի առաջարկված պայմաններն առավել ընդունելի են, քան այն, ինչ առաջարկում է իրանական կողմը:

-ՀՀ-ում ԻԻՀ դեսպանի վերջին հայտարարությունները հայ հասարակության մոտ ընկալվեցին որպես ուղերձ, թե Իրանը ցանկանում է Հայաստանի տարածքը օգտագործել որպես տարացիկ երկիր, նրա խոսքերով՝ Վրաստանն էլ է շահագրգռված այդ հարցում: Արդյոք կա՛ն ծրագրեր երկրորդ գազատարի կառուցման ուղղությամբ:

-Վրաստանը շահագրգռված չէ ստանալու իրանական գազը: Տարատեսակ քննարկումներ եղան, թե իբրև հայ-

իրանական գազատարը կառուցելու ժամանակ մեզ վրա ճնշումներ են եղել, որի արդյունքում խողովակի տրամագիծը փոքրացվել է: Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ, որևէ ճնշում մեզ վրա չի եղել ո՛չ Ռուսաստանի, ո՛չ Արևմուտքի կողմից: Այդ բանակցությունները ծայրից ծայր ես եմ վարել: Ինչո՞ւ ենք ընտրել խողովակի 700 մմ տրամագիծը: Նախ՝ գումարի խնդիր ունեինք. որքան մեծանում է խողովակի տրամագիծը, այնքան պահանջվող մետաղը շատանում է, մեծանում է տեխնոլոգիան և համապատասխանաբար, թանկանում է այդ խողովակաշարի կառուցումը: Առաջին հատվածը կառուցելու դեպքում մենք վճարեցինք 40 մլն. դոլար, եթե անցկացնեինք 1000 մմ տրամագծով խողովակ, մենք պետք է վճարեինք 60 մլն. դոլար, որը մենք չունեինք: Մենք հաշվել ենք, թե Ռուսաստանից Հայաստան ընդհանրապես գազ չմտնելու դեպքում առաջացած ֆորս-մաժորային իրավիճակում որքան գազ է անհրաժեշտ Հայաստանին՝ ապահովելու ներքին անվտանգությունը: Ստացել ենք մինչև 2 մլրդ. խորանարդ մետր գազ, ավելին մեզ անհրաժեշտ չէ: Ենթադրենք կառուցեինք 1000 մմ տրամագծով խողովակաշար, այդ դեպքում կարող էինք ներկրել 4 մլրդ. խորանարդ մետր գազ, բայց ի՞նչ էր տալու դա մեզ: Հարևան Վրաստանին իրանական գազը հետաքրքիր չէ, ո՛չ գնային, ո՛չ էլ տարանցիկ առումներով: Երկրորդ, տարանցիկի համար 2 մլրդ. ծավալը շատ քիչ է, և մեկ խողովակաշարով դեպի Եվրոպա հնարավոր չէ իրականացնել գազամատակարարում: Այսինքն՝ պետք է մի քանի խողովակ կառուցվեր, ինչպես օրինակ, Ռուսաստանն է անում, 12 խողովակով Եվրոպա է ուղարկվում ռուսական գազը: Երրորդ, հայ-իրանական գազատարը կարող էր կազմել Նաբուկո ծրագրի մի փոքր մասը, որը սակայն տարածաշրջանի հզոր տերությունները անգամ չեն կարողանում կյանքի կոչել:

Մեզ ինչ էր պետք. լուծել մեր ներքին անվտանգության խնդիրները՝ հաշվի առնելով առաջիկա 25-30 տարիների զարգացումները: Այդ պատճառով վերցրինք այս տրամագիծը՝հնարավորություն տալով մինչև 3 մլրդ.

խորանարդ մետր գազ բերել այս խողովակաշարով: Եթե կարիք լինի ծավալը մեծացնելու, կարող ենք կառուցել կոմպրեսորային մեկ կայան մեր տարածքում, ճնշումը բարձրացնել և դրա արդյունքում գազի ծավալը մեծացնել: Եվ ավելի մեծ խողովակաշարը տնտեսապես էլ արդարացված չէր լինի, եթե մենք կառուցեինք 1000-1400 մմ տրամագծով, մեզ մեղադրելու էին, որ ծախսերը արդարացված չեն:

-Պարո՛ն Մովսիսյան, ինչպե՞ս ենք մենք իրականացնում մեր էներգետիկ քաղաքականությունը Իրանի նկատմամբ առկա պատժամիջոցների համատեքստում:

-Բոլորս շատ լավ հասկանում ենք, որ մենք մեր երկրի ներքին էներգետիկ անվտանգության խնդիրներն ենք լուծում և ավել գործողությունների ռեսուրսներ էլ չունենք:

-Պարո՛ն Մովսիսյան, շրջանառվում է Իրան-Հայաստան նավթավերամշկման գործարանի և նավթախողովակաշարի կառուցման ծրագիրը: Որքանո՞վ է այն իրական և աշխատանքները ի՞նչ փուլում են:

-Ստեղծել էինք Իրան-Հայաստան-Ռուսաստան աշխատանքային մի խումբ, որը մասնագիտական խորը վերլուծություն կատարեց Հայաստանում նավթավերամշակման գործարան կառուցելու ուղղությամբ: Այդպիսի գործարան կառուցելը բավական մեծ ծրագիր է մեր կարգի երկրների համար, շատ դժվար իրականացնելի է: Երկրորդ, կար հումքի խնդիրը, որտեղի՞ց էինք ստանալու հումքը: Հումքի խնդիրը լուծելուց հետո ի հայտ է գալիս այլ խնդիր, որտե՞ղ պետք է իրացվի արդյունքը: Եթե չէինք կարողանալու արդյունքը իրացնել, ապա դա տնտեսապես չէր կարող արդարացվել: Բավական մեծ խնդիրներ առաջացան. այսինքն հումքը բերում էինք այլ երկրից, քանի որ մենք չունենք, վերամշակող հզորություն ենք կառուցում, որին զուգահեռ պետք է կառուցեին անհրաժեշտ հզորության ենթակառուցվածքներ, որը բերելու էր հավելյալ լուրջ ծախսերի, ստանում ենք արդյունք, որը ամբողջապես չէինք կարող սպառել մեր երկրում, քանի որ շուկան շատ փոքր է և այն պետք է տանեինք

այլ երկիր, որպեսզի վաճառեինք: Հաշվարկները ցույց տվեցին, որ այդ ծրագիրը տնտեսապես արդարացված չէ: Դրա համար մենք հրաժարվեցինք այդ ծրագրից՝ ունենալով մեկ այլ մտահաղացում: Ամենափոքր նավթազտարանը, որ պետք է մենք կառուցեինք, ունենալու էր տարեկան 2,5 մլն. տոննա հզորություն, իսկ մեր պահանջարկը տարեկան 400-500 հազար լիտրից չի անցնում: Հետևաբար խնդիր առաջացավ, քանի որ այդ ծավալները մենք չենք կարող իրացնել, ապա առավել նպատակահարմար է պատրաստի նավթամթերք բերել: Սկսեցինք բանակցել այս հարցում իրանական կողմի հետ: Գաղափարը ընդունվեց իրանական կողմից, որովհետև հաշվարկները ցույց էին տալիս, որ պատրաստի նավթամթերքը խողովակաշարով ներկրելը, առավել մատչելի էր դառնում, քան տրանսպորտային միջոցներով բերելու դեպքում: Եթե ներկրում էինք Իրանից, ապա պետք է աշխատեինք Պարսից ծոցի շուկայի և ոչ թե Միջերկրական ծովի շուկայի կանոններով: Հաշվարկները ցույց տվեցին, որ մեզ անհրաժեշտ նավթամթերքները Պարսից ծոցում առավել էժան է, հատկապես մեզ հետաքրքրող սեզոններին: Հաշվարկները ցույց տվեցին, որ խողովակաշարի կառուցումն ավելի նպատակահարմար է, քան նավթազտարան կառուցելը: Իրանի կառավարության հետ ստորագրվեց հուշագիր, ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրություններ կատարեցին, արդյունքում ձևավորվեց տեխնիկատնտեսական մի հիմնավորում, ըստ որի՝ այս ծրագիրը բավական հետաքրքիր համարվեց: Ամրագրվեցին խաղի կանոնները՝ որտեղի՞ց ենք վերցնում նավթամթերքը, ինչպիսի՞ տոկոսադրույքներ են կիրառվում, բայց այս ամենով հանդերձ կային խնդիրներ, այս ծրագիրը մինչև վերջ տանելու համար: Միջազգային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունները ոչ կայուն իրավիճակ են ստեղծել նաև նավթամթերքի շուկայում: Որոշակի կայունացման դեպքում կարող ենք անդրադառնալ այս խնդրին: Այս պահին նախագծման աշխատանքներ են իրականացվում խողովակաշարի անցկացման համար, վերջնականապես

հստակեցվում են խաղի կանոնները: Նման ծրագրերը շատ մեծ են և մեկ-երկու տարում հնարավոր չէ դրանք իրականացնել:

-Պարո՛ն Մովսիսյան, արդյոք Հայաստանը համագործակցո՞ւմ է Իրանի հետ միջուկային էներգիայի ոլորտում: Օրինակ, կա՞ համագործակցություն Բուշեհրի և Մեծամորի ատոմակայանների միջև:

-Ո՛չ չենք համագործակցում: Միջուկային էներգետիկայում ընդհանրապես համագործակցություն չունենք:

-Պարո՛ն Մովսիսյան, Մեղրու ՀԷԿ-ի կառուցման շուրջ աշխատանքների ձգձգումը ինչի՞ հետ եք կապում:

-Մեղրու ՀԷԿ-ը բավական խոշոր ծրագիր է, որի շինարարության համար անհրաժեշտ է 600-700 միլիոն դոլար երկու կայանը միասին կառուցելու համար: Ամբողջ շինարարությունն իրականացվելու է իրանական ներդրումների միջոցով, այնուհետև Հայաստանը այդ կառույցի համար էլեկտրաէներգիայով պետք է փոխհատուցի: Շինարարության ուշացումների համար կան օբյեկտիվ և սուբյեկտիվ պաճառներ: Իրանը այսօր լուրջ պատժամիջոցների տակ է գտնվում և ազատ գումարներ քիչ կան Իրանում, բայց միևնույն է նրանք խոստացել են այս տարի սկսել աշխատանքները:

-Դուք՝ իբրև հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ, հայ-իրանական հարաբերությունների ո՞ր ոլորտն եք գտնում առավել կարևոր, որ կարիք ունի առավել խորացման:

-Իրանը արագ տեմպերով զարգացող երկիր է և կարծում եմ, բոլոր ոլորտներում կարելի է համագործակցել և իրականացնել աշխատանքներ: Բավական զարգացած է կրթական ոլորտը, և շատ լավ կլիներ այս ոլորտում խորացնել մեր հարաբերությունները: Ունեն բարձր մակարդակի գիտահետազոտական ինստիտուտներ, որոնց հետ կարելի է սերտացնել հարաբերությունները:

-Ո՞ր փուլում են գտնվում հայ-իրանական երկաթգծի շուրջ քննարկվող ծրագրերը:

-Սա լուրջ գաղափար է, և պետք է փաստեմ, որ երբ այս մտահաղացումն առաջ քաշեցի, այսօրվա արդեն նորընտիր նախագահը՝ Հասան Ռոհանին, որը այդ տարիներին Ազգային ատանգության խորհրդի քարտողարն էր, մեծ հավանության արժանացրեց: Ռուս-վրացական պատերազմն էլ մեզ ևս մեկ անգամ ապացուցեց, որ սա իրականում կյանքի խնդիր է: Ի՞նչ փուլում է գտնվում ծրագիրը և ինչքանո՞վ է այն իրականացնելի: Եթե մենք մի քիչ ավելի հզոր երկիր լինեինք և ունենայինք անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, միանշանակ ձեռնամուխ կլինեինք այս աշխատանքների իրականացմանը:

Ընդհանրապես այսօր աշխարհում կառուցվող երկաթգծերի մեծ մասը կառուցվում են սոցիալական կամ քաղաքական դրդապատճառներով, հատկապես մեզ նման երկրներում, նկատի ունեմ ռելիեֆը: Երկաթգիծ կառուցելը բավական թանկ հաճույք է, բայց իրականանալի ծրագիր է: Այստեղ պարզապես պետք է բոլորի համար շահագրգիռ կետեր գտնել, փորձել այնպես մատուցել, որպեսզի շատ երկրներ կարողանանք ներգրավել այս գործում: Ո՞ր երկրներին կարող է շահագրգռել այս ծրագիրը: Տարածաշրջանում որոշակի ֆունկցիա, որոշակի դեր ունեցող երկրները կարող են մասնակցություն ունենալ այս ծրագրին: Իսկ դա կա. Իրանին այս ծրագիրը ևս շատ հետաքրքրում է: Այժմ Իրանը երկաթգծեր է կառուցում դեպի Թուրքմենիա, Հնդկաստան, և հյուսիս-հարավ այս գծի վրա կարևոր է դառնում նաև Հայաստանի ուղին: Իրանը Եվրոպա դուրս գալու մեկ այլ ուղի է ստանում: Իրանը այժմ միայն Թուրքիայի վրայով է դուրս գալիս Եվրոպա: Մեր խնդիրն է ճիշտ ժամանակին կարողանալ ֆինանսական հատկացումներ գտնել: Հնարավոր է այս ծրագիրը սկզբնական շրջանում տնտեսապես արդյունավետ չլինի, միևնույն ժամանակ ես կարծում եմ, որ պարտադիր էլ չէ, որ այս ծրագիրը ժամանակի ընթացքում ներդրված գումարները ետ բերի, սա երկրի ազգային անվտանգության առումով կարևոր ծրագիր է:

-Պարո՛ն Մովսիսյան, իսկ քննարկվե՞լ է արդյոք երկաթգծի անցման ճանապարը:

-Երկաթգիծը պետք է անցնի պատերազմական իրավիճակներում երբեք չհայտնող ճանապարհով, Զանգեզուրով՝ Մեղրի-Քաջարան-Դաստակերտ-Սիսիանի սարահարթ այնուհետև կա՛մ Վարդենիս, կա՛մ Երասխ:

-Պարո՛ն Մովսիսյան, ինչպե՞ս եք գնահատում հայ-իրանական հարաբերությունների ներկա մակարդակը: Խնդրեմ ներկայացրեք այս տարիների մեր ձեռքբերումները և բացթողումները:

-Ձեռքբերումները շատ են հատկապես էներգետիկ ոլորտում: Բարձր եմ գնահատում նաև մյուս ոլորտներում ձեռքբերումները, իհարկե, եթե համամեմատելու լինենք էներգետիկայի ոլորտի հետ, ապա դեռ չեն հասել հարաբերություններում այդ մակարդակին, բայց ճիշտ աշխատելու դեպքում կարող են հասնել: Իրանը զարգացող լավ տնտեսություն ունի, լավ փորձ ունի թե՛ գյուղատնտեսության, թե՛ առողջապահության, թե՛ արդյունաբերության ոլորտներում, և մենք պետք է այս փորձը ճիշտ օգտագործենք:

Բացթողումների մեջ ես տեսնում եմ, որ բոլոր այս համագործակցությունները ավելի շատ պետական մակարդակի վրա են գտնվում, ցանկալի կլիներ, որ մասնավոր հատվածն էլ մասնակցեր, սա ավելի մեծ արդյունք կտար: Բայց դեռևս այս պահին ցանկալի մակարդակ չկա: Ընդամենը 20 տարի է ինչ համագործակցում ենք միմիանց հետ, Հայաստանում շատ քիչ մարդ կա, որ իրապես հասկանում է Իրանի տնտեսությունը: Եթե կարողանանք մասնավոր հատվածին ներգրավել և մասնակից դարձնել Իրանի հետ շփումներին, հատկապես տնտեսության ոլորտում, շատ լավ կլինի:

Պարո՛ն Մովսիսյան, առկա տեղեկատվության համաձայն, պետք է Հայաստանում ստեղծվեր ազատ առևտրի գոտի, որտեղ առանց մաքսի իրանցիները կարող էին ցուցադրել իրենց արտադրանքը և վաճառել:

-Ազատ տնտեսական գոտու գաղափարը այս դեպքում մի փոքր անհասկանալի է այն պարզ պատճառով, որ Հայաստանը և Իրանը տնտեսապես տարբեր հարթությունների

վրա գտնվող երկրներ են: Այս գաղափարը ունի մի քանի խնդիր. Իրանը ունի լավ ձևավորված տնտեսություն, ազատ տնտեսական գոտու ստեղծման դեպքում Հայաստանի տնտեսությունը չի կարող մրցակցել իրանականի հետ: Ազատ տնտեսական գոտին չի նպաստի նաև մասնավոր սեկտորի միջև հարաբերությունների զարգացմանը: Սա ընդամենը ռեժիմ է, որը նպաստելու է շփման հեշտացմանը, բայց որևէ խնդիր չի լուծելու: Սա չի նպաստելու մեր տնտեսության զարգացմանը:

Իրանական կողմը առաջարկում է ստորագրել ազատ առևտրի մասին համաձայնագիր, բայց օրենսդրական դաշտում մենք ունենք էական տարբերություններ: Մենք ասել ենք, որ պատրաստ ենք մտնելու այդ գործընթացի մեջ, բայց և առաջարկել ենք առևտրային ոլորտի իրենց օրենքները հարմարեցնել մեր օրենսդրությանը, քանի որ մենք Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ ենք, մեր օրեսդրությունը այս մասով համապատասխանում է միջազգային ստանդարտներին: Հակառակ դեպքում հնարավոր չէ: Օրինակ, Իրանում որոշվում է ինչ-որ ապրանքի վրայից հանել մաքսերը, մենք հանում ենք, բայց իրենց մոտ կա ինչ-որ նահանգային մաքս, որը իրենք չեն հանում: Այսինքն, ապրանքի վրա այնուամենայնիվ ինչ որ գումար է դրվում, իսկ մենք չունենք նման մարզային մաքսեր:

-Պարո՛ն Մովսիսյան, ինչո՞վ կբացատրեք, որ իրանական ապրանքները առավել հեշտ են մտնում ՀՀ, մինչդեռ հայկական ապրանքների մուտքը Իրան զգալիորեն դժվարանում է:

-Եթե որևէ երկիր արտադրում է ինչ-որ ապրանք և մյուս երկիրը ցանկանում է այդ երկիր ներմուծել նույն ապրանքից, հանդիպում է դժվարությունների: Օրինակ, փորձեք Եվրոպա ներկրել մսամթերք, ձեզ վրա այնպիսի պահանջներ կդնեն, որը չեն դնում Եվրոպայի գործարարի առջև: Ինչո՞ւ, որպեսզի դրսից բերվող ապրանքը դժվար մտնի շուկա՝ իրենց արտադրանքը ավելի արագ ու հեշտ վաճառելու նպատակով: Բոլոր երկրներում է այդպես: Բոլոր երկրներն են իրենց

ապրանքների նկատմամբ վարում պրոտեկցիոնիստական քաղաքականություն:

-Պարո՛ն Մովսիսյան, ժամանակին ինֆորմացիա տարածվեց, որ Մեղրիում և իրանական Նորդուզ քաղաքում պետք է բացվի շուկա, որը կնպաստեր այս շրջանի բնակիչներից ընտրված խմբերի ազատ առևտրին: Ի՞նչ զարգացումներ կան այս ոլորտում:

-Այս շուկան մի քան անգամ բացվեց և փակվեց: Այն նպատակները, որ ունեինք չիրականացան: Փաստորեն դա դարձել էր մի շուկա, որը արդյունք չտվեց: Այսօր մեղրեցին ի՞նչ ունի, որ արտահանի Իրան, ստացվում է, որ մեղրեցին պետք է գա Երևանից ապրանք տանի, բայց դա էլ չեղավ սահմանային առևտուր:

-Իսկ ինչո՞վ է կարևոր ՀՀ-ն ԻԻՀ-ի համար:

-Իրանը Հայաստանին վստահում է:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.)

Ապրիլի 13, 2012թ. Երևան

-Պարո՛ն Բայբուրդյան, Ձեր պաշտոնավարության տարիներին Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել և արդյոք եղե՛լ են բացթողումներ, որ այժմ գտնում եք՝ կարելի է շտկել:

-Այս հարցին պատասխանելիս նախ պետք է նկատի ունենալ, որ հայ-իրանական հարաբերությունների ակզբնավորման արշալույսին մենք ամեն ինչ սկսել ենք զրոյից: Այստեղ հնարավոր չէ մեկ առ մեկ թվարկել այն ձեռքբերումները, որ մենք ունեցել ենք մեր դիվանագիտական առաքելությունն իրականացնելիս: Սակայն մի քանիսին, այնուամենայնիվ, կանդրադառնանք:

Առաջին կարևորագույն խնդիրը, որ Թեհրան ժամանելուց հետո դրված էր մեր առջև, դեսպանության հիմնումն էր, այն դիվանագետներով համալրելը և հյուպատոսական ծառայության ստեղծումը: Կարևորագույն խնդիր էր նաև դիվանագետներին և նրանց ընտանիքների անդամներին կացարանով ապահովելը: Այդ հարցերը մեզ հաջողվեց լուծել մեկ-երկու ամսվա ընթացքում: Մեզ համար ավելի դժվար հարց դարձավ ծառայողական մեքենա ձեռք բերելու խնդիրը: Երկու տարի շարունակ դիվանագիտական առաքելության ղեկավարը և դեսպանության անձնակազմը աշխատավայր էին մեկնում և առհասարակ երթևեկում էին տաքսիներով, որը անթույլտարելի ու նվաստացուցիչ է որևէ երկրի դեսպանի և դեսպանության համար: Ի վերջո, մենք լուծեցինք այդ հարցը ևս: Երկու տարի անց դեսպանությունն ուներ հինգ ավտոմեքենա:

Ավելի դժվարին խնդիր էր դիվանագիտական փորձի և գիտելիքների ձեռք բերումը, որովհետև դեսպանության փոքր անձնակազմի և ոչ մի անդամ պրոֆեսիոնալ դիվանագետ չէր:

Իմ պաշտոնավարության վեց տարիների ընթացքում մենք ունեցանք հետևյալ ձեռքբերումները. ստեղծվեցին Իրան-Հայաստան օդային և ցամաքային (ավտոբուսային) հաղորդակցություն, ավտոմատ հեռախոսային կապ, Արաքս գետի վրա կառուցվեց Իրանը Հայաստանի հետ կապող հիմնական կամուրջը, Երևանում բացվեց իրանական խոշոր բանկերից մեկի՝ «Բանք-ե մելլաթի» մասնաճյուղը, հիմք դրվեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերություններին, որոնք սկսեցին զարգանալ դինամիկ ու վերընթաց գծով: Առանձին տարիներին Իրանը Հայաստանի արտաքին առևտրի մեջ զբաղեցրեց առաջին տեղը: Մեղրի-Երևան ավտոճանապարհը վերածվեց բանուկ ճանապարհի, ինչպես նաև իրանական բեռնատար մեքենաների տարանցիկ ուղու՝ դեպի Վրաստանի սևծովյան նավահանգիստները դուրս գալու համար: Հիմք դրվեց նաև Իրանի վրայով տարբեր երկրներից (Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ, Բահրեյն, Կատար, Հնդկաստան և այլն) տարանցիկ բեռների փոխանցմանը Հայաստան: Հայաստանի և Իրանի սահմանների վրա հիմնվեցին մաքսատներ և անցումային կետեր, իր առաջին քայլերը սկսեց կատարել սահմանային առևտուրը: Իրանի առանձին նահանգների և ՀՀ միջև սկսվեցին ուղղակի, չմիջնորդավորված առևտրային հարաբերություններ, երկու երկրներում պարբերաբար սկսեցին կազմակերպվել առևտրատնտեսական ցուցահանդեսներ և այլն:

Թեհրանում ստեղծվեց «Հայ-իրանական առևտրական պալատ», որի մեջ ներգրավված էին մեծ թվով ինչպես հայ, այնպես էլ պարսիկ գործարարներ: Պալատը կոչված էր նպաստելու Իրան-Հայաստան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: Այդ նույն նպատակով Երևանում ստեղծվեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները համակարգող պետական հանձնաժողով:

Հիմք դրվեց Հայաստան-Իրան-Թուրքմենստան, Հայաստան-Իրան-Հունաստան եռակողմ համագործակցությանը: Կառուցվեց Իրան-Հայաստան

բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը: Ստեղծվեց հայ-իրանական միջպետական հարաբերությունների կայուն իրավապայմանագրային դաշտ, կնքվեցին տարբեր բնագավառների վերաբերող 80-ից ավել պայմանագրեր ու համաձայնագրեր: Ի դեպ, հենց այդ տարիներին պայմանավորվածություն ձեռք բերվեցին և ըստ այնմ ստորագրվեցին համապատասխան փաստաթղթեր Իրան-Հայաստան գազամուղի կառուցման, Արաքս գետի վրա համատեղ ջրամբարտակ և հիդրոէլեկտրակայան կառուցելու, Մեղրու մոտ նավթավերամշակման գործարան կառուցելու, Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղագիծ կառուցելու և այլ նախագծերի վերաբերյալ:

Դեսպանության ջանքերով կազմակերպվեց բազմապիսի օգնություն Հայաստանի Հանրապետությանը (օրինակ, ալյուրի առաքում Զանգեզուրի տարածաշրջանի բնակավայրերին, նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին նավթավառների և նավթի առաքում, ֆինանսական խոշոր փոխանցումներ «Հայաստան համահայկական հիմնադրամին»: Ընդ որում այդ նպատակով կազմակերպվեց դրամի հանգանակություն Արաբական Միացյալ Էմիրությունների հայկական համայնքում ևս):

Թեհրանի դեսպանության ջանքերով առանձին թեհրանահայեր ֆինանսական աջակցություն ցուցաբերեցին Երևանի բուհերին (օրինակ, Երևանի Հերացու անվան բժշկական համալսարանին, Երևանի պետական համալսարանին և այլն): Դեսպանությունը կազմակերպեց դրամահավաք Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի շինարարության համար, Հայաստանի հիվանդանոցների համար ուղարկեց մեծ թվով սայլակներ հաշմանդամների համար:

Դեսպանությունը կազմակերպեց Ղարաբաղում զոհված ազատամարտիկների երեխաների հանգիստը Թեհրանում: Իրանահայ հայրենակիցների ֆինանսական միջոցներով կազմակերպվեց նաև օգնություն Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի երաժիշտներին: Հնարավոր չէ այստեղ մեկ առ

մեկ թվարկել դեսպանության կազմակերպած նմանատիպ միջոցառումները:

Իմ պաշտոնավարության տարիներին հիմք դրվեցին և հաջողությամբ սկսեցին զարգանալ նաև հայ-իրանական քաղաքական, միջպետական, գիտական ու մշակութային հարաբերությունները: Դեսպանությունը կազմակերպեց երկու երկրների ղեկավարների և խորհրդարանական պատվիրակությունների բազմաթիվ փոխայցելություններ, մեծ աշխատանք տարավ ՀՀ պետական հեղինակությունը ԻԻՀ-ում բարձրացնելու, ինչպես նաև Ղարաբաղի հարցում հայանպաստ իմիջ ստեղծելու ուղղությամբ:

Մի խոսքով, իմ պաշտոնավարության վեց տարիների ընթացքում դրվեցին հայ-իրանական հարաբերությունների կայուն հիմքերը, որոնք հետագայում ևս ունեցան վերընթաց զարգացում:

Ինչ վերաբերում է եղած բացթողումներին, ապա այդպիսիք անշուշտ եղել են: Սակայն հարկ եմ համարում նշել, որ դրանց մեծ մասը եղել է օբյեկտիվ պատճառներով: Օրինակ, մենք փորձեցինք Իրանական Ատրպատականի Թավրիզ քաղաքում բաց անել հյուպատոսություն: Թեև այդ ուղղությամբ մեր կողմից կատարվեցին որոշակի քայլեր, ձեռք բերվեցին հարմար շինություն և այլն, սակայն ի վերջո, այդ գործը գլուխ չեկավ, որովհետև իրանական կառավարության կողմից ստացանք մերժում, որը հիմնավորվում էր նրանով, որ Ադրբեջանը ևս այդ քաղաքում չունի հյուպատոսություն:

Այնուհետև, գոյություն ունեին նաև դեսպանության գործունեությունը որոշակիորեն խոչընդոտող գործոններ: Դրանցից կարևորագույնը Ղարաբաղի պատերազմն էր, որը մահմեդական բնակչության կողմից ընկալվում էր իբրև «իսլամական հողերի գրավում անհավատների կողմից»: Դեսպանությունն աշխատում էր Թեհրանի ազերիական համայնքից պարբերաբար կրկնվող ապառնալիքների պայմաններում: Իսկ 1993թ. նույնիսկ տեղի ունեցավ հարձակում դեսպանության շենքի վրա: Ազերիներից բաղկացած ամբոխը քարկոծեց և հրավառ նյութեր շպրտեց

դեսպանատան շենքի վրա և սպառնում էր հաշվեհարդար տեսնել դիվանագետների հետ:

Իրանի քաղաքացիներ հանդիսացող էթնիկ ազերիների նման գրգռվածության պայմաններում բնականաբար և՛ մենք, և՛ իրանական կողմը հարկադրված էինք մեր երկկողմանի հարաբերություններն իրագործել առանց ավելորդ աղմուկի ու ցուցադրումների:

-Ի՞նչ եք կարծում, այսօր հայ-իրանական հարաբերություններում ո՞ր ոլորտն է դոմինանտ և ինչո՞ւ է այդպես:

-Հայ-իրանական հարաբերություններում միշտ էլ գերակայել են առևտրատնտեսական ու մշակութային հարաբերությունները, իսկ քաղաքական հարաբերությունները եղել են ստորադաս, կամ ավելի ճիշտ երկրորդական վիճակում: Հասկանալի է, որ դրա պատճառները զուտ քաղաքական են, իսկ ավելի ստույգ, միջազգային-քաղաքական այն կացությունը, որի պայմաններում ներկայումս հայտնվել է Իրանի Իսլամական Հանրապետությունը: Այդ ուղղությամբ անշուշտ որոշակի դերակատարություն ունի նաև Իրանի բազմամիլիոնանոց թյուրք-ազերիական համայնքը:

Առանց երկմտության կարելի է ասել, որ այսօր ևս հայ-իրանական հարաբերություններում գերակայող բնագավառը շարունակում է մնալ առևտրատնտեսական ու մշակութայինը, թեև 1994թ. հայ-արբեջանական զինադադարից և հատկապես 2000 թվականից հետո նկատվեց քաղաքական հարաբերությունների որոշ աշխուժացում, երկու երկրների նախագահների փոխայցելություններ և այլն: Սակայն միևնույն է, պատկերը աննշան փոփոխությամբ մնում է նույնը:

-Ինչպե՞ս կգնահատեք Հայաստան-Իրան տնտեսական կապերը:

-Երկու հարևան երկրների հարաբերությունների սկզբնավորման առաջին իսկ օրերից հայ-իրանական համագործակցության ամենափայլուն ու ակտիվ բնագավառներ դարձան առևտուրն ու տնտեսությունը: Դա վկայում է այն մասին, որ կողմերը շահագրգռված էին

առևտրատնտեսական համագործակցության մեջ: Հայաստանի Հանրապետությունը տեսնում էր տնտեսական առկա խնդիրների լուծման կարևորագույն միջոցներից մեկը:

Ես պետք է գոհունակությամբ նշեմ, որ առհասարակ Իրան-Հայաստան տնտեսական կապերը միշտ ունեցել են դինամիկ զարգացում: Այսօր էլ այդ հարաբերություններն ընթանում են բնականոն հունով: Սակայն պետք է խոստովանել, որ այն տեմպը, որ գոյություն ուներ այդ հարաբերություններում XX դարի 90-ական թվականների վերջին, երբ ԻԻՀ-ը դարձավ Հայաստանի Հանրապետության թիվ մեկ առևտրատնտեսական գործընկերը, հետագայում գնալով անկում ապրեց: Իհարկե դա ուներ իր պատճառները: Սակայն կարծում ենք, որ մեր երկու երկրները պետք է ջանքեր գործադրեն առևտրաշրջանառության ծավալները մեծացնելու ուղղությամբ: Այդ բնագավառում առկա են չօգտագործված պատկառելի ռեզերվներ, որոնք պետք է մտցվեն գործողության մեջ: Իսկ Հայաստանի Հանրապետության առաջնահերթ խնդիրն է մեծացնել սեփական արտադրության ապրանքների ծավալն Իրան և ներմուծման ու արտահանման բնագավառում եթե ոչ վերացնել գոյություն ունեցող դիսբալանսը, ապա գեթ որոշ չափով կրճատել: Անշուշտ, դրան հասնելու ամենաարդյունավետ ճանապարհը հայկական արտադրության ապրանքների որակի բարձրացումն է:

-Ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան մշակութային և գիտական կապերը:

-Հայ-իրանական մշակութային և գիտական կապերը ձևավորվել են դեռևս 1992թ., երբ կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր մշակութային և գիտական համագործակցության վերաբերյալ: Այդ համաձայնագրի հիման վրա կազմակերպվեցին բազմաթիվ ցուցահանդեսներ, կինոփառատոններ, արվեստի գործիչների փոխայցելություններ, մշակույթի օրեր և այլն: Երևանում վերանորոգվեց իրանական աչքի ընկնող պատմամշակութային հուշարձան «Կապույտ մզկիթը», որն իրենով նշանավորվեց հայ-իրանական բարեկամության մի նոր էջ:

Կարծում եմ, որ մշակութային համագործակցության բնագավառում կան հսկայական չօգտագործված հնարավորություններ: Հայերն ու իրանցիները հզոր մշակույթ ունեցող ժողովուրդներ են և նրանց միջև համագործակցությունը փոխադարձաբար կարող է հարստացնել երկու ժողովուրդներին և նպաստել ստեղծելու նոր որակներ ու արժեքներ:

Ինչ վերաբերում է երկու երկրների միջև գիտական կապերին, ապա պետք է ասել, որ չնայած այն հանգամանքին, որ այդ բնագավառի վերաբերյալ ևս կնքվեցին մի շարք համաձայնագրեր, սակայն գիտական համագործակցությունը մեծ նվաճումներ չարձանագրեց: Իմ պաշտոնավարության տարիներին իրանական կողմը մեծ արդյունավետությամբ կարողանում էր Հայաստանի գիտական ներուժը օգտագործել խոշոր ծրագրեր իրագործելու համար: Իրանական կողմի հրավերով Իրանի տարբեր գիտական կենտրոններում պայմանագրային հիմունքներով աշխատում էին հայ երկրաբաններ, երկրաֆիզիկոսներ, կենսաբաններ, բուսաբաններ, գյուղատնտեսության գենետիկայի մասնագետներ, բժիշկ-հետազոտողներ և այլն:

1997թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի Իրան այցից հետո, թվում էր, թե երկկողմանի գիտական կապերը կաշխուժանան, սակայն դա տեղի չունեցավ:

- Ինչպե՞ս կորակեք հայ համայնքի դերը Իրանի կյանքում, և ի՞նչ է անում ՀՀ-ն իրանահայ համայնքի ներուժը համախմբելու և անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար:

-Իրանը սփյուռքահայ խոշորագույն համայնքներից մեկի՝ իրանահայության հայրենիքն է: Իսկ իրանահայությունը մեր սփյուռքի առավել վառ ազգային հայեցի նկարագիր ունեցող հատվածներից մեկն է: Հնուց անտի Իրանի հայ համայնքը օգտվել է իրանական կառավարության հովանավորությունից և իրանական ժողովրդների միջև մերձեցման պայմաններ էր ստեղծում նաև հայությունը իր

վերին աստիճանի օրինապահ ընթացքով և գնահատելի ծառայություններով երկրի տնտեսական, կրթական-մշակութային և քաղաքական մարզերում:

Իրանահայությունը միշտ հանդես է եկել որպես իր միջավայրի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ուժ:

Մեր օրերում ևս Իրանի հայ համայնքի հանդեպ իրանական պետության կողմից դրսևորվում է շեշտված բարյացակամ վերաբերմունք: Այսօր էլ իրանական ժողովուրդները չափազանց բարձր են գնահատում իրանահայության խոշոր ավանդը երկրի տնտեսության, լուսավորության, մշակույթի և այլ բնագավառներում:

Իրանահայությունը Իրան-Իրաքյան պատերազմի ժամանակ զենքը ձեռքին պայքարեց իրանական հայրենիքի սահմանների պաշտպանության համար՝ լիուլի կատարելով իր քաղաքացիական պարտքը:

ԻԻՀ-ում ՀՀ դեսպանությունը իր առջև դրած ամենակարևոր խնդիրներից մեկն էր համարում իրանահայ համայնքի համախմբումը հայրենիքի՝ նորակերտ Հայաստանի Հանրապետության շուրջը, երբեք չմոռանալով սակայն, որ լինելով հայեր, նրանք հանդիսանում են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ: Դեսպանության գործունեության հենց առաջին օրերից հայ դիվանագետները ստեղծեցին կապերի ու ծանոթությունների լայն շրջանակ: Այնուհետև ստեղծվեց «ՀՀ դեսպանատան բարեկամներ» ոչ պաշտոնական կառույցը, որը գործում էր մեծ արդյունավետությամբ: Իրանահայ մեր հայրենակիցները ջանք ու եռանդ չէին խնայում հայրենիքին օգտակար լինելու համար: Սակայն 1993թ. սկսած՝ իրավիճակը կտրուկ փոփոխության ենթարկվեց: Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարության և ԻԻՀ-ում գործող և ազգային-համայնքային մարմինների մեծ մասը իր հսկողության տակ պահող Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության միջև հայտնի պատճառներով սկսվեց խոր առճակատում, որը բնականաբար չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել դեսպանատան

աշխատանքների վրա: Ըստ էության, Իրանի հայ գաղթօջախը պառակտվեց: Դեսպանությունը ՀՅԴ կուսակցության և նրա հսկողության ներքո գտնվող մարմինների ու կազմակերպությունների կողմից ոչ միայն բացարձակապես չէր ստանում որևէ օգնություն ու աջակցություն, այլ ընդհակառակը, ամեն քայլափոխում դեմ էր առնում խոչընդոտների: Ըստ էության, դեսպանության գործունեությունը ենթարկվում էր բոյկոտի: ՀՅԴ կուսակցության անդամները և կուսակցության համակիրները անհանդուրժողական և ավելին, անհարգալից դիրքորոշում էին որդեգրել Հայաստանի Հանրապետության դեսպանության և այնտեղ աշխատող հայ դիվանագետների նկատմամբ: Նրանք պահանջում էին ոչ մի առնչություն և շփում չունենալ համայնքի այն տարրերի հետ, որոնք ՀՅԴ կուսակցության անդամներ չէին, այլ ընդհակառակը չէին բաժանում նրա տեսակետները և դեսպանության ու դեսպանի նկատմամբ վերաբերվում էին մեծ հարգանքով և աջակցում էին նրա ջանքերին՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության: Ես բացատրում էի մեր դաշնակցական հայրենակիցներին, որ ես Իրան եմ եկել ոչ թե հայկական գաղթօջախի պառակտումը խորացնելու, այլ ողջ համայնքը Հայրենիքի շուրջը համախմբելու համար: Բայց անօգուտ: Այդ բոլորի հետևանքը եղավ այն, որ իրանահայ համայնքի մի մասը պաշտպանում էր Հայաստանի իշխանություններին, իսկ մյուս մասը դեմ էր: Անշուշտ այդ երևույթը խանգարում էր ՀՀ դեսպանին, որ նա կարողանա անկաշկանդ ու լիարժեքորեն կատարել իր պարտականությունները: «Այնուամենայնիվ, շնորհիվ իր բարձր գիտակցության, -գրում է իրանահայ անվանի գործարար ու հասարակական գործիչ Լևոն Ահարոնյանը, -Վահան Բայբուրդյանը կարողացավ կատարել իր առաքելությունը և վերականգնել Հայաստանի և սփյուռքի՝ 70 տարուց ի վեր համարյա թե խզված հարաբերությունները»: Այդ նույն հեղինակը այնուհետև շարունակում է. «Այն նեղմիտ և մանկական արարքները, որոնց նրանք (իմա՝ ՀՅԴ կուսակցության անդամները, կուսակցության համակիրները և

Ազգային մարմինները Վ.Բ.) տալիս էին զավեշտական «պայքար» անունը, շարունակվեց մինչև դեսպան Վահան Բայբուրդյանի առաքելության կատարման ավարտը: Փաստորեն այն ժամանակաշրջանում, երբ իր առաքելությունն էր կատարում դեսպան Վահան Բայբուրդյանը, ՀՀ դեսպանատան շենքը մի կողմից քարկոծում էին ազերիները, իսկ մյուս կողմից էլ դեսպանատունը դարձել էր հայ կուսակցականների բացասական արարքների ու հարվածների թիրախ»[354]:

Բնականաբար այս բոլորը ազդեցություն էր ունենում դեսպանատան գործունեության վրա՝ անկատար թողնելով մի շարք կարևոր ծրագրերի իրականացումը:

- Ի՞նչ հեռանկարներ ունեն հայ-իրանական հարաբերությունները:

-Խոսելով հայ-իրանական հարաբերությունների, ավելի ճիշտ այդ հարաբերությունների ապագայի մասին, պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. կասկածից վեր է, որ Իրանը Հայաստանի համար նախ և առաջ դեպի արտաքին աշխարհ բացված պատուհան է: Այդ երկիրը առանձնահատուկ դիրքով, վիթխարի տարածքով, համաշխարհային նշանակություն ունեցող կոմունիկացիաներով մի յուրահատուկ կապող օղակ է, ոչ միայն իրեն սահմանակից պետությունների, այլև մի շարք տարածաշրջանների՝ Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Հնդկական թերակղզու, արաբական աշխարհի հետ: Հիրավի, Իրանը համաշխարհային մասշտաբով մի տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը: Այդ երկիրը նաև Պարսից ծոցի գոտում առանցքային նշանակություն ունեցող այն պետություններից է, որի քաղաքականությունից նշանակալի չափով կախված է իրադրությունը ոչ միայն տարածաշրջանում, այլև ողջ Մերձավոր և Միջին Արևելքում: Իրանն այսօր ունի բնական ու մարդկային պատկառելի ռեսուրսներ, տնտեսական,

[354] Տես Լևոն Ահարոնյան, Փոթորկոտ կեանքիս օրերը (հասարակական ու քաղաքական հուշեր), գիրք Բ, Թեհրան, 2010, էջ 956-960:

ռազմական, գիտական ու տեխնոլոգիական հսկայական ներուժ: Հայաստանի Հանրապետության համար չափազանց կարևոր գործոն է այն հանգամանքը, որ մեր տարածաշրջանի իրողությունների խորապատկերում Իրանը Մերձավոր և Միջին Արևելքում ռազմաքաղաքական հարաբերակցությունը հավասարակշռող ազդու ուժ է: Մենք հույժ կարևոր ենք համարում հատուկ շեշտել, որ ՀՀ-ն Հարավային Կովկասի թերևս այն միակ պետությունն է, որը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Հարավային Կովկասում և համարում է, որ տարածաշրջանում կայունության որևէ համակարգի ստեղծումը կենսունակ չի լինի առանց Իրանի մասնակցության և նրա շահերը հաշվի առնելու:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա, որ 20 տարի առաջ, երբ մեր հանրապետության առջև ծառացել էին ներքին և արտաքին բազում մարտահրավերներ, Իրանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց մեր պետությանը՝ ճեղքելու շրջափակման օղակը և դուրս գալու լայն աշխարհ:

Նկատի ունենալով այս բոլոր գործոնները՝ իմ անձնական տեսլականը երկու պետությունների հարաբերությունների ապագայի վերաբերյալ ես կձևակերպեի հետևյալ կերպ: Ներկայումս աշխարհն ապրում է իր պատմության շրջադարձային պահը: Այն տարածաշրջանը, որի մեջ ընդգրկված են Հայաստանը և Իրանը, բառիս բուն իմաստով փոթորկվում է:

Համաշխարհային զարգացման ընթացքն այնպիսին է, որ բացառված չէ, որ մոտ ժամանակներում աշխարհը փոփոխվի մինչև անճանաչելության աստիճան: Սակայն, իմ խորին համոզմամբ, նկատի ունենալով այն, որ Հայաստանն ու Իրանը եղել են դարավոր հարևաններ, իսկ այսօր մեր երկրներն ունեն մի շարք ընդհանուր կամ իրար չափազանց մոտ երկրաքաղաքական շահեր, անխախ նրանից, թե ինչ է կատարվում աշխարհում, և որ կողմից են փչում քամիները, Հայաստանի պետական շահը պահանջում է Իրանի հետ մշտապես պահպանել կայուն, ավելին, բարեկամական հարաբերություններ: Քաղաքական այդ եզրահանգումն անցել

է պատմական փորձաքննության տևական մի շրջան և ունի իր համոզիչ ու կուռ տրամաբանությունը:

Դեռևս հայ-իրանական հարաբերությունների արշալույսին նախանշված մի շարք խոշոր ծրագրեր առ այսօր կյանքի չեն կոչվել: Դրանց իրագործումը ժամանակի խնդիր է: Ճիշտ է, Հայաստանի նյութական հնարավորություններն առայժմ սահմանափակ են այդ խոշոր նախագծերը իրականացնելու համար, իսկ ԻԻՀ իր հերթին չունի արտասահմանում խոշոր ներդրումներ անելու հնարավորություն, սակայն նկատի ունենալով, որ խոսքը Հայաստանի Հանրապետության քաղաքական ապագայի մասին է, անհրաժեշտ է ուղիներ որոնել ապագայում այդ ծրագրերի իրականացմանը համար:

Հազարամյակների պատմությամբ շաղկապված հայ և իրանական ժողովուրդների առավել խորը փոխճանաչման և փոխըմբռնման անհրաժեշտությունը ապագայում գնալով ավելի ու ավելի հրամայական է դառնում: Իրանն այսօր կարևոր գործոն է Հայաստանի առջև դրված բազմակողմ ազգային շահերի ապահովման գործընթացում և կարելի է անվարան ասել, որ նրա այդ դերն ապագայում գնալով մեծանալու է:

-Ինչպե՞ս կորակեք Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Հայոց ցեղասպանության և Ղարաբաղի նկատմամբ:

-Անցած երկու տասնամյակների ընթացքում Ղարաբաղի հիմնահարցում ԻԻՀ քաղաքականությունը միշտ եղել է անկողմնակալ ու հավասարակշռված: Առհասարակ Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրջանում վարում է հավասարակշռված քաղաքականություն: Այդ երկիրը մշտապես հանդես է գալիս որպես մեր տարածաշրջանի խաղաղության ու կայունության ջատագով: Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև եղած սահմանները խաղաղության ու բարեկամության սահմաններ են:

Մեր դիտարկումով, Ղարաբաղյան պատերազմից հետո Թեհրանում հստակորեն ձևավորվեց նաև այն գաղափարը, որ Հայաստանը ներկայումս լուրջ ռազմական գործոն է, որն ընդունակ է Իրանի հյուսիսային սահմանների մի բավականին խոշոր հատվածում ապահովել ոչ միայն ներքին կայունություն, այլև որոշակի առումով տարածաշրջանի արտաքին անվտանգությունը:

Այդ բոլորով հանդերձ, սակայն, չպետք է մոռանալ, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում գոյություն ունի բազմամիլիոնանոց էթնիկ թյուրք-ազերիների զանգված, որի հետ կառավարությունը չի կարող հաշվի չնստել: Առկա է նաև իսլամական համերաշխության գործոնը: Գաղտնիք չէ, որ Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությունը (ներկայումս այն կոչվում է Իսլամական Համագործակցության Կազմակերպություն) որի անդամներից են և՛ ԻԻՀ-ը, և՛ Ադրբեջանը, վարում է շեշտված ադրբեջանամետ քաղաքականություն:

Հայտնի է նաև, որ Իրանը բազմազգ պետություն է, և շատերին է հրապուրում նրա ապակայունացումը էթնիկական հողի վրա: Գաղտիք չէ նաև, որ ժամանակ առ ժամանակ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները առաջ են քաշում «Միացյալ Ադրբեջան» (կամ ինչպես իրենք են ասում «երկու Ադրբեջանների՝ հյուսիսային և հարավային») միավորման հարցը: Սրանք գործոններ են, որոնք չի կարելի հաշվից դուրս թողնել: Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշման հարցին Հայոց ցեղասպանության նկատմամբ, ապա հայտնի իրողություն է, որ այդ պետությունը չի ճանաչել այն և առհասարակ պետական-պաշտոնական մակարդակով Հայոց ցեղասպանության խնդիրը երբևիցե չի եթարկվել որևէ քննարկման: Պաշտոնական մարմինները, սակայն թույլատրում են, որ հայ համայնքը իր ներսում, ամեն տարի ապրիլի 24-ին ոգեկոչի իր անմեղ նահատակների հիշատակը:

-ՀՀ և ԻԻՀ միջև հաստատված դիվանագիտական հարաբերություններն արդեն 20 տարվա պատմություն

ունեն: Ինչպե՞ս եք Դուք գնահատում այդ իրադարձության նշանակությունը Հայաստանի ու հայ ժողովրդի համար:

-Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի անխակությունը ճանաչեց 1991թ. դեկտեմբերի 25-ին: Ի դեպ, Իրանն առաջին պետություններից էր, որը, ինչպես և մեր Առաջին հանրապետության ժամանակ, ճանաչել է Հայաստանի անկախությունը: 1992թ. փետրվարի 9-ին Թեհրանում ստորագրվել է հռչակագիր Հայաստանի նորոգ հանրապետության և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ:

Այդ իրադարձությունները մեր երկրի համար առաջին հերթին կարևորվում է նրանով, որ տասնամյակների ընթացքում առաջին անգամ Հայաստանը անկախ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն էր ստանում՝ իր ազգային շահերին հետամուտ լինելով: Անկախություն ձեռք բերելուց հետո հայ ժողովրդի առջև ծառացած էր մի վսեմ նպատակ՝ սեփական և լիարժեք կյանքի կառուցումը: Այդ մեծ առաքելության իրականացման գործում իր խոշոր դերակատարությունն ուներ հայ դիվանագիտությունը, որին վիճարկված էր քար առ քար շարել հայոց դիվանագիտության շենքը և առաջին հերթին կապեր հաստատել սահմանակից պետությունների հետ: Ընդ որում՝ կարևոր է նշել հետևյալ իրողությունը. թեև երեք հազարամյակ շարունակ Հայաստանի պատմությունը շաղկապված է եղել Իրանի պատմական զարգացման հետ, թեև այդ երկիրը եղել է այն պատմական միջավայրը, որտեղ տևական ժամանակամիջոցի ընթացքում նշանակալից չափով ձևավորվել ու կոփվել է Հայաստանի արևելյան հատվածի քաղաքական ճակատագիրը, սակայն Հայաստանում խորհրդային կարգերի գոյության 70 տարիների ընթացքում մեր երկու երկրների միջև տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, ըստ էության, խզված են եղել: Միայն երկու տասնյակ տարի առաջ վերստին բեկվեց հայ և իրանական ժողովուրդների ընդհանուր ճակատագիրը, և սահմանային Արաքս գետը հանդիսացավ ոչ թե նրանց բաժանող, այլ միացնող գետ:

ԳԵՂԱՄ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1999-2005թթ)

Մարտի 30, 2012թ., Երևան

-Պարո՛ն Ղարիբջանյան, Ձեր պաշտոնավարության տարիներին հայ-իրանական հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել:

-Անկախության առաջին տարիներին տեսակետ կար, որ հայ-իրանական հարաբերությունների զարգացումը կարող է խանդ առաջացնել Արևմուտքում և այդ պատճառով առաջին տարիներին հարաբերությունների մակարդակը բավական պասիվ էր:

1998թ. ամռանը, երբ հաստատվեց թեկնածությունս, ինձ ընդունեց և առաջիկա անելիքների վերաբերյալ հստակ հանձնարարականներ տվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նա ասաց. «Ձեր առջև առաջին հերթին քաղաքական և տնտեսական հարաբերությունների մակարդակը բարձրացնելու խնդիրն է դրված»:

Հաջորդ հանդիպումների ժամանակ արդեն խոսքը վերաբերում էր իրականացվելիք ծրագրերին:

1999թ. մինչև 2004թ հունվար, միգուցե նաև ինչ-ինչ հանգամանքների բերումով, այս հարցում իսկապես լուրջ առաջընթաց գրանցվեց: Կարևորում եմ այն հանգամանքը, որ 2001թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ՀՀ նախագահի առաջին պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն: Մինչ այդ, իհարկե, 1992թ. Լևոն Տեր-Պետրոսյանը այցելել էր Իրան, բայց այդ այցը ավելի շատ եռակողմ հանդիպումների համար էր՝ Ադրբեջանի, Իրանի և Հայաստանի նախագահների միջև: Իսկ Ռոբերտ Քոչարյանինը ՀՀ նախագահի առաջին պաշտոնական այցն էր այդ երկիր: Նաև խիստ կարևորում եմ 2004թ. սեպտեմբերին ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամիի պաշտոնական այցը Հայաստան, որը, կարելի է ասել, պատմական այց էր:

Ինչևէ, մեր առջև հստակ ծրագրեր ունեինք դրված: Առաջին տեղում Իրան-Հայաստան գազատարի

շինարարությունը սկսելն էր: Եվ շնորհակալ եմ Աստծուց, որ այդ գործընթացին որոշակի մասնակցություն եմ ունեցել և այն գրիչը, որով ստորագրվել է պայմանագիրը, մինչ այսօր պահում եմ իբրև մասունք:

Իսկապես, գազատարի կառուցումը բավական դժվար իրագործելի էր, կային բազմաթիվ խոչընդոտներ, այլ երկրներ ունեին իրենց շահերը և խանգարում էին այս ծրագրի կյանքի կոչմանը: Չնայած այդ ամենին՝ ԻԻՀ և ՀՀ ղեկավարները հետևողական գտնվեցին, և համատեղ ջանքերով հաջողվեց իրականացնել այդ ծրագիրը:

Երկրորդ ծրագիրը վերաբերում էր Քաջարանի թունելին, ինչը որոշակի փոփոխության ենթարկվեց: Կառուցեցինք տարանցիկ այլընտրանքային ճանապարհ բեռնատար մեքենաների համար:

Երրորդը Մեղրու ՀԷԿ-ի ծրագիրն էր, որը բավական լուրջ մոտեցում էր պահանջում: Հայաստանը արդեն բավական զարգացած է էներգետիկ ոլորտում և կարողանում է նաև արտահանել էներգիա, որի կարիքը, հատկապես ամռան ամիսներին, Իրանում շատ է զգացվում: ՀԷԿ-ի կառուցումը բավական օգտակար կլինի այդ առումով:

Այդ տարիներին ունեցել ենք փոխայցելություններ, ոչ միայն նախագահների մակարդակով: Բավականաչափ ակտիվացան երկու երկրների միջկառավարական տնտեսական հանձնաժողովները (այդ նպատակով ՀՀ նախագահի հրամանագրով հայկական կողմի համանախագահ նշանակվեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը):

Հաճախակի դարձան այցելությունները նախարարների, մարզպետների և նահանգապետների մակարդակով, ինչը նպաստեց ուղիղ կապերի զարգացմանը մարզերի և նահանգների միջև: Եվ եթե հիշում եք, այդ տարիներին Հայաստանում վառելիքի և պարարտանյութի որոշակի պակաս էր զգացվում: Այդ համագործակցության շնորհիվ մենք կարողացանք լուծել նաև այս խնդիրները: Կտրուկ ավելացան

բեռնափոխադրումները, զարգացում ապրեց ճանապարհաշինարարությունը:

Դյուրացվեց արտոնագրային ռեժիմը, որի շնորհիվ տարանցիկ ներկրումները Հայաստան և դեպի Իրան հեշտացվեցին, ինչի արդյունքում ապրանքաշրջանառությունը շեշտակի մեծացավ:

2008թ. օգոստոսին, երբ տեղի ունեցան Օսեթիայի հայտնի դեպքերը, Հայաստանը հայտնվել էր շատ ծանր վիճակում: Հայաստան ներկրվելու համար նախատեսված ողջ վառելիքը, պարենամթերքը ուղղակի մնում էր Վրաստանում: Եթե մի փոքր էլ հապաղեինք, կունենայինք անկանխատեսելի իրավիճակ՝ հացահատիկի և վառելանյութի հետ կապված: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ, ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Արմեն Մովսիսյանի հետ անմիջապես մեկնեցինք Թեհրան, որտեղից անընդհատ զեկուցվում էր ՀՀ նախագահին բանակցությունների ընթացքի վերաբերյալ, որոնք ավարտվեցին հաջողությամբ, և երկու օրից բեռները սկսեցին մուտք գործել Հայաստան:

-Պարո՛ն Ղարիբջանյան, որքան ես գիտեմ, մինչև դեսպան լինելը, Դուք Ազգային ժողովում համակարգել եք Հայաստան-Իրան բարեկամության խումբը և դրա նախագահն եք եղել: Ինչպե՞ս կբնութագրեք Ձեր խմբի կատարած աշխատանքը:

-1996թ. առաջին անգամ տեղի ունեցավ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի պաշտոնական այցելությունը Իրանի Իսլամական Հանրապետություն մեջլիսի նախագահ Նաթեղ Նուրիի հրավերով, և կարող եմ փաստել, որ այդ այցից հետո ակտիվացան միջխորհրդարանական կապերը: Այդ տարիներին ՀՀ-ում Իրանի դեսպանը Մոհամմադ Ֆարադ Քոլեյնին էր, որը բավական ակտիվ գործունեություն էր ծավալել, և մենք սերտորեն համագործակցում էինք միմյանց հետ:

2009թ. աշնանը տեղի ունեցավ ՀՀ Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանի պաշտոնական այցը ԻԻՀ: Նա հանդիպումներ ունեցավ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի, անվտանգության խորհրդի քարտուղարի Ջալիլիի և հայ համայնքի հետ: Հ. Աբրահամյանի այցին հաջորդեց Լարիջանիի այցը Հայաստան: Այսօր բավականաչափ ակտիվ են երկու խորհրդարանների բարեկամության խմբերը:

Իրանի հավասարակշռված մոտեցումը Հայաստանին պատահական չէ, Իրանը ունի իր խնդիրները, և ինքն է որոշում իր արտաքին քաղաքականությունը: Բայց Հայաստանի նկատմամբ միշտ ունեցել է յուրահատուկ վերաբերմունք:

-Ինչո՞վ եք դա պայմանավորում:

- Կարծում եմ դա գալիս է դարերի խորքից...

-Ի՞նչ եք կարծում, այսօր հայ-իրանական հարաբերություններում ո՞ր ոլորտն է դոմինանտը և ինչո՞ւ է այդպես:

-Իհարկե, դա էներգետիկայի ոլորտն է: Մենք այստեղ բավական ծեռքբերումներ ունենք:

Իսլամական հեղափոխությունից հետո (ի դեպ, այդ տարիներին, որպես թարգմանիչ աշխատում էի Իրանում) տնտեսական շրջափակումը օգնեց Իրանին, որպեսզի նա, հույսը դնելով միայն սեփական ներուժի վրա, զարգացնի ծանր արդյունաբերությունը և դառնա ինքնաբավ երկիր: Այս շրջափակման առումով մենք, ինչ-որ տեղ, նմանություն ունենք Իրանի հետ, սակայն Իրանը իսկապես կարողացավ այդ վիճակից դուրս գալ առավել հզորացած:

Այսօր Իրանը լուրջ հաջողությունների է հասել էներգետիկայի ոլորտում: Պետք է նշել, որ Իրանը ունի դեպի ուսումը կողմորոշված լուրջ երիտասարդություն: Այսօր Իրանում լավագույն ծեռբերումները, կարծում եմ, իրականացվում են հենց երիտասարդության միջոցով:

-Ինչպե՞ս կմեկնաբանեք Միացյալ Նահանգների չեզոք դիրքորոշումը Հայաստան-Իրան զարգացող հարաբերությունների նկատմամբ, հատկապես էներգետիկ

ոլորտում, քանի որ գիտենք, կան (դ՛Ամատոյի օրենք) տարատեսակ սահմանափակումներ, և այս ենթատեքստում, աշխարհի տարբեր երկրների նկատմամբ ճնշումներ են իրականացնում: Ինչո՞վ է պայմանավորված, որ Հայաստանը նման ճնշումների չի ենթարկվում:

-Հարցին պետք է նայենք՝ տարածաշրջանային երկրների խնդիրներից ելնելով: Մեր երկու հարևանների կողմից իրականացվող շրջափակման պայմաններում Հայաստանը ունի տարանցիկ ցամաքային միայն երկու ճանապարհ:

-Ձեր կարծիքով, Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ բացթողումներ ենք ունեցել:

-Առաջին հերթին մեր լուրջ բացթողումն այն էր, որ Հայաստանի ազգային ավիաընկերությունը դադարեցրեց թռիչքները դեպի Իրան: Այն, ինչ ձեռք ես բերում, պետք է պահել կարողանաս, կարևոր չէ ավիաընկերության սեփականության ձևը, և սա սեփականատիրոջ որոշելիքը չէ:

Բացթողումների առումով.....Եթե քաղաքական հարաբերություններում կա լուրջ առաջընթաց, ապա տնտեսական ոլորտում դեռևս անելիքները շատ են: Առաջին հերթին բեռնափոխադրումների հավասար պայմաններ: Խոսքս մեր բեռնատարների՝ Իրանի ամբողջ տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքի մասին է:

- Օրինակ, Իրանը Ադրբեջանի հետ միակողմանի հանեց մուտքի արտոնագիրը:

-Այո, սակայն միայն արտաքինից է այդպես:

Ժամանակին շատ աշխատանքներ տարվեցին մեր երկրների սահմանի երկու կողմերում շուկաներ ստեղծելու համար: Վստահ եմ՝ Թավրիզում հյուպատոսություն բացելուց հետո նմանատիպ բազմաթիվ խնդիրներ դրական լուծում կստանան:

-Պարո՛ն Ղարիբջանյան, իսկ ինչպե՞ս կբացատրեք այս իրողությունը: 2011թ. նոյեմբերի 18-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ՀՀ-ն պաշտպանեց ԻԻՀ-ին, երբ օրակարգում դրված էր «Ահաբեկչական հարձակումներ միջազգային

պաշտպանության տակ գտնվող անձանց վրա» բանաձևը: Հակաիրանական փաստաթղթի օգտին քվեարկել են 193 պատվիրակություններից 106-ը, 9-ը դեմ են եղել (այդ թվում՝ Հայաստանը, Հյուսիսային Կորեան, Նիկարագուան, Զամբիան, Վենեսուելան, Կուբան, Բոլիվիան, Էկվադորը), 40-ը՝ ձեռնպահ:

-Ժամանակին այս մասին հստակ պարզաբանվել է:

-Ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան քաղաքական կապերը այսօր:

-Շատ բարձր: Նախագահներ Սերժ Սարգսյանը և Մահմուդ Ահմադինեժադը տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում են, տեղի են ունենում արտգործնախարարների և խորհրդարանականների ակտիվ հանդիպումներ և քննարկումներ: Շատ լավ աշխատում է տնտեսական հանձնաժողովը: Այսօր հայ-իրանական հարաբերություններում պասիվություն չի նկատվում:

-Ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան մշակութային կապերն այսօր:

-Կարծում եմ՝ կարող էին ավելի ակտիվ լինել: Ժամանակին փորձեր եղան մշակութային կապերի ամրապնդման համար, բայց դրանք սահմանափակվեցին հիմնականում հայ համայնքի հետ մշակութային համագործակցության շրջանակներով: Մեզ հաջողվեց մի քանի միջոցառում իրականացնել նաև իրանցիների հետ (բավական հաջող ծրագրերից էին Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի, Ջիվան Գասպարյանի համերգները): Իրանում զարմանալի հետաքրքրություն կա դասական երաժշտության նկատմամբ, հատկապես երիտասարդության մոտ:

Ի դեպ, նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցի ժամանակ Ցեղասպանությանը նվիրված գիտական հոդվածների մի հատորյակ դեսպանության և համայնքի համատեղ ջանքերով թարգմանեցինք և տպագրեցինք: Նման բան առաջին անգամ էր արվում, և շատ լավ արձագանք ստացանք:

Իրանը այն եզակի պետություններից է, որ պետբյուջեից գումարներ է հատկացնում հայկական մշակութային

հուշարձանների պահպանման համար: Ամեն տարի պետության կողմից գումար է հատկացվում «Արարատ» միությանը մարզամշակութային գործունեության համար :

-Ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան գիտական կապերը: Ի՞նչ մակարդակի վրա են դրանք գտնվում:

-Գիտեք՝ 1990-ական թվականներին բավական ակտիվ սկսեցին համագործակցել մեր երկրների գիտնականները: Նրանք մեծ աշխատանքներ իրականացրին հատկապես էներգետիկ ծրագրերում: Այսօր, թե ի՞նչ վիճակում է գործընթացը, տեղյակ չեմ:

-Վերջերս մի հաղորդագրության հանդիպեցի, որտեղ ասվում էր, որ Հայաստանի և Ուկրաինայի բուհերի դիպլոմները չեն ճանաչվում Իրանում: Իհարկե, հետևողական աշխատանքից հետո, այդ խնդիրը լուծվեց, բայց, այնուամենայնիվ իրավիճակը մտահոգիչ էր:

-Նմանատիպ իրավիճակ եղել է նաև մինչև ՀՀ անկախություն ձեռք բերելը: Այն ժամանակ ես աշխատում էի Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում որպես բաժնի վարիչ, և այդ ժամանակ էլ մենք խնդիրներ ունեցանք՝ դիպլոմների հետ կապված: Առաջին նմանատիպ խնդիրը գրանցվեց Սիրիայի հետ: Պատճառը մեկն էր՝ մեր բուհերում ուսման նկատմամբ խստություն չկար, արտերկրից Հայաստան ժամանած ուսանողներից շատերն էլ բարեխիղճ չէին սովորում: Իսկ անկախությունից հետո, երբ ստեղծվեցին ոչ պետական ուսումնական հաստատություններ, որտեղ կարևորը ուսման վարձ վճարելն էր մի շարք համալսարանների դիպլոմներ Իրանը պարզապես անվավեր ճանաչեց: Այդ ժամանակ մենք ունեցանք դժվարին բանակցություններ, որոնք տվեցին դրական արդյունք: Իր հերթին հետևողական գտնվեց ՀՀ գիտության և կրթության նախարարությունը՝ հետևելով մասնավոր համալսարանների գործունեությանը, նրանցից շատերին զրկելով հավատարմագրերից:

-Պարո՛ն Ղարիբջանյան, ինչպե՞ս կորակեք հայ համայնքի դերը Իրանի ներկա կյանքում:

-Հայ համայնքը որոշիչ դեր ունի Իրանի կյանքում: Այս ակտիվությունը պայմանավորված է նրանով, որ Իրանը կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժող քաղաքականություն վարող պետություններից է: Արդեն խոսեցինք հուշարձանների պահպանման, համայնքի կարիքները հոգալու մասին: Ամբողջ Խորհրդային Միությունում անգամ եզակի քաղաքներում կարելի էր հանդիպել հայկական առաքելական եկեղեցիների, իսկ Թեհրանի միայն կենտրոնում հայկական ութ եկեղեցիներ կան: Իրանը շահագրգռված է, որ պահպանվի հայ համայնքը, սակայն ցավոք, այսօր այն մասամբ նոսրանում է:

Մինչ Իրանում իմ դեսպան նշանակվելը, իրանահայ համայնքը հիմնականում շփում չուներ դեսպանատան հետ: Եվ այդ խնդիրը երկուստեք էր: Ժամանակին ՀՅԴ գործունեությունը կասեցվեց Հայաստանում, իսկ Իրանում հայկական կուսակցություններից առաջատարը դաշնակցությունն է: Նրանք էլ նույն սառնությամբ արձագանքել էին նախորդ դեսպանի նշանակմանը: Այնուհետև, երբ փոխվեց իրավիճակը, կամաց-կամաց, նաև զուտ մարդկային հարաբերությունների շնորհիվ հասանք նրան, որ դեսպանատունը իր կարևոր դերակատարությունը ունեցավ համայնքում:

-Հայ համայնքի ներկայացուցիչները հիմնականում ո՞ր երկրներ են մեկնում, Միացյալ Նահանգնե՞ր, Եվրոպական երկրնե՞ր, թե՞ այնուամենայնիվ գալիս են Հայաստան:

-Հիմնականում՝ ԱՄՆ: Հայաստանում մի պահ ակտիվացան, լուրջ ներդրումներ կատարեցին, համայնքը ակտիվ էր գործում նաև Լեռնային Ղարաբաղում: Երկրաշարժից հետո օգնեցին, անգամ նախաձեռնեցին ու Կապանում կառուցեցին ծորակների արտադրության մի մեծ գործարան, որը ցավոք հետագայում չաշխատեց:

-Պարո՛ն Ղարիբջանյան, մենք հիմնականում զրուցեցինք հայ-իրանական հարաբերությունների անցյալին վերաբերող դեպքերի մասին, իսկ ինչպե՞ս կգնահատեք դրանց ներկա մակարդակը:

-Բարձր:

-Հայ-իրանական հարաբերությունների հեռանկա՞րը: Ի՞նչ ուղղություններով է նպատակահարմար զարգացնել դրանք:

-Արդեն նշեցինք, այն ուղղությունները որոնք ակտիվ են գործում, թերևս կարելի է ակտիվացնել նաև գիտության և կրթության ոլորտը:

-Պարո՛ն Ղարիբջանյան, ինչպե՞ս կորակեք Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Լեռնային Ղարաբաղի և Ցեղասպանության հարցի հետ կապված:

-Իրանական կողմը շատ զգայուն է Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ, քանի որ վերջին տասնամյակում նրանց հարաբերությունները Թուրքիայի հետ ակտիվացել են: Բայց, միևնույն ժամանակ, հայ համայնքի ներկայացուցիչներին չեն խոչընդոտում յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին բողոքի քայլարշավն իրականացնել, որի ժամանակ միշտ հնչում է «Մահ թուրք ֆաշիզմին» կարգախոսը:

Լեռնային Ղարաբաղի հարցում Իրանը քանիցս փորձեց հանդես գալ միջնորդական առաքելությամբ, սակայն Մինսկի խմբի շրջանակները մնում են մեզ համար առաջնային: Նրանք պատրաստակամություն են հայտնել մեզ օժանդակելու՝ պահպանելով նաև դրական չեզոքություն:

ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005-2009թթ)

Հունվար 08, 2013, Երևան-Նյու Յորք

-Պարո՛ն Նազարյան, ԻԻՀ-ում աշխատելու տարիներին Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ այժմ գտնում եք, թե կարելի է շտկել:

-Շնորհակալ եմ այս հնարավորության համար, ինձ համար միշտ էլ հաճելի է խոսել կամ վերհիշել Իրան գործուղման մասին: Հետաքրքիր ժամանակահատված էր, քանզի իրականացվեցին մի շարք կարևոր ծրագրեր, քննարկվեցին ու ստորագրվեցին պայմանագրեր հետագա երկկողմ համագործակցության մասին, տեղի ունեցան բարձր մակարդակի փոխայցեր՝ նախագահների, արտաքին գործերի նախարարների, կառավարության անդամների մակարդակով: Բավական արդյունավետ գործում էին միջկառավարական հանձնաժողովները, երկու երկրներում ստեղծվեցին բարեկամական խմբեր:

Այս պահին ետ նայելով, կարծում եմ կարող եմ խոսել միայն ձեռքբերումների մասին, որի համար շնորհակալ եմ իմ գործընկերներին Երևանում ու Թեհրանում, իրանահայությանը: Նրանց անմնացորդ նվիրումի արդյունքում այսօր կարող եմ ասել, որ բացթողումներ չարձանագրվեցին: Իհարկե, ես չէի ցանկանա իմ պաշտոնավարման շրջանը բնութագրել միայն վառ գույներով, ամենևին այդ նպատակը չունեմ, եղել են նաև դժվար պահեր, պահանջվել են հավելյալ ջանքեր ու զգոնություն, սակայն դիվանագիտական աշխատանքի համար մշտապես ունեցել ենք բարենպաստ միջավայր, հետաքրքիր հանդիպումներ, միջոցառումներ, այցելություններ Իրանի տարբեր հայաշատ շրջաններ ու պատմական քաղաքներ, այդ թվում՝ Սպահան, Թավրիզ ու Շիրազ:

-Ի՞նչ եք կարծում, այսօր հայ-իրանական հարաբերություններում ո՞ր ոլորտն է գերիշխող և ինչո՞ւ է այդպես:

-Հայաստան-Իրան հարաբերություններում կամ ավելի ստույգ երկկողմ տնտեսական համագործակցության առյուծի բաժինը կազմում է էներգետիկ բնագավառը: Գործում են կարևորագույն ենթակառուցվածքային ծրագրեր, ու այս բնագավառում առկա են փոխադարձ պայմանավորվածություններով սահմանված մի շարք շահավետ ու հեռանկարային ծրագրեր:

Այսօր եթե փորձեք մամուլով հետևել երկկողմ հարաբերությունների ընթացքին, այսինքն՝ երկկողմ հանդիպումների կամ քննարկումների ամփոփիչ արդյունքներին, ապա կարելի է փաստել, որ հարաբերությունները զարգանում են բնականոն հունով՝ ի շահ երկու երկրների ու ժողովուրդների ու ներառում են մշակութային հարցերից մինչև էներգետիկ համագործակցության կամ ասենք առևտրատնտեսական հարցերից բազմակողմ ֆորումներում համագործակցության խնդիրները:

-Ինչո՞վ է կարևոր Հայաստանը Իրանի համար:

-Նախ կցանկանային նշել, որ հայ-իրանական միջպետական հարաբերությունները ձևավորվել են հարուստ պատմամշակութային ընդհանրությունների հենքի վրա: Դրանք սկիզբ են առել երկու երկրների միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագրի ստորագրումով:

Գոյություն ունեն տարածաշրջանային ու միջազգային փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք խնդիրներ, որոնց նկատմամբ մեր երկու երկրներն ունեն ընդհանուր հետաքրքրություն և շահեր: Դրանցից ես կառանձնացնեի հյուսիս-հարավ (տրանսպորտային ու ոչ միայն) միջանացքի արդյունավետ գործարկման խնդիրը: Այդ առումով Հայաստանը հուսալի գործընկեր է Իրանի համար:

Մեր անկախությունից ի վեր երկու երկրների հարաբերություններն անցել են փորձության միջով ու անցնող 20 տարիների ընթացքում բազմիցս փաստվել է, որ մենք վստահելի գործընկեր ենք:

-Կարծես թե Իրանի և Հայաստանի միջև բավական շատ պայմանագրեր կան կնքված, սակայն հաճախ բուն գործողությունները դանդաղում են կամ ընդհանրապես օրակարգից դուրս են գալիս: Ինչո՞վ կբացատրեք դա:

-Իրոք, բավական հարուստ է երկկողմ իրավապայմանագրային դաշտը, դրանք ինչպես վերը նշեցինք առնչվում են տարբեր ոլորտներում կարևորագույն երկկողմ համագործակցության ծրագրերին, որոնց իրականացման համար նախանշվում է համապատասխան ժամանակացույց:

Երբեմն դրանց տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների, հաշվարկման ու նաև իրականացման համար պահանջվում է ավելի շատ ժամանակ քան նախատեսված է պայմանագրերով, դա կարելի է բացատրել բնակլիմայական պայմաններով, լեռնային գոտիների ու շրջանների առկայությամբ: Տարվա ընթացքում, երբեմն մի քանի ամիսների ընթացքում դադարեցվում են աշխատանքները ցուրտ պայմանների, ձնաբքերի պատճառով: Առհասարակ սահմանամերձ բարդ աշխարհագրությունը երբեմն իր ազդեցությունն է ունենում ծրագրերի կատարողականի վրա:

-Պարո՛ն Նազարյան, ինչպե՞ս կբացատրեք այն հանգամանքը, որ ՀՀ-ն միջազգային կազմակերպություններում հաճախ պաշտպանում է Իրանի շահերը, սակայն նույն բանին ականատես չենք լինում Իրանի կողմից, օրինակ՝ Ղարաբաղի հարցի քննարկման ժամանակ:

-Սկսեմ Ձեր հարցի վերջին մասից: ԼՂ հակամարտության կարգավորման հարցում Իրանի ԻՀ վարում է հավասարակշռված քաղաքականություն: Այդ դիրքորոշումը չի փոխվել՝ հակառակ ադրբեջանական կողմի գործադրած ջանքերին, որոնց միջոցով պաշտոնական Բաքուն փորձում է

կրոնական երանգ տալ ԼՂ հիմնահարցին կամ ավելի ճիշտ, շահարկել իսլամական համերաշխության գործոնը: Հայաստան-Իրան բարիդրացիական հարաբերությունների միջոցով ապացուցվում է, որ Ադրբեջանի այդ շահարկումները հեռանկար չունեն և դատապարտված են ձախողման:

Երկկողմ շփումների ու քննարկումների արդյունքնում Թեհրանում հստակ պատկերացում ունեն հակամարտության ծագման պատճառների ու ադրբեջանական կողմի սանձազերծած ագրեսիայի հետևանքների մասին: Վերջին անգամ ԼՂ հիմնահարցի բանաձևի քննարկում ՄԱԿ-ում տեղի է ունեցել 2008թ., որի քվեարկությանն Իրանի պատվիրակությունը չի մասնակցել:

-Ես նկատի չունեմ, որ հենց ՄԱԿ-ում Իրանը մասնակցել է քննարկմանը, թե ոչ, այլ միջազգային տարբեր ատյաններում Իրանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության պաշտպանման խնդրի համատեքստում էի հարցը ձևակերպել:

-Իմ պաշտոնավարման շրջանում Իրանի բարձրաստիճան ղեկավարները բազմիցս հայտարարել են, որ ԼՂ հարցի կարգավորումը տեսնում են բացառապես խաղաղ ճանապարհով՝ միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա և Թեհրանի այդ դիրքորոշումը չի փոխվել առ այսօր:

-Պարո՛ն Նազարյան, խնդրում եմ ներկայացնել, թե ինչո՞ւ 2011թ. նոյեմբերի 18-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ՀՀ-ն պաշտպանեց ԻԻՀ-ին, երբ օրակարգում դրված էր «Ահաբեկչական հարձակումներ միջազգային պաշտպանության տակ գտնվող անձանց վրա» բանաձևը: Հակաիրանական փաստաթղթի օգտին քվեարկել են 193 պատվիրակություններից 106-ը, 9-ը դեմ են եղել (այդ թվում՝ Հայաստանը, Հյուսիսային Կորեան, Նիկարագուան, Զամբիան, Վենեսուելան, Կուբան, Բոլիվիան, Էկվադորը), 40-ը՝ ձեռնպահ: Ինչո՞վ սա կբացատրեք: Ստացվում է՝ ՀՀ-ն պաշտպանում է Իրանին, երբ աշխարհի պետությունների մեծագույն մասը մեղադրում է այդ երկրին ահաբեկչություն

հովանավորելու մեջ, իսկ մյուս մասը չեզոք է: Ինչո՞ւ ՀՀ-ն չբավարարվեց չեզոք դիրքորոշմամբ:

-Փորձեմ բացատրել Գլխավոր ասամբլեայում (ԳԱ) Սաուդյան Արաբիայի կողմից հեղինակած այդ բանաձևի վերաբերյալ մեր դիրքորոշումը: Նախ ասեմ, որ չեմ կարծում, թե պետք է կապ տեսնել մի կողմից Իրանին պաշտպանելու, ինչպես որ նշում եք, մյուս կողմից, ասենք, Սաուդյան Արաբիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայության հարցում:

Իր միջազգային պարտավորվածությունների համապատասխան Հայաստանը մշտապես դատապարտել ու դատապարտում է ցանկացած տեսակի ահաբեկչություն՝ ներառյալ ահաբեկչական հարձակումները միջազգայնորեն պաշտպանված անձանց վրա: Նշված բանաձևի քվեարկության ժամանակ մեր սկզբունքային մոտեցումներն հետևյալն էին: Նախ, մենք դեմ ենք որպեսզի երկկողմ հարցերի քննարկման համար որպես միջազգային հարթակ ծառայեցվի ՄԱԿ-ի ԳԱ-ն: Չնայած կիսելով շահագրգիռ երկրների մտահոգությունները կամ որևէ անդամ պետության ԳԱ-ում ցանկացած հարց բարձրացնելու իրավունքը՝ այդտեղ, համարում ենք, որ նմանօրինակ հարցի քննարկումը կարող է վտանգավոր նախադեպ ստեղծել ԳԱ-ում, ու միջազգային հանրությունը ստիպված լինի ամեն անգամ բաժանվել կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկողների՝ վնաս հասցնելով երկկողմ գործընթացներին կամ կարգավորման համար գործող ձևաչափերին: Երկրորդ, նման դեպքերում գործում է 1973թ. «Միջազգայնորեն պաշտպանված անձանց ու դիվանագիտական գործակալներին նկատմամբ հանցագործությունների կանխարգելման ու դատապարտման» կոնվենցիան և հարցի քննարկումը պետք է լինի համապատասխան իրավական մեխանիզմի միջոցով: Ավելին, այդ պահին երբ ԳԱ-ն քվեարկում էր բանաձևը, խնդրո առարկա հարցը գտնվում էր դատարանում և ԳԱ չէր կարող կանխորոշել կամ ազդել դատարանի որոշման վրա:

-Ակնկալում էի կոնկրետ հասկանալ՝ մեր շահը որն էր, որ քվեարկել ենք ի օգուտ Իրանի, ինչո՞ւ չեզոքություն չենք պահպանել:

-ՄԱԿ-ում քննարկումների կամ ավելի ճիշտ առաջարկությունների քվեարկության ժամանակ անդամ պետություններն առաջնորդվում են և՛ իրենց շահերով, և՛ իրենց սկզբունքային մոտեցումներով և դիրքորոշմամբ, այդ մասին ես մանրամասն շարադրել եմ իմ պատասխանում:

-Միջազգային կազմակերպություններում, երբ քննարկվում է Իրանի հարցը (հաճախ պատժամիջոցների համատեքստում), Հայաստանը ինչպե՞ս է կարողանում հավատարիմ մնալ և՛ միջազգային պարտավորություններին, և՛ հարևան երկրին:

-Պատժամիջոցների կիրառման հարցը քննարկում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, և այստեղ որոշիչ են Խորհրդի մշտական անդամների ձայները: Հայաստանն այդ քննարկումներին չի մասնակցում:

-Գիտեմ, որ Հայաստանն այդ քննարկումներին չի մասնակցում: Այս հարցի տակ նկատի ունեի, թե ինչպե՞ս ենք կարողանում համագործակցել, այն էլ այդքան սերտ, երբ Իրանի վրա դրված են այդքան պատժամիջոցներ: Օրինակ՝ ինչպե՞ս է Հայաստանը համագործակցում Իրանի հետ բանկային ոլորտում և միևնույն ժամանակ չի ճնշվում կամ պախարակվում միջազգային ատյանների կամ կոնկրետ գերիզոր երկրների կողմից:

-Հայաստանը ինչպես ՄԱԿ-ի ցանկացած անդամ պետություն, այնպես էլ Իրանի հետ համագործակցում է իր միջպետական պայմանագրերի ու երկկողմ համաձայնագրերի շրջանակում: Մեր երկկողմ առնչությունները տարբեր ոլորտներում կապ չունեն ՄԱԿ ԱԽ պատժամիջոցների կիրառման կամ դրա ռեժիմի իրականացման հետ, ու դրանք համահունչ են Հայաստանի միջազգային ու երկկողմ հանձնառություններին ու պարտավորվածություններին: Ավելին, երկկողմ հարաբերություններ չեն զարգանում երրորդ երկրի հաշվին:

-Ինչպես եք գնահատում Հայաստան-Իրան հարաբերությունների մակարդակը Ձեր՝ դեսպան եղած տարիներին. քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական ոլորտներում:

-2005թ. երբ ժամանեցի Թեհրան, արդեն իսկ լավ հող էր նախապատրաստվել երկկողմ հարաբերությունների զարգացման համար, ինչը հնարավոր դարձրեց որակապես նոր մակարդակի վրա հասցնել հարևան և բարեկամ պետության հետ ամենատարբեր բնագավառներում երկկողմ համագործակցությունը:

Երևանի ու Թեհրանի միջև համադրված ջանքերի շնորհիվ Հայաստանում շահագործման հանձնվեցին էներգետիկ կարևորագույն ենթակառուցվածքային ծրագրեր, ինչպիսիք են հողմաէլեկտրակայանները, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը, Իրան-Հայաստան գազամուղը:

Առևտրատնտեսական և զբոսաշրջության բնագավառները խթանելու համար կարևոր էին Կապան-Մեղրի այլընտրանքային ճանանապարհի գործարկումը, Հայաստանի քաղաքացիներին սահմանի իրանական հատվածում վիզաներ տրամադրելու և Թավրիզում Հայաստանի գլխավոր հյուպատոսություն հիմնելու մասին որոշումները, երկու մայրաքաղաքների միջև օդային չվերթների ու ցամաքային կանոնավոր կապի ավելացումը, ինչպես նաև երկու երկրների միջև գոյություն ունեցող բանկայի համագործակցությունը:

Գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառներում հաջողությամբ համագործակցում են Հայաստանի Սյունիքի մարզը և Իրանի հյուսիսային նահանգները: Գիտակրթմշակութային ոլորտում անարգելք շփվում են մեր գիտականներն ու հասարակական գործիչները, և Երևանը հյուրընկալում է հազարավոր իրանցի ուսանողների:

Կարևոր էին Հայաստանի ու Իրանի միջև մշակութային կենտրոնների հիմնման և գործարկման մասին, ինչպես նաև գիտության ու տեխնոլոգիաների բնագավառներում համագործակցության խթանմանը միտված երկկողմ ջանքերը:

Վստահաբար կարող ենք արձանագրել այն փաստը, որ թերևս չկա այնպիսի մի ոլորտ, որը վրիպած լինի համագործակցության մեր տեսադաշտից: Սակայն, մենք չպետք է այդուհանդերձ բավարարվենք կատարված աշխատանքով, և ուրախ եմ, որ այսօր այդ գործընթացը շարունակվում է:

-Կցանկանայի Ձեր հստակ տեսակետը իմանալ, թե մշակութային ոլորտում ինչպե՞ս է ՀՀ ներկայանում ԻԻՀ-ում, բայց ոչ հայ համայնքին կամ նրա միջոցով: Հայաստանում հաճախ են լինում Իրանի մշակութային ներկայացուցիչներ, արդյո՞ք մենք կարողանում ենք բավարար չափով ներկայացնել մեր մշակույթը Իրանում ոչ հայկական լսարանին: Գիտական ոլորտում գիտենք, որ Հայաստանի դիպլոմները ճանաչվեցին ոչ կիրառելի, հետագայում, իհարկե, լուծվեց խնդիրը, բայց ի՞նչն էր պատճառը....

-Այս մասին արդեն խոսեցինք: Սակայն հավելեմ, որ ժամանակ առ ժամանակ Թեհրանում, Սպահանում մենք հադես են եկել տարբեր նախաձեռնություններով: Տեղի են ունեցել քննարկումներ, հանդիպումներ, համերգներ, դասախոսություններ, ցուցահանդեսներ: Հայաստանն ամեն տարի մասնակցել է Թեհրանի գրքի ցուցահադեսին, հանդիպումներ Սպահանի համալսարանում, ուր գործում է հայագիտության ամբիոնը, Թեհրանի տեխնոլոգիական այգում Վիկտոր Համբարձումյանին նվիրված հոբելյանական երեկո, դասական, ազգային երաժշտության համերգների և թատերական խմբերի այցերի կազմակերպում, որոնց միջոցով առիթներ ենք ունեցել իրանցի հանդիսատեսին հաղորդակից դարձնելու մեր մշակույթին, գրականությունը և պատմությանը: Այս ամենի մասին արձագանքել է նաև տեղական մամուլը:

-Ինչպե՞ս կորակեք հայ համայնքի դերը Իրանի կյանքում: Ի՞նչ է անում ՀՀ-ն իրանահայ համայնքի ներուժը համախմբելու և անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար:

-Առաջին իսկ օրվանից իրանահայությունը յուրահատուկ կամրջի դեր է խաղացել երկկողմ

հարաբերությունների հաստատման գործում: Մեր դեսպանության շուրջ մշտապես համախմբված են եղել իրանահայ մեր քույրերն ու եղբայրները, իրանահայ երեք թեմերի առաջնորդներն ու ազգային իշխանությունները, Իրանի մեջլիսում հայազգի պատգամավորներն իրենց հոգատար վերաբերմունքով անշահախնդիր աջակցություն են ցուցաբերել, ցուցաբերում են, և չեմ վարանի համոզմունք հայտնել նաև որ այսօր էլ աջակցում են երկկողմ հարաբերությունների զարգացման շնորհակալ գործին: Հայ համայնքը 400 տարիների ընթացքում ձեռք է բերել մեծ համբավ, վստահելի, պարկեշտ ու գործունյա քաղաքացու անուն: Սրանք այն հոմանիշներն են, որոնք օգտագործվում են Իրանի պաշտոնական ու հասարակական շրջանակներում՝ բնորոշելու համար իրանահային:

Հիցմունքի է արժանի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում իրանահայ միությունների, խմբերի որակը, նրանց պատրաստվածության աստիճանը: Մեր դեսպանությունը Թեհրանում մշտապես ընդառաջել ու խթանել է Հայաստանի հետ համագործակցության այդ ոլորտները: Խոսքը գնում է ինչպես իրանահայ երիտասարդների, ուսուցիչների, արվեստագետների ու մարզիկների՝ Հայաստանում անցկացվող տարբեր փառատոներին, համաժողովներին, դասընթացներին, միջոցառումներին մասնակցությանը, այնպես էլ Հայաստանից Իրան ժամանած հանրահայտ մշակութային գործիչների, համույթների ներկայության մասին: Այս ծրագրերն ու առնչությունները կարևոր են հայապահպանության առումով:

-Ի՞նչ հեռանկարներ ունեն հայ-իրանական հարաբերությունները:

-Երկկողմ բարձրաստիճան հանդիպումները և քննարկումները մեզ հնարավորություն են ստեղծում ուրվագծելու հետագա անելիքներն ու հեռնկարները, որի համար ուրախությամբ կարելի է արձանագրել երկուստեք առկա քաղաքական կամքի և վճռականության մասին: Օրինակ, 2009թ. գարնանը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝

Թեհրան այցի արդյունքում ձեռք բերվեցին և իրավական առումով ձևակերպումներ ստացան խնդիրներ, որոնք կարևոր են, և ես կասեի, ռազմավարական նշանակություն ունեն ինչպես Հայաստան-Իրան հարաբերությունների, նրանց հետագա ընթացքը զարգացնելու, այնպես էլ տարածաշրջանային համագործակցությունը խթանելու առումներով: Դրանք են՝ Իրան-Հայաստան ուղիղ երկաթուղային կապը, ինչպես նաև Իրան-Հայաստան նավթամուղ և նավթամթերքի պահեստարան ստեղծելու նախագծերը, Արաքս գետի վրա երկու ՀԷԿ-եր կառուցելու ծրագիրը, որոնց համար սահմանվել են առաջիկա անելիքները, իսկ վերջինիս շինարարությունն արդեն մեկնարկել է:

Հայ-իրանական հարաբերություններում առկա է չօգտագործված ներուժ ու մշտապես անհրաժեշտություն է դիտարկվում տնտեսական հարաբերությունները հավասարեցնել քաղաքական երկխոսությանը՝ խթանելով մասնավորապես հայկական ապրանքների արտահանումն իրանական շուկա:

-Ինչպե՞ս կորակեք Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Հայոց ցեղասպանության և Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ:

-Ինչպես արդեն նշեցի, Իրանի ԻՀ տարածաշրջանում վարում է հավասարակշռված քաղաքականություն, որի դրսևորումներից է Իրանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնհարցի կարգավորման գործում, ուր հիմնական շեշտադրումը կատարվում է խնդրի խաղաղ և արդարացի լուծման վրա:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության հարցին, ապա, պետք է գոհունակությամբ նշեմ, որ իշխանությունների կողմից կա ըմբռնում ու համագործակցություն: Բավական ակտիվ աշխատանքներ են տարվում հայ համայնքի ու նաև պարսիկ մտավորականների կողմից: Պարսկերենով տպագրվել են բազմաթիվ գրքեր, ամեն տարի Թեհրանում, Սպահանում, Իրանի հայաշատ քաղաքներում անցկացվում են

ապրիլյան օրերի ոգեկոչման միջոցառումներ, որոնց մասնակցում է նաև մեր դեսպանությունը: Հայազգի զույգ պատգամավորները ելույթներով հանդես են գալիս Իրանի խորհրդարանում, դեսպանությունն իր հերթին քաղաքական գնահատականներով հանդես է գալիս ՁԼՄ-ների միջոցով: Անձամբ ես առիթ եմ ունեցել իրանական տպագիր մամուլով ու հեռուստատեսությամբ մեր տեսակետները ներկայացնել ապրիլի 24-ի առնչությամբ: Այս միջավայրը կարևոր է Հայոց ցեղասպանության ճանաչման համար, մասնավորապես երկրում հասարակական կարծիքի ձևավորման հարցում, ինչը կարող է հանգեցնել այս առթիվ պաշտոնական հայտարարության:

-ՀՀ և ԻՀ միջև հաստատված դիվանագիտական հարաբերություններն արդեն քսան տարվա պատմություն ունեն: Ինչպե՞ս եք Դուք գնահատում դրա նշանակությունը մի կողմից՝ Հայաստանի, մյուս կողմից՝ ԻՀ համար:

-1991թ.-ի դեկտեմբերից, երբ ԻՀ պաշտոնապես ճանաչեց մեր երկրի անկախությունը, մեկ տարի անց Թեհրանում բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Նախկին շրջանում կատարված դիվանագիտական ու քաղաքական աշխատանքի արդյունքում այսօր ուրախությամբ կարող ենք փաստել, որ երկու երկրների միջև առկա է բազմաբնույթ համագործակցություն, որը բխում է ոչ միայն Հայաստանի ու Իրանի շահերից, այլև նպաստավոր է ողջ տարածաշրջանի համար:

Երևանի ու Թեհրանի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք գործոններով, ընդհանուր շահերով, աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկություններով, տարածաշրջանային մի շարք խնդիրների նկատմամբ ընդհանուր մոտեցումներով է պայմանավորված երկկողմ հարաբերությունների պահպանումը և զարգացումը:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար
(2009-2014թթ.)

Նոյեմբերի 2, 2012թ. Թեհրան, ԻԻՀ

-Պարո՛ն Առաքելյան, ՀՀ անկախության առաջին օրերից Դուք ակտիվ դերակատարություն եք ունեցել Հայաստան-Իրան հարաբերություններում: Դա հենց այն շրջանն էր, երբ Իրանը հանդես էր գալիս միջնորդական առաքելությամբ Լեռնային Ղարաբաղի հարցում: 1992թ. մարտի 15-ին Իրանին հաջողվեց Թեհրան հրավիրել Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակներին: Ինչպե՞ս կներկայացնեք այդ շրջանը, և ինչո՞ւ Իրանին չհաջողվեց մնալ միջնորդի դերում:

-Երբ Իրանը սկսեց իր միջնորդական առաքելությունը, բնավ էլ չէր ակնկալում, որ կկարողանա վերջնական լուծում ապահովել այդ խնդրի համար, քանի որ խնդիրը խիստ կնճռոտ և բազմաշերտ է: Պարզապես դա Իրանի համար եզակի հնարավորություն էր ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորաստեղծ հանրապետություններում իր ներկայությունն ապահովելու համար: Իսկ Ղարաբաղի հարցում միջնորդությունը տալիս էր այդ հնարավորությունը: Հենց այդ պատրվակով էլ Իրանը ակտիվորեն ներգրավվեց քաղաքական գործընթացներին թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում, և հենց այդ ժամանակ էլ բացվեցին դեսպանատներ Երևանում և Բաքվում:

Մինչ այդ, Իրանի նախաձեռնությամբ մարտի 15-17-ը Թեհրանում Ադրբեջանի ներգրավվածությամբ տեղի ունեցավ ԱԳՆ-ների եռակողմ հանդիպում, որի ավարտին ստորագրվեց առաջին համատեղ հայտարարությունը, որը բացի հրադադարից, նախատեսում էր նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի ապաշրջափակում և հակամարտության գոտում դիտորդների տեղակայում:

Իրանը շատ լավ էր գիտակցում, որ միայնակ, առանց շահագրգիռ այլ երկրների ներգրավվածության և կարճ

ժամանակահատվածում չէր կարող այդ խնդրին լուծում առաջարկել: Բայց կարելի էր այդ առաքելությունն օգտագործել այլ նպատակների համար: Հենց այդ ժամանակ էր, որ ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիի նախաձեռնությամբ մայիսի սկզբին Թեհրանում տեղի ունեցավ նախագահների մակարդակով եռակողմ հանդիպում և դա պատահական չէր: Եթե Ռաֆսանջանին Ղարաբաղի հակամարտության ամենաթեժ օրերին փորձեր երկկողմ հանդիպումներ իրականացներ Հայաստանի ու Ադրբեջանի հետ՝ երկկողմ ձևաչափերով, ապա լուրջ խնդիրներ կունենար, իսկ եռակողմ ձևաչափով հանդիպումների ժամանակ կարող էր լուծել նաև երկկողմ հարաբերությունները թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի հետ: Սակայն եռակողմ հանդիպման ավարտից հետո, ժամանակագրական առումով Շուշիի ու Լաչինի ազատագրման համընկնումը միջնորդության առաքելության հայտ ներկայացրած Իրանին ծանր կացության մեջ դրեց, որը և ենթարկվեց սուր քննադատության:

-Խնդրում եմ, պարզաբանե՛ք, ու՞մ կողմից էր քննադատության արժանացել Իրանի կառավարությունը:

-Քննադատությունները ներքին և արտաքին բնույթ ունեին: Գիտեք, որ Իրանում քիչ չեն Ադրբեջանի Հանրապետությանը համակրող տարրերը, որոնք մեղադրեցին Ռաֆսանջանիին, որ նա օգնեց Հայաստանին՝ «ագրեսիայի ենթարկելու Ադրբեջանին պատկանող տարածքները»: Բնականաբար հիմնական մեղադրանքները գալիս էին Բաքվից ու Անկարայից:

-Ձեր պաշտոնավարության ժամանակ Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ են եղել և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ այժմ գտնում եք՝ կարելի է շտկել:

-Ես չէի ցանկանա առանձնացնել իմ պաշտոնավարության շրջանը, քանի որ դա շարունակական գործընթաց է: Ես ստանձնեցի իմ պարտականությունները այն ժամանակ, երբ իսկապես առկա էին լավ հարաբերություններ Իրանի և Հայաստանի միջև: Չէի ասի, թե

տենտեսական առումով շատ կարևոր հարցեր են լուծվել, հատկապես հաշվի առնելով Իրանի այսօրվա տնտեսական ծանր վիճակը, բայց և այնպես առևտրատնտեսական բնագավառում առևտրաշրջանառության աճ է գրանցվել:

Իմ պաշտոնավարման ընթացքում արձանագրվել են տնտեսական նշանակության երկկողմ մի շարք կարևորագույն իրադարձություններ. Նախ, երկու երկրների ղեկավարների մակարդակով տեղի են ունեցել փոխայցելություններ, մեկնարկել են Հայաստան-Իրան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի և Մեղրու համատեղ ՀԷԿ-ի շինարարական աշխատանքները: Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման համար ծեռք են բերվել անհրաժեշտ պայմանավորվածություններ...

Չէին կարող չլինել նաև բացթողումներ և թերացումներ, որոնք հիմնականում պայմանավորված են եղել և սուբյեկտով և օբյեկտիվ գործոններով:

-Ինչո՞վ է կարևոր Հայաստանը Իրանի համար:

-Իրանին սահմանակցող 16 հարևաններից[355] 6-ը իսլամադավան երկրներ են, իսկ այսօր Իրանը միջազգային հանրությանը ապացուցելու կարիք ունի, որ նա հանդուրժողականության առումով ոչ իսլամադավան երկրների հետ խնդիր չունի: Դա հատկապես նկատվեց ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի օրոք, երբ հռչակվեց «քաղաքակրթությունների երկխոսությունը» և հենց այստեղ

[355] Հղումը և բացատրությունը դեսպանինն է: "Տես. հետևյալ կայքում՝ (http://ostarmenia.com/?lang=hy___Իրանը հյուսիսից սահմանակից է Հայաստանի Հանրապետությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը , Ադրբեջանին և Թուրքմենստանին: Իսկ երկրի ափերը ողողում է Կասպից ծովը, որը բաժանում է այն Ռուսաստանից և Ղազախստանից: Արևելքից նրա հարևաններն են Աֆղանստանը և Պակիստանը, արևմուտքից Իրաքը և Թուրքիան: Հարավից երկրի ափերը ողողում են Պարսից ծոցի և Օմանի ծոցի ջրերը: Ունի ջրային սահման Քուվեյթի, Բահրեյնի, Քատարի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Օմանի և Սաուդյան Արաբիայի հետ):"

կարելի է դիտարկել Հայաստանի դերի կարևորությունը Իրանի համար: Շատ են խոսում նաև պանթուրանիզմի դեմ պայքարում Հայաստանի դերի ու նշանակության և այդ հարցում երկու երկրների շահերի համընկնման մասին: Սակայն կա նաև մեկ այլ կարևոր հանգամանք. իրանահայությունը, որը մեծ հարգանք է վայելել և այսօր էլ շարունակում է հարգանք վայելել Իրանում: Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո, երբ Իրանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՀՀ-ի հետ, ի դեմս իրանահայության պատկերացում կազմեց Հայաստանի մասին: Քանի որ իրանահայերը նվիրված են իրենց աշխատանքին, ազնիվ են, աշխատասեր: Իրանահայերը լուրջ ավանդ ունեն Հայաստան-Իրան հարաբերությունների ամրապնդման գործում:

Հայաստանը երկկողմ հարաբերությունների հաստատման անցնող քսան տարիների ընթացքում ապացուցել է, որ վստահելի գործընկեր է:

-Կարծես թե Իրանի և Հայաստանի միջև բավական շատ պայմանագրեր կան կնքված, սակայն հաճախ բուն գործողությունները դանդաղում են կամ ընդհանրապես օրակարգից դուրս են մնում: Ինչո՞վ կբացատրեք դա:

-Խնդիրներ կան, բայց քաղաքական որևէ ենթատեքստ գոյություն չունի: Երկու երկրները իրավապայմանագրային տարբեր հարթություններում են գտնվում: Բացի այդ, հայերս նոր ենք սկսել հասկանալ իրանական մենթալիտետը: Նույնը կարելի է ասել իրանցիների մասին: Խորհրդային տարիների համակեցության բերումով, անկախացմանը հաջորդած շրջանում մեզ ավելի հեշտ էր համագործակցել նախկին Խորհրդային միության կազմում եղած երկրների հետ:

Ես օրակարգից դուրս մնացած կամ չիրականացված ծրագիր չեմ հիշում:

-Ինչպես է ՀՀ ԱԳՆ լուծում քաղաքական ճգնաժամերը ԻԻՀ և ՀՀ միջև, հիշենք օրինակ 1994թ., երբ տեղի ունեցավ ԻԻՀ օդանավի կործանման դեպքը: Օրինակ,

«արյան գնի» շուրջ ծավալվող բանակցություններում ինչպե՞ս հաջողեցինք:

-Հայ-իրանական միջպետական հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ Գագիկ Հարությունյանը, որն այդ ժամանակ ՀՀ փոխնախագահն էր, մեծ դերակատարություն է ունեցել այդ թյուրըմբռնումների փարատման հարցում: Նա հատուկ առաքելությամբ այցելեց Իրան, որպեսզի ներկայացնի, թե ո՞ւմ սադրանքի հետևանքով է տեղի ունեցել այդ ողբերգությունը: Նա իր հետ ուներ դիսպետչերական ծառայությունների ձայնագրությունների վերծանությունը, որտեղ պարզորոշ կերպով երևում էր, թե Ադրբեջանի սադրանքներով է իրանական ինքնաթիռը կործանվել: ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանին, ով իր բնույթով զգացական մարդ է, հուզմունքով ընդունեց ՀՀ բարձրաստիճան պատվիրակության ցավակցությունը և իրատեսական պատկերացում կազմեց տեղի ունեցածի մասին: Սկզբնական շրջանում իրանական կողմը զոհվածների հարազատներին վճարվող փոխհատուցում էր պահանջում, սակայն, ժամանակի ընթացքում, այդ հարցը դուրս եկավ ԱԳՆ-ների երկկողմ բանակցությունների օրակարգից: Սա շատ ծանր ժամանակաշրջան էր:

-Միջազգային կազմակերպություններում, երբ քննարկվում է Իրանի հարցը (հաճախ՝ պատժամիջոցների կոնտեքստում), Հայաստանը ինչպե՞ս է կարողանում հավատարիմ մնալ և՛ միջազգային պարտավորություններին, և՛ հարևան Իրանին:

-ՀՀ վարած ճկուն քաղաքականության շնորհիվ կարողանում ենք հավատարիմ մնալ միջազգային պարտականություններին, միևնույն ժամանակ կարողանում ենք պաշտպանել մեր բարեկամ երկրին՝ ցույց տալով նրա դիրքորոշումը: Կուզեք դա կոչեք կոմպլիմենտարիզմ կամ ակտիվ ներգրավվածություն, սակայն մինչ այժմ ստացվել է մեզ մոտ:

-Մանրամասնեմ հարցս, ՄԱԿ-ի Գխավոր ասամբլեան 2011թ. նոյեմբերին Իրանի նկատմամբ բանաձև ընդունեց,

որտեղ մեղադրում էին Իրանին դիվանագիտական անձանց նկատմամբ ահաբեկչական գործողություն կազմակերպելու մեջ: 193 ներկայացուցիչներից 106-ը կողմ քվեարկեցին բանաձևին, 9-ը՝ դեմ, Հայաստանը վերջիններիս թվում էր, 40 երկիր չեզոքություն պահպանեց, այդ թվում նաև՝ Ռուսաստանը և Չինաստանը: Արդյոք այսպիսի բացահայտ աջակցությունը չի՞ վնասի մեզ:

-Քայլերը միշտ հաշվարկված են լինում, արդյունքներն ու հետևանքները՝ նույնպես: Եթե Իրանին աջակցելու մասին որոշում է կայացվում, ուրեմն դա բխում է մեր երկրի շահերից:

-Ինչպե՞ս եք գնահատում Հայաստան-Իրան հարաբերությունների ներկա մակարդակը. քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական ոլորտները:

-Բավականին լուրջ և բարձր մակարդակի վրա են դրված քաղաքական հարաբերությունները: Քաղաքական ոլորտում ոչ մի խնդիր չունենք և լավ կլիներ, որ տնտեսական հարաբերությունները նույնպես հասցվեին քաղաքականի մակարդակին:

Եթե ինչ-որ տեղ մեզ չեն գոհացնում տնտեսական համագործակցության ծավալները, ապա դա մեր պահանջկոտությունից է: Այնուամենայնիվ, կան բոլոր հնարավորություններն այս մակարդակը բարձրացնելու համար, մնում է ակտիվ աշխատել: Սակայն Իրանն էլ այսօր ունի ռեալ խնդիրներ՝ կապված բանկային համակարգի, շրջափակման հետ: Այս խնդիրները լուծելու դեպքում, կարծում եմ կակտիվանան տնտեսական հարաբերությունները:

Հումանիտար բնագավառում մեր համագործակցության համար հիմք են ծառայում պատմամշակութային և լեզվական ընդհանրությունները: Հենց այդ ընդհանրությունների հիման վրա էլ մշակութային ոլորտները համակարգող երկու երկրների գերատեսչությունները կազմում են համապատասխան գործնական ծրագրեր: Արդեն վեց տարի է, որ Հայաստանը Թեհրանում կազմակերպվող գրքի միջազգային ցուցահանդեսի մշտական և ակտիվ մասնակիցն է, կազմակերպվում են սեմինարներ, անցկացվում են

մշակութային օրեր և այլն: Հայաստանից թատերախմբեր են հրավիրվում Իրան: Մենք աշխատում ենք բազմակողմանի ու ճիշտ ներկայացնել Իրանի քաղաքացիներին հայկական մշակույթը:

Մի պահ գիտակրթական ոլորտում խնդիրներ ունեցանք: Իրանական կողմը որոշել էր է՛լ ավելի պահանջկոտ լինել իրենց ուսանողների գիտելիքների նկատմամբ: Նրանք ուղարկեցին իրենց դիտորդներին, որոնք Հայաստանում տեսան բացթողումներ, օրինակ, չիմանալով օտար լեզու՝ իրանցի ուսանողները ավարտում էին բուհերը: Ահա սրա հետևանքով էլ Հայաստանի դիպլոմները անվավեր ճանաչվեցին Իրանում: Այժմ խստացվել են պահանջները, և ստուգումների արդյունքը բավարարել է իրանական կողմին, խնդիրը լուծված է:

-Ինչպե՞ս կորակեք հայ համայնքի դերը Իրանի կյանքում և ի՞նչ է անում ՀՀ -ն իրանահայ համայնքի ներուժը համախմբելու և անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար:

-Իրանահայ համայնքը կամուրջ հանդիսացավ երկու երկրների հարաբերությունների արագ ձևավորման համար: Համայնքը լուրջ հարգանք է վայելում երկրում, ինչը և օգնեց Իրան-Հայաստան հարաբերությունների արագ հաստատմանը: Սակայն այսօր լուրջ խնդիրներ կան, հայ համայնքը արտագաղթում է երկրից: Սակայն դա քաղաքական կամ կրոնական ենթատեքս չունի, այն պայմանավորված է երկրի ընդհանուր սոցիալ- տնտեսական վիճակով: Արտագաղթում են նաև ոչ հայերը: ՀՀ գործողությունները համայնքի հետ հիմնականում իրականացնում է ՀՀ սփյուռքի նախարարությունը: Վերջերս ՀՀ սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանը ներկա գտնվեց ՀՀ դեսպանության կողմից կազմակերպված անկախության տարեդարձի միջոցառմանը: Նախարարն այցելեց նաև Սպահանի Նոր Ջուղա և մասնակցեց համայնքային միջոցառումներին: Իրանահայությունը ընդհանրապես շատ ակտիվ է մասնակցում համահայկական բոլոր ձեռնարկումներին, դա վերաբերում է

թե՛ իրավաբանների, թե՛ ոսկերիչների կամ մասնագիտական այլ խմբերի հավաքներին և թե՛ համահայկական խաղերին:

-Ի՞նչ հեռանկարներ ունեն հայ-իրանական հարաբերությունները:

-Այս բոլոր տարիներին աշխատելով Իրանում որպես դիվանագետ, ես վստահ եմ, որ Հայաստան-Իրան հարաբերություններն ունեն զարգացման լուրջ հեռանկար և նման հեռանկարի համար կան բոլոր նախադրյալները, ինչպես նաև՝ քաղաքական կամք թե՛ Հայաստանում և թե՛ Իրանում: Ես չեմ պատկերացնում, որ Հայաստանում որևէ կուսակցություն կամ քաղաքական ուժ չցանկանա Իրանի հետ խորացնել հարաբերությունները, նույնը չեմ տեսնում նաև Իրանում: Իսկ եթե կա ցանկություն, կամք, ապա լավ հեռանկարը ապահովված է:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ՌԵՅԻՍԻԻ
ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան (2012-2015թթ)
Հոկտեմբերի 22, 2013, Երևան

-Պարո՛ն Ռեյիսի, ի՞նչ առաքելություն եք դրել Ձեր առջև առաջիկա տարիներին հայ-իրանական հարաբերությունները զարգացնելու համար, ունե՞ք արդյոք հստակ ծրագրեր, առաջնային խնդիրներ:

-Իրանի և Հայաստանի միջև հարաբերությունները վաղեմի հարաբերություններ են, որոնք հիմնված են բարիդրացիության և փոխադարձ հարգանքի վրա: Այս տարվա և գալիք տարիների ընթացքում հայ-իրանական երկկողմ հարաբերությունները տարածաշրջանային և միջազգային ասպարեզներում ավելի են ընդլայնվելու, եթե դուք նայեք հարաբերությունների մակարդակը այս տարվա սկզբից մինչ այժմ, ապա կհաստատեք, որ հարաբերությունների ընթացքը դրական է եղել: Տեղի են ունեցել երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելություններ, որոնք խոսում են երկկողմ հարաբերությունների առաջնահերթ լինելու մասին: Նախագահ Ս. Սարգսյանը այցելեց Իրան, հանդիպեց ԻԻՀ նորընտիր նախագահի հետ, ԻԻՀ մեջլիսի նախագահ Ա. Լարիջանին Ժնևում հանդիպեց ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի հետ: Այս տարվա ընթացքում Հայաստան այցելեցին ԻԻՀ գլխավոր դատախազի պատվիրակությունը, ԻԻՀ արտգործնախարարը, ԻԻՀ մշակույթի նախարարը և կարելի է ասել, որ մեր հարաբերությունները չափազանց լավ, բարեկամական հարաբերություններ են: Միջազգային և տարածաշրջանային խնդիրների նկատմամբ մենք գրեթե ունենք ընդհանուր տեսակետներ, և երկու երկրների միջև կան շատ ընդհանրություններ: Ընդլայնել ենք միջմարզային համագործակցությունը, վերջերս Հայաստանում էր գտնվում Արևմտյան Ատրպատականի նահանգապետի գլխավորած պատվիրակությունը: Իմ ջանքերը զգալիորեն ուղղվում են մասնավոր հատվածների առավել ակտիվ համագործակցությանը:

-Պարո՛ն դեսպան, հանդիպումների քանակի առումով իսկապես խնդիր չկա, սակայն, գոնե ինձ մոտ՝ որպես ուսումնասիրողի, այն կարծիքն է ձևավորվել, որ այդ հանդիպումները հաճախ մնում են միայն հանդիպումների մակարդակում և գործը մի փոքր դանդաղում է:

-Քաղաքական հարաբերությունների տեսանկյունից մեր հարաբերությունները բավական բարձր մակարդակում են գտնվում: Գուցե տնտեսական խնդիրների և նախագծերի իրականացման ժամանակ դանդաղ ենք գործում, երբեմն տնտեսական բնույթի պայմանագրերում տեղի են ունենում այնպիսի զարգացումներ, որոնք դուրս են կողմերի վերահսկողությունից: Բայց մենք ներդնում ենք մեր ջանքերը, որպեսզի իրականացնենք բոլոր համաձայնագրերը, որոնք ձեռք են բերվել Հայաստանի հետ: Այն պարտականությունները, որ ունեցել ենք Հայաստանի նկատմամբ անգամ շատ դժվարին պահերին, ջանացել ենք, որ դրանք կատարվեն: Մենք ունենք մի քանի նախագծեր՝ Ագարակ և Մեղրի քաղաքների գազաֆիկացման նախագիծը է, ինչպես նաև երրորդ բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ գծի կառուցումը: Ինչ վերաբերում է Մեղրիի ՀԷԿ-երի նախագծին, ապա այնտեղ ունենք բանկային որոշակի խնդիրներ, որոնք լուծելի են:

-ԻԻՀ նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեժադը իր ելույթներից մեկում նշեց, որ «հայ-իրանական հարաբերությունները, հատուկ հարաբերություններ են»: Ինչո՞վ է բացատրվում այդ հատուկ լինելը: Ինչո՞վ է Հայաստանը կարևոր Իրանի համար:

-Իրանը բոլոր հարևան երկրների հետ ունի լավ հարաբերություններ: Հայաստանի հետ հարաբերությունների հատուկ լինելը թերևս պայմանավորված է տարածաշրջանում մեր միակ քրիստոնյա հարևան լինելու հանգամանքով: Դա առանձնահատուկ հատկություն է: Իրանի և Հայաստանի՝ որպես իսլամական և քրիստոնեական երկրների խաղաղ համակեցությունը կարող է օրինակ ծառայել այլ երկրների համար: Այլ խոսքով, եթե լինի չափավորություն և

հավասարակշռություն, ապա բոլոր երկրներն էլ կարող են ապրել կողք կողքի: Ռասայական, կրոնական և այլ տարբերությունները չպետք է հանգեցնեն ժողովուրդների և երկրների միջև բախման: Ես կարծում եմ, որ այլ մտածելակերպը պայմանավորված է կրոնների մասին առկա սխալ պատկերացմամբ: Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները պետք է օրինակ ծառայեն այլ երկրների համար: Իրան-Հայաստան հարաբերությունները այն առումով են հատուկ, որ երկու երկրները, լինելով իսլամի և քրիստոնեության հետևորդներ, ապրելով կողք կողքի, չունեն ճգնաժամ, բախում կամ հակամարտություն:

Պարզ է, որ ամբողջ աշխարհը մեզ դիտարկում է իբրև կրոնական իշխանապետության երկիր: Հայաստանը քրիստոնեական երկիր է և մեզ հաջողվել է խաղաղ ապրել նրա կողքին:

-Բացի բարեկամ և հարևան երկիր լինելուց՝ Իրանը ի՞նչ է սպասում Հայաստանից: Քրիստոնյա Հայաստանը կարո՞ղ է իր վրա վերցնել որոշակի գործառույթներ, որպեսզի միջազգային հանրությանը ներկայացնի ԻԻՀ դիրքորոշումները՝ տարբեր հարցերի հետ կապված: Ձեր կարծիքով Հայաստանն ունի՞ այդ ներուժը:

-Հայաստանը միջազգային ատյաններում, կազմակերպություններում ունի իր ազդեցությունը, բացի այդ Ֆրանսիայում և ԱՄՆ-ում ապում են շատ հայեր, որոնցից շատերը ունեն իրանական արմատներ և կարող են մեծ դերակատարություն ունենալ երկրների հարաբերությունների գործում: Նրանք համարվում են լավ լոբբինգ: Միջազգային ատյաններում ևս Իրանը և Հայաստանը սերտորեն համագործակցում են: Միջազգային հարցերի հետ կապված՝ Հայաստանը մշտապես եղել է Իրանի կողքին: Հայաստանը և Իրանը մշտապես պաշտպանել են միմիյանց դիրքորոշումները: Անգամ այլ երկրների կողմից հաճախ գովասանքի է արժանացել այսպիսի փոխաջակցությունը, և մենք մշտապես

շնորհակալություն ենք հայտնել ՀՀ իշխանություններին սերտ համագործակցության համար:

-Ինչպե՞ս կմեկնաբանեք Միացյալ Նահանգների չեզոք դիրքորոշումը Հայաստան-Իրան զարգացող հարաբերությունների նկատմամբ, հատկապես էներգետիկ ոլորտում:

-Իրանն ու Հայաստանը ջանք են գործադրում, որպեսզի երկու երկրների հարաբերությունները երրորդ երկրի ազդեցությանը չենթարկվեն: ՀՀ իշխանությունները կարողանում են շատ խելացի կերպով իրականացնել իրենց արտաքին քաղաքականությունը՝ հենվելով ազգային շահի վրա, և Իրանի հետ հարաբերությունները Հայաստանի համար ռազմավարական բնույթ են կրում: Հենց այս պատճառով էլ Արևմուտքը չի կարող միջամտել հարաբերություններին:

- Ինչպե՞ս կբացատրեք հայ-իրանական էներգետիկ համագործակցությունը, ինչքանով է դա Իրանին անհրաժեշտ՝ հաշվի առնելով այն օգտակար հանածոները և այն ներուժը, որ Իրանն ունի:

- Երկու երկրների հարաբերություններում էներգետիկ ոլորտի ներկայիս մակարդակը ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն ներուժը, որ կա: Հայաստանի կարողությունները շատ ավելին են, քան մենք օգտագործում ենք: Իրանն ունի ահռելի քանակությամբ էներգակիրներ և պատրաստ է Հայաստանի կարիքները բավարարել: Իրանը Մերձավոր և Միջին Արևելքում խիստ կարևոր երկիր է, և եթե էներգետիկ հարցում Իրանը ընտրել է Հայաստանին, ուրեմն ցանկանում է հոգալ Հայաստանի կարիքները: Եթե Հայաստանի տարածքով անցնի էներգակիր փոխանցող խողովակ, ապա Հայաստանը այդ տարանցիկ ուղու համար ևս կստանա գումարներ: Երկարաժամկետ ծրագրերից մեկն էլ այն է, որ երկիրը ապագայում կդառնա տարանցիկ ուղղություն, բայց դա էլ պայմանավորված կլինի տվյալ երկրի կառավարության որոշումներից, թե որ ուղին կընտրեն: Մենք այսօր տարբեր երկրների հետ օգտագործում ենք տարանցիկ ուղիների

ձևաչափը՝ Պակիստանի միջոցով դեպի Հնդկաստան և այլ երկրներ էներգակիրներ ենք արտահանում:

Ստացվում է՝ կամ պետք է բանակցենք, համոզենք և այս գործընթացում ներգրավենք Վրաստանին, այլապես հայ-իրանական էներգետիկ համագործակցությունը ստանում է բարեգործական երանգ:

-Այո՛, երբ մենք ձեռնամուխ եղանք այս ծրագրի իրականացմանը, սա առավելապես բխում էր Հայաստանի կարիքներից: Վրաստանի հետ էլ ունենք բավական լավ հարաբերություններ:

-Բայց տնտեսական ոլորտում, հատկապես էներգետիկայի բնագավառում, Վրաստանը հնարավոր է հապաղի Իրանի հետ համագործակցելուց:

-Խնդիր չկա, մենք գոհ ենք մեր հաճախորդներից:

-Ինչպե՞ս կորակեք Հայաստան-Իրան քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական կապերն այսօր: Ձեր կարծիքով Հայաստան-Իրան հարաբերություններում ինչպիսի՞ ձեռքբերումներ և բացթողումներ ենք ունեցել մինչև այժմ:

-Երկու երկրների հարաբերությունները բոլոր ոլորտներում էլ լավ են, և ես դրանք համարում եմ զարգացող: Տնտեսական ոլորտում շատ համաձայնագրեր ունենք, ստորագրել ենք մի շարք փաստաթղթեր: Բայց դրա հետ մեկտեղ մենք մի քանի տարի է գտնվում ենք պատժամիջոցների տակ: Ֆինանսաբանկային պատժամիջոցների տարածումը մեզ համար ստեղծել են դժվարություններ, դանդաղեցնում են նախագծերի իրականացման գործընթացները: Ես վստահ եմ, որ եթե չլինեին այդ պատժամիջոցները մենք հիմա բազմաթիվ նախագծեր վաղուց ավարտած կլինեինք:

Մյուս կողմից պետք է ասել նաև, որ Հայաստանում մասնավոր հատվածի գործունեության համար պայմանները լավագույնը չեն: Վերջին տարիներին մենք նկատել ենք, որ ներդրողներն իրենց կապիտալը պարզապես տեղափոխում են Վրաստան: Պետք է ելք գտնել և խրախուսել ներդրողներին, որպեսզի գան Հայաստան: Մենք մեր ջանքերն ենք ներդրել,

որպեսզի ակտիվորեն գործի մասնավոր հատվածը: Դրա համար անհրաժեշտ է հատուկ որոշում, որը պետք է տեղի ունենա ՀՀ կառավարության կողմից:

Վերջերս Երևանում տեղի ունեցավ իրանական ապրանքների ցուցահանդես, որի կազմակերպիչը Իրան-Հայաստան առևտրի պալատն էր: Եվս մեկ անգամ ցանկանում եմ շեշտել, որ պետք է խրախուսել մասնավոր հատվածը, դրա համար անհրաժեշտ է շատ խնդիրներ լուծել: Օրինակ, ընդհանուր մաքսատուն ունենալու գաղափարը և նախընտրելի տարիֆների հարցում համաձայնության գալը, կնպաստեն ակտիվացման բարձրացմանը տնտեսության ոլորտում, հատկապես մասնավոր սեկտորում: Ես վստահեցնում եմ, որ եթե ընդունվի խելամիտ որոշում, շուտով շատ իրանցի գործարարներ, ներդրումներ կանեն Հայաստանում:

-Մի քանի տարի առաջ Իրանը միակողմանի հանեց արտոնագրային ռեժիմը և Ադրբեջանի և Վրաստանի համար, որպեսզի այն օրինակ ծառայի: Ինչո՞ւ դա չի արվել Հայաստանի նկատմամբ:

- Նախկինում մենք Հայաստանին էլ առաջարկել ենք, որ սահմանենք ոչ արտոնագրային ռեժիմ, նրանց հետ էլ, կարծում եմ, իրականացվել է, որպեսզի նախադեպ լինի: Գուցե Հայաստանի հետ էլ ապագայում լինի, մեր տեսանկյունից խնդիր չկա: Մենք որևէ խնդիր չունենք Հայաստանի քաղաքացիների՝ Իրան այցելելու կապակցությամբ: Հայերը Իրանում մեծ վստահություն են վայելում, և դա պայմանավորված է այն վաղեմի հարաբերություններով, որ մենք ունեցել ենք հայերի հետ: Ավելի քան երկու տարի է՝ ՀՀ կառավարության հետ քննարկում ենք ոչ արտոնագրային ռեժիմ սահմանելու հարցը: Եթե այսօր Հայաստանի կառավարությունը հայտնի, որ պատրաստ է մեզ հետ ոչ արտոնագրային ռեժիմ սահմանել, մենք հաջորդ շաբաթ կստորագրենք այդ փաստաթուղթը:

-Մենք ԱԺ-ում, իսկ դուք Մեջլիսում ունենք Հայաստան-Իրան, Իրան-Հայաստան բարեկամության խմբեր: Ինչո՞ւ նրանց ծրագրեր չեն առաջադրվում, որպեսզի մշակեն և

օրենքի վերածեն: Հանդիպելով Գ. Սահակյանի հետ (Հայ-իրանական բարեկամության խմբի ղեկավար) և քննարկելով այս հարցը՝ ես հասկացա, որ այս տարիների ընթացքում բարեկամության խմբերի բոլոր հանդիպումները եղել են միմիայն ճանաչողական բնույթի: Փաստորեն, երկու կողմերն էլ ոչ մի գործողություն չեն իրականացրել:

-Դուք իրավացի եք: Բարեկամության խմբի՝ Թեհրան այցելելուց առաջ հանդիպեցի պարոն Սահակյանի և խմբի անդամներից մի քանիսի հետ և ասացի, որ պետք է ակտիվ գործել: Օրինակ, Ադրբեջան-Իրան բարեկամության խումբը տարին 2-3 անգամ այցելում է Իրան, բայց Հայաստան-Իրան բարեկամության խումբը գրեթե երկու տարի է այց չի ունեցել: Վերջերս ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ Հայաստան-Իրան բարեկամական խումբը առաջիկայում կայցելի Իրան: Ես անձամբ այն կարծիքին եմ, որ բարեկամության խմբերը ի վիճակի են լուծելու շատ բարդ խնդիրներ: Նույն դժգոհությունը ես արտահայտեցի Իրան-Հայաստան բարեկամության խմբին՝ նշելով, որ պետք է ավելի ակտիվ լինեն:

-Կարելի է, օրինակ, սկսել կրթության ոլորտից: Հայտնի է, որ Հայաստանում դասավանդում են պարսկերեն, սակայն այդ ուսուցիչները գրանցված չեն: Հիշում եմ, որ Հայաստանի շրջանավարտների դիպլոմները տարիներ առաջ Իրանում համարվեցին ոչ օրինական: Ինչքանո՞վ են իրանցիները, ոչ իրանահայերը, ծանոթ Հայաստանի մշակույթին: Կարծում եմ՝ բարեկամության խմբերը կարող են գոնե այս հարցերի վրա ուշադրություն դարձնել:

- Անցած տարի ես այցելել եմ այն դպրոցները, որտեղ դասավանդում են պարսկերեն և ցավոք սրտի, այն տպավորությունը, որ ես ստացա, այնքան էլ բավարար չէր: Ես զգում էի, որ դասավանդողները տիրապետում են լեզվին, ես էլ խոստացա, որ իրենց կաբինետները կկահավորենք լուսարձակներով, համակարգիչներով և այդ նոր մեթոդներով նրանք կդասավանդեն պարսից լեզուն: Գնվել է արդեն անհրաժեշտ գույքը և կտրամադրվի նրանց: Հանդիպել եմ նաև

ՀՀ կրթության նախարար Ա. Աշոտյանի հետ և խնդրել եմ, որ ուսուցիչներին գրանցեն:

Ամեն դեպքում կարծում եմ նաև, որ պետք է ուսուցիչների գիտելիքների մակարդակը ևս բարձրացնել, որովհետև ուսուցիչը պետք է լավ տիրապետի ինչպես մայրենի լեզվին, այնպես էլ այն լեզվին, որը դասավանդում է: Ես կարծում եմ, որ պետք է աշխատանքներ տանենք նաև նրանց ընդհանուր գիտելիքների մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հուսով եմ, որ այդ դասընթացների կազմակերպմամբ կլուծենք նաև այդ խնդիրները:

Օրինակ, այն դասագիրքը, որով դպրոցներում պարսկերեն են ուսուցանում, ներկայիս եղած հնարավորությունների և մակարդակի առումով համեմատելի չէ: Լեզվի դասավանդման նոր մեթոդներ կան, որոնք համեմատելի չեն 50 տարի առաջվա դասավանդմանը: Այն գրքերը, որոնցով այսօր Հայաստանում դասավանդում են պարսկերեն, 25 տարի է արդեն Իրանում չեն օգտագործվում: Մենք աշխատեցինք, որպեսզի դասավանդման համար օգտագործվեն նոր մեթոդներ, սակայն ցավոք սրտի, Հայաստանում մի քանի անձիք մենաշնորհ են դարձրել այդ գործը և չհամաձայնցին: Նրանք կարծում են, որ ամեն ինչ պետք է իրականացվի միմիայն իրենց միջոցով: Այն դեպքում, երբ պարսկերենի դասավանդումը կառավարության որոշմամբ չէ, ինչպես դասավանդվում է, օրինակ, ֆրանսերենը ֆրանսիական մեթոդով, նույնը վերաբերում է ռուսերենին և անգլերենին: Բայց ցավոք, պարսկերենի դասավանդման մեթոդի ներկա վիճակը բացարձակ անընդունելի է: Մենք կազմեցինք պարսկերեն-հայերեն դասագիրք, սակայն չհամաձայնեցին: Ինչքան գրություն ենք ուղարկում, այն վերահասցեագրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետին: Այնտեղ Գառնիկ Ասատրյան անունով անձնավորություն կա, որը որոշումներն անձամբ է կայացնում, և մենք չենք կարող պարզապես այդպես աշխատել: 15 տարի է արդեն ինչ գնվել է մի շենք, որի անունը դրվել է «Կովկասի Իրանագիտության կենտրոն», Իրանի կառավարությունն է գնել այդ շենքը, որպեսզի հայ

հասարակությունը ծանոթանա իրանական մշակույթին և ժողովրդին, այնտեղ անգամ տպագրական սարք կա: Սակայն, ցավոք սրտի, այն չի ծառայել իր նպատակին, քանի որ հասարակության մեջ այն փոքաթիվ մասը, որը, ի դեպ, կազմված է առավել տարեց մարդկանցից, չի ճանաչում Իրանը: Զգացվում է, որ պարսից լեզվի ընդլայնման հետ կապված որևէ աշխատանք այստեղ չի կատարվել:

Ինչ վերաբերում է հայերենին, ապա պետք է ասեմ, որ Իրանի հայկական բոլոր դպրոցներում դասավանդվում է հայերենը, Սպահանի համալսարանում 50 տարի գոյություն ունի հայագիտության ամբիոն, նաև տպագրվում են հայերեն լեզվով թերթեր և պարբերականներ: Մենք էլ աշխատում ենք այստեղ զարգացնել այդ ամենը: Եվ այո՛, իշխանությունները պետք է մեզ աջակցեն, որպեսզի հաշվի առնելով այն կարիքը, որ կա պարսկերենի տարածման և ընդլայնման համար, կարողանանք սովորեցնել և ծանոթացնել:

Մոտ ապագայում, եթե Աստծո կամքով կառուցվի երկաթգիծը և լուծվի ոչ արտոնագրային ռեժիմի հարցը, ամեն շաբաթվա վերջին մոտ 5000 իրանցի կայցելի Հայաստան՝ հանգստան օրերն այստեղ անցկացնելու: Նրանցից 99%-ը հայերեն չգիտի, և իրենք կարիք ունեն, որ Հայաստան գալով՝ ռեստորաններում կամ հանգստի այլ վայրերում պարսկերեն իմացողներ լինեն: Հաշվի առնելով հայկական հյուրասիրությունը և այն մշակութային նմանությունը, որ մենք ունենք՝ հոսքը շատ մեծ կլինի: Այսօր, տարեկան մոտ 2 մլն. Իրանցի այցելում է Թուրքիա, բայց Հայաստանը, որ մեր սահմանակիցն է, տարեկան մոտ 100 հազար իրանցի է այցելում, չնայած որ գոնե մինչև մեկ միլիոն Իրանի քաղաքացի կարող է այցելել Հայաստան: Դրա համար անհրաժեշտ է լուծել ենթակառուցվածքային խնդիրները, այդ թվում՝ հարմար ճանապարհների կառուցումը և լեզվի հետ կապված դժվարությունները: Ուստի, մենք դպրոցներում երեխաներին պետք է դասավանդեք պարսկերեն, որպեսզի նրանք ուղեցույցի դեր կատարեն:

-Պարո՛ն Ռեյիսի, ինչպե՞ս կորակեք հայ համայնքի դերը Իրանի ներկա կյանքում:

-Հայերը մահմեդականների կողքին ապրում են երկար տարիներ: Ավելի քան 3000 տարի է, ինչ իրանցիները հայերի հետ կողք կողքի ապրում են և աշխատում: Սեֆեֆիների շրջանում, երբ հայերը բնակեցվեցին Սպահանում, արարեցին իրենց գեղարվեստական հիմնական արժեքներն ու ստեղծագործությունները: Հայերը, Իրանի մյուս ժողովուրդների հետ միասին աշխատում են, որպեսզի երկիրը առաջընթաց ունենա, նրանք ակտիվ են բոլոր ոլորտներում, այդ թվում նաև տնտեսության և մշակույթի բնագավառում: Իրանում շատ հայեր երաժշտության ուսուցիչներ են, պարոն Ճգնավորյանին լավ գիտի ամբողջ աշխարհը, որը արդի աշխարհի երաժշտության ոլորտի մեծ դեմքերից մեկն է: Ուստի, կարելի է ասել, որ հայերը մեծ նշանակություն են ունեցել մշակութային գործերի արարման հարցում: Հայերը տպագրում են 5-6 պարբերականներ, և դրանք բոլորն էլ նպաստում են և՛ երկրի, առաջընթացին և՛ հայերի ավելի լավ ճանաչմանը երկրում:

-Պարո՛ն Ռեյիսի, ինչպիսի՞ն է բարեկամ Իրանի դիրքորոշումը Հայաստանի համար կարևոր խնդիրների՝ Լեռնային Ղարաբաղի և Ցեղասպանության հարցի հետ կապված:

-Ղարաբաղյան հակամարտությունը երկար տարիներ գոյություն ունի, սակայն ԻԻՀ դիրքորոշումը հստակ է, այսինքն, Ղարաբաղի հակամարտությունը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով միջազգային իրավունքի և նորմերի շրջանակում: Իրանի դիրքորոշումը շատ հստակ է, Իրանը դեմ է ցանկացած խնդիր հակամարտության միջոցով լուծելու գործելաոճին: Մենք դեմ ենք, որ տարածաշրջանի հակամարտությունները լուծվեն ուժի կիրառման միջոցով:

Ես ամեն տարի ապրիլի 24-ին մասնակցում եմ անմեղ զոհերին հարգանքի տուրքին, կրոնական տեսանկյունից էլ գտնում ենք, որ աններելի է անմեղ մարդկանց կյանքից զրկելը, և Ղուրանում կա այսպիսի մի հատված, որտեղ ասվում է «Եթե սպանել ես մեկ անմեղ մարդու, ուրեմն սպանել ես ողջ

մարդկությանը», պետք է կանխել անմեղ մարդկանց սպանությունը, որևէ տարբերություն չկա, հայ է, թե պաղեստինցի: Մեր տեսանկյունից էլ Սիրիայում այսօր ցեղասպանություն է տեղի ունենում: Ահաբեկիչներից մեկը Սիրիայում գլխատել է 300 մարդու: Մենք դեմ ենք ցանկացած անմեղ մարդու սպանությանը, անկախ նրանից, թե աշխարհի որ մասում է նա գտնվում:

Թարգմանիչ՝ Էդուարդ Թահմազյան

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում
Հայաստան-Իրան բարեկամական խմբի ղեկավար

Մարտի 12, 2013, Երևան

-Պարո՛ն Սահակյան, ինչպե՞ս է աշխատում Հայաստան-Իրան բարեկամական խումբը, ինչպե՞ս են հարաբերվում Մեջլիս-ԱԺ ներկայացուցչական խմբերը: Տարին քանի՞ անգամ եք հանդիպում և ի՞նչ արդյունքներ եք գրանցել:

-Հանդիպումները ինքնանպատակ չեն, եղել են տարիներ, որ մի քանի անգամ հանդիպել ենք, հանդիպումների պարտադիր ֆիքսված թիվ չկա: Բավական երկար քննարկում էինք մաքսային ռեժիմի հարցը: Այստեղ էական ցնցում պարունակող խնդիրներ էլ չկան: Սա հնրավարություն է տալիս Իրանի հասարակությանը անարգելք մտնել Հայաստան, մեզ էլ դա ձեռնտու է առևտրաշրջանառության ավելացման համար:

- Քննարկելով Իրանի հետ մաքսային հարցը՝ ինչպե՞ս կբացատրեք, որ այն վերջնական լուծում չի ստանում և Ձեր կարծիքով, եթե ունենք խնդիրներ, ապա Իրանը ինչո՞ւ միակողմանի չի հանում Հայաստանի հետ մաքսային ռեժիմը, ինչպես արեց Ադրբեջանի և Վրաստանի հետ:

-Որևէ կարծրատիպային մտայնություն չկա Իրանում, եթե մի բան արել են Վրաստանի և Ադրբեջանի հետ, անպայման նույնը անեն նաև Հայաստանի համար: Մենք իսկապես խոչընդոտներ չունենք: Իսկ թե ինչո՞ւ չի լուծվում մաքսային հարցը, ես կարծում եմ դրա պահանջարկը չկա, եթե լինի պահանջարկը, ապա այդ հարցը կքննարկվի:

- Հայաստան-Իրան բարեկամական խմբի օրակարգում ի՞նչ հարցեր կան այսօր, որոնց քննարկման անհրաժեշտությունը կա:

-Մեր քննարկումների ժամանակ կարևորվում են ոչ միայն օրենսդրության խնդիրներն, այլ նաև քննարկվում են տնտեսական և մշակութային ոլորտներին վերաբերող

խնդիրներ: Քննարկվում են երկաթգծի հարցերը և կարծում եմ՝ կգտնենք ներդրողներ:

-Հայաստան-Իրան հարաբերություններում ի՞նչ ձեռքբերումներ են եղել և արդյոք եղե՞լ են բացթողումներ, որ դուք այժմ նկատում եք:

-Տնտեսական առումով Իրանը չի կարող Հայաստանին մեծ օժանդակություն ցուցաբերել, խնդիրը ճանապարհներն են, դրանք բավական թանկ ճանապարհներ են: Եվ չի եղել մի խնդիր, որ մենք շահագրգիռ լինենք ու Իրանը չընդառաջի մեզ:

-Ինչո՞վ է կարևոր Հայաստանը Իրանի համար:

- Իրանի համար կարևոր է քաղաքական նշանակություն ունեցող կապը, և տեսնում ենք, որ Հայաստանը Իրանի հարևաններից միակն է, ում հետ չունի խնդիրներ: Ինչ-որ կերպ մենք նման ենք իրար, երկու երկրներն էլ փակ պետություններ են: Մենք ճանապարհներ չունենք, իրենք էլ պատժված պետություն են:

- Հայաստան-Իրան բարեկամության խմբում այսօր կա՞ որևէ ծրագիր, որը գտնվում է քննարկման փուլում կամ պետք է արդեն կյանքի կոչվի:

-Քննարկման նյութեր կան, սակայն դրանք համակարգված չեն, քանի որ և՛ մեր մոտ, և՛ իրենց մոտ նախագահական ընտրությունների տարի էր: Որևէ բացահայտ ծրագիր չկա, բարեկամական խմբերի շփումները պետք է դիտարկել փոխհարաբերությունների համատեքստում:

-Իսկ այս 20 տարվա ընթացքում եղե՞լ է որևէ խնդիր, որը բարեկամական այս խմբի կողմից դրվել է, քննարկվել է կամ լուծման ուղղություններ է ստացել: Ցանկանում եմ հասկանալ այդ խմբի գործունեության իրական առաքելությունը: Պարզապես հանդիպո՞ւմ եք, թե՞ փորձում եք խնդիրների լուծման ուղղություններ գտնել:

-Այդ հանդիպումները հիմնականում ճանաչողական, մերձեցման նպատակ են հետապնդում: Մեր օրենսդրությունը էապես տարբերվում է ԻԻՀ օրենսդրությունից:

-2010թ. Լարիջանին ժամանեց Հայաստան, այդ այցի կազմակերպման գործում Հայաստան-Իրան բարեկամական խումբը իրականացրե՞լ է ինչ-որ աշխատանքներ:

-Այո, այցի կազմակերպան ժամանակ մենք անմասն չենք մնացել:

-Վերջերս ակտիվորեն քննարկվում էր Սյունիքի տարածքում հողատարածքների վարձակալության տրամադրումը իրանական կողմին, ինչքանո՞վ է սա հնարավոր:

-Դա համապետական ծրագիր չէ, կարծում եմ՝ մարզպետի մակարդակով ընդամենը հուշագիր է ստորագրվել, որը թույլ կտար հետագայում գործընթացներ սկսել: Բոլորս էլ հասկանում ենք, որ այդ ահռելի տարածքում ոչխարաբուծությամբ զբաղվելու դեպքում, հողը էռոզիայի է ենթարկվելու: Հուշագիրը գաղափար է և գործողություն չէ: Իմ կարծիքով այն անգամ հուշագիր էլ չի եղել, ընդամենը արձանագրության տեքստ է:

Հերմինե Նաղդալյան- (ԱԺ փոխնախագահ)

-Ես էլ իմ կարծիքը ասեմ այս խնդրի հետ կապված: Սա տեղի է ունեցել միջսահմանային համագործակցության շրջանակներում, որը բնորոշ է բոլոր երկրներին: Մենք աշխատում ենք սահմանի այս կամ այն կողմում գտնվող տարածքներում որոշակի ակտիվության դաշտ ստեղծել, որը կնպաստի միջպետական հարաբերությունների, ժողովուրդների միջև հարաբերությունների քաղաքակիրթ շփման դաշտ ստեղծելուն, ինչի համար էլ կարող են նման հարցեր քննարկվել, սակայն մեզ համար գերական հողերի հարցն է: Այնպես որ, այդ գաղափարը պետական ծրագիր դառնալու համար շատ ճանապարհ ունի անցնելու: Շատ հնարավոր է, որ շատ առաջարկներ արվեն, բայց դրանք կյանքի կոչվելուց շատ հեռու լինեն:

Գալուստ Սահակյան

-Իրականում պետք է լուրջ ուսումնասիրություն անել, հնարավոր է, որ շահութաբեր ծրագիր դառնա, բայց պետք է ուսումնասիրել, պարզել, թե քանի՞ տարի հետո է հողը

էռոզիայի ենթարկվելու, ի՞նչ միջոցներով ենք այն վերականգնելու, տրվելիք գումարը բավական կլինի՞, թե՞ ոչ, ի՞նչ ներդրումներ են արվելու, կօգտագործվի՞ արդյոք մեր աշխատուժը:

-Ինչպե՞ս եք տեսնում հայ-իրանական հարաբերությունների հեռանկարը:

-Կարծում եմ գնալով մեր հարաբերությունները ավելի կխորանան, հատկապես եթե Իրանի ու ԱՄՆ-ի հարաբերություններում ինչ-որ չափով դրական փոփոխություն գրանցվի: Ինչքան բարենպաստ իրավիճակ ստեղծվի Իրանի համար, այնքան մեր հարաբերություններում էլ ավելի խորացում կգրանցվի:

ԱՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար

Հունվարի 24, 2012, Երևան

-Պարո՛ն Սիմոնյան, կներկայացնե՞ք հայ-իրանական էներգետիկ դաշտի համագործակցության նախապատմությունը: Խնդրում եմ ասե՛ք, տարեկան որքա՞ն գազ է մտնում Հայաստան և ինչքա՞ն ենք դրա փոխարեն էլեկտրաէներգա տալիս Իրանին: Ինչպիսի՞ն է Իրանի գազի գինը և որակը՝ համեմատած ռուսական գազի հետ:

-«Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիրը, փոխշահավետ ծրագիր է: Հայաստանը տարածաշրջանի միակ երկիրն է, որ ունի արտադրող էլեկտրական հզորությունների ավելցուկ: Հայաստանը Խորհրդային Միությունից ժառանգություն է ստացել էներգետիկ լուրջ համակարգ, ՀԷԿ-եր, Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երը, ատոմակայանը և այլն: Հայաստանում արտադրվող էներգիան երկու անգամ գերազանցում է պահանջարկը, Իրանն ունի բնական պաշարներ, սակայն որոշակի առումով չի կառուցել բավարար քանակով կայաններ, որպեսզի այն վերածեն էլեկտրաէներգիայի: Իսկ եթե մեր արտադրող հզորությունները բավարարեն միայն ներքին պահանջարկը, ապա տարվա մեծ մասը այդ կայանները պետք է պարապուրդի ենթարկվեն:

Այդ առումով գտնվեց փոխշահավետ մի բանաձև. քանի որ Իրանը ունի էլեկտրոէներգիայի պահանջարկ, իսկ մենք ունենք էլեկտրաէներգիայի արտադրող ավելցուկ, որոշվեց մեր կարողությունները համադրել, այսինքն, իրենց գազը վերամշակում ենք և ուղարկում Իրան: Արդյունքնում, բացի աշխատուժի և հարկերի հետ կապված օգուտներից, մենք ունենում ենք ևս մեկ շահույթ. երբ մենք օգտագործում ենք Երևանի ՀԷԿ-ի կամ Հրազդանի 5-րդ բլոկի պես ժամանակակից կայանները, ապա 1մ^3 գազի դիմաց ստանում ենք 3-4 ԿՎտ.ժ ավել էլեկտրաէներգիա: Այսինքն, այդ գազից ստանում ենք ավելի շատ էլեկտրաէներգիա, քան պետք է ուղարկենք Իրան, և այդ տնտեսված

էլեկտրաէներգիան օգտագործում ենք ներքին սպառման համար կամ օգտագործում ենք ավելցուկ համարվող գազը:

Նաև ֆորսմաժորային իրավիճակներում, ըստ պայմանագրի կարող ենք ամբողջովին օգտագործել իրանական գազը: Օրինակ, երբ Ռուսաստանի կողմից գազի մատակարարման ընդհատում է լինում (հիմնականում տեխնիկական պատճառներով), մենք անմիջապես դիմում ենք իրանական կողմին, որպեսզի ավելացվի գազի մատակարարումը: Նույնը մեր կողմից է արվում, երբ իրանական կողմին անհրաժեշտ է լինում էլեկտրաէներգիայի ավելի շատ հոսք, մենք չենք նայում թե այդ պահի ռեժիմով ինչքան է նախատեսվում հոսք տրամադրել, ուղարկում ենք այնքան, ինչքան հնարավորություն ունենք: Ահա այսպես էլ համագործակցում ենք:

-Արդյոք կա՞ն ծրագրեր երկրորդ գազատարի կառուցման ուղղությամբ:

-Այս պահին չկան, որովհետև Հայաստանի կարիքների համար դրա անհրաժեշտությունը չկա: Բայց եթե հետագայում պայմանավորվածություն ձեռք բերվի տարանցիկ գազատար կառուցելու ուղղությամբ, որին Հայաստանը կողմ է և պատրաստ է իր տարածքը տրամադրել տարածաշրջանային ծրագրերի իրականացման համար, ապա կկառուցվի երկրորդ գիծը: Առանձին գազատար կառուցելու վերաբերյալ պետք է պայմանավորվածություն ձեռք բերեն մատակարարը և սպառողը: Հաճախ թյուրըմբռնում կա Հայաստան-Իրան գազատար խողովակի տրամագծի կառուցման շուրջ, հաճախ հարցնում են ինչո՞ւ կառուցվեց 700 մմ տրամագծով խողովակ և ինչո՞ւ չկառուցվեց ավելի մեծ տրամագծով խողովակ: Պատասխանում եմ՝ որովհետև 700մմ տրամագծով խողովակը, այս կարգի ծրագրի համար, առավել քան բավարար տրամագիծ է, ինչ իմաստ ուներ ավելի մեծ տրամագծով խողովակ կառուցել կարճ հատվածի համար, երբ չգիտես դրա ապագան: Իսկ եթե խոսք լինի տարանցիկ գազատարի մասին, բնականաբար պետք է կառուցվի տեխնիկական նոր

պահանջներին բավարարող գազատար, որի համար Հայաստանը միշտ հայտնել է իր պատրաստակամությունը:

-Պարո՛ն Սիմոնյան, ինչպե՞ս ենք մենք իրականացնում մեր էներգետիկ քաղաքականությունը Իրանի նկատմամբ առկա պատժամիջոցների համատեքստում:

-Մեր նկատմամբ ճնշումներ չեն կիրառվում, քանի որ բոլորն էլ շատ լավ հասկանում են, որ Հայաստանը ներկայիս տարածաշրջանային հարաբերությունների պայմաններում այլընտրանք չունի: Եթե որևէ մեկը կարող է այլընտրանք առաջարկել, խնդրեմ, քննարկենք: Առավել ևս մեր համագործակցությունը ուղղված չէ երրորդ երկրի դեմ և չի ընկնում այդ պատժամիջոցների տակ, և արևմտյան երկրները ըմբռնումով են մոտենում մեր համագործակցությանը: Քանի որ սա Հայաստանի էներգետիկ անվտանգության խնդիրն է: Օրինակ, այս աշնանը (2011թ.) բավական շատ օրեր եղան, որ ընդհատվեց հյուսիսից մատակարարվող գազը, և Հայաստանը ի՞նչ պետք է աներ, եթե չլիներ այս գազատարը: Եվ երկրորդ, այս ծրագիրը բացառապես խաղաղ նպատակների համար է ծառայում:

-Պարո՛ն Սիմոնյան, շրջանառվում է Իրան-Հայաստան նավթավերամշկման գործարանի կառուցման ծրագիրը, որքանո՞վ է այն իրական:

-Այո՛, կա նման ծրագիր, այն կառավարության անցյալ տարվա գործունեության գերակա խնդիրների թվում էր, բանակցությունները դրա շուրջ շարունակվում են: Սկզբում այն եռակողմ ձևաչափ ուներ՝ Հայաստան-Ռուսաստան-Իրան: Սակայն այս պայմանագիրն առայժմ սառեցված է: Պատճառը հիմնականում հում նավթի մատակարարման լոգիստիկան է, որը ընդունելի չեղավ, քանի որ Իրանից մատակարարվող նավթը խողովակներով պետք է բերվեր Իրանի հարավային շրջանների նավթահորերից, և չմոռանանք, որ Իրանի հարավային շրջանների նավթը պատկանում է ծանր նավթի շարքին, ու հաշվի առնելով Հայաստանի բարդ ռելիեֆը, մասնագետները գտան, որ այն տնտեսապես արդարացված չէ:

Այլ հարց է, որ կարողանան ծրագիրն իրականացնել Իրանի հյուսիսից՝ մասնավորապես Կասպից ծովից արտահանված նավթի միջոցով: Սակայն Կասպից ծովի նավթահորերը Իրանի կողմից բավարար չափով չեն շահագործվում:

Որոշվեց մեկ այլ ծրագիր իրականացնել՝ պատրաստի նավթամթերքներ տեղափոխել Հայաստան՝ Թավրիզ-Արարատ ձգվող 8 մատնաչափ տրամագծով խողովակաշարով, որը բավարարելու է Հայաստանի պահանջարկը: Մատակարարվելու է բենզին և դիզելային վառելիք, որը էապես կնվազեցնի Իրանից մատակարարվող վառելիքի գինը, քանզի նախկինում այն տեղափոխվում էր մեքենաներով, ինչը թանկացնում էր վառելիքի գինը: Քննարկումները այս ուղղությամբ շարունակվում են:

-Պարո՞ն Սիմոնյան, արդյոք Հայաստանը համագործակցո՞ւմ է Իրանի հետ միջուկային էներգիայի ոլորտում (օրինակ, Բուշեհրի ատոմակայանը և Մեծամորի ատոմակայանը):

-Ո՛չ, չենք համագործակցում:

-Մեղրու ՀԷԿ-ի կառուցման շուրջ առաջին համաձայնագիրը, եթե չեմ սխալվում, ստորագրվել է 1995թ., 2011թ. դեկտեմբերի 23-ին, երբ Մ. Ահմադինեժադը Հայաստանում էր, ստորագրվեց պայմանագիր, ինչի՞ հետ է կապված ՀԷԿ-ի կառուցման այսչափ ձգձգումը:

-ՀԷԿ-ի հետ կապված առաջին փոխըմբռնման հուշագիրը ստորագրվել է 2001թ. դեկտեմբերի 27-ին կառավարության մակարդակով, որտեղ առաջարկվում էր ուսումնասիրել Արաքս գետի հիդրոներուժը, որպեսզի կառուցվեն ՀԷԿ-եր: 2007թ. մարտի 19-ին ստորագրվեց առաջին համաձայնագիր՝ Արաքս գետի վրա ՀԷԿ-եր կառուցելու և շահագործելու վերաբերյալ: Եվ կարծում եմ, հաշվարկը պետք է այստեղից սկսել, երբ կառավարությունների մակարդակով համաձայնագիր կնքվեց և վավերացվեց երկու երկրների խորհրդարանների կողմից: Մինչ այդ եղած փաստաթղթերը եղել են փոխըմբռնման հուշագրեր կամ մտադրություններ: Ըստ որի, Արաքս գետի վրա պետք է

կառուցվի երկու ՀԷԿ, մեկը՝ Մեղրիում, մեկն էլ՝ Ղարաչիլանում: ՀԷԿ-երից յուրաքանչյուրի հզորությունը պետք է կազմի 140 ՄՎՏ: Յուրաքանչյուր կողմում կառուցվելու է ճնշումային թունել ՀԷԿ-ի աշխատանքների համար: Հայաստանի կողմից թունելը սկսվում է Հայաստան-Նախիջևան սահմանից, 18 կմ երկարությամբ 8,5 մետր տրամագծով, որով ջուրը բերվում հասցվում է ՀԷԿ, որտեղ արտադրվում է էլեկտրաէներգիա: Հայաստանի ՀԷԿ-ից հենց սկսվում է իրանական ՀԷԿ-ի թունելի գլխամասը: 17 կմ երկարությամբ երկրորդ թունելը՝ արդեն իրանական թունելն է:

Քանի որ Արաքս գետը սահմանային է, գետի ջրերի օգտագործումը պետք է կատարվի մեր երկուսի փոխադարձ համաձայնությամբ: Ուստի, մենք համաձայնել ենք, որ առաջին հատվածի ջրի մեծ մասը կօգտագործի հայկական կողմի ՀԷԿ-ը էլեկտրաէներգիա արտադրելու համար, բնականաբար Արաքս գետի հունում թողնելով բնապահպանական թողքը: Պայմանագիրը ստորագրվել է 2010թ. հոկտեմբերի 15-ին ԻԻՀ էներգետիկայի նախարար Նամմջուի կատարած այցի ժամանակ, որը կոչվեց «կառուցում, շահագործում, տնօրինում, փոխանցում»: Այսպիսով, իրանական ներդրող ընկերությունը՝ «Թավան Աբ Արասը», որը ստեղծվել է բացառապես Մեղրու ՀԷԿ-ի շինարարության համար, պայմանագիր ստորագրեց Հայաստանի կառավարության հետ: Ըստ որի, ՀՀ կառավարությունը համաձայն է, որ տեխնիկատնտեսական առկա ցուցանիշներով նրանք հինգ տարվա ընթացքում կկառուցեն ՀԷԿ-ը, որից հետո 15 տարի կշահագործեն այն, արտադրած ամբողջ էլեկտրաէներգիան կտեղափոխեն Իրան, որովհետև մենք այս պահին դրա արտադրանքի կարիքը չունենք: Իրանական կողմը համաձայնվել է ձեռք բերել արտադրված ողջ էլեկտրոէներգիան, բայց 14-րդ տարվա ավարտին մենք համատեղ՝ երկկողմանի ուսումնասիրություններով պետք է հաստատենք, որ ՀԷԿ-ի էլեկտրական, մեխանիկական սարքավորումները ունեն առնվազն 15 տարվա շահագործման ռեսուրս, իսկ շինարարական և թունելային հանգույցները՝ առնվազն 35

տարվա: Դա նշանակում է, որ ամբողջ շահագործման ընթացքում Հայաստանը իրականացնելու է ՀԷԿ նկատմամբ տեխնիկական ողջ վերահսկողությունը, հետևելով, որ ժամանակին կատարվեն բոլոր տեսակի նորոգման աշխատանքները, իսկ 14-րդ տարում համատեղ ուսումնասիրությունների արդյունքում, եթե հայտնաբերվեն թերություններ, որոնք պետք է վերացվեն մինչև մեզ փոխանցելը, ապա ներդրողի պարտավորությունն է վերացնել խնդիրները: Այսինքն, ստացվում է, որ Հայաստանը 15-րդ տարվա վերջում կունենա հիդրոէլեկտրակայան, որի ներդրումներն ամբողջովին հետ են վերադարձվել, որը հետագայում շուրջ 30 տարի առանց կապիտալ վերանորոգման կշահագործվի բավական ցածր սակագնով:

-Պարոն Սիմոնյան, այդ երկու ՀԷԿ-երը միաժամանա՞կ են կառուցվելու:

-Այո՛, տնտեսապես շահութաբեր կլինի երկու ՀԷԿ-ը կառուցել միաժամանակ: Չնայած մենք նման նախապայման չենք դնում: Ըստ պայմանավորվածության՝ 2012թ. հունիսի 15-ից պետք է սկսված լինի շինարարությունը: Հարկ է նշել, որ այս ընթացքում 2011թ. Իրանի ներդրող ընկերությունն ավարտեց երկրաֆիզիկական աշխատանքները, հիմա իրականացվում են երկրատեխնիկական աշխատանքները, նախագծումը, դրանք բոլորը ժամանակատար գործընթացներ են: Այժմ պետք է բոլոր պայմանագրերը վերջնականացվեն, մենք հողի տրամադրման թույլտվություն ձեռք բերելու խնդիր ունենք, փորձաքննությունների խնդիր կար: Այս պահին էլ աշխատանքները շարունակվում են:

Ի դեպ, իրանական կառավարության ներդրումների շնորհիվ Պուշկինի լեռնանցքում կառուցվեց Հայաստանի առաջին հողմակայանը, որ 4 միավոր է, յուրաքանչյուրը 640 ԿՎտ, ընդհանուր հզորությունը կազմում է 2,6 ՄՎտ: Այն շահագործման է հանձնվել 2006թ., 2007թ-ից մեր ներքին ցանցը համալրվել էր հավելյալ էներգառեսուրսով, և դա հաջողությամբ աշխատում է:

ՄԵԽԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության
և տնտեսական զարգացման վարչության պետ
Ապրիլի 3, 2012,Երևան

-Պարո՛ն Ապրեսյան խնդրում եմ ներկայացրեք իրանցիների այցելությունների դինամիկան ՀՀ՝ որպես տուրիստական երկիր: Կցանկանայի՝ ներկայացնեիք այն տենդենցը, որ ունեցել ենք նախկինում: Ո՞ր թվականին ենք գրանցել իրանցիների առավելապես մեծ հոսք Հայաստան: Այս տարի նկատեցինք բավական պասիվություն, ինչի՞ հետ եք կապում այն:

-Իրանը մեզ համար ռազմավարական գործընկեր է, որի հետ մենք ունենք 1000-ամյա բարիդրացիական պատմություն: Այս տարիների զբոսաշրջության ոլորտում դինամիկ զարգացում ենք գրանցել: Իրանը մեզ համար զբոսաշրջության ոլորտում ռազմավարական շուկա է, և ես կասեի, որ իրանցիներին, ինչպես նաև մյուս երկրների ներկայացուցիչներին մենք անվանում ենք հյուրեր, սա մեր զբոսաշրջության առանձնահատկություններից է: Իրանից Հայաստան այցելուների թիվը դինամիկ կերպով աճում է:

Հայաստանը իրանցիների կողմից լայնածավալ կերպով սկսվեց բացահայտվել 2008թ., մինչ այդ ևս, իհարկե իրանցիները հաճախում էին Հայաստան, բայց առավելապես գործարար նպատակներով: Այսպիսով, 2006թ. Հայաստանի սահմանը հատել են մոտավորապես 30 հազար իրանցի, 2007թ.՝ մոտ 40 հազար, 2008թ.՝ մոտ 43 հազար, 2009թ.՝ մոտ 87 հազար, 2010թ.՝ մոտ 120 հազար, 2011թ.՝ մոտ 134 հազար: 2011թ. առաջին եռամսյակում 31 հազար, մարտ ամսին միայն 25,260, իսկ 2011 մարտի 20-31-ը 18 հազար իրանցի է մտել Հայաստան:

-Պարո՛ն Ապրեսյան, իսկ մենք ունե՞նք վերլուծություն, թե Իրանի հասարակության ո՞ր շերտ է նախընտրում Հայաստանում անցկացնել նովրուզյան հանգիստը:

-Այս տարի օբյեկտիվ պատճառներով որոշակի կերպով Հայաստան այցելելու համար խոչընդոտներ ստեղծվեցին իրանցիների համար, և մենք ունեցանք քանակական առումով նվազ արդյունք, սակայն այն ունեցավ մեկ այլ էֆեկտ, այն է՝ որակական առումով ձեռք բերում ունեցանք: Այս մասին մենք տեղեկացվել ենք զբոսաշրջային բոլոր ընկերությունների և հյուրանոցների հետ հարցախույզի արդյունքում: Իրանում առկա տնտեսական ճգնաժամի պայմաններում արտագնա զբոսաշրջության տեմպը ընկել է, և այս երևույթը նկատվում է ոչ միայն դեպի Հայաստան ուղղությամբ:

-Պարո՞ն Ապրեսյան, ի՞նչն է իրանցիներին բերում Հայաստան. գնե՞րն են առավել մատչելի, ազատությո՞ւնն է շատ, թե՞ նոր հորիզոններ են փորձում բացահայտել:

-Զբոսաշրջության ոլորտում ամենակարևորն այն է, որ զբոսաշրջիկը՝ մեր պարագայում հյուրը, իրեն ընդունված և ցանկալի զգա: Նրանք իրենց Հայաստանում շատ հարմարավետ և հանգիստ են զգում, մեր հետազոտություններն էլ ցույց են տալիս, որ Հայաստանը հանգստանալու վայր նախընտրած իրանցիների 70%-ը գալիս է ընտանիքներով: Գները և մյուս հանգամանքները ևս կարևոր են այստեղ: Կարելի է ասել, որ նրանք պարզապես «դուռը թակում են և մտնում հարևան երկիր», այսինքն ճանապարհածախսը մեծ չէ, երկրում ծառայությունները բավական մրցունակ են՝ մյուս երկրների հետ համեմատած, կա նաև ազատության աստիճան:

-ԻԻՀ ունի յոթ հարևան երկիր՝ չհաշված Ռուսաստանը Կասպից ծովով: Արդյոք հետազոտություն արվե՞լ է, թե հատկապես Նովրուզի ժամանակ իրանցիները առավելապես ո՞ր երկրին են նախապատվություն տալիս՝ անցկացնելու իրենց հանգիստը: Ի դեպ, Ադրբեջան ևս կարող են պարզապես «դուռը թակել ու մտնել երկիր», հատկապես հաշվի առնելով, որ նրանք դավանակից են, և Իրանն էլ Ադրբեջանի հետ միակողմանի հանեց վիզային ռեժիմը: Արդյոք ունե՞ք տեղեկություն, թե որքան իրանցի է գնում Ադրբեջան՝ հանգստանալու:

-Շատ հետաքրքիր հարց է, և պետք է ասեմ, որ անգամ կրոնական համապատասխանության դեպքում, միևնույն է, իրանցիները տարածաշրջանում նախապատվությունը տալիս են Հայաստանին, քանի որ այն նոր է բացահայտվել իրենց կողմից:

-Պարո՞ն Ապրեսյան, իսկ Հայաստանը պետական մակարդակով գովազդվո՞ւմ է Իրանում:

-Մենք բոլորովին վերջերս իսպանական հեռուստաընկերության հետ համատեղ նկարահանեցինք 52 րոպե տևողությամբ տուրիստական մի ֆիլմ՝ նվիրված Հայաստանին, և այն տարբեր միջոցառումների ժամանակ ներկայացվում է: Այս ֆիլմի տարածումը մեր գործընկերների պարտականությունն է: Իրանում տուր-օպերատորներն են գովազդում Հայաստանը, բացի այդ, 2006-2008թթ. բավական լուրջ գովազդային աշխատանք իրականացվեց CNN և Եվրանյուզ ալիքներով, իսկ Մերձավոր Արևելքը գտնվում է CNN-ի ծածկույթում:

-Պարո՞ն Ապրեսյան, ունե՞ք արդյոք տեղեկություն, թե որքան գումար են ծախսում իրանցիները Հայաստան գալով:

- Միջին վիճակագրական տվյալներով՝ մեկ զբոսաշրջիկը մեկ այցելության ժամանակ Հայաստանում, չհաշված ճանապարհածախսը, ծախսում է 1000 ամերիկյան դոլարին համարժեք գումար: Այս արդյունքները ստացել ենք 2006-2007թ. իրականացրած վիճակագրական հետազոտություններից զբոսաշրջության ոլորտում:

ԼԵՎՈՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ

Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ

Հունիսի 1, 2012, Երևան

-Պարո՛ն Ահարոնյան, իբրև Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ՝ խնդրում եմ ներկայացրեք՝ ինչպե՞ս որոշեցիք և իրականացրիք այդ պալատի ստեղծումը:

-1974թ առաջին անգամ ես եկա Հայաստան: Այն ժամանակ բավական դժվար էր իրանցիներին մտնել ԽՍՀՄ: Մենք 4 գործարարներով ժամանեցինք Երևան: 1990թ. մարտին աշխատանքի բերումով կրկին Հայաստանում էի: Ես առաջիններից մեկն էի, որ խնդրեցի գնալ Մեղրի, հասկացա որ սա է լինելու երկու երկրներին կապող հիմնական ճանապարհը: 1993թ. մայիսին տեղի ունեցավ առևտրական մեծ ֆորում, որին մասնակցելու հրավեր ստացանք: Ժամանելով Հայաստան՝ մենք հասկացանք, որ չնայած հարևաններ ենք, սակայն իրարից անտեղյակ ենք:

ՀՀ անկախություն հռչակումից անմիջապես հետո Իրանում մեր իրավաբանների աջակցությամբ որոշեցինք հիմնադրել Իրան-Հայաստան առևտրի պալատը: 40 իրանահայերի ջանքերով հիմնեցինք Իրան-Հայաստան առևտրի պալատը: Մենք ամեն տարի առևտրական ֆորում էինք կազմակերպում, առաջին տարին այն գրանցեց 10 հազար դոլարի առևտուր, իսկ այժմ 300 մլն. դոլարից ավելի առևտուր ունեք: Իհարկե, ապրանքների մեծ մասը գալիս է Իրանից, բայց Հայաստանից էլ ունենք ապրանքների տեսականու պահանջարկ: Ի դեպ, սրանց մեջ չեն ընդգրկվում գազի և հոսանքի գումարները:

- Դուք գտնում եք, որ Իրան-Հայաստան առևտրի պալատի հիմնման ժամանակ ինչ նպատակներ որ ունեցել եք, իրականացե՞լ են: Նկատի ունեմ, արդյոք արդարացվո՞ւմ է Իրան-Հայասատան առևտրի պալատի գործունեությունը:

-Մի բան հստակ է, մինչև այժմ ՀՀ դեսպանատունը չունի առևտրական և տնտեսական բաժին, այդ գործերը մենք ենք անում անշահախնդիր կերպով: Օրական 10 նամակ ենք ստանում, փորձում ենք օգնել մարդկանց, ծանոթացնում իրար հետ, կապող օղակ ենք հանդիսանում:

-Պարո՛ն Ահարոնյան, առկա տեղեկատվության համաձայն, Հայաստանում պետք է ստեղծվեր ազատ առևտրի գոտի, որտեղ իրանցիները առանց մաքսի կարող էին ցուցադրել իրենց արտադրանքը և վաճառել:

-Այո՛, դա իմ գաղափարն էր, բայց մենք չենք ցանկանում խուսափել հարկ վճարելուց: Մեր նպատակն է մեծ տարածք գնել Հայաստանում, կառուցել մեծ պահեստ, որտեղ միշտ կլինեն ամեն տեսակի ապրանքներ, որպեսզի հաճախորդին 20 օր չսպասեցնենք, մինչև որ Իրանից կբերենք ապրանքի ցանկալի տեսականին:

-Պարո՛ն Ահարոնյան, Իրանն այսօր գտնվում է լուրջ պատժամիջոցների և տնտեսական շրջափակման մեջ, ի՞նչ եք կարծում, Հայաստանը կարո՞ղ է Իրանի համար դառնալ «բաց պատուհան»:

- Այսօր ԻԻՀ գրեթե բոլոր հարևան երկրները օգնում են Իրանին՝ իհարկե, իրենց շահերից ելնելով: Ես՝ իբրև այս առևտրի պալատի նախագահ, ցանկանում եմ խորացնել առևտրաշրջանառության ծավալները: Չմոռանանք նաև, որ Հայաստանի համար ծանր օրերին Իրանը միշտ եղել է Հայաստանի կողքին, դա եղել է թե՛ անկախության առաջին տարիներին, թե՛ նաև ռուս-վրացական վերջին պատերազմի ժամանակ, երբ Հայաստան ներկրվեց 40 հազար տոննա վառելանյութ և 12 հազար տոննա ալյուր: Տարեկան Հայաստան է մտնում 40-50 հազար բեռնատար մեքենա, որոնց մեծ մասը սնունդ և կենցաղային անհրաժեշտության ապրանքներ են ներկրում:

-Ի՞նչ կարծիք ունեք Թավրիզից դեպի Հայաստան կառուցվող նավթախողովակաշարի ծրագրերի մասին:

-Հենց երեկ խոսում էի դրա մասին նախարար Արմեն Մովսիսյանի հետ, և նա նշեց, որ Իրանի նավթը այն որակի չէ,

որ մեզ անհրաժեշտ լինի: Այսինքն, եվրոպական առկա սարքավորումները չեն կարողանա մշակել իրանական նավթը: Բայց ես, լինելով քիմիկոս, կարծում եմ՝ կարելի է գտնել լուծման եղանակներ: Հիմա էլ Արդեբիլի շրջանում են գտել նավթի մեծ պաշարներ, և ես կարծում եմ, որ Հայաստանը պետք է նավթավերամշակման գործարան կառուցելու մասին սկսի մտածել:

-Ի՞նչ կարծիք ունեք Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման մասին, սա կարող է իրականություն դառնալ, թե՞ սա երազանք է:

-Ո՛չ, սա երազանք չէ, և այս ծրագիրն արդեն իրականություն է դառնում, մնում է, որ լուծվեն ֆինանսական խնդիրները: Շատերն են հետաքրքրված այս ծրագրով, ի դեպ, Իրանի ջանքերով դեպի Միջին Ասիա ևս կառուցվում է երկաթգիծ, և մեր երկաթգիծը կառուցվելու դեպքում կմիանա դրան, այդտեղից էլ կձգվի դեպի Բաթումի: Իրանը կարիք ունի Թուրքիայի տարածքից զատ այլ ելք ունենալու դեպի Եվրոպա:

-Առկա տեղեկատվության համաձայն՝ կա որոշակի պայմանավորվածություն, որ Իրանից կիսավարտ ապրանքը պետք է բերվի Հայաստան, ամբողջական ավարտուն տեսքի բերվի, վրան փակցվի «Արտադրված է Հայաստանում» և հանվի միջազգային շուկա:

-Այո՛, կա նման մտադրություն, օրինակ, մտածում են հյութ բերեն այստեղ և լցնեն տարաների մեջ, ապա արտահանեն: Մի քանի նման ծրագրեր էլի կան:

-Ինչպե՞ս եք գնահատում Հայաստան-Իրան հարաբերությունների ներկա մակարդակը:

-Բավական բարձ մակարդակի վրա են այդ հարաբերությունները՝ հատկապես հաշվի առնելով Իրանի շուրջ առաջացած իրավիճակները: Կարծում եմ՝ Հայաստանը շատ ճիշտ քաղաքականություն է իրականացնում Իրանի նկատմաբ՝ անկախ Իրանի նկատմամբ իրականացվող ճնշումներից: Իրանը ևս բարձր է գնահատում Հայաստանի որդեգրած քաղաքականությունը: Սակայն կարծում եմ տնտեսական հարաբերություններում զարգացման էական

ներուժ ունենք, և պետք է իսկապես խորացնել այս հարաբերությունները:

-Պարո՛ն Ահարոնյան, երբ ուսումնասիրում ենք Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը, նկատվում է, որ ավելի շատ իրանական ապրանքներն են մտնում Հայաստան, քան հակառակը: Ինչո՞վ կբացատրեք այս երևույթը:

-Դա կապված է, կարծում եմ, հարկերի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I Փաստաթղթեր

1. Հռչակագիր ԻԻՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:
2. ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական բանբեր, Հայաստան-Իրան, Հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը, Վենետիկ, 1993թ:
3. Համառոտ տեղեկանք Իրանի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի վերաբերյալ, 20.08.1998, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:
4. Հաշվետվություն 1996թ. դեկտեմբերի 25-29-ը ԻԻՀ առաջին փոխնախագահ Հ. Հաբիբիի Երևան կատարած պաշտոնական այցելության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:
5. Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ պաշտպանության նախարարության և ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարության միջև պաշտպանության և անվտանգության բնագավառում համագործակցության մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 86:
6. ԻԻՀ ԱԳՆ Ք. Խարազի նամակը ուղղված ՀՀ ԱԳՆ Վ. Օսկանյանին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 86:
7. Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ N 286:
8. Համատեղ հայտարարություն ԻԻՀ, ՀՀ և Թուրքմենստանի միջև եռակողմ համագործակցության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ N 286:
9. Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ և ԻԻՀ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստի վերաբերյալ, 1998թ. հուլիսի 18-20, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 23-33:
10. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ուղերձը Հայաստան-Իրան գործարար համաժողովի մասնակիցներին, Երևան, 19 նոյեմբերի 1998թ., ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 45:
11. Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի 4-րդ նիստի արձանագրությունը, 13 հունիս 2001թ., ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
12. ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի նամակը ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, ՀՀ և ԻԻՀ միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նախագահ Ա. Թումանյանին, N 05-28/8-27,17.01.2002թ:
13. Հաշվետվություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից գլխավորած պատվիրակության 2002թ. հունիսի 24-ից 27-ը Թեհրան կայացած գործուղման մասին, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 86:
14. Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ և ԻԻՀ միջկառավարական հանձնաժողովների չորրորդ համատեղի նիստի, 2002թ. դեկտեմբերի 9-11, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 84:

15. Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ և ԻԻՀ տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստի վերաբերյալ, 1998թ. հուլիսի 18-20, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
16. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի պատասխանը ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի հարցմանը, N 05-22/8-476, 30.08.2002թ., ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
17. Փոխըմբռնման հուշագիր, ՀՀ կրության և գիտության նախարարության և ԻԻՀ կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008թթ համար:
18. Փոխըմբռնման հուշագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև կրթական և մշակութային կենտրոնների հիմնման և գործունեությյան պայմանների մասին, http://www.parliament.am/library/erkoxm/2006/12.pdf
19. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, տուրիզմի և զանգվածային լրատվական միջոցների բնագավառում համագործակցության մասին, http://www.parliament.am/library/erkoxm/2006/10.pdf
20. Հակոբ Մովսեսի օրագրից, 23 փետրվարի 1995թ., ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 242
21. Ծրագիր ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության և ԻԻՀ «Իրանի մշակութային ժառանգության» կազմակերպության 2002թ. համագործակցության, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:

22. Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
23. Տեղեկանք 2001-2013 թվականներին պաշտպանական բնագավառում հայ-իրանական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ՊՆ ՊՔ վարչություն:
24. Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
25. Տեղեկանք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ՀՀ և ԻԻՀ Միջկառավարական հանձնաժողովների չորրորդ համատեղ նիստի Փոխըմռնման հուշագրի կետերի կատարման և առաջարկների վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտակա բաժին, գործ 84:
26. Տեղեկանք ԻԻՀ էներգետիկայի նախարար Հ. Բիթարաֆի գլխավորած պատվիրակության այցի ընթացքում քննարկվելիք հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
27. Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, 14, հունիս, 2001թ., ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84:
28. Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:
29. Կանոնագրություն Թեհրանի Հայոց թեմի:
30. Международные отношения в эпоху империализма (в дальнейшем МО). Документы из архивов царского и временного правительств 1878-1917гг., серия III, том VI, часть 1, Москва-Ленинград, 1935.

31. МО. Документы из архивов царского и временного правительств 1878-1917гг., сер. III, т. VI, ч. 1, с. 421, N 409

II ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր և հոդվածներ

Հայերեն

1. Բաղալյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները 20 տարեկան են, Երևան-Թեհրան, 2012:
2. Բաղալյան Գ., Իրան, հանրագիտարան, Երևան, 2011:
3. Իրանի Իսլամական հանրապետության Սահմանադրություն (հիմնական օրենք), Գ. Բաղալյանի թարգմանությամբ, Թեհրան, 2005:
4. Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994, Երևան, 2004:
5. Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999:
6. Բայբուրդյան Վ, Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998թթ. Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, Հայաստան-Ի ran. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012:
7. Բայբուրդյան Վ., Պարսիկ պատմաբանները Հայոց ցեղասպանության մասին, Միհր, Երևան, 2005, 2(53):
8. Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. Հարևաններ թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներև ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2008:
9. Բայբուրդյան Վ., Իսլամական Հեղափոխության քառորդ դարը: Քաղաքակրթությունների երկխոսություն՝ Հայաստան-Իրան, Միհր, 2 (46), 2004:

10. Բաղդասարյան Է., Թեհրանահայ գաղութի պատմություն, Թեհրան, 2002:
11. Բեգիջանյան Է. Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001:
12. Բեգիջանյան Է, Նախիջևանը և թուրք-իրանական հարաբերությունները, Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, Տասնամյա հանրագումար, Երևան, 2004:
13. Դեմոյան Հ., Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Երևան, 2002:
14. Թորոսյան Թ., Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության առևտրատնտեսական կապերը /հիմնախնդիրներ և հեռանկարներ/, Հայաստան Ֆինանսներ և էկոնոմիկա, N 6-7, 2002:
15. Թորոսյան Թ., Սարգսյան Լ., Հայաստանի և Իրանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները, Տարեգիրք 2012թ., Երևան, 2013:
16. Իսկանդարյան Գ, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005:
17. Իսկանդարյան Գ, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, մեթոդական ուղեցույց, Երևան, 2007:
18. Իսկանդարյան Գ, Հայ-իրանական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները. «բարի դրացիականից» «հատուկ հարաբերություններ», Ժամանակակից Եվրասիա, Երևան, 2013:
19. Իսմայիլ Ռային «Հայերի կոտորածները», Երևան, 1999:

20. Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004:
21. Հովհաննիսյան Ն., Մի դրվագ հայերի հանդեպ աաթոլլա Խոմեյնիի դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 20.VIII.1991:
22. Հովհաննիսյան Ն. Այաթոլլահ Խոմեյնիի ֆենոմենը, Իմամ Խոմեյնի 100-Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ և հիմնադիր Խոմեյնու մտքերը և հայացքների քննարկումը նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 1999:
23. Հովհաննիսյան Ն., Այաթոլլահ Խոմեյնիի մոտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի ու հայության հանդեպ, Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012:
24. Մանվելյան Ա., Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-Կասպյան տարածաշրջանում, Երևան, 2015:
25. Մանուկյան Մ., Հայ-իրանական հարաբերությունների ապագան, Միհր, 2 (46), 2004:
26. Մարգարյանի Ա. հարցազրույցը «Միհր» ակումբի լրագրողին, փետրվարի 2, 2002:
27. Միրզաբեկյան Ժ. Մ., Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի Սահմանում, Երևան, 1996:
28. Մովսիսյան Հ. Հ. «Պարսիկ անվանի գրողը հայկական ցեղասպանության մասին», Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1987, թիվ 2:
29. Պողոսյան Ա., Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012թ:
30. Տեր-Պետրոսյան Լևոն, Ընտրանի, Երևան, 2006թ:

31. Փարսադանյան Վ., Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012թ.:
32. Փահլևանյան Օ., ԻԻՀ Սահմանադրությունը և պետական կառուցվածքը, Երևան, 1997թ.:
33. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովի. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 2002:
34. ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի այցը Իրան, Արաքս, 24 (107), հունվար, 2002:
35. Ինչո՞ւ է իրանական շուկան փակ հայ արտադրողի առջև, Արաքս թիվ 16-17, մայիս-հունիս, 2001:
36. Քննարկել չի նշանակում համաձայնվել, Լոյս, 15.03.2001:
37. Թեհրանահայ համայնքի պատմությունից, Լոյս 30.01.2002:
38. Մահմուդ Ահմադինեժադ. «Հայաստանի հետ հարաբերությունների սերտացման համար Իրանը ոչ մի խոչընդոտ չունի», ԱԶԳ օրաթերթ, #51, 2007-03-21:

Ռուսերեն

39. Арабаджян А.З., Армяне в Иране, Москва, 2002.

40. Искандарян Г., Армяно-иранские отношения на современном этапе. Взгляд из Армении, Армения-Иран, История. Культура. Современные перспективы взаимодействий, МГУ им. М.В.Ломоносова, Институт стран Азии и Африки, Москва, 2013.
41. Искандарян Г, Армяно-иранские отношения на современном этапе. Взгляд из Армении, Состояние и

тенденции развития ситуации на Ближнем Востоке, Москва, 2013
42. Матвеев А. С., Проблемы сотрудничеста Ирана и государств Южнего Кавказа, Иран при М.Ахмадинежаде, Москва, 2013.
43. Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, Баку, Ереван, Тбилиси, 2004.
44. Вопросы Истории, 1, 1948.
45. "Нейтралитет Ирана", Тегеран, 1918, док. N 1-4, Краткие сообщения института востоковедения, XIX, Москва, 1956.
46. Оганесян Н.О., Карабахский конфликт. Этапы. Подходы. Варианты решения, Ереван, 1997.
47. Оганесян Н.О., Каким мы нашли имама Хомейнии. Трети взгляд. Новости, репортажи и коментарии из иранской прессы, N 72, Москва, 2000.

Անգլերեն

1. Buzan, Barry. People, States and Fear: An Agenda For International Security Studies in the Post-Cold War Era. Hertfordshire: Harvester Wheatsheaf, 1991.
2. Caporaso J. Dependence, Dependecy and Power in the Global System: A Structural and Behavioral Analisis// International Organization. 1979.
3. Hovhannisyan N, The foreign policy of Armenia, Yerevan, 1998.
4. Hovhannisyan N, The Karabakh problem. The Thorny Road to Freedom and Independence, Second Revised Edition, Yerevan, 2004.
5. Khaloian H, The Armenian diaspora in Iran, Армения-Иран, История. Культура. Современные перспективы

взаимодействий, МГУ им. М.В.Ломоносова, Институт стран Азии и Африки, Москва, 2013.
6. The Armenia-Iran Relationship: Strategic implication for security in the Sout Caucasus region, Edited by Claude Moniquet and William Racimora, European Strategic Intelligence & Security Center, January 17th, 2013.
7. Iran's row with West, Oxford Analytica, March 29.

Թուրքերեն

1. Uras Esat, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950, s. 616-617

III Ինթերնեթային կայքեր

Հայերեն

1. Հակոբյան Թ., Խաթամի.. «Մեզ համար Հայաստանը լոկ հողակտոր չէ» http://www.azg.am/AM/2004090901
2. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան Իրանի դեմ բանաձեւ է ընդունել, 19, 11. 2011, http://news.am/arm/news/82519.html
3. Հազարաւոր թեհրանահայեր Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում քաղաքական համահաւաքի խրոխտ կեցւացքով իրենց բողոքի ձայնը միացրեցին համայն հայութեան պահանջատիրութեան, http://www.alikonline.com/files/2004/apr/25/25A01.htm
4. Պարսկէրեն մամուլի անդրադարձ http://www.alikonline.com/files/2004/apr/25/25A06.htm
5. Թեհրանի միութիւնների նախաձեռնած ծրագրերը 2005-ին՝ նւիրւած Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակի ոգեկոչման, http://www.alikonline.com/files/2005/apr/14/14D05.htm

6. Իրանի փոխնախագահ. Օսմանյան կառավարությունը 1915-ին ցեղասպանություն է իրականացրել հայերի նկատմամբ, http://news.am/arm/news/28893.html
7. Սարիբեկյան Գ., Երկվորյակ ՀԷԿ-ը շուտով լույս աշխարհ կգա, 17/09/2010, http://www.hraparak.am/2010/09/17/erkvoryak-heke-shutov-luys-ashxarh-kga/
8. Վարչապետ. Զբոսաշրջությունը Հայաստանում պետք է դառնա բազմաբովանդակ, http://news.am/arm/news/50281.html
9. Զբոսաշրջությունը Հայաստանում ամրագրված է որպես գերակա ոլորտ, ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ #30, 02-03-2013 http://www.azg.am/AM/2013030217
10. Հայաստան-Իրան հարաբերությունների ապագան լուսավոր է. դեսպան Մոհամմադ Ռեյիսի, 8 փետրվար, 2013, http://armenpress.am/arm/news/707626/
11. 2013թ. 110 հազար իրանցի զբոսաշրջիկ է այցելել Հայաստան http://news.am/arm/news/195461.html
12. 110 հազար իրանցի զբոսաշրջիկ է այցելել Հայաստան մեկ տարումhttp://www.armnewstv.am/news/23011
13. Հուսանք՝ մեր դիպլոմները կճանաչվեն Իրանում, 6/03/2010, http://www.report.am/am/news/other-42/old_9203
14. Ինչո՞ւ Արարատի ֆուտբոլը չի զարգանում, http://ourhamaynk.wordpress.com/2008/06/17/ararat-football-team-1/
15. Հակոբյան Թ., Խաթամի. «Հայաստանը մեզ համար լոկ հողակտոր չէ» », http://www.azg.am/AM/2004090901
16. Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովը ապրիլին կքննարկի Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման հարցը. ՀՀ դեսպան, 12 փետրվարի, 2014թ. http://armenpress.am.

17. Հայաստանի հարավային երկաթուղին կհասնի մինչեւ Իրանի հետ սահման. Ջոզեֆ Բարկովսկի, 21.02.2014, http://www.yerkir.am/am/news/62786.htm
18. Հայաստանի հարավային երկաթուղին ամենակարճ ճանապարհով Ասիան կկապի Կենտրոնական Եվրոպային, http://www.aravot.am/2014/02/20/433652/
19. ՀՀ նախագահի եւ Իրանի նախագահի համատեղ հայտարարությունից, 23.12.2011թ. http://www.aravot.am/2011/12/23/287212/
20. Տեղի ունեցավ «Իրան-Հայաստան 400կվ հզորությամբ երրորդ էլեկտրահաղորդման գծի» շինարարության հիմնարկեքի արարողությունը, 14 Հոկտեմբեր, 2010, http://armenpress.am/arm/print/624156/
21. Մոհամմադ Ռեյիսի, Հայաստանը Իրանին գազ գնելու հարցով չի դիմել, դեկտեմբերի 6, 2013թ., http://armenpress.am/arm/news/742824/hayastann-iranin-gaz-gnelu-harcov-chi-dimel-mohammad-reyisi.html
22. Դեսպան. Հայաստանն Իրանից գազ ներկրելու շուրջ չի բանակցել, 6.12.2013 http://www.azatutyun.am/content/article/25192067.html
23. Սարուխանյան Ս., Իրանական գազի հեռանկարները Հայաստանում, 06.02.2014 http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12540
24. Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը կսկսվի միայն հաջորդ տարի,19,02,2014 http://www.azatutyun.am/content/article/25198358.html
25. Թեհրանի նոր ակնարկը Հայաստանին, 07.07,2014, http://www.lragir.am/index/arm/0/comments/view/101425
26. Երեք հայկական վանական համալիր ՅՈՒՆԵՍԿՕ-ում, 22, 07 2008, http://araxmag.blogspot.com/2008/07/blog-post_9806.html

8. Ո՞ւր գնայ ժողովուրդը, http://ourhamaynk.wordpress.com/2008/07/04/oorgnajoghovoorde/
27. Քաթրին Աշտոնը Ս. Ամենափրկչեան վանքում, http://www.norjugha.ir
28. Իրանի խորհրդարանի փոխնախագահն իր ելույթում երեք անգամ օգտագործեց Յեղասպանություն բառը, 30.04.2014թ., http://aparaj.am/
29. Հազարաւոր թեհրանահայերի բողոքի ցոյցը՝ Թուրքիայի դեսպանատան առջեւ, շաբաթ, 26 ապրիլի 2014, http://www.alikonline.ir
30. Հայ-իրանական սահմանին «Բարեկամության և խաղաղության այգի» կկառուցվի, 14.02.14, http://www.tert.am/am/news/2014/02/14/armenia-iran/

Ռուսերեն

1. Воронов С. С., Ирано-армянские отношения в контексте визита в Тегеран министра иностранных дел Армении В.Осканяна, http://www.iimes.ru/rus/stat/2006/21-12-06a.htm
2. Голам-Али Хаддад-Адель: Иран и Армения изучают возможность строительства второго газопровода,http://www.iran.ru/news/economics/42633/Golam_Ali_Haddad_Adel_Iran_i_Armeniya_izuchayut_vozmozhnost_stroitelstva_vtorogo_gazoprovoda
3. Армения и Иран налаживают военно-политическое сотрудничество, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=2615
4. Визит главы Ирана прежде всего будет способствовать развитию экономических отношений, уверен премьер Армении, http://www.panarmenian.net/search/rus/

5. Армения выделила средства для строительства автодороги Иран – Армения, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=46038
6. Иран и Армения подписали семь документов о сотрудничестве, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=41197
7. Ханбабян А., Армения - Иран: вековая дружба, взаимовыгодное партнерство, Последнее обновление (29.03.11), http://nv.am/i
8. Михайловский А.В., Иран: контрабанда табака и политика, http://www.iimes.ru/rus/stat/2012/25-04-12.htm/
9. Ахмадинеджад обвинил стражей исламской революции в контрабанде, http://lenta.ru/news/2011/07/05/smuggle/:
10. В Тегеране проходит шестое заседание Межправительственной комиссии по торгово – экономическому сотрудничеству Ирана и Армении, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=37132, В 2005 г. товарооборот между Ираном и Арменией составил 190 млн. долл. США, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=37160
11. Тегеран и Ереван высоко оценивают уровень ирано-армянского сотрудничества http://www.irna.ir/ru/news/view/menu-291/0612181577142243.htm, ИРНА. 18 декабря 2006 года
12. Иран и Армения подписали семь документов о сотрудничестве, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=41197

13. Президент ИРИ: Иран не видит никаких преград на пути дальнейшего развития взаимоотношений с Арменией, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=45638
14. Армения выделила средства для строительства автодороги Иран – Армения, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=46038
15. Армения намерена наладить железнодорожную связь с Ираном, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=26258
16. Отношения Ирана и Армении - стратегические партнеры или вынужденное сотрудничество? 31.07.2013 http://rukavkaz.ru/articles/comments/4148/
17. Исмаил Денильханов, (Заместитель директора Департамента внешних связей Главы и Правительства ЧР) Отношения Ирана и Армении - стратегические партнеры или вынужденное сотрудничество? 31.07.2013, http://rukavkaz.ru/articles/comments/4148/
18. Абрамян Г., Армения: Ереван намерен расширять связи с Ираном, 27.01.2012, http://russian.eurasianet.org/node/59138
19. Армения построит газопровод до Ирана, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=28553,
20. Газопровод Иран-Армения будет строить «Армросгазпром», http://www.regnum.ru/news/416094.html
21. Энергетическая диверсификация Армении не зависит от концессионера газопровода Иран-Армения, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=45686

22. Глава компании «АРМРОСГАЗПРОМ»: не готовить рынок к росту цен на газ -»недопустимое расточительство» http://www.armrusgasprom.am/ru/infocenter/publications/102/
23. Государственное телевидение Исламской республики Иран «Iran TV 1» в блоке новостей представило Нагорный Карабах как независимую республику http://www.day.az/news/politics/50415.html

Անգլերեն

1. 32 Die as Iranian Plane Strays, Crashes in Karabakh War Zone, Los Angeles Times, March 19, 1994, http://articles.latimes.com/1994-03-19/news/mn-35859_1_iranian-plane
2. Iran, Armenia mulling free trade agreement, Tehren Times, 25.12. 2011, http://www.tehrantimes.com/economy-and-business/93896-iran-armenia-mulling-free-trade-agreement
3. 10 Iranians on list of World's Most Influential Scientific Minds, 07.06.14, http://www.payvand.com/news/14/jul/1033.html
4. Iranian Official: We Helped Azerbaijan In Karabakh War, http://www.eurasianet.org/node/66664
5. Mehmet Fatih Öztarsu, Why does Iran support Armenia about Karabakh issue?____24 June 2012 http://www.todayszaman.com/news-284543-why-does-iran-support-armenia-about-karabakh-issue-by-mehmet-fatih-oztarsu*.html
6. Armenia calls for joint projects with Iran, http://www.presstv.ir/detail/183367.html

7. Ramezanzadeh A., Iran's Role as Mediator in the Nagorno-Karabakh Crisis, Contestes borders in the Caucasus, http://poli.vub.ac.be/publi/ContBorders/eng/ch0701.htm
8. Semerdjian H. H., Christian Armenia and Islamic Iran: An unusual partnership explained, Congress blog, http://thehill.com/blogs/congress-blog/foreign-policy/276961-christian-armenia-and-islamic-iran-an-unusual-partnership-explained
9. Vatanka A, Giragosian R., Iran and the Caucasus, Center for Strategic and International Studiees, Washington, DC, February 14, 2005.

Պարսկերեն

1 حجت‌الاسلام ابوترابی‌فرد در جمع ارامنه تهران :
در جهان امروز در اختیار کسانی است که با انسانیت و عدالت فاصله دارند
http://www.farsnews.com/newstext.php?nn=13920202000201
2 ارمنستان – ایران: خط شراکت راهبردی
http://pers.iran.ru/news/analytics/80237/d_p_f_n_f_H_d_f_X_h_d_d_d
3 کلیسای وانک جهانی می شود
http://www.mehrnews.com/mobile/detail/2296396
4 سلطانی فر: ارمنستان یکی از هدف های جذب گردشگری است
http://www.irna.ir/fa/News/81800577/
5 شهدای ایرانی جنگ قره باغ نیز در ناگو مدفون هستند
http://www.farsnews.com/newstext.php?nn=13911209000175

IV. Թերթեր, ամսագրեր

1. Հայաստանի Հանրապետություն, պաշտոնաթերթ:
2. Ազգ, օրաթերթ:
3. Լոյս ամսագիր, Թեհրան:
4. Արաքս, Թեհրան:
5. Ալիք, Թեհրան:
6. Միհր, Երևան:

V. Հարցազրույցներ

Գագիկ Հարությունյան-Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ, ՀՀ փոխնախագահ, (1992-96թթ):
Ռաֆֆի Հովհաննիսյան- ՀՀ արտաքին գործերի նախարար (1991-1992թթ.):
Վահան Փափազյան- ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996թթ.):
Ալեքսանդր Արզումանյան- ՀՀ արտաքին գործերի նախարար (1996-1997թթ.):
Վարդան Օսկանյան- ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008թթ.):
Արմեն Մովսիսյան - Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (2006թ-2014), ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար:
Վահան Բայբուրդյան- ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.):
Գեղամ Ղարիբջանյան- ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1999-2005թթ.):
Կարեն Նազարյան-ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005-2009թթ.):
Գրիգոր Առաքելյան-ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար (2009-2014):
Մոհամմադ Ռեյիսի- ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան (2012-2015):
Արա Սիմոնյան- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար (2008-ից):
Գալուստ Սահակյան- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստան-Իրան բարեկամական խմբի ղեկավար:

Մեխակ Ապրեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության և տնտեսական զարգացման վարչության պետ:
Լևոն Ահարոնյան-Իրան-Հայաստան առևտրի պալատի նախագահ:

VI. Պաշտոնական կայքեր

ՀՀ նախագահի պաշտոնական կայք http://www.president.am
ՀՀ Ազգային ժողով http://www.parliament.am
ՀՀ կառավարություն, http://www.gov.am
ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Երկկողմ հարաբերություններ, http://www.mfa.am
ՀՀ մշակույթի նախարարություն http://www.mincult.am/
ՀՀ կրթության և գիտության նախարարություն, http://www.edu.am
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, http://www.mtc.am
ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն http://www.armstat.am
ՀՀ մաքսային ծառայություն, http://www.customs.am
ԻԻՀ-ում Թեհրանի թեմ, http://www.tehranprelacy.com
ԻԻՀ-ում Սպահանի թեմ, http://www.norjugha.ir
ԻԻՀ-ում Արարատ մարզավան, http://araratsc.org
ԻԻՀ նախագահ http://www.president.ir

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ տպագրատանը:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. էջ՝ 419
Տպաքանակը՝ 150:

327
Ֆ-80
Հշ

Գոհար Մանվելի Իսկանդարյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող, վերլուծաբան: ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար:

1997թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1999թ. ավարտել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

Դասավանդում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության և պատմության ֆակուլտետի մշակութաբանության բաժիններում: Զբաղվում է Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության խնդիրների ուսումնասիրմամբ: Հեղինակ է երեք տասնյակից ավելի գիտական և վերլուծական հոդվածների:

2010թ. լույս է տեսել Գոհար Իսկանդարյանի «Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960թթ.» մենագրությունը: Հեղինակի նպատակն է շարունակել գիտական հետազոտությունները «Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1960-1970-ական թվականներին» գիտական թեմայով:

Ամուսնացած է, ունի երկու որդի: